

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՕՐԵՐ

ՈՐ ՊԻՏԻ ԶՄՈՌՅՈՒԻՒՆ

ՅՈՒՇԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻԶԻ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ՕՐԵՐ ՈՐ ՊԻՏԻ ԶՄՈՌՑՈՒԻՆ

907.525



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԻՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՕՐԵՐ ՈՐ ՊԻՏԻ ԶՄՈՌՑՈՒԻՒՆ



ՅՈՒՇԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻԶԻ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ

Handwritten signature

2271 / 1477

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1974



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

ՆՈՒԻՐՈՒՄ

ԴԱՏԵՄԻ ՊԱՆԾԱԼԻ ԶԱԻԱԿ

ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔՊՍԿ ՈՒԼՈՒՀՈՋԵԱՆԻ

ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ
12121





ՍՐԱՊԻՈՆ ԱՐԲԵՊՍՆԻՍՆԻՍՆԻ
Ընդհ. Արքահայր Միխայիլի Միաբանության





ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անբասիր ու նուիրեալ յեղափոխականի մը սրբազան յուշերն են ասոնք, հայ հողին ու գիւղի կեանքին քարմ բոյրով օծուն, Դատեմի Ս. Յովհաննու ակին անապակ ջուրով մկրտուած :

Օրե՛ր որ պիտի չմոռցուին, հերոսներ որ պիտի չմեռնին, կրակի ու արիւնի գոհեր՝ որ յաւէտ պիտի ապրին :

Այո՛, կ'ապրին անոնք ո՛չ միայն թռոններու եւ ժառանգներու յիշողութեան մէջ սրտագորով, այլ նաեւ երկնային անմահութեան լոյսով պայծառացած, իբրեւ ֆրիստոնէական կրօնքի հաւատարիմ վրկաներ, իբրև հայրենիքի հարագատ զաւակներ, սուրբ նահատակներ :

Քանի մը տող կարդալով՝ իսկոյն կը մտերմամբ հայրենասէր Հեղինակին հետ, որ հաղորդական անոյշ հոգի մը ունի. կը սիրէք դուք ալ իր նահապետական տունը, իր նահատակ ծնողները, հայու իսկական տիպար Տօնապետը, իր Դատեմը բոլոր : Կը սիրէք քաղի հետը, ջարդի ու աֆսոքի կարմիր օրերուն, դպրոցէն բերդ, կամ պահուրտիլ թափստոցներուն մէջ, սուրալ միասին հանգրուանէ հանգըրուան, մերթ հրաշապատում անակնկալներով անցնիլ նակատէ նակատ, Դատեմէն մինչև Ամերիկայի Միացեալ Նահանգները (1919) :

1895ի ջարդերու ծնունդ է Դատեմցի Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, անկեղծ հայրենասէր մը, որ իր կեանքը համակ նուիրած է հայրենիքի ծառայութեան, Դաշնակցութեան շարքերուն զինուորագրուած՝ պատանեկութեան օրերէն : Աֆսոքէ ու ջարդէ ճողոպրած, կը նուիրուի կազմակերպելու կամաւորական շարքեր, Մուրատի հովանաւորութեան տակ : Հերոսաբար կը մասնակցի Հայաստանի նահատի կռիւներուն, բազմաքիւ գաղթականներ կը փրկէ մահուան նիւրաններէն : Հուսկ՝ Ճափոնի վրայով՝ կ'անցնի Ամերիկա, գտնելու իրենները : Հոն, կ'աւարտէ Լէնսինկի համալսարանի երկրագործական նիւղը : Բայց կը նախընտրէ նուիրուիլ կուսակցական գործերու,

վարելով յաջորդաբար շատ պատասխանատու պաշտօններ, իբր անվնար ու նուիրեալ գործիչ, մասնակցելով նաեւ կարեւոր ժողովներու, ազգային քէ կուսակցական: Կը պատմեն քէ օժտուած էր հոնտորական խանդավառիչ ձիրքերով ու դարձած փնտռուած ատենախօսը ազգային հանդէսներու:

Յիսնամեայ այս ազգանուէր գործունէութիւնը անտեսելով, Հեղինակը կը վերադառնայ իր երիտասարդութեան օրերուն, պատմելու մեզի իր կեանքին առաջին՝ բայց շատ կարեւոր մէկ շրջանը. Օրեր որ պիտի չմոռցուին:

Յուշերուն կը յաջորդէ ոգեկոչումներու շղթան, որ կը պարունակէ տարիներու ընթացքին Հեղինակին սրտէն քուած կայծեր, ոտանաւոր կամ արձակ, հայրենի յիշատակներով բորբոքուն:

Մանկութեան օրերուն՝ Հեղինակը փափաք ունեցած է վեներտիկ գալ, Մխիթարեան վարդապետ ըլլալու: Նախախնամութիւնը զինք այլ տեղ առաջնորդած է:

Սակայն, ջերմ գագսում մը զինք կապած է Ս. Ղազարի: 1957ին, Ամերիկայի մէջ, Տիքթոյիթէն մինչեւ Գալիֆորնիա, հարազատ Մըխիթարեանի նման, սիրայօժար ընկերացաւ իր հայրենակից մեծ Արքաօր, երջանկայիշատակ Սրայիոն Արքեպիսկոպոս Ուլուռնեանի, օգտակար ձեռնարկներ կազմակերպելով՝ Մխիթարեան վարժարաններու ի նպաստ:

Տարիներ ետք, օր մըն ալ վանք եկաւ (1970), ներկայ յուշերը գրի առնելու, առանձնանալով Ս. Ղազարի մեծաւորիկ խոսքի մը մէջ, Ալիշանի շունչին տակ խորհրդաւոր: Աւա՛ղ, չկար միւս մեծ Դատեմցին՝ Արքահայրը:

Բայց կայ Յովհաննէս Տէր Յովհաննէսեանի այս գիրքը:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ

ՍՐԱՊԻՈՆ ԱՐԻՊՍԿ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ

(1890 – 1965)

Գրպծ. Սրապիոն Արքայ. Ուլուհոճեան ծնած է 1890ի փետր. 14ին, իարբերդի Դատեմ գիւղը: Մկրտութեան անունով Ստեփան, զաւակը Գարրիէլ եւ Վարդիկ Փաշայեան բարի ծնողներուն, մինչեւ տասնեւչորս տարեկան հասակը կը յաճախէ տեղական վարժարան, վայելելով ծնողական դուրգուրանքին հետ՝ Ծովաց աշխարհի սքանչելի բնութեան ամբողջ հմայքը:

Տասնեւհինգ տարեկանին, զգալով իր սրտին մէջ բուռն փափաք մը գէպի աստուածանուէր կեանք, առնելով օրհնութիւնը իր երկիւղած ծնողներուն եւ ապաղայ նահատակ Գրպծ. Իսրայէլեան Եպիսկոպոսին, ճամբայ կ'ելլէ գէպի Վենետիկ, ուր կը հասնի՝ Սամսոնի ու Պոլսոյ վրայով՝ 1905ի Սեպտ. 10ին:

Ուշիմ ու բարեպաշտ պատանի, մենաստանի լռութեան մէջ սըրբութեան օժումով հասակ կ'առնէ. Սուրբ Ղազարի գեղեցիկ բնութիւնն ու խաղաղ միջավայրը իր մէջ կը դրոշմեն հեղահամբոյր սիրտ եւ խոնարհ հոգի, միանգամայն զուարթամիտ ու ժրջան բնաւորութիւն, թէեւ ծաղիկ հասակէն վնասուած էր առողջութիւնը:

Վանական զգեստաւորութիւնը տեղի կ'ունենայ նոյն տարուան Հոկտ. 1ին: Երեք տարի ետք, 1908ի Նոյ. 1ին կ'արժանանայ կրօնաւորական սուրբ սքեմին, սկսելով իր նորընծայութեան երկամեայ շրջանը, կոչուելով Սրապիոն: 1910ի Նոյ. 13ին մշտնջենապէս կը կապուի Մխիթարեան Մխարանութեան, կրօնաւորական սուրբ ուխտերով:

Նախախնամուծվեցին օժտուած ուսումնական բարձր ձիրքերով, յաջողութեամբ կ'ուսարտէ իմաստասիրական, հայագիտական եւ աստուածաբանական դասընթացքները, վանքին մէջ, եւ 1915ի Մայիս 23ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Գրիգօ Իգնատիոս Արքայ-Կիւրեղեան Արքահօրմէն:

Տարի մը ետք, Մեծաւորներու կարգադրութեամբ՝ կը մեկնի Հռոմ, յաճախելու համալսարանական դասընթացքներու: Փայլուն յաջողութեամբ կ'ուսարտէ ուսման շրջանը, 1920ին, եւ վարդապետական աստիճանի (doctorat) տիտղոս կը ստանայ Դոմինիկեան Հայրերու Angelicum Հաստատութեան մէջ, ուր իբր աւարտաճառ կը ներկայացնէ հայրախօսական ու եկեղեցապատմական խոր հմտութեամբ մշակուած ուսումնասիրութիւն մը «Քաղկեդոնի Ժողովը եւ Հայերը» խորագրով, մեծամեծ դնահատանքներու արժանանալով բոլոր ուսուցիչներէն:

Այնուհետեւ, Միաբանութեան վարիչներուն տնօրինումով՝ կ'անցնի պաշտօնավարելու Հռոմի Մխիթարեան վանատան մէջ, ուր շատ լուսամիտ դեր կը կատարէ փոխ-տեսուչի եւ երբեմն տեսուչի պաշտօնով (1920–1924), շահելով աշակերտներուն եւ օտարներուն սէրն ու համակրանքը:

1925ին կը կանչուի Ս. Ղազար, եւ կարճ ժամանակէ ետք՝ կ'անցնի Մուրատ-Ռափայէլեան վարժարան, իբրև Ուսումնապետ: Հոս ալ նոյն վեհանձն եւ զուարթամիտ նուիրումը կը յայտնաբերէ՝ հոգիներ կրթելու եւ ազգին աշնիւ սերունդներ հասցնելու դործին մէջ:

1928ի վերջերը զինք կը գտնենք Սեւր (Փարիզ), ուր կը ստանձնէ Մուրատեան նորարաց վարժարանի ուսումնապետութիւնը, յօրհմ եւ հմտութիւն կը պահանջէր: Հոն Հ. Սրապիոն, եօթը տարի շարունակ, լռիկ աշխատանքով կը շինէ, կը կազմակերպէ, եւ օրէ օր վարժարանին կրթական եւ ուսումնական մակարդակը կը բարձրացնէ, դառնալով այդ հաստատութեան ողին եւ մղիչը:

Սոնարհ միաբանին դործունէութիւնը եւ բազմապատիկ ձիրքերը կը գրաւեն բոլորին ուշադրութիւնը եւ համակրանքը:

1935ի Օգոստոս 12ին, Ս. Ղազարու մէջ դումարուած Միաբանական Ընդհ. Ժողովի ընթացքին, հասարակաց հաճութեամբ եւ հըրճուածքով՝ Մխիթարի Աթոռին վրայ կը բարձրանայ Աբրահայր Սրապիոն Վրդ. Ուլուհոհեան, Մխիթարի յաջորդներուն մէջ իբր եօթներորդ Աբրահայր:

Նորընտիր Աբրահայրը, շնորհիւ իր անվկանդ հաւատքին Աստուծոյ նախախնամութեան վրայ, շնորհիւ իր վարչական խոհեմ եւ աշխուրջ ձիրքերուն եւ հեղահամբոյր ու անձնանուէր նկարագրին,

խսկոյն կ'առնինքնէ բոլոր միաբանները՝ միաձոյլ առաջնորդելու համար դանտեք իրենց նուիրական ասպարէզին մէջ:

Ու նախ հարթելով ուղին՝ տնտեսական տաղնապալից ճղնաթամի մը արհաւիրքներէն, իր ուշադրութիւնը կը դարձնէ դաստիարակչական գործին: Նոյն տարին իսկ կը հիմնուի Հալէպի Մխիթարեան վարժարանը. յաջորդ տարին ալ կը բացուի Ալեքսանդրիոյ Մխիթարեան վարժարանը: Այսպէսով Մխիթարեանները նոր թափով ասպարէզ կ'իջնեն արեւելքի եւ արեւմուտքի մէջ (Հալէպ, Ալեքսանդրիա, Պոլիս, Փարիզ), եւ մեր ժողովուրդին հետ սերտօրէն շփուելով, մանաւանդ ստանձնելով հայ մանուկներու դաստիարակութեան բարձր դերը, իրրեւ նոր Մխիթարներ կու դան լուսաւորութեան նոր շունչ մը սփռելու աստանդական հայութեան սրտին մէջ:

1936ին ամառը կը տօնուի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի հարիւրամեակը, դրական ու զեղարուեստական ճոխ յայտադրով, քաղաքական ու եկեղեցական բարձրաստիճան հիւրերու ներկայութեան: Կարծէք յալթանակի տօնն է, որ ալիք ալիք կը տարածուի սփիւռքի հայ դպրութիւններուն եւ մամուլին մէջ: Մուրատ-Ռափայէլեանի դարադարձի շքեղ տօնախմբութեամբ կը փառաբանուի Մխիթարեան դարաւոր կրթական գործունէութիւնը եւ այդ հաստատութեան անխոնջ անդամները՝ համախմբուած Մխիթար-Գաստիարակ պատկերին շուրջ: Այս առթիւ է որ իտալական կառավարութիւնը Գրպօ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան Արբահօր կը շնորհէ «S. Lazzaro e Maurizio» կարգին Հրամանատարութեան տիտղոսը եւ շքանշանը:

Կրթական հաստատ եւ արդի ծրագրի մը մշակումով՝ Ս. Ղազարի տպարանէն հետզհետէ լոյս կը տեսնեն հայրենի ընթերցարաններու շարքեր, հատընտիր ցուքեր ազգային լաւագոյն հեղինակներէ, քերականութիւն, հին եւ արդի դրականութեան պատմութեան դասագրքեր: Մինչ դրական ու բանասիրական ասպարէզին մէջ՝ ժրջան աշխատակիցներով կը յառաջանայ «Բաղմալէպ»ը, որուն հարիւրամեակը (1843-1943) կը գուզադիպի պատերազմի տխուր օրերուն:

1939-1945ի համաշխարհային պատերազմը կը թուի նաեւ խեղդել Մխիթարի յաջորդին ազգանուէր ծրագրիները: Իրօք, լեզէոնական ոյժերու դիմաց՝ կը փակուի Փարիզի վարժարանը, մինչեւ իսկ կը ուժարկոծուի այդ նուիրական բոյնը: Բայց անվէհեր կը տոկան արեւելքի պատնէշները: Ու Գրպօ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան ձեռնհասօրէն կը զեկավարէ Մխիթարի լաստափայտը՝ անընդհատ կրակէ ջրհեղեղին մէջ: Յաջորդական այլեւայլ խառնակ տիրապետութեանց ընթացքին, սն կը յաջողի անվնաս ու անձեռնմխելի պահել Մխիթարի դաստակերտը՝ Ս. Ղազարը, իր ձեռագրիներով, դրատպարանով, թանգարանով եւ եկեղեցական արժէքաւոր սպասներով:

Պատերազմի սկզբնական շրջանին, 1940ի Մայիսին, Արբաճայր Սրբալիոն Վրդ. Ուլուհոճեան կը բոլորէ իր Գահանայութեան 25ամեակը. արտաքին հանդէսներ չեն կատարուիր, սակայն Մխիթարի զաւակները անհուն երախտազրիտութեամբ կը տօնեն այս յիշատակը, թէեւ անձուկ շրջանակի մէջ միայն:

1946ի Սեպտ. 2ին, յետ պատերազմին առաջին Ընդհ. Ժողովին մէջ, Գրպժ. Սրբալիոն Արբաճայր մեծ խանդավառութեամբ կը վերընտրուի որպէս Հայր եւ Վարիչ Մխիթարեան Ուխտին: Ու անգամ մըն ալ անոր առջեւ կը խոնարհին Միաբանները, տեսնելով անոր անձին մէջ արժանաւոր յաջորդը Երանաշնորհ Հիմնադրին:

Եւ ահա Սեւրի Մուրատեան վարժարանը, փրենիկ հաւին նման, կը վերածնի իր աճիւններէն: Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը կը վերընձիւզի: Իսկ Լիրանանեան լեռնարարձուները վրայ, Պիքֆայայի մէջ, 1947ի վերջերը կը բացուի վանքին Ընծայարանը, Մխիթարեան Միաբանութեան արագաց յոյսերու անդրանիկ դարբնոցը, վանքին համար ամէնէն կարեւոր ձեռնարկը:

Կը տօնախմբուի «Քաղմավէպ»ի հարիւրամեայ յորեկեանը (1947ին), սիրւռքէն եկած պատգամաւորներու խոսուեցողութեամբ եւ մեծ ոգեւորութեամբ: «Գեղունի»ն իսկական յաղթանակ մը կ'ըլլայ յետպատերազմեան զրական ու գեղարուեստական արշալոյսին:

Երբորդ մեծ յորեկեանը, 1949-50ի շրջանին, կու գայ յաւերժացնելու Մխիթար Արբաճօր մահուան երկուհարիւրամեակի նուիրական յիշատակը: Փառատօն մը իսկապէս, որու ընթացքին, սիրւռքի մամուլը, եկեղեցական պետերն ու ներկայացուցիչները, օտար թէ հայ, կը փութան իրենց զնահատանքի արդար մասնակցութիւնը բերել Մխիթ. Միաբանութեան եւ անոր արժանաւոր Պետին: Եւ Արբաճայր Սրբալիոն Վրդ. Ուլուհոճեան, այս անգամ Քրանսական կառավարութեան կողմէ կը ստանայ «Պատուոյ Լեգէոնակաճ ասպետութեան» շքանշանը: Արդար վարձատրութիւն եւ զնահատանք՝ իր եւ իր Միաբանութեան չահած բարձր վարիլին եւ համակրանքին:

Միլենոյն յորեկեանին առթիւ լոյս կը տեսնէ «Գեղունի»ի նոր թիւ մը, սիրւռքի բաղմամբիւ աշխատակիցներու մասնակցութեամբ, պատմական ու գեղարուեստական ճոխ բովանդակութեամբ: «Քաղմավէպ»ի բացառիկ թիւը 1949, թիւ 7-12, հայ եւ օտար մասնազէտ բանասէրներու օժանդակութեամբ՝ կու գայ զծել Մխիթար Արբաճօր դէմքը իր դարուն հարազատ պատկերին մէջ:

Յորեկնական հանդէսները կը շարունակուին սիրւռքի Մխիթարեան վարժարաններուն մէջ: Գրպժ. Արբաճայրը, այդ առթիւ, կ'անցնի Եզրիպոս, Սիւբիա, Լիրանան եւ հուսկ՝ Փարիզ. ամէն կողմ կը գտնէ խանդավառ ընդունելութիւն, յարգանք ու համակրանք՝ Մխի-

Թարեան Մխրանութեան, անոր բոլոր անդամներուն եւ յատկապէս անոր Պետին հանդէպ :

Սակայն հեռատես Արբաճայրը, յաղթանակի այդ ոլսանաներու մէջէն, չի կատիր անխոնջ ջանքերով իրազործելէ ուրիշ երազային ծրագիր մը՝ Ս. Ղազար կղզիին ընդարձակութիւնը: Նախաինամութեան մեծ հրաշքը՝ սովոր էր կոչել Գրպօ. Ուլուհոճեան այս նշանակալից եղելութիւնը, որուն հնարաւորութիւնը կը պարտի Իտալիոյ բարեշնորհ կառավարութեան :

Անխոնջ Արբաճօր ճիւղերով եւ մխրաններու ժիր աջակցութեամբ՝ Մխիթարի կղզին կը քառապատկուի, կը բարձրանան անոր նոր պարխաները՝ վեհանձն բարերարներու օժանդակութեամբ, նորատունկ ծառերն ու բուսաբերութիւնը կը հեռանկարեն դրախտավայրը վաղուան: Նոր հողին վրայ ծրագրուած են շէնքերը Հայկական մատենադարաններու, թանգարանի նոր բաժնին, եւ այլ կարեւոր թեւերու, որոնց կառուցումով՝ նոր եւ արդիական դարկ մը պիտի առնէ Մխիթարեան Կաճառը, ի սլարծանս աղբիւն եւ օտարներու :

Իր օրով ու նախաձեռնութեամբ՝ նոր պերճանք կը զգնու Ս. Ղազարի մայր տաճարը, չքեղ մողայիքներով եւ աւազ բեմի մարմարապատուծով: Վանքին նորընծայարանի մատուռը ամբողջովին կը վերանորոգուի՝ հայադրոյժ սուրբ սեղանով եւ խորաքանդակներով: Կարեւոր ներքին յարմարութիւններով կ'օժտուին վարդապետներու բնակարան սենեակները: Վանքին առաջակողմեան հրապարակին ու պարտէզը նոր փայլ կը ստանան ճաշակաւոր ծաղկազարդումով: Գեղեցիկ ու վայելուչ կը սիրէր տեսնել ամէն կողմ, մաքուր ու պայծառազարդ :

1950ի աշնան, Գրպօ. Ուլուհոճեան Արբաճայր կ'այցելէ Ամերիկահայ գաղութը, ուր ամէն կողմ խանդավառ ընդունելութեան ցոյցեր կը գտնէ, մանաւանդ Խարբերդցի ազգական եւ բարեկամներու կողմէ: Պոսթոնէն մինչեւ Փրեզնոյ, կարծէք կը մրցին իրենց յարգանքի տուրքը ներկայացնելու Մխիթարեան Արբաճօր, տալով նաեւ իրենց նիւթական աջակցութիւնը՝ ի նպաստ Մխիթարեան կրթական ու դրական գործունէութեան :

1952ի Օդոստոս Աին, Ընդհ. Ժողովին մէջ, Գրպօ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան այս երկրորդ անգամ դարձեալ կը վերընտրուի իր բարձր պաշտօնին մէջ: Խանդավառ շնորհաւորութիւններ եւ հեռապիղքներ կու գան անգամ մըն ալ հաստատելու անոր գործունէութեան մասին անվերապահ դնահատանք մը :

1953 թուականի դարնան զինք կը գտնենք Լիբանան, ուր կը մասնակցի Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան խորհրդակցական ժողովին, Զմամուռ վանքին մէջ: Այդ առիթով կ'այցելէ նաեւ Ս. Երկիր,


Երուսաղէմ: Վերադարձին կ'անցնի Խաթանպուլէն, ուր կը ստեղծուի մեծ խանդավառութիւն՝ հին ու նոր նախկին սաներու եւ բարեկամներու շրջանակին մէջ:

1955ի Նոյեմբերին դարձեալ կը ճամբորդէ զէպի Ամերիկայի Միացեալ Նահանգները, Միարանութեան վարժարաններուն ի նպաստ նոր ձեռնարկներ կազմակերպելու: 1956ի ամառը կ'անցնի այցելել Պուէնոս Այրէսի նորարաց Միխիթարեան վարժարանը, եւ հոնկէ դարձեալ հիւսիսային Ամերիկա, ուրկէ Ս. Ղազար կը հասնի 1957ի Սեպտեմբերին: Ամէնուրեք կը սիռէ համակրանք եւ ողբերգութիւն թէ՛ իր անձին շուրջ եւ թէ՛ Միարանութեան հանդէպ, ըլլայ աղբային, ըլլայ նաեւ տեղական քաղաքական շրջանակներու մէջ, ուր յաճախ այցելելու առիթներ կ'ունենայ:

Իր անոյշ ժպիտը, համեստ կեցուածքն ու նայուածքը եւ մտնականը զուարթարարոյ խօսակցութիւնը առինքնող բան մը ունէին. Յովհանէս ԻԳ. Պապ, Գարեգին Կթղ. Յովսէփեանց, Արամ Խաչատուրեան, Նախադահ Քամիլ Շամուն, Նախադահ Արամպուրա, Վարչապետ Փանֆանի, չթուելու համար Ֆրանսական Ակադեմիայի անդամներ եւ այլ բազմաթիւ բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնց հետ հանդիպում ունեցած է Գրպծ. Սրապիոն Արբահայր Ուլուհոճեան, զնահատանքի անկեղծ արտայայտութիւններ ունեցած են իր մասին ու բարեկամական սերտ կապերով չլիթայուած:

Վանքին մէջ զինք կը սիրէին ո՛չ լոկ վանականները, այլ մինչեւ իսկ ամենախոնարհ աշխատաւորը կամ սարտիղպանը, որոնց համար միշտ ունէր բարի խօսք ու քաջայերական վերաբերում: Վենետիկի եւ Թրեւիզի դաւառի եկեղեցական շրջանակներուն մէջ կը վայելէր ամէնուն զնահատանքը եւ յարգանքը անվերապահ:

Կրթական ու վարչական պաշտօնի բերումով՝ այս բազմադրաց կեանքի ընթացքին, Գրպծ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան գտած է ժամանակը՝ նուիրուելու նաեւ զրական աշխատանքներու: Թարգմանած է իտալացի համբաւաւոր զրադէա Ճիովաննի Փափիլիի «Չարչարանքի վկաները» (1946ին): Բայց իր զլիտաւոր աշխատանքը, ինչ որ իր փառքն ու ստակը կրնայ կազմել, է Աւետարանի աշխարհարար թարգմանութիւնը (1952). աւելի քան տասը տարի ժրաջան մեղուի նման աշխատած է քննական հրատարակութեանց վրայէն, ինչպէս նաեւ հեղինակաւոր մեկնիչներու լուսարանութիւններէն օգտուելով. եւ յաջողած է տալ ներդաշնակ աշխարհարարով օժուն թարգմանութիւն մը, (աշխարհարար թարգմանութիւններու լաւադոյնը թերեւս), ճոխացած հոգեչաճ մեկնութիւններով ու կարեւոր բացատրութիւններով, ժամանակագրական եւ այլ ցանկերով միասին: Պատկերա-



Դատեն գիւղի հարեայնապատկերը





Յ. Տէր Յովհաննէսեան 11 տարեկանին (1910)

Ք. Գ. Կարապետյան

զարգ, ղեկեցիկ, անթերի ու առնչող շրջապատում լինելու մըն է եւ
ամէն տեսակէտով պատուարեր (Բ. հրտ. 1960ին) :

1958ի վանական Ընդհ. Ժողովին, Յուլիս 16ին Գրպծ. Սրապիոն
Վրդ. Ուլուհոճեան, երրորդ անգամ ըլլալով կը վերընտրուի իր պա-
տասխանատու պաշտօնին մէջ : Ընտրութեան լուրն առնելով Վենե-
տիկի Ամենապատիւ Պատրիարքը՝ Ծիր. Ռոնքալլի անձամբ կը փու-
թայ Ս. Ղազար, հայազգի միաբաններուն վանքը, զոր շատ կը սի-
րէր, շնորհաւորելու այս վերընտրութիւնը, հայրական սիրառատ
մաղթանքներով :

1958ի Դեկտեմբերէն մինչեւ 1959ի Փետրուարը ուղեւորութիւն
մըն ալ կը կատարէ դէպի Պարսկաստան, դպրոցական նոր ծրագիր-
ներու հետամուտ :

1960ի Օգոստոսին, մեծ հանդէսով կը տօնուի Գրպծ. Սրապիոն
Վրդ. Ուլուհոճեանի Աբրայութեան 25ամեայ յորեկանը : Նոյն առ-
թիւ, Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Սրբազան Գահանայապետը արքեպիս-
կոպոսական աստիճան կը շնորհէ Գրպծ. Ուլուհոճեանի. ձեռնադրու-
թեան արարողութիւնը կը կատարէ Գրիգոր Պետրոս ԺԵ. Ծիր. Աղա-
ճանեան Կաթողիկոս, հայկական ծէսին մեծադոյն պերճանքով, Ս.
Մարկոսի մայր տաճարին մէջ, ներկայութեամբ Վենետիկի Պա-
տրիարք Ծիր. Ուրպանիի, որ առնին անձամբ ուրախառիթ լուրը
բերած էր Ս. Ղազար :

1962ին վիրարութեան ծանր դործողութեան մը հետեւանքով՝
բաւական ժամանակ խնամքներու կ'ենթարիտի. նոյն տարին հանդի-
սաւոր բացումը կը կատարուի Մխիթար Աբրահօր նորակերտ արձա-
նին, չքեղ հանդէսով :

Այնուհետեւ Գրպծ. Արքեպիսկոպոս Աբրահայրը կը մասնակցի
Վատիկանեան Տիեզերական Ժողովի նիստերուն. բայց արդէն հիւան-
դութեան հեռաւոր նշանները կը զդար 1963ի եւ մանաւանդ 1964ի
աշնան :

1964ի վանական Ընդհ. Ժողովին, կը հրաժարէր իր պաշտօնէն,
դնելու համար զայն աւելի թարմ ուսերու վրայ :

Երեսնամեայ Աբրայութեան սեմին, անողոք հիւանդութիւն մը
կտրեց կեանքը այս մեծ եկեղեցականին, անհուն ցաւ պատճառելով
համօրէն Միաբանութեան :

Սաղաղ եւ հանդիստ եղաւ իր մահը ու բարի հրեշտակը մօտեցաւ
իրեն՝ Ժպիտը երեսին, հրաւիրելու զինք երկնաւոր Հօր արքայութիւ-
նը, Նահատակներու յիսնամեակին (16 Մայիս 1965) :

Յարգա՞նք իր խնկելի յիշատակին :

Հ. Ն. Տ. Ն.

ՀԱՅԲԵՆԻ ՕՃՂ

Ձև 1477

Ա.

ՀԱՅՐԵՆԻ ՕՃԱԽԸ

ԴԱՏԵՄ ԳԻՒԳԸ

Ձև 3

Մեր գիւղը կը զտնուէր Խարբերդի հարաւ արեւմուտքը (քաղե-
լով՝ մէկ ու կէս ժամուայ հեռաւորութեամբ), նստած՝ Ալէլուիա
(Իրաւամբ կոչուած) «Ոսկեղէն դաշտ»ի գլուխը, մօտ 300 տուն բը-
նակչութեամբ, շուրջ 3000 հոգի: Գիւղի տուները հողին երեսը շին-
ուած էին, մէկ կամ երկու յարկով. տուները կազմուած էին գլխա-
ւորապէս երկու մասէ, իրենց եւ կենդանիներու բաժիններով: Մեծ
տուները ունէին առանձին ննջասենեակներ, ուր կ'ապրէին մմուս-
նացած եղբայրներ, իրենց կիներով եւ թոռնիկներով: Ունէին նաեւ
հիւրասենեակ մը՝ ախոռի նստատեղին, ուր կը հաւաքուէին՝ մա-
նաւանդ ձմեռ ատեն՝ սրբայրներով, մինչեւ ուշ ատեն վառուող կրա-
կարանին շուրջը, մինչ նստած կը դատէին խճէճը, բամպակին կճե-
պը, պատմելով գիւղի հազար ու մէկ հեքեաթները, թուրքերու, Ե-
նիչերիներու, հովիւներու, մեծ ու պղտիկ դէպքերու մասին, որ ան-
ցած էր գիւղի գլխէն:

Գիւղին շէնքերը կիսալուսնի ձեւով շարուած էին բերդին շուրջ,
որ երեք աշտարակաձեւ պարիսպներով, կարծես պահակ էր կե-
ցած ամբողջ դաշտին վրայ: Դպրոցը շինուած էր եկեղեցիին
հետ բերդի կողքին, որ կը համրէր մօտ 200 աշակերտներ, ուսկից
չըջանաւարտներ կրնային երթալ Մեղրէ, Փրանսական, ամերիկեան,
դերմանական կամ հայկական եւ թրքական բարձրագոյն դպրոցները:
Դպրոցը ունէր աղջկանց բաժին, երկու ուսուցիչով: Կը դասաւան-
դուէր հայերէն, թրքերէն, Փրանսերէն եւ անգլերէն. դպրոցի ծախ-
սերը կը հոգացուէին Ամերիկայի եւ գիւղի եկեղեցիին հոգատա-
րութենէն:



Գիւղին մէջ կ'ապրէին ութը թուրք ընտանիք. 1908ի Սահմանադրութենէն առաջ կար երեք հոգինոց թուրք ոստիկանութիւն մը: Հայերը մեծ մասամբ լուսաւորչական եւ 40ի մօտ կաթողիկէներ էին, իրենց եկեղեցիով եւ դպրոցով:

Լուսաւորչական եկեղեցին ունէր երկու քահանայ, եւ դպրոցի ուսուցիչներէն մէկը անսլաւոն կ'ըլլար երաժիշտ՝ հայ եկեղեցական երաժշտութեան, մարդելու համար մանչերը եկեղեցական երաժշտութեան: Եկեղեցին կը կառավարուէր թաղական խորհուրդով, իսկ վարժարանը՝ հոգաբարձութեամբ, ուր դերիշխող թելադրութիւնները կու դային Ամերիկայէն, քանի որ Ամերիկայի լուսաւորչական Ուսումնասիրացը կը հոգար իր ծախսերուն մեծ մասը:

Գիւղի տնտեսութիւնը երկրագործութիւնն էր. կը մշակէին ցորեն, դարի եւ բամպակ. կը բուծանէին նաեւ ոչխար, այծ եւ կով՝ կաթի եւ բուրդի համար: Մեծ տունները ունէին իրենց համար բաւարար ոչխարներ, կովեր, եղներ, էջեր, ջորի եւ ձի, իրենց ընտանեկան եւ երկրագործական պիտոյքներուն համաձայն: Պղտիկ տունները կ'աշխատէին մեծ տուններու մէջ՝ երկրագործական աշխատանքներուն օգնելով, եւ կամ դիւղին մէջ զանազան արհեստներ կը վարէին. այսպէս՝ կօշկակարութիւն, ատաղձագործութիւն, մանուածեղէնի զանազան ճիւղեր. եւ կը ստանային իրենց ուղածը փոխանակութեան միջոցով: Կային ընտանիքներ, որոնք կ'ապրէին փոքր առուտուրով, բանալով պղտիկ կրպակներ, խանութներ՝ հողալու ասեղ, կոճակ, օճառ են. դիւղի կարիքները:

1908ի Սահմանադրութենէն առաջ դիւղին մեծաւոյն դժուարութիւնը եղած է կառավարութեան, ոստիկանութեան եւ դիւղի իշխանաւորներու միջեւ եղած տուրքերու պատճառած տարակարծիքը, որ միշտ ալ քաջալերուած է կառավարութեան կողմէ, անոնց միջեւ միասնականութիւնը արդիւլելու համար: 1908ի Սահմանադրութիւնը առիթ եղաւ որ հայը, գոնէ Դատեմ դիւղի մէջ, իր լայն ազատութիւնը կարողանար վայելել: Գիւղին մէջ ոստիկանութիւնը վերջացաւ: Ամերիկայի եւ արտասահմանի հետ յարաբերութիւնները սկսան եւ դիւղացիին տնտեսական, քաղաքական, կրթական մակարդակը բարձրացաւ:

Քոնի աշխատութիւնը, այս կամ այն աղային կամքին համաձայն, վերցուեցաւ եւ այս աղաները ստիպուեցան մասնաւոր վճարումներով մարդ բռնել իրենց հողերը մշակելու, քանի որ հայը ձրի չէին կրնար աշխատցնել: Գիւղին արտերը մեծ մասամբ ջրարբի էին, եւ այս զլխաւոր ջուրը կու դար Յովհաննու ակէն, որու մօտերը կը կանդնէր կիսաքանդ սրբատաշ քարերով համանուն եկեղեցին: Այս ջուրին շուրջ կը տարածուէր նախկին եպիսկոպոսանիստ եւ իշխա-

նական քաղաքը, որուն միայն հետքերը, քարերը կը խօսէին տեղական փոքրիկ պեղումներու ատեն երեւան ելած, կամ կամարակապ ձեւերը, որ դիւրութեամբ յայտնի կ'ըլլային ցանուած ցորենի պղտի մնացած հասկերով: Այս ջուրը, որ ձմեռուայ ընթացքին կը հոսէր ու կ'երթար հեռունները ու դարնան եւ ամառուան ընթացքին կը դառնար կենարար՝ դիւզի հողատէրերուն համար, առիթ կ'ըլլար անդադար կռիւներու եւ մինչեւ իսկ սպանութիւններու: Այս ջուրը, Չէ ժամուան բաժանումով, տրուած էր դիւզի հողատէրուն: Ամսուան ընթացքին երկու անգամ ջուրը կը դառնար ազատ սպրանք եւ դիւզացի հողադործները, որոնք պղտիկ պարտէշներ ունէին իրենց այգիներուն մէջ, կրնային օգտուիլ քանի մը ժամով, մինչեւ որ կարգը վերահաստատուէր եւ ջուրին տէրը կարենար իր ժամանակը վերադառնել իր ցորենի, բամպակի, ձմերուկի կամ այլ պտղատու ծառերը ջրելու համար:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր տունը հողաչէն էր եւ մէկ յարկանի. երբ դռնէն ներս մըտնէիր ու քարէ սանդուխներով (աջին վրայ) տանիքը բարձրանայիր՝ կը տեսնէիր անմիջական դրացիներու տանիքները, ուր պղտիկներ կը խաղային, մեծերը իրենց առուտուրի մասին կը խօսէին տանիքէ տանիք, իսկ կիները կը քննային եւ կամ ձմեռուայ համար դանադան ուտելիքներ կը պատրաստէին: Աջ կողմը կար հիւրերու համար խոշոր սենեակ մը եւ կողքին վառելիքներ, փայտ, ծառերու կտորած կտորներ եւ բամպակի հաւաքուած տունկերու մնացորդներ: Զախ կողմը կար թոնիրը, որ ամառ ատեն կը գործածուէր իբրեւ սաք (նատելիք տեղ), ուր բարեկամներ կը հաւաքուէին մեծ պապուս Յովսէփ Ամուին հետ գինի խմելու: Երկու դռներ դրեթէ իրարու ջով կը բացուէին, մէկը կը տանէր ախոռ, միւսը՝ բնակութեան տեղը: Ախոռը ունէր հաւնոց, ոչխարի կամ այծերու տեղ, երկու եղ, մէկ էջ, երկու կով կապելու տեղ, եւ ուր շինուած էր փոքրիկ անկիւն մը՝ աղանիներու համար, որովհետեւ եղբայրս կը սիրէր խաղալ անոնց հետ: Երկրորդ դռնէն ներս մտնելու ատեն՝ կար կօշիկները հանելու տեղ: Քիչ մը բարձրագիր՝ կար թոնիրի շուրջ յարմարցուած նստելու տեղ, երկու կիսապահարաններ՝ ուր կը դրուէին կահ կարասի եւ կամ իրիկուան համար ճրագներ: Պահարանի մը մէջ կար արծաթապատ մագաղաթեայ Աւետարանը իր յիշատակարանով, դարերու ընթացքին ժառանգաբար մնացած տան ժառանգութիւնը, եւ յաւիտենական նարեկը: Լոյսը կը ստացուէր առաստաղին վրայ բացուած

պատուհանէն, ուր կը կախուէր սօխը, եւ որուն վրայ բարեկենդանի շարածները նշանակուած կ'ըլլային: Կը պատահէր որ մայրս գիւղէրը իր ջահրը մտնէր, դայիք հարսներու վաղուան հազուատեղէնները եւ անկողինները պատրաստելու համար: Ներքին մասին մէջ շարուած էին փեթակներ, հոն կար նաեւ ցորեն եւ ալիւր. լեցուած՝ ներքին մասին մէջ՝ ձմեռուան խաւովման, չորցած պտուղներ, ըռուպը եւ գինի, որ իր ձեռքերով ընտրուած խաղողէն կը լեցնէր. ձախ կողմը բացուող դուռ մը կը տանէր մարազը, ուր միշտ լեցուած կ'ըլլար յարզը եւ խոտը, ձմեռուայ ընթացքին իրը կերակուր անասուններու:

ՀԱՅՐԱՄ՝ ՏՕՆԱՊԵՏԸ

Ձեմ կրնար ըսել թէ ես ամբողջապէս այս տանը մէջ մեծցայ, բայց իրապէս այս էր որ կրնայի տունս կոչել. հայրս այս տան մէջ ճանչցայ: Բարձրահասակ, կորովի, բարի եւ քաջ մարդ մըն էր: Կը յարգուէր դրացիներէն: 1894ին տուն վերադարձած էր Ամերիկայէն, եւ ըստ երեւոյթին գիւղական պայմաններու մէջ այն բախտաւորներէն էր որ ժառանգած էր տուն, հող, այգի, եւ դանաղան առեւտրական ձեռնարկներ գինքը կը սահէին, եւ ունէ մէկէ աւելի տնտեսական անկեալ վիճակ մը չունէր: Իր վերադարձին կը գտնէ մայրս, իր միակ որդին Կարապետը: Վրայ կու դայ 1895ի ջարդը, կը տարտըղնուի գիւղը եւ հայրս ու մայրս այդ ձմեռ կը վարձեն տուն մը Մեղրէի մէջ, Կեդրոնական դպրոցին ճիշտ գլխացը, եւ այդ տան մէջ կը ծնիմ ես:

Գարնան կը վերադառնան գիւղի տունը, կը սկսին աշխատանքի եւ կը վերաչինեն տունը: Մայրս ունէր երեք եղբայր եւ քոյր մը. իր մեծ եղբայրը Յովհաննէս, կը մահանայ գիւղին մէջ, եւ իր անունը ինծի կը դրուի: Եղիս եւ Կիրակոս հօրեղբայրներս երբեք չեմ ճանչցած, որովհետեւ կ'ապրէին Պոլիս, մէկը ամուսնացած տեղացի յոյնի մը հետ, իսկ միւսը՝ կեսարացի աղջկայ մը հետ. իսկ մօրաքոյրս ամուսնացած էր մեր գիւղի դրացի, Թլիպտինի գիւղացի Յակոբ Մուրատեանի հետ, որուն դաւանները Փիլիպպոս, Յովհաննէս, Արքեղայոս, Սարգիս, Ամերիկա անցան եւ հոն ալ մնացին. իսկ մէկ հատիկ աղջիկը, մօրաքոյրս, Յովհաննէսին տիկինը եւ երկու տղաքը, զոհ դարձան մեծ եղևոնի (1915ին) կարօտի ճամբուն վրայ, բարբարոս դրացի թուրքի մը ձեռքով:

Դժբախտարար շատ բան չեմ յիշեր հօրս մասին, քանի որ կանոնաւ մահացաւ, որբութեան մատնելով ոչ միայն զիս, այլ եղբայրս,

մայրս, քոյրս եւ փոքր եղբայրս՝ որ իր մահէն քանի մը ամիս վերջը ծնաւ, եւ զինքը անուանեցին հօրս անունով Տօնապետ. զեղեցիկ, աղուսը, խաղասէր, ժպտուն տղայ մը եղաւ, սակայն հաղիւ ութը տարիներ սպրեցաւ, օր մըն ալ ձիէն վար իյնալով, տկարացաւ, ու հիւանդանալով մէկ երկու ամիս վերջ մահացաւ: Բժշկական խնամքէ հետո ըլլալով եւ դիւղին մէջ բժիշկ չդտնուելով՝ շատ չանցած կորսնցուցի նաեւ քոյրս, որուն այնքան կապուած կը զգայի:

Հայրս Ամերիկայի մէջ մասնակցած է Դատեմի Ուսումնասիրաց Պրայթինի եւ Վորքըսթըրի մասնաճիւղերուն, որոնց ղլխաւոր նւպատակը եղած է դիւղի դպրոցին հոգատարութիւնը: Գիւղին մէջ բարեկամ էր բոլորին, օգտակար դրացի մըն էր, որ մայրս ալ ժառանգած էր իր տունէն: Իրիկունները հայրս կը դրկէր զիս եւ կ'երդէր, ու այսօրուան պէս մանկական յիշողութեան մէջ թարմ մնացած է հետեւեալ խօսքերը, որ ըստ երեւոյթին թէ՛ եղանակը եւ թէ՛ լատերը ինքը կը հիւսէր.

Երբոր տղաս մեծնայ...
Կարմիր կօշիկ պիտի առնեմ.
Երբոր տղաս մեծնայ,
Ապրշուն հագուստ պիտի առնեմ,
Երբոր տղաս մեծնայ,
Կարմիր ձի պիտի առնեմ.
Երբոր տղաս մեծնայ, հրացան...

կը սպասէր հասկնալու համար թէ մտիկ կ'ընե՞մ: Կը մխտէի զինքը ու կ'ըսէի. նորէն, նորէն, նորէն: Ու դարձեալ կը սկսէր երգը, ու ես երազներու, մանկական երազներու մէջ կ'երազէի կարմիր կօշիկներով, կարմիր ձիով, արդէն թռչիլ հայկական լեռներու վրայ եւ դաշտերուն մէջէն կը խառնուէի մշուշին եւ փոթորիկին հետ:

Անգամ մը հիւանդացած էի եւ աչքերս կը ցաւէին, կու լայի եւ չէի քնանար. կռնակին առած կը պտտցնէր զիս ու կ'աղօթէր յատկապէս աչքերը ցաւած տղուն համար, որ օրօրուելով եւ լսելով պապուն երգը, կամաց կամաց կը քնանար հօր կռնակին վրայ:

Մ Ա Յ Ր Ս

Դժուար է նկարագրել մայրս. աշխատանքը, սէրը, անընկճելի կամքը, ճշմարիտ քրիստոնեայի մը հաւատքը, բարեսրտութիւնը, քաջութիւնը եւ զոհարարութեան ոգին ունեցող մէկ բացառիկ էակ էր մայրս: Հօրս մահով կը մնար միայնակ՝ տան մէջ ծոցուոր պղղ-

տիկ եղբորմուսու եւ երեք դաւակններով : Անասունները՝ եղներ, կովեր, այծեր՝ հողածութեան պէտք ունէին, ցանուած արտերուն ջրտուք եւ հողատար պէտք էր, վաղը դանոնք հնձել, կալ հանել պէտք էր, եւ ինք ծանր դիրքի մէջ ինկած էր, բացի ամուսինը կորսնցուցած ըլլալու վիշտէն : Առաջարկուած ամուսնութիւնը կը մերժէր, անմիջական ազգականները իրենց մտահոգութիւնը ունէին . բայց իր եղբայրները իրեն տէր կեցան, իրենց սիրելի քրոջ եւ զաւակներուն, ու ես հասակ առի ժամանակին հետ՝ աւելի Յովսէփենց տունը քան իմ հայրենական տունս, այնպէս որ դրացիներս մոռցան հօրենական անունս եւ դիս կանչեցին Զարիֆին Յովհաննէսը կամ Յովսէփենց Յովհաննէսը :

Մայրս թաղեց հայրիկս լացով ու մորմոքով, բայց իր կորովը երբեք չկորսնցուց : Այդ ամառ վարեցին դաշտերը, քաղեցին հունձքը՝ որ բացառիկ կերպով առատ էր : Լեցուցին մարաղը եւ դինիի բողոյները : Մայրս իր վերջին զաւակին դբաւ հօրս անունը, եւ մեր տան երդիքէն իր սովորական մուկը բարձրացաւ ու Տէր Յովհաննէսեան ընտանիքի տունը իր դրոշմը պահեց : Իր եղբայրները եւ եղբայրակիցները կը սիրէին ու կը յարգէին իրենց մեծ պաճին, որ փոխադարձաբար դարձաւ Յովսէփենց տանը մէկ անբաժանելի մասը, ու իր զոհաբերական ոգիով պահեց տունը խաղաղութեան եւ բարդաւաճման ճամբուն վրայ :

Օր մը մայրս, նստած տան դուրսի թոնիրի կողքին, քանի մը դբացի կիներու հետ խօսակցութեան կը բռնուի . ամէն ոք իր զաւակներու դժբախտութեան մասին խօսելով, մայրս դառնալով կիներուն կ'ըսէ . «Իմ երեք զաւակներս շատ շատ լաւ են, միայն մեծ տղաս՝ Կարապետը, տան ուշադրութիւն չի դարձներ . միւսները փայտի ճիւղ մը որ դտնեն՝ տուն կը բերեն, իսկ Կարապետը եթէ ուզտ մըն ալ դտնէ՝ տուն չի բերեր» :

Եղբայրս կը լսէ այս խօսակցութիւնը, կը տրտմի, եւ կ'ուզէ կատակ մը խաղալ մօրս ու դբացի կիներուն որ իր մասին կը խօսէին : Յաջորդ օրը, պետական ցորենի տուրքը տանող էշերը կը վերադառնան : Դրան վրայ եղբայրս կը բռնէ այդ էշերէն մէկը եւ բռնի կերպով կ'ուզէ տունէն ներս տանիլ : Դբացի Նաղէ պաճին կը տեսնէ այս եւ կը նկատէ որ էշը կը պատկանի իր եղբայրներուն : Կը հարցնէ . «Ի՞նչ կ'ընես, Կարապետ» : «Նաղար պաճի, երէկ կ'ըսէիք թէ ուզտ մ'ալ դտնեմ՝ տուն չեմ բերեր, ահաւասիկ էշ մը դտայ եւ տուն կը տանիմ, կ'ուզեմ որ դու ներկայ եւ վկայ ըլլաս» :

Եղբայրս՝ որ հազիւ 15 տարեկան էր, շատ կատակաբան, աշխատունակ, ընկերներու եւ դբացիներու հետ խաղաղութեամբ աշխրեւու ջանադիր տղայ մըն էր : Իրմէ պզտիկներու վրայ կը դուր-

դուրար եւ սակայն միշտ յամառ կերպով կ'ընէր այն բանը որ ինք կ'ուզէր կամ կը մտածէր ընել: Աշխատասէր էր եւ կը հետաքրքրուէր շուրջ անցած դարձածովը: Կը սիրէր դպրոցը, եւ սակայն չկրցաւ դիւզական դպրոցն իսկ աւարտել: Ընթերցասէր էր եւ միշտ ալ այնպէս մնաց. կը ջանար եւ կը ստիպէր որ ես անսպասան դըպրոց երթամ:

Սկսայ կաթողիկէ հայոց դպրոցը երթալ, ուր առաջին այր ու բենը սորվեցայ, եւ որու տեսուչը Փիլիպպոսեան վարդապետն էր: Ընկերներս մեծ մասով կ'երթային Վերի կամ լուսաւորչական դպրոցը, ուր ես սկսայ իմ նախնական կրթութիւնս եւ ուսկից անցայ Մեղրէի վարժարանը:

Գիւղին մէջ կու տային հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն լեզուները, ինչպէս նաեւ թուարանութիւն, բնագիտութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն: Անպաշտօն կերպով կը տրուէր նաեւ Հայոց պատմութիւն, կրօնական պատմութեան առընթեր: Ուսուցիչներէն կը յիշեմ կարօտով եւ յարգանքով համադիւզացի եւ աղջական՝ Խորէն Տէր Յակոբեան, Սարգիս Փայրօնճեան, Համբարձում Յարութիւնեան, որ յետոյ դարձաւ տեսուչ Պոլսոյ Կեդրոնականին, եւ զբաղան անունով՝ Զօհական:

Մեր հեռաւոր աղջականներէն մէկը՝ Սարգիս Ենովքեան, ձեռնադրուեցաւ քահանայ կաթողիկէ եկեղեցիին: Աղջականական կապի պատճառով, օր մը Սարգիս քահանան կը մօտենայ մօրս եւ կ'ըսէ. «Չարիֆ պաճի, կը տեսնեմ որ Յովհաննէսը լուսաւորչական դպրոց կ'երթայ, ասիկա լաւ բան չէ ինծի համար. պիտի ըսուի թէ Սարգիս քահանան իր իսկ աղջականները չի կրնար հաւաքել կաթողիկէ եկեղեցիին շուրջ. լաւ պիտի ըլլայ որ մեր դպրոցը դայ, վաղը՝ մինչեւ բարձրագոյն դպրոցներ երթալու հնարաւորութիւն կրնայ ըստեղծուիլ իրեն համար»: Մտիկ ըրի մօրս ըսուածները, խորհեցայ այդ մասին եւ այն եզրակացութեան եկայ՝ որ ես կը վայելէի պէտք եղած դուրդուրանքը եւ առաջնորդութիւնը եւ աւելորդ տեղ ինչո՞ւ պիտի բաժնուէի իմ ընկերներէս: Իսկ եկեղեցիի մասին ի՞նչ տարբերութիւններ կային, չէի ալ հասկնար: Մայրս լսեց պատճառաբանութիւններս եւ այլեւս փախուած համարեց այս հարցը, մանաւանդ որ մօրեղբայրներս կաթողիկէ ըլլալով հանդերձ, հայ էին, եւ այնքան ալ մեծ տարբերութիւն չէին դներ միջամտելու եւ զիս իմ սիրած դպրոցէս հանելու:

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Բ.

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

ՓՈՐՁԱՆՔՆԵՐ

Ձմրան իրիկունները կը հաւաքուէին դրացիներ մեծ հօրս՝ Յովսէփինց տունը եւ խճեճ կը քաղէին հիւսուածեղէն պատրաստելու համար: Այդ հաւաքոյթներու նպատակը աշխատանքն էր, բայց ձմեռ օրերու բուք ու բորանին՝ դրացիներուն տաք տեղ մը հաւաքուելու եւ խօսակցութիւն մը շարունակելու կը ծառայէր, եւ անպայման այս կամ այն կերպով պիտի անդրադառնային 1895ի ջարդերուն: Ու մայրս կը պատմէր. «Տղաքը փախած կամ պահուըտած էին զանազան կողմեր. յանկարծ լուրը տարածուեցաւ որ Քիւրտերը եւ դրացի թուրք զիւղերը պաշարած են զիւղը, որով կիներն ալ պէտք է փախչին, եւ մեր տան մէջ որոշեցինք միասնաբար փախչիլ դէպի Թէփէ զիւղը, մեզի մօտ թուրք գիւղը: Հաղիւ զիւղէն դուրս ելած էինք, երբ նըշմարեցինք որ ամէն կողմէ սուրեր մերկացուցած տաճիկներ աղաղակներով եւ հայհոյանքներով դէպի մեզի կու դան: Հսկայ մը, սուրը մերկացուցած, դէպի ինծի սկսաւ յառաջանալ. ես՝ որ կարապետ տղուս ձեռքը բռնած էի, խնդրեցի այդ մարդէն (կէս հայերէն, կէս թրքերէն) որ մեզ սուրով սպաննելու տեղ՝ հրացանով սպաննէ, կարծելով որ աւելի զիւրին է մեռնիլ մէկ անդամով: Բայց մարդը վայրկեան մը վարանեցաւ, մեր վրայ թալանելիք բան մը չգտնելով՝ վազեց դէպի ուրիշները եւ մենք ճամբան շարունակեցինք ու հասանք Թէփէ զիւղը, ուր յետոյ ինծի միացաւ ամուսինս»:

Ես որ կէս քուն կէս արթուն մտիկ կ'ընէի մօրս հազար անգամ պատմած այս պատմութիւնը, զիտէի որ պիտի աւելցնէր ըսելով. «Ես կարապետին մասին միայն կը մտահոգուէի, առանց հաշուի առ-

նելու թէ ծոցուոր էի եւ Յովհաննէսն ալ ինծի հետ պիտի մեռցընէին»։ Եւ աջ ձեռքը կ'երթար դիտուս ու մայրական դուրսդարանքով կը շոյէր մաղերս եւ կարծես հաղորդակից կ'ըլլայի իր սրտի տրոփուններուն :

Օր մը, երբ մայրս օճախին վրայ հրած էր հողը որ տաքնայ՝ զիս օրօրոց դնելու համար, ներս կը մտնէ վարդապետը, հիւրերով միասին : Մայրս սաւանի մը մէջ լեցնելով այրած տաք հողը, զիս կը դնէ սաւանին մէջ, կը պլլէ եւ կը դնէ օրօրոցին մէջ՝ որպէսզի քնանամ : Ես ալ կը սկսիմ պոռալ, կանչել, լալ, աղաղակել, բայց մայրս անտարբեր կը շարունակէ իր հիւրերը ընդունիլ : Կը բերէ դինի, կը դնէ սեղանին վրայ ու կը մնայ անտարբեր իմ աղաղակներուս : Ի՞նչպէս կարելի է այս չար տղուն լացին մտիկ ընել եւ մոռնալ վարդապետը՝ որ հիւրերով այցելութեան եկած է տունը : Եւ յետոյ անյարմար է երիտասարդ կնոջ մը իր դաւկին նայիլ, մոռնալով իր հիւրերը : Վերջը ի՞նչ պիտի ըսեն : Այս «ինչ պիտի ըսեն»ը պատճառ կ'ըլլայ որ հողին վրայ դրուած կողմս ամբողջովին այրի, ջիղերս քաշուին եւ մինչեւ այսօր հետքերը մնան այրուածքին, եւ քիչ մնար որ բոլորովին կաղ մնայի : Բարեբախտաբար վարդապետը եւ հիւրերը կարծելով որ արդէն կը քնանամ, կ'անցնին կ'երթան, եւ մայրս մօտենալով օրօրոցին՝ ի՞նչ տեսնէ, քրտինքներու մէջ մարած ու անչարժ մնացած եմ : Անմիջապէս կը բանայ ծածկոցը, կը տեսնէ այրուածքը, կը ձգէ զիս անկողնին վրայ ու հողը կը թափէ դուրս ու կը կանչէ քովի դրացին՝ որ իւզով կ'օծէ մարմինս ու կը փրկէ զիս ծանրակշիռ հետեւանքներէ, եւ սակայն այրուածքի հետքերը կը մընան աջ կողմիս վարի կողերէն մինչեւ ծունկերուս մօտերը :

— Վո՛ւշ, վո՛ւշ, ի՞նչպէս տղաս դո՛ւ տուած պիտի ըլլայի իմ ամէկտուտութեանս, թէ վարդապետին եւ հիւրերուն ներկայութեան կարելի չէ վաւկին նայիլ, պատշաճութիւնը կը պահանջէ հիւրերուն նայիլ : Վա՛յ, վա՛յ, ճիշտ այդ ատենը պիտի դային... :

Հինգ տարեկանիս, օր մը, ամառ եղանակին, երբ զիւղացին իր կալը կ'ընէ, դուռի չափ տախտակ մը, որուն վրայ դրուած են կայծքարեր, կալին վրայ նստած էր դրացի աղջիկ մը՝ Մարէն. կը վազեմ եւ կ'ուզեմ ես ալ նստիլ կալին վրայ : Կ'երեւի շատ պնդումներու վրայ՝ խեղճ աղջիկը տեղիք՝ կու տայ եւ կ'առնէ զիս իր ծունկերուն վրայ : Ծատ չանցած, կը ձգէ մասան ինծի եւ կ'երթայ ջուր խմելու : Ես մասան առած, կը մշտեմ կառքը քաշող եղներբքն, եւ պիծակն ալ վրայ կու դայ եւ եզները կը փախչին կալին վրայ, զիս կը ձգեն տակը, եւ այս կայծքարերը կը պատուեն հագուստներս ու կը կը՝)՝ ^{կանք} մի՞րեն միտերս, մասնաւորապէս ծունկերս, ու մինչեւ այսօր սպիացած վէրքերու նշաններ կան երկու ծունկերէս վար դէպի ոտքերս :

Մարիամ կը սկսի ազադակել, կը հաւաքուին դրացիները եւ տնեցիները, ու զիս արիւնջուայ վիճակի մէջ կը հանեն կալին տակէն կիսամեռ. մայրս կը բացազանչէ արցունքոտ. «Որո՞ւ բրդու՞մ մը հաց տուած ենք որ տղաս աղատեցաւ այս փորձանքէն»:

Ուրիշ օր մը՝ երբ քաղուորները տուն կը դառնան իրենց օրուայ աշխատանքէն՝ մօրեղբայրս Սեդրաքը ու ես, սայլը բարձած ցորենի խուրճերով, կը վերադառնանք տուն: Սայլերը զոյգ անիւներ ունին, երկաթով ոլորուած, որ շուտ չմաշին այդ ծանրութեան տակ: Զիս նստեցուցած են երկու եղներու միջեւ՝ աջ կողմի ձողին վրայ, եւ մասան ալ ինծի տրուած է որ եղները քշեմ: Ինքն ալ եղներու կողքին կը քալէ, շրթունքներուն վրայ սիրոյ երգ մը: Սայլերու եւ կենդանիներու անցքերուն պատճառով, ճամբան փոշիով լեցուն է, եւ մեր աչքերը ու հագուստները ծածկուած են փոշիով: Մարահարթէն վար կ'իջնենք եւ եղներն ալ կարծես կը զզան դէպի տուն երթանին եւ հանդատանալին, գրեթէ կը վազեն: Մէկէն ձեռքիս մասան կ'իյնայ, կը ծռիմ որ մասան վերցնեմ, ես ալ կ'իյնամ վար, եւ սայլը թուճիւն վրայէն իջնելու ատեն, կ'իյնամ անիւներուն տակ: Այրած կողմի վրայէն անիւը կը բարձրանայ կռնակս եւ դուռիս աջ կողմէն ուսիս վրայով կ'իյնայ վար: Ես կը թաղուիմ փոշիներուն մէջ: Սեփաքը վախի եւ սարսափի մէջ, կը սպասէ դիտիս վերցնելու, երբ կը տեսնէ՝ փոշիներուն մէջէն թէ կը սկսիմ բարձրանալ, աչքերուն չի հաւատար. կը վազէ քովս, կը բռնէ, կը շօշափէ զիս, կը հարցնէ թէ ո՛ւր կը ցաւի, տեղ մը կոտրած կա՞յ թէ ոչ. եւ ես կը զբամ որ աջ կողմս արիւններու մէջ է եւ կը սկսի մղմզալ: Կը համինք տուն, կը լուսնեն զիս, գեղեր կը դնեն կողերուս, կը կապեն, եւ իրենց ուրախութեան դիւին կը պարպեն, որովհետեւ մեռած էր՝ կենդանացաւ, դացած էր եւ մեզի վերադարձաւ: Յոգնած՝ իրենց աշխատութիւններուն մէջ, դժբախտութիւն մը իրենց համար ուրախութեան առիթ մը եղաւ: Մայրս ալ, միւս աշխատաւորներու հետ կը վերադառնայ ու կ'իմանայ պատահածը, քովս կու գայ ու կ'արտասուէ, աւելի ուրախութեան համար եւ շնորհակալութեան՝ որ կը յայտնէ Աստուծոյ. «Հազար, հազար օրհնեալ ըլլաս Տէր Աստուած, որ այս որբուկս խնայած ես ինծի»:

Գիւղի դպրոցի դրաղարանի ետեւի դասարանը կեցած եմ, մեր երիտասարդ ուսուցիչին առջեւ եւ հիացումով կը դիտեմ իր պայծառ դէմքը, խարտեաչ մազերը, ոլորուն եւ վայելուչ պիւրը, մանաւանդ իր ձեռքի ատրճանակը: Ես կ'ողբեւորուիմ եւ ի՛նչպէս կ'ողբեմ որ այդ ատրճանակը իմս ըլլայ, եւ ի՛նչքան կը փափաքիմ որ Պր. Միհրանը պահ մը ինծի ալ տայ որ շոյեմ, շօշափեմ այդ սիրելի

դէնքը: Այդ պահուն դասարանը կը դողայ մեծ պայթիւնով մը, ա-
կանջս կը զնկայ եւ քթիս տակէն կ'անցնի զնդակը, կը ծակէ դասա-
րանի ապակին առանց կոտորելու, եւ կ'երթայ դէպի գերեզմանոցը:
Ես դրեթէ չեմ հասկնար թէ ի՛նչ կը պատահի: Խեղճ ուսուցիչը ինք-
զինքը կը կորանցնէ՝ կարծելով թէ զիս զարկաւ, որովհետեւ անտեղ
կեակ էր ասորճանակին մէջ մնացած զնդակի: Կը դրկէ զիս, ապա-
հով կ'ըլլայ որ ինծի բան մը չէ եղած, կը հանդարտի մտքով ու
մարմնով: Եւ ես ալ տակաւին յուզումով կը յիշատակեմ այս դէպքը՝
աչքիս առջեւ ունենալով իր սարսափած դէմքը ու երանելի իր ուրա-
խութեան ճիւղը, երբ ստուգապէս հաստատեց որ անվտանգ մնացած
էի այս արկածէն:

Երկար պիտի ըլլայ նկարագրել այն մեծ սէրը որ մանկութեան
օրերէս ունեցեր եմ ձիուն հանդէպ. թերեւս ասոր համար որ միշտ
ալ տեղ բռնած է յիշողութեանս մէջ հօրս երգը. «Երբոր տղաս մեծ-
նայ, կարմիր ձի մը պիտի առնեմ»:

Հայրս զնաց առանց իր փափաքին հասնելու, բայց շնորհիւ մեծ
եղբայրներուս, ինծի սորվեցուցին ձի նստիլ, ձի մեծցնել, այնպէս
որ ընկերներուս մէջ կը նկատուէի վարժ ձիաւոր մը: Երբ ուրախու-
թեան օր մը, ամբողջ գիւղը հաւաքուած կալերը՝ ձի կը վազցնէին,
ես ալ արդէն պատանի, իմ ձիովս ներկայ էի այդ վազքին, կամ
այնպէս կոչուած ձիարչաւին, հերկուած դաշտին մէջ զանազան տը-
ղաք իրենց ձիերը կը վաղցնէին: Ամբողջ գիւղը տօնական օրերու
պէս ներկայ էր, գիւղին մէջ նման ցուցական երեւոյթ մը առաջին
անգամ կը պարզուէր, եւ գիւղացին ուրախ էր որ իր տղաքն ալ ձի
կրնան նստիլ Թուրքերուն ներկայութեան եւ չեն արգիլուիր: Երկ-
տասարդ ձիս նոյնպէս կը խաղայ տակս, կարծես կը զգայ բազմու-
թեան ներկայութիւնը: Ու քչեցինք խումբով. ձիս չէր ուզեր առաջ-
նութիւնը ուրիշ թողուլ. ես ալ հովի պէս երջանիկ, կարծես թեւեր
առած կը թռչէի, սանձը ձգած՝ բռնած էի բաշէն եւ կորսուած՝ բաշի
մագերուն ու հովին մէջ: Յանկարծ ձիս կը ցատքէ տասը ոտք բար-
ձրութիւն մը ու կու դայ կռնակի վրայ. ես կը նետուիմ երկու կան-
դուն հեռուն եւ կը ծածկուիմ փոշիներու մէջ: Իմաստուն ձին կ'ելլէ
ու կը վերադառնայ ինծի, եւ գիւղացին շունչը բռնած կը նայի, մինչ
ուրիշներ կը վազեն ինծի օգնելու: Կը բարձրանամ, շուրջս կը նա-
յիմ, կը բռնեմ ձիս կը համբուրեմ զինքը, ժողովուրդը յուզումով
կը ծափահարէ՝ որ այս արկածէն արդարեւ անվնաս:

ՄԵԾ ՀԱՅՐԱ

Մեծ հայրս, Յովսէփի ամուսն, լուրջ եւ իմաստուն, ծանր ու յարդուած մարդ մըն էր, յարդուած ոչ միայն զիւրի հայերէն, այլ չըջակայ հայ եւ թուրք զիւրացիներէն, որովհետեւ իր տան դուռը բաց էր, եկող մարդը կը մտնէր իր տունը, կը կշտանար եւ իր ճամբան կը շարունակէր: Կատակներ կ'ընէր, տեղին ու ժամանակին յարմար: Իր պատմութիւններէն կը յիշեմ, որ օր մը տանը մէջ հինգ վեց հոգի հիւանդացած պառկեր են. պառկած է նաեւ ինք, իր յառաջացած տարիքին համար: Դրացիներէն մէկը կու դայ ներս եւ տեսնելով հոս ու հոն պառկողները՝ կը հարցնէ թէ ո՞վ են պառկողները: Մայրս կը պատասխանէ. «Այս առաջինը շատ ծանր վիճակ ունի, փորձեց ելլել, չի կրցաւ ոտքի կենալ ու նորէն մտաւ անկողին. այս երկրորդը Սեդրաքն է, չեմ գիտեր ինչ պիտի ըլլայ, խեղճ տղան քրտինքներու մէջ կը տառապի: Այս երրորդը Մարէն է, երէկ շատ աշխատեցաւ եւ չգիմացաւ. շատ կը վախնամ վիճակէն, քանի որ ծոցուոր ալ է: Այս չորրորդը Յարութիւնն է, երէկ էջէն վար ինկաւ, չեմ գիտեր, կը վախնամ որ կողը կամ ոսկրները կտորած ըլլան, գիշերը մինչեւ լոյս լացեր է: Հինգերորդը քոյրս Հովհիսիմէն է, սարսափելի դուրսը կը ցաւի, աչքերը չի կրնար փակել, չեմ գիտեր ինչ պէտք է ընեմ: Իսկ այս վեցերորդը ո՞վ է, կը հարցնէ դրացին, որուն մայրս հանդարտութեամբ կը պատասխանէ. «Հէջ, այդ ալ հայրս է, հենց պառկած է»:

Մեծ հայրս՝ որ սկանջ դրած մօրս խօսակցութեան կը հետեւի, բարկանալով իր աղջկան կը պատասխանէ. «Վա՛ր դուստր, ասոնք բոլորը որ պառկեր են՝ շատ դժուարին եւ ծանր պայմաններու մէջ են, իսկ պապդ՝ հենց պառկեր է»:

Այս իրողութիւնը կ'ըսէին եւ կը պատմէին, ու կը հարցնէին մօրս նորէն ու նորէն, թէ «Զարիֆ պաճի, ի՞նչ եղաւ»: Ու մայրս ժպիտը չըթնորուն, քիչ մը աւելի դեղեցկացուցած միամիտ երեւոյթով, կը սկսէր իր պապուն ներկայութեանը, որ կրկին ու կրկին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր. «Նա, բոլորին հոգը կը տանիս, իսկ ճծրդ կը մեղադրես թէ հենց պառկեր է»:

Օր մը մեծ հօրս խնամիները եւ ընկերները կ'որոշեն գինովցնել զինքը: Կը հաւաքուին իր տունը անուանակոչութեան առիթով, կ'ուտեն, կը խմեն, կ'ուրախանան, նուազ կը դարնեն, երգող կը կանչեն եւ շատ հաճելի մթնոլորտ մը կը ստեղծուի: Մեծ հայրս կը նըշմարէ թէ սովորականէն աւելի ճիւղ մը կ'ընեն խնամիները զինքը գինովցնելու: Կը կանչէ իր մեծ տղան եւ կը պատուիրէ. «Նա առհասարակ չեմ գիտնուներ, բայց ցոյց պիտի տամ որ գինովնալու մօտ

եմ : Տես որ ինծմէ աւելի մեր խնամիները լրիւ կերպով, իրենց ուղածին չափ խմեն եւ ուրախանան» :

Մինչեւ առաւօտ կը խմեն եւ բոլորն ալ կը սկսին երերալ : Այն ատեն մեծ հայրս կը վերցնէ զինի թասը եւ կ'ըսէ . «Այ իմ սիրելի խնամիներս , լեցուցէ՛ք ձեր բաժակները եւ պարպեցէ՛ք մինչեւ վերջին կաթիլը . թող մեր կեանքը ուրախութիւնով անցնի , եւ ասիկա կոչենք հօփը» : Ապրի՛ մեր խնամին , կը բացադանչեն եւ կը պարպեն իրենց զինի թասերը : Մեծ հայրս կը դառնայ նորէն . «Լեցուցէ՛ք ձեր դաւաթները մեր դաւակներու եւ թոռներու կենացը , եւ ասիկա ալ կոչենք թօփը» : Ու երբ այդ ալ կը պարպեն բացադանչութիւններու մէջ աւելի լրջացած մեծ հայրս , կը դառնայ . «Ծնորհակալ եմ ձեր այս ինծի ըրած պատիւներուն , չէն մնաք , երջանիկ մնաք , վերցուցէ՛ք ձեր թասերը որ խմենք մեր ազգին հովիւներուն կենացը , եւ այս ալ կոչենք շրտըր շօփը» : Ինքը կը քամէ մինչեւ մրուրը եւ ժլպիտով մը կը նայի շուրջը որ իր խնամիները բոլորն ալ զինի ըստեղծած մշուշին մէջ են : Կը կանչէ տղաքը ու թոռները ու կը հրամայէ . «Տարէ՛ք մեր խնամիները եւ իրենց տունները յանձնեցէ՛ք , ես վստահ եմ որ անոնք անգամ մըն ալ պիտի չփորձեն զիս զինուորներ» :

Իր մահէն վերջն ալ , խմելու ատեն կ'ըսէին . Ասի հօփն է , եւ այս ալ թօփն է , միւսն ալ շրտըր շօփն է :

Մ Ա Հ Ե Ր

Առաւօտ մը կանուխ , մայրս հաց եփելու պատրաստութիւն կը տեսնէր , խմորը լեցուած էր տաշտին մէջ ու պատրաստ բացուելու . թոնիրին ալ կրակը կանուխէն վառած էր եւ կողերը կարծես հայած երկաթի պէս կարմրած էին : Ես ոտքի վրայ հոս հոն կը դառնայի , այս ամէնը ստվորական եղելութիւններ ընդունելով : Մօրաքոյրս Հռիփսիմէն վաղեց մեր տունը եւ արցունքներու մէջ յայտնեց որ շուտ իրենց տունը երթայ մայրս , որովհետեւ եղբայրը այս առաւօտ կանուխ եկեղեցի երթալէ առաջ մտած է խոտ մանրելու մարազին մէջ ու մարազը փելելով՝ ինքը տակը մնացած է , տակաւին չեն դտած զինքը , բոլոր գրացիները հաւաքուած են եւ կարգադրութեան կը սպասեն : Մեծ հայրը , մօրեղբայրներս , քոյրերը , տան աղջիկները , հարսները եւ դրացիները հաւաքուած՝ արցունքոտ աչքերով լալով ու աղօթելով կը սպասեն որ զինքը յարգին ու հողին տակ ողջ դտնեն : Վարպետներ կը հաւաքուին եւ կը սկսին փորել , ու վերջապէս անշնչացած մարմինը հողին տակէն կը հանեն : Ծիւանը սկսաւ տանը մէջ , ու մայրս՝ որ մահուան վրայ ստոյիկեան իմացում ու-

նէր, կը հեկեկար իր մեծ եղբոր այսպէս մահանալուն համար: Այս մեծ տանը առաջին մահը եւ արկածային դէպքը, այսօր ալ յիշողութեանս մէջ է, ինչպէս նաեւ բարի եւ աղետաւիան պատկերը իմ սիրելի մօրեղբայր Յարութիւնին, որ կ'երթար յաւիտենականութեան զիրկը, սուղի եւ տխրութեան մէջ ձգելով իր հայրը, չորս քոյրերը, երկու եղբայրները, թոռները, դուռ ու դրացի:

Տարիներ վերջ իր թոռը Գրիգոր, Յարութիւն Ուլուհոնեանի պղտրիկ եղբայրը, Հայր Վրթանէսի (Մխիթարեան Միարանութենէն) հօրեղբայրը, նոյնպէս կորսնցուցինք արկածով:

Տանը ձին, դաշտի մէջ կապուած ցիցի մը, առջեւը նետուած խոտը կ'ոտէ եւ իր պոչով կը կռուի ճանճերուն հետ: Պատանի Գրիգորը, քաղուած խոտի արտին մէջ փայտէ ձին նստած, կը վազվզէ աջ ու ձախ ձիուն շուրջը: Ոչ ոք կայ մօտը, եւ ոչ ոք կը զբուշացնէ այս բարի տղան որ ձիէն հեռու խաղայ: Ինչպէս կը պատահի ձին ազացիտով կը դարնէ պատանիի փորին, ու խեղճ Գրիգոր ազազակելով գետին կ'իյնայ: Կը վազեն, կը բռնեն, կը դերկեն եւ անմիջապէս բժիշկի մը կամ հիւանդանոց հասցնելու մտքով զինքը կը տանին Մեղրէ, ուր սակայն շատ չանցած կը մահանայ, եւ մարմինը կը բերենք տուն ու իր մեծ հօրը կողքին կը թաղենք: Ներկայ կ'ըլլան, կարելի է ըսել, ամբողջ գիւղի բնակիչները, այս պատանիին տխուր թաղման, ու իմ մտքիս առջեւ դեռ այսօր կը պատկերանայ իր դեզեցիկ դիմադիծը, ու կարծես կը լսեմ դեռ իր անոյշ ձայնը, երբ կ'երգէր կերկերուն եւ յուզիչ եղանակներ, այնքան պղտրիկ հասակին:

Մեծ հայրս, Յովսէփենց տան հիմնադիրը եւ պատրիարքը, 90ը կ'անցնէր, երբ իր հանգիստ խաղաղ աշխատանքէն մեկնեցաւ, իր մեծ տանը զուգը տեսնելով, եւ այն հաւատքով որ ոչ մէկ հով կըրնար այդ տունը կործանել. թէ՛ աղջիկները, թէ՛ տղաքը, թէ՛ թոռները, ամէն մէկը ծիւ նետած էին եւ իրենց գիւղի, կարելի է ըսել, ամէնէն ուժեղ եւ յարգանք վայելող տունը կը նկատուէին, թէ՛ Հայերու մէջ եւ թէ՛ թուրք ու քիւրտ հեռաւոր եւ մօտաւոր գիւղացիներու մօտ, որոնց առջեւ այդ դուռը միշտ բաց մնաց, եւ ոչ ոք առանց հացի մեկնեցաւ: Այսպէս ալ եղաւ անոր մահը. կարծես թէ հեռաւոր ճամբորդութեան պատրաստուող ճամբորդ մըն էր որ մէկիկ մէկիկ դաւակներուն, թոռներուն, հարսերուն, կրնամ ըսել տան կենդանիներուն, շուներուն ու հաւերուն կարօտցած «պապու» պէս մնաս բարով ըսելով, իրեն համար աղօթք խնդրելով աչքերը փակեց եւ քնացաւ, ու ամէն մարդ կու դար եւ «Աստուած ողորմի հոգւոյն մեր Յովսէփ ամուին» ըսելով կ'անցնէր:

Չորս մահը կը յիշեմ ու այս ուշացած ժամուն կ'անդրադառնամ. մանկութիւնը եւ միամտութիւնը ի՞նչ լաւ բաներ են կեանքին մէջ:

Դուրսը կը խաղայի, երբ կ'ըսեն թէ հայրս մեռած է. կ'երթամ մօր-
եղբորս տունը, ուր երկրորդ յարկի բաց սենեակին մէջ պառկեցու-
ցած են հայրս, որ քանի մը ժամ առաջ հողին աւանդած է: Կը տես-
նեմ խաղընկերներ՝ որ կը մտնեն ու կ'ելլեն եւ դժգոհ եմ ըսելով որ
«մեռնողը իմ հայրիկս է, իրենք ինչ գործ ունին», մէկ երկուքին
դժգոհանալով կը բարկանամ ալ: Չեմ անդրադառնար ինծի եւ մօրս
համար, կամ ընտանիքիս համար պատահած մեծ ողբերգութեան,
մինչեւ որ կը նշմարեմ մօրս հեկեկանքը, եւ հօրաքրոջս՝ որ Խոյ-
լուէն իր եղբոր հիւանդութեան առթիւ դիւղ եկած էր, արտասուա-
լից աչքերով զիս դրկելը եւ աղաղակելը, եւ մօրս խօսքը, թէ՛ ալ
ո՞վ քեզի պիտի բերէ «կարմիր կօշիկը եւ ձին, ալ ո՞վ, ո՞վ պիտի
բերէ, անոյ ձաւս»: Նոր զգացի որ ահաւոր բան մը պատահած է
մեր տան կեանքին մէջ, որ ես չէի զգար. ու այսօր ալ կը լսեմ ըս-
քանչեւի հօրս անոյ ձաւսը որ իր տղուն համար երգեր կը յօրինէր.
անոր քաղցր կարօտը երբեք չմշուշցաւ սրտիս մէջ, եւ ոչ ալ յիշա-
տակը մոռցուեցաւ յիշողութեանս մէջ: Դրացիներ, աղբակաւաններ,
վարդապետ ու քահանայ կ'երթային ու կու դային, եւ անսովոր բան
մը պատահած ըլլալու ներքին սարսուռ մը կը զղայի այս բոլորին
մէջ, բայց լրիւ չէի զգար այն տարողութիւնը որ մէկ անգամէն մարդ
կը զրկուի իր հօր դուրսդուրանքէն ու կը դառնայ որբ մը:

ՈՒԽՏԻ ՕՐԵՐ

Մեր գիւղին մէջ կային աւելի քան քսան սրբավայրեր, ուր մար-
դիկ կ'երթային մոմ մը վառելու, յարգանք մը մատուցանելու կամ
խնդրանք մը ընելու: Այսպէս Սուրբ Քառասունք, Սուրբ Սարգիս,
Սուրբ Յովհաննէս, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Սահակ եւն.: Որքան
կը յիշեմ, այս սուրբերու պաշտամունքը կապուած չէր միայն եկե-
ղեցական հաւատքի հիմունքներով, որ շատ զօրաւոր էր ժողովուր-
դին մէջ, այլ նաեւ կը բխէր անհատ անձերու կատարած զոհողու-
թիւններէն: Բացի գիւղերու մէջ ունեցած սուրբերու ընծայուած
յարգանքէն, զանազան պատճառներով կ'երթային հեռաւոր սուրբե-
րուն մուրազի եւ կամ զանազան բժշկութիւններու համար: Այսպէս
մեր տունէն կ'երթային Խարբերդ քաղաք, Հիւսէյնիկ, Եղեգի, Ծովք,
մասնաւոր օրեր, որ այդ վայրերու սուրբերուն յատկացուած էր:
Ասոնց մէջ ամէնէն յատկանշականը անշուշտ Ծովքի Ս. Նշանն էր,
որ ոչ միայն փրկարար նկատուած էր, այլ այցելութեան առիթ մըն
էր Ծովաց աշխարհի մեծ վարդապետին՝ Ս. Ներսէս Ծնորհալիի յի-
շատակը յարգելու, եւ առիթ մը հայրենաշունչ եւ աստուածաշունչ

հայրասպետին մէջ դռնները կորսուած փառքերու վերապրումը: Ի՞նչ խօսք, թէ Ծովքը հրաշքի պէս ջուր մըն է Հայաստանի մէջ հրաբուսած, որ յետագային իր մէջ ընդունեցաւ բիւրաւոր նահատակներ, թրքական ցեղասպանութեան: Բնութիւնը չքնադ էր հոն, իր գեղեցիկ լեռներով, հոսուն ջուրերով, սքանչելի կանաչութիւնով, իր բարձրֆրութեամբ՝ Մաստառ լեռան փէշերուն տակ, յակիւնդ մըն էր բիւրական օդի մաքրութեամբ, իր քաջակորով զաւակներու հուժկու դիմացկոտութեամբ եւ անդիմադրելի գեղեցկութիւնով պճնուած, ամէն եղանակի իր պճնանքով: Եւ այս Ս. Նշանի տօնական օրերուն, Խարբերդէն եւ Տիւրքանակերտէն մարդիկ կը լեցուէին Ծովքի կողերուն, տեսնելու համար դղեակ եկեղեցին, մխրճուած Ծովքի ջուրերուն մէջ, յաւիտենական փառքը ներդաշնակելու Հայոց եկեղեցիի իմաստուն Հայրասպետի շարականներուն եւ աղօթքներուն հետ: Կապտէր, կը պարէր, կը խմէր Խոխի մօտակայ հայ գիւղի մը նշանաւոր դինիով, ուխտ կ'ընէր իր դաւի առողջութեան, իր պանդուխտի ողջ ու առողջ վերադարձին, իր ուղած մարդուն կամ աղջկան աւելի մօտիկ ըլլալու ըզձանքով, եւ վայելելու քանի մը օրուան ընթացքին այս սրտապարար մթնոլորտին, բարեկամութեան, հաւաքական կեանքի յիշատակը եւ փոխադարձ խոստում տալով որ յաջորդ տարի, եթէ Աստուած կամենայ, իբր ուխտաւորներ դարձեալ պիտի հանդիպին հոն:

նկ

ՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Կար Ծնունդը իր կաղանդ պատկայով, իր «Աւետիս»ներով եւ մարդարէներով եւ «Հրաշափառ»ներով, ուր մասնաւոր պատուի էին լաւ ձայն ունեցող մարդիկ՝ ուսուցիչներ, քահանաներ եւ սարկաւադներ կը փառաւորէին այդ մեծ տօնի ուրախութիւնը ամէն օճախէ ներս ու ամէն եկեղեցիի մէջ:

Բարեկենդանը մասնաւոր շուքով կը տօնուէր. երեք օր գիւղը շարժումի մէջ էր եւ կարծես հարսանիք կար. տաւալ եւ գուռնա դոյզ դոյզ, Բեֆի եւ ուրախութեան կը հրաւիրէին երիտասարդները, փէյլիվանները, պարողները: Գիւղը աւանդական ինքնավստահութիւն մը ունէր, թէ Թուրքիոյ մէջ ամէնէն ուժեղ մարդիկը տուած էր, ինչպէս փէյլիվան Գրիգորը, որու անունը տարածուած էր մինչեւ Մուշ եւ Տիւրքանակերտ. շատեր լսելով իր ոյժը եկած չափուած էին իրեն հետ եւ պարտուած, գովքը տարած էին ամէն տեղ. ինքն ու դիւզն ալ հպարտութեամբ կ'ըսէին. «Դադմահօրթը Մուսուլի գայլինը փախցուցեր է», եւ այս ինքնավստահութիւնը տեւական էր իր երիտասարդական մտածումին մէջ:

Յետոյ՝ Զատիկը, որ նոր կեանքի բնութեան զարթումի հետ կը բերէր շողքը եւ բոյսերու ծրարձակումին հետ՝ երիտասարդութեան ներքին եռքը, իր սիրած աղջկան հանդիպելու եւ դէպի Ս. Յովհաննէսի աղբիւրը ուխտի երթալու, եւ դարաւոր ու կէս փլատակ սրբատաշ քարերով շինուած եկեղեցիին պատերուն քարեր զարնելու: Եթէ քարերը կը փակին իրարու, ուրեմն սրտէն անցած իղճը կը կատարուի. յետոյ կ'երթան ժայռերէն կազմուած կամուրջի տակէն կ'անցնին, իբրեւ ներքուստ կատարուած ուխտ մը՝ թէ հաւատարիմ պիտի մնան իրենց սիրոյն:

Համբարձման տօնը նոյնքան զեղեցիկ եւ ուրախառիթ տօն է, մասնաւորապէս երիտասարդութեան համար. պարերու, երգերու, հին օրերու մէջ կատարուած դէպքերու հաւաքական վերապրումի առիթ մըն է այս տօնական օրը, եւ աղջային գոյն կը ստանայ ժողովուրդի ոգիին մէջ: Այս օրերուն՝ եկեղեցի կը լեցուին ամէնքը, մեծով պղտիկով, իրենց ամէնէն լաւ հազուստները հաղած. ու երջանկութեամբ, հայ դիւղացիին իր եկեղեցիին կառչած պապենական ժառանգութեամբ մը, նաեւ իր քահանային, իր դպրատետին, իր զաւակներուն. հաւաքուած դպրաց դասը՝ կը կրկնէ նոյն ալելուիան, նոյն շարականը, ներկայ կ'ըլլայ նոյն պատարագին եւ կը հազորդուի սուրբ հաղորդութիւնով իր Յիսուս Քրիստոսովը, որուն՝ իր մահովը հաւատարիմ մնալու ուխտը սենի դարերու ընթացքին: Գիւղին մէջ աղջիկները դպրաց դասի անդամ չէին կրնար ըլլալ, միայն տղաքն էին որ կրնային շապիկ հագնիլ: Ոմանք լրիւ կը հետեւէին երգեցողութեան, պատարագին, շարականներուն. կային մարդիկ՝ որոնք կարգալ գրել չէին գիտեր, բայց ծանօթ էին կատարուած ոչ միայն աղօթքներուն, այլ քեղի կրնային բացատրել եւ կրկնել ինչ որ կը կատարուի եկեղեցիին մէջ: Ոմանք արդէն կը վիճէին դանազան աղանդներու շուրջ, կը բացատրէին աւետարանները եւ կը մեկնաբանէին Նարեկացիին:

Մեծ մօրեղբայրս՝ Աւետիսը, որ հօրմէն վերջը տան մեծը եղած էր եւ աշխարհ տեսած մարդ ըլլալով հանդերձ, առտուն շատ կանուխ պիտի երթար եկեղեցի, պիտի մասնակցէր թիւ պատարագին եւ ժամանակէն առաջ պիտի հասնէր տուն, այդ օրուայ աշխատանքներուն համար կարգադրութիւնները ընելու: Միւսները եկեղեցի կ'երթային կիրակի եւ բացառիկ տօնական օրերուն, ինչպէս՝ կընունքի, մկրտութեան, հարսանիքի, մեռելաթաղման օրերուն: Պատահած է որ մեծ մօրեղբայրս ամբողջ մեծ պահքի ընթացքին չճաչէր (բացի երեկոներէն), անօթի մնար եւ առանց ջուրի. այս ինքնազըրկումը կը կատարուէր սիրով եւ հաւատքով, ուղևիտով բարի օրինակ ըլլալ իր ընտանիքին եւ իր զաւակներուն:

Հայ առաքելական եւ հայ կաթողիկէ եկեղեցիներու պաշտօնական յարարերու թիւնները լաւ էին : 300 տան մէջ, միայն 40 տուն կաթողիկէ կար : Ազգային վտանգներու ատեն անոնք նոյն բախտին կ'արժանանային, բայց իրենց փոխադարձ վերաբերումը կախում ունէր իրենց առաջնորդին եւ կամ դերասպայծառին վերաբերումէն՝ դէպի իրենց համայնքը : Երկու պետերն ալ կը նստէին Մեղրէի մէջ եւ անմիջական շփման մէջ չէին դիւղին հետ : Կը պատմէին՝ որ բողոքականներն ալ ուզած են համայնքի մը հիմը դնել դիւղին մէջ եւ ուղարկած են պատուելի մը : Այս պատուելին դիւղի երիտասարդները կը հաւաքէ ու կը սկսի քարոզել եւ կը յարձակի մեծ պահքի վրայ ըսելով թէ՛ «Ինչ որ կ'ուտէք՝ մեղք չէ, այն որ բերանէն վար կ'երթայ՝ չի կրնար մեղք ըլլալ, բայց այն որ բերանէն դուրս կու գայ մեղք է» : Այս խեղճ պատուելին չէր ըմբռնած թէ ինչ կ'ըսէր... : Յաջորդ օրը երբ դիւղէն կ'ուղէ մեկնիլ, երիտասարդները կը կեցնեն զինքը եւ կրկնել կու տան ինչ որ նախորդ օրը ըսած էր : Պարկին մէջէն կը հանեն կատուի ձաղ մը եւ կ'ըսեն . «Քանի որ մեղք չկայ բան մը ուտելուն մէջ, այս կատուի ձաղը բերանդ պիտի դնենք որ ուտես» : Պատուելին կը դառնայ Մեղրէէն եւ խորհուրդ կու տայ զինքը ուղարկող մարդոց որ Դատեմ մարդ չզրկեն այլեւս, եթէ կեանքին կ'ուզեն խնայել : Ու այնուհետեւ ոչ մէկ բողոքական կը փորձուի Դատեմ դալու : Թէեւ թուրք կառավարութիւնը կը սիրէր որ զանազան եկեղեցիներ ստեղծուէին ու Հայերը միանալու եւ մէկ մարմին կազմելու մասին չմտածեն . «բաժնէ որ տիրես» եղած է բոլոր եկող ու դացող բռնակալութիւններու քաղաքականութիւնը :

Անրոտ մտերմութիւնը կը ստեղծուէր ընդհանրապէս խնամիներու մէջ, եւ կնքահայր կ'ընտրէին մեծ բժախնդրութեամբ, որովհետեւ կնքահայրը միշտ ալ մեծ պատուի արժանի մէկը կը նկատուէր, եւ կնքահայրութիւնը կը տեւէր սերունդէ սերունդ : Հարսնիքի, մըկըրտութեան, ուրախութեան, տրտմութեան ատեն՝ կնքահայրը միշտ ի պատուի էր : Շատ անգամ երբ աղջիկը ամուսնութեան առաջարկ կը ստանար, իր կնքահայրը այս պաշտօնական դիմումը կը կատարէր, եւ առհասարակ կը պատասխանուէր որ պէտք է կնքահօրն ալ կարծիքը առնուի՝ վերջնական պատասխան մը տալէ առաջ : Այս սովորութիւնները դարերու ժառանգութիւն էին եւ անպայման կը պահուէին :

Պատահած են դէպքեր, որ երկու ընկերներ կամ բարեկամներ խօսք կու տային իրարու թէ իրենց զաւակները պիտի նշանեն՝ աղջիկ եւ տղայ ըլլալու պարագային, եւ այս խոստումը կը պահուէր ընդհանրապէս, ու մեծցած զաւակները առանձին ըսելիք չունէին, բայց եթէ ուղղակի կամ անուղղակի երկուստեք լուրեայն համաձայ-

նութեամբ կարդուիլ, թէեւ կրնային իրենց խոստումը չպահել բացառիկ հարկադրանքներու տակ: Գանի որ կը խօսինք այս մասին, աւելցնենք որ մեր գիւղէն շատ քիչ աղջիկներ դուրսը կ'ամուսնանային, այնպէս որ գիւղին 300 տուները, այսպէս կամ այնպէս իրարու կապուած էին, ազգականական կամ խնամիրական կապերով: Ես լսած եմ հեքեաթը Ըլլոյենց Ձարիկ պաճուն. ինչացի, ծայր աստիճանի գեղեցիկ աղջիկ մը, որ նշանած կ'ըլլայ քաղաքի մէջ երիտասարդի մը հետ, եւ զոր դատեմցի երիտասարդներ գիշերով կը փախցընեն եւ կ'ամուսնացնեն իրենց գիւղացի երիտասարդի մը հետ. ու անոր մասին «չեր» կամ երգեր հիւսուած կ'երգէին գիւղացիները:

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԵՂՈՒԹՈՒՆՆԵՐ

ՏՈՒՐՔԵՐԸ

Ձանադան տեսակի տուրքեր դրուած էին գիւղացիին վրայ. այս տուրքերը կը հաւաքուէին գիւղին մէջ նստած թուրք ոստիկաններու եւ հայ մեծամեծներու օթանդակութեամբ՝ ծեծով, բիրերով, սուտ մուրհակներով, որ գիւղացին վճարելով իսկ չէր կրնար ազատիլ: Մեծ տուները, որոնք ժամանակին կը վճարէին, նման չարչարանքներէ կ'ազատէին: Այս տուրքերը հետեւեալներն էին.

1. Կալուածական
2. Կենդանիներու. ոչխար, եղ, ձի, հաւ եւլն.
3. Գինիի եւ ամէն տեսակ խմիչքի
4. Այր մարդու եւ կամ տղայի
5. Ճամբաներու
6. Կրթական
7. Պետական
8. Արմտիքի
9. Մարդահամարի:

Այս տուրքերէն որեւէ կերպով չէր օգտուեր գիւղացին, ո՛չ ճամբաներու շինութեան համար, ո՛չ կրթական նպաստով: Մարդահամարի համար, որոշ տարիներ գիւղը կու դային և արձանագրութիւն կը կազմէին, մանաւանդ տղաներու, որոնք պէտք էին զինուորութեան փոխ-գինը վճարել, զրկուած ըլլալով զինուոր ըլլալու իրաւունքէն: Ասոր համար գիւղացիները պղտիկ գրել կու տային իրենց մանչ զաւակ-

ներբ: Այդ էր պատճառը որ 1915ին, երբ 18 տարեկանները կը հաւաքէին, ևս զինուորութեան չտարուեցայ, քանի որ տարիքս պակաս էր: Կը պատմէին որ ճամբու բանուորութեան համար, իւրաքանչիւր հայ, երկու շարաթէն երկու ամիս հետու պէտք էր երթալ եւ ճրի աշխատիլ, առանց ուտելիքի եւ առանց վճարումի. հասկընալի է թէ որքան թշուառութեան եւ անիրաւութեան կը մատնուէր հայ գիւղացին, երբ տան մը աշխատաւորը կը բաժնուէր տունէն: 1895ի ջարդէն առաջ, Յակոբ քահանան կ'ըլլայ այդ օրերուն գիտուն եւ հայրենասէր քահանան, որու թելադրութիւնով կը կազմուի Ամբրիկայի Դատեմի Լուսաւորչական Ուսումնասէրը, որ իր կարգին մինչեւ 1915ի մեծ ջարդը, ևս մինչեւ այսօր, կը կատարէ ազգասիրական մեծադործութիւն (տե՛ս Մեք Գիւղը Դատեմ, հրատարակուած Ամբրիկայի մէջ): Այս քահանան, օգնելու համար իր ծխականներու թշուառ ընտանիքներուն, իր լաւ թրքադիտութեամբ կը շինէ կեղծ կառավարական կնիքը եւ կու տայ ստացականներ մարդոց, որոնք չէին կրնար այդ աշխատանքին ու ղոհողութեան դիմանալ. սակայն երբ կը գիտցուի՝ կախաղանէ կ'ազատի միջամտութեամբ Պոլսոյ հայ կաթողիկէ պատրիարքարանին: Յետագային, գիւղին Հաճի պէկը, գիւղի արիւնխախում թուրքերու թելադրութիւնով ևս մասնաւոր դաւադրութեամբ, 1915ի ջարդին կը գնդակահարէ քահանան, բայց գընդակները իր ծոցին ամէնօրեայ աղօթադրքին զարնուելով՝ չեն կըրնար թափանցել. այն ատեն ոճրագործները բիրերով եւ այրելով կը նահատակեն այս իմաստուն եւ իր կեանքը ժողովուրդին համար զոհարերող մեծ քահանան: Այրած աղօթադիրքը 1915ին ինծի մնաց, եւ որուն մասին պիտի պատմեմ յետագային:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Համայն ընտանիքին մէջ, մէկը ոչինչ կրնար պարտաւոր կատարել, եւ տունը իր կարգին կը հողար ընտանիքի անդամին կարիքները: Հօրս մահէն ետք, մեր տունը միացած էր մօրեղբայրներուս տանը հետ: Աշխատանքները կարծես բաժնուած էին, այնպէս որ վէճի առարկայ չէր մնացած. մեծ հայրս քաշուած էր աշխատանքէ եւ մեծ մօրեղբայրս՝ Աւետիքը, մեծը կը նկատուէր դործնականին մէջ, այդ տանը եւ հարսերուն վերաբերմամբ. մայրս՝ իր աշխատանքին եւ նըւէրումին շնորհիւ, դարձած էր կանանց բաժնի տեսակ մը աշխատանքի բաժնիչը: Աշխատանքները կը բաժնուէին համաձայն հոգանակին. ձմեռ, աշուն, դարուն եւ ամառ, իրենց յատուկ դործերը ունէին: Զմեռը՝ անասունները կերակրել, հողալ, ախոռը մաքրել,

Ղուբ հայթայթել, խճիճ քաշել, բամպակ դղել, կտաւ դործել, երկրագործական դործիքներու նորոգութիւնով դրաղիլ, հաց եփել՝ շաբաթը առնուազն երկու անգամ, կարկտուք ընել, ճաշ պատրաստել, ալիւր աղալ տալ: Գարունը՝ հողերը վարել, ցանք ընել, ջրտուք ընել, արտերու մէջ ակոսներ բանալ, այգիներ յորդել, պտղատու ծառերը հողատարել, ծառերն ու ծաղիկները ցանքս ընել, վարել, խոտ քաղել կենդանիներու համար, շաբաթը անգամ մը լողնալ, լաթերը լուալ: Ամառը՝ կենդանիներու կերը չորցնել, տուն բերել, վարելը շարունակել այն արտերուն՝ որ այդ տարուայ ընթացքին առանց ցանքի պիտի մնան պարարտացման համար: Աշունը՝ հունձքի շրջան է. նախ քաղել արտերը, այս դործին համար դիւղացին առհասարակ մշակներ կը վարձէ հունձքը շտապելու համար: Նշանաւոր հունձքի վարպետներ կային մեր տանը մէջ. Մարդիսը ամէնէն լաւ քաղուորն էր տէստէ կապելուն մէջ, կարելի է ըսել թէ դարիի կամ ցորենի խուրձեր կը հանէր մէկ տէստէյով: Այս տէստէները երբեմն կը նետուէին ճամբորդ անցորդներու, հիւր եկող այցելուներու, որոնք իրենց կարգին ուրիշ նուէր կու տային այս եղած պատուին համար: Այս առիթներուն, երբեմն զոյգեր, երկսեռ կամ երկու կիներ կամ երկու մարդիկ, մրցումի կ'ելլէին եւ միջնորոտը կ'ուրախացնէին երգերով, խանդավառութիւն ստեղծելով: Այս քաղէն, ինչ որ յիշողութեանս մէջ տպաւորուած է, ախօսներ բանալու դործն է՝ որ խրմբական կ'ըլլայ: Մարդ մը իր ձեռքին ունի երկաթէ մասնաւոր շինուած բրիչը՝ որուն երեսին վրայ երեք չորս օղակներ ամրացուած են, պարաններ կապելով այս օղակներէն երկարող փայտէ ցողի մը, զոր կիներն ու աղջիկները խմբովին կը բռնեն ու կը քաշեն համաձայն այդ մարդուն տուած ուղղութեան:

Մեր ընտանիքի այս հաւաքական աշխատանքին՝ անտրտունջ, սիրով ու նուիրումով եւ շատ անգամ երգելով ինքնարուխ կատարումը՝ այս տան, այս ընտանիքին, այս ժողովուրդին պատկանելիութեան միջնորոտ մը կը ստեղծէր, եւ որուն պատկերը հոգիիս եւ մտքիս մէջ անխարդախ մնացած է, հակառակ անոր որ այնքան ցաւ, այնքան տառապանք, այնքան փոթորիկներ անցեր են: Այն հարսերը, աղջիկները, մարդիկ որ սիրով եւ նուիրումով կը ստեղծէին այս պատկերը, այսօր չկան: Կալերը դիւղացիին համար՝ առատութեան, կարեւոր դործ մը կատարողի հպարտութեան եւ ինքնարաւարտութեան առիթ մըն էր, մանաւանդ Սահմանադրութեան ընթացքին, քանի որ վաշխառուներ, պետութեան պարտատէրեր՝ չէին կրնար անարդար պահանջներով տէր կանգնիլ այդ վաստակին՝ որ ամբողջ ընտանիք մը արիւն քրտինքի մէջ մտած, վաստակած էր շունչ մը առնելու եւ իր վաստակը վայելելու համար:

Կալերու յարդէ ըլուընեբուն վրայ երկննալով, օրօրուելով, աստղերը զիտելով, երգելով, սիրոյ եւ հաւատքի երազներու մէջ իյնալով, կը շարունակէին զատել սերմը, հատիկը յարդէն, եւ տեղաւորելով յարդը մարազին մէջ, եւ հաց հատիկը կը պահէին սպասելով որ կառավարութեան ներկայացուցիչը տասներորդը առնէ, կամ իր բաժինը տանի գիւղատէրը, հովիւը, պահապանը, եւ հուսկ բուն տէրը մնացածը տանի իր շտեմարանը լեցնելու եւ իրեն համար ապրուստի ձմեռուան պաշարը հայթայթելու, կամ շուկան տանի ծախելու եւ իր տան պէտքերը հողայ, իրենց պահանջներուն եւ կարողութեան սահմաններու մէջ:

Լուսնկայ լուսնին, օրուան տաքէն յետոյ, զով իրիկուան, բաց օդին երգերու եւ ուրախութեան ձայները, ողջ գիւղի շրջապատը կը լեցնէին եւ երիտասարդութիւնը՝ ակնկալութեան, յոյսերու եւ երազներու մէջ էր, թէ աշունը կը մօտենայ եւ թերեւս այս տարի իր ծնողքը պիտի ուզէր իր սիրած աղջկան ընտանիքին այցելել՝ խնամութիւն կնքելու համար: Հարսերը, որոնց մարդիկը հեռու տեղեր պացած էին, անձկութեամբ ու լիայոյս կը սպասէին անոնց վերադարձին:

Կ Ռ Ի Ի Ն Ե Ր

Գիւղի կեանքը մեղր ու կարագ չէր միայն. կռիւներ տեղի կ'ունենային իրենք իրենց մէջ՝ Թուրքերուն հետ, գրացի թուրք գիւղերուն հետ: Թուրքերը վարժած էին ձրի աշխատեցնել ղանոնք, մանաւանդ Սահմանադրութենէն առաջ: Իրենց համար կարեւոր չէր թէ ինչ աշխատանք ունէին, բաւական էր որ իրենց հունձքը վարուի, իրենց ցանքը կատարուի, իրենց այգին փորուի, եւ կարգով կու դային ու կը կենային այս կամ այն տան առջեւ որ պէտք ունէր իրենց աշխատանքին. եւ գիւղացին պիտի ենթարկուէր, նկատելով մերժուելու հետեւանքները: Գողութիւն, կռիւ, սպանութիւն կը պատահէին, եւ կառավարութիւնը միշտ ալ միջոցներ կը դռնէր ազաները պաշտպանելու: Սահմանադրութեան ընթացքին, այս բաները կը պատահէին բայց ոչ նոյն համեմատութեամբ եւ նոյն յաջողութեամբ: Սակայն թումբի մը համար, ոչխար մը արտին մէջ երթալուն համար, ջուրի մը իր կողմը տանելուն համար, հարսի մը կամ աղջկան մը խօսք դպած պարագային, ամբողջ գիւղացիներու մէջ թշնամութիւնը կը սկսէր, որ տարիներ կը տեւէր:

Աղջիկ մը ուզելու եւ մերժելու պարագային, շատ անգամ դաւախներու ծնունդը կը կապէին զանազան դէպքերու, այսպէս՝ Կա-

րապետը ծնած է Մանոյի մահուան տարին. Յովհաննէսը ծնած է մեծ ջարդին. Կիրակոսը ծնած է Տիմուրտենց մարդուն սպանութեան տարին. Թադևոսին ծնած է Մէհէտուհի սպաննելու տարին: Մեր սիրելի Սահակը բանտարկուած էր ջուրի իրենց բաժինը ապահովելու կռուի ընթացքին, եւ մնաց բանտ մինչեւ Սահմանադրութիւն, եւ մահացաւ Գիւրտերու կողմէ, կասկածուելով թէ մեծ հարստութիւն մը փախցուցած ըլլար Չարսանճազի տէրտէրին Արսլանբէկի տունէն: Գիշեր կը նշէին աւետարանի դրքին մէջ թուականները, մանաւանդ որ ծնունդի օրերը նկատի կ'առնէին այն օրուան եկեղեցիի մէջ յիշուած սուրբերու անունով, եւ բարեկամներն ալ կ'այցելէին կամ կը շնորհաւորէին իրենց անուանակոչութեան օրերը. այդ էր պատճառը որ մայրս դիւս ու եղբայրս Կարապետ եկեղեցի կը տանէր Յովհաննու Կարապետի օրը: Այդ օրը, մոմ կու տային մեր ձեռքը եւ մենք մասնաւոր նուէր պէտք էինք տալ եկեղեցիին, եւ կամ խաղողօրհնէքի ժամանակ՝ պէտք էր մեր այգիին լաւադոյն խաղողէն տայինք ժողովուրդին բաժնելու համար: Այսպէս կը կատարուէր Չատկուայ անթիւ: Չատկի ուրբաթ օրը, ես՝ մածուն, թան, հաւկիթ պէտք էի տանիլ մեր աղքատ զբայիներուն եւ կամ բոլոր անոնց՝ որոնք կով, այծ եւ մաքի (էգ ոչխար) չունէին կամ հաւ չէին պահեր եւ տան մէջ հաւկիթ չունէին: Այս սովորութիւնը շատ տարածուած էր եւ մայրիկս մեծ հաւատարմութեամբ կը հետեւէր, եւ երբ ես դժգոհութիւն կը յայտնէի, կը խրատէր ըսելով. «Տղաս, մեր զբայիները, որոնք չունին այս բաները, բարի եւ լաւ մարդիկ են, Ծնունդին եւ մասնաւորապէս Չատկին՝ պէտք է քրիստոնէարար բաժնենք այն բարիքները որ Աստուած տուած է մեզի...»:

Գիւղին մէջ՝ 1896ի ջարդին, 200 հողիէ աւելի սպաննուած էին, եւ հարիւրաւոր կիներ ու աղջիկներ բռնաբարուած ու տարուած բռնի ամուսնութեան եւ իսլամացումի. ասոնցմէ ոմանք մինչեւ վերջերս կսպ կը կապէին իրենց աղաւաններուն հետ: Առաւօտ մը, կը տեսնեն որ ամէն կողմէ սուրբերով, դանակներով, եւթադաններով գիւղը կը լեցուին: Ամէն մէկը ծակ մը քաշուած է իր կեանքը ազատելու, եւ գիւղը անպաշտպան է եւ պաշարուած: Զէյթունցի կաթողիկէ Կղեմէս վարդապետի առաջնորդութեամբ՝ մէկ մասը կը սկսի դէպի Մէզրէ փախչիլ: Ուրիշներ՝ կը սկսին մօտակայ թուրք գիւղերը ապաստանելու փորձ ընել. այսպէս կիներ, աղջիկներ ու նաեւ մարդիկ ամէն ուղղութեամբ զիրար կորսնցնելով, կը պահուրտին կամ կը փախչին՝ քանի որ ինքնապաշտպանութեան օրեւէ յոյս չկար:

Առաջին թրքական գիւղի պետը՝ զինուած դէմ կ'ելլէ, եւ վարդապետը ատրճանակը ձեռքին՝ կը դռչէ.

— Սալիհ աղա, թշնամութեամբ թէ բարեկամութեամբ կու դաս:

— Քեզի բան չկայ, անցիր, ճամբադ դնա՛, վարդապետ:

— Ես առանց ժողովուրդի չեմ կրնար երթալ, կ'ըսէ եւ ժողովուրդին կը հրահանդէ իր ճամբան շարունակել, եւ ինքը նոյնպէս ձին քշելով կ'անցնի ու խոշոր թիւով մարդիկ այսպէսով կը յաջողին Մէդրէ հասնիլ:

Մայրս, վեց տարեկան ելլօրս ձեռքը բռնած, ուրիշ ժողովուրդի հետ կը բռնէ դէպի Թէփէ Քէօյի ճամբան. հաղիւ դիւղէն դուրս ելած՝ կը տեսնեն որ քսանէ աւելի ղինուած թուրքեր, սուրերը մերկացուցած՝ կը յարձակին իրենց խումբին վրայ. եաթաղանը առած՝ մարդ մը կը վազէ դէպի իրեն: Մայրս, սպառաստուած մահուան, կ'աղաղակէ. «Աստուծոյ սիրոյն, զիս եւ այս վեց տարեկան տղաս հրացանով զարկէք, ոչ թէ սուբով»: Մարդը կը նայի վրանին, կը տեսնէ թէ հեռուն ուրիշներ կողոպուտ կ'ընեն, կը ձգէ ղիրենք ու կ'երթայ կողոպուտի: Յետագային մայրս միշտ կը կրկնէր թէ՛ Երբ կ'ըսէի թէ ղիս եւ այս վեց տարեկան տղաս հրացանով սպաննեցէք, երբեք չէի անդրադառնար որ ոչ թէ երկու հոգիի, այլ երեք հոգիի մահուան մասին կը խօսէի, քանի որ ծոցուոր էի քեզմով. Աստուած քեզի նայեցաւ եւ երեքս ալ ազատեց:

Արոյեան քահանան՝ վերաւոր, կը պատասպարուի քարաժայռերուն մէջ. յետագային այրելով կը նահատակուի. իսկ Տէր Յակոբը չեն կրնար սպաննել, իր ծոցին մէջ պահած Աւետարանին սլառճառով, ուրեմն զայն կը քարկոծեն եւ կ'այրեն. այսպէսով անդուխ կը թողուն դիւրը: Միայն կօշկակար Գրիգորը, որ ատրճանակ մը ունէր, կը դիմադրէ եւ այնպէս կ'ազատի. սակայն զոհ կ'երթայ մեծ եղեռնի ցեղասպանութեան: Մայրս կը փախչի Թէփէ դիւղ, ուր կը մնայ ատեն մը, մինչեւ որ հայրս կարգադրութիւն մը կ'ընէ ղինքը փոխադրելու քաղաք, եւ Մէդրէի մէջ, Կեդրոնական դպրոցի փողօցին մէջ տուն մը կը վարձէ, ուր ես կը ծնիմ, եւ կը տեղաւորուին մինչեւ դարուն: Գիւղացիները տուն կը վերադառնան իրենց հոգին կապուելու, հողէն ապրուստ հանելու համար, քրտնաջան՝ բայց հարազատ աշխատանքով:

Կամաց կամաց ամէնքը կը վերադառնան դիւղ, որ կէս աւերակ էր ու քանդուած, եւ մեծ ու պղտիկ կը սկսին վերաշինել իրենց տուները, եկեղեցին: Ապա կ'անցնին այգիները շտկելու, հաւաքելով թաւանուած կենդանիները, եւ ամէն օճախէ կը սկսի մուխը բարձրանալ: Հայր կը սկսի եփիլ փուռերու մէջ: Կը շինուի հայոց եկեղեցին, թէ՛ հայ, թէ՛ կաթողիկէ զոյգ դպրոցները կը շինուին, մանկապարտեզ, աղջկանց եւ տղայոց վարժարան. եւ կեանքը, շատ չանցած, կը մտնէ տեսակ մը բնական եւ սակայն անտանելի վիճակի մը մէջ:

Ատեն մը, կաթողիկէ դպրոցը յաճախելէ վերջ, ուղեցի լուսաւորչականներու դպրոցը երթալ, ուր իմ խաղընկերներէս շատեր կ'երթային, եւ աւելի կանոնաւոր դպրոց էր քան թէ կաթողիկէն, որ միայն մէկ ուսուցիչ ունէր, իսկ լուսաւորչականը կը համբէր աւելի քան 700 աշակերտ (ձմեռ ատեն), երեք ուսուցիչ եւ երկու վարժուհի, որոնք կու դային դիւզը, դասաւանդելու եւ կազմակերպելու համար վարժարանը: Ուսուցիչներ կային Եփրատէն՝ Համբարձում Սարգիսեան, որ Պոլսոյ Կեդրոնական դպրոցի տնօրէն եղաւ, յետագային դրական անունով կոչուեցաւ Ջոհական, եւ որ շրջանաւարտ էր Մէլքի կեդրոնական վարժարանէն եւ եղած էր Զարդարեանի աշակերտներէն, Լեւոն Ներսէսեան, Կարապետ Մանկունի, Լեւոն Մանուկեան, Միհրան քահանան եւ ուրիշներ, որոնց անունը թարմ կը մնայ յիշողութեանս մէջ, իրենց կատարած մեծ դոհողութեան համար եւ մանաւանդ մեր դիւզի դպրոցին մակարդակը բարձրացնելու արժէքաւոր ծառայութեան համար:

Այնուհետեւ եկան ուրիշներ եւ շարունակեցին դպրոցական կեանքը, ինչպէս Գեղամ Արծրունին, հայրենակից Հայկազ Հերոյեան, Յակոբ Տէր Անանեան եւ իր քոյրը: Մեր մանուկ օրերու մտածութեան մէջ կը մնայ մեր դիւզացի խորէն Տէր Յակոբեանը, որ մահացաւ հեռաւոր Ամերիկայի մէջ, առանց տեսնելու իր տիկինը եւ իր դաւակը Յակոբը, որ կրակներու մէջէն աղատեցաւ եւ կազմեց տուն մը եւ դաւակը կոչեց խորէն:

Օր մը, Պր. Համբարձումը ըսաւ որ ազգային երգերը, պատմութիւնը եւայլն վերցուին դասարանէն, կրնան ոստիկաններ դալ եւ հարցաքննել ու նեղութիւն տալ. երբ մեծ սրահը աշակերտներէն պարպուած էր, ուղեց որ աթոռ մը տանիմ իրեն, պէտք պիտի ըլլայ ըսելով. երբ երկրորդ անգամ անակնկալ ներս մտայ, տեսայ որ աթոռին վրայ կանգնած՝ առաստաղին մէջ պահուած թուղթեր կը տեղաւորէ: Իր աճապարանքին մէջ թերթ մը ինկաւ դետին ու երբ ես վազեցի վերցնելու եւ իրեն տալու, տեսայ «Պրօչակ» թերթը եւ Անդրանիկի պատկերը. աղաչանքով խնդրեցի որ ինծի տայ մէկ քանի ըսելով՝ դիտելու համար, ըսելով թէ ոչ մէկուն պիտի ըսեմ: Այսպէս ալ եղաւ, ու այդ օրէն մտքիս մէջ Անդրանիկը եւ իր ընկերները աստուածացան, ու դէպի լեռները երթալու տեսնչը դիւզացի. երեւակայութեամբս կը խօսէի իրենց հետ եւ կը յուսայի օր մը թերեւս հանդիպիլ իրենց: Ուսուցիչս ըսած էր ինծի որ հայ յեղափոխականներու թերթն է, եւ ես չէի հասկնար թէ հայեր կան, ինչպէս կը տեսնեմ այն պատկերներուն մէջ, որոնք զէնք ունին, հայութեան դին-

ուորներն են եւ Հայերու ազատութեան համար կը կռուին, եւ ամենէն մեծը Անդրանիկն է: Հիացմունքով ու դարմանքով կը տեսնէի անոնց պաշլըզները ու կ'աղօթէի որ օր մը հանդիպիմ իրենց, կարծելով թէ անոնք երեւակայական մարդիկներ են, որ ուզած ատեննին իրենց ուզած տեղը կրնան երեւնալ:

Օր մը մեծ քեռիս եւ եղբայրս կ'երթան Ալուէնքար, այնտեղ աղբիւրները մաքրելու եւ արտերուն ջուր ասպնովելու համար: Այս շրջանը մօտ էր թրքական Թէփէ դիւղին, ուր արտեր ունէր Մէհմէտ Ալի անունով թուրք մը, որ իր տղուն հետ եկած էր կռիւ հանելու եւ վասցնելու համար որպէսզի չհամարձակին ջուրին դըստընելու: Կռիւը ծայր կու տայ, կը սկսին իրարու թիւրով մասաներ դարնել: Հայր ու տղայ կը յարձակին քեռիիս վրայ, եւ եղբայրս երկու ձեռքերով կ'օղակէ թուրքին տղան. անիկա դանակը կը հանէ եւ կը կտրէ եղբորս թեւը: Արիւնը կը հոսի, երկու կողմէն կ'ահարեկին, միջամտել կ'ուզէ Կար ամուն, որ մեր մօտիկ մէկ բարեկամն էր. թուրքը կը սկսի սրուալ, թէ դուք Փետայի էք եւ կ'ուզէք զիս ու տղաս սպաննել. կռիւը կը դադրի: Յաջորդ առաւօտուն, Մէլքէն ոստիկաններ կու դան քեռիս ու եղբայրս բանտ տանելու, քանի որ ամբաստանուած էին այդ առիթով: Ոչ միայն քեռիս ու եղբայրս կը տանին, այլ եւ դիւղին շարք մը անուանի մարդիկ, առիթ մը սեպելով կողոպտելու համար զանոնք: Կաթողիկէ առաջնորդարանը սլաշտպան կը կանգնի մերիններուն եւ մինչեւ Պոլիսէն հրաման բերել կու տայ այս անարդարութեան առջեւ առնելու համար:

Կեանքը այսպէս էր այդ ատեն թուրքիոյ մէջ: Երեւակայութեան պէտք չկայ հասկնալու դաւառի հայերու համար ստեղծուած կացութիւնը: Ու հայը, մեր դիւղացի հայը, կը փախչէր արտասահման, հաղար չարչարանք եւ զրկանք դիմադրաւելով: Կը հարցնեմ մօրս. Ո՞ւր են Մուրատ Սարգիսը, Մարտիրոսը, Մելքոնը եւ շատ ուրիշներ: Անոնք ճամբայ ելած են եւ կ'աշխատին Ամերիկա երթալ, հոն ազատօրէն վաստկելու համար իրենց ընտանիքին ասլուստը. եւ կառավարութիւնը կը հետապնդէ այնպիսիները, ու տան մէջ մնացած անդամներուն նեղութիւն կու տայ. այդ պատճառով մայրը չի կրնար լալ, հարսը իր հօգիտի կարօտի կրակը ոչ ոքի կ'ուզէ յայտնել ու տունը շատ անգամ կը մնայ մինակ, եւ կամ տարիքը առած մեծ հայրը կը խոկայ իր պանդուխտ դաւիլի ցաւին ու հաւանական ձախողութեանը վրայ, մտածելով՝ չըլլայ թէ բռնուի տղաս ու չարչարուի եւ մինչեւ իսկ սպաննուի կամ նոր տուրքերու եւ կաշառքներու ենթարկուի, ու այսպէս տան մը տնտեսութիւնը քայքայուի ընդ միշտ:

ԱԶԲՍ ԴՈՒՐՄՆ Է

Ա.Զ.ՔՍ ԴՈՒՐՍՆ Է

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Այդ օրերուն կը պատահի 1908ի Սահմանադրութիւնը. կը քակուին կապանքները, կը սկսի ազատ ճամբորդութիւնը, կ'երթան մեծ թիւով դէպի Ամերիկա, բայց մեծ թիւով ալ կը վերադառնան իրենց մայրենի գիւղը՝ տարիներու կարօտը առնելու եւ պապենական տունը վերաշինելու համար, լծուելով խաղաղ ու շինարար աշխատանքի: Կեանքը կը դեղեցկանայ, գիւղէն կը հեռանան պետական ոստիկանները, հայը կը սկսի ազատ շունչ քաշել եւ շինել իր տունը, ապադայի յոյսերով: «Ազատութիւն, Արդարութիւն, Եղբայրութիւն» կարգախօսը ամէնուն հողիին մէջ սկսած էր յոյս ներշնչել. բանտերուն դռները բացուած էին եւ մարդիկ՝ որ հայրենասիրական պատճառներով բանտարկուած էին, ազատ կ'արձակուին, պաշտօնական տօնակատարութիւններ տեղի կ'ունենան, թուրք ու հայ կը համբուրուին, եւ կը խոստանան Օսմանեան պետութեան, հաւասար քաղաքացիական իրաւունքներ եւ պարտաւորութիւններ ձեւակերպել՝ աւելի խաղաղ եւ շինարար աշխատանքի համար:

Եղբայրս ալ 18 տարեկան կ'ըլլայ ու կը սկսի մտածել մեկնելու մասին: Նախ կ'ուզէ Պոլիս երթալ հօրեղբայրներու քով, ու այնուհետեւ ձգել ճակատագրին՝ ինչ որ կը բերէ իրեն: Քիչ ատեն դպրոց յաճախեց գիւղին մէջ, բայց աչքէն բան չէր փախչեր. Ամերիկայէն վերադարձողներուն հետ անդիերէն կը խօսի, նոր սորված բառերը կը դրէ եւ յաջորդ օրը կը դործածէ: Կլորակիով հերիւն մը շինած է որ կափարիչով մը կը դոցուի, ըսելով թէ իր ճամբու դրամը պիտի պահէ անոր մէջ՝ աւազակներէն ազատելու համար, եւ ոչ ոք կրնայ կաս-

կածիլ թէ մէջը դրամ դրած ըլլայ: Սահմանադրութենէն վերջ սահայն, կ'ըսէ որ պէտք չունի անոնց, քանի որ Պոլիս ազատ կերպով պիտի կարենար ճամբորդել: Թերեւս իր դպրոց չկարենալ երթալուն համար՝ անպայման կ'ուզէ որ ես շարունակեմ ուսումները:

Երեկոյ մը ըսաւ ինծի. Հայտէ միասին կալերը քալենք, վաղը ես ալ պիտի մեկնիմ եւ չեմ գիտեր երբ կ'ընամ վերադառնալ. ա'լ միասին պիտի չըլլանք, միասին մեր մայրիկին հետ եկեղեցի պիտի չերթանք, մեր տօնի օրերուն՝ իմ կողմէ ալ մոմ մը տար ժամուն. քեզ տեսնեմ, լաւ սորվիր դասերդ, լաւ աշակերտ եղիր որ երբ հետու ըլլամ, տան նամակները դուն գրես: Այդպէս պիտի ուզէր հայրս, այդպէս կը փափաքի մայրս ալ. Տան տէրը՝ Յովհաննէս, դարաւոր տան սիւնը՝ դու պիտի ըլլաս. երթանք մեր այգին որ քանի մը քայլ հետու է. արդէն սկսած են հասուննալ ամէնէն աղուոր խաղողները, քիչ մը քաղէ կեր. եթէ երթաս, ալ ո'վ գիտէ երբ կը վերադառնաս, ըսի: Այդ ըոպէին քեռիս հետուէն կանչեց, ու եղբայրս մազերս շոյեցով, գլուանքով, երթանք ըսաւ, տեսնենք ինչ կ'ըսէ մեր սիրելի մօրեղբայրը:

Յաջորդ առաւօտ, արդէն գիւղը արթնցած էր եւ կը լսուէր կալերու մէջ մաղող մեքենաներու ձայնը, կամ'նողներու՝ եղներու հետ խօսակցութիւնը, տան տիկինի օրուան պատրաստութիւնները: Այդ օրը մենք կալ չպացինք. իրիկուընէ մայրս սկսած էր, թերեւս առաջին անգամ ըլլալով, գոլիլ եւ լալ եղբօրս մեկնելուն պատճառով: Եղբայրս գիւղին մէջ կորսուէր էր, իր վերջին հրաժեշտը տալու համար ազգականներուն եւ ծանօթներուն. վերջապէս զինքը տանող կառքերը կ'անցնին: Ես, քեռիիս ետեւ, իշուն վրայ նստած՝ կ'երթամ Չաթալ աղբիւրը. հոն նորէն կը լսեմ մօրս հեկեկանքները՝ որ սըրտիս խորութեան մէջ կը հատնին. չէ՞ որ լացողը մայրս է, որ նորէն ու նորէն կը կանչէ իր տղան, կ'առնէ զինքը իր բաղուկներուն մէջ, կը մօտեցնէ ճակատը իր շրթունքներուն, կը հեկեկայ, իր աչքերը կը կարմրին, եւ եղբայրս կը փախչի մօրս գրկէն որպէսզի չարտասուէ: Հինդ հողի եւ առաջին ազատ ճամբորդները, բոլորն ալ հարազատներ են հարազատներու գիրկը խառնուած. ոմանք օրուան բաժանման պատշաճ երգեր կ'երգեն եւ մթնոլորտը աւելի կը տխրեցնեն: Վերջապէս, հերկին մէջ եղբայրս կը բաժնուի մօրմէս, հօրեղբօրմէս ու միւսներէն, ու աչքերը կարմրած՝ քովս կու գայ. «Եղբայր, ճակատագիրը մեզ որք ըրաւ, դարիս ալ թող ըլլամ, ու իմ քրտինքով մեր այնքան չարչարուած մայրիկը երջանկացնեմ. սիրէ՛, հնազանդի մայրիկին, իմ անուշիկ եղբայրս», եւ վերջին բառը խեղժուեցաւ համբոյրի եւ արցունքի մէջ՝ որ ճակատս այրեց: Ես երկար նայեցայ ետեւէն, ետ դարձայ, դէսլի գիւղը նայեցայ, ուր

դանդալը արեւուն տակ կը փայլէր, եւ կարգ մը մարդիկ հերքին տակ կը շարուէին, իսկ հոս, եղբայրս կը մեկնէր. պիտի կարենամ արդեօք անգամ մըն ալ տեսնել զինքը: Ղարիպներու ճանապարհը բաց է. այն օրէն սկսան շարան շարան մեկնիլ. բոլոր երիտասարդները, կարօտը իրենց սրտին, օտար հորիզոններու տակ իրենց երջանկութիւնը եւ մխիթարութիւնը փնտռելու կ'երթային, ու կը նմանէին վանդակէն փախչող այն թռչուններուն՝ որոնցմէ շատերը կ'երթային եւ շատ քիչերը կը վերադառնային:

Ժողովուրդը դաւառներու մէջ լրիւ կերպով չէր օգտուեր Սահմանադրութենէն. աւելիին ակնկալութիւն ունէր եւ պատրաստ էր ամէն զոհողութիւն ընելու՝ սահմանադրական կարգերը պահելու եւ երկիրը զօրացնելու համար: Թուրք կառավարիչները որոշած էին թէ մանուկը պէտք է պահել, դուրսդուրալ եւ մեծցնել, բայց ո՞վ էր բայնան՝ որ իրաւունք ունենար պահելու. մուսուլման թուրքը չէր կըրնար ըմբռնել հաւասար քաղաքացիութեան գաղափարը, եւ ժամանակաւոր պատիժ կը սեպէր Սահմանադրութիւնը, պատիժ մը իրենց դիտուն:

ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ

Տարին կ'անցնի եւ կը սկսի 1909ի դարունը. դիւղացին արդէն դաշտն էր, կը հերկէ, ակօս կը բանայ, կը ջրէ, վերջապէս իր քրտինքով կը պատրաստէ հողը դարնան ցանքին համար, եւ բոպէն ոսկի է իրեն համար: Աչնացանքին ցորենները կանաչացած են եւ կը յորդին, հովին տակ կ'ալեծփին՝ պատրանքը տալով ծովի ալեկոծումներուն: Գիւղացին բնութեան այդ հարազատ զաւակը, թափուած է արտերը՝ արեւի շողերու տակ թրծուելու, ձգելով տուներուն մէջ տան տիկիներ, երախաներ եւ դպրոցի աշակերտներ:

Զրոյցներ կը շքին որ Կիլիկիան ջարդած են. դեռ բոլորովին մոռցուած չէ 1895ի ջարդը: Այս անգամ երիտասարդութիւնը կը սկսի պատրաստուիլ, ինչպէս որ կրնայ, ինքզինքը պաշտպանելու առանց դաշտէն բաժնուելու: Մենք դպրոցն ենք, անտեղեակ դուրսի աշխարհէն, մեր դասերով դրադուած ենք եւ կը պատրաստուինք վաղուան Օսմանեան կայսրութեան լաւ քաղաքացիներ ըլլալու եւ հաւատարիմ՝ Սահմանադրութեան, Ազատութիւն, Արդարութիւն եւ Հաւասարութիւն նշանարանով: Ներս կը մտնէ յանկարծ Մուրատենց Մարտոն, 22 տարեկան վառվռուն երիտասարդ մը, շունչը կտրած, սահարեկ կը պոռայ. Պարոն խորէ՛ն, պարոն խորէ՛ն (այդ տարուան ուսուցիչը՝ հայերէնի և եկեղեցական կրթչտութեան և զաւակը

յայտնի Տէր Յակոբ քահանային, հիմնադիր՝ Դատեմի Լուսաւորչա-
կան Ուսումնասիրացի Ամերիկայի մէջ) : Ներսի դասարանէն հազիւ
դուրս եկած՝ կը կրկնէ. «Պարոն Խորէ՛ն, Թուրքերը գիւղին չորս կող-
մը լեցուած են, յարձակման կը պատրաստուին, այսօր գիւղը մարդ
չկայ, բոլորը Մէլրէ կամ դաշտերը դացեր են» : Վարէն մայրերու
կանչը կը լսուի, դաշտերէն դարձող ոչխարներու պէս ամէն մէկը իր
ձաղուկը կը փնտռէ . ընկերներս կ'երթան չեմ գիտեր ուր, մէկը չկայ
ղիս փնտռող . մերինները, տունով դաշտ դացեր են : Կը մօտենամ
ուսուցիչներուս, որոնց հետ դուրս կ'ելլեմ եւ կ'ուզուինք գէպի
բերդը, այն տեղէն տեսնելու համար թէ ինչպէս կարելի է ազատիլ :
Փոթորիկ է : Դժուարութեամբ կը քայլենք բերդն ի վեր, շուրջերնիս
կը գիտենք, արտասովոր բան մը չի տեսնուիր . քիւրտ ճամբորդներ՝
յիսուեներով կու գան ու կ'անցնին գէպի Մեղրէ : Կ'իջնենք գիւղ,
կ'իմանանք որ Եոսուֆը, գիւղին աղաներէն մէկը, փորձեր ըրած է
խռովութիւն ստեղծելու եւ սպառնացած է Թաղէոս Մեղրեանը ըս-
տաննելու : Երեկոյեան, ամէն ոք կը վերադառնայ գիւղ . քաղաքէն
եկողները կը պատմեն թէ հոն ալ իրարանցում մը, անորոշութիւն մը
սկսած է, եւ գիւղը լուրջ տաղնապի մը առջեւն է : Երեկոյեան, մօ-
րեղբորս տունը տեղի կ'ունենայ ժողով մը, որուն կը մասնակցին
գիւղին երեւելիներն ու վստահելի մարդիկ : Կ'որոշուին խմբապետ-
ներ, վարիչներ եւ խումբեր տասնեակներու կը բաժնուին, անակըն-
կալի պահուն՝ ինքնապաշտպանութիւնը վարելու համար : Տեղեկու-
թիւններ կ'առնուին պատահածներու մասին . բայց ո՞վ կարեւորու-
թիւն կու տայ : Յաջորդ օրը կը մօտենամ մայրիկիս, մեծ հայրս ալ
նստած էր սանդուխի մատներուն վրայ, իր 70է աւելի տարիներով .
ալ չեմ կրնար համբերել . «Մայրիկ, մայրիկ, ինծի բարայ տուր ու-
ովէ մը դնեմ, Թուրքերը կու գան» : «Ի՞նչ», զարմացական եւ խռոված
ձայնով կը հարցնէ մայրս . կը վախնամ որ մեծ հայրս իմանայ եւ
կ'ամչնամ անոր ներկայութենէն, բայց համարձակութիւն կ'ունենամ
կրկնելու . «Ռովէլ մը դնեմ» : Մեծ հայրս վրայ կ'իջնայ եւ մօրս հետ
միասին հեղնանքով կը կրկնէ . «Ռովէլ կ'ուզէ . քիթը չի կրնար մա-
քրել, չալում մի չի կրնար տնկել եւ ուովէլ կ'ուզէ» : Երկար ատեն
կրկնեցին Ռովէլի պատմութիւնը՝ որ սիրտս կը ցաւեցնէր : Իսկ ես,
ձայնս քաշած, բայց հոգեւին նեղուած մօրս, յիշեցի ողբերգական
ծնունդս եւ մօրս խօսքերը նախորդ ջարդի ընթացքին . «Ձիս ալ, այս
տղաս ալ հրացանով դարկ, սուրով մի՛ դարներ» : Յիշեցի մանդաղնե-
րը, եաթաղանները՝ որոնք նախորդ ջարդին դարձածուած էին, եւ կը
կարծէի որ իմ ունենալիք ռովէլով արդէլք պիտի կարենայի ըլլալ այդ
մանդաղնեւորուն, կացիներուն՝ պաշտպանելով մայրիկս : Երկար ա-
տեն չէի կրնար նայիլ իր բարի եւ աստուածալախ աչքերուն, երբ կը

չոյէր մազերս, կը սիրէր զիս, կը զգուէր, վախնալով որ հարցնէր ինծի. «Ռոտլէ՞լ կ'ուզես»: Փոթորիկը անցաւ, եւ սակայն այդ ահաւոր փոթորիկին զոհ դնաց Ատանան: Յայտնի եղաւ թէ Թուրքիոյ մէջ ոչինչ փոխուած է, հակառակ այնքան խանդավառ նշանախօսներու: Սուրի քաջուած են 30 հազար հայեր, փախցուած են աղջիկներ եւ մինչեւ Խարբերդի հարէմներու մէջ բերուած են, ուր երբեք արեւ եւ լոյս պիտի չտեսնեն: Սակայն Խարբերդը եւ միւս նահանգները ազատած էին կարմիր Սուլթանի դահլիճիցութեամբ: Այս անգամ, իբր թէ իրաւ սահմանադրական կարգեր կը հիմնաւորուէին ամբողջ Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ:

Այդ օրերուն Ամերիկայէն վերադարձան բաւական թիւով Դատեմցիներ. անոնք դործօն դեր մը ստանձնած էին զիւզի կեանքի բարելաման եւ ղեկավարութեան մէջ: Ոմանք հետեւին ղէնքեր բերած էին ինքնապաշտպանութեան համար, եւ ազատ կերպով կը խօսէին կաղմակերպութիւններու մասին: Ասոնցմէ յայտնի էին Մրտէսի Գարրիէլեան Համադասուլը, Պօղոս Տէր Մինասեանը, Յարութիւն Մենծոյեանը, Կարապետ Հերոյեանը, Անճիւլեանը. ասոնցմէ էր նաև Տէր Մինասեանը, որ մեղի ազգական ու դրօշայի էր, եւ Դաշնակցական էր: Օր մը փափաք յայտնեցի իրեն պատանեկան միութիւն մը կազմելու, եւ յանձնառու եղաւ դալու եւ կաղմակերպելու: Տասնեակ մը ընկերներով, հաւանաբար Յունիս ամսուն, կը սպասենք սրահի մը մէջ. մեր սրտերը կը զարնեն, հաւատաւոր ենք եւ պատրաստակամ. ահա կը մտնէ Պօղոս Տէր Մինասեանը, կ'ողուունէ մեզ, կ'անցնի վերէն վար, կը նայի մեր աչքերուն եւ ինքն ալ յուզումով կ'ըսէ. «Ձաղուկներս, դուք ինձ կանչեր էք որ ձեր ուխտը կատարեմ. ոեւէ ուխտաւոր՝ հաւատք մը ունի եւ ձեր հաւատքը մեր տառապած ազգին ազատութիւնն է. դուք պատրաստ էք ձեր պատիւը եւ ինչքերը տալ ազգին փրկութեան համար»: Մենք իբարու կը նայինք եւ բընազգարար կը զոչենք. «Կ'երգնունք մեր կրօնքին, մեր պատւոյն եւ կեանքին վրայ, հաւատարմօրէն եւ ցմահ ծառայելու մեր ազգին»:

Տարիներ անցեր են այդ օրէն, սակայն այդ ուխտը դրոշմուած կը մնայ իմ հողոյս մէջ: Նշան Գարրիէլեան Դատունիի կը զրէ (Դեկտ. 6, 1927). «Ես ողբերուած էի այս նոր կաղմակերպութեամբ, կը հետեւէինք ազգային պատմութեան, յափշտակութեամբ կը կարողայինք Ահարոնեանի եւ Ռաֆֆիի դործերը: Այսօրուան պէս կը յիշեմ թէ ինչպէս մեր կեանքին ներքին ազգակը փոխուեր էր ու ես դարձած էի այդ խումբին կարեւոր անդամներէն մէկը. կը խօսէի իրենց, կ'ողբերուէի զիրենք եւ կ'ողբերուէի իրենցմով. այսօր ալ, չեմ յիշեր թէ ինչ ունէի խօսելիք, բայց այլեւս ընկերներով էինք,

դուրսի աշխարհը մեզի սարսափ չէր ազդեր, ընկերներ ունէինք, որոնց հետ նուիրումով կարծես կապուած էինք։ Սարգիսը, Լեւոնը, Նշանը, Միհրանը, եւ աւելի մեծերէն՝ Գարրիէլը, Անդրէասը, Կարապետը, որոնք զբեթէ բոլորն ալ մինչեւ իրենց կեանքին վերջը հաստատարիմ մնացին այդ պատանեկան սրբազան ուխտին։ Կրնամ հաստատապէս ըսել թէ այդ ուխտը փոխեց իմ կեանքին բովանդակ ճամբան եւ քայլ առ քայլ մնաց լուսաւոր տեսիլք մը՝ որուն ձգտեցաւ իմ ծարաւած հողին»։

ԱԶԻՍ ԴՈՒՐՄՆ Է

Գիւղին դպրոցը իր հմայքը կը կորսնցնէ աչքիս։ Ես ալ կը մտածեմ Ամերիկայի մասին, հոն դպրոցս շարունակելու մտքով, եւ կարողադրութիւններ կ'ընեմ զիւղէն ուրիշ դպրոց դաստիարակու հետ, թէ յաջորդ շաբաթ պիտի մեկնիմ։ Երբ օրը կու դայ, չեմ գիտեր ինչու, կառապանը առարկութիւն կ'ընէ թէ միայն հինգ հողի կրնայ առնել, եւ հետեւաբար պզտիկ տղան հետը չի կրնար տանիլ։ Մայրս հակառակ էր իմ մեկնելուս։ Իմ ներկայութեամբ սիրտը կը լեցուէր․ «Ա՛խ, Աստուած, հազիւ հազ ճնճողուկի պէս պահեցի զիրենք, հիմակ ալ մեծցած՝ կը թռչին ու կ'երթան, եւ կը փակուին աչքերս, ու սիրտս կարօտցած կը մնայ դաւակնեցողս ճամբուն, իրենց վերադարձին ըսպասելով»։ Իսկ ես Մէլքիէն վերադարձայ գլխիկոր, տեսակ մը յուսարեկ։ Եւ երբ մօրս քով եկայ, նկատեցի որ ուրախ էր, մանաւանդ երբ լսեց ճամբորդութեանս յետաձգման լուրը։ Կանչեց քովը, շոյեց մաղերս եւ ըսաւ․ «Եղբայրդ պանդուխտ է եւ մեզի համար կ'աշխատի․ դու ինծի համար միակ արուն ես որ կաս․ ամէն ոք տան տեղի տէր է, ո՞վ պիտի ցանէ հօրդ ձգած արտերը, ո՞վ պիտի նայի այս օճախին որ ձեզի համար շինեց, ո՞վ մուխ պիտի հանէ այս օճախէն, իմ Յովհաննէս»։ Դառնութիւն մը կար մօրս շեշտին մէջ․ այսօրուա՞ն համար մեծցուց, հասակ առնել տուաւ, որ փախչին դէպի հեռուները եւ անտէր ձգենք տունը, հողերը, աշխատանքը, որ պապուս հետ ծրարած էին իրենց զուակնեցողս համար։ Եւ ահա մեր վերաբերումով կը փճանար երազը եւ ինքը կը մնար նոյն որբացած այրին, առանց իր զուակնեցողս։

Ամբողջական բարութիւն էր մայրս, ու կը զգայի թէ ազատուած էր բաժանումի անմիջական մտահողութենէն․ «էհ, տղաս, պիտի թողուս մայրդ ու պիտի երթաս․ ո՞վ դիտէ ինչ ճամբաներու վերայ պիտի հասնի քու ճամբան․ չէ՞ տղաս, չէ՞, մնացիր հոս, արեւդ դարձուր քու պապուդ տանը, ես քեզ քաղաքի դպրոցը կը զբիւրեմ,

կը կարդաս, կըթուլթուլես կը ստանաս, մարդ կը դառնաս, պասպուղանունին պատիւ կը բերես, եւ քու ժառանգութեանդ տէր կ'ըլլաս»: Օրերը անցան, Օգոստոսն ալ անցաւ, դիւղին մէջ դպրոցը բացուած էր ու ես այլեւս երթալու միտք չունէի: Մեծ մօրեղբօրս հետ կ'երթանք Մէղրէ, ուղղակի պետական վարժարանը, հոն քննութիւն տալու համար: Մօրեղբայրս խանդավառ էր ու կ'ըսէր ինծի. «Պու քանի մը տարիէն սպայ կը դառնաս ու մենք ալ կառավարական գործերու մէջ մէկը կ'ունենանք»: Ես եւ Լեւոն Ուլուհոճեանը կը յաջողինք քննութիւններուն: Բայց տաճկական այդ դպրոցի միջավայրը վանողական բան մը ունի որ զիս կը խրտչեցնէ, աղմկարար անկադմակերպ ձայներու խառնակութիւնը կը վրդովէ զմեզ, եւ ես կ'որոշեմ ձգել այդ դպրոցը ու երթալ Կեդրոնական:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Օր մը, բոլոր դասադիրքերս կարմիր պայուսակի մը մէջ տեղաւորած՝ կ'առնեմ շալակս եւ կ'ուղղուիմ դէպի Կեդրոնական: Հարցնելով կը գտնեմ վարժարանը եւ կը հանդիպիմ տնտես Մարտիրոս աղբօր, որ յիսունը անց մարդ մըն էր, ռնդային խօսելու շեշտով. մատով ցոյց կու տայ սանդուխը ուրկէ պէտք էի բարձրանալ տեսուչ Տիգրան Աշխարունիի դրասենեակը: Ներս կը մտնեմ ընդարձակ սրբահին մէջ. երկու կողմերը աթոռներու վրայ տեղաւորուած աշակերտութիւնը կար եւ մէջտեղը դրուած ամպլոնին վրայ հսկիչը կը հսկէր ամբողջ աշակերտութեան վրայ: «Ո՞ւր է տեսչարանը», կը հարցնեմ: «Ներս մտիւր սա դռնէն ու կը գտնես Պր. Տիգրան Աշխարունին»: Ներս կը մտնեմ, գիրքերու տոսւրակը շալակիս, ու կ'ըսեմ. «Պր. Տիգրան Աշխարունին կ'ուզեմ տեսնել»: «Ինչո՞ւ կ'ուզես»: «Կ'ուզեմ քննութիւն տալ եւ դպրոց մտնել. ես Դատեմ դիւղէն կու գամ եւ կ'ուզեմ բարձրագոյն ուսումս շարունակել»: Յոյց տուին համակրելի սեւ մօրուքով եւ թափանցող աչքերով մէկը, որ քանի մը հարցումներ ըրաւ, բերած գիրքերս քննեց, անոնց մասին հարցումներ ըրաւ եւ ներկայ ուսուցիչներուն յանձնարարեց խօսեցնել զիս, հարցումներ ընել եւ որոշել թէ որ դասարան պէտք էի տեղաւորուիլ: Ապա ինծի կը յայտնեն թէ ընդունուած եմ վեցերորդ դասարանին մէջ: Այդ շրջանին, Տրդ դասարանէն շրջանաւարտ կ'ըլլային Կեդրոնականի աշակերտները: Ուրեմն, եթէ ուզէի լծուիլ ուսուցչական պաշտօնին, երկու տարուան դասընթացք մը ունէի Կեդրոնականէն շրջանաւարտ ըլլալու համար: Ահա կը բացուէր կեանքիս նոր շրջան մը, կը ծանօթանայի նոր միջավայրի մը եւ կը սկսէի ճանչնալ բազմ

մութիւն մը ընկերներու եւ բաղմութիւն մը ուսուցիչներու: Եկած էին Խարբերդի շրջանի բոլոր գիւղերէն. Բաղմաշէնէն՝ Նշանը եւ Հայկազը, Երգմնիկ Սողոմոնը եւ Հայկազը, Մօրենիկ Թօփալ Ասատուրը, Հայկ Սըվաճեանը եւ Արամ Պարսամեանը. Գէսիբիկէն՝ Լեւոնը, Բարդէն եւ շատ մը դեղեցիկ դէմքեր, որոնք կը լեցնեն դպրոցական կեանքը եւ մեզ կը կապեն իրարու, այնքան անոյշ եւ այնքան քաղցր ապրումներով: Կեդրոնականի կողքին կար աղջկանց վարժարանը, եւ դրդիւ մըն էր հետաքրքրութեան եւ եղբայրակցութեան: Դպրոցը կը կառավարուէր աղագլին մարմնին կողմէն, որ իր փառաւոր անցեալով եւ մեծ վարպետներու ղեկավարութեամբ, սիրելի հաստատութիւն մըն էր: Պէտք է ըսեմ թէ այդ ատեն խումբ մը Հնչակեան աշխոյժ տղաք կային, բայց ուսուցչութեան մեծամասնութիւնը եւ աշակերտութիւնը կը մնար բացարձակօրէն Դաշնակցութեան ազդեցութեան տակ: Տիգրան Աշխարունին, Ս. Սմբուլը, Նշան Դամասեան եւ Արամ Սրապեան, որոնք դիւաւոր ղեկավար ուսուցիչներն էին, Դաշնակցական էին: Դասերէն զատ, դոյրութիւն ունէր կերակնօրեայ լսարան մը, ուր կը հրաւիրուէին բանախօսներ դուրսէն, եւ մինչեւ այդ՝ ինծի համար անծանօթ եռուղեւ մը կար դպրոցին մէջ, եւ դպրոցի շրջապատը բանալով՝ մտածմունքի նոր ճանապարհ եւ ծանօթութեան նոր ասպարէզ կը բերէր. կարծես թէ իմ տարեբրէիս մէջ էի ու այս հաւաքականութեան մաս կը կազմէի: Հոս ճանչցայ նաեւ Խարբերդի կոյր պատուելին, որ կը հետեւէր մասնաւորապէս Նշան Դամասեանի հայերէնի դասերուն եւ կը շտկէր մեր առողանութիւնները եւ հայերէնի ընթերցումները. Հ. Ղ. Ալիշանի «Լուսնկան դերեղմանացն Հայոց»ը ի՞նչ քաղցրութեամբ եւ պաշտամունքով կարդալ կու տար եւ ինքը կը կրկնէր՝ հատուածներ դրոշմելով մեր մատաղ հոգիներուն վրայ: Տարի ու կէս մնացի Կեդրոնական եւ բաժնունեցայ քաղցր յիշատակներով, եւ այսօր ալ յարգանքով ու կարօտով կը յիշեմ թէ՛ ուսուցիչներս եւ թէ՛ մանաւանդ աշակերտութիւնը, որ աւա՛ղ զո՛հը դարձաւ բարբարոս Թուրքին ամբարիշտ, մեղի եւ նախանձոտ կիրքին:

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԻՋ

Կեդրոնական վարժարանը այդ օրերուն իր նախորդ հմայքը չունէր, եւ Հայերուն զինուորութեան մասնակցութեան պատճառով՝ աղդեցութիւններով ուսուցչական կազմին մէջ կը մտնէին մարդիկ՝ որոնք իրենց նախորդներու համբաւը եւ կորովը չունէին: Ես ու ընկեր Լեւոն որոշեցինք փոխադրուիլ Փրանսական Փրանկիսկեան վեղարա-

ւորներու վարժարանը, ուր ճամբայ մը կը բացուէր Լիբանանի համալսարանը մտնելու եւ մասնագիտական դասընթացքներ ընելու: Մասամբ վշտով ձգեցինք Կեդրոնականը եւ շատ սիրելի ընկերներ, յետագային փոխարինելու համար Փրանսական դպրոցին հետ հասակ նետող աշխոյժ եւ կայտառ ընդունակ ընկերներու եւ դպրոցակիցներու, որոնք կը տիրապետէին Փրանսական լեզուի եւ կը մեծնային հայ ու Փրանսական մշակոյթի ազդեցութեան տակ: Ուսուցիչները հոս ալ բացառաբար Դաշնակցական կամ դաշնակցականամիտ մարդիկ էին. հոս էին Տոքթ. Նահիկեան, Հաճի Յակոբ, Սարգիս Ռըտունի, Միւսիւ Փան, Գէորգ Ահարոնեան էֆէնտի (որ կը ներկայացնէր Փրանսական կառավարութիւնը), Պր. Աեւոնդը, Պր. Պետրոսը, բոլորն ալ յայտնի, իրենց դիրքով, հասարակութեան մէջ եւ իրենց ղեկավարութիւնով: Այս դպրոցին մէջ, առաջին անգամ հանդիպեցայ յայտնի հերոս Մուրատ Խրիմեանին (Սերաստացի Մուրատի). եկած էր վարժարանը՝ այցելութեան, ու դպրոցի տեսուչը փէր Ռաֆայէլ եւ Յրէր Ֆէրտինանտը, յարգանքով կը վերաբերուէին օրուան հիւրին հետ: Հաւաքեցին ամբողջ աշակերտութիւնը եւ փէր Ռաֆայէլ ներկայացուց զինքը, խօսեցաւ հաճի Յակոբ, ներկայ էր Տրդատ Գաղանճեանը, եւ ասոյ բեմ հրաւիրուեցաւ Մուրատը: Կայտառ, թուխ դէմքով, տիրական ուժեղ անհատականութիւն արտայայտող դիմագիծով ֆէտայի մը. զէնքը դրած էր վար եւ խառնուած ժողովուրդին՝ խրատ կու տար մեզի՝ կապուել մեր դպրոցին, շնորհակալ ըլլալ Փրանսացի հայրերուն, որ մեզ կը պահեն հայ ժողովուրդի ողբին մէջ եւ մեզ կը դաստիարակեն երկրին ու հայրենիքին օգտակար առաջնորդներ դառնալու: Ուրեմն այս էր Մուրատը: Հորդիս կը խայտար, թէ եւ լեռներու վրայ չէի հանդիպած իրեն, բայց ահա կը հանդիպէի Փրանսական վարժարանի մէջ, Հայոց առասպելական հերոսներէն մէկուն:

Շատ չ'անցնիր, Լեւոնը կը ձգէ դպրոցը եւ կ'երթայ Վենետիկ՝ Մուրատ-Ռաֆայէլեան կարգալու, մայրս չ'ուզեր որ ես ալ երթամ, հոն յանկարծ քահանայ կը դարձնեն եւ ընտանիքս կը զրկուի ժառանգորդներ ունենալու եւ տունը շարունակելու, օճախը վառ պահելու, մուխը մշտական պահելու կարելիութենէն: Այդ տարին, մենք չորս ընկերներ կ'ապրէինք սենեակի մը մէջ, Հայկազ Հերոյեան, Ասատուր Ստեփանեան, Հայկազ եւ Արզուման անունով երկու երիտասարդ տղաք Երզմնիկէն: Հայկազ Հերոյեան մեր իրական ղեկավարն էր. լուրջ, խոհական երիտասարդ մը, որ իր դպրոց աւարտելէն վերջ, երկու տարի ուսուցիչ եղաւ մեր դիւղին մէջ: Արժէքաւոր մը՝ տաւորական մըն էր, ժողովուրդին ծոցէն ծնած եւ ժողովուրդին ծառայելու իր բացարձակ պատրաստակամութեամբ: Յրանսական դը-

պրոցին մէջ կարծես աւելի խաղաղութիւն, կանոնաւորութիւն եւ աւելի հսկողութիւն կը տիրէր եւ ուսուցիչները կը հետեւէին, կը մասնակցէին աշակերտական շարժումներուն եւ կամ ընթացք կու տային այդ շարժումներուն: Ես մասնակից էի «Պատանի» թերթին խմորատիպ հրատարակութեան, եւ առաջին բանաստեղծութիւնս հրատարակած էի հոն 1912ին: Մեր ղեկավարն էր Յարութիւն Ճապուրեանը, շունչով ու հոգիով բանաստեղծ մը, որ իր բարոյական ազդեցութիւնը ունէր օրուան աշակերտութեան վրայ իր հայրենաշունչ ոգիով: Երեկոյթներ կը կազմակերպէր բարձրագոյն աշակերտութեան համար, և այս երեկոյթներուն կը մասնակցէին Սարգիս Ռչտունի և հաճի Յսիոր: Այս երեկոյթներու մէջ եղած խօսքերով եւ առաջնորդութեամբ, մեր մտքերը աւելի կը բացուին, կը լայնան եւ կամաց կամաց աւելի տեղեակ կ'ըլլանք միջավայրին, պայմաններուն եւ կարելութիւններուն, որոնց տակ կ'ապրէինք մենք եւ հասակ կ'առնէինք:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՎԷՐ

Օր մը, Հայկազի առաջնորդութեամբ կ'երթանք բազնիք, Եղեգիի ճամբուն վրայ, Կեդրոնականէն ոչ շատ հեռու. առանձին դուռ չինած են եւ մենք կը տեղաւորուինք իւրաքանչիւրս իր դուռին մէջ: Հազիւ կէս ժամ անցած, ներս կու գայ ինծմէ քիչ մը տարիքոտ մեծ երիտասարդ մը եւ հրամայական ձայնով կը յայտարարէ որ դուրս գամ այդ դուռէն, որովհետեւ ինքը պիտի լողնայ հոն: Ես անտարբեր կ'ըլլամ եւ կը մերժեմ տեղի տալ. կը սպառնայ եւ ետ կը քաշուի: Բիչ վերջ բազնեպանը կու գայ եւ կը խնդրէ որ պարպեմ տեղը. ի՞նչ պէս կը յանդգնիմ Սալան Պէլի տղուն մերժել՝ երբ տէրն է այս բազնիքին: Դարձեալ կը մերժեմ. ասոր վրայ երիտասարդը կը յարձակի յոխորտանքով իմ վրաս եւ կը սպառնայ ինծի: Կը յայտնեմ թէ ուղած վարձքը վճարելով՝ եկած եմ լողնալու, իմ յանցանքս չէ որ իրեն պատկանած դուռը ինծի յանձնուած է, կրնար սպասել եւ քիչ մը վերջը դալ. այս խօսքերուս վրայ, պոռալով, կանչելով եւ ըստպառնալով՝ նորէն կը թողու եւ կ'երթայ բազնեպանին. նա իր կարգին կու գայ դիւ այդ լողարանէն հանելու համար, եւ այս անգամ խնդրելով ու աղաչելով թէ ինքը կ'արտաքսուի եւ կը կորսնցնէ տան սպորուստի միջոցը, եթէ անմիջապէս չյանձնէ իրեն այդ դուռը, եւ կ'աւելցնէ. «Իմ սիրոյս եւ իմ զաւակներուս սիրոյն համար յանձնէ, տուր այս դուռը եւ պատճառ մի՛ ըլլար այս տղուն սպառնալիքներուն, որ ոյժ ունի եւ որով իրաւունք՝ իմ զաւակներուս սպորուստը խլելու»: Ընկերներուս թելադրանքով, մանաւանդ Հայկազի խոր-

հուրդով, կը ձգեմ դուռը Չարսանճադի արիւնարրու Ասլան Բէկի դաւկին, որ այդ օրերուն դատերու մէջ էր Չարսանճադի ժողովուրդին հայրենական հողերու դրաման եւ տիրացման սլաճառով:

Կ'ըսէի որ այդ տարին մենք կ'ապրէինք չորս ընկերներով մէկ սենեակի մէջ, շարաթական վճարելով դումար մը տան տիրոջ, մեր սենեակին եւ ճաշին համար. մեր սուրճը եւ ծխախոտը կը հայթայթուէր հասարակաց դրամով, այնպէս որ քիչ ատենէն սորվեցայ ծըլտել: Ուրբաթ երեկոյ մը, երբ դիւղ կը դառնայի, դնեցի բաւականաչափ ծխախոտ, մինչեւ երկու շաբթուայ համար. երեկոյեան ժամը իննի ատենները, մեր տան թուփնոցին մէջ սկսայ շրջադայիլ եւ ծխել: Մեր մշակներէն մէկը ծխելս նշմարեց եւ սկսաւ բարձրաձայն կանչել, ինչպէս թերթ վաճառող մը պիտի պոռար, ցնցում պատճառող լուր մը տալու մտածումով. «Յովհաննէսը կը ծխէ, Յովհաննէսը կը ծխէ»: Ձայնը կ'արձագանդէ ամբողջ փողոցին մէջ. հեռուն նշմարեցի որ մայրս կեցած էր ցուիքին մօտ, երկրորդ յարկին վրայ եւ դուռը կախ մտիկ կ'ընէր: Սկսայ վախնալ որ կռիւ ըլլար ու մայրս ով դիտէ ինչեր պիտի թափէր գլխուս, իմ ըրած այդ յիմարութեան համար: Ուշացայ վեր բարձրանալու, թէեւ ուշ էր, բայց մօտէն անցնելով դպրի որ մայրս անկողնին մէջ անհանգիստ կը դառնար, ու ես անսովոր կացի իմ բաժնիս մէջ, փորձեցի քնանալ: Մայրս բան մը չըսաւ շարաթ օրը, բան մը չըսաւ կիրակի երբ միասին եկեղեցի դացինք ու վերադարձանք, բան մը չըսաւ երեկոյեան ճաշին վերջ, ու ես մտածեցի թէ մայրս ուրեմն չէ լսած այդ աղաղակը՝ թէ «Յովհաննէսը կը ծխէ»: Երկուշաբթի առաւօտ, մըշակը ձին բերաւ որ վրան նստիմ որպէսզի երթամ Մէղրէ. կը պատրաստուէի ձին հեծնելու, երբ մայրս մեղմիկ մը ըսաւ ինծի. «Յովհաննէս, լսեցի թէ կը ծխես եղեր. կը տեսնե՞ս երկու մօրեղբայրներդ, անոնց դաւակները, թոռներու տէր մարդիկ են, բնաւ չեն ծըլտեր եւ լաւ մարդիկ են. հայրդ ալ, Աստուած լուսաւորէ իր հողին, հասուն եւ լաւ մարդ էր, բայց չէր ծխեր. է՛հ, տղաս, ես քեզի հետ դպրոց պիտի չկարենամ դալ, ես քու վրադ շարունակ հսկողութիւն պէտք չեմ ընել. հիմա ես քեզի կը ձգեմ, եթէ ես քու տեղդ ըլլայի՝ չէի ծխեր. չեմ ուզեր լսել՝ թէ Յովհաննէսը Մէղրէ դացեր է ու ծըլտելու սկսեր: է՛հ, հա՛ տղաս, առ սա երկու մէծիտիէն եւ զդուռութեամբ ծախսէ. Մարդիս ամմոյն պարտք առի»: (Ես դտած էի այն ստպրակը՝ որու մէջ հարիւրաւոր մէծիտիէներ կային, բայց չէի ըսած մօրս, դիտնալով որ այդ մէծիտիէները պարտք չէր առած):

Նստելով ձին, սկսայ մտածել թէ մայրս, որմէ աղմուկ, ծեծ ու կռիւ կ'ապրէի, դարմանալի կերպով, հակառակ որ երկու երեք օր առաջ ծխելուս մասին լսած էր, համբերած էր, չէր խօսած այդ

մասին եւ ամենայն հանդարտութեամբ իմ դատողութեանս կը ձգէր այդ որոշումը, յայտնելով իր կարծիքը ծխելու մասին: Կը մտածէի մօրս առաքինութիւններուն մասին, իր խելացիութեան մասին, թէ ինչպէս մօտեցած էր այդ հարցին ու կ'ուզէր իր զաւակին հետ տրամաբանութեամբ լուծել այդ հարցը քան թէ կռիւով: Ի՞նչ սքանչելի օրինակ այսօրուան հայրերուն ու մայրերուն համար, իրենց զաւակներուն հետ յարաբերութիւննին մշակելու սլարազային: Մտովի կը հիանայի մօրս դատողութեան վրայ եւ ես ինծի ելք մը կը փնտռէի շիտակ վերաբերում մը ունենալու համար մօրս այս մօտեցումին առիթով: Որոշեցի ըսել ընկերներուս՝ թէ կը մասնակցիմ մեր ընկերակցութեան սիկարէթի եւ սուրճի ծախսին մէջ, եթէ ինծի օգնեն որ յազթեմ այս ունակութեանս եւ չսխալուի որ ամէն եկող ընկերոջ հետ ծխեմ: Հայկազը քաջալերեց այդ որոշումս, չուզեց որ վճարեմ, ես պնդեցի. ու այդպէսով մինչեւ այսօր բժշկուեցայ կարելի է ըսել ծխելու դէշ սովորութենէն:

ԱՌՍՋԻՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ





Ֆրանսական Վարժարանի ուսուցիչը նստած՝ Սարգիս Մալինան
Էրկու կողմերը՝ Պողոս Ուլուհունեան և Յ. Տէր Յովհաննէսեան





Յակոբ Գլունկերան և Յ. Տէր Յովհաննէսեան (Ամերիկա, 1920)

Ե.

Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

ՍԷՖԵՐՊԵԼԼԻՐ – ԶՕՐԱԿՈՉ

1914ի ամառուան արձակուրդով տունն եմ, իմ հայրենական տանս մէջ, ուր լծուած եմ բոլորին հետ՝ հունձքի կարեւոր աշխատանքի իմ բաժինս բերելով: Ես մեծ մօրեղբորս կ'ընկերակցեմ, քաղուած հունձքերը կալ բերելով, յաջորդ օրը կամնելու եւ տուն բերելու համար: Սայլերը կը ճոնչան, կալը կը թափին բոլոր թէղերը, պատանի հօտաղը իր պարկին մէջ կը փնտռէ հացին վերջին կտորը, քաղուորը արեւմուտքէն լեռներու վրայ հանդչող արեգակին շողերուն կը նայի, եւ բեռցուած սայլերը կը սկսին հանդարտօրէն իրենց օրուան վերջին դանձը կրել դէպի տուն: Հոն կը հաւաքուի տան մէն մի անդամը, իր աշխատանքէն վերջ բոլորուելու համար ընտանեկան յարկին տակ, քանի մը ժամ հանգստանալու համար: Գիւղի զաւակ ըլլալով կը սիրէի այդ բոլորը. այդ զրտինքը, այդ երգը, այդ վաղվղուքը, այդ աշխատանքի բնական լաժանուամը, եւ մանաւանդ շատ կը յարգէի մեծ մօրեղբայրս, որ հօր մը պէս կը դուրդուրար վրաս, կարելի կը դարձնէր ուսումս:

Սմէն օրուայ պէս, այդ օրն ալ մեր մոխրագոյն Դայը նստած, որու վրայ միշտ արտօնուած էի նստիլ, դացեր էի դաշտ, քեռիին հետ, սայլ բեռցնելու: Առաջին վերադարձիս, մեծ եղաւ դարմանքս երբ նշմարեցի հաճի Պէկոյենց տան մօտ, պատին վրայ բակցուած մեծ յայտարարութիւն մը որ կը ներկայացնէր թուրք սոլայ մը՝ իր սուրը մերկացուցած ու իր առջեւը թնդանօթ մը թրքական մահիկով եւ այդ բոլորին ներքեւ, խոշոր դերերով, զօրակոչը, որով դէնքի կը կանչուէին 20-40 տարեկան եղող բոլոր օսմանեան հպատակները: Կու

դամ տուն, քիչ ետք կը հասնի մօրեղբայրս, կը նստի սեղանին շուրջ ու կարգադրութիւններ կ'ընէ յաջորդ օրուան համար, իր երկու ծունկերուն վրայ առած իր եւ եղբորս զաւակները, եւ երբ կը պատմեմ ազդարարութեան մասին, կը տժգունի, կը տարակուսի եւ կ'ըսէ. «Վախնամ որ պատերազմ ըլլայ եւ այս մարդիկ մեր գլխուն շուր մը զնեն»։ Ես խորհուրդներու մէջ ինկայ, ինքն ալ այդ աղբարարութիւնը տեսնելով, կը վերադառնայ տխուր ու մտահոգ. ու տան մէջ մեծ ու սրբտիկ անահնկալի եկան այս ահաւոր ու անսպասելի լուրին առիթով։ Ծաշը շուտով կը վերջացնենք ու դուրս կ'ելլենք։ Սայլի եղները, որոնք թուրի ծառերու շուքին տակ կը հանգչին, իրենց առջև նետուած խտրը որոճալով՝ փրփուրներ են դիզեր։ Կը կանչեմ քեռիս, ինքը վեր կ'առնէ գլուխը, մէկ կողմ կը նետէ թախիծը, կը փախցնէ իր ճակատի կնճիռները եւ իրեն յատուկ եղանակով մը կը սկսի օրօր մը երդել ժպտուն կենսութիւն ճակատով. կը կռուրտի փոքրիկներուն հետ, որոնք կը քաշքշեն իր մագերը, պէխերը, կը նետեն գլխարկը ու ինքը կատարեալ համբուրթեամբ կը տանի այդ բոլորը՝ շրթներէն կախուած ժպիտով մը, նոյնիսկ սպառնալու առանձն։ Մենք կը քշենք եղները՝ մեր սիրելի Պաշօն եւ Ճոռնը, սայլի թախթուկները ականջը կը խլացնեն, սրբտիկները իրենց վլվլուկը աւելի կը բարձրացնեն, քար կը նետեն եղներուն՝ որոնց սրկունքէն շողիքը կը թափի, սրչերը կը դարնեն աջ ու ձախ՝ ճանճերը փախցնելու համար։ Քեռին ինծի կը յանձնէ մասսան եւ ինքը կ'երկնայ սայլին վրայ, ու սայլի շարժումին հետ գլուխը կ'ելլէ վար ու վեր, մինչեւ որ սլարանի խուրճը կը քաշէ գլխուն տակ՝ աւելի ապահով կերպով վառելու համար արեւուն տակ, մինչեւ որ կը հասնի քաղուորին քով։ Անոնք հաւաքուած են չաթմանի քով, կիները չաթմանի շուքին տակ, իսկ տղամարդիկ՝ քանի մը խուրճ ցցած արեւին դէմ՝ երկնցած են անոնց շուքին տակ։ Ամառուայ քաղուորներու ճաշի առանձն էր, կամ քիչ մը հանգիստի։ Հարսը որ խուրճերը կապելը նոր վերջացուցած է, կը վաղէ իր կեսրայրին մօտ՝ անոր ծառայելու համար. «Գնա՛, օղուլ, հացդ կեր աղջիկս», կը պատասխանէ քեռին, իսկ հարսը կը մօտենայ կանանց, կը նստի, կը ծածկէ դրեթէ երեսին կէսը ու կը նստի փիլաֆը ուտելու համար. սէտք չէ որ տղաքը տեսնեն իր երեսն ու ակռաները, ասիկա վայել բան մը չէ նոր հարսին համար։ Մենք կը քակենք եղներուն լուծը, արածելու համար, ու ամէնքս քեռիս կը սպասենք յաջորդ օրուան ըլլալիք կարգադրութեան համար։ Այն ատեն քեռիս կը պատմէ մեծ լուրին մասին։ Մենք ու ինք, կառավարութեան նշանակած տարիքին մէջ ենք երեք հոգի. երեք հոգի նաեւ մշակը եւ դրացի քանի մը քաղուորները, որոնք նոյնքան կը հետաքրքրուին այդ տարօրինակ լուրով։ Քանի մը բոպէ

կը մոռնան դաշան ու կալը, անդդալարար կը մօտենան իրարու ու բաժանման կսկիծը տեղ կը սկսի բռնել իրենց մտքին մէջ: Կը մօտենան ամուսինները իրարու ու միասին կ'երթան Օնին: Կողք կողքի, փսփսալով կը սկսին քաղել: Վերջին սայլն է այդ երեկոյ, ու կը տնտնանք որպէսզի միասին վերադառնանք այդ երեկոյ: Հովիւը սայլին շուքին տակ երկնցած է ու այդ տեղէն կը հսկէ կենդանիներուն վրայ, որպէսզի չմօտենան խուրճերուն: Արեւը կամաց կամաց կ'իջնէ լեռներուն վրայ, եւ մենք կը լծենք եղները, մինչ քաղուորը կը հաւաքէ խուրճերը, կը շինէ դէղը: Հարսը իրեղէնները կը հաւաքէ, մինչ մօրեղբայրս կը բերցնէ վերջին խուրճը սայլին վրայ ու կարմիր կուժը կը մխրճուի դէզին մէջ, գիշերը զովանալու համար պողջուրը կուժին մէջ կը դրուի:

Ճամբայ ենք դէպի գիւղը, որ կը լեցուի ամէն կողմէ հասնող իր բնակիչներով: Կեմ կապողներն ալ կը կարդաւորեն իրենց դօրծը ու կը խառնուին՝ իւրաքանչիւրը իր քաղուորին հետ՝ դէպի գիւղ: Փոշին, ազմուկը, երգը՝ իրար կը խառնուին. ամէն ոք կը ջանայ շուտ իր տունը հասնիլ: Բախտի բերումով իրարմէ հեռու ինկած սիրահարներ կը փորձեն զիրար գտնել այդ պահուն, աղբիւրներուն ահկրուն առջև լուսացուելու եւ օրուան հաւաքած փոշիէն ձերբազատուելու համար: Շատ անգամ 10-12 սայլեր իրարու կը հետեւին եւ իւրաքանչիւրը իր եղան կատարած դօրծերու առասպելը կը պատմէ. մին՝ եկեղեցիին մեծ քարը քաշած ըլլալուն, միւսը՝ սանտ քարը մեծ ձորէն հրապարակ տանելուն, եւ այսպէս հին ու նոր հեքեպոններ մէջտեղ կ'եւլեն, որոնք գիւղին կեանքը կը դարձնեն կենդանի, հրապուրիչ եւ հաղորդական, եւ կը ստեղծուի ընդհանրական խնամիութիւն մը եւ պատկանելիութիւն մը:

Երեկոյեան Քզիր Մարկոսը իր սովորական եղանակով կը սկսի կանչել. «Էջիտն դօնչուլար - դրացիներ լսեցէք». ձայնին մէջ կ'արտայայտուի սրտին վիշտը: Բոլորս երեկոյեան հացը հաղիւ վերջացուցած ենք, եւ ուշադիր մտիկ կ'ընենք. «Լսեցէք բարեկամներ, թագաւորը հարսնիք կը հրաւիրէ, 20էն 40 տարիք ունեցող ամէն օսմանցի պարտաւոր է այս հրաւէրին պատասխանել. վաղը պիտի երթանք զինուոր դրուելու: Ըստեցաւ թէ գիւղի աղաները արդէն դացած եւ արձանագրուած են, եւ պիտի մնան զօրանոցները»: Այդ երեկոյ կանուխ կ'երթանք անկողին. թուրի ծառի տերեւները կը խշխշան գըլխուս վերեւ. փակ աչքերս երբեմն կը բանամ, կը տեսնուի երկիւնքը որ պճնուած է աստղերով, կը նայիմ աստղերուն, կարծես կը նոյնանամ անոնց հետ. շատ մեղմ զեփիւռ մը կ'օրօրէ մաղերս, աչքերս կը փակուին ու ես կը կորսուիմ երազներու աշխարհին մէջ, աստղերու հմայիչ հսկողութեան ներքեւ: Առաւօտ՝ քաղաղներու ան-

վերջ կուկուլիկուռն կը լեցնէ գիւղը եւ Մուրատենց Սուլթան պաճին կը թրթռայ իրենց բակին մէջ: Այսօր Սուլթան պաճին ի դուր կը թրթռայ, այսօր ոչ ոք դործի պիտի կարենայ երթալ: Ճիշտ արեւածաղին՝ Գղիբ Մարկոս կը կանչէր. «Մի՛ ըսէք թէ չլսեցիք, այսօր դործի օր չէ, այսօր բոլորս միասին քաղաք պիտի երթանք»:

Շատ չանցած՝ վարժապետ Կարապետը, Էղաները, իրենց ձիերուն վրայ նստած, մէկիկ մէկիկ հաւաքուեցան քաղաքին ճամբուն վրայ դտնուող գերեզմանոցը, դրեթէ քանի մը քայլ հեռուն մեր կալէն. առիթ մը եղաւ որ այդ օր դէպի քաղաք դապոյ ամէն դատեմցի տեսնէի: Ես, կալին մէջ խուրձերու դէպին կռթնած, Պոլսէն եկած նամակ մը կը կարդայի որ առաջին անգամ կը ստանայի հօբեղբոր մէս եւ որու մէջ կը թելադրէր ինծի գիւղը մնալ, տան օճախին կըրակը վառ պահել. երկար խրատական մը որ մէկ կողմէն կ'ուրախացնէր զիս՝ կապեր ստեղծելով մեր ընտանիքի հեռաւոր անդամներուն հետ, որ մինչեւ այդ ատեն կարծես միայն անունով կը ճանչնայի, միւս կողմէն՝ կը տեսնէի կարմրած արցունքոտ աչքերով անցնող երիտասարդ հարսեր եւ աղջիկներ՝ որոնք եկած էին իրենց հարազատները ճամբայ դնելու: Մեր տունէն ալ Սեդրակը պիտի երթար, եւ հաւանական էր որ ա'լ պիտի չտեսնուէինք. միւս երկուքը Յօն վեր ըլլալով, կարծիք կար որ դրամական վճարումով մը կարելի պիտի ըլլար իրիկ ղերենք: Կը համուրուրինք, երկուքս ալ կը յուզուինք, կը փաթթուինք իրարու, վախ կը զգամ որ պիտի փրկուէիմ, բայց մենք զմեզ կը պահենք եւ կը հետեւինք իրեն ու մնացած գիւղացիներուն՝ որոնք լեցուած են քաղաքին ճամբուն վրայ իրենց հարազատներուն հետ, արձագանդ տալու համար այդ հարսանիքին՝ որուն պետութիւնը հրաւիրած էր իր քաղաքացիները:

ՔԱՂԱՔԸ ԱՅՌ ՕՐԵՐՈՒՆ

Քառս մըն էր ամբողջ Մէղրէն՝ Խարբերդի կուսակալանիստ քաղաքը. Հիւսնիկէն Տալլու Մալում, Իտատիէէն մինչեւ Եղեզի եւ Քէսրիք՝ տարերային դուրթիւն մը կը տիրէր: Կեանքին մէջ քաղաք չտեսած մարդիկ լեցուած էին շուկան, կարդի եկած, հաց դնելու համար որ չեն կրնար ստանալ, եւ կը սպասեն իրենց կարգին՝ արձանադրուելու համար: Քաղաքին բոլոր դպրոցները դրաւուած են, ինչպէս նաեւ բոլոր մեծ շէնքերը: Նոյն տարուան անուն հանած դուրը, մարդասպանները, քաղաք լեցուած են ու կը թափառին. ուրիշներ կ'ուզեն ինքզինքնին տեղաւորել յարմարազոյն պաշտօններու մէջ, մինչ ոմանք կը փնտռեն բժիշկներու միջամտութիւնը՝ զանազան

հիւանդութիւններու պատճառով զերծ մնալու համար զինուորական ծառայութեան: Հայերէն մեծ մասը ուսուցչական վկայական կամ սարկաւազի իրաւունք կ'ուզեն ձեռք ձգել, կերպով մը կրակէն ազատուելու համար. անորոշութեան եւ անստուգութեան մատնուած ժողովուրդը չի զիտեր ինչ ընէ: Քաղաքային իշխանութիւնը կարծես կորնսցուցած էր իր հաւասարակշռութիւնը, իսկ զինուորականը հազիւ կրնար մէկ մասին հասնիլ իր կարգադրութիւններով: Մինչեւ հրապարակը, տուները, վրանները, իրենց շրջապատի աղտողութիւններով՝ անտանելի վիճակ մը ստեղծած էին, եւ շատ չանցած՝ ամէն կարգի հիւանդութիւններու բոյն ու աղբիւր կը դառնան ու վտանդ մը ժողովուրդին ընդհանուր առողջապահական դրութեան, որ միշտ մնաց մնայուն սպառնալիք մը Թուրքիոյ անճարակ կառավարութեան համար:

Արեւմտեան ճակատը կ'այրի կատաղի բախումներով. Թուրքիան իր վերջնական դերքը չէ որոշած. կը ջնջուին դաշինքները՝ ճանչցուած դաշնակիցներու կողմէ. մեծ ցոյցեր կը կազմակերպուին այդ առթիւ եւ առեւտրականներ, խանութպաններ, կրկնակի դիներ կ'առնեն իրենց ապրանքին համար. կողոպուտի հասնող դրութիւն մը կը ստեղծուի: Պատրաստուած, մարդուած զինուորներ կ'ուղարկուին դէպի Կարին. ժողովուրդը մտահոգութեան մէջ է ու կ'աշխատի այլ եւ այլ միջոցներով ազատել իր հարազատները զինուորական ծառայութեան սպանիչ մթնոլորտէն:

Վերջապէս սովորականէն ուշ կը բացուի դպրոցը: Մենք եւ Քրանսացի բոլոր բարեկամները կը հետեւինք Թրքական քաղաքականութեան: Փրանսացիները կը յուսան որ Թուրքիան դաշնակիցներու միանայ, բայց շուտով յուսախաբ կ'ըլլան: Հոկտ. 14ին, Սեւ ծովին վրայ եղած նպաստին բախումներով կը սկսէր առաջին համաշխարհային պատերազմը: Ամէն տեղ ցոյցեր տեղի կ'ունենան. նշանաբանն է՝ Մոսկովէն մեր հին հողերը գրաւենք. Ալալըն Մոսկուլտան Էսֆի երկրի: Հայերու մտահոգութիւնը մեծ է. երկու կողողներու միջեւ՝ եղբայր եղբոր դէմ կ'ուռելու ծանր մղձաւանջը կը տիրէ: Զրոյց կը շրջէր թէ Փրանսացիները պիտի արտաքսուին, եւ անոնք շատ մը միջոցներու դիմեցին, բոլորն ալ սպարդիւն: Վերջապէս կառավարութեան տեղի տուին՝ դպրոցը յանձնելու համար: Այդ օրը, դասարաններէն վար իջանք ընդհանուր սրահը, ուր հաւաքուած էին Քափուչիները, ուսուցիչներ եւ ամբողջ աշակերտութիւնը: Բեմ բարձրացաւ մեր ընդհանուր տեսուչը, 60ի մօտ, կարճահասակ խոհուն, լայն ճակատով, արթուն փէր Ռաֆայէլը. սրահը ամբողջ սըրտրատրով կը սպասէ անոր ըսելիքին, արդէն կը դուշակուէր թէ ինչ կրնար ըլլալ: Տասնեակ տարիներ գլխաւորած էր այդ հաստատու-

Թեան վրայ եւ շատերու համար իսկական հայր մը եղած էր, առաջնորդելով զիրենք իրթական բարձրութիւններու, եւ ահա այդ բոլորը փուլ կու գային իր աչքերուն առջեւ: Հոս ինքը ալօթած էր, Երզած էր, կապուած իր ընտանիքներուն եւ աշակերտներուն, ու հիմա պիտի ըսէր թէ իր կամքէն ու կարելիութիւններէն վեր է պահել դըպրոցը. կուրծքը կարծես կը հեւայ, ձայնը խորէն կու գայ երբ կը յայտնէ թէ կառավարութիւնը շէնքին պէտք ունի եւ կը խոստանայ շուտով վերադարձնել. ստիպուած ենք ընդ առաջ երթալու, յոյս ունինք որ նորէն պիտի վերստանանք...: Չկրցաւ շարունակել. կարծես թէ վերջնական խօսքը ըսուած է: Մէջտեղ եկաւ մեր հայերէնի սիրելի ուսուցիչը՝ Պր. Հաճի Յակոբ Նաճարեան Հիւսէնիկցին, հասակաւոր, սեւ աչքերով, բարձր ճակատով, խոհուն. մտահոգ եւ խռովքով ըսաւ մեզի. «Մի սիրելի տղաքս, այսօր մեր դպրոցը կը փակուի, ու ես չեմ հաւատար թէ շուտով պիտի վերադարձուի, ինչպէս մեր Փէր Ռաֆայէլը կ'ըսէ. դպրոցը կ'առնուի ոչ թէ տեղի պահանջին համար կառավարութեան կողմէ, այլ որպէսզի մենք իրարմէ զրկուած ըլլանք, որպէսզի մենք կարօտով մնանք իրարու, որպէսզի մեր մէջ ստեղծուած կապը կտրուի: Խիլացի եղէք տղաք, բարի, աչալուրջ եղէք եւ սլատրաստակամ՝ լաւադոյն դործերու համար. ես չեմ հաւատար թէ դարձնալ այս սրահին մէջ իրարու հանդիպինք. ժիր կեցէք տղաք, արթուն կեցէք իմ սիրելի աշակերտներ»: Աչքերը սրբեց, հողին ալեկոծ էր: Մեզմէ քիչերը մարդարէաշունչ իր խօսքերը ըմբռնեցին, այսուհանդերձ ամբողջ սրահը հեկեկանքով լեցուեցաւ, դրասեղանները թաց էին արցունքներով: Կը ձգէինք դըպրոցը՝ ուր ապագայի լաւադոյն երագները կը մեծցնէինք, եւ ընկերներով կապեր հաստատած էինք, ոչ թէ զիւզէ զիւզ, այլ նահանգէ նահանգ. մէկ կարգադրութեամբ կը խղուէր այդ կապը, ցաւ մը աւելի տանելով մեր հետ:

Պ Է Տ Ե Լ Ը

Այդ շրջանին տաճկական կառավարութիւնը զինուորական ծառայութենէ ազատ կ'ընէր 20էն 25 տարեկան առաջին կարգի բոլոր այն զինուորները՝ որոնք կու տային 51 ոսկի. իսկ երկրորդ կարգի զինուորները պէտք էին վճարել 45 ոսկի: Շատ չանցած՝ կառավարութիւնը արզիւրեց առաջին կարգի զինուորներու վճարումները, բայց շարունակեց միւսներուն վճարումները դանձել մինչեւ վերջ: Այս խնդրին մէջ օրէնք չկար. ժողովուրդին ալ բոլորովին սրբող էր թէ ինչ վճարումներ կային մէկ անձի համար, այնպէս որ շատ անգամ

Յ1 ոսկին կը բարձրանար 125ի՝ զանազան կաշառքներով. ուրիշ խօսքով, որոշ կերպով ժողովուրդը կողոպտելու միջոց դարձած էր պէտէլը: Բեռիներս, որոնք երեք հոգի ունէին զինուորական տարիքին մէջ, 450 ոսկիով հաղիւ կրցան ժամանակաւորապէս ազատել տղաքը, առանց հաշուելու ցորենը, հացը, հաւկիթը, մածունը որ կը լեցուէր հասարակ պաշտօնեան մինչեւ մեծին սեղանը, որպէսզի կարողադրուի ակնկալուած դործը. շատ անգամ խարէութեամբ առնուած դրամը դարձեալ կ'ըղէին՝ ըսելով թէ օրէնքով արգիլուած է եւ կարելի է ալլեւս խօսք ընել ստացուած դումարին համար:

Ոոյլի մէջ աչքերովս տեսայ՝ որ մինչեւ անգամ սոխ կը հաւաքէին տուներէն: Այսպէս, կառավարական զանազան բաժանումներ կը պահանջէին ինչ որ կրնային առնել. կը հաւաքէին հաց, զդեստ, ցորեն, բամպակ, դուլլայ, խաւուրմա, դրամ: Հաւաքուած զդեստները կամաւոր տուրքի տաւառութիւն կը թողուն: Տեղական մուխտարի կամ այլ պաշտօնեայի միջոցով կ'ըլլար յայտարարութիւնը եւ հաւաքելը, իսկ ամէնէն վերջը, առանց այլեւայլի, պաշտօնեան կը մտնէր տունը, կը դատարկէր եղածը ու կը տանէր, երբեմն քեզի ձգելով միայն ամսուայ մը կամ շաբթուայ մը պաշարը: Հասարակ ժանտարմը կամ աստիճանաւոր պաշտօնեան, կը ստիպէր քեզ մորթելու հաւը, ոչխարը, կովը, դոհացնելու համար կառավարական պահանջքը, փոխադրութիւնն իսկ պարտադրելով դիւղացիին: Երբեմն մինչեւ անգամ շալակով պէտք էր տանիլ ասլրանքը, ցեխի, անձրեւի, ձիւնի մէջ. հող էջը թէ հիւանդ ես կամ Ֆիլիքապէս անկարող:

ԱՌԱՋԻՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ

Ահա այդ օրերու երկու բնորոշ նամակներ մօրեղբորմէս եւ մէկ նամակ ինծմէ՝ եղբորս.

Սիրելի եղբայրս,

Ձեմ դիտեր ինչ բառերով կամ ինչ ձեւերով ներկայացնեմ ուշացումս: Այո, կը զգամ որ անտարբերութիւն մըն է որ ցուցուցի քեզի հանդէպ, բայց դիտնալու էք որ այդ ինծմէ չէ, այլ օրուան պարագաներն են որ ստիպել կու տան: Սիրելիս, երկար սպասումէ մը յետոյ, վերջապէս դադրեցաւ դպրոցը. ես, շաբաթ մըն է որ կը շարունակեմ կանոնաւորապէս. կը սպասենք որ որոշ տեղեկութիւններ տամ այդ մասին, ու որոշ պատկերներ իմ կեանքէս: Կը կարծեմ դրած ըլլալ թէ քննութիւններս կանոնաւորապէս տուած եմ, եւ կատարեալ յաջողութեամբ դուրս եկայ. վիճակացոյցն ալ շրջեցի. կար-

Ծեմ թէ պիտի պատասխանէք առանց ուշացնելու: Այն օրէն ի վեր երբ դպրոցէն հրաժեշտ տուինք, ահա՛ ցաւ, մտածմունք, իրարու յաջորդել սկսան. նոր նոր դէպքեր իրար գերազանցեցին, որոնց տեղեակ էք թերթերու միջոցաւ. բայց այդ պատճառ մը չէ որ ես ալ ինծի վերաբերեալ դէպքերէն չզրեմ. ակնարկ մը, վերլուծում մը կը բաւէ ինծի, որ մտարեբեմ անցած երկու ամսուն կեանքս: Կեանք մը սուղի ու խորհուրդներու, կեանք մը թշուառութեան եւ լացի. կայսերական նոր նոր հրամաններ իրարու կը յաջորդեն. զօրակոչի անխիղճ տնօրինութեամբ՝ փողովուրդը ահ ու սարսափի մատնած են. մանաւանդ երբ կարմիր թուղթեր զրկուեցան գիւղերը: Օրը օրին կրակոտ ոստիկաններ զիւղերը սարսափի մատնեցին. ամէն ոք, երիտասարդ թէ ծեր, մանուկ թէ չափահաս, հարուստ թէ աղքատ, թուրք թէ քրիստոնեայ, խուճապի մատնուածի պէս, կը խոստովանէին, մանաւանդ ծերերը, թէ այսպիսի բան մը չէին տեսած: Երիտասարդներն ալ, անոր ինչ ըլլալը չհասկնալով, սոսկումով անփէրպէլիկ սարսափեցուցիչ երկու բառերը կ'արտասանէին: Ծրջակայ գիւղերը արդէն սկսած էին արձանագրուել եւ մեր գիւղն ալ դնաց. այն ի՛նչ սեւ օր էր, այն ի՛նչ վիճակ. ես կալն էի, մեր տղաքը կանուխէն զրկած էինք արձանագրուելու, եւ մեր տնեցիները սրտակըտուր տունն էին լեցուած՝ իրենց սեւ բախտը սղալու: Ես չգիմացայ անոնց լաց ու կոծին, անոնց ահին ու լացին, կալ դացի, հոն՝ ես ինծի հետ մնալու, հոն իմ խորհուրդներու աշխարհին յանձնուելու: Այն օրը ես առանձին չէի, մինակ մեր տունը չէր շիւանը, մեր թաղը, մեր գիւղը, բոլոր Դատեմն էր, որովհետեւ այդ օրը, գիւղերը, առատօրէն սեւ վիշտը ծնած էր, եւ արշալոյսը ամէն օրուան պէս փայլուն չէր: Տխուր էր, տխուր, տխուր այնքան՝ որքան վերջին բաժանումի համբոյր յիշող մայրը, այնքան՝ որքան վերջին հրաժեշտ տուող սիրականը, այսպէս էր այդ օրը. ես իմ խուճառներու աշխարհին յանձնուած՝ լուռ էի, լուռ: Յանկարծ շիւանն ու օրօրը փրթաւ մեր տան անկիւնէն, շիւան մը՝ որ չէի տեսած կեանքիս օրերուն, եւ կ'աղօթեմ որ այդպիսի մի օր էլ չտեսնեմ. մէկ հոգի չէր, գիւղի երիտասարդութիւնն էր, կամ աւելի ճիշտ գիւղի կենսունակութիւնը եղող 20էն 45 տարեկաններու ցաւոյնէն էին, որոնք ինկած իւրաքանչիւրը իր սիրելիին վիզին՝ կը համբուրէր ու կը համբուրէր. համբոյր մօր, եղբօր, կնոջ... ու այսպիսի անոյշ ու քաղցրիկ զաւակներու առջեւ՝ որո՞ւ քարացած սիրտը պիտի չլար, երբ իր աչքով տեսնէր երիտասարդ մը այնքան գեղեցիկ եւ այնքան հպարտ, եւ սակայն այդ բոպէին ինկած տարիքոտ կնոջ մը գիրկը՝ կու լայ, կու լայ սրտովը, հոգիովը, կը համբուրէ դանոնք կարօտի ջերմ համբոյրով, կարծես անոնց զով ասլրած չըլլար, ա-

նոնց ծոցը մեծցած չըլլար: Ես՝ խոցուած սրտով, անոնց ցաւերէն կը վերանայի, կը տառապէի, բայց ինչ օդուտ:

Այդ օրն ալ անցաւ: Կարդ մը թոյլատուութիւններէ վերջ, օր մըն ալ 30էն 45 տարեկան եղողները արձակեցին, սակայն այդ ալ երկար չտեսեց, եւ նորէն սկսան 30էն 35 տարեկան եղողները հաւաքել, որոնց մէջն էին նաեւ մեր երկու քեռիները: Այս երկրորդ հաւաքումին, անմիջապէս այս կամ այն կողմը կը ղրկէին ամէնքը եւ ցաւը մեզ տիրած էր արդէն: Երկրորդ հաւաքոյթի ընթացքին, ինչպէս քեռիս ղրած է, բարեկամներ կ'աշխատին ազատել ղիրենք եւ մենք յոյս ունէինք թէ պիտի կարենան դոնէ Մէզրէ մնալ. բայց արտո՛ւ:

Կիրակի օր մըն էր, Պօղոսն ու Սարգիսը արդէն զօրանոցն էին, Սեղբակն ու մօրեղբայրս ջուրը դացած էին, ես ալ ջուրերուն կը նայէի եւ վարի պարտէզներէն կամաց կամաց դէպի վեր կու գայի. երբ Չաթալ աղբիւրը հասայ, հեռուէն նազարը տեսայ որ ինծի ընդատակ կու դար. բարեւեց եւ ըսաւ. «Բեռիդ հո՞ս է, չէ՞ նը դուն դնա՛՛. Մէզրէն տղաքը քշեցին, կ'ըսեն, եւ հաւանական է հանդիպիս իրենց ու տեսնես, եւ եթէ պակաս բան մըն ալ ունին՝ առնես տանիս»: Այս խօսքերը շանթահարեցին զիս ու ես դիւզին մէջէն վազելով՝ հեւիհեւ տուն հասայ, եւ կարծելով թէ տան մէջ ոչ ոք կար, ներս նետուեցայ, եւ ի՞նչ տեսնեմ, մայրս երկու Սարօները եւ միւսները՝ արիւն քրտինքի մէջ՝ սկսած են դործի. մայրս կ'ըսէ. «Յովհաննէս, պէկս, այս ձմեռ Խուլլուի ձիւնոտ ճամբաները ո՞վ պիտի կտրէ՝ քեզի հաց բերելու համար». իսկ Սարօն՝ «Ո՛ւր է Պօղոսը, ո՛ւր է Սարգիսը»: Խենթի պէս եղայ. ի՞նչ ընեմ. ախոռ մտայ, ձին քաշեցի եւ հարցուցի թէ բան մը ունի՞ք տալիք տղոց: Յետոյ անմիջապէս քշեցի ձիս այնքան արագ՝ որքան կրնայի: Գիւղացիները իմ ետեւ լեցուեցան հետեւելու համար ինծի, բայց ո՛ւր գային:

Ճամբուն վրայ հանդիպեցայ Ս. Սարգիսի մօտակայ քիւրտերուն՝ որոնք Մէզրէն կու գային: Ըսին ինծի. «Ի՞նչ դէպի վարդարիլ գացէք, հոն թերեւս բռնէք». այդ պահուն իսկ Մղտէս, Մարտօն, Մուրատին Պօղոսը եւ մեր Օվէն հասան ձիով: Ու մենք զիջեր ատեն դիւղէ դիւղ անցնելով հասանք մինչեւ Գեղուանք եւ հոն դըտանք մեր գիւղացիներէն 14 հոգի. Համազասպ, Արմօ, Պետրոս, Ասէր, Պօղօ Մերկոյ, Գլիբ Կարապետ, Մուրատինց Սահակ, Տէմուրճի Պօղոս, Եռսուֆ, Ամանաթ Դաթօ, Տէր Գուրգէնեան Յովհաննէս, Պօյաճեան Սեդրակ եւ Ղազար Կարօ: Բարեբախտաբար մեր տղաքը հոն չէին. միւս գիւղացիներէն մեծ տիրութեամբ բաժնուեցանք, Տէր Գուրգէնի «Պահպանիչ»ով եւ աղօթքով»:

11 Հոկտեմբեր, 1914:

Թուրքերը սկսած էին նաև դպրոցի Փրահասցիները դուրս քշել երկրէն: Մօրեղբորս հետ դիմեցինք անոնց՝ միասին ճամբորդելու կարելիութիւն մը գտնելու համար. անկարելի է այդ, սլասասլասնեցին մեզի, ու մենք չէինք գիտեր թէ ինչ պիտի ըլլայինք. ոստիկաններով պիտի երթանք եւ ամէնէն չնչին իրերն անդամ պիտի չկարենայինք առնել հետերնիս: Աստուած ձեր հետ ըլլայ, ըսին, կը ցաւինք որ չենք կրնար բան մը ընել. այդ թուրքերը յիմար են: Այդ յոյսն ալ կը կտրուէր եւ միակ փրկանքը կը մնար՝ պէտէլը վճարել: Սակայն վախ կար որ մերժէին:

Ամէն օր զինուորներ կը զրկուէին Կարին: Խարբերդի մէջ, զինուորները կը ստանային ինը սօմին հաց, երկու օրուայ ճամբուն համար, մինչև Բալու: Շատերը հիւանդութիւններու ենթակայ էին եւ կացութիւնը օրէ օր աւելի կը վատթարանար: Ճամբայ հանուող զինուորներէն շատեր, այս պայմաններու տակ, կը փախչէին սոոյժ մահէն, թերեւս ազատելու յոյսով: Այսպիսի դէպքերու առջեւն առնելու համար, սկսան հրապարակային զնդակահարութիւնը: Առաջին առիթով, զօրանոցի հրապարակին վրայ, առանց յանցանքները ստուգելու, 17 հոգի իբրեւ օրինակ կախուեցան: Այսպէսով, ատեն մը դադրեցաւ փախստականներուն հոսանքը, բայց յետոյ աւելի մեծ թիւերու սկսաւ հասնիլ: Կարին երթալ, անխուսափելի մահուան ճանկը իյնալ կը նշանակէր, հետեւաբար հայ զինուորը կը մտածէր՝ կը մեռնիմ ընտանիքիս մօտ, անոնց աչքերուն առջև, բայց ոչ անանուն ձորերու մէջ, կամ հիւանդանոցներու անխիղճ բժշկիներու ձեռքով: Կը մեռնէին Մէլրէ, շրջապատին մէջ դռնուող հիւանդանոցներուն մէջ, այնպէս որ համաճառակի բնոյթ կ'առնէր, եւ կարելի է անվարան ըսել թէ հիւանդանոց ինչո՞ղ զինուորները յոյսերնին պէտք էին կտրել բժշկուելէ, դեղերու պակասին կամ առողջապահական տիրող կարգերուն պատճառով:

Մօրեղբորս դրած նամակը՝ 1915ի Մարտ 6ին.

Ազնիւ եւ հարազատ որդեակներ իմ,

Կարապետ Տէր Յովհաննէսեան եւ Միսաք Ուլուհոճեան

Նախ հայրական օրհնութիւնս տալով, կարօտացեալ երեսներնէդ եւ աչքերնէդ համրոյր տալով, որպէսութիւննիդ կը հարցնեմ, յուսալով Աստուծմէ որ ամէն կերպով ողջ եւ առողջ գտնուելով բարի դորձերնիդ կը շարունակէք. Տէր Յիսուս Աստուածը համբերանք տալով մարմնաւոր աջօք զիրար տեսնելու արժանացնէ. ամէն: Դարձեալ դուք ալ բարեհաճիք մերին վիճակը իմանալ, փառք Աստուծոյ մին-

չեւ ներկայ դրութիւնս, ամէնքս գերդաստանօք ողջ եւ առողջ հոգադործութիւննիս առաջ կը տանինք, այս մասին հանդիստ եղէք. Սարգիսը, Պօղոսը, Սեդրակը, Յովհաննէսը, Յարութիւնը, Յարէթը կարօտացեալ բարեւներ տալով՝ որպէսութիւննիդ կը հարցնեն, եւ փառք կու տան Աստուծոյ, որ ազատած են զինուորութենէ: Գրած եմ քանի մը անգամ թէ ինչպէս երեքին ալ պէտէլը տուած եմ. նախ Սեդրակինը տուի, երկու շաբաթէն 44 լիրա տալով՝ ազատեցաւ. երեք շաբաթ վերջը՝ Սարգիսն ու Պօղոսը տարին, այս անգամ պէտէլ չընդունեցին. ինչ ընենք, Աստուծոյ ողորմութեամբը իշիէդ դապուրին դրին. երեք ամիս Մէդրէ աշխատեցան. Սարգիսը զատեցին դասպուրին խառնեցին, եւ ասպա դասպուրէն հրաման եկաւ, Աստուծոյ ողորմութեամբը, թէ պէտէլը կ'ընդունին: Էր զահալ տուի թէ պէտէլը պիտի տամ, որով դասպուրէն զատեցին, վերջը 55 լիրա տալով ազատեցինք: Մնաց Պօղոսը. ան ալ զրկեցին Պմշէն, ուր կառավարութեան քար կը հանեն. զատեցին որ խտրեալ դապուրին խառնեն ու պատերազմի զրկեն. մէկէն իշիէդէն ալ հրաման եկաւ թէ պէտէլը կ'ընդունին, եւ անմիջապէս հրահալ տուի թէ պէտէլը պիտի տամ. ալ դասպուրին չլրցան խառնել. 43 լիրա ալ հոն տուինք եւ ազատեցինք փառք Աստուծոյ. Աստուած մեզի յատուկէն ողորմած է: Պիտի ըսէք թէ այդչափ դրամ ուսկի՞ց. Աստուած Մամաս Խաչոյին մէկ օրը հաշար ընէ. 276 լիրա տուեց. վերջն ալ 43 հաճի Յովսէփին տուի, էն ալ պէտէլ տուեց, անկէ զատ Քլում Մարգարին տուի 40 լիրէ, որ ան ալ պէտէլը տուեց, 30 լիրա նաճար Նազարին տուի, որ ան ալ պէտէլը տուաւ, 10 լիրա Ղազարենց Լեւոնին պէտէլը տուեց, 9 լիրա Թորոսին տուի՝ պէտէլը տուեց: Այսպէսով Խաչատուր Մամասեանի շնորհիւ ազատեցի. Աստուած մեր երեսին նայեցաւ՝ ողորմեցաւ. աշնան չոր ինկած դիւղը՝ սըղըր չմնաց, մտած տունը անասուն չթողուց, կը մաքրէր կ'ելլար. Յիսուս Քրիստոսի ողորմութեամբ մեր սըղըրներու մաղը չխորաւ, ձի մը ունէաք, ան ալ Աստուծոյ շնորհիւ ըրին մեզի: Պէտք է ըսեմ Մամասեանի մասին թէ ինչպէս այսքան դրամ տուաւ: Զիս առաջ դիտէր որչափ որ արտ կ'առնես պատրաստ եմ դրամի մասին, եկանք որ սէֆէրպէլիկը բացուեցաւ, ստիպուեցայ ուղել, ան ալ չինայեց: Սիրասուն դաւակներս, այսպէս եղաւ, այսպէս իմացէք. ինը եղ, երեք ծնած կով, մէկ ընձիւղ, մէկ ձի, երկու էշ, երկու գուրաղ, 18 մաղի, 15 ծնած, այսպէս իմացէք: Յորեն ցանածս՝ 48 քիլէ, դարը՝ 7 քիլէ, լուշնար՝ մէկ քիլէ, ճուլպանտ՝ մէկ քիլէ եւ 8 օլչէք, ոսպ՝ 2 օլչէք, ձէթ՝ 8 օլչէք, էս ալ էսպէս իմացէք: Գարրիէլենք, Գրլընկանք, Տէր Պետրոսենք դուռ դրացի, ազգական եւ բարեկամ՝ ողջ ըլլալով կը բարեւենք. մէկ ալ Յովհաննէսին վրայ շատ կը ցաւիմ սր սպունաներու զպրօցը

դոցուեցաւ եւ տղան առանց դպրոցի մնաց, ինքն իրեն շատ կ'աշխատի, բայց տխրամայ չըլլայ ի՞նչ ընենք, բարին Աստուած կը ձգեմ ձեր հրամանին: Մէկ ալ 276 լիրայի փոխարէն չաթալ ծառը, ըռըղոն, չախչին դուռը, Ֆրախաթ տուած եմ, այս ալ այսպէս իմացէք. ես ալ միայն հաճի Յակոբի այդին, իարժ դապու ըրած եմ, միւսները սէնէթով տուած եմ, այսպէս իմացէք: Զինուոր դացին Նաւոյենց Յակորը, մեր Չնկուշ Յովհաննէսը, Ատուր Ասէն, Եոսուֆ ազան, Ըլլոյենց Յակօն, Մադիկ Դաւօն, Պօղոս Ակօն, Սիմոն, Պաղտոն, Սէրգիսը, Տէր Գուրգէնին Յովհաննէսը, Պէրպէր Գեւոն, Բիսաք Ծօծօն, Համադրասպը, Նորտիք Թաղոն, Սարգիսը, Կօկէ Մեղքոն, Պօյաճի Սեղբաղը, Պետրոսը, Ամանադ Դաղօն, Պոսէն, Միքայէլ Մէրկօն, Մանուկ Անժուր, Էլտէճի Պետրոս, Հէպոյենց Նիկօն եւ Կարօն, Թովմաս Ակօն, Գլիբ Կարապետ, Արմօ եւ Սադօ, Արմօ եկաւ հաւայ դէրվիսի, Գօղտուժ Անամ, Խախամ Գրիգոր, Միլօ Խաչօն, Մշօ Նշան, Հաճիկենց Պէքիբ ազա եւ Հիւսէն, վերջապէս բոլորը չեմ կրնար յիշել: Վստահ չեմ թէ նամակս պիտի հասնի ձեզի, ինչու որ պատեւրազմ է: Բացուելէ ասդին Ծ նամակներ դրկած եմ եւ ոչ մէկուն պատասխանը առած եմ: Ասկէ ինը ամիս առաջ ձեզմէ նամակ մը առի, ան է. ուրիշներու շատ քիչ կու դայ, ես շատ կը նեղուիմ. ի՞նչ եղաք, վախնամ որ արեւոյսեղ խօսքեր կը դրէք եւ նամակը չի դար. կը խնդրեմ, երբ այս նամակը առնէք՝ անմիջապէս գրեցէք: Մէկ անգամ աներ որդի Յովհաննէսը դրած էր թէ Միսաքը եւ Կարապետը նոյն գործը կը դործեն, ատիկա զիս բաւական ուրախացուց:

ԽՈՒԶԱՐԿՈՒՄՆԵՐ

Մամաս Խաչօն ձի մը ունէր, իր տան մէջ պահելու յարմարութիւն չունենալուն՝ զիւր դրկած էր: Իր ըրած այնքան ասպետական ոգիին համար, կը հողատարէինք իր ձիուն վրայ: Ես ազատութիւն ունէի այդ ձիով ամէն կողմ շարժելու. կ'երթայի մօտակայ թուրք գիւղերը երբեմն նամակներ գրելու համար թուրք զօրքերուն, կամ կ'երթայի Թլիատին, ուր հօրաքոյրս կ'ապրէր իր աղջկան եւ հարսին ու երկու կորիւններուն հետ, քանի որ չորս զաւակներն ալ Ամերիկա դացած էին տարիներ առաջ: Կ'երթայի նաեւ Մէլրէ՝ տեղեակ ըլլալու համար անց ու դարձին, եւ հոն կեանքը աւելի լաւ կը թուէր ինծի. ամէն ոք իր գործին էր եւ պետական ճնշումը չէր նկատուեր: Հայերը լծուած էին պետական մեքենային, աշխատանքին եւ ըստ պետական հրահանգներուն կը կատարէին սիրայօժար կերպով՝ ինչ գործ որ կը յանձնուէր իրենց, բարեխիղճ, պարտաճանաչ եւ ուղիղ.

կարծես այն մթնոլորտը կը տիրէր որ կառավարութիւնը զիտակից էր Հայերու կատարած զոհողութիւններէն: Գիւղերու մէջ, սակայն, կը նշմարուէր աւելի խստութիւն մը, եւ թուրքը կը դպացնէր իր իշխանութիւնը, կարծես առանձնաշնորհում մը ունէր աւելի կողոպտելու եւ մէկ խօսքով՝ իրեն տրուած կարծեցեալ առանձնաշնորհութիւններէն օգտուելու:

Այսպիսի մութ ու անորոշ օրերու մէջ էինք՝ երբ շշուկներ սկսան հայկական ապստամբութեան մը կամ հայ զօրքերու վախստական ըլլալուն մասին, եւ թէ թուրքերու պարտութիւնը վերագրելու էր Հայերուն, ռուսական ճակտին վրայ: Այս օրերուն, օր մը առտու կանուխ զիւղ եկան տասնեակ մը զինուորներ իրենց հարիւրապետ Ազիզին հետ, զիւղի մէջ գտնուող ուտելիքը արձանագրելու եւ կառավարութեան համար դրաւելու համար: Թուրք ազանները եւ զիւղի մեծամեծները կը սկսին այսպէս կոչուած խուզարկութիւնը՝ մեր տունէն: Կը պաշարեն տունը եւ կը սկսին մանրամասն սրբապատմաներ կատարել, աւելի զէնքի փնտռուքի կը նմանէր քան թէ ալիւրի: Մեր տունէն վերջ, դպցին Տէր Գուրգէնեցի Մարտոյին, Թաղոյին տուները, յետոյ Էլտէկոյին, ուր գտան ցորենի հոր մը, կնքեցին ու դպցին. այս առիթով զիւղացիները դանդաղեցան իրենց ապրուստի մասին:

Մինչ այս անորոշութեան մէջ էինք, նորէն զիւղ եկան Մայիս 10ին, հարիւրապետ մը 40 ճանտարմաներով. յայտնեցին թէ այդ զիւղերը զիւղ պիտի մնան, իրեւ հիւրեր եւ առտուն՝ Շիրօ պիտի երթան, հոն սպաննուած մարդոց քննութիւնը կատարելու համար: Համոզուեցանք: Նոյն զիւղերը, Սիրաթօ Արուսթը կանչեց Մելքոն Ծմլիկեանը, Կարապետ Ուլուհոճեանը, Յովհաննէս Տէր Յովհաննէսեանը, Կարապետ Հէսոյեանը, Նիկողոս Մ. Յակոբեանը, վերջապէս՝ 10 երիտասարդ մարդիկ խորհրդակցութեան հրահրելով: Երբ ամէնքը հաւաքուեցան՝ ըսաւ. «Գզիր Մարկոսին ըսենք թէ՛ երբ զինուորները կերակուր ուտելը լրացնեն եւ մէկ սենեակի մէջ հաւաքուած ըլլան, դայ մեղի լուր տայ. մենք կ'երթանք սենեակը կը պաշարենք, կը յարձակինք եւ զէնքերը կ'առնենք»: Տղաքը համաձայնեցան, սակայն մէկը առաջարկեց թէ պէտք է լուր տալ վարժապետ Կարապետին, զիւղի խօճապաշիին, քահանային եւ քանի մը մեծերու. որոշուեցան Սիրաթօ Արուսթը եւ Մելքոն Ծմլիկեանը՝ խօսակցութեան համար: Անոնք խօսեցան Տէր Ահարոնի եւ վարժապետ Կարապետին հետ. երկուքն ալ պատասխանեցին թէ պատրիարքարանէն նամակներ կան՝ որոնց մէջ կ'ըսուի թէ Ժողովուրդի սիրոյն համար, մինչեւ անդամ կարգ մը խռովարարներ պէտք են յանձնուել որպէսզի Ժողովուրդը փրկուի: Եթէ նման բաներ պատահին՝ մեր պարտքն է ձեզ յանձնել:

Առաւօտուն , վարժապետ Կարապետ , Աւետիս Յովսէփեան , Բէհ-
լիվան Գրիգոր , Բոյք Խայօ , Մղտսի Պօղոս , Յակոբ , Հայթա Աս-
տուր կը ներկայանան հարիւրապետին ու կ'ըսեն թէ մեր գիւղը զէնք
չկայ : Հարիւրապետը կը պատասխանէ թէ ձեր գիւղը զէնք ունի ,
եւ մենք անուններով դիտենք որու քով . մի ստիպէք որ մենք եր-
թանք եւ տուները մտնելով փնտռենք , աւելի լաւ է դուք երթաք ժո-
ղովուրդէն հաւաքէք եւ յանձնէք մեզի : Գիւղացիները , աղաներու
հետ խորհրդակցարար , հաւաքեցին զէնքերը եւ բերելով յանձնեցին :
Հարիւրապետը նայեցաւ անոնց եւ ըսաւ . « Ասոնք խաչըրկաթ կ'ըլ-
լան , մենք ձեզմէ 200 մտուղէր կ'ուզենք » : Խօճա պաշին եւ աղաները
պատասխանեցին . « Մենք կ'երթանք եւ կը փնտռենք » : Մեծամասնու-
թիւնը հարցուց թէ կառավարութենէն հրաման ունի՞ր ասոր անոր
տունը խուզարկելու : Առանց պատասխան տալու՝ սկսան փնտռու-
քը գիւղին վերէն : Նախ եկան մեր տունը . երկու ոստիկաններ դրին
դրան առջեւ , չորս հատ ելքին վրայ , հինգ հատ ալ մեր շուրջի տու-
ները : Տանը մէջ կային 400 փամբուշտ՝ պահուած մսուրին մէջ .
քանդեցին դանաղան մասեր , պատերը , եւ երբ սկսան մսուրն ալ քան-
դել , Յովհաննէսը ըսաւ ճանտարմային թէ զինքը դուրս կը կանչեն .
մարդը դնաց եւ ուրիշ ոչ ոք եկաւ մսուրներու քով : Այսպէս , հրաչ-
քով մը , ոչինչ դտան , հակառակ որ մատնուած էինք : Գիւղին բո-
լոր տուները մէկիկ մէկիկ խուզարկուեցան եւ միայն Ղաղարենց Գրի-
գորին տունը դտան պետական զէնք մը եւ մարդը դրին հակողութեան
տակ : Գիւղին աղաները երաշխաւոր եղան որպէսզի մարդը յաջորդ
օրը ինքնաբերարար ներկայանայ կառավարութեան : Տասը օր ան-
ցան անորոշութեան եւ շփոթութեան մէջ :

Մայիս 15ն էր , առաւօտուն ելայ եզներուն խոտ տուի եւ պառ-
կեցայ քովերնին որ իրարու հետ չկուռին : Բիչ ետք լսեցի աղմուկ
մը . դուրս ելայ եւ ի՞նչ տեսնեմ , Հէրոյենց Խայամուն որ եզներով
կը վերադառնար . հարցուցի թէ ինչո՞ւ ետ կը դառնայ . « Չթողուցին ,
պատասխանեց , գիւղը պաշարած են , երկու ճանտարմաներ զիս ետ
դարձուցին , ըսելով թէ այսօր արդիլուած է » : Գացի մեր տղաքը
արթնցուցի . չորս կողմերնիս նայեցանք եւ տեսանք թէ պաշարուած
ենք : Սարգիսը եւ Յովհաննէսը ըսին թէ մենք մէկ մէկ բահ առած՝
կ'երթանք դէպի ագրիւրը . հազիւ դուրս ելան , քաղաքին զլուխը չհա-
սած , ծառերուն տակ ծածկուած ճանտարմաներ կը պոռան . « Կեցէք ,
թէ ոչ կը դարնենք » , եւ երբ կը մօտենան անոնց՝ կ'աւելցնեն . « Հա-
Փիղ էՖէնտին եւ Իւզ պաշի Մահմուտ էՖէնտին այսպէս կարգադրած
են , գիւղէն դուրս ելլողները պէտք ենք բռնել » : Այսպէս ըսելով՝
Սարգիսը եւ Յովհաննէսը տարին Հաճի Պէկոյենց խոնախը , ուսկից
ոմանք զրկուած էին խոտ քաղելու եւ Յովհաննէսն ալ լուացուելու

պատրուակով ձևած եկած էր տուն: Այս երկրորդ անգամն էր որ կառավարութիւնը եկած էր զէնքի համար, եւ այս անգամ մեռցնելու մտքով: Գիւղը պաշարուած էր, զէնքերը թաղուած էին, մարդիկը բանտարկուած՝ իրենց կամքին եւ ձեռքին մէջ, իրենց ժպիտը, եղբայրութիւնը, բարեկամութիւնը, դրացնութիւնը վերցուած էր, միայն ստրուկի եւ տիրոջ յարաբերութիւնը մնացած էր: Այս անգամ ծուղակի մէջ ինկած էին. մարդիկ պետութեան դէմ իրենց չդործած դաւադրութեան յանցանքին համար պէտք էր պատժուէին:

Թուրքը մարդ էր որ կարողանար լսել եւ հասկնալ. մարդկային արարածի բնածին զբացումը չունէր, ո՛չ դուժի, ո՛չ դուրդուրանքի, վերջապէս զուրկ էր մարդկային դատողութեան եւ բարեխղճութեան ամենափոքր նշոյլէն: Եկած էր օրը, որ օրօրոցէն մինչեւ կոյրը, կաղը, ծերը, մանուկը, ծառան, իր աչքերուն առջեւ փոշիացնէր: Այդ օր կը մեռնէր դիւղը. մնացած օրերը եղան լացի, սուղի, աւերածութեան, ջարդի, անօթութեան, տուներու եւ եկեղեցիներու աւերածութեան, աւետարաններու եւ դրչադրերու այրումի, փոշիացման երկար շղթայ մը, որ մինչեւ այսօր ալ այս տողերը դրելու օրը, 1970 Յունիս 11ին, կը շարունակուի Թրքահայաստան, Արեւմտահայաստան կոչուած հողամասին վրայ: Այս օրերը նոր շքրջան մը կը սկսէր ինծի համար. բանտին մէջ տեսածներս, ուրիշ տեղերու մասին լսածներս զիս այն համոզման բերած էին թէ Թուրքը որոշած էր զարնել, ջարդել, կոտորել, եւ ինչ որ էր կրնար ընել ճակատի վրայ եւ Ռուսիոյ դէմ, դատած էր իր զոհը, իր ատելութեան մաղձը արտայայտելու առարկան: Ես՝ երբ բանտէն եկայ, այլեւս տուն չէի մնար, մանաւանդ դիշերները. կարելի է ըսել թէ իմ տունը տեսակ մը բախտաւորներէն էր, ընտանիքը՝ 22 հոգիով, տունն էր, հողերը ցանուած էին եւ իրենց ապրուստը ապահովուած. տան մարդիկը տունն էին: Այս օրերուն Սեդրակը եւ Պօղոս քեռին դիւղ դացած էին պահուրտելու համար. Աւետիք քեռին կը մնար դիւղը. ես եւ Սարգիսը դիւղէն դուրս կը մնայինք լեռներու վրայ, թէեւ տանը հետ կապուած, ու դիշերները երբեմն ցանուած ցորեններու մէջ կ'անցընէին, ամէն օր յոյսով սպասելով անակնկալներու՝ որ չէին դար:

ՄԱՐԳՈՒ ՊԷՍ ՄԵՌՆԻԼ

Օր մը նստած անտառին մէջ, ես, Սարգիսը եւ վանքին Առաքելը կը խօսէինք թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակն ու ապագան, պիտի բռնեն մեզ անդէն ու անպաշտպան եւ պիտի տանին ու մորթեն. լաւ չ'ըլլար որ մէկ անգամ դոնէ մենք ծրարները բան մը ը-

պատրուակով ձևած եկած էր տուն: Այս երկրորդ անգամն էր որ կառավարութիւնը եկած էր ղէնքի համար, եւ այս անգամ մեռցնելու մտքով: Գիւղը պաշարուած էր, ղէնքերը թաղուած էին, մարդիկը բանտարկուած՝ իրենց կամքին եւ ձեռքին մէջ, իրենց ժպիտը, եղբայրութիւնը, բարեկամութիւնը, դրացնութիւնը վերցուած էր, միայն ստրուկի եւ տիրոջ յարաբերութիւնը մնացած էր: Այս անգամ ծուղակի մէջ ինկած էին. մարդիկ պետութեան ղէմ իրենց չզործած դաւադրութեան յանցանքին համար պէտք էր պատժուէին:

Թուրքը մարդ էր որ կարողանար լսել եւ հասկնալ. մարդկային արարածի բնածին զգացումը չունէր, ո՛չ դուժի, ո՛չ դուրդուրանքի, վերջապէս զուրկ էր մարդկային դատողութեան եւ բարեխղճութեան ամենափոքր նշոյլէն: Եկած էր օրը, որ օրօրոցէն մինչեւ կոյրը, կաղը, ծերը, մանուկը, ծառան, իր աչքերուն առջեւ փոշխացնէր: Այդ օր կը մեռնէր գիւղը. մնացած օրերը եղան լացի, սուգի, աւերածութեան, ջարդի, անօթութեան, տուներու եւ եկեղեցիներու աւերածութեան, աւետարաններու եւ դրչադրերու այրումի, փոշխացման երկար շղթայ մը, որ մինչեւ այսօր ալ այս տողերը գրելու օրը, 1970 Յունիս 11ին, կը շարունակուի Թրքահայաստան, Արեւմտահայաստան կոչուած հողամասին վրայ: Այս օրերը նոր շքրջան մը կը սկսէր ինծի համար. բանտին մէջ տեսածներս, ուրիշ տեղերու մասին լսածներս զիս այն համոզման բերած էին թէ Թուրքը որոշած էր զարնել, ջարդել, կոտորել, եւ ինչ որ չէր կրնար ընել ճակատի վրայ եւ Ռուսիոյ ղէմ, գտած էր իր զոհը, իր ատելութեան մաղձը արտայայտելու առարկան: Ես՝ երբ բանտէն եկայ, այլեւս տուն չէի մնար, մանաւանդ գիշերները. կարելի է ըսել թէ իմ տունը տեսակ մը բախտաւորներէն էր, ընտանիքը՝ 22 հոգիով, տունն էր, հողերը ցանուած էին եւ իրենց ապրուստը ապահովուած. տան մարդիկը տունն էին: Այս օրերուն Սեդրակը եւ Պօղոս քեռին գիւղ դացած էին պահուելու համար. Աւետիք քեռին կը մնար գիւղը. ես եւ Սարգիսը գիւղէն դուրս կը մնայինք լեռներու վրայ, թէեւ տանը հետ կապուած, ու գիշերները երբեմն ցանուած ցորեններու մէջ կ'անցընէին, ամէն օր յոյսով սպասելով անակնկալներու՝ որ չէին դար:

ՄԱՐԳՈՒ ՊԵՍ ՄԵՌՆԻԿ

Օր մը նստած անտառին մէջ, ես, Սարգիսը եւ վանքին Առաքելը կը խօսէինք թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակն ու ապագան, պիտի բռնե՞ն մեզ անղէն ու անպաշտպան եւ պիտի տանին ու մորթե՞ն. լաւ է՞ր լլար որ մէկ անգամ գոնէ մենք ծրարենք բան մը ը-



Կարապետ Տէր Յովհաննէսեան (մեծ եղբայրը՝ նստած)
Կանգուն ձախէն՝ Միսաք Ուլուհոնեան, Յովհաննէս Կօշկարեան,
Յ. Տէր Յովհաննէսեան





Յ. ՏԷՐ ՅՈՎԻԱՆՆԵՍԻԱՆ ԽՐԻՄԱՍԱՐԴՈՒՔԻԱՆ

պէսզի ինքն ալ բարձրանայ. տունը մարդ չկայ, մերինները լքած են այդ տունը եւ հաւաքուած մեր տունը: Հիմա կը փնտռենք կերպ մը որով կարենանք լուր տալ մօրս, որպէսզի կապ հաստատէ Առաքելի ընտանիքի անդամներուն հետ, եւ մենք կարենանք մեր ծրարիլը հետապնդել: Քիչ ետք պատուհանէն կը նշմարուի Օմարի տղան՝ որ կը դառնար տան շուրջ եւ հագած էր իմ նոր դնած հագուստներս, որ մայրս յանձնած է իրեն, առանց ինծի իմացնելու: Բաւական վերջ նորէն այդ տղան կը տեսնուի տան շուրջ, այս անգամ մօրս հետ. ես հալիւ ինքզինքս կը հանդարտեցնեմ, դուռը կը բանամ, կու դան ու կը գտնեն զիս հոն, եւ թուրքի տղան կը նշմարէ մտրակը՝ որու մէջ ծածկուած է սուրը եւ անսպասան կ'ուզէ սոռնել: Մայրս կը թելադրէ որ յանձնեմ դայն. ես կ'ընդդիմանամ ու թուրքին տղուն կը յայտնեմ թէ վաղը առաւօտէն ստաջ իրենց պիտի դամ եւ հետս կը բերեմ նաեւ այդ մտրակը, բայց զիջերը դայլերու եւ անասուններու մէջէն առանց անոր՝ վտանգաւոր պիտի ըլլայ: Արդէն մեր տունէն ամէն բան տարած են, կ'ըսեմ իրեն, հագած հագուստդ անգամ մեր տունէն է, քեզմէ դատ ուրիշ ո՞վ ունինք, հետեւաբար պիտի հաւատաս ինծի, պիտի օգնես որ վաղը ողջ ոռոզջ ձեր տունը հասնիմ: Կը յուզուի տղան եւ կը համոզուի, ու մտրակը ինծի ձեռքով կ'երթայ: Կը կանչեմ Առաքելը, մօրս կը բացատրեմ որ Առաքելը իր հարսը կ'ուզէ տեսնել, կերպով մը լուր ձգէ որ դայ այստեղ եւ հանդիպինք: Երեկոյեան Առաքելը կ'երթայ իր հարսին տունը, եւ այլեւս ես չեմ կըրնար կապ հաստատել իրեն հետ:

Ես մնացի շիոթ ու անորոշ վիճակի մէջ, եւ նկատեցի որ իմ հոն մնալս ամէն օր աւելի վտանգաւոր կը դառնայ, մանաւանդ որ թուրքի տղան ալ տեսաւ թէ տակաւին կ'ապրիմ եւ իրենց տունը չգացի. վստահ էի որ իրենց համար նման կարեւոր դադտնիք մը երկար ատեն պիտի չկարենար ծածուկ մնալ. ես պէտք էի հետքս կորսնցնել: Գիշերը կ'երթայի շրջապատի անտառները եւ կամ ցանուած արտերը կը բնակէի, ցերեկները մեղմէ մէկը ինծի կը բերէր լուր եւ ուտելիք: Զիս կ'արածէր շրջապատին մէջ եւ ինծմէ չէր հեռանար:

Եւ ահա առաւօտ մը որ բաւական երկար քնացած էի, զգացի որ քթիս վրայ շունչ մը կը զգամ. աչքերս բացի ու տեսայ արեւը՝ որ բաւական բարձրացած էր ու անոյշ ձայն մըն ալ կ'երգէր. «Երկինքը ամպ չկայ, այս ի՞նչ մշուշ է, տուներնիս հիւանդ չկայ, այս ի՞նչ ողոր ու կոծ, ասոր եման եման կ'ըսեմ, գացողը ետ չի դառնար»: Գլուխս կամացուկ մը բարձրացուցի, բռնեցի ձիուս սանձը ու նկատեցի որ Սարգիսն էր, եմէնի թրքական դօրքերուն կրած պարտու-թիւններու ողբը կ'երգէր, որ շատ յարմար էր այդ օրերուն. զգացուեցայ, մօտեցայ իրեն, առի կերակուրը ու հարցուցի ամէնուն մա-

սին. պատմեց թէ ոստիկաններ կը մտնեն կ'ելլեն, կը կողոպտեն, քաղաքավար ձեւով, եւ ըստ երևոյթին որոշ հեռաւորութիւն եւ կարգը կը պահեն, մարդիկ կը բռնեն զանազան պատճառներով, կը տանին Մէդրէ, ոմանք կը ձգեն որ վերադառնան դիւղ եւ հանդստացնեն միւսները, իսկ ուրիշներ կը զրկուին անծանօթ ուղղութեամբ, որոնցմէ այլեւս լուր չի ստացուիր:

Օր մը հաւաքուած էինք քեռոնցս տանը վերի սենեակը. գիւղը կը լեցուի ոստիկաններով, վարը փողոցին մէջ ձի հեծնելիք քարին վրայ նստած էր մեր դերացի Մինասը, 75ը անց ծերունի մը, աչքերը տկարացած, փայտէ ցուպը ձեռքին, կը բռնեն ու կը քշեն կեդրոն. ան կը բողբէ թէ 70ը անց է եւ կէս կոյր, ի՞նչ օգուտ կրնայ տալ կառավարութեան բեռ ըլլալէ դատ: Կը գարնեն Մինաս ամոյին ու կը քշեն:

Գիշերով կը փախչինք դէպի լեռները, մինչ վարը՝ կը հաւաքեն գիւղի տղամարդիկը, աղաներու ցուցմունքներով եւ մեղսակցութեամբ: Յաջորդ օրերուն կը նկատեմ որ մեր տան էրիկ մարդիկը տակաւին բռնուած չեն. կ'երթան մեր տունը, կը տեսնեն որ մայրս մինակը նստած է պղտիկներուն հետ եւ կերակուրի հողատարութիւն կ'ընէ. կը հարցնեն թէ ուր են տղամարդիկը. մայրս կը պատասխանէ թէ չի գիտեր: Կ'ըսեն թէ կեդրոն երթայ, ու կը հարցնեն պղտիկներուն, որոնք նոյնպէս կը պատասխանեն թէ չեն տեսած քանի մը օրէ ի վեր: Այն ատեն կը յարձակին մօրս վրայ ու կը սկսին ծեծել, պահանջելով որ ըսէ տան հինգ մարդոց տեղը: Այս չարչարանքները կը տեսնէ երկար, երբ այլեւս յուսահատ՝ ոստիկաններն ու այսպէս կոչուած դրացի թուրքերը կը ձգեն ու կը հեռանան:

Մայրս պղտիկ Սարոյի հետ գիշերով կու գայ ու կը դտնէ մեզ Աղուընքար, մեր բրինձի ծառին մօտ, այսինքն Սեդրակը, Սարգիսը, վանքին Առաքելը ու իր հայրը. կը պատմէ կրածները, ոսկրներու կոտորիլը ու վստահարար վաղը նոյն բանը կրկնուիլը, եւ կը հարցնէ թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց վիճակը: Սարգիսը, թերեւս մեր մէջէն ամէնէն զգայունը, կ'ըսէ թէ վաղը կու գանք ու կը յանձնուինք, եթէ վախ կայ որ թուրքերը անհատական թշնամութեան պատճառով մեզի կը սպառնան՝ մենք երթանք Մէդրէ կառավարութեան կեդրոնը յանձնուինք, որպէսզի մեր ընտանիքին վրայ նման բռնութիւններ չկատարուին: Նոյնը կրկնեցին Պողոսը, Սեդրակը, կարգը եկաւ ինծի. ըսի իրենց թէ իմ փորձառութիւնով եւ կրած չարչարանքով, այն համոզումը ունիմ թէ թուրքը կ'ողգէ տղայ մարդիկը ջնջել, որպէսզի ազատ կերպով տիրէ մեր ինչքին ու կեանքին, ես ա'լ չեմ հաւատար թուրքին: Հիմա որ ողջ եմ, բանտարկուած չեմ, ի՞նչ օգուտ կրնամ տալ մօրս, եւ երբ զիս մեռցնեն ի՞նչ օգուտ պիտի կարենամ

տալ անոր. այդ պատճառով ես այն կարծիքէն եմ՝ որ կ'երթանք
կը զարնենք մէկ երկու թուրքի՝ որ ծեծած են մայրս, քան թէ եր-
թալ յանձնուիլ, երբ դիտեմ թէ մահուան կ'երթամ. ու դառնալով
Առաքելին ըսի. Եթէ կու դաս հետս՝ կ'երթանք եւ կը վերջացնենք
նախ Մէհմէտ Ալին եւ յետոյ մեր ընելիքին մասին կը մտածենք:
Մայրս տարիներ վերջ այս դէպքին անդրադառնալով կ'ըսէր. Վո՛ւշ,
վո՛ւշ, մեռնիմ իրենց յիշատակին, ինչպէս եղբայրս եւ եղբօր որդի-
ներս պատրաստ էին մեզի համար մեռնելու, բայց տղաս մերժեց.
յետոյ մեզմ ժպիտը շրթներուն վրայ՝ ըսաւ. Փառք քեզ Աստուած,
որ դուք գոնէ ազատեցաք:

ՏԵՂԱ.ՀԱՆՈՒՄԸ

Զ.

ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՀՆԱՐՔՆԵՐ

Կառավարութեան մէկ ուրիշ խաղն էր՝ ղիւղերէն հաւաքել մարդիկ եւ սայլեր, որպէսզի կարողանան բանակին ուտելիք եւ պիտոյք հասցնել: Մեր ղիւղը եկան եւ 60 սայլեր ուղեցին, յետոյ 60էն իջան 30ի եւ հաւաքեցին 45 ականաւոր մարդիկ, որոնք մինչեւ այդ ատեն այսպէս կամ այնպէս կերպով մը ազատած էին նախորդ հալածանքներէն. հիմա սկսան հետապնդել թէ մեր արտերուն մէջ փամփուշտներ դտնուած են, որով կը պահանջեն չորս պետական ղէնքեր: Այս հարցին համար օր մը տուն եկած էին Բէհլիվան Գրիգոր, Տէր Ահարոնը, որ մինչեւ այդ՝ ողջ էր եւ ըստ երեւոյթին կը պտտէր. եկան մեծ եղբօրս քով եւ ըսին թէ այս չորս ղէնքերը կ'ուզեն: Կուսակալին աւանջը հասած է այդ մասին, դանդատ կայ թէ կողմնապահութիւն եղած է, պէտք է ստիպողարար հաւաքել եւ յանձնել պետութեան, եւ ակնարկութիւն կ'ըլլար թէ ձեր տան բոլոր տղամարդիկը տունն են, մինչ միւսները բոլորը տարուած են պետութեան զանազան աշխատանքներուն: Մօրեղբայրս բացատրեց որ քանի անգամ պիտութիւնը տունը պաշարեց եւ բան մը չգտաւ, ոչ ոք կը վկայէ թէ տեսած ըլլայ մեր տղոցմէ մէկը՝ որ ղէնք առած պտտած ըլլայ, եթէ դրամ կ'ուղէք՝ այդ ալ չունիմ, որովհետեւ այսքան ոսկի պետութեան տուած եմ տղաներու զինուորական ծառայութեան փոխարէն, եւ վաղն ալ ես պիտի երթամ սայլերով ու եզներով, իմ ծառայութիւնս բերելու կառավարութեան: Ես բարկացած միջամտեցի մանաւանդ Տէր հօր վերաբերումին համար, եւ անոնց բարկութիւնը իմ վրաս հրաւիրեցի, սխալ մը՝ որ չօգնեց մօրեղբօրս, բայց իր խոհեմ պատասխանները սիրտս կը ցաւցնէին:

Յաջորդ օրը, Աշտարճի աղան, մէկը մեր գիւղի ամէնէն վատասիրտ տաճիկներէն, կը մտնէ մեր դարացի կիներու մօտ, համոզելու որ վը-կայութեան երթան՝ ըսելով թէ տեսած են Պօղոսին, Սարգիսին, Սե-դրակին վրայ այդ գէնքերը: Խեղճ կիները ահ ու դողի մէջ կ'իյնան, ըսելով թէ մենք այդ մարդոց հետ դանազան ատեն հողի ու ջուրի կռիւներ ունեցած ենք, բայց չենք տեսած զիրենք զինուած. կրնաք մեզ կախել, սակայն նման սուտ վկայութիւն չենք կրնար տալ, Աս-տուած մեզ յաւիտեան կը պատժէ:

Այս գէնք պահանջելու ընթացքին՝ աչքիս դարկաւ պատէն կախ-ուած Հ. Յ. Դ. ի զինանշանը, որ ինծի նուէր ըրած էր Տիւրքանա-կերտցի ընկերս, երբ միասին կ'ապրէինք Սարգիս Ռչտունիի տունը. սիրտս կսկծեցաւ, ի՛նչ լաւ որ այդ մարդիկը ուշադրութիւն չեն ը-ներ անոր, եւ ինչպէս այդ արհաւիրքի ժամանակ ոչ ոք ուշադրու-թիւն ըրած էր այդ զինանշանին վրայ:

Այս վերջին օրերուն խօսակցութեան նիւթը այն էր՝ թէ Հայերը բոլորը պիտի երթան աւելի ապահով վայրեր, որովհետեւ վատա-հելի չէ ճակատին մօտ անոնց բնակութիւնը, եւ պէտք է որ իրենց փոխադրութեան խնդիրը իրենք կարգադրեն, եթէ ուզեն՝ կրնան ծա-խել իրենց իրերը, կամ պահել, կը կնքուի եւ երբ վերադառնան՝ իրենց կը տրուի տան բանալին ու կը վերաբնակին: Բայց լաւադոյնն է ամէն բան ծախել, դրամի վերածել եւ այդ պատճառով ալ կարե-նալ թեթեւ ճամբորդել, այնպէս որ քանի ժամանակը կը մօտենար՝ այնքան գիները կը պակսէին:

Տուններնին, ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, քաշող քաշողի էր մնա-ցեր: Ինչ որ կրնային ծախել՝ կը ծախէին, ինչ որ չէին կրնար՝ ձրի կու տային, այսպէս կոչուած յոյսերով՝ թէ դուցէ կը վերադառնան ու կը վերստանան. այլևս մարդու հալածանք չկայ, բոլորը մէկ օրուան կը սպասեն: Օր մը երկրորդ յարկը նստած ու անաղմուկ՝ մտիկ կ'ընէինք թէ ինչ կ'անցնի կը դառնայ փողոցը. մայրս ծախու էր հաներ քեռոնցս տանը պղինձէ սեղանը, որ ըստ Պօղոս քեռիիս հինգ ոսկիի դնած էր եւ որ իրեն տասը տուած էին եւ չէր ծախած. մինչդեռ հիմա թուրքը կու տայ 60 դուրուշ: Մայրս ամէն կերպով կը դողէ, սակայն անօգուտ, մարդը 60 դուրուշէն բան չ'աւելցնէր, եւ ամէն անգամ որ մայրս կ'աւելցնէ՝ մօրեղբայրս իրար կ'անցնի, կը նեղուի, թէ ինչու մայրս այս դործին կը խառնուի: Այս զաւեշտը այնքան ջլաջնացուց զիս եւ փոթորկեց, որ ամէն բան մոռցած՝ վար իջայ. դրան վրայ դատայ հսկայ զինուորական մը, սուրը կախած մէջ-քէն, ես առանց տատամսելու դուրս ելայ, քաշեցի թուրքին ձեռքէն սեղանը, ըսելով թէ ծախու չէ, եւ առանց աղմուկի մտայ ներս,

չիօթութեան մատնելով մայրս, զինուորականը եւ հարստութեան վրայ թափուող թուրքերը, որ շրջակայ գիւղերէն հաւաքուած էին անպաշտօն կողոպուտի. բայց ետքը անդրադարձանք որ այս խենդութեամբս դժուարին կացութիւն մը ստեղծած էի ո՛չ միայն ինծի՝ այլ նաեւ վերը պահուողներուն համար. օր ցերեկով կարելի չէր աննշմար դուրս փախչիլ, այլ պարտաւոր էինք սպասել օրուայ վախճանին եւ դուրսի զինուորականի բռնելիք ղիրքին. մինչեւ երեկոյ վախով ու սարսափով սպասեցինք դալիքին, լուած էի ես, լուած էր նաեւ մօրեղբայրս Պօղոս:

ԴԵՊԻ ԱՒՍՈՐ

Անկարելի էր այլեւս տան շուրջը մնալ. լուր տարածեցի որ ես կ'երթամ Մէլրէ եւ հոն կաթողիկէ եպիսկոպոսին կարաւանին հետ կը մեկնիմ դէպի աքսորաւայր: Այդ երեկոյ իսկ փոխադրուեցայ Մամտանենց տան մօտ Յովհաննէս Ամոյին տունը, իր այրի տիկնոջ Թագուհիին հետ մտածելու թէ ինչպէս կրնայինք Մէլրէ ձգել ինքզինքնիս: Թագուհին դուրսը հարց ու փորձ ընելով կը տեղեկանայ որ յաջորդ օրը խոշոր թիւով Դատեմցի կիներ կ'երթան Մէլրէ, նախ հաց տանելու բանտերուն մէջ մնացած իրենց սիրելիներուն, եւ յետոյ դնել այն կարեւոր բաներն ալ որ կրնային պէտք ըլլալ իրենց աքսորի ճամբուն ընթացքին: Այս ճամբորդութեան մասին բաւական վստահութիւն ստեղծուած էր, այն բանով որ երեւցած էին աքսորականներ իրենց բռններով, ընտանիքով, կարինէն եկած, որ մինչեւ այդ ատեն կարելի է ըսել որեւէ նեղութիւն տեսած չէին: Ասիկա ալ այն խարկանքն էր որ իբր թէ կառավարութիւնը իր կարելի միջոցներով կը հովանաւորէ այս աքսորականները, մինչդեռ այսպէս կոչուած մինչեւ հոս հասնող բախտաւորները ցուցադրութեան համար էր ժողովուրդին՝ որ պիտի հաւատար կառավարութեան եւ դիւրութեամբ ժամանակաւոր կերպով պիտի ձգէր իր տունը ու կայքը եւ երթար օտար շրջաններ, մինչեւ պատերազմին վախճանը:

Ուրեմն ես պիտի հազուէի աղջկայ հագուստ, պիտի խառնուէի այդ դատեմցի կիներու խումբին եւ պիտի երթայի Մէլրէ անոնց հետ. ես անխօս պիտի հետեւէի Թագուհիին ամբողջ ճամբու ընթացքին: Ու այսպէս հասանք մինչեւ Սուրսուրի վանքին դիմաց: Ի՞նչ տեսնենք, Մամաս խաթունի ձիուն վրայ նստած, որ երկար ատեն իմս եղած էր, մեղի հասաւ Հաֆըզ աղան, խարբերդի դաշտին գլխաւոր դահիճներէն մէկը: Կիները սկսան իրարու փաթթուել ընական սարսափով, եւ կրնաք երեւակայել թէ ինչ կ'ըլլար իմ վիճակը, մանա-

ւանդ այդ ըոսպէին որ նշմարեցի թէ ոտքերուս ունիմ իմ տղամարդու կօշիկներս, որ բնականօրէն կը մատնէին իմ տղայ ըլլալու հանդամանքս, աղջկայ հագուստին տակ: Անցաւ առաջ, ես տնտնալով ետ մնացի, քանի մը խօսքեր փոխանակեց կիներու հետ, որոնք հաստատեցին թէ կ'երթան հաց ու ուտելիք տանելու իրենց հարազատներուն, որոնք տակաւին չեն դիտեր թէ ինչու կը մնան բանտը: Ինքը պատասխանեց թէ Աստուած կրնայ դիտնալ կառավարութեան դործերը, թերեւս մօտ օրէն կրնան արձակուիլ եւ դառնալ տուն, ըսաւ ու շարժեց ձին: Ես թէեւ չունչ մը քաշեցի, բայց վախցայ որ քաղաքի մուտքին վրայ կրնար ոստիկան տեղաւորել այդ անձանօթ աղջիկը բռնել տալու համար:

Քաղաքը հանդարտ կը թուէր, ոստիկանութիւն չէր երեւեր, ես Թադուհիին կողքին կը քալէի դռուցութեամբ, պղտիկներ կը խաղային, կիներ հոս ու հոն կ'երեւէին, եւ սակայն մէջտեղ տղամարդ չէր երեւեր. ինծի հետ եկող կիները մեծ մասամբ դացին դէպի բանտ, ես ուղղուեցայ դէպի կաթողիկէներու առաջնորդարանը, դուռը բաց դտայ եւ ներս մտայ Թադուհիին հետ. խնդրեցի իրմէ որ երթայ մօտակայ Մամաս խաչոյին տունը եւ այնտեղէն հասկնայ թէ ինչպէս է Մէդրէի կացութիւնը: Ես մնացի հոն Ղեւոնդ վարդապետի հետ, Արարիկերցի հայրենաշունչ երիտասարդ քահանայ մը՝ որ կարծեմ կը տառապէր թոքախտէ, սակայն սիրտը կը վառէր հայրենասիրութեան կրակէն. «Ա՛խ մեր լեռները, Արարիկերի եւ Ակնի լեռները, անդամ մը որ հոն իյնամ, ես ամիսներով կրնամ հետքս կորսնցնել եւ ասլրիլ այս դաժան աշխարհին մէջ» կ'ըսէր:

Օր մը ըսի՝ որ ես ուրախութեամբ կը միանամ իրեն, թէեւ ես այդ լեզներուն ծանօթութիւն չունիմ, բայց պատրաստ եմ իրեն միանալու. հարցուր Գերասայծառին եւ տես թէ ինքը ի՛նչ կը խորհի: Գերսայծ.ը ըսած է իրեն թէ ինք կ'արդելէ այդպիսի ընթացք մը, նախ հովիւը իր հօտին հետ պէտք է ըլլայ, երկրորդ՝ ինք չի կարծեր որ կառավարութիւնը պիտի վտանգէ հոգեւոր հայրերը, եւ առհասարակ սովորական ժողովուրդին, աւելի ծանր դէպք չի կրնար պատահիլ, մինչեւ հիմա եղած է արդէն. չի կրնար սակայն նոյն ապահովութիւնը զգալ մարդոց մասին, որոնք մինչեւ հիմա փնտրուած են եւ չեն գտնուած. այս ճամբորդութեան պատճառով կրնան երեւան ելլել. Գերսայծ.ը չի հաւատար թէ մեզ պիտի ջարդեն կամ անպատուեն, չ'ուզեր թուրքին վստահիլ եւ ապաւինիլ, բայց պարտք կը զգայ ենթարկուիլ մեծաւորին: «Բայց դուք մի՛ դաք, դուք փախէք լեռները, ըսաւ ինծի Ղեւոնդ վարդապետը, դուք ձեր կեանքը ազատելու նայեցէք», կը կրկնէր դրեթէ ոսկր դարձած այդ խոհուն եւ իմաստուն վարդապետը: Քանի մը օր վերջ Մամաս Խաչոյին տան

դրան վրայ հանդիպեցայ մեծ եղբորս Աւետիքին. Հա, ըսաւ, ինչ աղէկ եղաւ որ քեզի հանդիպեցայ, չըլլայ որ դիւղը երթաս. այնպէս կը նշմարեմ որ մասնաւոր թշնամութիւն մը կայ քեզի դէմ. իմացեր են որ դու Գրպժ.ին հետ պիտի մեկնիս, եւ իբր թէ խօսք ըրած են դիւղին կարգ մը աղաները՝ որ դան եւ քեզ առնեն ու քեզի չարիք մը հասցնեն: Հարցուցի թէ ինքը ի՞նչ պիտի ընէր: Ըսաւ. Ես եկած եմ սայլով, եւ այսօր 30 սայլերով 45 մարդոց հետ Փրանսական շէնքին առջեւ կեցած ենք, որպէս թէ կառավարական շէնքի մը շինութեան համար փայտեր պիտի տանինք Եփրատէն դէպի Մուշ. բայց մի՛ երթար մօրեղբայր, այսպէս կ'ըսէ մեր վարդապետը, մենք բոլորս կ'ապաւինինք մեր շրջանի լեռները, մի՛ երթար, սիրելի մօրեղբայր, կրկնելով, ինքնաբերաբար փաթթուեցայ իրեն եւ սկսանք հեկեկալ: «Ձէ, ըսաւ, մեր տունէն փառք Աստուծոյ մինչեւ Հիմա կորուստ մը չունեցանք, եւ այս պարտականութիւնը կ'առնեմ դիտակցութեամբ, եւ եթէ ինծի բան մը պատահի, դուք կաք, եւ տանը անունը եւ ջաղաչուելը կը մնայ. խելացի ես, դիտեմ, բայց պէտք է զգոյշ ալ ըլլաս, եւ քիչ մը զգացումներուդ տիրես. Սարգիսը պատմեց բաներ մը, որոնք պէտք չէիր ըրած ըլլալ. կեանքդ զուր տեղ վտանդի տակ կը դնես, երբ առանց անոր ալ վտանդի տակ է արդէն: Կ'ակնարկեմ Առաքելին հետ առած որոշումներուդ մասին»:

Ահա այս մարդը, որ հայր մը եղած է ինծի, հպարտացած է ինձմով եւ տարած է զիս իր հետ՝ ուր որ դացած է, պատուի եղած է, պահպանած է մեղ բոլորս, ու Հիմա ալ դիտակցօրէն կը յանձնուի թուրքերուն, պատրաստ՝ կեանքը տալու իր տունը անխախտ պահելու յոյսով: Իր զաւակներուն կրթութեան չէ նայած, բայց իմ կըրթութեան համար բան մը չէ խնայած: Այս մարդը, համոզուած եմ որ սխալ կը դործէ, բայց կը զգամ որ մեծ է հոգիով եւ զոհարեութեամբ, քրիստոնէական հաւատքով, իրական կատարեալ օրինակելի մարդ մը, ծնած ու մեծցած սխալ երկրի մը մէջ. ու հոգիս կը վկայէ որ զինքը ա'լ պիտի չտեսնեմ, սիրտս կը մրմռայ ու կ'ուզեմ որ ինծի ըսէ իր կամքը, եւ ես պատրաստ եմ ընելու ամէն բան իր սիրոյն եւ այն հաւատքին համար՝ որ ես ունիմ իրեն հանդէպ: Ասիկա Յովսէփինց Աւետիքն է, որուն նմանները աշխարհի մէջ քիչ կը ծնին եւ քիչեր կ'ապրին: Կը բաժնուինք իրարմէ, գիշերները կը քնանամ Գնդուչ պաճիկի տունը, որուն տղան տարած են եւ խեղճ կինը բոռ մը կըրտած է եւ հաղիւ իր ընելիքը գիտէ: Անոր տունը շատ հեռու չէ Փայրիքաթօրենց հինգ եղբայրներու, ինչպէս նաեւ Գէորդ էֆէնտի Ասրոնեանի տուներէն: Այս վերջինս տակաւին կը մնայ Պանք Օթթոմանի պաշտօնեայի հանդամանքով եւ կ'ապրի իր զաւակներով: Քանի մը օրէն Պօղոս քեռիս ալ կը միանայ ինծի եւ յաճախ կ'երթանք ու

կը տեսնուինք Ղեկոնդ վարդապետին, եւ սակայն չենք կրնար տեսնել Գրպօժը, որ քաշուած է ինքն իր մէջ եւ ոչ ոքի կ'երեւի. ո'չ ոք զինք տեսած է պատարազի: Բանտին մէջ են դաշնակցական առաջնորդները, տարած են նաեւ երիտասարդ ու յանդուզն Պսակ վարդապետը. բանտին մէջ է ինծի ազգական Յովսէփի Ուլուհոճեանը, որ առաջին բռնուածներէն է, իր գրած «Գրիչը թէ սուրը» շարադրութեան համար, եւ նոյն պատճառով շատ կանուխէն բանտարկուած է նաեւ հաճի Յակոբը, նոյն դրութիւնը սրբազրած ըլլալու մեղքով: Այդ խումբը, 18 հոգի, Խարբերդի Ժողովուրդը քշուելէն ետք այրեցաւ բանտին մէջ իրբեւ նահատակներ, իրենք իրենց խնայելով պատրաստուած չարչարանքները եւ միեւնոյն ատեն զրկելով թուրք զեկավարութիւնը իրենց տառապանքով հրճուելու անմարդկային հաճոյքէն:

ՎԵՐՁԻՆ ԱՅՅ ՄԸ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՒՆ

Նախ քան Մէլքէ դալս, դացի Ս. Յովհաննէս, պատանեկութեանս խաղի վայրերը, յիշեցի վարդանանցը, իմ ընկերներս, որոնք չկային. բարբախտաբար ոմանք կը դառնէին Ամերիկա: Ես եկած էի հոս նամակ մը պահելու՝ եղբօրս ուղղուած, բայց միեւնոյն ատեն ամերիկահայ բոլոր հայրենակիցներուս: Մօտաւորապէս այս կերպով:

Սիրելի եղբայրս, հայեր, եղբայրներ եւ ընկերներ,

Քանի մը շարաթէն դիւղը պիտի հանուի եւ զրկուի դէպի օտար սահմաններ: Շատեր պիտի փոշխանան այդ ճամբուն վրայ եւ դուցէ ոչ ոք ողջ պիտի մնայ: Այս զմայլելի հայրենիքը, այս պապենական տունը, ուր հազար տարիներ մենք ապրած ենք սերունդէ սերունդ, պիտի քանդուի: Դուք պիտի դաք օր մը, եւ եթէ մեզ փնտռէք, եթէ մեր արիւնի հետքերուն հետեւիք, պիտի դառնէք լեռնէ լեռ, անմարդարնակ վայրեր, մինչեւ Ուրֆա կամ Սիւրիա, մի՛ մոռնաք մեզ, մեր դիւղը, մեր սքանչելի պապերը, մայրիկները, մեր խեղճ ու թանկազին ձագուկները, որ այս ճամբուն վրայ պիտի իյնան, անօթի, ծարաւ, անպաշտպան եւ առանց հողատարութեան: Աստուծոյ եւ պեթութիւններու խիղճը մեռած է, գացող Ժողովուրդը իր յոյսը կը դնէ իր գացող զաւակներու խղճին վրայ. ասիկա թող ըլլայ վերջին բաղձանք մը, շինեցէք, մեծցուցէք այս դիւղը, դուրսուրացէք անոր վրայ, որ ծնողքի մը պէս դուրդուրաց ու պահեց մեզ դարերով, եւ ոճրապարծ ձեռք մը մեզ հիմա արմատախիլ կ'ուղչէ ընել: Կարօտով, համբոյրով, արցունքով՝ եղբայրդ Յովհաննէս:

Դրի այս քանի մը տողը եկեղեցիի մուտքի դրան քարերուն վըրայ, քար մըն ալ զետեղեցի վրան, որ հովը չտանի դայն, մինչև բարի ձևք մը հասցնէ դայն իր հասցէին: Փաթթուեցայ դրան լայն քարերուն, եւ ի՛նչ հրաշք ու սարսափ զգացի որ քարերը կարծր չեն, հալած ու կակուղ կու դային մարմնոյս հետ. վախ մը զգացի թէ բան մը կ'ըլլար ինծի, կա՛մ կը խենթենայի կա՛մ հրաշք մը կը պատահէր որ ես անկարող էի բացատրելու: Քիչ մը կեցայ, սրբեցի աչքերս, դացի ալը լուացուելու, մարմնով եւ մտքով կարծես թէ հանդարտեցայ: Մտայ դիւզը, դացի Գարրիէլ ամոյննց տունը, ուր իր զաւկին հետ կ'ապրէր (որ այժմ կ'ապրի Ֆրանսա, Մարսիլիոյ մէջ, ունի զաւակներ եւ թոռներ):

Գիւղին բանտէն դուրս դալու ընթացքին ծանօթացայ մեր տուները հսկող ոստիկանին. հրաւիրեցի զինքը տուն, կերակրեցի, ըսի որ քանի հոս ես, այս տունը թող քուկդ ըլլայ եւ ուտելիքի համար նեղութիւն չբաշես: Ես ալ մէկ բաղձանք ունէին իրմէ. տան մէջ լեցուած էին տաւարը, եղներ, ոչխարներ, որոնք կա՛մ պէտք էին դուրս տարուիլ արածելու եւ կամ թոյլ տրուէր որ դուրս երթայինք, քաղէինք եւ բերէինք որ խեղճ կենդանիները կերակրուին: Անշուշտ կենդանիներու մտահոգութիւնը մեծ էր, բայց կարեւորը կար. դիւղի տղամարդիկը բռնել, ծեծել, զէնքերը առնել... կարգը եկած էր կլներուն, մասնաւորապէս անոնց՝ որոնց ամուսինները Ամերիկա կը գտնուէին: Այսպէս, իրենց բուն նպատակն էր՝ հաւաքած զէնքերը ծախել եւ դրամը գանձելէ ետք, բարոյապէս ալ նեղել այդ անպաշտպան կիները, որոնք ի հարկին պէտք էին ենթարկուիլ տեղական ազաներու քմահաճոյքին: Մայրս ինծի ըսաւ որ լուր ձգած են թէ առաջին առիթով պիտի կանչեն մեր Իւզարեր Տէր Յակոբեանը, որու ամուսինը Ամերիկա է եւ ուսուցիչ եղած էր տարիներով դիւղին մէջ. նոյնպէս նաեւ Հոսփը, մեր դրացին եւ սղղականը, որուն ամուսինը նմանապէս Ամերիկա է, եւ Հուչոյ Կարոյի տիկինը եւ իր զոյրը Թերզեան՝ Յովհաննէսի կիներ: Պէտք էր բան մը ընել եւ այս կիները փախցնել Մէդրէէն. այդ պատճառով խնդրեցի ոստիկանէն որ թոյլ տայ այս ընտանիքներուն՝ երթալ եւ պէտք եղած խոտը հասցնել մութը կոխելէ առաջ: Համաձայնեցաւ ու ես ալ, ասոնք ճամբայ հանելէն ետք, նոյն ճամբով հետեւեցայ իրենց: Այդուընթար դտայ Պողոսն ու Սարգիսը, մեր հարսերը, որոնք լծուած էին աշխատանքի, խոտեր կը քաղէին, կը չորցնէին, իբր թէ աշխարհը բան մը պատահած չէ: Եւ այս կիներուն հետ մայրս ձգեցի որ երթայ մինչև վանքի մօտերը, ըսելով թէ ես հոն կը հանդիպիմ իրեն ու կը շարունակեմ ճամբաս, ու ինք կը վերադառնայ տուն: Ատեն մը տղոց հետ խօսեցանք ստեղծուած կացութեան ու զէնքերու մասին, իրենց խոտ

քաղելու եւ կալ ստեղծելու մասին, ու մէկ ժամ վերջ ես ալ լեռներու վրայով դէպի վանք ուղղուեցայ: Բռնեցի մայրս վանքէն քիչ մը հեռու, քիչ մը խօսեցանք, դալիք օրերու վտանդները աչքի առինք. մայրս աչքերը թաց ինծի դառնալով ըսաւ. Զաւակս, կը տեսնեմ թէ կատաղած շուները, թուրքերը, շատ թշնամաբար կը վերաբերին, մանաւանդ քեզի նկատմամբ. նկատեցիր որ չիւնտոնեցին Պօղոսը, Սարգիսը, բայց քեզ տարին չարչարեցին. օր մը չէ օր մը դիտուէ փորձանք մը պիտի բերեն, ու եթէ դայ՝ թող ըլլայ հեռու որ ես չտեսնեմ, եւ վստահաբար չգիտնամ. թող դոնէ յոյսով ասլրիմ, դիակդ չեմ ուղեր տեսնել ձագուկս... դրկեց դիս, համբուրեցի զինքը ու օրհնութիւնը ուղեցի մայրիկիս: Իմ վրաս մի՛ մտահոգուիր, դուն ալ ինքզինքդ զգոյշ պահէ, ով դիտէ ինծի համար, եղբայրներուդ համար կրնան քեզ ալ չարչարել, ամէն բանի մէջ մի երեւիր. իմ վրաս մի՛ խորհիր տղաս, ես պասպուր մեռած օրէն կէս մարդ եմ եւ ձեզի համար միայն կ'ապրիմ. փառք Աստուծոյ դոնէ եղբայրդ աղատ է, եւ եթէ անիկա մնայ՝ տան սիւնը չի մարիր, եւ օր մը նորէն կը ծլի, ճիւղ կ'առնէ: Հատէ տղաս, մի՛ ուշանար, Աստուած թող միշտ ճամբադ բանայ եւ հսկէ վրադ: Մայր ու տղայ արցունքով հեռացանք իրարմէ, անիկա դողնոցով աչքերը սրբելով ու ես կեցած լեռան կողքին՝ հետեւեցայ իր քայլերուն, մինչեւ որ կորսնցուցի իր հետքը եւ ուղղուեցայ դէպի վանք:

ԴԵՊԻ ՄԵԶՐԷԻ ԶԱՄԲԱՆ

Վանքի Արու Դամուռին եւ իր սքանչելի կնոջ հիւրասիրութիւնը վայելելէ ետք, Առաքելին հետ սկսանք քալել դէպի Մէղրէի ճամբան. ըսաւ որ կիները մեծ մասամբ եկան ու անցան, չեմ կարծեր որ քեզի սպասեն, ժամ առաջ կ'ուղեն քաղաք հասնիլ: Ես ալ երթամ, ըսի, որպէսզի դիչերէն առաջ հասնիմ եւ դիչերուայ քաղաքային պահակներէն խուսափիմ, ու ճամբայ ելայ: Երբ արդէն սարի դադաթն էի եւ Մէղրէի կողմը Սուրսուրի վանքը դեռ չէի հասած, նշմարեցի որ կարգ մը կիներ հոս ու հոն կը փախչին. կասկածը մտքիս մէջ ինկաւ, որ իմ վիճակը աւելի կը ծանրանայ եթէ բռնեն դիս ու բանտ տանին, եւ կամ բռնեն ուղղակի քաղաքի բանտը տանին: Այս մտահոգութեամբ դուռը բացեալ կը յառաջանամ, ու ի՞նչ տեսնեմ... քանի մը քայլ հեռաւորութեան վրայ բոլորուած են Անժիւր Մարթան իր աղջիկներով, այսինքն Տիկ. Հէպոյեան, Թերզեան, Օր. Թադուհին եւ Հոփիսիմէ Անժիւրեանները, եւ մեր դպրոցի աշակերտուհիներէն մէկը, որոնց երեք ոստիկաններ կը հարցնեն թէ ինչու այդպէս փախստա-

կան էք, եւ թէ ինչու ատոնք, ցոյց տալով միւս կիները, ոստիկաններէն կը հալածուին: Ես միջամտեցի, ըսի թէ հարիւրապետ Մահմուտ էֆէնտիւի արտօնութեամբ այս քանի մը կիները կը տանիմ Մէլզըրէ բանտին մէջ իրենց ազգականներուն հազուատ եւ ուտելիք տանելու, եւ վաղը նորէն պէտք է վերադառնամ դիւզ: Թուրքերը անակընկալ որս դտնողի շարժումներ սկսան ընել, մինչ ես ձայնս բարձրացուցի թէ ասոնք հարիւրապետի մը կողմէ ինծի յանձնուած են եւ դուք օրէնքի դէմ կ'երթաք, քանի որ ինծի չէք հաւատար, ճեղքէք ասոնք որ երթան, ես ձեզի հետ կու դամ դիւզ Մահմէտ էֆէնտիւին, անիկա թող տնօրինէ ձեր դիրքը: Մէկը բարկացաւ թէ մենք ալ զինուոր ենք եւ իրաւունք ունինք մեր ուզածը տնօրինելու, դուք փախտական էք պետութեան դէմ, եւ մենք իրաւունք ունինք մեր դատածին պէս վերաբերուելու ձեզի հետ: Գօսիէն կախուած էր մէկու մը պաշտօնը որոշող կաշիէ ցուցանչան մը, ուր թուրքերէն դըրուած էր անունը եւ բանուորական բանակին պատկանելութիւնը. կարգացի եւ աւելի տիրական պոռացի վրան, թէ ինք բանուորական աշխատող մըն է, որ այսօր տուն կ'երթայ հանդիստի, ի՞նչպէս ինք իրեն իրաւունք կու տայ իր իրաւասութենէ դուրս խնդիրներու մէջ մտնել: Երեքէն մէկը հաշտարար դիրք մը բռնեց. Զգեցէք թող երթան, ըսաւ, մեզի ի՞նչ: Միւս երկուքը, որոնց աչքերէն կը թափէր թրքական կիրքը, սկսան մխտել աղջիկները, այդ պարագային քաշեցի դիրենք: Զէնքեր ունիք, ըսաւ, բացէք պայուսակները եւ նայինք: Նայեցէ՛ք, պատասխանեցի: Այն ատեն երկրորդը անակնկալ ուժեղ հարուած մը տուաւ քթիս եւ արիւնը սկսաւ հոսիլ: Ես դայրացած՝ սկսայ խօսիլ իրենց ապօրինի ընթացքին համար եւ ըսի թէ այս լուրը մինչեւ Վալի բաշային պիտի հասցնեմ եւ ձեզ դատի պիտի հանեմ: Երկուքը կը փորձեն ծեծել զիս, երրորդը կը միջամտէ՝ թէ ուշ կը մնանք, երթանք մեր գործին: Կարծեմ արիւնը վախցուց զիրենք եւ իմ յարձակումներս համոզեցին՝ որ այս կեաւուրը այսքան պիտի չհամարձակէր եթէ ըսածին մէջ ճամբարտութիւն չըլլար: Հաշտարարի դիրք բռնողը ըսաւ. Այս բոլորը սխալմունք մըն է, դուն դնա՛ այս կիներուն հետ ջուր գործիդ, մենք ալ երթանք մեր տուները: Ասոր վրայ ես կը հանդարտիմ ու կ'իններուն կ'ըսեմ. Առաջս անցէք ու քալեցէք, իրբեւ թէ թուրքերէն չզիտնային:

Երբ այս տողերը կը գրեմ, աչքիս առջեւ կը պատկերանայ այս աղջիկներու նահատակ մայրիկը, Մարգար պաճին, որ սարսափի մատնուած, Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ այս մեծ փորձանքէն իր զաւակները ազատելուս համար եւ հազար օրհներգ կը թափէ դիլուս: Մթնշաղին կը մտնենք Սուրսուրիի վանքը յոյնած ու անօթի, առանց ոստիկանական դժուարութիւններու հանդիպելու:

Այստեղ կը տեղաւորեն մեզ, մօտ 19 հողի: Այստեղ զանազան կողմերէն եկած մարդոց կը հանդիպիմ: Աչքիս կը զարնէ վանքին սրահապանը, որուն տարի մը վերջ պիտի հանդիպէի Տէրսիմի մէջ. հոն էր նաև Կեդրոնական Կոմիտէի անդամ եւ ղինական դործերու մասնադէտ, Չմշկածաղի Միատուն դիւղէն, Տոբթորը, որ զանազան հարցումներ կ'ընէր, զիս շփոթութեան մատնելով: Այդ դիշեր քնացանք վանքին մէջ, ճաշեցինք կուշտ կուշտ, ու առաւօտեան նախաճաշ մըն ալ առնելով, կէս ժամէն հասանք Մէզրէ: Նոյն Ձորեքշարթի օրը, վերջին պատարազը պիտի մատուցուէր կաթողիկէ առաջնորդարանին մէջ, եւ Երկուշարթի կարաւանին պիտի միանար Գերսիմիին հետ, շուրջ մէկ շորրորդը Մէզրէի ժողովուրդին: Ես եւ մօրեղբայրս Պօղոս մտադրած ենք միասին մեկնիլ փոխանակ գիւղի բախտին ենթարկուելու:

Ժողովուրդը լեցուած էր, մանաւանդ կիներ ու աղջիկներ, եւ փոքր տղաք, ամէնքն ալ տխուր, ամէնքն ալ անորոշ, եկած են իրենց մայր եկեղեցիին մէջ վերջին ազօթքը ըսելու: Պատարադէշը Սարդիս վարդապետն է, բարձրահասակ, խորունկ ձայնով, տպաւորիչ, բուն Մէզրէցի վարդապետ մը: Քարողեց վերջին անգամ, ու ժողովուրդը երբեմն լուռ, երբեմն լալով հետեւեցաւ իրեն. դպրաց դասէն երդեցին քանի մը հողիով, որոնք մնացած էին ցարդ: Երբ կարդը եկաւ Տէր ռդարմեային, երբը խեղդուեցաւ փոճկումներու մէջ, եւ ժողովուրդը մէկէն պռթկաց մինչ այդ զսպուած իր յուզումն ու խրատովքը, մէկ կողմէն վերջիչելով հարազատներու կորուստը, միւս կողմէ՝ սոսկումով պատկերացնելով վաղուայ անստոյգ եւ անյայտ ապագայի ահաւոր հեռանկարը: Հազարաւոր հայեր սկսան միասին հեկեկալ: Իսրայէլեան Գրսիմի ա'լ չերեւցաւ. դուրսը Ղեւոնդ վարդապետը եկաւ նկար հանեց եւ մեղի տուաւ, որ մինչեւ հիմա դուրդուրանքով կը սրահեմ, եւ սկսաւ նորէն խօսիլ այս աքսորի ահաւոր պալիքի եւ իր դիտակից նահատակութեան մասին. դժգոհ էր Գերսիմիի յաճառէն՝ որ չէր արտօններ քահանաներուն իրենց ուղած ձեւով դիմադրուելու վտանգը եւ նահատակուելու իրենց ժողովուրդին համար:

Տուն վերադարձանք եւ սկսանք մտածել թէ արդեօք սխալ չե՞նք ընէր այսպէս բաժնուելով տունէն եւ անտէր ձգելով զայն, քանի որ վտանգը ոչ միայն մեզի՝ այլ կիներուն ալ կը սպառնայ. որոշեցինք հնարաւոր եղածին չափ միասին ձեռք առնել մեր ճակատագրի, քանի յայտնի էր որ Գրսիմիին հետ մեկնիլը ոչ միայն ապահով չէր, այլ աւելի վտանգաւոր, որովհետեւ անօթի դայլերու պէս պիտի ինտային անոնց վրայ՝ կողոպտելու, սպաննելու եւ ցուցադրելու տաճիկ կրքի

ամենաստորին նրբերանգները, որ թուրք ոճրածին միտքը կրնայ մըտածել:

Կը դառնանք տուն եւ կը սկսինք մտածել թէ ի՛նչ ձեւով կրնանք ներս սպրդիլ, մեր հարազատ շրջապատին մէջ եւ հասկնալ վերջապէս թէ ի՛նչ կ'անցնի կը դառնայ մերիններուն դիտուն: Կը ստանամ արարական էկիլ մը իր սպրչուն ծածկոցով եւ ղինուորական հագուստ մը դրացի հայ աղջիկէ մը, որուն հետ ծանօթացած էի այս վերջին շաբաթներուն. իր եղբայրը փախած էր՝ ինքզինքը փրկելու համար, ինքն ալ չէր դիտեր ինչ ուղղութեամբ: Կը պատմէր որ դուրսէն ճամբաներէն բերած են 20է աւելի աղջիկներ, որոնք կը կարեն մինչեւ լոյս, եւ ի հարկին կը ծառայեն Մէզրէի թուրք աւազանիի գիշերային կեանքի վեխ հաճոյքներուն յազուրդ տալու, օրօրուելով ազատութեան սուտ խոստումներով...: Թուրքերը երբ ձանձրանան՝ կը բերեն նորեր: Վերոյիշեալ աղջիկը մտադրած էր անձնասպան ըլլալ, քան նման վիճակի մը ենթարկուիլ: Ձեմ դիտեր ինչ եղաւ անոր վախճանը, եւ շատ կը ցաւիմ որ մոռցած եմ անունը այս սքանչելի հայ աղջկան: Մեզի դրացի էր նաեւ Մալաթիացի Տոքթ. Պոնաբարդեանի քոյրը. թելադրեցի իրեն որ երթար ծանօթանար այդ կնոջ հետ, խորհուրդ տար եւ ստանար անկէ իր կեանքի եւ իր բռնելիք ընթացքի մասին վերջնական որոշում մը:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Է.

ԻՆՒՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐ

Գիշեր մը, ժամը մէկին, Ֆասլրիքաթորենց տան շուքերէն անցանք զէսլի Միսաքենց պարտէղը եւ այնտեղէն հասանք Սուբսուրի, եւ վանքին մէջտեղով, Դատմայ վանքի ճամբով, իջանք զիւզ: Քեռիս առաջին անգամ ըլլալով ըսաւ թէ ինք պահած ունի երկու խոշոր ատրճանակներ 400ական փամփուշտով, Ս. Սարգիսի սրբավայրի արտին մէջ. ես ալ հետս ունիմ մտրակս, եւ ահա ոգեւորուեցայ թէ այսպէսով կ'ապահովենք ինքնապաշտպանութեան միջոց մը, սպասելով զալիք օրերուն: Քեռիս դտաւ իր պահած ատրճանակներէն մէկը, եւ անկարելի եղաւ զտնել միւսը. պարսպ բղողը նորէն թաղեցինք, ուշադրութիւն չհրաւիրելու համար, եւ դրեթէ զիշերուայ ժամը չորս ու կէսի ստենները հասանք զիւզը: Մօրեղբօրս տունը մարդ չզտանք. դացինք Գաբրիէլ ամմոյին տունը, հոն ալ մարդ չզտանք, բայց ձայն առինք Գէորդ ամմոյին տան տանիքէն ու մօտեցանք իրենց, ունկնդրեցինք, հասկցանք թէ հոն են քեռկինս, Սարօն եւ տան միւս անդամները: Ուշադրութիւնը դրաւեցինք Սարոյին, որ մօտեցաւ տանիքին, կանչեցինք վար ու եկաւ մեզի հետ իր հօր Գաբրիէլ ամմոյին տունը: Հասկցանք որ տան անդամները բոլորը հոն են եւ իրենց մտահոգութիւնը մենք էինք. ահա կ'աւելնանք, ու կը սկսին իրար անցնիլ որ քանի մը օրէն զիւզը աքսորի կ'երթայ. իրենք կը կարծէին թէ մենք կերպով մը ապահով ենք Մէղրէի մէջ, կամ թէ Գերայալծառին հետ դացած. մինչդեռ ահաւասիկ նոյն կրակին մէջ ենք, զիրենք ալ դնելով նոյն կացութեան մէջ: Բայց մասամբ ալ ուրախ են որ կրնանք թելադրել իրենց՝ թէ ինչ ընթացք բռնեն:

Այդ օրերուն Հաճի Մէհմէտ, այդ տառնները 60ը անց թուրք մը, իբր թէ տարիներու բարեկամ մը, կ'առաջարկէ Ներկիդ պաճիին սուտ Նիքա ընել եւ դալ տունը նստիլ, փրկելու համար Գաբրիէլ ամմոյենց ընտանիքը, հարսը եւ աղջիկը: Ու Ներկիդ պաճին, այդ կաղնիի պէս կ'ինը, սիւնը իր ընտանիքին, այդ տարիքին մէջ, դոնէ աղջիկները եւ հարսը փրկելու դերադոյն ճիգով համաձայնած է որ ան դայ ու նստի իր տանը մէջ: Այս մարդը շատ աղդու մէկն էր, հին թուրք մը, մասնաւոր թշնամութիւն մը չունէր Հայերուն դէմ, դըժգոհ էր միւս աղաներէն եւ ինքզինքը աւելի մեծ կը դդար, սեռած ըլլալով մեծ ու հնամենի ընտանիքէ մը, որ կարելի է ըսել ժամանակին տէր տիրական եղած է Դատեմ դիւղին:

Յաջորդ օրը ես ու ջեռիս տեղաւորուեցանք Գաբրիէլ ամմոյին ախոռին ետեւ գտնուած տեղ մը, ուր առանձին բանալիով կարելի էր երթալ դուրս, փլատակ պատին վրայ. ասիկա ժամանակաւորապէս լաւ պահոււթեան տեղ մըն էր, մանաւանդ որ Հաճի աղան ալ պիտի փոխադրուէր այդ տանը վրայի յարկին սենեակները: Ուրեմն առաջին թելադրութիւնը տնայիններուն՝ այն եղաւ որ աքսորի չերթան. սլաքտիկ Սարօն իր զաւակով կը մնայ մօրը տունը, մայրս եւ միւս հարսերը կ'երթան Թէքէ դիւղ. այսպէս աքսորի խնդիրը կ'անցնի, կը տեսնենք թէ ինչ տեղի կ'ունենայ:

Բայց այս կարգադրութիւնը անակնկալները չէր նախատեսած: Սկսած են դիւղը պարպել եւ հաւաքել Ձաթալ աղբիւր, այն տեղէն ալ աքսորի ճամբան քշելով. ով որ կ'ընայ կը պահոււթի, կ'ամուսնանայ, դրամ կը խոստանայ, տան հարստութիւնը կը խոստանայ, ուրիշներ մաղերնին կը կտրեն, դէմքերնին կ'աղտոտեն ցեխով, կ'ուզեն տգել երեւնալ, մահուան կը պատրաստուին, իրենց հաւատքին, իրենց աղջին, իրենց պատուին կ'ուզեն հաւատարիմ մնալ, քան թէ թուրքի տուն երթալ եւ ամուսնութիւնով կամ պերութիւնով կեանքը ապահովել տաճիկ մարդուն քով: Ես եւ ջեռիս անորոշ սպասողական դրութեան մէջ կեցած ենք դուրսի դրան մօտ, ականջալուր կը սպասենք ու կը դիտենք անցուղարձը: Յանկարծ դուռը հրելով կը բացուի, ու մեզի բոլորովին անծանօթ թուրք մը, ինք ալ անակնկալի դալով, կը հարցնէ թէ ուր է Հաճի աղան, իրեն բան մը հարցնելու եկած եմ: Կ'ըսենք անոր թէ տունն է եւ ամէն վայրկեան կը սպասուի որ դայ հոս: Թուրքը շփոթութեան կը մատնուի եւ կ'ըսէ թէ ինք Հաճի աղային տունը կ'երթայ եւ եթէ չգտաւ զինք հոն նորէն կը վերադառնայ, եւ դուռը փակելով դուրս կ'ելլէ: Մենք կը մնանք շրջափոթութեան մէջ, ջեռիս կ'ըսէ թէ ինք կ'երթայ եւ կը մնայ իր բարեկամին տունը ժամանակաւորապէս: Քանի մը վայրկեան շուարած վիճակի մէջ կը մնամ, չէի կ'ընար ինքզինքս պարտադրել մօրեղբորս,

որ կիրն ու զաւակներ ունէր եւ կը մտածէր նախ եւ առաջ իր կեանքի մասին: Երկուքս ալ կը համաձայնինք որ այլեւս չենք կրնար մնալ այդ տան մէջ, մանաւանդ երբ չենք ուզեր վտանդել Գարբիէլ ամմոյննց ընտանիքի առած որոշումը, մտնելով Հաճի Պէկոյի հովանաւորութեան տակ:

Ես լուր կը ղրկեմ Իւղարեր Տէր Յակոբեանի, որ կը մնայ նոյն Հաճի Պէկոյի մէկ աղաւկանին տունը, եւ դրացի է, որ դայ ինծի հանդիպի, ըսելիք ունիմ: Ծուտով Իւղարերը կու դայ, կը բացատրեմ իրեն որ խօսի Ծուքուր աղային կնոջը, որպէսզի քանի մը օր պահէ զիս առանց ունէ մէկուսն զխոնալուն, մինչեւ իսկ ամուսնուն: Ես կը խոստանամ որ եթէ դժուարութեան հանդիպի՝ ես իրեն նեղութիւն չեմ տար եւ կ'երթամ ուրիշ ուղղութեամբ: Կը մտածենք որ ես այլեւս հոս չեմ կրնար մնալ, քեռիս մնաք բարով կ'ըսեմ, քիչ մը կարծես զարմացած որ կարգադրութիւն կ'ընեմ պահուրտելու իրեն համար եւ զիս նկատի չ'ունենար. սակայն կը տեսեմ նաեւ թէ ինչ կրնար ընել խեղճ մարդը: Ես Գարբիէլ ամմոյնի տան ետեւէն կը մտնեմ Մահտեսի Յակոբի տունը, Իւղարերի հետ կ'ելլենք Քէլէչննց տան տանիքը, Իւղարերը միշտ առաջ ինկած, դէպի իրենց տունը, որ կից է Եուսուֆ եւ Ծուքրի աղաներու տան: Կ'իյնանք Իւղարերննց տան մէջ, ես կը մտնեմ մարադը եւ ինքը կ'երթայ խօսելու Ծիւքրի աղայի կնոջ հետ, որ հայ է եւ ամուսնացած այդ թուրքին հետ 1895ի ջարդին, եւ զաւակներ ունի այդ մարդէն, որու տղան՝ Մստէն, արդէն 14 տարեկան կ'ըլլայ: Իւղարեր մէկ ժամ ետք կը վերադառնայ. դիւղը արդէն պարպուած է, լեցուած են աղաներու տուները, ինչպէս եւ Ծուքրիի տունը, որ մասնաւոր շինուած պատսպարան մը ունի, ուր հաւաքուած են կարգ մը այր մարդիկ, որ զիրենք պաշտպանել կ'ուզէ Ծուքրին: Կը մերժեմ խառնուիլ անոնց, իմ պատճառովս դանոնք ալ վտանդելու մտահոգութիւնով, եւ յետոյ չեմ ուզեր որ լուր տարածուի թէ արդէն ես Մէլլէի դաղթին հետ դացած չեմ, եւ նոր հետապնդումներ սկսին: Իւղարեր կու դայ զիս կը տանի ուշ տոնն, ընդունելով պայմաններս՝ որ դաղտնի պիտի պահեն զիս առանց ունէ մէկու յայտնելու: Կը տանի եւ կանանոցի բաժնի հագուստներու սենեակին մէջ կը մտցնէ զիս, կը փակէ դուռը եւ ինք կ'անհետանայ: Ամբողջ դիշերը կը լսեմ հեկեկանքը հայ աղջկայ մը, որ տարուած է Սլոյի տղուն կողմէն, եւ քանիներ, Աստուած իմ, այս վիճակին մէջ են...

ԳԻՒՂԸ ԿԸ ԴԱՏԱՐԿՈՒԻ

Թաթալ աղբիւր հաւաքուած են դիւղացիները. դիւղին բէհլիւ-վանը՝ Գրբիդոր եւ իր Ասլան տղան, Տէվէ Պուլնին դիակներու մէջէն փախած եւ եկած են դիւղ, սիրելի ընկերս՝ Սիդօ Ասատուրը եւ իր սքանչելի եղբայրը, որ թէեւ համր էր, բայց եթէ այդ տղուն պէս տասը հատ ունենայի, կրնայի աշխարհը վառել, պիտի ըսէր այդ տղան ճանչցող ոեւէ մէկը, Բուրիկենց Մեսրոպը իր բանաստեղծական ողիւով, իր պայծառ ճակատով, հաւաքուած են հոս: Ամբողջ դիւղը ահա կը մեկնի, կը փոշխանայ, կը ջնջուի քարտէսի վրայէն, եւ ես կը լսեմ մինչեւ այսօր Պօղոսին կիներ, Միլանու աղջիկը, որուն երգը դեռ կը հասնի ականջիս, աղբիւրին վերջին մնաս բարովը ըսելով:

Կուժով ջուր չեմ առներ, ալ խմող չկայ,
Թող աչքերս լուամ՝ արցունքս մնայ,
Սիրտս քեզի տամ՝ ուրիշ տեղ չմնայ,
Կեանքս քեզի տամ՝ դուն որը մի մնայ.
Եկան ու դացին, աղօթքով դացին,
Աստուծոյ նայեցան՝ սրտերը բացին,
Աստուած չլսեց, անէծքով դացին,
Որու անէծքով պէ մուրատ դացին.
Եար մը ունիմ, եար մը ունիմ շատ հեռուն,
Ճամբայ ինկայ, ինկայ ճամբան ջուրերուն,
Ո՞վ պիտի տայ եարիս լուրը թէ դնաց,
Փշոտ ճամբին անապատին ու հոն մնաց.
Ո՞վ պիտի տայ մահուան լուրը իմ եարիս:

Ի՞նչ աղաղակով, ի՞նչ խռովքով, ի՞նչպէս հրեղէն կրակով եւ հեկեկանքով բոլորին ցաւը իր հոգիին մէջ՝ եկած էր վերջին անգամ այս աղբիւրը, ուսկից հազար անգամ ջուր տարեր էր, եւ ահա առանց մնաս բարովի չէր կրնար մեկնիլ, չէր կրնար մեկնիլ, ու հոգին կը մորմոքէր, եւ սիրտ ունեցող մարդը՝ որ կը լսէր, առանց սարսուռի չէր կրնար դիմանալ. ու ես եկած էի լուռ հանդիսատես ըլլալու դիւղիս մահուան, բաղմահաղար նահատակներ կը թուղուէին, աչքիս առջեւ կ'անհետանային, եւ ես վկայ էի նստեր, այս անիծուած ականջովս, անկարող, անոյժ, կառչած էի անարժան կեանքին, անդէն ու անօգնական:

ԱՐԱԳԱՀԱՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Ձեռն գիրտեր թէ ինչպէս քնացեր եմ, մէյ մըն ալ դրացի որ մէկը գրանս բանայիլին հետ կը խաղայ, կը ջանայ դուռը բանալ. կարծեցի թէ Իւղարերն է, բայց նշմարելով որոշ ձայն մը եւ դժգոհութիւն մը, ամբողջ ջիղ կտրած մտիկ կ'ընեմ թէ ինչ պիտի պատահի: Դուռը չի բացուիր, կը զարնէ ոտքերով եւ բարկութեամբ. դուռը կը կտրի եւ ներս կ'իյնայ գրան հետ տան Թոսուներ: Եւ անակնկալի եկած՝ ետ ետ կ'ընկրկի. զիս տեսնելով կը վաղէ դէպի սանդուխները ու կը պոռայ թէ Յովհաննէսը հոս է, Յովհաննէսը հոս է: Այս աղմուկը կը լսէ քեռիկինս հարսը՝ Մարէն, որ հիմա Լոս Անճելոս է իր սիրելի տղուն՝ Ճորճին եւ իր հարսին հետ, իսկ Իւղարերը՝ իր տղայով, հարսով եւ թոռներով կը գտնուի Ուոքսին՝ Իլընոյի նահանգին մէջ: Կը բռնեն սանդուխներուն վրայ Թոսուներ, կը խնդրեն եւ կը համոզեն որ Յովհաննէսը եկած է մօրդ կարգադրութեամբ, ամէն տեղ ձայն հանելէ առաջ՝ նախ մօրդ հարցնենք եւ յետոյ ինչ որ կ'ուզես ըրէ: Կ'երթան մօրը քով եւ եղբակացութիւնը կ'ըլլայ որ հինգ ոսկի դրամ եւ մէկ ոսկի ժամացոյց պէտք է տայ Թոսուներն որպէսզի լուռ կենայ: Մեր սիրելի Մարէն իր ամուսինէն մնացած միակ յիշատակը՝ ոսկի ժամացոյց մը, որ տակաւին կը պահէ, կը բերէ ու կը յանձնէ Թոսուներն, եւ դրամի մասին ալ կ'ըսեմ. Մէկ երկու օր համբերէ, մայրս թէրէ Գէօյ է, կապ հաստատեմ եւ տեսնեմ թէ ինչ կ'ընամ ընել, թերեւս անիկա կ'ունենայ այդ դրամը. կը հանդարտի, բայց յաջորդ երեկոյ նորէն կը սկսի նեղութիւն տալ: Իր սենեակը հին պատրոյգով զէնք մը վար կ'առնէ, կը սպառնայ թէ կը զարնէ զիս, եթէ այդ դրամը անմիջապէս չտրուի իրեն. կը բռնեմ, կը փորձեմ համոզել զինքը, որ իր այդ ընթացքով ի՞նչ կ'ընայ շահիլ, պէտք է նկատի ունենալ որ ես դրամ չունիմ, եթէ աղմուկը շատցնէ՝ դրացի ժանտարմաները պիտի դան եւ զիս տանին, իր տան վրայ կասկածներ պիտի հրաւիրէ եւ պիտի բռնուին բոլոր միւսներն ալ որ պահած են իրենց մօտ: Իրենք պիտի զբրկուին այդ հայ աշխատաւորներէն, եւ յետոյ ինք որեւէ դրամ պիտի չկարենայ ստանալ, որովհետեւ դեռ ես մօրմէս լուր չունիմ. փոխանակ հանդարտելու՝ սկսաւ աղմուկ հանել, սպառնալ եւ ոստիկանութիւն կանչելու փորձ ընել. ես այլեւս չկրցայ համբերել, զէնքը առի ձեռքէն, որ կրակելու հնարաւորութիւն չունէր, նետեցի մէկ կողմ, հրեցի զինքը սենեակին միւս կողմը եւ դռնէն դուրս եկայ, կոխկռտելով հոն պառկող շատմը մարդոց վրայ, ու պատէն ցատկելով՝ ինկայ Եռասուֆին պարտէզը: Այնտեղէն բարձրացայ եւ զարտուղի ճամբաներով դացի Գաբրիէլ ամմոյենց տունը, տեսնելու թէ քեռոնցս հետքը կա՞յ, եւ եթէ չկայ՝ արդեօք քեռիս զէնքը ի՞նչ ըրաւ: Նա-

յեցայ թոնիրին մէջ՝ ուր դրած էի արդէն նշանաւոր մտրակը, որ քիչ մը յոյս տուաւ ինծի, եւ չդտնելով ատրճանակը՝ դղուշութեամբ սողոսկեցայ դուրս, վախնալով որ Հաճի աղան կրնայ տանիքը քնացած ըլլալ: Ես երկար չէի կրնար մնալ հոս, որովհետեւ կը մտահոգուէի թէ Թոսուճը դացած լուր տուած ըլլայ ոստիկանութեան, եւ անոնք ալ կրնան հետապնդել զիս, ու աճապարեցի դէպի սուրբ Սարգիսի դաշտը, ուր քեռիս թաղած էր երկու ատրճանակները: Այս սրբանոցը հազիւ քարերու կոյտ մըն է, որ իր խորքին մէջ ունէր անձրեւէ եւ ձիւնէ պաշտպանուելու չափ տեղ մը, ուր հաւատացեալները Ս. Սարգիսի տօնին առթիւ կ'երթային աղօթելու, մոմ վառելու եւ իրենց մուրազը ուղելու: Ս. Սարգիսին կը հաւատար ժողովուրդը իբրեւ քաջ զինուոր եւ քրիստոնեայ ու պաշտպան հաւատքի: Ես դացի այդ քարակոյտին առջեւ, քիչ մը կարծես իբրեւ վերջին յոյս, կեցայ այդ քարերուն քով եւ իբր թէ Ս. Սարգիսը ընկերս ըլլար՝ ըսի. Սուրբ Սարգիս, ընկեր ունէի՝ ընկեր չունիմ, այս աշխարհի մէջ ահա բոլորովին մինակ եմ, զէնք ունէի՝ զէնք չունիմ, եթէ քաջ սուրբ մըն ես, օյնէ՛ ինծի որ դտնեմ այդ զէնքը, որ քեռիս կ'ըսէ թէ թաղած է այս երկրին մէջ: Զեռքս դրի քարին եւ հաստատ հաւատքով քալեցի դէպի հոն՝ ուր մօրեղբայրս փնտռած էր: Մտրակին մէջէն դուրս քաշելով դաշոյնը, մխրճեցի հողին մէջ. երկրորդ անգամին զարնուեցաւ կարծր բանի մը, եւ փորելով տեսայ որ բողոջ մըն էր, որուն մէջ նախորդ ատրճանակը պահուած էր, եւ աւելի դրդուուած սկսայ փորել, եւ ի՛նչ հրաշք, ատրճանակը 28 փամփուշտներով...: Բոլոր սրտովս շնորհակալութիւն յայտնեցի Ս. Սարգիսին, եւ վերջապէս ինքզինքս դտայ, մտածելով որ առանց մեռցնելու պիտի չմեռնիմ: Որոշեցի առաջին մարդը որ տեսնեմ՝ վրան յարձակիմ. ե՛ս կամ աշխարհը, այս տաճիկ աշխարհը: Քայլերս ուղղեցի Աղուճնքար, միշտ ակնկալելով որ ետեւէս կրնան դալ ոստիկաններ եւ դիւղի թուրքեր, վերջին փորձառութեանս կապակցութեամբ: Երբ հասայ Զուրտի ճամբան, նշմարեցի որ մէկը ինծի կը հետեւի, ես նետուեցայ թուփին տակ, հասկնալու համար թէ քանի հողի են եկողները: Երբ տեսայ որ մէկ հողի էր, ուրեմն ճիշտ իմ ուղածս էր, կա՛մ նոր ընկեր մը կը դտնէի, կա՛մ առաջին որսս կ'ըլլար: Վաղեցի թուփի տակէն իր առաջը առնելու, եւ երբ արուի մէջէն կարծեցի առջեւը ելած կ'ըլլամ, քիչ մը սպասելէ ետք սկսայ կանչել նախ թըրքերէն՝ թէ թո՞ւրք էր: Հակառակ կրկնելուս՝ պատասխան չստացայ. ապա հայերէն փսփսացի, կամաց կամաց ձայնս բարձրացնելով: Բաւական ատեն շուաւ ու ես այն համողումին եկայ որ հայ էր, վախցաւ եւ ցորեններու մէջ կորսուեցաւ. այն ատեն ես ուղղուեցայ դէպի Քէլ Հաւուն բոյնը. այստեղ տեսայ նետուած բաճկոնակ մը,

մէկ երկու վախաթներ, միշտ մտածելով որ կրնան ըլլալ մեր տղոցը․
յանկարծ քարի ծերպին վրայ տեսայ զոյդ մը կօշիկ եւ ձեռք առի,
տեսայ որ Պօղոս քեռիին կօշիկն է, որովհետեւ կողքին կարած էր
զրամ, եւ ինծի ըսած թէ երբ իրեն բան մը պատահի, կօշիկին տէր
եղիր, դրամ կարած եմ, կրնայ քեզի օգտակար ըլլալ: Կարծես ար-
թընցայ եւ կանչեցի. Պօղոս քեռի. «Վա՛յ պիտի մեռնէի ա՛լ, համբե-
րանքս հատած ըլլալով», կանչեց վերէն Պօղոս քեռիս: Կամացուկ
մը սպառաժի վրայէն վար իջաւ, պատմեց թէ նոյն այդ գիշերը զգա-
ցեր է որ Օսմանը իր մասին թաղարդ մը կը լարէ, իր թէ զինքը ա-
պահով տեղ ուղարկելու, մինչդեռ իր մասին դաւադրութիւն մը կը
պատրաստէր եւ Դմէտրիոս օժանդակութեամբ կը ձգէ ու կը վախչի,
եւ նոր վեր բարձրացեր էր երբ զիս կը տեսնէր: Կը կարծէ որ իր ե-
տեւէն եկած ու հասած են զինքը բռնելու, եւ երբ ձայնս կը լսէ՝
ուրախութեան ճիչ մը արձակելով՝ Վա՛յ մեռայ, կը կանչէ: Ես կ'ան-
դրադառնայի որ այդ երեկոյ Ս. Սարգիսը շատ առատաձեռն եղած
էր ինծի հանդէպ, ոչ միայն զէնքը տալով, այլ եւ մօրեղբայրս
տուած էր՝ իբրեւ ընկեր: Տակաւին անորոշ ենք մեծ մօրեղբօրս Սար-
գիսին եւ Սեդրակին մասին, քեռիիններս ժամանակաւորապէս տե-
ղաւորուած էին, Յարութիւնը խորբանդ էր եւ պղտիկներն ալ մայ-
րիկներուն քով: Անորոշ սպառայ մը կար մեր առջեւ, բայց այնքան
տխուր չէր պատկերը, եթէ հոն կենար անիւր եւ մարդիկ իրաւունք
ունենային իրենց տեղերը դառնալու:

ԴԻԱԿՆԵՐ, ԴԻԱԿՆԵՐ...

Ու կը քալէինք անորոշ մեր առնելիք քայլերուն մասին: Անցանք
արուեստական անտառին մէջէն՝ կտրելով երկար ճամբան ու մտանք
դէպի Թէքէ գիւղի եւ խօսքանքի վերի Ծօշի գիւղերու հողամասերու
սահմանին մէջ: Այստեղ նշմարեցի ցորենի փորուած հոր մը, որու
մէջ դիակներ երեւցան. զգացի թէ կրնայ մեր զտաղը ըլլալ. մօ-
տեցայ եւ շօշափեցի լուսնի լոյսին տակ. հասկցայ որ կիներ են...
ուրեմն այս ճակատագիրը վերապահուած էր նաեւ կիներուն եւ մա-
նուկներուն, որոնց սպանութիւնը իսլամի օրէնքով արգելուած էր...
Թուրքը, սակայն, վաղուց ծախած էր իր կրօնքը եւ չէր պատկա-
նոր որեւէ մարդկային ընտանիքի:

Անցանք դէպի Մնկանենք եւ գիշերեցինք ծանր մտահոգութիւն-
ներով՝ կիներու սպանութեան վերաբերեալ: Յաջորդ ցերեկը քեռիս
խրատները օգուտ չըրին. ծարաւ էի եւ կ'ուղէի անպայման ջուր խը-
մել եւ նաեւ հասկնալ թէ ովքեր են այս սպանուածները: Ըսի որ

կ'երթամ, եթէ վտանգ մը պատահի, ինք թող չհետևի ինձի, ես աւելի հեռուները կ'երթամ եւ իրար կը գտնենք մեր նոյն հանդիպած տեղը՝ Այուզընքար․ բայց աւելցուցի, վստահարար կու դամ հոս, դուն տեղէ՛ք մի շարժիր: Վերադարձայ ձորը, իջայ անտառին մէջ, ոչ մէկ ձայն, ոչ մէկ աղմուկ: Անտառին մէջ նշմարեցի թուղթեր, որոնց մէջ դտայ Մուրատենց Չաքարին անձնաթուղթը․ Չաքարը 15 տարեկան զեղեցիկ երիտասարդ, մեղի դրացի տղայ մըն էր, եւ դարմացայ թէ այս թուղթը ի՞նչ կ'ընէր հոս, մինչեւ որ հասայ դիակներուն, որոնք դեռ անճանաչելի չէին․ ամերիկարնակ Մուրատենց Մինասին կիներ, քենին եւ երեք զաւակները կը պառկէին անշունչ, խողխողուած փայտերով, անարդուած ու նետուած էին այս փոսին մէջ, աշխարհէ ու մարդոցմէ հեռու, կրօնքէ հեռու․ ահաւաստի թըրքական քաջութեան եւ պատուախնդրութեան պատկերը: Ասոնք խեղճ անմեղունակ ընտանիքներ էին, որոնք օրն ի բուն կ'աշխատէին՝ կերպով մը իրենց կեանքը քարշ տալով, իրենց միակ տէրը՝ Ամերիկա գտնուող ամուսինն էր, որ դրամ կը հասցնէր անոնց ապրուստը թեթեւցնելու: Մինասին երկրորդ ամուսնութենէն ունեցած աղջիկն ու տղան հիմա կ'ապրին Ուոթըրթաունի մէջ, եւ կաղմած են երկու շատ սիրուն ընտանիքներ, օրինապահ, կրթուած քաղաքացիներ են այդ քաղաքի հայ եւ ամերիկացի դրացնութեան մէջ:

Սիրտս դառնութեամբ լեցուեցաւ այդ քստմնելի տեսարանին առջեւ: Նորէն իջայ ձորը, սառնորակ աղբիւրին քով, լուացուեցայ, անէծք կարդացի աշխարհի, մարդկութեան, քիչ մը դովացայ: Ջուր խմելէ ետք չորս կողմս դարձայ, նայելու համար թէ թուրքեր կային թէ ոչ․ կարծես չէի ուղեր վերադառնալ քեռիս քով․ երթամ ի՞նչ ըսելու, կը մտածէի... կնոջ, զաւակի տէր մարդ, մինչեւ հիմա կը մտածէր միայն իր մասին, կարծելով որ կիները գոնէ պիտի չջարդուին եւ ահա այս աշխարհի առջեւ թերեւս ամէնէն անմեղ այդ կիներն ու երեխաները անարգարար խոշտանդուած էին... մտածումը բնականաբար կ'երթայ քու ամենասիրելիներուդ, հարադատներուդ:

Գլխիկոր, կամաց կամաց կը վերադառնամ նոյն վայրը, կը դըտնեմ մօրեղբայրս, կու տամ Չաքարի անձնաթուղթը, կը պատմեմ ինչ որ տեսայ․ ու առաջին անգամ ըլլալով կը լսեմ իր շրթներէն․ «Վա՛յ անաստուածներ, պապանքն...»:

Լեռներու շուքին հետ մօտեցանք գիւղին անդգալարար․ այդ գիւղիները ազդած էին մեր ջիղերուն եւ կ'ուզէինք տեղեակ ըլլալ թէ ի՞նչ պատահած կրնար ըլլալ մերիններուն: Հեռուն տեսնուեցան քաղուտրներ՝ որոնք գիւղ կը վերադառնային օրուան աշխատանքէն յողնած, մեծ մասով կիներ, եւ հաւանաբար հայ կիներ, որոնց կեանքը խնայուած էր՝ աղաներուն ծառայելու համար... Կ'իջնենք Ս․ Յով-

հաննէսի աղբիւրը, կը լուացուինք, քիչ մը կը զովանանք, ու քեռիս իր մտահոգութիւնները արտայայտելու համար կ'ըսէ. Հէյ կիտի աշխարհ, այս օրուա՞ն պիտի հասնէինք: Կը զգայի որ կնոջը, աղջկան եւ մնացած հարազատներուն վիճակը շատ ծանր կը ճնշէր իր վրայ. իր անկարողութիւնն ու հալածական վիճակը դեռ աւելի կը դերգոյնէին իր կաշկանդուած հոգին: Դեռ երէկ, կարելի է ըսել, եթէ երկու իշխող կային դիւղին մէջ, անոնցմէ մէկը ինքզինքը կը նկատէր, ու հիմա կը սպասէր մութին՝ որպէսզի կարենար կնոջ հանդիպել, եւ արդեօք ի՞նչ պիտի դռնէր հոն:

ՁԵՆՔՈՎ ԱԻԵԼԻ ԱՊԱՀՈՎ ԵՆՔ

Ժամերը կ'անցնին, մենք արդէն նստած ենք Գարբիէլ ամմոյենց պարտէզը, ջուրին դուրսը. ամէն վայրկեան տարի մը կը թուի ու շունչերնիս բռնած՝ աւելի կը մօտենանք տան. ես կ'առաջարկեմ որ ինք մնայ դուրսը, կանաչ թուփերուն մօտ, եւ ես աւելի մօտենամ պատուհանին ու մտիկ ընեմ, ի հարկին ներս կը սողոսկիմ, թէ ինք աւելի կարեւոր է տան համար, զաւակներ ունի՝ որոնք կրնան իրեն պէտք ունենալ: Աչքերը եւ դուրսը կախ մտիկ կ'ընէ, կարծես հաւանութիւն տալու շարժումով. ես կը մօտենամ պատուհանին, կը լսեմ փսիսուքի ձայներ, կը լսեմ հայերէն բառեր, ու ապահով կ'ըլլամ թէ կրնան մերկաները ըլլալ: Կը բացուի պատուհանը, յայտնի՝ որ ներսը կը զգան թէ դուրսը պարտէզին մէջ մարդ կայ եւ ահ ու սարսափի կը մատնուին: Կը ցատկեմ դէպի պատուհանը, միշտ նկատի ունենալով որ Հաճին կրնար տանիք դռնուիլ, եւ զգուշութեամբ կը սպրդիմ ներս. քեռիկնս՝ Սարօն հոն է, կը դրկէ դիւս, կը հեկեկայ եւ առաջին հարցումը թէ մինա՞ր կ'եմ. ըսի թէ ամուսինդ դուրսը կանաչներուն մէջ կը սպասէ, դուռը բաց որ ներս գայ: Վաղեց բացաւ եւ քանի մը վայրկեանէն մայրս եկաւ, որուն հոս չէի սպասեր, ու դառնութեան մէջ ուրախութիւն մը մեզ պատեց: Քեռիս ներս եկաւ, փաթթուեցաւ բոլորին հետ, տեղեակ եղանք ընտանիքի 22 անդամներու մասին. լուր չկար Սեդրակէն ու Սարգիսէն. մայրս որ գրեթէ Թէրէ դիւղ կ'ապրի, եկած է լուր առնելու տան մասին եւ այդ դիշեր մնացեր է Սարոյին քով. միւս հարսերը տեղաւորուած են զանազան դիւղերու մէջ, սպասելով օրուան կացութեան: Աղաներուն քով կան բաւական թիւով մարդիկ, բայց ա՛լ չկայ հայկական տուն կամ առանին բնակութիւն, եւ իրենց վիճակն ալ անորոշ կ'երեւնայ, միայն մէկ բան որոշ է՝ որ տեղացի աղաները կ'ուզեն զանոնք պահել այս ամառ, իրենց համար հնձելու եւ կալը հանելու, այն ալ որոշ չէ թէ կառա-

վարութեան վերաբերումը ինչ պիտի ըլլայ. իսկ դադթողներու մէջն զատած եւ ջարդած են հասուն մարդիկը, միւսները քշած են հեռու տեղեր, անծանօթ ուղղութեամբ, ոչ ոք դիտէ կամ կը խօսի. սպառնալից է ապազան: Հաց եւ մածուն կու տան, կ'ուտենք կը հանդըստանանք. կը համաձայնինք՝ որ եթէ ճրագը վառ տեսնենք պատահանին առջեւ եւ աւազանին դուխը՝ տանձին տակ երկու քարեր իրարու վրայ դրուած, ուրեմն կրնանք վստահ ըլլալ թէ ապահով է ներսը, ապա թէ ոչ դիւղը վտանգուած է եւ աւելորդ է փորձել մօտենալ:

Իրենց քով քիչ մը փամփուշտ կը ձգենք, պատուիրելով որ փամփուշտակալներ շինեն մեզի համար, որպէսզի ուրիշ փամփուշտներ ալ գտնելով՝ կարենանք մեզ հետ տանիլ եւ անակնկալի չգալ: Մայրս զէնքերը տեսնելով՝ կը վախնայ եւ կ'ըսէ թէ ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը, եթէ ձեզ բռնեն այդ զէնքերով: Ըսի թէ ինք ի՞նչ կը խորհի թէ ըլլայ մեր վիճակը, եթէ մեզ բռնեն առանց զէնքերու... «Վա՛խ, վա՛խ, քոռնամ եւ այդ օրը չտեսնեմ...»: Փորձեցի համոզել թէ զէնքերով աւելի ապահով ենք քան թէ անզէն, եւ շատ մի խորհիք մեր վրայ, աշխատեցէք դուք վտանգէ խուսափիլ, ոչ միայն ձեր կեանքին համար, այլ մեզ ալ հողատարելու հացով ու կերակուրով: Քեռկինս Սառան քաջ էր, խորհուրդ կու տար ըսելով. «Ձարկէ՛ք եւ դուք մի՛ դարձուիք, զգոյշ կեցէ՛ք, ձեր կեանքը թանկագին է, բայց մահէն վախնալը պարաս պարաս բան է, ինչ որ պիտի ըլլայ՝ կ'ըլլայ, ջանացէ՛ք, սակայն, ձեր ձեռքէն եկածը չանտեսել: Եթէ չըլլային միւսները, եթէ չըլլար քոյրս, հիւանդ մայրս եւ ձեզ կերակրելու կարելիութիւնը, ես ալ ձեզի հետ կու դայի լեռները. այս անհաւատները դադան են դարձեր, խեղճ ու անսպաշտպան մարդոց եւ կիներու մէջ»:

Ուշ դիշերով ձգեցինք մեր հարազատները, քեռիս դրկեց իր կինը եւ կարծես զգացի որ կու լար. ես մօրս ըսի՝ քեզի հոգ տար, համբուրեցի եւ կորսուեցայ դուրսը մթութեան մէջ: Քանի մը վայրկեան վերջ ինձի հետեւեցաւ մօրեղբայրս, աւելի ողբերգուած որ տան անգամները փրկուած էին այս անգամ ալ:

Մենք հիմա չորս հոգի ենք, բայց կար կսկիծը Սեդրակին եւ Սարգիսին՝ որ այնքան հերոսական վախճան մը ունեցած էին իման դիւղի մօտերը ու մտքիս մէջ տեղ բռնած էր Առաքելին ըսածը՝ թէ իր կեանքը կը պարտի առաւելապէս Սեդրակի յանդուրանութեան եւ անոր հրամանին՝ երբ ձեռքը կտրուած էր սուրիւր բռնելու ատեն: Ատեն մը ետքը մեր խումբին միացաւ Սահակնց Սահակը՝ որ տեղեկութիւն ունէր թէ ո՛ւր թաղուած էր Նորսոյնց Փրանսական սկտական զէնքը. իրեն դադտնաբար ըսած էր Յակոբ Ներսէսեանը (Յա-

կորը հիմա կ'ապրի Ուսդըր քաղաքին մէջ եւ ամուսնացած է Պօղոս Գալուստեանի քրոջը զաւկին հետ եւ ունին Գարբիէլ անունով շատ հայաշունչ տղայ մը)։ Երեկոյ մը Պօղոս քեռիս, Սահակը եւ Մելքոն կ'երթան կը հանեն այդ հրացանը․ այսպէս հինգ հոգի զինուած էինք եւ 1100է աւելի փամփուշտ ունէինք․ զանազան փորձեր ըրինք դիւղի պաղած տղաքն ալ հաւաքել մեր շուրջը, բայց անոնք նախընտրեցին աղաներուն կէս կիսատ հովանաւորութիւնը վայելել, լծուելով անոնց աշխատանքներուն, քան մեզի հետ լեռ բարձրանալ։

1. The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions. It emphasizes that this is crucial for ensuring the integrity of the financial statements and for providing a clear audit trail. The text also mentions that proper record-keeping is essential for identifying trends and anomalies in the data.

2. The second part of the document focuses on the role of internal controls in preventing errors and fraud. It highlights that a robust system of internal controls is necessary to ensure that all transactions are properly authorized and recorded. The text also notes that internal controls should be designed to be cost-effective and to provide a reasonable level of assurance.

3. The third part of the document discusses the importance of regular audits. It states that audits are essential for verifying the accuracy of the financial statements and for identifying any weaknesses in the internal control system. The text also mentions that audits should be conducted by independent auditors to ensure objectivity and fairness.

4. The fourth part of the document discusses the importance of transparency and disclosure. It states that companies should provide clear and concise information about their financial performance and the risks they face. This is essential for investors and other stakeholders to make informed decisions. The text also mentions that transparency and disclosure are important for building trust and credibility.



Պետրոս Հերոյեան եւ Յ. Տէր Յովհաննէսեան (Թիֆլիս, 1918)





Բենիամին Ժամկոչեան (Տերսիմէն ազատուած, կամաւորական բանակին մէջ)





Ը.

ՁՈՒԼՈՒՄԸ

ՍԱՅԼԵՐԸ

Ինձի հայրենակից Թորոս Տէր Պետրոսեանի պատմածները.

«Ես հիմա 67 տարեկան եմ, կ'ապրիմ Ամերիկայի Ուոքհիլըն քաղաքը, ամուսնացած եւ աղուոր տուն կազմած եմ Դատեմցի աղջկայ մը հետ, ունիմ երեք զաւակներ եւ թոռներ, այնքան որ պիտի վերականգնեմ Դատեմի մեր տունը: Մեր տունը Դատեմի երկրադործ մեծ տուներէն մէկը կը հաշուէր. դիւղին վարի թաղի հրապարակին վըրայ կը նայէր դուռը, ճիշտ Սանդ Գարի դիմաց, ուր կը հաւաքուէին դիւղին թէ՛ մեծերը եւ թէ՛ երիտասարդութիւնը: Հին երանկի օրերուն, 1915ի Մայիս ամսուն վերջերը դիւղ եկան եւ պահանջեցին որ Դատեմ դիւղը 60 սայլեր տայ, տախտակներ եւ դերաններ փոխադրելու Եփրատ գետի եզերքին շինուելիք զօրանոցին համար. կ'անտեսէին որ դիւղի երիտասարդութիւնը տարած էին, ղեկավարութիւնը բանտարկած կամ Հարողլի եւ Մովքի ձորերուն մէջ նահատակած. դիւղին մէջ տակաւին ապրող մեծերը իրարու քով եկան, խորհրդակցեցան, եւ վերջապէս այն եղբակացութեան եկան՝ որ ստիպուած են ընդառաջել կառավարութեան այդ պահանջին եւ հաւաքեցին 35 սայլեր ու տուին 40 հողի այդ սայլերը վարելու եւ հողատարելու համար: Ես ու Մինաս Հերոյեանը խորհրդակցեցանք եւ մեր մայրերը համոզեցինք որ աւելի ապահով պիտի ըլլայինք սայլերուն հետ քան դիւղի մէջ ամէն օր նախատինքի եւ չարչարանքի ենթակայ մնայինք եւ կամ զինուորական անունով տանէին մեզ եւ յանձնէին բանուորական բանակին (հակառակ որ 15 տարեկան էինք), որուն վախճանը

մահն էր : Օտարութեան մէջ թերեւս աւելի ասպահով կրնանք մնալ , քանի որ մեզի հետ պիտի ըլլան մեր զիւղացի , տարեց , փորձառու մարդիկը , իսկ զիւղին մէջ , մեր տեղացի թուրքերուն աչքին առջեւ պիտի ենթարկուինք ամէն տեսակ չարչարանքներու ու նեղութիւններու :

Կ'երթանք ճամբուն վրայ կա'մ կը սպաննուինք եւ կամ կ'երթանք ուրիշ երկիրներ ու կ'ազատինք այս մեր դժոխքէն եւ այս շունեւրուն ձեռքէն :

Վերջապէս , թուրք ոստիկաններու հսկողութեամբ , 35 սայլեր ճամբայ հանուեցան դէպի Մէլիքէ քաղաք , իմ եւ Մինասի մայրը մեզի ընկերացան մինչեւ Կարմար գիւղը : Բառերով կարելի չէ բացատրել բաժանման պատկերը . արցունքոտ աչքերով կու լային ու կու լային , որովհետեւ իրենց հոգիին մէջ վստահ էին թէ անդամ մըն ալ պիտի չտեսնէին իրենց դաւակները : Վերջին անգամ մըն ալ կը նայինք մեր սլաշտելի զիւղին , անոյշ Դատեմին , բերդին սղուրճերուն վրայ կեցած արապելիներուն , արտերուն , այգիներուն , տուներուն , սրբազան եկեղեցիին եւ վարժարանի դմբէթին , կարծես քարացած էինք երբ ոստիկանը հրամայեց . « Հայտէ' , քշեցէք » :

Այդ օրը ուշ ատեն հասանք քաղաք եւ մեզ տեղաւորեցին Փրանսական վարժարանի դիմացի արտին մէջ :

Այդ վարժարանը կ'ուսանէին հազարաւոր ուսանողներ , որոնց կարդին մեր զիւղացի Յովհ . Ուլուհոճեան , Հայկազ Հերոյեան եւ Յովհ . Տէր Յովհաննէսեան , առաջին երկուքը եղբրական զոհ վացին թուրքերու վարած ցեղասպանութեան , իսկ Յովհաննէսը կ'ապրի եւ կ'աշխատի Ամերիկայի մէջ , որուն հետ կը խօսիմ այս վայրկեանիս , վերապրելով մեր անցած օրերու յիշատակները : Իր աղատումը հըրաչք մը կը թուի , քանի որ հակառակ իր տարիքին , թուրքերէն ամէնէն շատ հալածուածներէն մէկն էր մեր զիւղին մէջ : Գիւղէն բերած մեր կերակուրները ճաշեցինք , եղներուն ուտելիքը հողացինք , սայլերուն նայեցանք ու ինկանք քնանալու , ինչպէս որ մարդ կրնայ քնանալ նման պայմաններու մէջ : Երկինքը պայծառ էր , աստղերը վերէն կարծես կը փայտէին մեզի , մեր սիրտը լեցուն էր կարօտով եւ աչքերնիս՝ արցունքով . հաղիւ հաղ կրնայինք զսպել մեր յուզումը :

Հեռուն , վարժարանի դրան մօտերը հոս ու հոն զինուորացու քիւրտեր երկնցած էին եւ տխուր երգերով մեր ցաւերուն մորմօքը հեկեկանքի կը հասցնէին , որովհետեւ անոնք ալ եկած էին նոյն թուրքերուն ըռնի ծառայութեան , իրենց տունը , գաւակները եւ հարապատները ձգելով : Յաջորդ առաւօտ ճամբայ ելանք եւ երեկոյեան մօտ հասանք Հապուսի , Խարրերդի լաւագոյն հայ զիւղերէն մէկը , սակայն ոստիկանները չթողուցին որ զիւղը մտնենք ո'չ մեզի եւ ոչ

ալ եզներուն: Մարդ ու անասուն կը տարապէինք Թուրքերու այս անաստուած վերարկրումէն. բերուած էին պետութեան ծառայութիւն մ'ընելու, առանց վճարումի, առանց վարձատրութեան եւ սակայն տարրական պահանջներուն դէմ էին, կ'արդիւլէին, կը չարչարէին խեղճ եզները, անօթի ու ծառաւ կը պահէին. եւ կը տեսնէի որ մեր զիւզի մեծերը կը մտահոգուէին աւելի եզներուն համար քան իրենց վրայ, որովհետեւ այդ եզները իրենց կեանքի մէկ մասն էին. կ'ակնկալէին որ սայլերը քաշեն երբ կը զրկէին զիրենք ջուրէն եւ խոտէն: Գիշերեցինք մեր սայլերուն վրայ եւ առաւօտ կանուխ քըշուեցանք դէպի Եփրատ. երբ հոն հասանք, տեսանք որ հաւաքուած էին հարիւրաւոր սայլեր զանազան շրջաններէ, բոլորն ալ հայ, իրենց ուտելիքներով, իրենց եզներով, իրենց մարդոցմով, միշտ հըսկողութեան տակ տածիկ էսկէրին: Սայլերուն վրայ անցուցինք գիշերը եւ առաւօտ կանուխ մեզ փոխադրեցին ջուրին միւս կողմը եւ սայլերու վրայ տեղաւորեցին չորս սնտուկ ռադամթերք: Նոր հասկըցանք որ Թուրքը նորէն խարած է մեզ. այս է եղած իր շինելիք զորանոցը, մեր բեռներով քշեցին մեզ դէպի Մուշ: Առաջին օրը ճամբուն վրայ երբ հասանք հայ զիւզ մը արդիւլեցին զիւզ մտնել եւ կամ յարաբերութիւն ունենալ: Երեկոյեան չառու մը արձանադրութիւնը ձեռքին՝ կանչեց սայլապանները թէ կերակուր պիտի տանք եւ առաջին անգամ ըլլալով Հայերէ կողոպտուած պլղուրով խառուրմա փիլաւ տուին, բացի Դատեմցիներէն, որոնք տակաւին կը կերակըրուէին իրենց տունէն բերած պաշարով. սակայն յաջորդ օր մեր ձեռքէն առին զաղամները, հաւկիթները, պանիրը եւ այլ կերակուրները: Գիշերով հասանք Ծնազ զիւզը, ուր տեսանք ճամբուն երկու կողմերը անթաղ դիակներ: Այստեղէն սկսան աւելի կանոնաւոր ճամբաներ, որոնք շինուած էին հայ զորքերու աշխատանքի բանակի միջոցաւ: Ուշ ատեն հասանք Պալուի Սակրատ զիւզը, որ նոյնպէս պաշարուած էր եւ արդիւլուած էր մեզի զիւզ մտնել. ուղղեցին մեզ դէպի Ճապաղջուր, ուր աւելի շատ կը տեսնուէին դիակներ մեր ճամբուն վրայ:

Օսման Չառու մուկի աչքեր ունէր, Թանձր շրթներ, ակռաները դուրս ցցուած եւ երեսի ոսկերները մոնկոլական. երբ ժպտէր՝ դեղնած ակռաները դուրս կ'իյնային եւ սպառնալիքի տակ դառնուած դազանի մը կը նմանէր քան մարդու: Այս մարդը կ'առաջնորդէր 300է աւելի սայլեր 50 ոստիկաններով, մեր կեանքը կախում ունէր իր քմահաճոյքէն...: Այդ առաւօտ կանչեց սայլապանները եւ յայտարարեց որ կ'առավարութիւնը 30 մարդոց պէտք ունի, ու մեր մէջէն դատեց առոյգ երկուսարդներ ու տարաւ մօտաւոր ձորի մը մէջ եւ սպաննել տուաւ:

Յաջորդ օր հասանք Ճապաղջուր, ուր սպասեցինք հինգ օր: Խօսակցութիւնը այն էր որ շրջանը վտանգաւոր կը դառնար եւ ռազմամթերք փոխադրելը կը դժուարանար առանց զինուորական պաշտպանութեան: Իրաւամբ, հինգ օր վերջ 300 հեծեալ զինուորներու պաշտպանութեան տակ, սայլերը իրարու սեղմուած, աղմուկով, ծեծով հասանք Մշոյ դաշտը եւ գիշերեցինք Սուլուխ: Առաւօտ կանուխ երբ ելանք, նշմարեցինք Վարդոյի կողմէ եկած խումբ խումբ զինուած քիւրտեր, որոնք մտան Սուլուխ, ջարդեցին տղամարդիկ, կիներն ու երախաները, առին անասունները, իրերը, գոյքերը եւ քչեցին դէպի լեռները, եւ հոն մնացած ձագուկները չես դիտեր ինչ ճակատագրի ենթարկելով:

Սուլուխը կրակի տուին քէֆի եւ ուրախութեան մէջ: Մենք հասանք Մուշ, ուր մնացինք երեք օր եւ այդտեղէն մեզ ուղղեցին դէպի Վարդոյի կողմերը, ուր ճամբուն վրայ հանդիպեցանք Խճըխ ընուած զիւղը. մեր ունեցած ռազմամթերքը հոն յանձնեցինք եւ ապա սայլերը դարձուցինք դէպի Մուշ: Այդ երեկոյ երբ Մուշ հասանք, կռիւը սկսած էր, թուրք կանոնաւոր բանակը եւ Պաշխպուղուխ քիւրտերը պաշարած էին Հայոց թաղերը եւ կը կրակէին անդադար, կ'երեւի դիմադրութիւնն ալ ուժեղ էր, որ քայլ մը առաջ չէին կրնար երթալ. ի վերջոյ թնդանօթներ բերին եւ սկսան հայ թաղերը ռմբակոծել: Այս թուրքերը որ լեղապատառ կը փախչէին Ռուսերու եւ հայ կամաւորներու առջեւէն, հոս փոքրաթիւ հայ գիւղացիներու ուժերու դէմ կը կրակէին անվախ ու համարձակ: Երկու օրէն հայեցան տուները եւ Հայերը կը կրակէին տակաւին իրենց անբաղ զիրքերէն, բայց վերջապէս վեց օրուայ դիմադրութենէ ետք, հազիւ հոս ու հոն դիմադրողներու կենդանութեան նշան կ'երեւէր. փլատակներէն ազատած տղամարդիկը տեղն ու տեղը կը սպաննէին, իսկ կիներն ու երախաները հաւաքելով՝ բերին մեր սայլերուն մէջ լեցուցին եւ հրամայեցին որ հեռանանք Մուշէն: Երեք ժամ վերջ ընդարձակ տորածութեան մը վրայ կեցուցին մեզ եւ հրամայեցին որ հոս գիշերենք: Սողոմ Գոմոր մը ստեղծուեցաւ. կիներու, աղջիկներու, երախաներու լացին ու կոծին, հառաչանքին վերջ չկար, ու այս մարդը, ի՛նչ կ'ըսեմ, թո՛ւրքը՝ իր ամբողջական սպտկերով կեցաւ մարդոց ու Աստուծոյ առջեւ, անխիղճ, անմարդկային կիրքով: Ո՞վ պիտի տեսնէ այս դատը, այս կիներուն, երախաներուն, այս կոյս ու սուրբի պէս աղջիկներուն դատը ո՞վ պիտի տեսնէ:

Առաւօտուն բոլորն անխտիր մերկացուցին, լեցուցին գոմին մէջ, քարիւղ սրսկելով ամէն կողմ, կրակ տուին փոշիացնելով խեղճ ու անտէր մնացած Հայոց սիրելի մայրիկները, քոյրերը եւ ձագուկները: Աչքերէս արցունքը կը վազէր եւ շուրջս նկատեցի որ մեր Պօղոյենց

Պօղոս ամուսն՝ աչքերը երկինք բարձրացուցած, ձեռքերը բռունցք դարձուցած՝ կը զարնէ կրծքին եւ ծանր դանդախներ կ'ուղղէ Աստուծոյ: Բայց տեսնելով զիս՝ որ իր առջեւը կեցած կը դողամ եւ աչքերէս արցունքը կը վաղէ, հանդարտեցաւ Պօղոս ամուսն, դրկեց զիս, դուռխս սեղմեց իր կողերուն, ինքն ալ հեկեկանքներուն մէջ ըսաւ. «Մի՛ լար, ձաղուկս, Աստուած այս դաղանները ուշ կամ կանուխ պիտի պատժէ»: Ժամանակ չունէին մեր մասին մտածելու, յանձնուած էինք Թուրքին ու չար ճակատադրին, երկուքն ալ դաժան էին մեզի հանդէպ: Այդտեղէն մեզ առաջնորդեցին դէպի Պիդէլիս. ճամբաները Հայոց դիակներով լեցուած էին. մեզի հաւաքել տուին եւ նետեցին ձորերու մէջ, անոնց հետքերը անհետացնելու համար: Հոս շատ մը սայլապաններ հիւանդացան. Թուրքերը խաբեցին՝ թէ Տիղրանակերտ հիւանդանոց պիտի տանին եւ հաւաքեցին հիւանդները ու քիչ մը հեռացնելով սպաննեցին. մեր դիւղացիներէն կային Սահակ Պօյաճեան, Յակոբ Եմբըրիկեան, Մինաս Անժուրեան: Տիղրանակերտի մօտ հիւանդացաւ մեր սիրելի Վարդան Տեմուրճեանը. անարդ սատիկանը զարկաւ վար ձգեց սայլէն եւ հարուածներով տեղն ու տեղ սպաննեց մեր դիւղին այս անոյշ վարպետ մարդը: Տիղրանակերտի պարիսպին տակերը տեղաւորուեցանք մեր սայլերով, հոս ալ մեզ քաղաք չթողուցին մտնել. Հայոց վիճակը նոյն էր հոս ալ: Մեզի կ'ըսուէր թէ լուրի կը սպասեն Խարբերդէն, մեր մասին կարգադրութիւն ընելու. այդ օրերուն մեր դիւղացիներէն մահացան Մանուկ Ըլլոյեան, Գէորդ Գալուստեան, մեր Պօղոս Գալուստեանի հայրը եւ փաստաբան Արամին մեծ հայրը՝ Ղազարեան, Խայեաճեան ու Նափոյենց Արութ ամուսն. յուզումով հաւաքուեցանք մեր մեռելներուն շուրջ, փոս մը փորեցինք, Յովսէփենց Աւետիքը ազօթեց, բոլորս արցունքոտ աչքերով հետեւեցանք իրեն, եւ բարձր ձայնով կրկինց Շնորհալիի Առաւօտ լուսոյէն «Մէր անուն Յիսուս, սիրով քո ճմլեա սիրտ իմ քարեղէն»: Աւետիք ամուսն շարունակ կը կրկնէր. «Ես եկայ որ մեր տղաքը ազատին»: Ի՞նչ յոյսեր ունէր եւ ի՞նչ հաւատք, մինչեւ վերջին շունչը հաւատարիմ մնաց իր Աստուծոյն, ընտանիքին, որոնց համար զոհուեցաւ: 18 օր ետք մեզ ճամբայ հանեցին դէպի Խարբերդ. հասանք Արդընի Ս. Աստուածածին տաճարէն ոչ շատ հեռու, եւ երբ Աւետիք ամուսն սովորականին պէս աղբիւրին դուռը կ'աղօթէր, երկու ոստիկաններ սայլի եղան սամիններով ջախջախեցին դուռը եւ աղօթքը մնաց կիսատ՝ այս ազնուական, բարի եւ հայրենաշունչ հայուն բերնին մէջ. սպաննեցին նաեւ Օղան Զաքարը եւ Յովհ. Մ. Գարբիէլեան եւ ուրիշներ ալ, որոնց անունները դժբախտաբար չեմ յիշեր:

Տօնապետ Քէլէչեան, Մինաս Հերոյեան եւ ես, ինչպէս նաեւ

ամենէն փոքրիկները այս սայլերու կարաւանին, չէինք հասկնար բայց կը զպայինք թէ ի՞նչ կը կատարուէր մեր շուրջը եւ մեր ազգին հանդէպ :

Արշալոյսին ուղղուեցանք դէպի Պախըրմատէն . մեր եզները, մեր սայլերը, մեր հայրերը կոտորակուած՝ այսպէս աջ ու ձախ կը քըշուէին չաւուշի մը քմահաճոյքով, որ մեզի հետ կը վերաբերուէր այնպէս՝ ինչպէս ոեւէ մէկը պիտի վերաբերուէր անասունի մը հետ : Հազիւ սկսած էինք շարժիլ, երբ այս ջարդարարը եկաւ ու կեցաւ Պօղոս Պողոյեանին առջեւ . «Է՛հ, ի՞նչ կ'ըսես ծերունի, քե՞զ պէտք է տանիմ թէ այս լակոտը» : Պօղոս ամուռն նայեցաւ ինծի, նայեցաւ ոստիկանին, դուրսը բարձրացուց երկինք եւ վճռական շեշտով մը «Զի՛ս տար» ըսաւ . ապա դառնալով ինծի՝ աւելցուց . «Ո՞վ դիտէ, թերեւս կ'աղատիս կամ կը դռնես Լեւոնս, հոգ տար անոր, մի՛ մոռնար Պօղոս ամուռ, Աստուած քեզ հետ», եւ դրկեց դիս : Առաջին անգամ ըլլալով զպացի որբութիւն մը, որովհետեւ այս մարդը պահապան հրեշտակի պէս մինչեւ հոս ինծի դուրդուրացած եւ հեռու պահած էր թուրքերու աչքերէն . արցունքոտ աչքերով եւ հեկեկանքով բաժնուեցանք, ինք՝ մահուան երթալու, իսկ ես՝ Պախըրմատէն, ամուռիս՝ Կարապետ Տէր Պետրոսեանի հետ : Եւ ո՞վ հրաշք, մինչ մենք դէպի դիւզ կ'երթանք, ահա Պախըրմատէնի մէջ կը հանդիպինք մեր դիւզի առաջին կարաւանին, որ արդէն խլեակ դարձած է մեզի պէս . հոն կը տեսնենք Մարտուպ Ըլլոյեանը, Ճուար Պօյաճեանը, Զարգար Մ . Գարբիէլեանը, Սահակ Քէլէշեանը, Պետրոս Նալոյեանը եւ Ամողլի Վարդիկ Տէր Պետրոսեանը, որուն արդիւնքին մինչեւ անգամ իր հօր հետ խօսելու, ինչպէս ուրիշներուն արդիւնքեացաւ իրենց հարազատներուն հետ երկու խօսք փոխանակելու : Կարապետ ամուս դիւզի մեծերէն կը համարուէր եւ իր մէկ հատիկ տղան Ամերիկա կը դռնուէր (այժմ Հայաստանի մէջ կ'ապրի ու շինած է բոյնը հայրենիքի մէջ, բախտաւորուած է՝ նորոգելով իրենց հօր անունը, երկու կտրիճ զաւակներով, Կարապետ եւ Սարգիս անունով եւ երկու աղջիկներով, Վարդուհի եւ Լիա անունով, այս վերջինս ալ կը վըտնուի Լիրանան նոյնպէս զաւակներով) : Մաստար լերան վրայ տարին հօրեղբայրս եւ իրեն հետ նաեւ Մարտիրոս Միքայէլեան, Օվան Ուլուհոճեան, Վարդան Մաղիկեան, Յակոբ Պօղոյեան եւ կարգ մը ուրիշ գիւղացիներ, որոնց անունը չեմ յիշեր : Ասոնք չթողուցին որ թաղենք . ալօթք մը ըսինք, քիչ մը հողով ծածկեցինք, սրտերնիս դերեզման ըրինք եւ հասանք Գեղվանք ու անկէ անցանք Մէզրէ, ուրտեղէն ամիսներ առաջ սկսած էինք :

Մէզրէի մէջ մեզի դիմաւորելու եկած էր արիւն կզակ Հաֆիզը, մեր դիւզէն . հարցուց թէ հօրեղբայրդ չեկա՞ւ, պատասխանեցի թէ

ուչ: Այդ օրերուն կաթողիկէներուն իբր թէ արտօնութիւն կար ապրելու, հետեւարար Վանանց Խաչօն եւ Ֆրանկինց Չաքարը ուղեցին Վանանց Մինասին եւ Յովհաննիս անունով արձանադրուելի, սակայն լրիւ անունները չզիտնալով՝ բռնուեցան եւ տարուեցան. իսկ Սարգիս Թովմասեան եւ Աւետիք Մեծոյեան յաջողեցան կաթողիկէ արձանադրուելի եւ ազատիլ: Ընկերներէս Ենովքը եւ Մինաս Հերոյեան դացին թուրքերու մօտ աշխատելու. ես մինակ մնացի ու սկսայ քալել դէպի շուկան՝ ուր հանդիպեցայ քիւրտի մը որ մօտեցաւ ինձի եւ ըսաւ թէ իր մօտ երթամ, ինձի դաւկի պէս պիտի պահէ: Ես ընկերացայ իրեն, դացինք Քեսրիք. լողցուց, հագուեցուց ու տեղ մը տըլաւ պարտէզին վրայ, խուզ մը, ուր դիշերները կը պառկէի ապահովութեան համար: Տարի մը անցաւ այսպէս, քիւրտը կ'ուզէր զիս թրփատել տալ, թրքացնել եւ իր ազնկան հետ պսակել: Այս մէկը ինձի համար անկարելի էր: Մայրս մեր բաժանման օրերուն պատուիրած էր որ իմ հաւատքս չկորսնցնեմ, չթրքանամ եւ այդպէսով կորսուիմ. իսկ այս մարդը կ'ուզէր զիս թրքացնել: Արդէն կեանքն ալ չարչարանքով լեցուն էր այս տան մէջ եւ մտադիր էի փախչել, երթալ Սարի Եաղուպ, ուր լսած էի թէ մօրաքոյրս եւ ուրիշ Դատեմյիներ կ'ապրէին:

Օր մը երբ ես արտը վարելու համար կ'երթայի դէպի Մէյրէի ճամբան, առջեւէս կը քայլէին երկու ջորեպաններ ու Դատեմի մասին կը խօսէին: Արագուցի քայլերս, եւ ի՞նչ տեսնեմ, այս ջորեպաններու տարազով մարդիկը երկու Դատեմցիներ են, մէկը Գրիգոր Չախամեան, իսկ միւսը՝ Գէորգ Աբրահամեան, եւ երբ իրենց հայու անունով կանչեցի՝ դարմանքով կեցան եւ հարցուցին թէ ես ո՞վ եմ: Թրքերէն պատասխանեցի թէ ես Տէր Պետրոսեանց Աստուրին տղան եմ, եւ հարցուցի թէ ո՞վ կայ մեզմէ ողջ. պատասխանեցին թէ հօրաքոյրս ողջ է եւ Սարի Եաղուպ կը մնայ. խնդրեցի իրենցմէ որ հօրաքոյր լուր տան թէ ես Քեսրիք քիւրտ Հասանին մօտ կը մնամ, որքան կաբելի է շուտ ազատեն զիս այստեղէն:

Շատ չանցած՝ հօրաքոյրս կու դայ Քեսրիք, կը դռնէ Հասանին տունը, կը հարցնէ զիս ու տան կնոջ բացատրութեամբ կու դայ եւ կը դռնէ զիս արտին մէջ. կը բացատրեմ իրեն թէ ո՞վ եմ. լալազին կը փաթթուի ինձի ու կ'ուզէ որ օր առաջ երթամ իրենց մօտ: Քանի մը օրէն փախայ այդ տունէն հետքս կորսնցնելով եւ վերջապէս ինքզինքս ձգեցի հօրաքոյրս քով:

Այսօր, այսքան տարիներ ետք, երբ կը յիշեմ մեր սայլերը՝ որոնք մեր հացի, մեր աշխատանքի միջոցներն էին, մեր եզները՝ որոնք մեր ընտանիքի անդամներուն պէս հարապատ էին, մեր տուները, մեր պիւլը, մեր բոլոր պիւղերը, ուրակէն արիւնտ օրե-

բուն անցայ եւ այս ողջ աչքերով տեսայ շնացած Թուրքերու կատարած աննկարագրելի ոճիրները, չեմ հաւատար թէ նոյն անձն եմ, որ տեսած է այդ բոլորը եւ հրաշքով յաջողած է վերապրել...:

Տե՛ս Յովհաննէս, սիրելի Յովհաննէս, տուներս, զաւակներս, թոռներս, Մարնոսը եւ սիրելի տիկինս՝ որ տառապանքի ճամբէն քալեց, հիմա հոս կ'ապրինք, եկեղեցի շինեցինք, ես սարկաւազուժիւն կ'ընեմ, զաւակներս ազգային գործերով կը հետաքրքրուին. Տէր Պետրոսեաններու մեծ տունը շինեցի, իսկ Հայաստանի մէջ Նշանը իր զաւակներով հայրենիքը կը վերաշինէ խանդավառ: Աստուած վրկայ, շարունակ աչքիս առջեւ է Պօղոսեան Պօղոսը, որ կեանքը տրւաւ սրպէսզի ես ապրիմ. Աստուած թող յիշէ իր այդ քաջարի զաւակը. իր խօսքերը պիտի իրականանան, Աստուած անպատիժ պիտի չթողու այս անաստուած Թուրքերը»:

ԹԱՔԱՍՏՈՑԷ ԹԱՔԱՍՏՈՑ

Թորոսի պատմութիւնը մէկ էջն էր Դատեմի զաւակներուն կրած տառապանքներուն: Աւելի զարհուրելին դեռ պիտի դար: Շատ չանցած՝ կը սկսի Դատեմցիներուն համար Սարոյցի աքսորը. կը հաւաքեն բոլոր կիները, երիտասարդ պատանի տղաքը, կաղերն ու կոյրերը, հիւանդները՝ սայլերու կապած, կը տանին դէպի լեռները, նախապէս գիւղին մէջ ծեծելէ եւ բիրերով ոսկորները փշրելէ ետք:

Հոն կը դտնուին նաեւ մայրիկիս հետ Աննան, մեծ մօրեղբօրս աղջիկը եւ Սարգիսին կիներ՝ Սառան, հարս Մարէ եւ պղտիկները. այստեղ են մեր վարժապետ Կարապետին զաւակները՝ Յարութիւնը եւ Վահէն, ջախջախուած ու կապուած այս դժոխք աշխարհին մէջը: Գիշերով մայրս եւ Աննան կը փախչին ու կ'երթան Թէպէ գիւղ: Իսկ միւսները կը տարուին Սարոյցի լեռները եւ կը քարկոծուին, կը մորթոտուին, հագուստներ, կօշիկներ հանուած՝ կը կողոպտուին: Այս աքսորը կազմակերպուած էր տեղացի եւ մօտակայ կարգ մը Թուրքերու նախաձեռնութեամբ եւ ոչ թէ կեդրոնէն եկող զինուորներով: Աւետիս Տեմոբճեան այս խումբին մէջէն հազար տեղէ դանակուած եւ նետուած դիակներու մէջ, գիշերով կ'արթննայ եւ կը քալէ դէպի գիւղ: Յովսէփենց մեծ տիկինը, իր վերաւոր հարսին՝ Մարէին եւ երկու թոռներուն հետ կը քալէ ատեն մը. հուսկ, ուժասպառ ու շքնաչահեղձ, այդ սրբակեաց Յովսէփենց տան տիրուհին կը դառնայ հարսին ըսելով՝ «Ա՛ռ, տար այս որբերը, ազատէ եթէ կրնաս. լուր տուր մեր տղոց, ես ա՛լ չեմ կրնար քալել, ես հոս կը մեռնիմ. յոյսս դուն ես». արցունքով ու լացով կը բաժնուի իր կեսուրէն իր երկու վի-

բաւոր ձաղուկներուն հետ կը ձգեն մեծ տիկինը իր հղեվարքին մէջ. Շոշի բարձունքներուն վրայ, եւ կը քայլն նորէն դէպի դիւղ:

Մենք անտեղեակ այս արիւնոտ տրամին, պահուած՝ լեռներու ծերպերուն մէջ, անորոշ վաղուան յոյսին կառչած ենք: Հեռաւոր տեղերէն երբեմն զէնքի եւ թնդանօթի ձայներ մը կարծես թէ կը լսենք եւ Սահակը մարդարէութիւններ կ'ընէ թէ Ռուսերն են, կու գան մեզ աղատելու եւ կ'օրօրուինք անորոշ յոյսերով ու երազներով: Աշխարհը մոռցած է մեզ, կրակի մէջ նետած եւ դարձած է դժօխք մը: Անօթի ենք. այդ երեկոյ ես եւ Առաքելը կը բաժնուինք, կ'երթանք թէփէ դիւղ հաց դտնելու, ուր կ'պրի իր մայրը: Մեղքոնը, Պողոս քեօխ եւ Սահակը նոյնպէս կ'երթան դիւղ՝ հացի համար:

Կը մեկնինք Մնկալենցէն եւ անցնելով Խոլթանք հողերէն՝ կ'ուղղուինք Թէփէ դիւղ: Շուները կը սկսին հաջել, կը վախճանք որ արթընցեան բնակիչները. կը ծուարինք անտառին մէջ եւ փորի վրայ սողալով կը հասնինք այն տանը պատերուն՝ ուր կ'ենթադրենք իր մայրը դտնել: Ուսերուս վրայ բարձրացած՝ կ'անցնի տանիքէն եւ մթութեան մէջ կը կորսուի: Ես ժամերով կը սպասեմ իրեն, բայց չի վերադառնար: Չեմ վախնար որ բռնուած ըլլայ, քանի որ զէնքի ձայն չեմ առներ. կը մտածեմ ձգել ու երթալ, բայց ընկեր մը լքել չեմ կրնար. անօթի ենք ու մեր ընկերներն ալ հացի կարօտ: Վերջապէս կը տեսնեմ որ կը սողոսկի. ես դիրք կը բռնեմ տեսնելու թէ մինա՞կ է թէ ուրիշներ ալ կան իր հետը: Կու դայ. ես բարկացած առաջ կ'իյնամ առանց խօսք մը ըսելու, եւ ինքն ալ կը դռայ թէ ըրածը ներելի է, մանաւանդ կերակուր եւ ուտելիք ալ չէ կրցած բերել, որովհետեւ այդքան կողոպուտներէ ետք՝ բան չէ մնացած: Բառ չի գտներ ինքզինքը արդարացնելու ու կ'ուղղուինք դէպի Մնկալենց, ուր կ'ալընկալենք հանդիպիլ մեր տղոց: Կ'երթանք մեր վայրը եւ ամէն բան քանդուած կը գտնենք, հետք մը չենք տեսներ եւ կը սկսինք մտածել թէ ինչ կրնայ պատահած ըլլալ: Ուրեմն իրենք ետ վերադառնալով քանդած են ինչ որ կրցած են. Թուրքերը չեն հետեւած իրենց, տեղին վրայ կուլ չէ եղած. կ'եղրակացնենք որ դիւղ դացած են, լաւ լուրեր ստացած, ուստի դուրս դալու պէտք չեն զգացած, ենթադրելով որ մենք կը հասկնանք եւ կ'երթանք դիւղ՝ հասկնալու համար թէ Թուսերը իրաւ եկած են կամ յաղթած եւ խաղաղութիւն պիտի տիրէ:

Հազար մտատանջութիւններով կ'ուղղուինք դէպի դիւղ: Շատ ուշ կը հասնինք դիւղ, կ'երթանք Գարբիէլ Ամոյննց տունը. քեօկինս՝ Սարոն կ'ընդունի մեզ, կը տանի ներս ու կը պատմէ թէ տղաքը ետ դիւղ կ'ուղեն դալ. կը հանդիպին տեղացի թուրք հովիւներու, կուլի կը բռնուին, կը զարնուի հովիւին շունը, կը կորսնցնեն իրենց հետքը

եւ նորէն կը մտնեն դիւզ, Սահակն ու Մեկընը կը ձղեն Պօղոս քե-
ռիին տունը, կ'ուզղուէին դէպի Մնկալենց եւ այնտեղ քանդելով՝
կ'անցնին անորոշ ուղղութեամբ: Ես եւ Առաքելը տունէն դիմի կ'առ-
նենք, պահիր ու հաց եւ ժամ առաջ դուրս կը վազենք լուսնայէ առաջ.
Ճամբան կը հանդիպինք նոյն հովիւներուն եւ զգուշութեամբ ետ կը
դառնանք ու կը նետուինք մեր վերի սարտէզին մօտ՝ ցորենի դէ-
ղին մէջ, Ս. Յովհ. Չուրերը տանող առուակին մօտ: Ծատ չանցած
կը լսենք հովիւներու սուլոցը. անոնք երթալով կը մօտենան մեզի:
Շունը կը սխի հաջել, կը վազէ դէղին վրայ, հովիւը ետեւէն կու
դայ ու զրեթէ ոտքերուս վրայ կը կոխկռտէ. մենք ատրճանակները
քաշած՝ պատրաստ ենք կրակելու, երբ հովիւը շան զարնելով՝ կը քշէ
դուրս եւ ինքն ալ կը հետեւի անոր: Կամաց կամաց կը մարի անոնց
հանած աղմուկը եւ մենք Առաքելին հետ կը սկսինք վիճել. հո՞ս կե-
նանք թէ մեկնինք. եթէ հասկցան որ մենք հոս ենք՝ կրնան դալ
պաշարել եւ մէկ լուցկիով այրել այս խուրձերը, ու մեզի ինքնա-
պաշտպանութեան հնարաւորութիւն չտալ: Գիւզին այդքան մօտիկ
վայրի մը մէջ դուրս դալ՝ կը նշանակէ նշմարուել, հաւարի մը պատ-
ճառ դառնալ եւ մեր շուրջ հաւաքել մօտակայ բոլոր թուրքերը: Ես
ըսի՝ քանի որ կը կասկածինք թէ կրնան մեզ տեսած ըլլալ, լաւ է
որ օր ցերեկով դուրս դանք. ես կ'ելլեմ, կը մտնեմ քեռոնցս պար-
տէզին մէջ եւ այնտեղէն կը նայիմ որ դուրս դաս եւ ինձի միանաս:
(Իսկապէս ալ այդ կէսօրէն ետքը թուրքերը եկած եւ կամած են այդ
խուրձերը. եթէ հոն մնացած ըլլայինք՝ պիտի բռնուէինք):

Այդպէս ալ ըրինք. այդիներուն մէջէն անցանք եւ ուղղուեցանք
դէպի Ծոշիրոս. այստեղէն դէպի դիւզ ծոեցանք եւ իջանք մինչեւ
Նորսոյեանց հնձանը եւ տեղաւորուեցանք այդ հիւղակին մէջ: Բայց
եկուր տես որ կէսօրէ ետք նոյն հովիւները ոչխարները առնելով դէ-
պի այդ լեռնալանջը եկան ու ոչխարները մեզի քսուելով անցան...
Մենք ստիպուած՝ նորէն իջանք դէպի ձորը եւ սկսանք քալել դիւզէն
հեռու. ամէն կողմ կը տեսնէինք հնձուորներ: Մեզ, արապի եւ զին-
ուորական հազուստի մէջ, շատ շատ պիտի կարծէին թրքական
բանակէն փախստականներ, եթէ չըլլար մեզի հետ դոյլ մը դի-
նին, որ շուրի տեղ կը ծառայէր. ասիկա հեռուէն շատ տարօ-
րինակ պիտի երեւար եւ կեանքին ծանօթ ոեւէ դիտողի՝ յայտնի պի-
տի ըլլար որ փախստականներ ենք. բայց կամաց կամաց ձորին մէջ
զտնուած ծառերու արանքէն քալեցինք, տեսանք աղուէսներ՝ որոնք
քանի մը դիակներու շուրջ հաւաքուած էին. մեզ տեսնելով՝ ձղեցին
եւ անցան քան թէ փախան: Դիակները Իսրայէլեան դերապայճառին
հետ առաքուած աքսորականներուն էին, որոնք նետուած էին ճամ-
բաներուն վրայ անթաղ...: Ատեն մը իրբեւ կեր թերեւս ծառայած

են այս վայրի դազաններուն, որոնք տակաւին կը յամենային անոնց շուրջ:

Վերջապէս օրհնուած մութը եկաւ եւ մենք մեզ սպահով զգացինք. կը մեղադրէինք մեր այս տարիքոտ եւ փորձառու ընկերները, որոնք անխոհեմաբար մեզ ալ նետած էին այս վտանգներուն մէջ, առանց մտածելու մեր վիճակին եւ կացութեան մասին: Մենք զիւր չգացինք, լուրը տրուած էր...: Մեր ուտելիքը գիշերը հաւաքուած հաւկիթներն էին, որոնք փշրելով կ'ուտէինք կամ դաշտին բուսնոյ խոտեր: Ի՞նչպէս ըսած եմ, այդ տարին մարախը եկած էր եւ սրբած ամէն կանաչութիւն. բարեբախտաբար չէր կրցած ցորեններուն վընասել. բայց այգիներուն խաղողը, ձմերուկը արմատախիլ ըրած էր եւ այգիներուն վրայ միայն տերեւներ սկսած էին բացուիլ, որ կ'ուտէինք ուր որ գտնէինք. բայց այս վիճակն ալ երկար չէր կրնար տեւել եւ ես զգացի որ զժուարութիւն կ'ունենամ մարսելու. սնդուութիւն ունեցայ միայն խոտ ու ցորէն ուտելով:

Քանի մը օր ետք, քեռիս եւ Սահակը եկան նորէն ու միացան մեզի. Առաքելը եւ Մելքոնը բաժնուեցան մի քանի օր իրենց սիրելիներուն մօտ ըլլալու փափաքով: Այդ ժամանակ մեր տան քսաներկու անդամներէն կը մնային հինգ հոգի. կ'ըսուէր թէ հարս Մարին, Սեդրաքին աղջիկը, Սարոյցի ջարդին տեսած են որ թուրք կին մը առած է եւ հետը տարած. այս փոքրիկ աղջիկը հետագային յայտնի եղաւ որ ազատուած է, բայց կարելի չեղաւ առնել զինք եւ բերել տուն. ո՛վ գիտէ մինչեւ այսօր ալ կը մնայ թրքացած ա՛յնպէս՝ ինչպէս որ հազարաւորներ թուրքիոյ սահմանին մէջ մնացին անտէր եւ կորսուեցան թրքական բարբարոսութեան մէջ...:

Օր մը ըսի քեռիս, որ ես ա՛լ այսպէս չեմ կրնար ապրիլ, պէտք է երթանք թուրք գիւղ մը եւ կերակուր ուտենք, գէթ թանապուր մը, կամ լաւաչ հաց մը: Առաջին առթիւ երեքս ալ համաձայնեցանք ու սկսանք ուղղուիլ գէպի Քնատարիչ: Սահակը կը ճանչնար մարդիկ՝ որոնց մազերը կտրած էր, անոնց սափրիչը ըլլալով: Քանի մօտեցանք գիւղին, մօրեղբայրս սկսաւ տնտնալ: Ես դուշակեցի որ բան մը զինքը կը մտատանջէր: Կ'ըսէր՝ ասոր վտանգը շատ է. կրնայ ըլլալ որ հաց տան, բարեկամ երեւնան, ինչպէս տաճիկները սովոր են ընել, բայց յաջորդ օրը պիտի երթան գիւղը եւ մասնեն մեզ. նորէն պիտի չարչարեն մեր ընտանիքի անդամները. այդ պատճառով ես չեմ երթար: Ես թէեւ չհամոզուած, բայց եւ այնպէս կեցուցի Սահակը, եւ դառնալով բացատրեցի թէ ինչու մօրեղբայրս կը մտահոգուի. որոշեցինք, որ մօրեղբայրս մնայ սայլին ետեւ որոշուած վայր մը, երբ վերադառնանք կը վերցնենք զինք. եթէ վտանգաւոր բան մը պատահի՝ ինքը կ'որոշէ ընկիւքը: Ձէինք ուզեր որ ինքն ալ մեզի

պէս այդ արկածախնդրութեան նետուէր՝ կուշտ փորով կերակուր մը ուտելու համար :

Սահակը կ'առաջնորդէր, ես կը հետեւէի. վերջապէս կանդ առինք, քնացող զիւղի տուներէն մէկուն դուռը դարկինք մէկ երկու անգամ, վերջապէս մէկը վար եկաւ, դուռը բացաւ եւ ըսաւ՝ ի՞նչ կ'ուզէք: Սահակը հազիւ փորձեց բան մը ըսել, մարդը դարձաւ եւ «Վա՛յ սէն պիղըն Սահակսըն» (դուն մեր Սահակն ես) բացազանչեց: Սահակը բացատրեց որ ինք կը մնար Մէղրէ, Արսլան բէկին խոնախը, կառավարութիւնը ճնշումներ կը բանեցնէր հայ քաղաղներուն վրայ եւ ինքն ալ ըսած է որ երթայ զիւղի լեռները ատենուայ մը համար մինչեւ որ պէկը զինքը ետ կանչէ Ճապաղջուր, յաջորդ շարաթներուն: «Ներս եկէք, ներս եկէք», փսփսաց առանց աղմուկի, մեր տղաքը հոս չեն, քաղաք են դացեր», եւ մօրը դառնալով՝ «Սահակն է եկեր մեր տունը, ըսաւ, Արսլան պէկը զրկած է. անօթի են, բան մը բեր ուտեն»: Լաւաչ հաց բերաւ, թան բերաւ, տասներկու հաց ծրարեց, պատուիրեց որ մեզի հետ տանինք եւ այնպէս ցոյց տուաւ որ պէտք է զգուշանալ դբացիներէն, ու մեզ հետ դալով՝ զիւղէն դուրս՝ ճամբան ցոյց տուաւ մութին մէջ եւ ինք վերադարձաւ:

Մենք ուղղուեցանք հոն՝ ուր պիտի հանդիպէինք մօրեղբօրս. երբ դտանք զիրար՝ ինկաւ հացին վրայ: Ըսի որ ինք զրկուեցաւ թանէն, որ ինծի համար աշխարհի ամէնէն համով ուտելիքն է լաւաչով միասին: Քիչ մը ուրախութեամբ վերադարձանք մեր ընտրած տեղերը եւ դո՛ս՝ որ համարձակած էինք մտնել զէնքերով՝ թուրքի մը տան մէջ: Քանի մը շարաթ ետք, արձագանդը առինք որ Սահակը եւ Հերոյենց Հայկազը տեսնուած են Գումպէրիչի մօտերը, լաւ զինուած եւ անցեր են դէսլի Ճապաղջուր: Սրտիս մէջ արթնցաւ յիշատակը մեր սիրելի Հայկազին՝ որ Երզնկայէն մինչեւ զիւղ վերադարձած էր, և որուն պէտէլը տալու եւ ազատելու համար օգնած էինք իրեն. սակայն յետոյ բռնուած՝ մեծ չարչարանքներով սպաննած էին զինք, ո՛վ զիտէ Սարբերդի ո՛ր ճամբաներուն վրայ: Ես ուրախ էի, ճանչցուած չէի եւ իմ մասին չէր խօսուեր: Կարելի է ըսել զիւղը մաքրուած էր. թուրք դադթականներ եկած էին տեղաւորուելու եւ տեղացի թուրքերը սկսած էին նեղուիլ, որովհետեւ նորեկներուն հետ չէին կրնար վարուիլ ինչպէս Հայերուն հետ: Եկող նոր թուրք դադթականները զիրենք չէին ճանչնար իբրեւ աղաներ եւ որոշ տարակարծութիւն տեղի կ'ունենար եկուորի եւ տեղացիի մէջ:


ՔՐԻՍՏՈՒՆԷ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Այդ օրերուն լուր տարածուեցաւ թէ Աւստրիոյ եւ Գերմանիոյ կայսրերու միջամտութեամբ այլեւս ազատ էին կաթողիկէ եւ բողոքական համայնքները հալածանքէ եւ արտոյժէ: Ես ու զեռիս որոշեցինք իջնել Մէղրէ, նախ հետապնդելու Աւետիք զեռիս վիրաւորուած դաւակները եւ հասկնալ կացութիւնը Մէղրէի մէջ: Այդպիսի զրոյցներ կը դառնային մէջտեղը եւ նշաններ կային որ մարդիկ ազատ ձուլուած են իրենց արհեստի եւ գործի կապակցութեամբ. բայց ճանչնալով թուրքը, միշտ ալ կասկած կար որ կրնային խարել եւ այդ թոյլտուութեամբ հաւանական փախստականները երեւան բերել տալ: Խարուողները դիւրաւ պիտի կարենային բռնուիլ եւ տարուիլ, ինչպէս ըրած էին մնացեալ հայերուն: Մէղրէ պատահաբար փողոցի մը մէջ կը հանդիպիմ Կեդրոնականի սաներէն՝ Արտաշէս Յակոբեանի, տան մը մէջ կը տեսնեմ Խոսրով Եաղճեանը՝ Փրանսական դպրոցի աշակերտ: Կերթամ փնտռելու ասորի դասընկերներս, Փրանսական դպրոցի Նեմենենց Փիէրը, Աբրահամ Առաքելեանը, որուն տան մէջ կը հանդիպիմ Սարգիս Սարոյեանի քրոջ, որոնք պահուած էին այս ասորիներու տունը: Եսթերին առաջին անգամ հանդիպեցայ Առաքելեանի տունը. դացի հիւանդանոցները, որբանոցները եւ փնտռեցի զբոլորդիներս: Այս փնտռութեան ատեն, ըլլորովի անակնկալ կերպով հանդիպեցայ Մարիամ պաճըի աղջկան՝ Քրիսթինէին, դրկուեցանք, լացինք եւ դացինք իրենց տունը. այս տան մէջ կ'սպրէր թուրք հարկը պետ մը ամուսնացած տալոջ հետ, որուն շնորհիւ մինչեւ այդ՝ աղատուած էին այս թուրքին պաշտպանութեան տակ Քրիսթինէն եւ իր երկու շատ սիրուն տղաքը, երկու եւ չորս տարեկան հաղիւ կային: Այդ օրերուն նամակ ստացած էր Հալէպէն իր միակ եղբորմէն՝ Ահարոն Խաչատուրեանէն, յետագային արժէքաւոր բժիշկ մը եւ պարզեւատրուած՝ Քահանայապետէն:

Մէղրէ արտաքին երեւոյթով բան մը փոխուած չէր. Հայերը չկային, մեծ մասին տունները փակ էին, նոյնպէս խանութները, բայց կ'աշխատէին փուռերը, որոնք տակաւին Եղէզդիներուն ձեռքն էին, ուր կ'աշխատէին իբրեւ զործաւորներ: Հոս հանդիպեցայ Դուրուցի Յարութիւն Մ. Թաղէոսեանին՝ որ նոյնպէս հրաշքով ազատած էր իր հեռաւոր մէկ աղբականին՝ պատուելի Խայիկեանին հայրենասէր տիկնոջ միջոցաւ. այս վերջինս ազատած էր շնորհիւ գերմանացի միսիոնար Դրէյմանի ջանքերուն: Այս տիկինը, որ այդ ժամանակները ճանչնալու պատեհութիւնը չէի ունեցած, մեծ զործունէութիւն մը ունեցած էր յետագային, մեծ թիւով հայեր փախցնելով դէպի Տերսիմ, զիւրտերուն հետ ստեղծած կապի շնորհիւ: Յարութիւնին

հետ երբեմն կը տեսնուէինք եւ կը խորհրդակցէինք փախչիլ լեռները, ասպահովելով զէնքեր եւ ընկերներ. կ'երթամ ամերիկեան հիւանդանոց, այն սպաւորութիւնը թողլով հոն, թէ կ'սպեր ունիմ եւ կ'ամ կ'աշխատիմ. կը դարձանամ երբ կը տեսնեմ հայերէն թերթեր՝ որ կը հրատարակուէին Պոլսոյ մէջ: Այս հիւանդանոցին մէջ կը տեսնեմ Լեւոն Լիւլեճեանը, Նազարէթ Բիրանեանը, առանց մօտիկ բարեկամութիւն ստեղծելու: Այսպէս թէ այնպէս բաւական հայեր վերապրած կը տեսնեմ, որոնց իւրաքանչիւրը վերապրումի իր պատմութիւնը ունի. կը ծանօթանամ թիթեղադորձ Ջուլումեան եղբայրներուն՝ Յարութիւնին եւ Միսաքին, որոնք ազատած են իրենց արհեստին պատճառով: Գիւղէն կը յաջողինք բերել Շուշանը, Սրասլիոն Ուլուհոճեան Աբրահօր եղբօր կինը՝ իր Վահրամ զաւակով եւ կը տեղաւորենք նոր կարգի բերուած տան մը մէջ, Քրիսթինէի աշխատանքով եւ ժրջանութեամբ:

Օր մը Մէլիբէի շուկան կը հանդիպիմ դիւղի բանտին մէջ զիս ծեծող ոստիկանապետ Սալիլ էֆէնտիին, որ խոշոր կողմով մը լուրիկ կը դնէր. ինծի կը հարցնէ թէ ո՞ւր եմ, ի՞նչպէս հոս ինկած եմ. կ'ըսեմ թէ նոր եկած եմ եւ աշխատանք կը փնտռեմ, տեղս անորոշ է տակաւին եւ մեզի բարեկամ որբ եւ այրիի մը քով կը մնամ. հաճոյակատար ըլլալու համար կ'ըսեմ թէ ես սիրով կը տանիմ իր դնած ապրանքը: Նոյն օրը հանդիպեցայ ժանտարմայի մը՝ որ մեր դիւղը պաշարողներէն էր. երբ տեսաւ որ կօշիկս մաշած էր, կեցի՛ր, ըսաւ, ու դնաց կօշիկ մը բերաւ. շնորհակալ եղայ, բայց այդ կօշիկը երբեք չեմ կրնար մոռնալ, որովհետեւ զգացի որ նահատակ հայու մը ոտքերէն հանուած էր, եւ այս ոստիկանը բարիք կ'ուզէ ընել. հազիւ հետքը կորսնցուցի, հանեցի կօշիկները եւ նետեցի, ու քալելով ինքիսնքս ձգեցի Քրիսթինէի տունը: Քրիսթինէ ինծի յայտնեց որ Ներկիզ պաճին ծանր վիճակ ունի, զիս կ'ուզէ տեսնել: Գացի, պառկած էր խեղճ կինը եւ մաշած՝ իր կորսնցուցած զաւակին եւ հեռաւոր երկու տղոց կարօտով, ալ չըսենք քոյրերուն եւ անոնց զաւակներուն վիճակը, որոնք քոչուած էին աշխարհի չորս կողմերը: «Յովհաննէս, ձագս, ըսաւ, այս հաճի Մէհմէտոն շրջանի թուրք դիւղերու տասանորդը առած է. ինք դրել կարգալ չի գիտեր եւ կ'ուզէ որ իրեն հետ երթաս եւ օգնես. կ'ըսէ որ ինք գիտէ թէ դուն կու գայիր տուն՝ հացի համար եւ օր մը օրանց նեղութիւն չտուաւ: Հիմա ալ խօսք կու տայ որ իրեն վնաս մը չի գար. հոն ես իմ կարելիս կ'ընեմ ու ողջ եւ առողջ կը բերեմ, կը յանձնեմ ձեզի: Հիմա, ձագս, ես կը խորհիմ թէ առանց մէկուրեւ պաշտպանութեան այս եկող ձմեռ անօթի կը մնան բոլորն ալ, եթէ կրնաս երթալ եւ օգնել այս թուրքին՝ կը փրկես մեզ բոլորս, մինչեւ տեսնեմ Աստուած ինչ լոյս կը բանայ



Վահրամ Տ. Մանուկյան



Քրիստինե Խաչատուրյան



կամ ինչ կ'ըլլանք»։ Ձէի կրնար մերժել. մեր ամբողջ ընտանիքին ապրուստը եւ ապահովութիւնը այս մարդուն պաշտպանութենէն կախում ունէր, եւ ես պարտական կը դռայի այդ ծառայութիւնը ընել, քանի այս թուրքը մինչեւ այդ ատեն ոչ ոք կողոպտած էր կամ աւերած եւ կամ որեւէ թշնամութիւն ցոյց տուած։ Կարելի է ըսել թէ այդ թուրքն էր որ աղքեցութիւն ունէր բոլորին վրայ եւ իրական իսլամ մըն էր. չէր խառնուած կողոպուտի, սպանութիւններու, եւ ոչ ալ ցոյց տուած էր որեւէ համակրանք դէպի «Երիտասարդ Թուրքերը», որոնք էին իրենց երկիրը քանդողները։

Ես այդ երեկոյ ճամբայ ելայ երթալու մեր դիւղը, ծանր սրտով եւ կասկածանքով, բայց մեծ հաւատքով՝ որ կրնայի այս մարդը շահիլ եւ թերեւս այդ պատճառով փրկել ընտանիքի մնացորդացը։ Քրիսթինէ համաձայն չէր. մայրս դեռ Թէփէ դէօյ կը մնար. քեռիս երկմտեր էր, բայց ըստ երեւոյթին համաձայն էր ներկիւ պաճըին հետ, որ որոշումը տուած էր։

Թուրքը նստաւ իր ձին ու ես իր կողքին կը քալեմ ու կը խօսինք։ Խօսք բացաւ ջարդերու մասին եւ ըսաւ թէ այս ջարդերը կազմակերպողները իսկական իսլամ չեն, անոնք կը դրդեն անօթի ամբողջ կողոպուտի եւ շուտ հարստանալու համար այդ ամբողջ կը մոռնայ իր մարդկութիւնը, իր կրօնքը, իր Աստուածը եւ անօթի դայքերու նման կ'իշնայ անպաշտպան կիներու եւ երախաներու վերայ, աջ ու ձախ կը սպաննէ, կը կեղեքէ եւ Հայը կը նկատէ օրէնքէ դուրս. մինչդեռ Մահմէտ մարդարէն իւրաքանչիւր իսլամի վրայ պարտականութիւն կը դնէ որքը, անպաշտպանը, քեզի յանձնուած գերին նկատել իրեւ աւանդ մը եւ հոգ տանիլ ու պաշտպանել։ Ես չեմ հաւատար հայերու բռնի իսլամացման, բայց 12ին վրայ եղողները իսլամացնելու կը հաւանիմ, որովհետեւ իսլամին սուրը պիտի ստանձնէ անոնց պաշտպանութիւնը։ Կը խօսէր համոզումով, հաւատքով եւ ներշնչումով ու մէջս կը զարգանար այն հաւատքը՝ որ թերեւս կրնամ վստահիլ այս մարդուն անկեղծութեան, որ իրաւ ինծի պէտք ունէր եւ կ'ուզէր փոխադարձ օգտակարութիւն մը ապահովել։ Առաջին առիթով ես դացի Խոլայանք, դտայ մեր Սարգիսին տղան՝ Յարութիւնը, որ այժմ իր դաւակներով կը գտնուի Փրանսայի Լիոն քաղաքը, եւ հայրն է Հ. Վրթանէս Ուլուհոճեանին՝ անդամ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան։ Ի՛նչ երջանկութիւն եւ մխիթարութիւն, որ դարերու ընթացքին միշտ ալ ունեցած են մէկը Ուլուհոճեան ընտանիքէն, որ՝ ըստ Հայր Սրապիոն Ուլուհոճեան Արքայօր՝ կը սեռին Պահլավունի մեծ իշխանական տոհմէն։ Յարութիւնը մանկութեան օրերուն լաւ ձայն ունէր եւ կ'երգէր հայերէն երգեր, ու ես չէի ուզեր արգիլել, մինչեւ որ օր մը Հաճի պէ-

կոն ըսաւ. «Արդիլէ՛ Յարութիւնի, որ այդպէս չերզէ». այն սպաւ-
ւորութիւնը ունեցայ որ չէր ուզեր թէ դրացի թուրքերը բամբասեն
զինքը տկարութեան եւ հայասիրութեան մեղքին մէջ, երբ իրենց պե-
տութիւնը յայտարարած էր Հայութիւնը թուրքին թշնամի: Ես չէի
կրնար Յարութիւնին ըսել թէ ա՛լ մի երզեր հայերէն երզեր, մա-
նաւանդ Կիլիկիոյ ջարդին նուիրուած «Կոտորածն անգութ»ը, եւ
խնդրեցի քեռկինէս որ Յարութիւնը կանչէ եւ խրատէ որ զրոյշ ըլլայ:

Մէհմէտ աղային հետ հանդիպեցանք շրջանի թուրք դիւզերը,
ուր ամէն տեղ ես դժուարութիւններ ունեցայ տեղական թուրքերուն
եւ իրենց գաւազներուն հետ: Ասոնք բոլորը իրենց հայրերուն ու մայ-
րերուն հետ սորված էին կողոպտել, ջարդել եւ վայրագ ընալուներու
յաղեցում տալ առանց դիմադրութեան, մինչ հիմա թուրքի մը հետ
կը պտտէր հայ մը, լաւ հալուած, ողջ ու առողջ եւ պաշտպանուած
այս թուրքէն, չէին կրնար հասկնալ կամ մարսել: Ամէն անգամ որ
կը վերադառնայինք տուն՝ կը նկատէի որ Մէհմէտ աղան աւելի եւ
աւելի կ'իյնար ծանր խոհերու եւ մտածմունքի մէջ: Երեկոյ մը ըսաւ.
«Յովհաննէս, իսլամ չե՞ս ըլլար». ըսի՝ «Հաճի աղայ, հայ չմնաց
եւ ամէն մարդ պիտի ուզէ իսլամանալ. ես ո՞վ եմ որ չէ ըսեմ, բայց
կը մտածեմ որ եթէ այս օրերուն ըլլամ, պիտի ըսեն՝ Հաճի Մէհմէտ
աղան ստիպեց եւ սուտ իսլամ դարձուց. ստիկա քեզի աւելի պիտի
վնասէ քան օդուտ տայ, բայց նորէն ինչ որ կ'ըսես՝ այնպէս թող
ըլլայ»: Գիտէ՞ք ինչ ըսաւ ան. մենք հաւատք ունինք ձեր Յիսուսին,
դուք ինչո՞ւ չէք հաւատար Մէհմէտ մարդարէին: Ես չէի դիտեր ի՞նչ
պատասխանել, ու դառնալով իրեն ըսի, թէ ես շատ ծանօթ չեմ բայց
լսած եմ որ Հայերը կ'ըսեն թէ Յիսուսը առանց Մէհմէտ անունը տա-
լու՝ ըսած է թէ իրմէ ետք սուտ մարդարէններ պիտի դան, մի՛ հա-
ւատաք: Հաղիւ այս խօսքը ըսած, իսլամը իրար անցած՝ ծանր շեշտ
մը իր ձայնին մէջ, «թէօպէ սէօյլէ» կը կրկնէ, «թէօպէ սէօյլէ»:
Հաճի աղայ, «հաղար թէօպէ», ես չըսի, ըսի միայն թէ կ'ըսեն, ու-
ղեցի քեզի պատասխանել: Ի՞նչ դառնութիւն, այս խաւարին, այս
ջարդին, այս տգիտութեան մէջ աշխատիլ վիճել թուրքի մը հետ՝
կը նշանակէ տղէտ ըլլալ, յիմար ըլլալ, ու ձայնս կտրեցի:

Յաջորդ երեկոյ հասկցայ որ Ներկիլ պաճըն ըսած է հարսին, որ
այսուհետեւ նեմերան պիտի պահես Յովհաննէսին հետ եւ ինձի պի-
տի ամուսնանաս. յայտնի էր որ չէր ուզեր դիտցնել, սակայն ինձի
կը նայէր կասկածանքով եւ թերեւս սխալած էր որ զիս բերած էր
հետը եւ առած իր պաշտպանութեան տակ: Այդ օրերուն ակամչս
հասաւ որ տեղացի թուրքերը ձիերը պիտի տանին Ս. Յովհ. ակը
լողցնելու համար, եւ այդ արարողութեան ընթացքին զիս սպաննեն.

այս խօսքերը թերևս կ'ընտելին՝ հասկնալու համար Հաճի աղային վերաբերումը ինձի հանդէս :

Մէկ երկու օր ետք, դիւղին մէջ հանդիպեցայ Եղիա Ծմբիկեանին՝ որ պատմեց թէ իր եղբորը եւ հօրեղբոր որդւոյն Մելքոնին աւերձանակները թաղուած են Շոշի մօտերը, եւ թոմու Հասանը, որ եկած ու նստած էր իրենց տունը, շատ չարչարանքներէ ետք սպաննած էր այրելով իր քոյրը եւ իրենց ալ չարչարանքներ տուած՝ այդ զէնքերուն համար, բայց ինքը մերժած էր՝ ըսելով թէ չի դիտեր : Ես խնդրեցի իրմէ որ ընկերակցի ինձի եւ մենք երթանք այդ զէնքերը բերելու, թերևս պէտք ըլլան մեզի : Կէսօրէ ետք մենք ուղղուեցանք դէպի Շոշի ջուրերը . տեղ տեղ հանդիպեցանք դաղթական քիւրտներու, թուրք հովիւներու եւ վերջապէս մէկ ժամէն հասանք տեղը : Եղիան արթուն եւ ուշիմ էր, չէր մոռցած տեղը, թէեւ երկու անգամ կարծեց թէ հանած են, որովհետեւ նշմարեց թէ մարդիկ եկած փորած են, բայց վերջապէս դուրս բերինք երկու Գոլդ ատրճանակներ, 400 փամիուշտով . սակայն ինչ ալ ըրինք՝ չկրցանք բանալ : Ես ըսի՝ թերևս մէջը դնդակ ունին, եթէ կրակենք՝ կրնայ ըլլալ որ բացուին . եւ իրապէս ալ երբ դնդակը քաշեցինք՝ պայթեցաւ եւ սկսան աշխատիլ : Ոգեւորուած, Եղիային հետ միասին կարծես յաղթական վերադարձանք դիւղ . այս զէնքերէն մին հազուստիս տակ կը պահէի, աջ կողմի դրսպանս ալ պատուելով, այնպէս որ երբ ձեռքս դրսպանս տանէի՝ անմիջապէս ատրճանակին վրայ կ'ըլլար . իսկ միւսը պահեցի միւս զէնքերուն հետ, մեր նախկին պահեստին մէջ :

Երկու օր ետք, այս նոյն թոմու Հասանը կու դայ եւ զիս կը կանչէ Գարրիէլ ամոյենց տունէն ու կը տանի զիս դիւղին ծայրը, քեռոնցս տան թթենիի ծառերուն առջեւ : Ես կը նկատեմ վտանգ մը, որ այս մարդը թերևս Եղիայէն հասկցած էր կատարուածը ու եկած է հաշիւ պահանջելու : Այս թուրքը, նախ քան պատերազմը, Ամբրիկա դացած եւ վերադարձած էր . քանի մը անդամներ Մէլքէի ճամբուն վրայ հանդիպած էր ինձի եւ քանի մը անդրերէն սորված բառերը կը կրկնէր եւ ինձի հետ բարեկամութիւն մը կարծես կը մշակէր . մինչեւ այդ չէի դիտեր թէ այս մարդը այդքան վատ տաճիկ մըն էր, մինչեւ որ Եղիան պատմեց . հետագայ վիկյուլթիւնները հաստատեցին որ անիկա արիւնարբու եւ կատաղի թուրք մըն էր, որ շատ անոյշ խօսիլ դիտէր եւ ես պատրաստ էի իր ամէն շարժումին : «Է՛հ, այս ի՞նչ աշխարհ մնացինք, դուռ դրացի դացին, այս այգիները, այս հողերը բոլորը քեզի մնացին . հիմա ժամանակն է որ ամուսնանաս, տուն տեղ ըլլաս թուրք աղջկան մը հետ . երբ ամուսնանաս՝ այս մեծ տունը կ'առնես, երջանիկ ու հարուստ կեանք մը կ'ունենաս . ես շատ տարիներէ կը ճանչնամ քեզ եւ կ'ուզեմ որ երջանիկ ըլլաս :

Եթէ կ'ուզես, ես ալ քեզի քիւրվա կ'ըլլամ, մէկ օրէնքով, մէկ կրօնքով, մէկ աղօթով կը մեծնաս ու նորէն այս տանը տեղը կը բռնես. ես շատ տարիներէ է որ քեզ հաւնեմ եմ, դուն ալ դիտես, երբ պղծատիկ տղայ էիր՝ քեզի հանդիպելու անգլերէն կը բարեւէի, դուն ալ ինծի կը պատասխանէիր. վա՛յ պապամ, ի՛նչ օրեր էին. ինչ որ է, նորէն լաւ օրեր կը դառնան, երբ մենք սա մեր թշնամիներուն յաղթենք: Ես մեր դիւղի մուլային պիտի ըսեմ որ մտքին մէջ ունենայ լաւ աղջիկ մը եւ Եփա ընէ, դուն իրական բարեկամ մըն ես. կը յիշեմ մեր հանդիպումները պատերազմէն առաջ եւ լաւ տպաւորութիւններ ունիմ»: Բայց ես ըսի թէ բան մը ընելու իրաւունք չունէի, ես չէի կրնար ամուսնանալ առանց իմ պաշտպանիս եւ հոգատարիս՝ Հաճի Մէհմէտ աղայի կարգադրութեան. սրտով կ'ընդունիմ քու բարեկամական թելադրութիւններդ եւ միտքս կը սրահեմ. քեզի պէս լաւ աղայի մը ես դիտեմ որ երբ դիմեմ՝ դուն կրցածդ պիտի ընես ինծի օգնելու համար: Հիմա պէտք է երթամ, որովհետեւ այս ատենները Հաճի աղան ինծի կը սպասէ, եւ քանի որ ինծի կը վստահի՝ ես ալ կ'ուզեմ իրեն ծառայել հաւատարմաբար, իմ կրցած չափով: «Ձըսի՞ արդէն թէ ինչ լաւ տղայ մըն ես», ըսաւ կէս խնդուկով, բայց աչքերուն մէջ բարկութեան հուրը կը բորբոքէր. աղօթսով անցաւ ու դնաց: Իր ծրագիրը վախցաւ գլուխ հանել եւ ինքզինքը չուզեց վերտանգել. կ'երեւի աւելի անվտանգ միջոցներու վրայ սկսաւ խորհիլ:

Երկու օր ետք լուր տուին որ ընդհանուր Միւտիւրը, որ քաղաքացի մըն էր, զիս պաշտօնատուն կը կանչէ, իրեն տեղեկութիւն տալու՝ թէ ո՛ր արտը կը պատկանէր Հայերուն եւ ո՛րը տեղացի թուրքերուն. ասիկա ինծի հանելուկ մըն էր. կառավարութեան մարդիկն էին մեր դիւղի աղաները, ալ ինչո՞ւ պէտք պիտի ըլլար ինծի հարցընելու այդ կարգի պատասխանատու դործի մը համար... բնական է չէի կրնար խուսափիլ: Հաճի աղան ալ չէի դիտեր ո՛ւր կորսուած էր, եւ ես ստիպուած՝ դացի, մտածելով որ անորոշ բաներ ըսելով կ'աղատիմ, թէ ես ծանօթ չեմ արտերուն, դիւղի աղաները աւելի լաւ դիտես. անոնց հետ վիճել չեմ ուզեր: Բայց պէտք էի երթալ. դիտէին որ հոգ եմ եւ թերեւս Հաճի աղային ալ նոր դժուարութիւններ չէին հաներ:

Երբ հասայ աղբիւրին գլուխը, նկատեցի որ Միւտիւրը՝ քանի մը աղաներու հետ, կայանէն կը հեռանայ. Մէհտէսի Յակոբենց տունն էր պաշտօնական կեդրոնը, ուր նստած էին նաեւ տասներեք ժամտարմաներ: Միւտիւրը մատով ցոյց տուաւ որ երթամ պաշտօնատունը եւ սպասեմ. երբ դռնէն ներս մտայ, ժամտարմաներէն մէկը հրամայեց ինծի որ ելլեմ վերէն կուժով ջուրը բերեմ իրենց՝ խմելու համար. ասիկա ինծի զարմանալի թուեցաւ. երբ հայ կիներ ու

տղաք զերիի պէս կը ծառայէին իրենց, եւ հետերնին կապ մը չունէի, ինչո՞ւ նման հրաման մը կը տրուէր ինծի: Մտածեցի թէ զիս կ'ուզեն նեղել եւ փորձել ու առիթ ստեղծել որ ծեծեն կամ ուրիշ նեղութիւն տան կամ հայարտութիւնս կը փորձեն: Ես ինծի ըսի. «դուն ջուռ անխելքութեամբ ինկար այստեղ եւ հիմա մտածէ թէ ի՞նչպէս պիտի ազատիս»: Նեղ սանդուղներէն բարձրացայ երկրորդ յարկը, երկու հայ կիներ կը խօսէին իրարու հետ. հարցուցի իրենց թէ ջուրը ո՞ւր է. ցոյց տուին թէ ճակատի սենեակն է, բայց չըսին թէ հոն մարդ կայ: Ես ներս մտայ եւ կուժը վերցնելու վրայ էի, երբ տեսայ սէսիքին վրայ երկնցած 35 տարեկանի մօտ հսկայ մարդ մը. ձայնեց թէ ջուրը մի՛ վերցներ, այլ քովս եկուր. ոտքի ելաւ, մօտեցաւ ինծի եւ ըսաւ թէ վրաս պիտի նայի թէ զէնք կա՞յ: Բռնեցի թեւերը, ինք բռնեց թեւերէս եւ սկսաւ պոռալ որ «սուրտայ սիւահ վար» (հոս զէնք կայ): Չեմ գիտեր ինչպէս իմ ամբողջական ուժովս այնպէս մը ցնցեցի եւ հրեցի, որ աղմուկով ինկաւ դետին, ոտքերը բարձրացան վեր եւ ես ձեռքս զէնքիս վրայ՝ այդ նեղ սանդուղներէն վար վազեցի: Վարը նստած ժանտարմաները անակնկալի եկած՝ չչարժեցան. ես անցայ իրենց մէջէն, նշմարեցի հեռուէն որ դիւղի արարներէն Եռսուֆը կը պոռայ «տուղն օ Փէտայի», հայհոյելով եւ աղմկելով: Ես կտրեցի աղբիւրը, մտայ անտէր տուներուն մէջ եւ կէս մը քանդուած բակերէն սողոսկեցայ այն թաքստոցը, ուր կար բաւական զէնք ու փամփուռ. քիչ մը հանգստացայ եւ մտածեցի պահ մը որ այստեղ ունէի ինքզինքս պաշտպանելու համար զէնք ու ռազմամթերք: Ժամերը կը սահէին, ոչ մէկ ձայն, ոչ մէկ աղմուկ. կը դարմանայի թէ ի՞նչպէս կրնայ ըլլալ որ չեն հետապնդեր զիս: Երկու անգամ կ'երթան Հաճի աղային քով, իմ մասիս կը հարցնեն, կը զուլաջնեն զինքը որ զէնք ունիմ եւ պէտք է կառավարութեան յանձնէ զիս: Հաճի աղան ալ կը կանչէ քեռկինս, իմ մասիս կը խօսի եւ կը պատմէ պատահած դէպքը, թէ հիմա զիս կը փնտռեն եւ թէ զինք պատասխանատու կը բռնեն. պէտք է որ զիս յանձնէ: Քեռկինս կ'ըսէ թէ չեմ հաւատար, բայց ո՞ւր որ է պէտք է հոս դայ եւ իրմէ լսէ պատասխանը. վստահ եմ թէ դուն աւելի լաւ դատաւոր ես:

Սարոն գիտէր թաքստոցս. եկաւ պատմեց մանրամասնութիւններով. Սարոյին ըսի թէ ինծի բերէ մեր Վերոնին այդ օրը պարտէզին մէջ դրած ժանդոտ դանակը, եւ ես երբ Հաճի աղան դայ, ժամ մը վերջ կ'ելլեմ մինակս ու կը տեսնեմ զինք: Շատ չանցած ես կը բարձրանամ իր տեղը եւ սարսափ կեղծելով, լացակումած, Միւտիւրին կը պատմեմ այս վերի պատահածը. թէ զէնք չունէի քովս, բայց միայն այս ժանդոտ դանակը, որ Վերոնի կալին քով, հողին մէջ գտած էի: Նպատակս էր մաքրել զայն եւ քեզի յանձնել. բոլորովին

անհող՝ դրսւանս դրած գացի քովերնին. երբ ըսին թէ քովս զէնք կայ եւ կ'ուզեն փնտռել, մէկէն սարսափի մատնուեցայ. այն մարդը՝ որ կ'ուզէր բռնել զիս, հրեցի եւ փախայ, վախնալով որ պիտի ըսեն թէ զէնք կը պտտցնեմ հետս. անմիջապէս չեկայ որ ժամանակ ունենաս զիս լսելու. ես թաքնուած էի Հաճի Ախոյի տան մէջ. հիմա ուրախ եմ որ քեզ մինակ դտայ. եթէ կ'ուզես որ զիս սպաննեն, դուն սպաննէ, անոնց մի՛ յանձներ: Հաճի աղան ուշադիր մտիկ ըրաւ. չեմ կըրնար ըսել թէ ինծի հաւատաց կամ ոչ, բայց իր խօսքերէն եւ արտայայտուելու ձևերէն հասկցայ որ զիս պիտի չպաշտպանէր եւ առաւօտեան զիս պիտի յանձնէր կառավարութեան, իր վրայ կասկած չհրաւիրելու համար, թէ վտանգաւոր հայ մը կը հովանաւորէ: Ես այլեւս ընեկիքս պէտք էի որոշել. չէի մերժած եւ եկած էի իրեն օգնելու՝ ամէն վտանգ նկատի ունենալով. բայց ես աւելի հաւատք ունեցած էի իր քաջութեան վրայ...: Գիշերով փախայ նորէն Մէղիք սպասելով Սուրսուրի վանքին վերերը, մինչեւ որ մարդիկ սկսան շարժիլ. ես ալ հեռուէն հեռու մտայ քաղաք ու ինծի ծանօթ ճամբաներով հասայ Գրիսթինէնց տունը. հոն կուշտ փորով նախաճաշ մը ըրի եւ ինքզինքս դտայ հարազատներու մէջ:

Քանի մը օր ետք նորէն քնուիս հետ շուկայ իջանք. երկու ոստիկաններ մէկէն մեր ետեւէն ու առջեւէն բռնեցին մեզ եւ ուզեցին բանտ առաջնորդել. սկսանք վիճել եւ ջանալ համողել այս մարդիկը՝ թէ մեզ նոր արձակեցին իրրեւ կաթոլիկ, եւ մենք Դատեմցի ենք, եկանք շուկայ քիչ մը հաց զնելու, դուք սխալմունքի մէջ էք եւ մեր հասցէն տուինք, սխալ, ըսելով թէ մեզ հոն կրնան դտնել որեւէ տեսն: Չեմ կրնար ըսել թէ ի՛նչ պատահեցաւ, իրարու հետ քիչ մը փսփսացին եւ մեզ աղատ ձգեցին: Բախտաւոր էինք որ կարողացանք ազատիլ եւ որոշեցինք բաժնուիլ իրարմէ. մօրեղբայրս զնաց Չնկուչ պաճուս տունը, ես մնացի Գրիսթինէի մօտ՝ Ծուշանին բռնած տան մէջ: Հոս կ'ապրէր Բալուցի հայ աղջիկ մը Եսթեր անունով, որուն հայրը բռնուած տարուած էր, եղբայրը Սմերիկա կը դտնուէր, մայրը աքսորուած էր եւ ինքն ալ բռնի կերպով ամուսնացած թուրք ժամտարմայի մը հետ, որ հեռուէն հեռու քանի մը անգամներ տեսած էի: Ժամը օր առտնները նորէն փորձուեցայ դուրս ելլել. շարունակ մըլտքիս առջեւ էր ցերեկուան մեր բռնուիլը, եւ հետաքրքիր էի զիտնալու թէ արդեօք մեզի հետեւող եղա՞ւ. կը մտածեմ որ թերեւս աւելի լաւ է դուրսը ըլլալ, քան տան մէջ բռնուիլ:

Մինչ այդ անդրադարձայ որ Ձուլումեանենց տունէն աղջիկ մը իր տան պատուհանները զարնելով կ'ուզէ ուշադրութիւնս դրաւել. շուրջս նայեցայ եւ նկատեցի որ ոստիկանները սկսած են բռնել հայերը եւ աքսորի քշել. այդ աղջիկը ինծի նշան կ'ընէր որ ներս մտնեմ

որպէսզի չբռնուիմ. նկատեցի նաեւ որ Խուլուցի Մարտիրոսը գլուխ մը կազարմր առած է եւ շուարած կանգնած՝ թուրքերու կողմէն բացուած որբանոցի դրան վրայ, ուր ալ հաւանօրէն բռնուեցաւ եւ տարուեցաւ. լսելովս այդ երեկոյ իսկ քշուեցաւ սպանդանոց ուրիշ հարաւորներու հետ:

Ես տան մէջ փակուած մնացի եւ շուրջս սկսայ նայիլ. տեսայ որ Շուշանին համար բերուած քանի մը սարբինաներու մէջ պահուած կայ մտմտան եղող ամուլին կիներ՝ Խաթուն պաճըն, որ աղբականն էր Շուշանին. կ'երեւէի արտօնուած իրեն կողմէ՝ իր հետ ապրելու համար: Խաթուն պաճին մայրն էր գիւղի ընկերներէս Միհրան Վանէսեանին, որ այդ ատեն իր հօրը Եղոյ ամոյին հետ կ'ապրէր Ութթըրթաունի մէջ. դուրս ելաւ սարբինաներու տակէն, «վա՛յ օղուլ, ձագս Յովհաննէս, բացադանչեց եւ ըսաւ թէ դուրսը նորէն սեւեփեաք կայ, վախէս փախայ, մտայ այս փայտերուն տակ. եկո՛ւր, եկուր դուն ալ մտիւր այդ փայտերուն մէջ, դուրս մի՛ ելլեր, ձագս»: Նայեցայ խաթուն պաճըն, որուն ահաւոր պատմութիւնը լսած էի, թէ ինչպէս տարած էին զինքը առաջին աքսորին, իր աչքին առջեւ խոշտանդած էին իր աղջիկ դաւակները, ծեծած զինքը, բայց վէրքերը թեթեւ ըլլալով՝ ժամանակ մը վերջ արիւնլուայ վեր ելած էր եւ քալած իրր թէ դէպի աղատութիւն, եւ ահա դարձեալ կը տեսնէիր աչքերուն մէջ մահուան սարսափը...: Գրկեցի, հանդարտեցուցի զինքը, բան մը կ'ըլլայ, մի՛ վախնար ըսելով. հիմա սկսած էի յոյս տալ մէկու մը, մինչ նոյն այդ յոյսին եւ քաջութեան պէտք ունէի նաեւ ես: Զէնքս ձգած էի Քրիսթիներէի տունը, որ քայլ մը հեռու էր. հիմա կարծես աշխարհ մը հեռու կը մնար: Բաւական վերջ ներս մտաւ Նսթերը, աչքերը լեցուած եւ ըսաւ. «Կը խնդրեմ որ ձգէք երթաք, որովհետեւ շուտով ամուսինս կու գայ եւ ոչ միայն ձեզ տեսնելով բռնել կու տայ, այլ կրնայ նաեւ ինձի ալ բարկանալ որ իրմէ դադունի հայեր կը պահեմ, ու զիս ալ կը յանձնէ կարաւանին»: Խնդրեցի Նսթերէն եղբոր պէս եւ աշխատեցայ համոզել որ ես այլեւս այնտեղ չեմ կրնար մնալ, միայն սպասեմ որ մթննայ, որպէսզի նորէն անցնիմ երթամ Թատմայ լեռները. եթէ հիմա երթամ՝ ոտքս դուրս դրածիս պէս, պիտի բռնեն ու տանին. իսկ երբ մութը կոխէ՝ պատեհութիւն մը ունիմ լեռները իյնալու, ընկերներու հանդիպելու, զէնք զտնելու եւ աստե՛ն մը եւս պաշտպանուելու: Խնդրեմ, սիրելի Նսթեր, դուն մեզ հոս ձգէ եւ զնա՛ իրր թէ չես գիտեր թէ մենք հոս ենք: Լսեց ինձի, գլուխը կախեց եւ ըսաւ. «Այն ատեն թող Խաթուն պաճըն երթայ. ան վախէն կրնայ ձայն ու աղմուկ հանել եւ քեզ վտանգել»: Ըսի. «Զէ՛, Նսթեր, Խաթուն պաճին իմ մօրս նման է, ինչ որ պիտի ուզէի որ իմ ընկերս ընէր իմ մօրս, ես ալ պատրաստ պէտք է ըլլամ ընելու

իմ ընկերոջս մօրը, որ այսքան տառապած է: Դու՛ն բանալիով զոցէ դուռը ներսէն եւ անտեղեակ մնացիր, եւ երբ մթննայ՝ ես կ'անցնիմ կ'երթամ եւ ինքեան պաճին կը մնայ հոս»: Շնորհակալութիւն յայտնեցի, մնաք բարով ըսի այդ համակրելի եւ տառապած աղջկան. ինք անցաւ ներս, մենք ինքեան պաճուն հետ մնացինք ախոռի բաժնին մէջ, որ տրուած էր Շուշանին հող ապրելու համար Գրիսթինէի դըրացնութեան մէջ:

Երբ բաւական մը մութը պատեց չորս դին, սկսայ մտածել թէ ինչպէս կ'ընայի դուրս դալ, անցնիմ Գրիսթինէին, անկից դէնքս առնել եւ նորէն դիմել լեռները: Գրիսթինէին տալովը հետ ամուսնացող հարիւրապետը եւ Եսթերին հետ ամուսնացող ժանտարման կը խօսէին տանիքին վրայ իրարու հետ հայութեան կացութեան մասին, նոր հաւաքուածներուն մասին, իրենց մասին եւ աշխարհի մէջ վաղուան դալիքին ու իրենց ալ անորոշ վիճակի մասին, մինչդեռ ինծի համար ամէն մէկ վայրկեան կենաց ու մահու խնդիր էր, մինչ իրենց համար «պարսպ վախտի լախ լախ»: Ես որոշեցի ախոռին մէջ դըռնուած բուխբիլի ծակէն ելլել տանիքը, այնտեղէն ալ վար ցատքել. սկսայ այդ աշխատանքին, առանց նկատի առնելու որ այդ կերպով հաղուստներս մուրերուն կը քսուին: Քրտինքներու մէջ կը լողամ, չեմ ալ դիտեր թէ ճմուռելով պիտի կարողանամ՞ դուրս դալ: Ինքեան պաճին ուսերը տուաւ ինծի, ես ալ աշխատեցայ որ շատ ծանրութիւն չըլլամ իր վրայ, մանաւանդ չդպչիմ իր վէրքերուն, որ ստիպուած ցաւի տակ պոռայ ու կանչէ: Վերջապէս շատ չարչարանքներէ ետք դուրս եկայ տանիքը, ուր այս մարդիկ տակաւին խօսակցութիւնը կը շարունակէին: Երկնցայ տանիքին վրայ քրտինքներու մէջ. դուրսի դով օդը եւ քիչ մըն ալ հովը, որ պէտք էին ուրախացնել զիս, սկսան սառի պէս պաղեցնել եւ կարելի է ըսել քիչ մնաց որ անշարժութեան մատնուէի: Շատ չանցած վար իջան իրենց տուները. ես տանիքէն իջայ փողոցը եւ քայլ մը հեռուն վաղեցի մտայ Գրիսթինէինց տան ետեւը «հանդստեան» տունը: Մի քանի անգամ մօտեցայ դրան, կը լսէի աղմուկ, տղու մը լացը, բայց Գրիսթինէի ձայնը չէի լսեր եւ մտահոգ էի: Այսպէս բաւական սպասումէ ետք, լսեցի որ Գրիսթինէն իմ անունս կու տայ. դուռը բացի եւ տունէն ներս մտայ: Այնտեղ բաւական մարդիկ եւ կիներ հաւաքուած էին, եւ կը յիշեմ որ պղտիկ տղայ մը վախի կամ անօթութեան պատճառով կու լար. կ'ուզէին լռեցնել. տարիներ ետք հասկցայ որ Վահան Գայլեանին մայրն էր, որ այդպէս աղմուկով կու լար: Վահանին հետ ապաստանած էր հոն եւ ինչ որ կ'ընէր՝ չէր յաջողեր խեղճ տղան հանդարտեցնել. Գրիսթինէն զիս կը տանի վար, մարանը, հանել կու տայ հաղուստներս, ջուր կը բերէ որ մաքրուիմ այս փոշիներէն եւ մու-

րէն: Կը բացատրէ որ քանի մը անգամ հանդիպած են Եսթերենց Շու-
չանին եւ վերջապէս կրցած են հասկնալ որ առանց զինք տեսնելու
պիտի չմեկնէի: Վրայ եկաւ տալը, որ շատ ալ ուրախ չէր իմ վերա-
դարձիս համար. Գրիսթինէ անոր ներկայութեան ըսաւ՝ այսօր հոս
կեցիր, տեսնենք ինչ կ'ըլլայ եւ վաղը պէտք է անպայման հեռանաս:
Ես տառացի առի իր խօսքը եւ ըսի թէ վաղուան պէտք չկայ, այս
դիշեր իսկ կը մեկնիմ: Ասոր վրայ տալը ձեռք դնաց, վախնալով որ
յանկարծ ամուսինը կասկածանքի պատճառով վար չզայ եւ չտեսնէ
միւս փախստականները, որոնք տան մէջ հաւաքուած են: Գրիսթինէ
տուաւ դէնքս, 13 լաւաչ հաց, մէկ թաս ջուրի համար եւ խոշոր կտոր
մը շաքար. մարանին մէջ տեղաւորուած բողոզներէն մէկը վերցուց,
տակէն կափարիչ մըն ալ վեր հանելով՝ սանդուղները բացուեցան,
ուրտեղէն վար կ'իջնես, ըսաւ: Վարը պղտիկ պատուհան մը կը բաց-
ուի ջրհորի բերանը եւ ջրհորը կը բացուի պարտէզին մէջ: Կը մնաս
հոս, եթէ մենք քշուեցանք վաղը, ուրեմն Աստուած քեզի հետ. կը
վարուիս ինչպէս կ'ուզես, իսկ եթէ հոս մնացի, ես քեզի կ'իմացնեմ
երկտողով մը՝ վաղը երեկոյ կամ որեւէ ատեն որ կրնամ, ըսելու թէ
ի՛նչ կայ դուրսի աշխարհի մէջ եւ յետոյ կ'որոշենք մեր ընելիքը:
Այս ամէնը ինձի հրաշք կը թուէր, որ այս տունը շինողները որոշ
ծրագրով նախատեսած եւ պատրաստած էին. Կախ՛ս որ շատ մը
ուրիշներ, ճանչնալով դրացի թրքութիւնը, դարբնու ընթացքին չէին
նախատեսած եւ նման պատրաստութիւններով չէին ապահոված ի-
րենց ինչքը եւ կեանքը նման վտանգներու դէմ:

Գրիսթինէն զատ բոլորին համար ես եկած ու մեկնած էի այդ
դիշեր, հետեւաբար ոչ ոք դիտէր իմ մասիս. անհամբեր աչքս տնկած
եմ թիթեղէ դոյլին, որ կ'իջնէ ջրհորին մէջ ջուր վերցնելու եւ չի
կանգնիր իմ խուցի պատուհանին առջեւ, ուր երկնցած եմ փախաթի
մը վրայ: Երեկոյեան ժամը 10ին կը լսեմ որ դոյլը կը կենայ պա-
տուհանիս առջեւ, ձեռքս կ'երկարեմ, երկտող մը կը ստանամ եւ ու-
տելիք, ես աւելի երկտողը կը լափեմ քան թէ կերակուրը: «Այսօր
քաղաքը հանդարտ անցաւ. մայրդ ողջ է. նոյն տեղը տարած են քեռ-
կինը Սարոն: Մօրեղբորմէկը լուր չկայ. Հաճի պէկոն Սարոյին ետ
բերելու համար միջոցներու դիմած է, եթէ նոր լուր ստանամ՝ վա-
ղը կը դրեմ»: Գրիսթինէ:

Յաջորդ երեկոյեան նորէն ժամը 10ին դոյլին մէջէն առի երկ-
տող մը. «Վեր բարձրացիր, ես քեզ կը տեսնեմ ժամը 11ին»: Բար-
ձրացայ ջրհորէն վեր եւ ամէն անգամ որ ոտքս կը փոխէի՝ խոշոր
կտոր մը վար կ'իյնար եւ դիս ալ սարսափի կը մատնէր որ ահա այս
ջրհորին մէջ կրնամ իյնալ եւ խեղդուել, բայց ամենայն զգուշու-
թեամբ վերջապէս բռնեցի ջրհորին բերանը շինուած ծածքին փայ-

տին մէկ մասէ եւ վայրկեան մը լերջ նշմարեցի Գրիսթինէն՝ որ ձեռքով կը հասկցնէր որ կենամ եւ ինքը դադարով մը ոսպով ապուր սկսաւ կերցնել ինծի. այդ ոսպապուրին համը կը զգամ այս տողերը գերելու ասէն, եւ ի՛նչ երախտադիտական զգացումով կը լեցուիմ այս քաջազն ազջկան վրայ, երբ իր կեանքը, դաւալններուն կեանքը վտանգելով ոչ միայն պահեց զիս, այլ հողատարեց, պահպանեց եւ միջոցներ մտածեց եւ յաջողեցաւ զիս Տերսիմ փախցնել: Մինչ կը կերակրէր՝ կ'ըսէր թէ խօսք կայ որ Տերսիմցի քիւրտեր դրամով հայեր կը փախցնեն Տերսիմ. եթէ կ'ուզես՝ կը հետաքրքրուիմ եւ կը հասկնամ: Ես դրամ չունէի եւ մօրս ալ հասնիլ այդ պայմաններուն մէջ՝ անկարելի կը թուէր. Սարոյ քեռկինս ալ քշուած էր անծանօթ ուղղութեամբ եւ լուր չկար: Դրամի մասին մի՛ մտածեր, ըսաւ, ես կը դիմեմ Մամաս Խաջոյի կնոջ եւ ուրիշներուն ու մաս մը դրամ կը ճարեմ. միայն թէ քեզի պէս վտանգաւոր ճամբորդի մը հաւանութիւնը կ'ուզեն, որովհետեւ ոչ մի հաւաստիք չեն կրնար տալ, պարզապէս վտահուլթեան խնդիր է: Ես համաձայնութիւնս տուի եւ քանի մը օրէն պէտք էր պատրաստ ըլլայի: Մեկնելէս առաջ կ'ուղէի տեսնել Փեր Վաղիլը եւ Փեր Լուիզը, որոնք մինչեւ այդ օր կը պահուէին կառավարութեան կարգադրութեամբ Մէդրէի մէջ, գերմանական շէնքերուն մօտակայ տեղ մը: Առաւօտ մը ըսաւ՝ թէ Ներկիզ պաճուին ազջիկը՝ Խանըմ, եկած է քեզ կը հարցնէ, ըսե՞մ իրեն որ հոս ես. ըսի որ կ'ուզեմ տեսնել զինքը երբ մեկնումս կարգադրուի: Թեւով կառչած փայտին, եւ այն վախով որ թուրքերը կրնան արթննալ եւ կասկածիլ թէ այդ ուշ ժամուն ի՛նչ խօսակցութիւն տեղի կ'ունենայ եւ որո՞ւ հետ, շնորհակալութիւն յայտնեցի սիրելի Գրիսթինէին, քաջուեցայ ջրհորին մէջ ու իջայ մինչեւ իմ պատուհանս: Մեծ որոշում մը տուած էի. շտեկներ կային սակայն, որ կառավարութիւնը քիւրտերու մօտ լրտեսներ ունի, որոնք փախցնելու պատրուակով լուր կու տան կառավարութեան, եւ քիւրտերը իրենց բաժինը կը ստանան, ու այս պարագային ոչ մի հայ կրնար ազատիլ թուրքերու ձեռքէն: Միւս կողմէն կրնար շուտով ձմեռը դալ. մենք դժուար էր որ լեռները կարողանայինք ապրիլ, եւ արդէն կեանքին վրայ մեծ յոյս ալ չունենալով, լաւ ըրած էի որոշելով երթալ դէպի Տերսիմ. միւս կողմէ, հոս ալ, ջրհորի աւաղանին մէջ, վտանգելով Գրիսթինէի ընտանիքը, ոչ մէկ յոյս եւ ապագայ կը տեսնէի: Երկու օրէն եկաւ Խանըմը, պատմեց թէ քեռկինը տակաւին ետ չեն կրցած բերել, ինքը կը մնայ գիւղը նոյն պայմաններու տակ. Հաճի Պետոն ամուսնացած է Թաղուհին հետ. իրենք կը վայելեն նոյն պաշտպանութիւնը. մայրս կը մնայ Թէփէ գէօյ. քեռիս կը պահուի տան մէջ. հարսը՝ Յովհաննէսին տիկինը, ամուսնացած է էրթմիլիլ

Հաճիրին տղու՛ն հետ եւ դացած է էրթմնիկ... սկսաւ հեկեկալ... դժուար էր այս արտասուածքոր աչքերուն դիմանալ, առանց կարենալ դործնական օղուտ մը կամ խրատ մը տալու. յայտնեցի իրեն որ ես ալ քանի մը օրէն կը փախիմ Տերսիմ, չեմ դիտեր տեղ մը պիտի հասնի՞մ թէ պիտի բռնուիմ. եթէ կարողանամ ազատ անցնիլ, ես իրենց լուր մը կը հասցնեմ. ըսի որ այլեւս Աստուած ինչ որ ուզէ՝ այն կը պատահի եւ օր մը մենք նորէն թերեւս իրարու կը հանդիպինք: Խանըմը մէկն էր իմ հարազատներէս, որուն կրնայի մնաս բարով ըսել. այս աղջկան քոյրը՝ իմ սիրելի քեռկինս, որ ամբողջ դիտակից կեանքիս մէջ օգնած, քաջալերած, դուրդուրած եւ խնամած էր զիս, թերեւս մօրմէս աւելի, եւ ահա Խանըմին միջոցաւ կարծես թէ ուզէի Սարոյ քեռկինիս շնորհակալ ըլլալ իր կատարած բոլոր հոգատարութիւններուն համար: Ես քիչ մը սպասելէ ետք, վերջին անգամ ըլլալով դացի տեսնելու Փեր Լուկիլին եւ Վաղիլին, որոնք կարելի է ըսել թէ առանձնացած կ'ապրէին տան մը մէջ: Երկտող մը առի իրենցմէ Տրապիղոն հասցնելու պատուէրով, ու երբ իրենց օրհնութիւնը առի եւ անլիտանդ վերադարձայ տուն, յայտնեցի որ նոր կու դամ եւ կը պատրաստուիմ անցնելու Տերսիմ, որպէսզի տնեցիները, մանաւանդ տալը, չկարծեն որ այդքան ժամանակ ես պահուած եմ իրենց տունը, այդ զարմանալի թաքստոցին մէջ, որ շինուած էր նախատեսուած, ծրագրուած եւ խելացի կերպով, բայց դժբախտաբար չէր օգտագործուած մինչեւ այդ օրերը եւ ահա ես առաջինը եղայ անով փրկուողը. բոլոր հոգիովս շնորհակալ եղայ զայն շինողներուն: Հագուստս եւ ատրճանակս վերցնելով, երեկոյեան ժամը 10ին ատենները առաջնորդուեցայ Գերմանացիներու շէնքերէն մէկուն անկիւնը, ուր հետզհետէ հասան չորս երիտասարդներ՝ Նազարէթը, Միսաք Զուլումեանը եւ, ի՞նչ զարմանք, Յարութիւն Մ. Թադոսեանի Խուլուցի դաւակը՝ Պարոն Բիերը, իմ ընկերս, որուն հետ անհուն ուրախութեամբ փախուէրով մը գրկուեցանք իրարու...: Շատ չանցած, նշմարեցինք մեր առաջնորդը, որուն անշուղհ հետեւեցանք վերջին անգամ պատերուն տակ մնացող մեր հարազատներուն մնաք բարով ըսելով: Ի՞նչքան երջանիկ էի եւ ի՞նչպէս տխուր... բոլորը կը պարտէի Քրիսթինէին, անոր գուրգուրանքին, պաշտպանութեան, հոգատարութեան եւ քաջութեան, որուն վրայ կը հիանայի:

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թ.

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ՏԵՐՍԻՄ

Հեռուէն բարձրահասակ լեռնցիւն կը քայլէ, մենք՝ չորսերնիս, վաղելով հազիւ կրնանք իրեն հասնիլ. ամէն անգամ որ կը փորձենք բան մը հարցնել՝ մատները շրթներուն կը տանի պատուիրելու համար որ չխօսինք: Այսպէս լռակեաց կը քալենք ժամերով. վերջապէս լեռնալանջի մը կողքին կը նստինք, ինքը լուցկի մը կը վառէ, սիկարէթ մը կը քաշէ, բաներ մը կը խօսի՝ որ մեզմէ ոչ ոք կը հասկնայ. բայց ըրած չարժումներով եւ ձեւերով մեզի կը հասկցնէ թէ տակաւին վտանգներէ ազատած չենք, բայց բաւական ապահով հեռաւորութիւն մը կտրած ենք. սակայն ես կը դարձանամ որ ի՞նչպէս մենք երիտասարդ տղաքս արդէն յոյնած ենք, իսկ այս բարձրահասակ ձերուներն յոյնութեան ոչ մէկ նշան ցոյց կու տայ. այս մարդուն մէջ, որ կը թուի 70ը անց, բարեձեւ, ուղիղ մազերով, երկար պէխերով եւ ուժեղ ու քաջ մարդու մը տպաւորութեամբ, չեմ տեսներ դադանային չարութիւն մը, ընդհակառակն, կարծես համակրելի բարութիւն մը կայ աչքերուն մէջ եւ երբեմն երբեմն շրթունքներէն ժպիտներ կը հոսին: Բնութեան մէջ ծեծուած, ամրապինդ ու ջղուտ քիւրտ մըն է, սուր ականջներ ունի, եւ քիթովը կրնար շրջապատը զգալ որսորդի շան նման: Դէմքին վրայ կ'երևին անցած վայրերուն իր վրայ ըրած ազդեցութիւններու պատկերները: Վերջապէս դրեթէ չորս ժամ վաղելէ ետք, մէկ անգամ փոքրիկ դադար մը կ'առնենք. փոսի մը շուրջ բոլորուող բարձրութեան մը կողքին կը տեղաւորէ մեզ եւ կ'ըսէ որ հոս սպասենք, մինչ ինք մեզ տանող աղային պիտի հանդիպի եւ պէտք եղած կարգադրութիւնը պիտի ընէ:

Ժամերը կը սահին, քիւրտը չ'երեւիր եւ ոչ ալ մեզ փախցնող աղան. դիտենք թէ Գանկոբ Զատէ աղային թոռն է, Տերսիմի ամէնէն նշանաւոր ցեղապետներէն մէկը: Ասիկա անորոշ տեղեկութիւն մըն էր մեզի տրուած, դուցէ մեզ խարելու համար: Ու կասկածը կը սկսի մեծնալ մեր մէջ. չորս տղաքս իրարու քով կու դանք եւ կը հասկընանք որ Միսաք եւ ես ատրճանակ ունինք, իսկ Յարութիւնը եւ Նազարէթը առանց զէնքի են, ու կը մտածենք թէ ի՞նչ պաշտպանութիւն կրնանք ընել եթէ այս քիւրտը փոխանակ մեր աղային՝ խումբ մը ռուսիկաններու յանձնէ. մենք դէրքեր կ'որոշենք եւ կը շարունակենք անհամբեր սպասել:

Առաւօտեան ժամը 5ին կու դան եւ մեզ կը հրաւիրեն վարը, Եփրատի ափին ու լաստերով կապուած մակոյկի մը մէջ կը դնեն. իրենցմէ երկուքն ալ մէջն առնելով՝ մեզ կը փոխադրեն Տերսիմի մասին մէջ. ասպ կը վերադառնան ու կը բերեն քանի մը ընկերներ ալ, որոնք իրենց հետ Մէզիբէ եկած են, բոլորն ալ զինուած, մօտ տասներկու հոգի: Եւ իսկապէս մեզ տանողը Մահմէտ աղայի հօրը 19 տարեկան Եոսուֆն է: Մէհմէտ Ալի ալային տղան շարժուն, երկար հասակով, պիւրերը հազիւ մրոտած, կայտառ արծիւի ձագ մը կամ բաղէ մըն է, որ կարծես միւսներուն զինուորական հրամանատարն ըլլայ: Իրեն հետ է իր աղբականը՝ Պէքիր աղայի տղան, աւելի տարիքոտ, թերեւս 30 տարեկան, կարճ հասակով. իր ուսին ունի պետական զէնք մը: Եոսուֆ կ'ուզէ եւ կ'առնէ զէնքը, իրր թէ փորձելու համար թէ ինչպէս կը դործէ. հատ մը օդին մէջ կը պարսկէ եւ ձայնը կ'արձագանդէ լեռները: Քանի մը վայրկեան ետք կռիւ մը կը սկսի երկուքին միջեւ. Եոսուֆ, հակառակ իր տարիքի պզտիկութեան, կը յարձակի Պէքիրի տղուն վրայ, կը նետէ գետին, կը սկսի հարուածել. քովի մարդիկը չեն միջամտեր: Իմ մտահոգութիւնս ալ այն է որ գետէն նոր անցանք եւ շատ հեռու չենք կրնար ըլլալ Եփրատի վրայի պահակատուներէն, եւ այս երկուքին կռիւը կրնայ պատճառ ըլլալ մեր բռնուելուն: Կը վազեմ եւ թուրքերէն կը խնդրեմ որ Եոսուֆ խնայէ եւ վերջ տայ կռիւին, որմէ օգտուողը միայն թուրքը կրնայ ըլլալ. իր խոլամներէն մէկը բռնեց զիս եւ մէկ կողմ քշեց, ըսելով թէ այս կռիւը ջուրին այս կողմը սկսաւ, այս հրացանին համար: Թէ՛ եթէ այդ զէնքը իրեն չտար, ան պիտի երթար եւ կառավարութեան մատնէր որ Եոսուֆը հայեր կը փախցնէ Տերսիմ՝ դրամ առնելով. աղան կ'ըսէ թէ այս իրենց դործը չէ եւ իմ դործերուս միջամտելու ու խառնուելու իրաւունք չեմ տար թուրքի մը, ուր մնաց հայու մը. եթէ ես խրատ կ'ուզեմ՝ այն աստի պատրաստ ըլլամ: Այս կռիւներու պատճառով մեզ ուղղակի Ալզոլնիկ չտարին, այլ մեզ բաժնեցին քանի մը հովիւներու. զիս տարին ձգե-

ցին դոմ մը, ուր հարիւրաւոր ոչխարներ կային եւ իմ տարիքիս տը-
զայ մը Մսդոյ անունով, որ հօրմէն զատ ուրիշ ոչ ոք ունէր. այս
տղան ինծի շատ լաւ վերաբերում ցոյց տուաւ, լաւաջ բերաւ, թան
տուաւ եւ չոֆելէֆ, կերակրեց, կշտացուց, պարկելիք տեղս ցոյց տը-
լաւ. մենք շատ ալ չէինք կրնար խօսիլ, որովհետեւ տղուն կամ հօրը
տաճկերէնը շատ սահմանափակ էր. ես ալ քրտերէն բնաւ չէի հաս-
կընար :

Առաջին սոցալտրութիւնս հօր ու տղուն մասին, լաւ եղաւ. բարե-
կամական, հողատար եւ յարգալից էին. յաջորդ առաւօտ ես տղուն
հետ դացի, ան ոչխարները դուրս քաշեց, իր երկու շուները հետը
առած. հայրը մնաց տուն՝ շրջապատի գործերուն նայելու համար.
Ես կը սպասէի աղայի կարգադրութեան, եւ երբ երեկոյեան վերա-
դարձանք, հայրը տղուն պատուիրեց որ վաղը զիս պէտք են տանիլ
Ալզուներիկ, մեծ աղային ներկայութեան եւ սպասեն անոր կարգա-
դրութեան :

Երեկոյեան ուշ ատեն տարին զիս աղային տունը եւ այնտեղէն
ալ միւս չորս ընկերներուս մօտ, հայ տունը: Այստեղ կ'ապրէր Համ-
բոյ Գէեայ տունը, որ մաս կը կազմէր Գանկոր Զատէ Մահմէտ ա-
ղային «Աշիրէթին». երկու եղբայրներ էին, երկուքն ալ ամուսնա-
ցած, կային նաեւ քանի մը ուրիշ հայեր ալ, շրջակայ գիւղերէն, ո-
րոնք Մահմէտ աղայի պաշտպանութեան տակն էին: Սկսաւ ճաշի
պատրաստութիւն. կաղնին կը վառէր օճախին մէջ, շաղեցին մեծ
կտոր մը խմոր, վրան խաչի նշան մը ըրին եւ նետեցին փոշիներուն
տակ, օճախին մէջ, մինչեւ որ հացը եփեցաւ. դուրս հանեցին, դա-
նակով կտրեցին եղած հացին շերտը եւ մէջի խմորի մասը հանեցին,
լեցուցին տաքցուած կարազի մէջ եւ այս կարազով շաղուած խմորի
փերթը դարձուցին փորուած հացի պարապութեան մէջ ու սկսան ձեռ-
քերով ուտել: Հացը խաչածեւելը միայն Հայոց չէր, այլ Տերսիմի
Գիւրտերուն ալ բոլորին, կարելի է ըսել, սովորութիւնն էր եւ ըսեմ
նաեւ Ս. Սարգիսն ալ հասարակաց օր ունի եւ կը պատուեն այդ
սուրբը, ինչպէս Հայերը, եւ կը նկատեն իրբեւ քաջ զօրավար, տկարին
օգնութեան հասնող եւ ցեղին պահապանը :

Մենք՝ չորս հոգիներս ալ մնացինք այս տան մէջ, եւ երբ յաջորդ
առաւօտուն դուրս եկանք, տեսանք որ բաւական թիւով հայեր կան.
Օր ըստ օրէ սկսաւ շատնալ անոնց թիւը: Օր մը մօտաւոր գիւղերէն
եկած էր Տոքթոր մը, գիւղերը կը պտտէր իրր բօխիկ, կը խօսէր
դրեթէ կատարեալ քրտերէն, կը մտնէր ամէն տուն. կը զգուշանար
բարեկամութիւն մշակելէ, մանաւանդ ցեղապետներուն հետ. իր հա-
մեստութեան մէջ, առանձին բարեկամութիւն կը մշակէր աւելի խո-
նարհներուն հետ, ըստ երեւոյթին: Կապուած էր Մէզիրէի հիւան-

դանոցի մարդոց, որոնցմէ կը ստանար, Գիւրտերու միջոցաւ, իրեն պէտք եղած ղեղերը, որոնք ընդհանրապէս հրապարակի վրայ ճանչցուած ղեղեր էին, առօրեայ զանազան հիւանդութիւններու համար: Առաջին անգամ որ տեսայ՝ ճանչցայ զինքը, մեր Սուրսուռ վանքի բարեկամն էր, որուն հետ մենք շուտով մտերմացանք: Ասիկա, Կարապետը, եղած է Մէղրիէի կեդրոնական կոմիտէի անդամ եւ ռումբեր պատրաստող մասնագէտ. կրցած էր ազատիլ՝ իրեն համար ընտրելով արհեստ մը, որ զինքը կը տանէր ամէն տուն եւ կը վայելէր մեծ յարգանք: Քիչ ետքը եկաւ Խուլա դիւղցի Յարութիւն Խումաճանեանը, որ յետագային անդերէն գիրք մը դրեց, որուն մէջ յիշատակեց նաեւ կազմակերպութիւնը՝ որ մենք ստեղծեցինք կորիզ ունենալով Յարութիւն Խումաճեան, Յարութիւն Թաղեոսեան՝ Խուլուցի, Յարութիւն Թաղեան Հիւսէնիկցի եւ Տոքթ. Կարապետ Չըմըշկաձաղցի եւ Յովհաննէս Տէր Յովհաննէսեան Դատեմցի. տակաւին մեզի պիտի ընկերանային երկու նշանաւոր Չմըշկաձաղցի հայեր, որոնք լաւ կապեր ունէին Գիւրտերու զանազան ցեղախումբերու պետերուն հետ. մէկը՝ Սարգիս Եաղըճեանն էր եւ միւսը՝ Վահրամ Մանուէլեան, որ նկատած էինք կարեւոր տարր մը այդ շարժման, որուն դիւաւոր նպատակը պիտի ըլլար պատժել թուրք ոճրագործները, որեւէ նիւթական հնարաւորութիւն յատկացնելով քիւրտ զանազան ցեղապետներուն:

ՔԻՒՐՏ ՅԵՂԱՊԵՏԻՆ ՔՈՎ ՈՒՍՈՒՅԻԶ

Ազդունիկ քիչ ատենէն դարձաւ «Գիւլչիւք Փարիզ»․ այդպէս կը կոչէինք, որովհետեւ աւելի քան 400–500 երիտասարդներ հաւաքուեցան այդ «Աշիրէթին» մէջ: Օր մը զիս կանչեցին ցեղապետին տունը, զիս բերող Եուսուֆին հօրը կարգադրութեամբ, այն առարկութեամբ թէ բաւականաչափ փոխարժէք չեմ տուած, քանի որ ըստ եղած դրոյցին ես ի վիճակի եղած եմ աւելին վճարելու: Այդ ժամանակ Ալդունիկ հասած էին երկու սքանչելի դաշնակցական մարդիկ, մէկը՝ Աւետիս աղայ Գիւրքճեան, հայրը Յովհաննէս Գիւրքճեանի, որ կ'ապրի Լոս Էնճըլըսի մէջ, միւսը՝ Գէորդ Գայարեան, որուն մահէն ետք, ընտանիքը կ'ապրի Միլրոսի Ռոս: Աւետիս աղան կանչեց զիս ու ըսաւ. «Յովհաննէս, կ'իմանամ որ աղան քեզ կանչած է եւ ըստ պատճառացած որպէսզի աւելի դրամ տաս, թէ չէ վաղն իսկ ետ պիտի երթաս: Հիմա քեզի կ'ըսեմ, ես հետս շատ դրամ ունիմ եւ չեմ թողուր որ դուն ետ երթաս դրամի պատճառով»: Այսօր ալ դուրդուրանքով, յարգանքով եւ կարօտով կը յիշեմ Աւետիս աղան. այդ լեռ-

ներուն մէջ անձանօթ ապաղայ մը ունեցող մէկուն համար ծախսըւ-
ած դումարը ետ չէր կրնար դալ. եւ ահա այս հայը կը յայտարարէ
որ ես շատ դրամ ունիմ եւ քեզ չեմ թողուր որ ետ երթաս: Կը տես-
նէի ճշմարիտ մարդ մը եւ ազնուական հայ մը: Մինչեւ այսօր շատ
մարդոց հանդիպած եմ, բայց Աւետիս աղան կը նկատեմ այն ազ-
նուական հայերէն մէկը, որ դիտէր արհամարհել դրամը եւ հասնիլ
օդնութեան մէկու մը՝ որ հազիւ քանի մը անգամ տեսած էր:

Ես դացի աղային ու պատմեցի փախուստիս պարագաները եւ ը-
սի թէ մարդ չունիմ որուն կարենամ դիմել, կամ եթէ աղան կը կա-
մենայ՝ դիս ետ թող դրկէ եւ կամ լաւ օրերու սպասէ որ օր մը երբ
ի վիճակի ըլլամ՝ ինչ որ ուզէ կը վճարեմ: Աղան ըսաւ. «Դո՞ւն դրեր
ես այդ «չէրը» որ կ'երգեն մեզի մեր տղաքը»: Ըսի՝ այո՛: «Դուն
թրքերէն դրել կարդալ դիտե՞ս», հարցուց: Այո՛, պատասխանեցի:
«Այդ պարագային, աւելցուց, վաղուընէ կը սկսիս մեր տղոց դաս
տալ եւ այդպէս կը վճարես ջու պարտքը»: Ըսի թէ քիչ մը Փրան-
սերէն ալ դիտեմ, եթէ ուզէ կրնամ անոնց նախնական ծանօթութիւն
մը տալ Փրանսերէնի, ու կրնան օգտուիլ այդ Եւրոպական լեզուէն:
Աղան դոհունակութիւն յայտնեց որ իր թոռը փառարանած եմ թըր-
քերէն երգով եւ վաղը պիտի սկսիմ տաճկերէն եւ Փրանսերէն սոր-
վեցնել իր տղուն: Անմիջապէս կանչեց իր տղաքը եւ յայտարարեց.
«Վազն իսկ այս վարժապետին քով դասի կ'երթաք, կը սորվիք, մը-
տիկ կ'ընէք ինչ որ ան կը պատուիրէ»: Ուրեմն երկու աղա ընտա-
նիքներու ղաւակներն ու թոռները հաւաքուելով՝ եղան տասներկու
հոգի, որոնց պէտք էի սրվեցնել տաճկերէն, Փրանսերէն եւ թուա-
րանութիւն:

Վերստարձայ տուն: Ամէնէն առաջ եկաւ Աւետիս աղան, պա-
տրաստ՝ վճարելու պէտք եղած դումարը: Հանդարտեցուցի զինքը,
ըսելով որ այս վէճէն այն ծնաւ որ ես հիմա կարդուեցայ ուսուցիչ
Գանկոր Զատէ Մահմէտ աղայի թոռներուն եւ ազգականներու զա-
ւակներուն. այդպէսով իմ դիրքս արժէք եւ նշանակութիւն մը ըս-
տացաւ դոնէ քանի մը յաջորդող ամիսներուն: Կարծես կը դգամ եւ
կը տեսնեմ սիրելի դէմքը Աւետիս աղային... բարութեամբ, երջան-
կութեամբ եւ խոովքով դիս դրկելով յայտնեց իր գոհունակութիւնը,
յետոյ աւելցուց. «Ո՞ր մասնիչը արդեօք նման սխալ տեղեկութիւն
մը տուաւ ջու տնտեսական վիճակիդ մասին, որ աղան ալ այդ եղ-
րակացութեան եկաւ թէ աւելին պէտք էր առնել քեզմէ»:

Յաջորդ օրը հաւաքուեցան աշակերտներս. միկը գրեթէ ինծի
տարեկից, Պէքիր աղայի տղան եւ միւսները՝ ութէն մինչեւ տասնութ
տարեկան տղաք: Դժուար էր այս տղոց բան սորվեցնել. նախ զէնքի
վարժած, յետոյ իրենց հայ ուսուցչին հանդէպ ո՛չ յարգանք ունէին

և ե ոչ ալ սէր դէպի կրթութիւնը: Անոնց մէջ կային սակայն արթուն աշակերտներ, որոնք հաճոյք կը զգային նոր բան մը սորվելու եւ ատիկա իմ մէջ կիրքը կ'աւելցնէր անոնց բան մը տալու, դոնէ դէպի Հայը յարգանք մը ներշնչելու:

Այս Պէքեր աղային տունը բերուած էր Միսաք Չաւուշի քոյրը, Պէքեր աղայի մեծ տղուն համար, որ ինչպէս կ'երևէր զինուոր էր օսմանեան կառավարութեան: Կային ուրիշներ ալ՝ որոնք նոյնպէս կը ծառայէին ոստիկանական ուժերուն կամ բանակին. քիւրտ էին բայց թրքացած եւ թուրք բանակին մէջ զինուոր:

Օր մը դուրսը զինավարժութիւն կ'ընէին թուրք տղաքը, եւ հաւաքուած էին բաւական թիւով հայ տղաք. երբ քիւրտ տղոց մըցումը վերջացաւ, առաջարկ եղաւ որ հայ տղոց ալ տրուի առիթ՝ նշանառութեան փորձ մը ընելու: Մաշած պլխարի մը դրուած էր հեռաւոր բարձունքի մը վրայ որ մեղի համար դրուած էր իրբև նշան զարնելու. նկատած էի որ զնդակները աւելի վար կ'իյնային հողին վրայ, քան կը հասնէին նշանակէտին: Երբ կարգը ինծի եկաւ, վերցուցի ցուցանիչը եւ կրակեցի. շատ մօտ էր եւ գիտէի որ շիտակ դժի վրայ էի, բայց մերժեցի կրկնել հարուածը, երբ նշմարեցի բանակին ծառայող քիւրտի մը ներկայութիւնը, որ մէջքէն կախած էր տասը հարուածեան մը հայերէն տառերով. արդէն ինձ պարզ էր որ ինք ստացեր էր այդ արագահարուածը կա'մ սպաննելով, կա'մ մասնակցելով զէնքեր հաւաքող Ղոկատներուն. հետեւաբար վտանգաւոր մէկն էր մեզի համար: Եկաւ քօվս, փաղաքական քանի մը խօսք ըրաւ, ուրտեղէն ըլլալս ուղեց հասկնալ. անորոշ պատասխաններ տուի, բայց մտքիս մէջ տեղ բռնեց այս մարդու ներկայութիւնը հոս, եւ մեր միամիտներուն այդքան խոշոր ներկայութեան ցուցադրութիւնը: Հասկցուեցաւ որ, թէեւ թուրքերը ժանտարմըրի մէջ, աղային վստահելի աչքերէն մէկն է. անոր միջոցաւ աղան կը ստանար տեղեկութիւն կառավարական ներքին կեանքին մասին, անոր դիրքաւորումը դէպի Քիւրտերը եւ անոնց քաղաքականութիւնը:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՍ ԴԵՊԻ ԵՐՁՆԿԱՅ

Ես իմ ուսուցչութիւնս կատարեցի մինչև 1916ի դարունը: Օր մը իմ բացակայութեանս, մեր խումբի տղաքը կը հաւաքուին եւ կ'որոշեն մէկը ուղարկել դէպի Կարին, որ կ'ըսուէր թէ Ռուսիոյ ձեռքը ինկած է. կ'ըսուէր նաեւ թէ Ռուսերը կամայ կամայ կ'իջնեն դէպի Մամախաթուն եւ Երզնկայ. պէտք է մէկը զրկել՝ բացատրելու մեր դրութիւնը: Բոլորը միասին կ'ենթադրեն որ ես ամէնէն յարմարն եմ

այդ գործին, եւ կ'որոշեն զիս ուղարկել: Ես կ'երթամ ու կը տեսնուիմ Տորթֆ. Կարապետ Դերձակեանի հետ, որ կը յայտարարէ թէ կ'արժէ փորձել ու կը քաջալերէ զիս այդ ձեռնարկին համար, բայց կը զդուշացնէ զիս իմ քրտերէնի անծանօթ ըլլալու համար եւ կը թուէ այն դժուարութիւնները՝ որ կրնան առաջ դալ: Ես ներկայացայ աղային եւ ըսի որ Փիլիվէնքի Էֆէթի մօտ հասած է հայրենակից եւ աղաւան մէկը՝ որ լուր կ'ունենայ իմ ընտանիքիս մասին. իր արտօնութեամբ կ'ուզեմ հանդիպիլ հոն եւ տեղեկութիւն ստանալ իմ ընտանիքիս մասին: Մէհմէտ աղան առարկութիւն չըբաւ. ես աչակերտներու յայտնեցի այդ բարի լուրին մասին եւ յաջորդ օրն իսկ ճամբայ ելանք երեք հողիով. Պէրպէր Միսաք ծայտուած՝ կատարեալ Սէյիտի մը պէս, Մեղիէրոցի Սարգիս՝ որ կ'երթայ դէպի իր հայրենիքը եւ որ կատարեալ քրտախօս մըն էր, եւ սպտանի տղայ մը՝ որ ուխտի կ'երթայ դէպի Հայուորի վանքը:

Այդ ճամբուն վրայ պիտի հանդիպինք առաջին Աշիւէթին, որ կը գտնուէր Երկային անուն գիւղ մը, ուր լսած էինք թէ փախած էր Փրոֆ. Տօնապետ Լիւլեճեանը եւ կ'ապրի իր աչակերտին քով. կը գտնեմ փրոֆեսորը, բարձրահասակ, դիւրահաղորդ, սիրելի դիմպիծով, աղնուական մտաւորական մը, հեղինակը «Դարձիր Թուրն իմ» եւ շատ մը ուրիշ կտորներու: Չարչուած, դանակոծուած Խարբերդի բանտին մէջ, այժմ ապաստանած էր Տերսիմի այս խիզախ լեռնակատարին վրայ, եւ իր սրտի մորմոքը կ'արտայայտէր րանաստեղծութեամբ, որմէ օրինակ մը կու տայ ինծի: Կը բացատրեմ նպատակս. խորհուրդ չի տար այս անորոշ ժամանակին ճամբորդութեան ձեռնարկելու, մանաւանդ քրտերէն չգիտնալու անպատեհութիւնը նշմարելով. այնքան չարչարանքներէ ազատած այդ մարդը՝ «քիչ մ'ալ համբերէ, ըսաւ, թերեւս Ռուսը մեզի աւելի մօտենայ եւ կը դիւրանայ մեր փախուստը: Ես խորհուրդ պիտի չտայի քու այս ճամբորդութեանը»: Կը տանի զիս, կը ծանօթացնէ Երկայինի մէջ կարուցուած մեծ եկեղեցիի մը արձանագրութիւններուն, եւ կարծիք կը յայտնէ թէ Տերսիմի ժողովուրդը մեծ մասամբ հայեր եղած են ժամանակին եւ ասոնցմէ շատերը հայկական արիւնէ կը սեռին: Կ'ըսեմ որ առ այժմ Փիլիվէնքի Աղղունիկ պիտի երթամ. հոն նոր եկած է Դատեմէն իմ ընկերներէս մէկը, զինքը տեսնելէ ետք՝ կ'որոշեմ ընելիքս: Յամենայն դէպս շնորհակալութիւն կը յայտնեմ իր դուրդուրանքին եւ հայրական խրատներուն համար եւ կը հարցնեմ թէ իր քով գտնուող եղբայրը՝ Լեւոնն է, որուն հանդիպած եմ ամերիկեան հիւանդանոցին մէջ. այո՛, կ'ըսէ եւ կը տեսնենք որ Լեւոնը խօսակցութեան մէջ է Փրոֆեսորի քիւրտ աչակերտին հետ. մնաք բարով մը ըսելով, երեքս կը մտնենք Փիլիվէնքի Աղղունիկ գիւղը:

Հոն կը գտնենք Խարբերդէն՝ Գարաճեան Լեւոն, Պոլսոյ բժշկական համալսարանի աշակերտ. իմ դիւղի ընկերներէն՝ Սահակ Սահակեանը. անակնկալ կերպով հոն կը գտնենք նաև Պետրոս Հերոյեանը, որ առաջին զինուորներէն մէկն է դէպի Կարին վացողներէն եւ վերադարձած է Խարբերդ. այնտեղէն փախելով՝ Դատեմ-Չարսան-ճազի ճամբով, կը հասնէր Տերսիմ. ասիկա ինծի համար հաճելի անակնկալ մըն էր, որ ահա իմ սիրելի դիւղէս երկու հարադատներ կը գտնէի այս լեռներուն վրայ, որոնց հետ շատ հետաքրքրական խօսակցութիւններ ունեցայ: Յայտնեցի Սահակին թէ ես իմ երկու ընկերներուս հետ պիտի մեկնիմ, իսկ Սահակը պնդեց որ մնանք, այն խանդավառ յոյսով՝ որ շատ չէ մնացած, կ'աղատենք մեր կեանքը եւ կ'երթանք օչնելու մերիններուն. մի' նետեր ինքզինքդ վտանգի մէջ, ըսաւ: Իրեն ըսի որ այդ պարտականութիւնը կամովին յանձն առած եմ, եւ Տերսիմ ապաստանող բոլորի կեանքին աղատութեան համար կարեւոր կը սեպեմ առաքելութիւնս, եթէ յաջողիմ՝ անսահման երջանիկ պիտի դաժմ. չեմ կրնար ետ կենալ: Քիչ մը յուզուած՝ կը համբուրուինք, մենք դէպի յաջորդ Աշիրէթները կ'ուղղուինք. կը կարենք Սև ջուրը, կ'անցնինք Մեծկերտի վերեւ՝ դէպի Հալուորի վանքը. հազիւ ցուցմունքներով կը փսփսայինք իրարու հետ, երբ անտառներուն մէջէն դուրս եկան աւելի քան յիսուն զինուած քիւրտեր՝ որոնք, ըստ իրենց, կ'երթային դէպի Բերդակ՝ կուռելու թուրքերուն հետ եւ կողոպուտին մասնակցելու: Թուրքերը արդէն պարպած են Խաղաղը եւ Բերդակը արդէն Գիւրտերուն ձեռքն է: Մեզի հարցումներ կ'ընեն. մեր առաջնորդը կը բացատրէ թէ հայ ենք եւ Հալուորի վանք կ'երթանք. կը տեսնեն որ մենք երկուքս քրտերէն չենք հասկնար, կը կողոպտեն մեզ. փոխանակ մինչեւ Բերդակ երթալու, իրենց որսը ձեռքերին եկած կը սեպին: Միայն մեր շապիկը կը թողուն մեր վրայ. ապահովարար մահը կրնար դալ մեզի այդ սառնամանիքէն եւ այդ անտառին մէջ: Իրենց հետ կը վերադառնանք մօտակայ աղային քով, ուր կը վայելենք պաշտպանութիւն եւ ես կը ստանանք մեր կօշիկները, մեր հագուստները, բացի դրամներէն: Զիս պղտիկ գտնելով աղատ կը ձգեն, բայց միւս երկու ընկերներուս կը ստիպեն որ իրենց ուսերուն վրայ նստած փոխադրեն զիրենք ջուրին մէկ կողմէն միւսը: Ինծի տարօրինակ եւ խնդալիք վիճակ մը կը պարզէ մեր Մէլրէցի Պարպըրը, որ տանիմարքացիի մը հետ ամուսնացած է. այս մօրուքով Միսաքը շալակն առած հսկայ քիւրտ մը՝ կը տանի ջուրին մէկ կողմէն միւսը, առանց կօշիկի եւ առանց վարտիքի. այս տեսարանը իմ մանուկ մտքիս մէջ տեղ կը բռնէ եւ դաժակար մը կու տար Քիւրտերու հողերանութեան մասին:

Քանի մը օր Ազգուսնիկի կացութիւնը ուսումնասիրելով եւ նըշմարելով Քիւրտերու եւ Թուրքերու լարուած դրութիւնը, կը գզամթէ շատ չանցած՝ իրական տակնուվրայութիւն մը կրնայ սկսիլ հոս. Խողատի գիւղերէն փախչող հայ մը կը դռնեմ եւ խոյս կու տամ դէպի Գանկոր Զատէի Ազգուսնիկը: Այս Խաչատուրին հետ, որ լաւ քըրտախօս մըն է, կտրելով Երկայնը, անցանք երկար ձորին մէջէն, որուն ներքեւը կար իրենց գիւղը, այժմ անմարդարնակ: Բոլոր գիւղացիները որ անակնկալի չեն եկած, փախած են Քիւրտերուն քով եւ շատ քիչ մարդիկ բռնուած են կամ աքսորուած դէպի Խարբերդ, դէպի Խնճուք եւ Մալաթիա: Ընկերս՝ Խաչիկը, շատ լաւ ձայն ունի. կորսնցուցած է իր երկու եղբայրները, կը սկսի երգել «Էկին էկին լերան Օլմը» երգը: Այս երգը իր շունչով, իր աղաչական կանչով, իր թրթռացումով կը յուզէ կարօտցած սիրտս ու հաղիւ կը զսպեմ սրտիս մէջ կուտակուած կարօտը: Խաչիկը, սակայն, իր արտասուած թոր աչքերով՝ սրտէն կը հոսեցնէ տան կարօտը, իր կորսուած հարազատներուն մորմոքը եւ իր աւերակ գիւղին հառաչը... նոյն կրակը կը բորբոքի նաեւ իմ սրտիս մէջ. ո՞ւր են իմ հարազատներս, ո՞ւր են իմ ընկերներս, ընտանիքս, ուսուցիչներս, դպրոցս... եւ որպէս զի չլամ՝ կամաց մը կը դպչիմ Խաչիկին ուսին, հասկցնելու համար թէ ժամանակն է քալելու. կը նայի աչքերուս եւ կ'ըսէ. «Ես չեմ երթար, տանս սեմին կ'երկննամ, թող դան սպաննեն... Ի՞նչ ընեմ այս կեանքը առանց տանս, առանց գիւղիս, առանց հարազատներուս»: Ես համբուրեցի այս գրեթէ անծանօթ հայրենակիցս. հասկցայ իր սրտին ցաւը եւ գրեթէ փախայ իրմէ՝ զսպելով սրտիս մէջ բորբոքող կարօտն ու ցաւը...:

Առանձին սկսայ քալել քարուքանդ եւ ամայի այդ վայրերէն, միշտ այն վախով՝ թէ յաջորդ քայլիս թուփերու տակէն ո՞վ պիտի ելլէ, կամ ճամբուս վրայ որո՞ւն պիտի հանդիպիմ: Եարունակեցի ճամբաս վարանումով եւ զդուշութեամբ. ոչ ոք կար ճամբաներուն վրայ. ու ես մտովին կը թափառէի մեր գիւղը, փնտռելով մեր տան ձագուկները, որոնք պիտի վագէին դիմաւորելու զիս, երբ Մէղրէէն գիւղ կու դայի, եւ բոլորն ալ միասին կը կանչէին «պճարար, պճարար»: Եւ ես պիտի փնտռէի դրպաններուս մէջ շաքարի կտորներ, որոնք իրենց հաճելի թուէին, ու իրենց երջանկութեամբ ես ալ երջանկանայի:

Արեւը գրեթէ մայրը մտնելու մօտ է. ես կը մօտենամ Ազգուսնիկ՝ մեր օրերու Փարիզին, եւ շիտակ կ'երթամ Համբոյ Քեհեային տունը. կը հաւաքուին շուրջս, կը պատմեմ փորձառութիւններս եւ կ'ըսեմ որ գտեր եմ հայրենակիցներ, թէ Քիւրտերը յարձակումներու սկսած են Բերդալի ուղղութեամբ եւ կ'ըսեն թէ Թուսերը իջեր

են կարին եւ կ'ուղղուին դէպի Երզնկայ, եւ թէ ժամանակը յղի է անակնկալներով: Յետոյ կ'երթամ կը հանդիպիմ ընկերներուս. այս անգամ պիտի մեկնիմ Խտարայի ճամբով, երկու նպատակով՝ թերեւս մօրեղբայրս դտնեմ, թերեւս ալ անցնիմ Երզնկայ:

Երզնկայի մէջ կը հանդիպիմ Յարէթ Ճալալեանին, Չմչկաժապցի: Առաջին կայանս կ'ըլլայ Վահրամ Տէր Մանուէլեանի հանդիպիլ. այս մարդուն մասին դուրստով կը խօսին. իր ծանօթութիւններով կրնայ շատ օգտակար ըլլալ մեր նպատակներուն: Կը դտնենք աղային տունը եւ կը հարցնենք Վահրամին անունը. երիտասարդ ու շնորհալի սեւեր հազած կին մը դուրս կու դայ, կը խօսիմ իրեն հետ, կը հարցնեմ Վահրամի մասին. կ'ըսէ թէ Վահրամը հոն չէ, դացեր է շըրջանները գործով եւ թերեւս քանի մը օր բացակայի. իր մէկ աղ-դականը հոն է, պարոն Հմայեակը, անիկա կրնայ աւելի տեղեկութիւն տալ. ներս կ'երթայ եւ կը կանչէ դայն. բարի եւ աղնիւ մարդ մը կը ներկայանայ, որ կապ կը պահէ քաղաքին, Մէլիբէի ամերիկեան միսիոնար Պր. Ռիկսի հետ, երբեմն նիւթական օժանդակութիւն կը ստանայ անկէ՝ բաժնելու համար կարիքաւոր անձերու եւ կամ Ամերիկայէն իրենց հարազատներէն եկած դումարներ կը փոխանցէ. կ'ըսեմ իրեն որ շատ լաւ բաներ լսած եմ Վահրամի մասին եւ քանի որ այս առիթը ներկայացաւ՝ ուղեցի զինքը տեսնել. յայտնեցի իրեն որ պիտի մեկնիմ Խտարէի քով՝ Պր. Սարգիս Եաղըճեանը տեսնելու, որու մասին նոյնպէս լաւ բաներ լսած եմ. ինքն ալ դովեց Պր. Եաղըճեանը: Քանի մը բոսլէ ետք, Վահրամի քրոջը Արմենուհիին ալ մնաք բարով ըսելով մեկնեցայ, առանց դիտնալու որ օր մը հեռաւոր Ամերիկայի մէջ պիտի տեսնենք զիրար եւ իր զաւակը՝ Վահրամ Բաղիկեան, պիտի ամուսնանար աղջկանս՝ Հելընին հետ:

Կ'երթանք դէպի Խտարէ. այս ճամբուն վրայ տակաւին չհասած, Բաշոյի տան քով ձեւալեանը կը նկատէ թուրք զինուորներ՝ որոնք կը շրջին անոր տան մօտերը եւ առանց ձայն մը տալու կը կորսուին առջևէս. ես կը տեսնեմ զինուորներ՝ որոնք կը բարձրանան ձորէն վեր, եւ կը նշմարեմ ձորին մէջ, առուակին ծայրը, փոքրիկ հիւղակ մը, ուր կը վազեմ յուսարով մէկը դտնել այդտեղ եւ ապաստանիլ, մինչեւ որ տեղեկանամ թէ ի'նչպէս է որ մինչեւ հոս տաճիկները թափանցած են, ուսկի'ց կու դան այս զինուորները: Հիւղակին ծայրը կը նշմարեմ երախայ մը, իր տան դրան սեմին վրայ երիտասարդ հարս մը՝ որ կը նայի ինծի. նշմարելով շիտթութիւնս՝ ժպիտով մը կը հրաւիրէ մեզ եւ կը սկսի խօսիլ: Ինծի հրաջըի պէս բան մը կը պատահի. կը հասկնամ ինչ որ կ'ըսէ, ես ալ կը խօսիմ, սակայն չեմ դիտեր հայերէն, քրտերէն, տաճկերէն կամ այլ երեք լեզուները միասին. բայց այս քիւրտ կինը կը հասկնայ զիս... մինչեւ այսօր

չեմ կրցած հասկնալ թէ ի՛նչ կը խօսէի, ի՛նչպէս զիրար կը հասկընայինք: Մինչ ես ներս կը մտնեմ, ինք դուրս կ'երթայ, կը նայի շուրջը եւ 10-15 վայրկեան ետք ներս դալով կը բռնէ ձեռքս՝ առաջնորդելով դուրս եւ ցոյց կու տայ Բաշոյ աղային խոնախը. «Այնտեղ հայ երիտասարդ կայ, կ'ըսէ, եւ քեզ կ'առաջնորդէ Իտարէի մօտ, դիմացի բարձրաբերձ եւ մշուշապատ լեռներուն վրայէն»: Ես չընորհակալուեթիւն կը յայտնեմ եւ կ'ուզողուիմ դէպի Բաշոյ աղային շէնքը: Եթէ հոն հայ կայ, կը մտածեմ, կ'երթամ անոր առաջնորդութեամբ այս մեծ քիւրտին Աշիրէթը, որ ճանչցուած է իբրեւ ամէնէն հակաթուրք ցեղապետը. փախած է Տիրքանակերտի բանտէն հայ մեծամեծներու օժանդակութեամբ, եւ այդ երախտադիտական զգացումով՝ պատասպարան տուած է շատ մը հայերու:

Բաշոյի քով մեծ զարմանքով կը դտնեմ Արտաշ Յակոբեանը իր դուռը մազերով, արդէն կազմուած երիտասարդ՝ որ կ'ըսէ թէ Յարէթն ալ արդէն իրենց մօտ է եւ ես կը սպասէի ամէն վայրկեան ըստ զալուդ:

Յաջորդ օր կ'երթանք Իտարէի տեղը: Զիս կ'առաջնորդեն ընդարձակ ախոռ մը, որ այդ օրերուն տրուած էր հոն հաւաքուած մեծ մասամբ Զմշկածաղցի հայերուն: Այստեղ առաջին անգամ ծանօթացայ Եաղըճեան Սարգիսին, 40ի մօտ, լայն կազմուածքով, արծուի աչքերով, թանձր յօնքերով, բայց բարի մարդու մը տպաւորութիւնը կ'ընէր: Խօսեցայ Աղղունիքի տղոց բաղձանքի մասին. առանց վերապահութեան այդ տղոց պատրաստակամութիւնը՝ երթալու իրեն եւ վահրամին հետ, ինչպէս որ իրենք պիտի ուզեն, գործակցելով Քիւրտերուն՝ երբոր իրենք կարենան համաձայնութիւն մը կնքել նման գործակցութեամբ: Յայտնեցի որ ես պիտի երթայի Օվաճուք մօրեղբայրս փնտռելու, որ կ'ըսուի թէ հոն դացած պիտի ըլլայ: Ըսաւ որ Քիւրտերը զէնքերէ չեն բաժնուիր, եւ անոնցմէ զէնք սպասել աւելորդ է, բայց պէտք է մտածել ուրիշ կերպերուն վրայ. յոյս յայտնեց որ երեւոյթները այնպէս կը թուին՝ թէ Ռուսերը սկսած են դէպի Սերաստիա եւ Խարբերդ նայիլ, եւ այդ ուղղութեամբ շշուկներ կան Տերսիմի աղաներուն մէջ եւ ակնկալութեամբ կը սպասեն թէ ի՞նչ պիտի ըլլայ անոնց մօտեցումը Ռուսերէն ստեղծուած պայմաններուն տակ: Ես երկու օր մնացի այս մարադին մէջ, հարիւրէ աւելի հայերու հետ, որոնք միասին կ'ապրէին, միասին կը քնանային: Ես տեղ բռնեցի Եաղըճեան Սարգիսի քրոջ եւ դաւակներուն շրջանակին մէջ, զիս ընդունեցին իբրեւ իրենց հարազատը, բաժնեցին իրենց օրուան հացը: Այստեղ ծանօթացայ Մալաթիացի Միսաք Զաւուչին, որ ամուսնացած էր Զմշկածաղցի աղջկան մը հետ, ձգած բանակը եւ բարձրացած լեռ: Համակրելի, հաստատուն, լայն պիխերով ե-

բիտասարդ մը, որ կը վայելէր համակրանքը հող հաւաքողը հայերուն եւ որուն հետ մենք սիրով կապուեցանք: Ենդճեան Սարգիսի կարգադրութեամբ ես բաժնուեցայ եւ քիւրտի մը հետ միասին դայինք յաջորդ կայանը, ուր կ'ապրէր Խարբերդցի հայ մը իր Լեւոն եւ կարապետ անունով երկու շատ սիրելի երիտասարդ տղոց հետ: Խօսեցանք Խարբերդի մասին, Օվաճուքի թուրք պահականոցի մասին, որուն պետին հետ պէտք էր որ մօրեղբայրս եկած ըլլար Օվաճուք: Պատմեցին որ պահականոցին մեծաւորը ձգած է կայանը եւ փախած. կ'ըսուի նաեւ որ իր քով դտնողը հայը նոյնպէս փախած է եւ թերեւս ողջ է մօտակայ քիւրտերէն մէկուն քով: Ես անհամբեր եմ. յաջորդ օր ինծի տրուած ուղղութեամբ կ'երթամ ու կը հասնիմ Օվաճուք, որ Տերսիմի մօտաւորապէս ծայրամասը կը նկատուի: Դիմացի լեռներուն ետեւ կայ Քեմալը եւ Երզնկան, ու այս կողմը կան Տերսիմ եւ Խարբերդ: Կ'երթամ սրճարանի պէս տեղ մը, ուր կը խօսիմ տաճկերէն. կը յայտնեմ որ ազգականն եմ հոն ապրող Պողոսին եւ եկած եմ Գանկողատէ Մահմէտ աղայի եւ Իտարէի աղայի յանձնարարականով փնտռելու մօրեղբայրս՝ Պողոսը: Քիւրտերէն մէկը, որ ըստ երեւոյթին ծանօթ էր մօրեղբօրս, եկաւ եւ բարի ես եկեր, ըսաւ, մեր դիւտուն վրայ տեղ ունիս, մանաւանդ այդքան մեծ մարդոց կողմէն կու դաս. վալլահի ասիկա մեղի պատիւ մըն է. ես հիմա երթամ եւ զինքը բերեմ հոս:

Շատ չանցած՝ քեռիս բերին որ ախ ու փախի մէջ էր. իր տաճիկ աղան երթալէն ետք չէր հաւատացած որ զինքը փնտռող մը կ'ըլլայ եւ կը վախնար որ այս տաճիկները իր դիւտուն ջուր մը պիտի թափեն: Համբուրուեցանք, աչքերս թրջեցան. քեռիս, որուն ա'յնքան կարօտցած էի, կրկնակի դրկեցի եւ շնորհակալ եղայ որ վերջապէս ընտանիքիս 22 հոգիէն դոնէ մէկը գտայ. այս սիրելի վայրկեանը կ'ապրէի եւ անհունապէս ուրախ էի որ կրցած էի մինչեւ հող կտրել եւ դալ: Գացինք իրեն տեղը, պատմեց թէ ի'նչպէս, երբ իմացած էր որ ես Տերսիմ անցեր եմ, որոշած էր ինծի հետեւիլ եւ այն մարդը՝ որ պաշտօնով կը զրկուէր Օվաճուք, իրեն խոստացած էր որ կը պաշտպանէ եւ կը բերէ զինքը Օվաճուք, եթէ անշուշտ իրեն ծառայէր իր կերակուրին, իր հապուստին եւ տունը տաք պահելու աշխատանքներուն համար: Միրով խոստացած էի, քանի որ առիթը պիտի ունենայի Տերսիմ անցնելու եւ քեզ դտնելու. այնուհետեւ «Աստուած ողորմած է» կ'ըսէի ես ինծի: Թէեւ բաւական ուշ, բայց ահա վերջապէս մենք միասին ենք:

Պատմեցի միւս տեղերու մասին, մանաւանդ Մահակին եւ Պետրոսին մասին. աւելի յուզուեցաւ՝ շուտով անոնց քով հասնելու դադարաւորով, եւ մենք միասին նոյն ճանապարհներով վերադարձանք:

Նախ Աղղունիք մնաք բարով ըսի ընկերներուս, համբուրեցի Խուլա-
ղիւղցի Յարութիւնը, Աւետիս աղան, Գէորդ Գայարեանը, Գրիգոր
Մուրատեանը, Չուլիս Յովհաննէսը եւ Բենիամին ժամկոչեանը:

Տուրսոյ Արիւշ սղտիկ ցեղախումբի մը պեսը, որ սակայն իսկա-
կան քիւրտ աղբասէր յեղափոխական մըն էր, խորապէս կը հաւա-
տար հայ եւ քիւրտ դործակցութեան, կը ջատագովէր Հայերուն կա-
րողութիւնները եւ Քիւրտերու ղինուորական հնարաւորութիւնը եւ
Տերսիմի բացառիկ դիրքը: Սպաննած էր քանի մը տաճիկներ Մեղ-
րէի եւ Շղէզի ճամբուն վրայ, երբ դաւադրութեամբ մը կ'ուզէին
վինքը բռնել եւ փախած էր. կառավարութիւնը չէր համարձակեր
հետապնդել կամ բռնել՝ վախնալով քրտական սպստամբութենէ մը:
Կը քարոզէր անտարբեր ցեղապետներուն՝ թէ ուշ կամ կանուխ կար-
դը իրենց պիտի դայ, երբ Հայերը վերջացնեն. Քիւրտերն ալ, Հա-
յերու կարգին, նոյն դաւադրութեան զոհ պիտի երթան: Իր կար-
ծիքով, Աղղունիկի մէջ հաւաքուած Հայերը իրենց հարկաւոր պիտի
ըլլային, եւ օր մը պիտի զվջան թէ ինչո՞ւ աւելի մեծ թիւով չկրցան
աղատել:

Հաղիւ հասած էինք Փիլիվանք, քրտական սպստամբութիւնը նոր
թափ առաւ եւ թրքական զօրքերը սկսան զղուշութեամբ մօտենալ
դէպի Տերսիմի լեռնաշղթան: Հաճի աղային լուր տրուեցաւ որ տաճ-
կական զօրքերը պիտի անցնին Տերսիմի «փէշերէն» եւ պիտի երթան
պաշարելու Կարինը, որ Ռուսերը դրաւած էին ամիսներ առաջ:
Աղան, որ Տերսիմի շրջաններէն շատ հայեր սպահած էր, առաջարկեց
սր տուներէն դուրս ելլեն եւ ժամանակաւորապէս պատասպարուին ան-
տառներուն մէջ: Այդ կարգադրութիւնը, թէեւ տարօրինակ թուե-
ցաւ, եղած էր որպէսզի չտեսնուինք զիւղին մէջ, երբ տաճիկ զօր-
քեր եւ պաշտօնեաներ այցելեն աղայի շրջապատը. չտեսնեն որ շատ
հայեր կան եւ յաւելեալ պատճառ սեպեն յարձակելու: Այդ դիշեր
մենք քնացանք անտառներուն մէջ. թուրք զօրքեր եկան անցան. ա-
ստնց մէջ գտնուեցաւ Պօղոս անունով տղայ մը, Պուրսայի շրջանէն,
որ փախաւ եկաւ հայերուն մէջ:

Երկրորդ օրուայ երեկոյեան, կէս դիշերին, սկսայ անհանգիստ
ըլլալ եւ երթալով սկսաւ շունչս բռնուիլ. չէիք կրնար չնչել, թո-
քերս կարծես կը քամուէին եւ ալ ի վիճակի չէի շունչ առնելու:
Լաթերս հանելով վաղեցի դէպի մօտակայ աղբիւրը՝ ուզելով հոն եր-
կըննալ, եւ եթէ պէտք էր՝ խեղդուիլ ալ. բժիշկ չկար, օգնութիւն
չկար...: Մօրեղբարյս եւ Սահակը կը հետեւէին ինծի սարսափով՝
թէ ինչո՞ւ ես ինքզինքս ջուր կը նետեմ: Գիւղին մէջ, տարի մը ա-
ռաջ, լողնալու ատեն կարիճի մը վրայ կոխած էի. ենթադրեցի որ
օձ մը կամ կարիճ մը խայթած ըլլայ զիս. ջուրը շատ սառն էր, հա-

կառակ ամառուայ օդին: Ես այնպէս զգացի՝ որ երկու ժամ ետք թմրութենէս արթնցայ եւ շրթներս սկսան շարժիլ, թոքերս թէեւ դոց տակաւին, բայց կը զգայի որ շունչ կրնամ առնել և արտաշնչել:

Այսպէսով տաճիկներուն մերձեցումը Տերսիմին՝ այս վտանգը բերաւ ինծի անձնապէս, եւ որքան տեղեկացայ՝ Հարիւրաւոր ժողովուրդի մէջ լուի ես էի որ այս վտանգին ենթարկուած էի: Երկու երեք օր ետք հեռացան այդ զօրքերը, բայց Գիւրտերը անհանգիստ էին որ այս շարժումը ոչ թէ Կարինը Ռուսերէն ետ առնելու համար է, այլ փորձելու համար թէ Գիւրտերը պիտի յարձակի՞ն իրենց վրայ: Տերսիմցիները ամէն տեղ իրենք ալ անհանգիստ կը զգային, յատկապէս Բերդակի, Խոզատի մէջ կռիւի բռնուեցան եւ այս կռուի բռնուողներէն առաջինը եղաւ Փիլիւանքի էշիրէզը, որուն յայտնի կերպով օգնութեան եկան Հալուորի շրջանի տաճիկները եւ մեր սիրելի բարեկամը Տուրսոն, քիւրտերուն մէջ Տաճկաստանի թիւ մէկ թըշնամին, որ արդէն իր ասպատակութիւններուն համար կը հալածուէր: Կռիւները շատ յաճող գացին քիւրտերուն համար սկիզբները, եւ հետըզհետէ դժուարացան, որովհետեւ բարդիզանական կռիւներ մղողներ չկային. տեսակ մը թշնամական խաղափորձ կը նկատուէր, սակայն քիւրտերու դիւղերը կ'այրուէին: Տուրսոյ Արիշը անուն կը հանէր եւ ամէն ոք իր դովքը կը փառաբանէր: Ան շարունակ առաջաւոր դիրքերու վրայ էր իր երկու զէնքերով եւ խուրճինը լեցուն փամփուշտներով, իր ձիուն հոգ տանող եսվերով:

Օր մըն ալ երբ Հաճի աղային տղան Սիւլէյմանը կը պաշարուի եւ դերի բռնուելու վտանգին տակ կ'իյնայ, Տուրսոյ իր դիրքէն ամենայն յանդգնութեամբ կ'անցնի հակայարձակումի, կը քչէ յառաջացող տաճիկները, բայց սլատահական դնդակ մը ճակատին կը ստանայ եւ կ'իյնայ ճշմարիտ հերոսը Տերսիմի: Մենք բարեկամ մը կորսընցուցինք, իսկ քրտութիւնը կորսնցուց իրական առաջնորդ մը ու դեկավար մը: Յաջորդ օր, լեռներու ծերպերուն մէջ անոր թաղման արարողութիւնը կատարուեցաւ: Ձին լողցուած եւ ամէն կերպով պճնուած էր. տիրոջը երկու հրացանները եւ սուրը տեղաւորուած էին թամբին վրայ. երկու քիւրտեր ձին ժողովուրդին կը ցուցադրէին, մինչ քիչ անդին հաւաքուած էին լալկան 12 կիներ եւ Տերսիմի ծերպերէն խոշոր բաղմութիւն մը. անոնք դովքը կը հիւսէին մեռնող հերոսին:

Արծիւները եկած են բարեւի կը կենան,
Պիւլպիւլները եկած են կեանքի կը կանչեն հերոս Տերսիմցին,
Վուշ վուշ Տուրսոյ, վուշ վուշ Տերսիմ,
Լեռներու հսկաներն եկած են շարք շարք քեզի կը սպասեն

Ձիդը կը խրխնջէ, քեզի կը սպասէ նոր մարտի համար,
Նամարդ թշնամին վախկոտ անունէդ կը փախչի.
Վուշ վուշ Տուրսոյ, վուշ վուշ Տերսիմ :

Այսպէս, մէկը կ'երգէ, միւսները կ'արձագանգեն. ձին խոռվքով
կ'երթայ ու կու դայ, ու Տերսիմ իր հերոս զաւակը հողին կը յանձնէ :
Այս կռիւի ընթացքին բաւական հայեր նահանջող քիւրտերուն հետ
սպաստանեցան լեռները :

Անձրեւի, ցուրտի եւ քաղցի պատճառով թիֆոյի բռնուեցաւ մօր-
եղբայրս, որուն հոգատարեցի եւ սակայն թիֆոն փոխանցուեցաւ ին-
ծի, թէեւ մօրեղբորս չափ ծանր չէր, սակայն պառկած կը մնայի
եւ ջուր անգամ չէին կրնար դտնել այդ ջրառատ երկրին մէջ :

Օր մը մօրեղբայրս եկաւ ըսելու՝ թէ պիտի երթան դիւղերը, հոն
տեսնելու թէ ի՞նչ կրնան դտնել ուտելու համար եւ նաեւ քանի մը
մարդոց մազերը կտրելու, քանի որ Սահակ իբրեւ քաջ սափրիչ ճանչ-
ցուած էր տաճիկներուն մէջ : Ես երկուքին ալ բարկացայ ըսելով .
«Այս պատերազմի ընթացքին, երբ յայտնի չէ թէ մէկ վայրկեանէն
միւսը ի՞նչ պիտի պատահի, ո՞ւր կ'երթաք, զիս այս վիճակին մէջ
ձգելով . գիտէք որ ես ձեզմէ ունէ մէկուն այդ բանը պիտի չընէի» .
դիտէին որ այսպէս էր, ուստի երկուքն ալ լուցին ու դացին հեռու,
ինչ խօսեցան՝ չեմ գիտեր, բայց ուշ ատեն քեռիս երեւցաւ, սակայն
Սահակը չկար այդ գիշեր : Յաջորդ օր ստուգեցինք որ Պետրոսը եւ
մօրեղբայրս դատած են Սահակին դիակը եւ թաղած : Տերսիմի այս
հեռաւոր լեռներուն մէջ թողուցինք Սահակը, որ այնքան զգոյշ էր
դիւղին մէջ . երբ ամէն անգամ որ այս կամ այն թուրքը զարնելու
մասին էր խօսքը, միշտ այն տեսակէտէն էր՝ թէ պէտք է որ մենք
մեզ պաշտպանենք՝ սպառնալիս մեր ընելիքները պատրաստելու հա-
մար : Ես հիւանդ՝ դետին փոռուած եմ, օտարական հայերէ չըջա-
պատուած :

Օր մը տաճիկերէն նամակ մը ստացաւ աղան . ոռուսական բանա-
կին անունով հրահէր մըն էր Հաճի աղային, որ ինք կամ իր ներկա-
յացուցիչը երթար Երզնկայ՝ իբրեւ հիւրը ոռուս մեծ դահակալին,
ծանօթանալու ոռուս բանակին եւ անոր կացութեան : Ծանօթները կը
խօսէին երկու հայ անուններու մասին, Մուրատ փաշա եւ Տիգրան
փաշա : Լսած էինք որ Սեբաստացի Մուրատը անցած է Սեւ ծովէն
Ռուսաստան, սակայն առաջին անգամն էր որ կը լսէի Տիգրան փա-
շայի մասին : Լուր զրկեցին դանազան միջոցներով որ այն հայերը՝
որոնք կ'ուզեն ձգել իրենց տեղը եւ անցնիլ Ռուսաստան՝ պատրաստ
լլլան եւ հաւաքուին Փիլիվանք . Երզնկայէն պիտի դար Մըսթոն եւ
մեզ պիտի առաջնորդէր : Որոշուած ատեն եկաւ Մըսթոն եւ ըսաւ որ

լով տղաքը պիտի տանին այս անքամ, մինչև որ ճամբաները ապահովուին եւ կարելի ըլլայ կիները եւս տանիլ: Արդէն մեծ մասը դանազան կողմերէ հաւաքուած երիտասարդներ էինք, մանաւանդ Չարսանճաղցի, Մէլիկերտցի եւ մասամբ ալ Խարբերդցի եւ քանի մը Արարկիրցի տղաք, մօտ 150 հոգի: Մեծ զուլուրեթեամբ սկսանք ուղղուիլ դէպի Երզնիկ, ուր հաւաքուեցանք մեծ տաճարին ոտքին տակ փերուող ձորերուն մէջ, մինչև որ մեր քաջ առաջնորդը երեւցաւ եւ մենք ամբողջ վերջեր մը դրեթէ վաղելով անցանք զանազան էջիբէղներէ: Վերջապէս տասը ըսպէ հանդիստ տրուեցաւ մեզի, որմէ վերջ նորէն ոտքի էինք, եւ Մըսթոյին հետեւելով՝ կ'անցնէինք ձորեր, անտառներ, լեռներ, դետակներ, միշտ խուսափելով ընտանեացիներէն: Մըսթոն միջին տարիքով, լայնաթիկունք, ճարպիկ եւ խիզախ քիւրտի մը սոյաւորութիւնը կը ձգէր եւ վստահութիւն կը ներշնչէր իրբեւ առաջնորդ. կը խօսէր քիւրտերէն, կոտրած տաճկերէն եւ մեզի հետ կ'արտայայտուէր հայերէն:

Վերջապէս հասանք Օվաճուք, ուր դատած էր մօրեղբայրս. կ'ըսէր թէ մօտ եօթը ամիսներ ապրած է այդտեղ. մինչ այդ ես ալ չափած էի Տերսիմի մէկ ծայրէն միւսը: Կը մօտենար փամը, երբ պիտի հասնէինք մեր երազին՝ աղատութեան: Օվաճուքէն քիչ մը անցնելէ ետք՝ հասանք սարահարթի մը, ուր քիւրտը առաջարկեց որ մենք հանդատանք ու երկնանք:

Երբ աչքս բացի, տեսայ որ շուրջս մէկը չկար, ո՛չ ընկերներս, ո՛չ Մըսթոն եւ ո՛չ իսկ մօրեղբայրս: Կարելի է ըսել ահաբեկուեցայ քիչ մը. կէս քուն կէս արթուն փորձեցի կանգնիլ, չէի կրնար աչքերս եւ մէջքէս վար կարծես անգամալուծուած էի. վերջապէս բաւական հեռուն նշմարեցի մեր խումբը որ կը յառաջանար. զգացի որ կրնամ ոտքերս շարժել եւ փորձեցի վազել: Այն ատեն անդրադարձայ որ սիրտս ուժգին կը բարախէր եւ կոկորդէս տարօրինակ ձայներ դուրս կու գային. որքան շատ վազել փորձէի, այնքան սիրտս ու թոքերս թունդ կ'ելլէին եւ այդ աղմուկը կը շատնար: Բայց կ'ուզեմ հասնիլ ընկերներուս եւ այս վերջին վայրկեանին չմնալ մինակս այս անծանօթ լեռներուն վրայ, այսքան մօտ կարծեցեալ աղատութենէն զրկուելով: Վերջապէս վաղելով կը հասնիմ իրենց, կը դըտնեմ մօրեղբայրս եւ առաջին անգամ ըլլալով կը բարկանամ իրեն, թէ ի՞նչպէս կը ձգէ զիս առանց արթնցնելու եւ առանց մտահոգութեան կը ձգէ այս անծանօթ անտառներուն մէջ ու կ'երթայ: Թէ ի՞նչ կըսուի եւ կամ ի՞նչ ահաբեկման տակ ինք այդ բանը ըրաւ՝ ես չէի հասկընար. դիտեմ որ ես նման բան մը կեանքիս դնով պիտի չընէի: Կը հասնիմ Մըսթոյին, կը գանդատիմ իրեն եւս. դովեւէ ետք իր քաջուրթիւնը, կ'աւելցնեմ թէ այսքան հայեր իրար քով բերելը եւ մինչև

Հոս հասցնելը ինծի կը պարտի. շնորհակալ եմ իր այս քաջութեանը համար, բայց ի՞նչպէս զիս կը մոռնայ ու կ'անցնի: Վալլահի չեմ անդրադարձեր, ըսաւ, այս ի՞նչ յիմարութիւն է որ ըրած եմ: Շատ չմնաց, այս ալ կը մոռնանք ըսելով, ներողութիւն կը խնդրէ նորէն կրկնելով՝ վալլահի, վալլահի ի՞նչպէս այս ախմախութիւնը ըրած եմ: Կը մոռնանք եւ լաւ տրամադրութեամբ կը քալինք: Կէս ժամ ետք մենք կը դիմանք որ պաշարուած ենք անծանօթ դէմքերով, սուրնաւոր մարդերէ. մոսիմներով մարդիկ մեր չորս կողմը կը տեսնուին եւ մենք փախտականներս փոխանակ ուշադրութիւն դարձնելու Ռուսերուն, կը փաթթուինք իրարու, ոմանք կ'արտասուեն, ոմանք իրենց երջանկութիւնը կ'արտայայտեն: Ռուսերը մէկը կ'ուզեն որ խօսին, ընկերներս զիս ցոյց կու տան եւ ես կ'առաջնորդուիմ սպայի մը քով: Իր հարցումները չհասկնալով՝ կ'ըսեմ Տիգրան փաշան կ'ուզենք կամ ռուսերէն գիտցող ոեւէ հայ մը, եւ քանի մը բառ Փրանսերէնով կ'արտայայտուիմ, որուն ի պատասխան « տա տա» մը կ'ըսէ, ու կը տանի մեզ սպայի մը քով, որ շատ քաղաքավարութեամբ կ'ընդունի մեզ եւ ջերմադին կը համբուրուինք: Կը յայտնէ որ ինքն ալ հայ է, բայց շատ լաւ հայերէն չի գիտեր. կը հարցնեմ Մուրատի մասին, կ'ըսէ թէ անիկա եւ Տիգրան Տեւոյեանց Երզնկայ կը մնան. կը հաւաքուին զինուորները, մեզի կը բաշխեն խոշոր հացեր եւ թէյ: Բոլորս կը հաւաքուինք, շուրջ-սպարի կու դան նաեւ ուրիշ հայ զինուորներ. յետոյ կը յայտնեն որ ըստ իրենց եղած կարգադրութեան՝ պէտք էր մեզ տանին սպայակոյտի մօտ, նախնական հարցաքննութեան: Բայց քանի որ եկած էք կառավարութեան մասնաւոր հրաւերով, ձեզ կ'ուղարկենք Տիգրան Տեւոյեանցին եւ անիկա թող տնօրինէ ինչ որ լաւն է ձեզի համար, կը փսփսայ հայ սպան: Ես կը կարգամ նախապէս պատրաստած մէկ դրութիւնս՝ ուղղուած ռուս թագաւորին, ռուս զօրքին եւ այս արիւնոտ հողին, որ մեր երկու ազգերը երկար ատեն եղբայրացուցած է: Մենք մեր «քեռի»ին գիրկն ենք, կ'ըսենք, եւ երջանիկ ենք. սպան կ'աւելցնէ որ այդ դրութիւնը Տեւոյեանցին տամ. քանի մը խօսք եւս կ'ըսէ ու կը փակէ: Զինուորները ծափահարութեամբ վերջ կու տան մեր այս առաջին հանդիպումին՝ ռուս բանակի մէկ մասին հետ, որ կը բռնէր բոլոր լեռնակատարը, Օլաճուքէն Քեմալս. շատ քիչ միջոց մը կը բաժնէր զիրենք Խարբերդէն: Իր ուղղութիւնը այդ էր. ընդիմադիր ոյժ չկար Տաճկաստանի կողմէ. քրտական ուժեր ամբողջապէս պատրաստ էին միանալու Ռուսերուն, եթէ ասոնք այդ ուղղութեամբ լուրջ աշխատանք կատարէին, որովհետեւ Քիւրտերը եւ Տաճիկները արդէն պատերազմական վիճակ ունէին եւ Քիւրտերը այդ քաջալերանքին կը սպասէին:



Վահան Չերազ (եղբորորդի Մինաս Չերազի, կամաւորական բանակին մէջ)



Քիւրտ ցեղապետներ Տերսիսի մէջ





Աշոտ Արծրունի երկրորդ անգամ սահմանը անցած առին (1926)

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՓԵՐՈՒՆ

Ժ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՓԵՐՈՒՆ

ԵՐԶՆԿԱՅԻ ՄԷՁ

Կ'իջնենք Երզնկայ Եփրատի վրայով եւ կ'ուզողունք զէպի հայկական Շտապը, ինչպէս կ'անուանէին Մուրատի ապրած տունը, ուր կ'ընդունուին նոր հասնող զաղթականներ: Տերսիմէն եկող իմ ընկերներու մեծ մասը եկած ու անցած է զէպի Կարին, ինչպէս նաեւ երկու Յարութիւնները. հոս կը դտնեմ սիրելի Բենիամինը, որ արդէն դործի սկսած է Յակոբ Ասլանեանի մօտ, Մալաթիացի կամաւոր մը՝ որ խանութ ունի Երզնկայի մէջ:

Քաղաքը զօրքերով լեցուած էր եւ սրճարաններու առջեւ կային տաճիկներ, թէեւ լեզունները քիչ մը կարճ, բայց համարձակ, կարծես թէ իրենք չըլլային այն ոճրադործ ազգը, որ ահաւասիկ ամայացուցած է իրենց այդ քաղաքը, մերկացուցած իր բուն ընակչութենէն եւ լքած անտուն վիճակի մէջ:

Պետրոս կը մեկնի Թիֆլիս իրենց երբեմնի մէկ ազգականին մօտ. մօրեղբայրս եւ ես կը տեղաւորուինք տան մը մէջ, ոչ շատ հեռու րժիշկ Արշակ Պօղոսեանի կամ Մոսկուայի հայկական կոմիտէի բացած պաշտօնական տունէն, որուն քով կը մնայ Մուրատ: Տոքթօրը հիմը դրած է հիւանդանոց դարմանատան մը, ուր կ'աշխատին բաւական թիւով հայեր: Մէկ քանի օր կը թափառիմ Երզնկայի անտէր մնացած տուներուն մէջ, ուր կը հաւաքեմ դրքեր, օրինակ՝ Եղիշէի Պատմութիւնը, երկու ձեռագիր աւետարաններ եւ Բաֆֆիի Խենդը, որ թողուցի հոն՝ ապաւաժներու ծերպերուն մէջ, եւ որուն լուսանցքներուն վրայ դրած էի մեր ամէն օրուայ կեանքի մասին: Երբ օր մը քրտական տարազով կեցած էի եւ կը թերթատէի այս ձեռագիր աւետարաններէն մէկը, տեսայ առջեւս կեցած յաղթանդամ զինուո-

րական մը, տասըհարուածեանը մէջքին, պաշտօնական հաղուստով ինծի հարցոց թէ ի՞նչ կը կարդամ. Ձեռագիր անտարան մը կը թերթատեմ, պատասխանեցի: Ո՞ւր դպրոց դացեր ես. Խարբերդ, Փրանսական դրեճ: Անունդ ի՞նչ է. Յովհաննէս Տէր Յովհաննէսեան: Ո՞րքան ատեն է որ հոս ես. Երեք օր: Որեւէ աշխատանք ունի՞ս. Ո՛չ մէկ աշխատանք: Ուսուցչութիւն կրնա՞ս ընել. Կրնամ ընել, բայց դեռ բաւականաչափ դրքեր չեմ կրցած գտնել: Ոչինչ, ես Տոքթ. Պօղոսեանն եմ, այստեղ իմ պաշտօնատեղիս է, ժամ մը վերջ եկուր, հոն կը խօսինք. ուրիշ մարդ ունի՞ս քեզի հետ. Մօրեղբայրս, որուն հետ կ'ապրիմ: Ի՞նչ գործ ունի. Տակաւին բան մը չ'ընէր, դիւղացի հողատէր էր իր դիւղին մէջ: Ո՞ր դիւղի. Դատեմի: Դուն Գիւրտեբուն ջո՞վ ալ ուսուցչութիւն ըրած ես. Այո՛, բայց այդ անցած պատմութիւն է, դուն ի՞նչպէս գիտես: Եկող դաղթականները պատմեցին: Այսպէս ըսելով դնաց այս պատկառազու մարդը, որ կ'ըսուէր թէ Սերաստացի Մուրատի աջ բազուկն էր. ես ուրախ էի, բայց նաև տխուր՝ որ ուսուցչութեան մասին կը խօսին եւ ոչ թէ մեր վաղուայ ընկերներու մասին, զէնքի, կոռւի, վրէժխնդրութեան...

Քանի մը բոպէ ետք մօրեղբայրս եկաւ դտաւ դիս տան մէջ՝ դըրբերու հետ. պատմեցի հանդիպումս Տոքթ. Արչակ Պօղոսեանին հետ, որուն պիտի հանդիպիմ կէս ժամ ետք, եւ որ ինծի առաջարկեց ուսուցչութիւն, թէեւ որեւէ խոստում չտուի թէ պիտի ընդունիմ իր առաջարկը: Մօրեղբայրս մնաց մտատանջութեան մէջ. այդքան ժամանակ մենք միասին եղած էինք եւ ինք սկսած էր ինծի կոթնիլ: Ըսի որ բան մը չեմ խոստացած, կ'ընեմ ինչ որ կո՛ւղես, դուն ես կարեւորը ինծի: Ձէ, ըսաւ, այդ կերպով կապ մը կը ստեղծես եւ տեղեակ կը մնաս թէ ե՞՞րբ կարելիութիւն կը ստեղծուի որ մենք կարենանք հասնիլ Խարբերդ եւ ազատել մեր սիրելիները: Մեղ անհանգիստ կ'ընէր այս ազատութիւնը եւ այն պարագան՝ որ մեր ուժերը չէին օգտադործուէր ազգային նպատակներուն համար:

Մուրատ կանչած էր Վահրամ Տէր Մանուէլեանը՝ կապ ստեղծելու Տերսիմի յայտնի ցեղապետներուն հետ եւ կազմակերպած էր մէկ հայ՝ մէկ ոսկի Փոնտը եւ այդպէսով քաջալերած էր զանազան ցեղապետներ՝ ղուրդուրալու իրենց մօտ ղոնտուղ ժողովուրդին վերայ իբրև արտայայտութիւն իրենց բարեկամական զբաղումներուն:

Ես հանդիպեցայ բժիշկ Ա. Պօղոսեանի. առաջարկը կրկնեց եւ մօրեղբորս համար խոստացաւ գործ տալ հիւանդանոցին կամ դիւղերէն մէկուն մէջ, ուսից կ'ապահովէր հիւանդանոցի ուսելիքներուն մէկ մասը, կաթ, հաւկիթ, միս, եւն. : Ինծի երկտող մը տըլաւ, ուղղուած Վահան Թոթովենցի, որուն մէջ կ'ըսէր. «Քեզի կ'ուզարկեմ Պր. Յովհաննէս Տէր Յովհաննէսեանը որպէս ուսուցիչ եւ կը

խնդրեմ տալ իրեն ամէն կարելիութիւն որպէսզի կարողանայ կազմակերպել դպրոց մը սրբ տղոց համար, եւ խնդրեմ տեղեկացնել թէ ի՞նչ բաներու պէտք պիտի ունենայ դպրոցը: Պր. Տէր Յովհաննէսեան պիտի ասարի եւ քնննայ դպրոցի շէնքին մէջ եւ օգտուի կերակուրներէն. աղատութիւն պիտի ունենայ իր ուղած ձեւով կազմակերպելու այս առաջին դպրոցը Երզնկայի մէջ. պիտի ստանայ շարժական 36 ոււսույլի»: Այս մէկը ինծի տարօրինակ եկաւ. ես ըսի՝ շարժական չեմ ստանար, քանի որ իմ ասրուստը կը տրուի. ես քիւրտերուն համար առանց վճարումի եւ կեանքս վտանդելով կ'ընէի, ինչո՞ւ իմ ժողովուրդիս համար պիտի չընեմ, երբ այդ հնարաւորութիւնը կը տրուէր ինծի:

Վահան Թոթովենց Սարրերդցի էր, Կեդրոնականէն շրջանաւարտ, բարձրահասակ, գեղեցկաբէմ, ընկերական եւ կատակասէր, լեցուն հազարումէկ պատմութիւններով. նշանակուած էր տեսակ մը վարիչ Երզնկայի շրջանին կրթական գործերու, Սմերիկայէն եկած էր կամաւոր, եւ կամաւորական շարժումը դադարէէ ետք մնացած էր Կովկաս. ըստ երեւոյթին իր շրջապատը լաւ աչքով չէր նայէր քաղաքականութեան կամ վարած անձնական կեանքին վրայ: Այդ կը նշմարուէր Կայծակ Առաքելի վերաբերումէն, որ աջ ու ձախ կը խօսէր այդ Սարրերդցիին մասին, որուն ամերիկահայ մարդուն կեանքի պատմութիւնները մեծ հաճոյքով կը լսէինք երեկոները, շարժանկարային գունադեղութեամբ: Կայծակ Առաքելի, Դաշնակցութեան անուանի հայդուկներէն, Վանի հերոսամարտին մասնակցած ըլլալու հանդամանքը եւ Մուրատի հետ ունեցած տեսակ մը եղբայրակցութիւնը գէշ կ'անդրասառնար Թոթովենցի՝ այդ հաճելի մարդուն վրայ:

Քանի մը օր ետքը դացի Տիգրան Տեւոյեանցի քով. Տեւոյեանց Երեւանցի էր, հաբուած զինուորական հազուստ, ակնոց կը կրէր, միշտ գրազած, տպաւորիչ անձնաւորութիւն մըն էր. կ'աշխատէր ուսու բանակի հետախուզական բաժանմունքին մէջ եւ այդ շրջանի պետն էր, ինքն էր քիւրտերուն նամակազիրը. քիւրտերէն տրուած էր իրեն փաշայի տիտղոսը: Երբ կարգը ինծի եկաւ, հարցուց թէ ի՞նչ կ'ուզէի. ըսի որ քանի մը օր է քաղաքն եմ, Տոքթ. Ա. Պօղոսեանի կողմէն ուսուցչութեան պաշտօնի հրաւիրուեցայ եւ քանի մը օր առաջ, երբ սահմանէն կ'անցնէի, ընդհանուր դովք մը գրած էի Ռուսիոյ գահակալին եւ ուսու ժողովուրդին. հայ սպան թելադրեց որ առաջին անգամ քեզ տեսնեմ եւ քեզի յանձնեմ: Ներս հրաւիրեց, նստայ ու պատմեցի տարուան մը ընթացքին Տերսիմի մէջ եղած շարժումներուն, տաճիկ եւ քիւրտ յարաբերութիւններու մասին. ըսի որ փաստօրէն Ռուսերու եւ Գիւրտերու մէջ դիմադրող թրքական զօրքեր չկան Սարրերդի ճամբուն վրայ: Հարցուց իմ ծանօթու-

Թիւններս այդ շրջանի մասին: Ներս զնաց, ինքնազիր յուշեր մը բերաւ ըսելով՝ ասիկա օրինակէ եւ ինծի բեր, ես հինգ ռուսլի կու տամ աշխատանքիդ համար. ես առի այդ դիրքը, օրինակեցի եւ տուի Պր. Տեւոյեանցին, որ խոստացաւ ուրիշներ ալ տալ կամ Թելադրեց որ ես հաւաքեմ այս պատմութիւնները. շնորհակալութիւն յայտնեցի, ձեռքի հինգ ռուսլին սեղանին վրայ եւ դուրս ելայ. բայց ասիկա պատճառ եղաւ որ բարեկամանամ այդ Երեւանցի խելացի հայուն, որ արթուն պահակն էր ո՛չ միայն ռուսական շահերուն, այլ նաեւ հայկական իրական կապն էր ռուսական բանակին հետ եւ տեղեակ կը պահէր Սեբաստացի Մուրատը եւ մանաւանդ Դաշնակցութեան հիմնադիր Ռոստոմը:

Քանի մը օր ետք, երբ Տեւոյեանցի դրասենեակի քովի սենեակը կը սպասէի, տեսայ որ Պր. Տեւոյեանց արագութեամբ վազելով սանդուխներէն վար կ'երթայ մէկը դիմաւորելու. զինքը բաւական մը ճանչցած էի եւ դիտէի որ սովորական մարդոց վերաբերում ցոյց տուող մարդ մը չէր. ներս մտաւ լայն ճակատով, մօրուքով եւ լուրջ դէմքով մարդ մը, սուր Թափանցող աչքերով. Տեւոյեանցը զիս ներս կանչեց եւ ըսաւ. Սիրելի ընկեր Ռոստոմ, ասիկա Խարբերդցի երիտասարդ դաշնակցական մըն է. քանի մը օր է որ հասած է հոս, լաւ ծանօթութիւններ ունի Տերսիմի մասին. Տոքթ. Արշակ Պողոսեանը զինքը ուսուցչութեան հրաւիրած է նոր բացուելիք որբանոց-դպրոցին: Հա, ըսաւ, ես ալ եկած եմ քիչ մը այդ դպրոցի խնդրով դբադելու եւ ցուցմունքներ տալու: Հասկցայ որ այս կրնայ Դաշնակցութեան երրորդութեան անդամ՝ Ռոստոմ Զօրեանը ըլլալ: Հարցոցի Տեւոյեանցին Թէ Պր. Ռոստոմը Զօրեանն է. եւ երբ դբական պատասխան տուաւ, վաղեցի քովը առանց երկմտելու համբուրեցի ձեռքը, որ դբեթէ անսկնկալի եկած՝ ետ քաշեց: Ես ուրախ ու երջանիկ էի եւ շնորհակալ Տեւոյեանցին՝ որ այս պատեհութիւնը տրուաւ ինծի. ահա պատանեկան օրերուս պաշտամունքի առարկայ՝ Ռոստոմը, ողջ եւ առողջ դրկելու եւ ձեռքը համբուրելու առիթը կ'ունենամ...:

Այդ երեկոյ, ժամը ութին, ժողով կար Տոքթորին մօտ. քաղաքին մէջ գտնուած բոլոր ուսուցիչները հրաւիրեցի, կը խօսինք եւ կ'ուզեմ որ ժողովէն ետք վայրկեան մը ինծի հանդիպին. չէի կրնար սպասել, ի՞նչ պիտի ըսէր Ռոստոմը ինծի: Դացի Մուրատի պաշտօնատեղին. առաջին անգամ կը հանդիպէի իրեն: Այսօր ալ, այսքան տարիներ ետք, կը դգամ Թէ մեր հերոսներուն մէջ ամէնէն շատ սիրածս այս մարդը եղեր է, Թեբեւս անոր համար որ առաջին անգամ տեսած էի զինքը Փրանսացիներու դպրոցին մէջ. պիտէի որ Սեբաստիայէն փախած, ահ ու սարսափ ձգած է տաճիկներուն վրայ ու

կրցած է արդարացնել իր անունը (իր ֆէրՄԱՍԸ)․ եւ ահա հոս է առաջին դիժերուն վրայ, նորէն իր ժողովուրդին համար եւ իր ժողովուրդին հետ: Ժպտուն, դիւրահաղորդ․ «Հա՛, բալաս, քիչ մը եւս պատմէ, ի՞նչպէս բանտի մէջ այրեցան Խարբերդի մեր տղաքը»․ նստաւ, նոր նարկիլէ մը ապսպրեց եւ սկսաւ հարցնել իմ ընտանիքիս մասին, աղատմանս մասին, Տերսիմի մասին, որքան հայութիւն կը դտնուի Խարբերդի մէջ եւ նման հարցումներ․ երբեմն խոշոր ամպեր կը լայննային իր ճակատին վրայ, երբեմն քաղցր ժպիտ մը կը սահէր իր շրթներուն վրայէն, եւ երբեմն կարծես դուրդուրանքով կը լեցուէր իր հոգին․ ասոր համար է որ կ'ըսեն թէ «Մուրատին նման հոտոտ ծաղիկ չկայ»: Այս անդուգական հերոսը առած է զիս իր կողքին եւ ինձի նման՝ ինձի հետ կը տառապի եւ կ'ապրի ողբերգութիւնը, Խարբերդի բանտին մէջ այրած հերոսներու տառապանքը եւ սակայն կը զգաս իր ամբողջական դուրդուրանքը ու վստահ ես որ ո՛ւր Մուրատը կայ՝ հայ ժողովուրդը ապահով ձեռքերու մէջ է եւ կ'ախոսոսամ որ իր ժողովուրդը չլսեց իր ձայնը եւ չհասկցաւ այս մեծ մարդուն եւ մեծ հերոսին անսահման վիշտը:

Ես առաջին անգամ քեզի պիտի դայի եւ պէտք էի դալ, կը բացատրեմ ինքզինքս, բայց սիրտս չէր տաներ ունեցած այնքան բեռիդ վրայ նոր ծանրութիւններ աւելցնել եւ յետոյ դիտէի որ ամէն օր նոր զրազումներ եւ նոր մտահոգութիւններ կ'աւելնան․ ըսի իրեն՝ որ այսօր Ռոստոմին հանդիպեցայ, Տեւոյեանցի մօտ, թէ ինչ լաւ էր որ երկու քաջ մարդոց հանդիպած եմ․ բացատրեցի սահմանազլխի հարիւրապետին պատուէրը Տեւոյեանցին թուղթը տալու եւ թէ վերագարձուցած էի օրինակած յուշերը, եւ Ռոստոմին հոն պատահական հանդիպումս, որ Տոքթորին կարգադրութեամբ պիտի կատարուի իր մօտ: Այսուհետեւ ամէն օր դպրոցի դորձերը վերջանալէն ետք հոս հանդիպիր, կ'ըսէ ինձի, եթէ յանձնարարութիւն մը ունենամ, քեզի կ'ըսեմ․ այնուհետեւ կրնաս երթալ ուր որ կ'ուզես:

Ես երջանիկ կը զգամ, կատուած կը զգամ ինքզինքս այդ մարդոց, հաւատքս կը զօրանայ իրենց մասին ու կը զգամ թէ՛ եթէ իրենց մտահոգութիւնները բաժնելու առիթը եւ պատահութիւնն իսկ ունեամ՝ հոգեւին բաւարարուած պիտի զգամ: Ռոստոմ, Մուրատ եւ Տոքթ․ Արշակ Պօղոսեան, մարդիկ՝ որոնք կը դորձեն, կ'աշխատին, շունչ եւ ուղղութիւն կու տան հայկական կեանքին եւ Հայոց ժամանակակից պատմութեան․ կը զգամ թէ ես ալ այդ առուի ջուրերուն խառնուած եմ եւ հպարտութեամբ կ'անդրադառնամ որ Աւետիք մօրեկըրայրս պիտի օրհնէ զիս:

Այդ նոյն երեկոյեան, բաւական մարդիկ եկած էին ուսուցիչներու ժողովին, ուր ներկայ էր նաեւ Փրոֆ․ Տօնապետ Լիւլեճեան,

որուն մասին խօսած եմ արդէն: Խօսուեցաւ զբքերու սլակասին մասին. ես խօսեցայ երգին կարեւորութիւնը շնչտելով, հակառակ որ երաժիշտ չէի, բայց նկատած էի որ տղաքը երգերով շատ կը հետաքրքրուին. կ'ըմբռնեն: Ռոստոմը արձանագրեց եղած դիտողութիւնները եւ ժողովը փակելէն ետք, ինծի դառնալով ըսաւ. «Վաղը կէսօրէ ետք ժամը երկուքին, Մուրատին քով ինծի հանդիպիր եւ միասին պտոյտ մը կ'ընենք»:

Յաջորդ օր սրտատրոփ կը սպասէի այս հանդիպումին. ժամանակէն առաջ հոն եմ. վերջապէս կ'երեւնայ Տոքթ. Արշակին հետ: Տոքթորը կ'երթայ դէպի իր հիմնած հիւանդանոցը, որ փրկարար դեր կը կատարէ հոն հաւաքուած ժողովուրդին եւ խոշոր մարդոց ալ գործի եւ ապրուստի սպտճառ կ'ըլլայ: «Բալենք դէպի Հայոց դերձմանոցը, ըսաւ. կը ճանչնա՞ս»: Այո՛, ըսի, շատ յաճախ կը հանդիպիմ: «Ի՞նչ կը տեսնես այնտեղ»: Այնտեղ կայ դերձման մը, վերան խաչ մը՝ երկու փայտի կտորով իրարու կապուած, աղջկան մը խարտեաչ մազերով, որ իմ վրայ շատ տպաւորութիւն թողած է. այս դերձմանը կ'երթամ եւ կրնամ ժամերով մնալ, կարծես հաղորակից ըլլալով մեր բիւրաւոր նահատակներուն: «Է՛հ, զիս հոն տար եւ տեսնեմ»: Առաջնորդեցի զինք այնտեղ, նայեցաւ խաչին, եւ կարծես կախեց շրթները, դէմքին վրայ Չլային պրկումներ նշմարեցի... քալելով հեռացաւ ու կեցաւ ուրիշ դերձմանի մը մօտ. ես անխօս կեցայ ու հետեւեցայ իր ամէն մէկ շարժումին. նշմարեցի որ արցունքի կաթիլներ կը վաղէին իր մօրուքէն վար. երբ տեսայ Ռոստոմի արցունքները, չկրցայ դիմանալ եւ ջարդերէն ետք՝ առաջին անգամ ըլլալով սկսայ հեկեկալ... չէի կրնար դսպել պոռթկացող յուզումս: Հազիւ հանդարտեցայ, ինքզինքս հաւաքեցի եւ ներողութիւն խնդրեցի Ռոստոմէն. չէի դիտեր թէ ի՞նչ պատահեցաւ, այնքան արհաւիրքներէ անցած էի առանց արցունքի...: Յանկարծ Ռոստոմ մօտեցաւ ինծի, տարածեց աջ թեւը ուսերուս վրայ՝ ըսելով. «Պէտք է որ աշխատիս քու բոլոր նահատակ ընկերներուդ տեղն ալ»: Մեծ պատուէր մըն էր, եւ այն մտածումը թէ ի՞նչ ուժերով եւ կամ ի՞նչ կարելիութիւններով պիտի գործէի՝ երբեք չխոռովեց զիս: Ռոստոմի խօսքերը ընդունեցայ հրահանգի մը սլէս: Այո՛, սլէտք է որ աշխատէի, աշխատէի բոլոր նահատակ ընկերներուս համար, անխոնջ եւ տոկուն, նուիրումով եւ սիրով:

Երբ կը վերադառնայինք, հարցուցի թէ ի՞նչպէս կրնայի աշխատիլ. «Օրինակ, ըսաւ, կ'ըսեն թէ դուն Ամերիկա ելրայր ունիս, կըրնաս երեւակայել թէ ո՞րքան պիտի ուզէր իմանալ որ դուն ազատուած ես. այսպէս ալ բոլոր ազգակիցներդ, բոլորն ալ լուրի կը սպասեն. առաջին առիթով տեղւոյդ վաղթակայանը հասնող անուանա-

ցանկը ա՛ռ եւ կարգադրէ որ զըկեն Ամերիկա . այսպէսով անոնց տա-
ռապող սրտերը կ'երջանկացնես եւ դուն ալ անոնց երջանկութեամբ
կ'ուրախանաս : Ասիկա հասարակական ծառայութիւններէն մէկն է ,
որ պէտք է կատարուի : Յետոյ , տաճիկներու տուները պահուած կը
մնան մեծ թիւով երայխաներ , աղջիկներ ու կիներ , որբեր . ասոնք
հաւաքելով՝ աղբին վերադարձնելը ամէնէն նուիրական դործն է , որ
պէտք է կատարուի , եւ յատկապէս հայ որբերուն մէջ արթնցնել աղ-
վային ողին ու դիտակցութիւնը» : Նորէն հարցուց ընտանիքիս մա-
սին եւ կրկնեց թէ ամէնէն առաջ մի՛ մոռնար քու հարազատները եւ
ըրէ մարդկօրէն ինչ որ կրնաս անոնց ազատման դործին համար : Մօ-
տեցած էինք Մուրատին տանը . «Ես Մուրատին ալ պիտի ըսեմ , ա-
ւելցուց Ռոստոմ , որ քաջալերէ քեզ եւ քու սիրած բաներդ կարողա-
նաս ընել . մի՛ թողուք որ Մուրատը ինք մտածէ ամէն բանի վրայ ,
երբ առանց այդ ալ այդքան զբաղած է այս օրերուս» :

Նոյն ձեւի պտոյտ մը կատարեցի Փրոֆ . Լիւլեճեանի հետ . դա-
ցինք մինչեւ Յփրատի եզերքը . այն ատեն տակաւին բացուած չէին
խրամատները՝ ուր դտնուեցան հազարաւոր դիակներ հայ զինուոր-
ներու եւ տղոց , որոնք տաճիկները բանակներէն զատելով , իրենց
ձեռքերով փորուած այս խրամատներուն մէջ թաղած էին : Փրոֆ . ը
կ'ուղէր պատմութիւնս գրել եւ ճամբու ընթացքին խօսեցուց զիս իմ
ընտանիքիս , իմ ուսմանս , իմ ընկերներուս եւ կուսակցական կեան-
քիս մասին : Ես այն օրերուն կը կարծէի որ ե՛ս պիտի գրեմ իմ գիւղի
պատմութիւնը եւ չէի ուզեր իրեն պատմել , բայց պատասխանեցի
իր բոլոր հարցումներուն . ոտքի վրայ քալելու ատեն ըսածներս գրի
կ'առնէր . ըստ երեւոյթին իր կարծիքով պատմածներս հասարակա-
կան արժէք ունէին : Այսպէս կէսօր մը միասին անցուցինք . շատ չան-
ցած , Փրոֆ . ը մեկնեցաւ Կարին , ուր մահացաւ առանց կարենալ վեր-
ջացնելու այն ձեռնարկը՝ որ ստանձնած էր . մեծ մասամբ ժառան-
գութիւն մնաց իր կրտսեր եղբոր՝ Լեւոնին , որ յետապային տարինե-
րով Ֆրէզնոյի մէջ խմբագրեց «Մշակ» թերթը :

Դպրոցը , որ ես կազմակերպեցի , Երզնկայի մեծ հրապարակին
վրայ կը գտնուէր , ուր դուրսէն եկողներ կը հանդիպէին : Աւելի քան
120 աշակերտներ ունէի , որոնց շուրջ հաւաքուեցան ուրիշ ուժեր ,
օրինակ Աննա վարժուհին՝ Գերմանական դպրոցէն , վերջը եկաւ Ռօզ
Դամզարեան , օրիորդ Միրաքեան , օրիորդ Աննա՝ որ դարձաւ տիկին
Գրիգորեան : Երգեր կը սորվեցնէի , մարզանք կու տայի տղոցը , Հա-
յոց պատմութիւն եւ մեր օրուայ պատմութիւնը կը դասաւանդէի :
Կրնամ ըսել որ նոյնացած էի այս տղոց հետ . մեր յարաբերութիւն-
ները եղան եղբայրական , ընկերական եւ ըստ երեւոյթին Վահան Թո-
թովենց դօճ էր դպրոցի ընթացքէն , թէեւ այնպէս կը նշմարէի որ իր

սիրտը Երզնկայ չէր, այլ Թիֆլիս: Այստեղ հանդիպեցայ վաճան Զերազին, Սողոմոն Թէհլիրեանին, Երզնկացի Կարապետ Սարաֆեանին, սիրելի Հայկաղ Հերոյեանին, Խարբերդի Ֆրանսական դուէճէն:

Մուրատին մօտ կ'ապրէր վաճաղն անունով հնչակեան մը, երբեմն ձիապտոյտի կ'երթային միասին եւ կը վերադառնային: Այդ օրերուն Խարբերդէն հասան երկու որբեր՝ Տիդրան եւ Արտաշ Գեշիշեաններ, ուսուցիչ, փաստաբան եւ երաժիշտ Գեշիշեանի երկու արթուն զաւակները, որոնց հանդէպ մասնաւոր դուրսդուրանք մը ունէի. աղուոր ձայն ունէր Արտաշը եւ կ'երգէր Հայերու կամ տաճիկներու յօրինած երգերը: Երբեմն կը տանէի զինքը Մուրատին մօտ, որ կը սիրէր լսել այդ երգերը, կը տառապէր բայց շատ կը սիրէր այդ սրտի աղաղակները. ես ալ կը սիրէի այդ երգերը, շարունակ յիշելով թէ ինչե՛ր եկան մեր դէլսուն... կը նկատէի որ Մուրատը իր ներկիւնէի փչոցը աւելի կը շատցնէ եւ իր հանդարտ, մեղմ ու բարի դիմադիծը կը փոխուէր, դէմքին վրայ յայտնի ընելով իր խռովքը. նշան կ'ընէի Արտաշին՝ որ դադարեցնէ եւ կամաց մը դուրս կու գար: Երբեմն կը գրէի Մուրատի անձնական նամակները Անդրանիկին, որմէ յաճախ նամակ կը ստանար:

Օր մը Երզնկայ երեւցաւ Տերսիմէն ծանօթ Խարբերդցի Արտաշէս Յակոբեանը, Գէորգեան ճեմարանի աշակերտ. իրեւ Հին ծանօթներ՝ սիրալիբ ընդունելութիւն մը ըրին իրեն: Բայց քանի մը օր ետք, նկատեցի որ Արտաշէսը, աքսոր, թափառում, լլկում եւ ամէն տեսակ տանջանք տեսնող այս սղան, համայնաւարական քարոզչութիւն կ'ընէ եւ կը խօսի որ մեր այս բոլոր քաջածները դիզուած հարստութիւններու համար է եւ մենք պէտք է բաժնենք ինչ որ ունինք, պէտք է հաւասարութեան վրայ հիմնուինք, պէտք է բանուորներու աշխատաւորներու շահերը պաշտպանուին, եւն. եւն. ինքը մեծ մեղք մը չի սեպեր անհասկնալի վերաբերումը դէպի Հայերը: Արտաշը շատ լաւ հագուած էր Երզնկայի այդ օրերուն օգին համար. յաւելեալ ունէր շատ տաքուկ վերարկու մը. երբ այս վէճի մէջ էինք եւ Մուրատի տունէն վար կ'իջնէինք դէպի փողոց, իր վերարկուն առի ձեռքէն, ըսի որ ասոր պէտք չունիս հիմա երիտասարդ ես եւ լաւ հագուած, վարը դաղթակայանի դրան վրայ պահակ՝ տարեց Զմիլածաղցի Մերկէր ամուն կայ, որ կը սրսփայ, կուրծքը բաց է, տաբատը բղկտուած եւ շարունակ ձեռքերուն կը փչէ, քիչ մը տաք նալու համար. անիկա աւելի պէտք ունի քան դուն: Սկիզբէն կատակ կարծեց, եւ երբ նկատեց որ շատ լուրջ կը խօսիմ, ընդդիմացաւ բուն կէր: Գով: Ուրեմն, ըսի, ձայնդ կտրէ եւ նախ լսէ չըջապատի կարիքները ու յետոյ բերանդ բաց: Այնուհետեւ երբեք առիթը չունեցայ Արտաշին նման դաղափարներ արտայայտելը տեսնելու: Նման

վէճերու մէջ կը մտնէինք նաեւ սիրելի Բենիամին Ժամկոչեանի հետ ալ, որ դպացումով թէեւ հակադաշնակցական, բայց սրտով հայրենասէր էր, իր եղբոր սպանութեան կսկիծը սրտին մէջ եւ վրէժի հուրը կուրծքին տակ, կ'ապրէր ամբողջ հայութեան տառապանքներուն բաժնեկից. մենք կը վիճէինք, բայց որքան ժամանակը կ'անցնէր, այնքան աւելի կը կասկածէի այս աղնուական տղուն, որ հոգւոյն մէջ կ'ապրէր ցեղին տառապանքը եւ շատ ալ դո՛հ չէր առետրական դործէն. շատ անգամ կ'ըսէի որ իր դերը ուսուցչութեան մէջն է. եւ իրապէս այսօր Լիրանանի մէջ Սահակեան վարժարանի տեսուչն է:

Այդ օրերուն Մուրատը խումբով իր դիրքերը դացած էր. վերագարձին կը բարձրանայ վեր՝ իր սենեակը. Կայծակ Առաքելը կը մնայ վար հսկելու ձիերուն հոգատարութեան վրայ. կը մօտենայ իր ձիուն ետեւը, ձին աքացիով կը դարնէ վանի հերոսամարտի առիւծ՝ Կայծակ Առաքելին. վար կը վազեն ու կը վերցնեն անմիջապէս, Տօքթ. Պօղոսեանը կը կանչեն, բայց ոչինչ կը փրկէ այն մարդը, որ հագար ու մէկ կուռներու մէջ միշտ առաջինը եղած էր մեծ հայդուկներու փաղանդին մէջ, որ արհամարհած էր վտանդ ու կուռ եւ կեանքին միշտ կատակով նայած եւ ունէր սքանչելի պատմելու ձեւ մը: Բայց ահա ձիու մէկ աքացիով կ'իյնար իր ամէնէն շատ սիրած ընկերոջ Մուրատի գրկին մէջ, հերոսական կուռներէ հեռու...

Այս մահը մեծ սարսուռի մատնեց ամբողջ հայութիւնը. իր դադաղին վրայ յաջորդ օրը ճառեր խօսուեցան. իմ խօսքիս մէջ կ'ըսէի. «Մեր վարդերը միշտ կարմիր են, միշտ արիւնով թաթաղուն, դուն ալ սիրուած վարդ մըն էիր հերոսներու փաղանդին մէջ եւ ահա Սեպուհ լերան դադաթէն, Վարսոյայ վանքէն, Վանի այգեստանէն հերոսները քեզ դիմաւորելու կու դան, դիւսահ կ'ըսէի կը սպասեն, մինչ ընկերներդ իրենց հողիին մէջ քու բացակայութիւնդ կը դռան, քեզի կը նային, սիրելի Քեռի, սիրելի Կայծակ Առաքել...»: Այդ թաղման ներկայ էր նաեւ Լեւոն Առաքելեան անունով Թիֆլիսցի հայ մը, ակնոցաւոր, լուրջ եւ կրթուած անձնաւորութիւն մը. մօտեցաւ ինձի, շնորհաւորեց իմ խօսքերս եւ ըսաւ որ ինք վարիչն է ուսական Բաղաքներու Միութեան Տրայիզոնի ճիւղին. Տիգրան Աղամալեանի կարգադրութեամբ եկած է Երզնկայի շրջանը, որբահաւաքի գործով: Իր խումբին մէջ են 10էն 15 հոգի, առաւելաբար Տրայիզոնցի. խնդրեց որ իրեն հետ հանդիպինք ու խօսինք:

Այդ օրերուն որբերու ի նպաստ ձեռնարկ մը կը տրուէր Մուրատի հովանաւորութեամբ. այս առիթով բեմի վրայ հանուեցաւ իմ կողմէ թատրոնի վերածուած դրուադ մը՝ հայ եւ թուրք բախումներէն ներշնչուած, որուն մէջ բաժին ունեցած էի նաեւ ես. հրաւիրեցին Առաքելեանն ալ ներկայ դառնուելու: Հրաւիրուած էին նաեւ

Երզնկայի ճակատին բոլոր հայ զինուորները: Մուրատը եւ Տոքթ. Պօղոսը շատ դնահատութեամբ արտայայտուեցան դրած նիւթիւ եւ բեմին վրայ խաղարկութեան մասին: Այդ փորձը, սակայն, առաջինը եւ վերջինը եղաւ, հակառակ բեմին հանդէպ ունեցած ջերմ փափաքիս՝ մանկութեանս օրերէն սկսեալ: Առաքելեանը նոյնպէս սիրով եւ դնահատանքով վերարբերուեցաւ եւ քանի մը փաղաքական խօսքեր ըսելէ ետք, ուզեց որ անպայման տեսնուինք: Չեռնարիլը լաւ հասոյթ ապահովեց եւ ես աւելի քան դո՛ւ ու երջանիկ կը զգայի բան մը կատարած ըլլալու համար:

Յաջորդ օր տեսնուեցանք պարոն Առաքելեանի հետ. պատմեց իր համալսարանական կեանքէն, թէ ինչպէս դարձաւ բուսակեր, եւ ըսաւ որ Ռուսաստանի կրթուած դասակարգին մէջ մեծ է թիւը անոնց՝ որոնք բուսակեր են. պատմեց որ քահանայի զաւակ է, թէ եւ դաշնակցական չէ, բայց կը համակրի Դաշնակցութեան, անոր ունեցած անկեղծ ղեկավարներուն համար, որոնք կարդասպահ կը ծառայեն մեր ժողովուրդին եւ իրենց քաջութեամբ յայտնի են Կովկասի մէջ: Ըսաւ որ իր պետն ալ յայտնի մտաւորական դաշնակցական մըն է՝ Տիգրան Ալամալեանը, որ ատեն մը ուսուցիչ եղած է Սանասարեան վարժարանի մէջ եւ ինքն ալ Աղամալեանի կարդադրութեամբ ահաւաստիկ անցած է Երզնկայի շրջանը՝ լծուելով հայ որբեր հաւաքելու դործին: Ես ողբերուած՝ հարցուցի իրեն թէ արդեօք ինծի նման մէկու մը պէտք չունի՞ր, իմ տաճկերէնի ծանօթութիւնս կրնայ թերեւս լաւ ազդակ մ'ըլլալ եւ հնարաւորութիւն մը տալ օգտակար ըլլալու այդ դործին: «Ես ալ այդ պիտի ըսէի, պատասխանեց ուրախութեամբ, կը սիրեմ այս խումբը օժտել արժէքաւոր ուժերով եւ պատրաստ եմ քեզ արձանագրել երբ որ ուզես»: Համոզուած էի թէ տաճիկներուն մօտ մնացած հայերը հաւաքելը, մասնաւորապէս որբերը, առաքելութիւն մըն է, բացառիկ դործ մըն է ասիկա, ժողովուրդին ծոցէն յափշտակուած մանուկները վերադարձնել ժողովուրդին: Այդ պատճառով է որ ես եռանդով կը լծուիմ այս աշխատանքին եւ մեծ դնահատանքով է որ կը խօսիմ Տիգրան Աղամալեանի մասին, որ Վրացիներու շրջանը դտնուելով հանդերձ, ամէն կերպով կը ջանայ տրամադրել ինքզինքը ժողովուրդի պէտքերուն:

Ճակատը հանդարտ է. կռիւները կարելի է ըսել թէ դադարած են. ամէն օր դադթականներ կը սկսին հասնիլ. մեծ թիւով Խարբերդցիներ, Կարնեցիներ եւ մինչեւ անգամ Մշեցիներ կ'անցնէին Տերսիմ եւ կու դային Երզնկայ: Ձէի մոռցած Ռոստոմի ըսած խօսքերը որբահաւաքի մասին եւ այդ դադափարով խանդավառուած էի. բայց կը սիրէի նաեւ որբանոցը. հետեւեալը երդ մըն է՝ որ դրած էի եւ սորվեցուցած մեր որբանոցի տղոց:

ՈՐԲԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Մենք որքեր ենք տառապանքի
Աշխարհ ամէն թող գիտնայ .
Զուլում գրկանք մեզ տիրեր են,
Որից Աստուած իսկ դողայ :

Մենք փշրանք ենք հայութեան,
Բերուած տարտի երկիրէն .
Յոյսը ունինք մեզի նեցուկ,
Խընամողներ՝ ապաւէն :

Սեւ բոցութիւն մեզմէ խլեց
Ծնողք, եղբայր, բոյր սիրուն .
Հազար ապրի ողջ հայութիւն,
Մեր տէրն է ինք ազգութիւն :

Արի՛ք, ընկերք՝ որքանոցի,
Սիրտ սրտի տանք ու մեծնանք .
Յուսահատիլ մեղք է մեզի,
Շատ ենք տեսեր թշուառ կեանք :

Անշուշտ պիտի լինի մի օր
Վերջ այս կեանքի դառնագին,
Եւ մենք ըլլանք ուխտեալներ,
Գործօն ոյժը հայ ազգին :

1 Դեկտեմբեր, 1916
(Որբանոց Երգնկայի)

Գացի դպրոց վերջին մնաք բարով ըսելու տղոց եւ միասին վերջին անգամ ըլլալով, երդեցիք վերոյիշեալ երգը :

Ես լծուած էի Առաքելեանի այս նոր խումբին . կ'արձանագրէի փոքրիկ պատմութիւններ, կը հաւաքէի ազատուածներու ընտանիքներուն օրագրութիւնները, թէ ո՞ր շրջանէն են, ե՞րբ ձգած են տունը, ի՞նչ են իրենց անունները, իրենց հարազատներուն անունները, կամ ի՞նչ անուն կը յիշեն, ի՞նչ խօսք կը յիշեն եւն . այս պատմութիւնները սարսուցեցիւ էին : Անոնք բոլորը կը վախնային հայերէն,

կարծելով որ ենթակիաները զոհ պիտի երթան Հայոց վրէժխնդրութեան՝ իրենց տունը, իրենց անունը, իրենց կրօնը ուրանալուն պատճառով. մանաւանդ բռնի ամուսնացածները կը վախնային որ իրենք դաւաճանած էին իրենց ցեղին եւ ազգութեան եւ առաջին զոհերը կ'ըլլան. հետեւաբար պէտք էր այնպէս ձեւացնէի որ ոչ մէկ հայ կը ճանչնամ, ոչ մէկ հայերէն բառ դիտեմ: Առ նուազն մէկ շարաթ կը տեւէր անոնց վերապահումը, մինչեւ որ կարենայի վստահութիւն ներշնչել, կապելով դիրենք հայերէն բառի մը, երգի մը կամ անուան մը, որ իրենց հարադատ հնչէր, եւ ահա կը սկսէին փղձկիլ եւ հոնդուր հոնդուր լալ եւ իրենց հարադատները փնտռել:

Այս ատենները Խարբերդէն եկան Դատեմցի Սարգիս Մարտիրոսեան, Առաքել Հերոյեան, իմ լեռներու ընկերս, Առաքել Ղարիպեան՝ հրաշքով ազատած, նոյնպէս ինծի շատ սիրելի Պօղոս Գալուստեան, Պօղոս Հերոյեան. Ամերիկայէն եկան Մամբրէ Թովմասեան, Թաթէոս Սահակեան, Խաչատուր Հերոյեան եւ Յովհաննէս Ասատուրեան, եղբայրը Մելքոն Ասատուրեանին, որ մեռաւ Երզնկայի Տոքթ. Արշակի հիւանդանոցին մէջ տիֆի բռնուելով, իր կիներն ու Ասատուր որդին ներկայիս Ամերիկա կը դտնուին: Կրցածիս չափ օգնեցի այս նորեկներուն, տեղ եւ դործ դտայ իրենց, թէեւ ժամանակս քիչ էր, որովհետեւ մաս կը կազմէի որբահաւաք խումբին եւ մանաւանդ կապուած էի այն ճշմարիտ հայուն՝ Լեւոն Առաքելեանին, որ կը հետաքրքրուէր հայկական դաժան պայմաններով եւ եկած էր կամաւոր կերպով լրծուելու այս սրբազան դործին:

Տաճիկները այդպէս հանդիստ չէին նստած. անոնք կասկածով կը դիտէին օր առօր շատցող հայերուն թիւը... այդ պատճառով մտահոգ էի. անոնցմէ ոմանք շատ մեծ ազդեցութիւններ ունէին տեղական ռուս կառավարութեան մօտ: Ռուս կարեւոր սպաներ ամուսնացած էին տաճիկ աղջիկներու հետ եւ տաճիկները այս ամուսնութիւնները կը նկատէին լաւ քաղաքականութիւն մը. մինչ մենք ցեղային վիրաւորանք կը զգայինք երբ մեր աղջիկներուն կամ քոյրերուն կը մօտենային, անդին տաճիկները իրենց մօտ կը հերասիրէին իրենց ատելի թիւ մէկ աղբայրին թշնամին, եւ կը շողոքորթէին դայն, եւ ամէնէն վերջն ալ իրենց աղջիկները կ'ընծայէին անոնց...: Ատրբպեճանցի թաթառները մեծապէս կը նպաստէին եւ կը քաջալերէին տաճիկ կնոջ եւ ռուս ղինոտորին միջեւ կատարուած այս յարաբերութիւնները. անտարբեր չէին մեր դործունէութեան հանդէպ եւ ռուս ղինոտրականութեան հետ կը դժուարացնէին մեր դործը, որ կ'աշխատէինք մեր ժողովուրդին վերադարձնել իրմէ խլուած որեւէ առարկայ կամ անդամ: Մուրատ կազմակերպած էր որոշ կիներ՝ որոնք յարաբերութեան մէջ էին տեղական տաճիկ ընտանիքներու հետ:

անոնցմէ կը լսէինք թէ ո՞ւր կրնան հայ մանուկներ դառնուիլ՝ դուրս գլուած հայ ծնողքէն, կամ հայ աղջիկներ՝ տարուած տաճիկ հարեմները: մեր ալ որոշ անսիրորձութիւնները կը ստեղծէին դժուարութիւններ, որմէ դիւսաւոր տուժողը կ'ըլլար այս շարժումը: կ'ուզէինք որքան հնարաւոր էր շուտ վերադարձնել մեր զաւակները, բայց մեր այս աճապարանքը պատճառ եղաւ որ տաճիկները դանդաւորին Ռուսերուն: միւս կողմէ, Ռուսերուն վարած քաղաքականութիւնը համապատասխան չէր մեր շահերուն, եւ հետեւաբար կը հաւատային տաճիկներու ըսածին՝ թէ Հայերը կը մտնեն իրենց տուները, կ'անպատուեն իրենց նամուսը, իրենց կրօնքը, կը փախցնեն իրենց զաւակները, տաճիկները անդամ հայացնելով...: Ռուսերը կը հաւատային, կամ աւելի ճիշտ, կ'ուզէին հաւատալ եւ կը փորձէին արդելքներ դնել մեր աշխատանքին առջեւ: Մենք առարկեցինք ըսելով թէ Երզնկայի մէջ տաճիկներու տունները բռնի տարուած հայ ձագուկները ազատել՝ սրբազան դորժ մըն էր: ո՞վ կ'ուզէր տաճիկ լակոտները առնել, բերել եւ պահել, երբ հազիւ կրնայինք տէր ըլլալ մե՛ր իսկ զաւակներուն: Բայց տաճիկները իրենց նամուսի, իրենց պատուի խնդիր կ'ուզէին ընել եւ չափազանցուած ձեւով կը ներկայացնէին իրենց դանդաւոր ոուս զինուորական իշխանութեան, որոնց կը տանէին ամէն տեսակ նուէրներ ընտրուած աղջիկներու ձեռքով:

Այդ շրջանին, ապատուելէս անմիջապէս ետք, նամակներ դրած էի եղբորս, ազգականներուս եւ յատկապէս Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ՝ Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեանին, խընդրելով իրմէ որ կիսատ մնացած ուսումս կարենայի կատարելագործել Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ:


Երզնկան հետզհետէ հայկական շունչ կը ստանար, դպրոցներ կը բացուէին: Մուրատ կ'ուզէր դադարականութիւնը ներսերը դրկել, կ'ուզէր որ զինուորական տարիքի մարդիկը մնային Երզնկայի շրջապատին մէջ եւ դադարականները որքան շուտ՝ հեռանային. եւ սակայն մասնաւոր վտանգ մը չնշմարտելով՝ ժողովուրդը չէր ուզեր ռազմաճակատին ներսերը քաշուիլ:

Մտահոգութիւններէս մէկն էր կապ մը ստեղծել մեր գիւղին հետ եւ կարգադրել որ որքան կարելի էր շուտով բերել մնացորդացը, ինչ որ աւելի լաւ պիտի ըլլար. այդ ուղղութեամբ դրած նամակներուս ոչ մէկ պատասխան ստացայ: Պր. Լեւոն առաւօտ մը յայտնեց որ կառավարութենէն հրաման եկած է որ մեր խումբը պէտք է քաշուի Երզնկայի շրջանէն, տաճիկներու կատարած բողոքներուն վրայ, թէ մենք Տրապիզոնի շրջանին կը պատկանինք եւ եկած ենք այստեղ եւ ազգամիջեան նեղութիւններ կը ստեղծենք, տաճիկներու

տուններէն տաճիկ աղջիկներ ու տղաներ բռնի տանելով եւ հայացնելով: Ես դտած էի 6 տարեկան տղայ մը, որ ձեռով մը որդեգրած էի, իր կրթութեան, առողջութեան եւ սնունդին բացառիկ հողատարութիւն կ'ընէի. Հայկազ դըրած էի անունը, որովհետեւ շատ կը նմանէր Հերոյեան Հայկազին. պէտք է յանձնէի զինքը որբանոցին. այս պարագան ինծի առանձին մեծ վիշտ կը պատճառէր: Գացի Մուրատին քով, ուր հանդիպեցայ Սեպուհին, որ Բարբերդէն այցելութեան եկած էր Մուրատին. յանձնարարեցին որ տանիմ արձանադրել տամ որբանոցը եւ հոն կապ պահեմ ու հողատարեմ ինչ չգիտի որ կրնամ: Խոստացան խօսիլ նաեւ Պր. Լեւոն Առաքելեանի հետ, որովհետեւ այդ օրերուն ազատուած էր Աւոյին աղջիկը՝ Աստղիկը, որ պէտք էր զրկել Տրապիզոն իր հարազատներուն մօտ: Մուրատ եւ Սեպուհ իրենց պարտականութիւն սեպած էին դուրդուրալ իրենց նահատակ ընկերոջ զաւկին, որ յաջողած էր ճողոպրիլ Խարբերդի տաճիկներու ձեռքէն՝ քիւրտերու միջոցաւ: Աստղիկին հետ կային ուրիշ կարգ մը կիներ եւ պղտիկ աղջիկներ, Կիւմիւշխանցի եւ Տրապիզոնցի, որոնց, ինչպէս յետոյ հասկցայ, օգնած էր Քրիստիանէն, կազմակերպելով անոնց փախուստը:

ԴԵՊԻ ՏՐԱՊԻԶՈՆ

Քանի մը օր ետք, 15 ձիաւորներով, այս տիկիներուն հետ կառքով ճամբայ ինկանք դէպի Տրապիզոն: Առաջին դիշերը անցուցինք Երզնկայի դիմացի լեռներուն բարձունքներուն վրայ. երկրորդ օրը անցանք Բարբերդէն եւ երբ կը մտնէինք Կիւմիւշխանցի սահմաններուն մէջ, այդ խումբէն շնորհալի հայ կին մը իջաւ կառքէն, սկսաւ պոռալ եւ վաղեց դէպի մեծ ապառաժ մը, դրկեց զայն եւ սկսաւ մորմոքով արտասուել ու աղաղակել. «Այստեղ, այս քարին վրայ քաշեցին ամուսինս դրկէս եւ տարին. ա՛լ պիտի չտեսնեմ զինքը...», ու սկսաւ մազերը քաշել. հաւաքուեցանք շուրջը, քաջալերեցինք ինչպէս որ կրնայինք: Այդ միջոցին, Պր. Լեւոն եկաւ մօտս, քաշեց զիս մէկ կողմ եւ ըսաւ. «Գիտե՞ս, Բարբերդի մէջ ինծի ըսուեցաւ եւ ես ալ հեռախօսով կապուեցայ Տրապիզոնի հետ. ինծի այդ տեղէն յայտնեցին թէ Ռուսաստանի մէջ յեղափոխութիւն սկսած է, բերէք ձեր դոյբերը, դուք այլևս պիտի չվերադառնաք: Հիմա քեզի դուրսիւն մը կու տամ, կը վերադառնաս Երզնկայ, այնտեղէն կը ստանաս մեր դոյբերը, տետրակները եւ հաշուեցուցակները: Մենք Տրապիզոնէն պիտի մեկնինք Թիֆլիս. ըստ եղած խօսքերուն՝ Տրապիզոնը հռչակուած է իրբեւ վրացական ծռնա: Աղամալեան պիտի փոխադրուի Կա-



Կարո Սաառնի





Յեղակրօն շարժման առաջին կամաւորական մարմինը
Կանգուն՝ Յակոբ Յակոբեան, Ասատուր Կիրակոսեան, Ընգլ Պօգօ
Նստած՝ Համաստեղ, Գարեգին Նժդեհ, Յ. Տէր Յովհաննէսեան

րին՝ իրրեւ ընդհանուր ղեկավար քաղաքներու միութեան եւ մենք ալ պիտի երթանք իրեն հետ»:

Ես առի ուսերէն յանձնարարական մը, որուն համաձայն դործով կ'երթայի Երզնկայ եւ պիտի վերադառնայի Տրապիզոն: Գացի Տրապիզոն միս մինակ, անցնելով քրտական ու տաճկական շրջանները, եւ երբ Երզնկայ հասայ՝ ամբողջ քաղաքը շարժումի մէջ էր. ամէն կողմ անսովոր երգեցողութիւններ, իրարանցում, պայթուցիկ մթնոլորտ մը կը տիրէր ամէնուրեք: Տեւոյեանցին օգնականին հետ գացինք զօրանոց եւ նկատեցինք որ զինուորներուն մէջ ընտրութիւն կը կատարուէր եւ Տեւոյեանցը կը խօսէր, խանդավառուած ողու զօրքին կատարած յաղթանակին եւ կարգապահութեան մասին. բանակը զինքը ընտրած էր որպէս զինուորական միութեան վարիչ անդամ: Մուրատին պատմեցի, ըսելով թէ Կիւմիւշխանէէն մինչեւ Երզնկայ գրեթէ մարդու եւ կառքի երթեւեկի չհանդիպեցայ. զինքը շատ մտահոգ տեսայ. այս Ռուսերուն ըրածին խելքը չի հասնիր. «Քանի որ պիտի երթաս, զգոյշ եղիր»: Ըսի իրեն՝ որ կը վերադառնամ իրեն եթէ դեռ մեզի համար կրնան լաւ օրեր ստեղծուիլ. դուրսը շարժեց ըսելով՝ սպասենք եւ տեսնենք. յետոյ աւելցուց՝ որ թերեւս կը տեսնուինք Պաթում կամ Թիֆլիս, որովհետեւ ես ալ հոն այցելելու պէտքը կը զգամ. արդէն շատոնց է որ կը կանչեն, թերեւս հոն աւելի կը տեղեկանանք դրութեան: Մնաս բարով ըսի իրեն. մի քանի փաղաքական խօսքեր ըսաւ եւ սիրտս ուրախացուց: Վերադարձիս, հանդիպեցայ մերիններուն, ընկերներուս, Դատեմցի տղոց եւ մօրեղբորս, պատմեցի ճամբորդութեանս մասին, եւ երբ կը պատրաստուէի ճամբայ ելլել, Առաքել Ղարիպեանը ըսաւ որ ինքն ալ Տրապիզոն կ'ուզէ երթալ կօշիկի գործի համար, հոն աւելի լաւ կարելութիւն կրնայ ըլլալ: Մնաս բարով ըսելով՝ ձգեցի զիրենք եւ մինակս ճամբայ ինկայ:

Ձիուն վրայ բոլորովին մինակ, կը կտրեմ կ'անցնիմ ինծի գրեթէ անծանօթ այդ շրջանը՝ դէպի Տրապիզոն: Այս պարագան մարդուս կը ներշնչէ տեսակ մը արկածախնդրական ոգի. կը զգամ թէ դէպի անծանօթ կ'երթամ եւ չեմ գիտեր թէ քիչ ետք ինչ կրնայ պատահիլ: Այս տեսակ մտածութիւններով կը կտրեմ կ'անցնիմ Երզնկան, հեռուէն տեսնելով Սեպուհ լեռները, ուր կ'իջևիէր Անահիտի բերդը իր արձանով: Կը կտրեմ ու կ'անցնիմ զօրանոցները, կամաց կամաց կը մտնեմ լեռնալանջը, որ կը բոլորէ դէպի Տրապիզոն տանող ճամբան: Քանի մը օրեր առաջ այս ճամբէն կ'անցնէինք աւելի ուղեւորուած՝ ընկերներու հետ միասին, այս անգամ մինակս, ձիուս խուրճիկին մէջ քանի մը տետրակներ, քիչ մը դարի ձիուս համար, քիչ մը ուտելիք ինծի համար: Պէտք է մագլցիմ գրեթէ լեռն

ի վեր․ անտէր ձգուած այդ շրջանին մէջ ոչ մէկ կանոնաւոր ճամբայ չինուած է, բացի անոնցմէ՝ որ Ռուսերը իրենց գրուման ընթացքին չինած են: Ճամբան ամալի է, եւ ես երբեմն կամաց, երբեմն կոկորդիս ու թոքերուս ներած չափով երդ մը կամ տաճկերէն շերերէն մէկը կը մղկտամ, ու ձիս կարծես ձայնիս եւ հոգեկան ներքին ապրումիս հետ կը նոյնանայ, երբեմն ինքն ալ կը խրխնջէ, կարծես կ'ուզէ իր թոքերը մաքրել պաղորակ օդը ծծելով: Բաւական մղոններ հտք, ես կանդ կ'առնեմ Բարերդի առջեւ, ոլորակ ճամբուն մօտ, ուր տաճիկները սրճարանին առջեւ նստած իրենց ծխամորձին հետ դլխահակ, կ'որոճան իրենց օրուան մասին եւ այն պատեհութիւններուն՝ որ օրը կ'ընայ տալ իրենց նոր կողոպուտի եւ աւարառութեան: Զրուեն քիչ մը դարի կու տամ, ջուր կը խմցնեմ, ես թէյ մը կ'առնեմ եւ կը շարունակեմ ճամբաս որոշ տեղ մը հասնելու համար, որովհետեւ չեմ ուզեր գիշեր ատեն ճամբորդել, երբ ճամբաներուն ծանօթ չեմ: Այն ատեն չէի գիտեր թէ այս վերջին անգամը պիտի ըլլար որ պիտի կտրէի այդ դրեթէ անասպատացած ճամբաները: Մղոնները կ'անցնին, երբեմն երգելով, երբեմն մտածելով, երբեմն յոյսերով եւ երբմն ալ չյայտեցած կարօտով ու բաղձանքով: Մթնշաղ է արդէն․ անցած եմ Կիւմիւշխանէն, բարձրացած եմ լեռներու վրայ՝ խանի մը մօտ, ուր իջեւանած են զանազան ճամբորդներ․ անկիւն մըն ալ ես կ'առնեմ․ կը կերակրեմ ձիս, թէյ մը կ'առնեմ, կը բանամ խուրճիկս եւ կը ճաշեմ․ յետոյ եարունեռլիս մէջ փաթթուած՝ կը պառկիմ․ չեմ գիտեր թէ կ'ընամ՞ քնանալ, սակայն կը մրափեմ, տեսակ մը կէս քուն կէս արթուն վիճակի մէջ:

Վերջապէս կ'արթննամ, քանի մը փարս կը վճարեմ այս անհիւրընկալ խանին, որ տաճիկներով ու քիւրտերով լեցուն է, կը նըստիմ ձիս ու կը քշեմ դէպի Տրապիզոն: Հեռուն կը տեսնեմ Սեւ ծովը եւ քաղաքին մէջ՝ կանաչադարդ, մշտադալար ծառեր․ այն տպաւորութիւնը կը թողուն թէ ծովու եզերքէն դէպի լեռները կը բարձրանայ քաղաքը․ առաջին տպաւորութիւնս շատ լաւ է, բնակչութիւնը կ'երեւի հոս ու հոն, լաւ հագուած, աւերածութեան հետքեր չկան, մեծ մասամբ յոյներ են, որոնք չեն աքսորուած․ իրենց ընտանիքին, իրենց տան եւ արեւտուրին վրայ են, կարծես թէ աշխարհի մէջ բան չէ պատահած: Կը հասնիմ մեր կայանը, կը յանձնեմ ձիս, եւ տետրակները կը տանիմ Պր․ Սոսքեյեանին՝ որ սիրով եւ դնահատութեամբ կ'ընդունի, ըսելով թէ քիչ մը կը մտահուռեւր վրա մինակ ճամբայ դնելով: Անմիջապէս ինձի սենեակ տրամադրեց եւ անունդիս մասին հուպաց․ ծանօթացուց վրա այն տղոց՝ որ դեռ չէի ճանչցած, ինչպէս նաեւ հայ հարիւրապետի մը, Զատիկ անունով, բարձրահասակ եւ վայելուչ, որ օրեր յետոյ ամուսնացաւ օրիորդ Արարեանի

հետ՝ Տրապիզոնի լաւադոյն ընտանիքէն, որուն ամուսնութեան ուրախութիւնը վայելեցինք միասին: Պր. Լեւոն Առաքելեանը կնքահայր եղաւ եւ մենք բոլորս սրտադին մաղթանքներ ըրինք այս ամուսին:

Կիրակի մը, որ Տրապիզոնի վանքին տարեդարձն էր, բոլոր վերապարտ Տրապիզոնցիները հաւաքուած էին վանքին շրջապատին մէջ. տեսակ մը յարութեան օր էր անոնց համար, մեծ ոճիրէն ետք ասիկա առաջին անգամն էր որ անոնք կը հաւաքուէին այնտեղ: Կային ամէն կողմէ ազատուած հայեր: Տօնական սեղանը երգերով զուարթացունէր. հուսկ հաւաքոյթ մը տեղի ունեցաւ, ուր հրաւիրուեցայ քանի մը խօսք ըսելու: Ոգեկոչեցի մեր նահատակութիւնը եւ մեր դիմադրութիւնը, աւելցնելով թէ կանգնած պատմական անցքերու նախօրեակին՝ տէր կանդնինք մեր իրաւունքներուն, այդքան արիւնէ ետք: Գովեցի Պօղոս Նուպարի Եւրոպայի մէջ կատարած ձեռնարկները, գովեցի նաեւ Մուրատի քաջութիւնն ու կորովը կրակին դէմ, անմիջական ճակատի վրայ, սակաւաթիւ ուժերով արթուն պահակի իր դերին մէջ: Ձեմ դիտեր թէ ո՛վ այս բանախօսութեան մասին դժբաժն էր Բ. Ժամկոչեանի, որ իր նամակներուն մէջ կը մեղադրէր զիս որ մոռցած եմ մայր կուսակցութիւնը: Ես բարբախտաբար նման արտայայտութիւններ չէի ունեցած. բաւականաչափ ծանօթութիւն չունէի շրջապատին. խօսքս ուղղուած էր ընդհանուրին, խօսած էի մեր պարտականութեան եւ նոր զոհողութիւններ ստանձնելու պատասխանատուութեան մասին. ըսած էի որ Նուպար Փաշայի պէս մարդիկ ալ ունինք եւ վստահ եմ որ պիտի պաշտպանեն մեր ազգային շահերը միջազգային ժողովներուն մէջ, իրրեւ ներկայացուցիչը Հայոց Կաթողիկոսին:

Այս հաւաքոյթին մէջն էր Միսաք Թորլաքեանը, այն Միսաքը՝ որ յանդուներթիւնը ունեցաւ յետազգային Պոլսոյ մէջ գնդակահարելու ձիւանչիրը, թաթար ազգայնական ղեկավար մը՝ որ ջարդել տուած էր Պաքուի հայութիւնը: Միսաքին միջոցաւ ծանօթացայ Տրապիզոնի այդ օրուայ երիտասարդութեան, ու նկատեցի որ արթուն, նուիրուած եւ հայրենիքով խանդավառուած երիտասարդութիւն մըն էր. խօսք կար որ արեւմտահայ համադումար մը կը կազմակերպուի Թիֆլիսի մէջ մօտ օրերուն եւ իրենք ալ պէտք է ընտրեն իրենց ներկայացուցիչը՝ մասնակցելու համար այդ համադումարին, դալիք օրերը դիմադրաւելու աւելի կազմակերպուած ձեւով:

Նոյն ատեն մեր օրերը կ'երկարին Տրապիզոնի մէջ. կ'երթայի նստելու ծովափը, կը դիտէի շրջապատս, յոյն ազջիկները՝ ծովուն մէջ, սակայն աչքիս առջեւ կը պատկերանային այդ դժոխային մա-

կոյկները, որոնք լեցուած հայ որբերով, տարուած եւ նետուած էին ծովուն խորերը, Հալիտէ Էտիպ Հանըմի ղրտակցութեամբ եւ մասնակցութեամբ...: Ահա այս էր տաճիկ առաջաւոր կիներու տուրքը ցեղասպանութեան. ի՞նչպէս կոմիտաս մը չխենդանար...: Հոս կ'այցելեմ Մխիթարեան վարժարանը, կը յանձնեմ Խարբերդցի մէկ երկու ապուռնաներու նամակը եւ կը ստանամ իրենց պատասխան նամակը վերադարձնելու Խարբերդ, եթէ հնարաւորութիւններ ունենամ: Հանդիպեցայ նաեւ Սիւրմէլեան եղբայրներուն, մէկը՝ ներկայիս Ամերիկա կը գտնուի եւ հեղինակ է անդլերէն ղրքերու, իսկ միւսը՝ Օննիկ, յայտնի խմբավար է եւ երաժշտադէտ Լիբանանի մէջ:

Այդ օրերուն, 16 Մայիս 1917, Տրապիզոնի մէջ ղրքցի հետեւեալ քերթուածը.

“

ԹՐԲԱՀԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Յոյսի կարօտ, լոյսի կարօտ անօթայիններս սրտատրոփ,
Կեանքի կարօտ, ոյժի կարօտ, տառապեալներս անսփոփ,
Գերմարդկային ոյժ կը մաղթեմք ձեր հանճարին բազմատանջ,
Յոյս կը սպասեմք, լոյս կը սպասեմք մեր նեղ մամբուն անմահանջ:

Խողխողումի, արեան մամբէն հերոսի պէս անցնողներ,
Ջրկուածներու, տանջուածներու դուք հարագատ եղբայրներ,
Ձեր պսակը՝ փառքի դափնին, գիտէ՞ք ինչե՞ր են ինչե՞ր,
Մեռնողներու լուռ հծծիւններ, հոնդիւններ, հառաչներ:

Մարտնչումի, հերոսացման անմարեղի փարոսներ,
Անապատի այրող հուրէն ազգն ազատող մովսէսներ,
Լուրջ գծեցէ՛ք տասնաբանեան որ ազատուինք տուրքերէն,
Մեր նոր ուղին գրուած ըլլայ սէր միութիւն տարերէն:

Մեզի համար, ցեղին համար, ո՛վ չարչարուած հսկաներ,
Յարգանք գործին, յարգանք ցեղին համբերութեան գեր ի վեր,
Յարգանք Հայուն, մահատակաց դիակներուն անպատան,
Յարգանք յուսոյ ձեր մէջ ապրող իտէալին անմահն:

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՁ

Յուճնիս 1ին կը ձգեմ Տրապիզոնը, կ'անցնիմ Թիֆլիզ եւ կ'ուղեմ երթալ Երեւան, եթէ կարելի է այնտեղ փնտուելու նամակներուս պատասխանը, հանդիպիլ Ազամալեանին եւ Լեւոն Առաքելեանին, միասին վերադառնալու համար Կարին ու ապա Մուրատին քով՝ Երզընկայ, եւ ո՛վ զիտէ, թերեւս Խարբերդ: Ռուս նաւաստիներ կը շարժին աջ ու ձախ. առաջին անգամն է որ ծով ու նաւ կը տեսնեմ եւ առաջին անգամն է որ նաւային ճամբորդութիւն պիտի կատարեմ: Փոքրիկ մակոյկով կը տարուինք հսկայ նաւի մը վրայ եւ կը տեղաւորուինք ծածքի մը տակ. կը մտածեմ սրտովին սիրելի Մարտիրոս Գիւրջճեանին վրայ, որ դործը ձգելով եկած էր վերջին համբոյր մը տալու...:

Առաւօտ, ծովու եղբրքներէն քսուելով, հասած ենք Պաթում: Պաթումը ռուսական առաջին քաղաքն էր որ կը տեսնէի Սեւ ծովուն վրայ: Ամէն մարդ վազքի մէջ, ամէն ցեղէ խառնակութիւն մը. հայեր, թաթարներ, վրացիներ, չեչէններ եւ անպայման ռուսեր: Կառք մը առնելով գացի որբանոց, ուր իմացած էի թէ որբեր փոխադրուած են: Տեսայ Վարդուհի Գրիգորեանը, որ շատ ուրախացաւ եւ ըսաւ որ Քէչիչեան եղբայրները նոյնպէս հոս են. անոնց ալ այցելեցի: Յուզումով բաժնուեցանք. իմացայ որ Մուրատն ալ Պաթում եկած է: Անմիջապէս հանդիպեցայ իրեն, որ զիս ներկայացուց իր ընկերներուն ըսելով՝ «Ահա իմ իսկական տղաս»: Ուղեց որ իր սենեակը աւտեն մը հանգստանայի, քանի որ նոյն օրն իսկ կը պատրաստուէի մեկնելու Թիֆլիս: Աւոյին ասպետին հանդիպեցայ՝ իր հարազատներու գուրդուրանքով շրջապատուած, ու յիշեցի իր միւս աղջիկները, որոնք տակաւին հայկական աշխարհի տարածքէն մինչեւ անպատներու հարեմներուն մէջ կը տուայտին:

Ժամը 5ին արդէն կայարանն եմ եւ կարդի կեցած՝ տոմսակ կ'առնեմ, 7ը 20 անցած գնացքով մեկնելու: Երկրորդ կարդի տոմս առնելով կը տեղաւորուիմ քանի մը զինուորականներու եւ քանի մը վրացի կիներու հետ որոնք կը խնդան, կը կատակեն: Զինուորականներէն մէկը, կէս տաճկերէնով, կէս ֆրանսերէնով ինծի կը թելադրէր Պոլիս երթալ: Ծամբուն վրայ կը տեսնենք վրացի գիւղացիներ, որոնք շատ խեղճ պատկեր մը կը ներկայացնեն. կը տեսնենք հօտաղներ, նոր ծնած դառնուկներ... գիւղական պատկերներ էին, որոնք սիրտս մասամբ թունդ կը հանէին, մէջս արթնցնելով գիւղին կարօտը եւ անօրինակ տառապանքը, որ բաժին եղաւ մեր նահատակ հայրերուն:

Առաւօտ ժամը 8ին արդէն Թիֆլիս եմ, մայրաքաղաքը Կովկասի, ուր փոխարքան կը նստի եւ ուր կը տնօրինուի Հայոց ճակատադիրն

ու բախտը: Մարդիկ ուրախ են հոս եւ սովորական կեանքի լծուած . ո՛չ վտանգի մասին կը մտահոգուին եւ ոչ ալ քաղաքական ընդհանուր կացութեամբ կը հետաքրքրուին: Ազգային կեանքը վէճի մէջ է կարծես: Անդրանիկը իր «Հայաստան» թերթով, «Մշակ»ը իր Առաքելաններով եւ «Աշխատանք» թերթը իր վէճերով, լծուած են լուծելու հարցեր՝ որոնք, իմ կարծիքով, անմիջական մեղի չեն պատկանիր: Ուրիշ էր Երզնկան, ուրիշ էր Մուրատի մթնոլորտը եւ ուրիշ՝ հոս այս թերթերուն եւ մտաւորականներուն պարզած տեսարանը: Թերթերուն տեւէ մէկուն քով չեմ գտներ նամակներու պատասխանը . հասցէ կը ձգեմ Կարին, քաղաքներու միութեան Պր. Աղամալեանի անունով, եւ կ'երթամ «Հայաստան թերթի խմբագրատունը: Թոթովենցը կը գտնեմ, սիրալիք տեղեկութիւն կու տամ Երզնկայի, Պաթումի ճամբորդութիւններու մասին եւ նոր սկսած ռուսական յեղափոխութեան մասին ու շփոթած կը հարցնեմ մեր ընկիւններու մասին . ինքը, սակայն, պատասխան չունի: Մէկը նըստած էր պատուհանին անկիւնը սեղանին վրայ, թէեւ մեղ հետ չէր՝ բայց նկատեցի որ ականջը մեղի էր: Շուրջ 40 տարեկան, մաղերը խոիւ, աղուոր դիմադժով, պեխերով, սեւի զարնող զգեստներով, լուրջ մարդու մը տպաւորութիւնը թողուց վրաս: Քիչ վերջը ձգեց ու դուրս գնաց . հարցուցի թէ ո՞վ էր այդ մարդը . «Ձե՞ս յիշեր, Եսաւ, այդ մարդը Անսարանիկն էր»: Ոտքի ելայ վաղեցի կտեւէն, բայց արդէն կորսուած էր . վերայիշեցի դիւղին մէջ տեսած պատկերս «Դրօշակ»ի մէջ: Ի՞նչ երազներ, ի՞նչ բաղձանքներ ունեցած եմ տեսնելու այս հերոսը եւ ահա աչքիս առջեւէն կը փախչի եւ ձեռքն անգամ համբուրելու առիթը չեմ ունենար: Թոթովենց նշմարելով ներքին վրդովմունքս՝ ըսաւ . «Շատ մի՛ նեղուիր, օրուան մէկ երբորդը հոս կ'ըլլայ, որեւէ ատեն որ ուղես՝ կու դաս եւ կը խօսիս իրեն հետ»: Հոն հանդիպեցայ Ն . Աղբունիի, Լեւոն Թիւթիւնճեանի, Զարգարեանի երկու տղոց . սիրելի մթնոլորտ մը կը տիրէր հոս, ըստ երեւոյթին: Հանդիպեցայ նաեւ Տոքթ . Պոնաբարդեանին, որուն ծանօթ էի Խարբերդէն . այս մարդիկը, որոնց անհատապէս կը համակրէի, չէի կըրնար հասկնալ թէ ինչո՞ւ ընդդիմադիր վիճակի մը մէջ դրած են ինքզինքնին Հ . Յ . Դաշնակցութեան դէմ, որ այդ օրերուն Կովկասի Հայութիւնը կազմակերպելու մէջ էր, մանաւանդ Թիֆլիսի մէջ Աղեքսանդր Խատիսեանը քաղաքապետ ընտրելու աշխատանքներ կը վարէր:

Այստեղ ես նկարուեցայ Պետրոս Հերոյեանին հետ, իսկ միւս աղաքը, Տերսիմի իմ ընկերներս, հոս չգտայ եւ տեղեակ եղայ որ արդէն մեկնած են Ամերիկա: Ամերիկեան դեսպանատունը դասցի, ուր շատ յարգանք ընդունուեցայ . բացատրութիւն տուին Ամերիկա երթալու մասին, հարցուցին իմ ծրագրերներու մասին . պատմեցի որ

հարազատներ ունիմ խորհրդի մէջ, որոնց փրկութեան համար պիտի աշխատիմ երթալով դէպի Երզնկայ: Երեկոյ մը թատրոն կ'երթամ՝ ուր կը ներկայացնէին «Հին Աստուածները»: Կ'ողբուորում, կ'ողբում մէջտեղ յայտարարել թէ ամբողջ հողիովս կը փափաքիմ նըւիրուիլ բեմին որ այդ տեղէն առիթ ունենամ արտայայտել հողիս մէջ բռնկող կրակը, որ կարծես զիս կ'ուտէ, անորոշութեան մատնելով: Կ'այցելեմ Յովնանեան աղջկանց վարժարանը, որ «Հայաստան» խմբադրատունէն հեռու չէ. կ'երթամ խոջավանք, կը տեսնեմ արձանները Ղուկասովի, Ռաֆֆիի եւ կը հիանամ: Յունիս 20ին այցելեցի դերեղմանատուն եւ ծնկաչոք աղօթեցի Սիմէոն Զաւարեանի դերեղմանին առջեւ: Այցելեցի նաեւ հերոս Գեորգիին հողակոյտը եւ տխրեցայ որ այդքան անշուք ձգուած էր այդ մեծ հերոսին դերեղմանը:

Յունիս 20ին Հրաչ Զարդարեանի հետ նորէն խոջավանք դացինք, կը խօսէր իր եղբօրը մասին, որ Կարին պիտի դար. կը խոստանամ օգտակար ըլլալ իր պղտիկ եղբօրը՝ Աղատին, եթէ Կարին մնամ: Կը հանդիպիմ իր ծերունազարդ քահանայ հօրը, որ կը հետաքրքրուի ինձմով:

Լեւոնը կը յայտնէ որ Յունիս 21ին պիտի սկսինք շարժիլ դէպի Հայաստան, մեր գործին վրայ, որ զիս շատ կ'ուրախացնէ: Այս ամիսը որ Թիֆլիս անցուցի, քանի մը անդամ այցելեցի Ներսէսեան դպրոցը. մտքովս երբեմն կ'ողբէի հոն շարունակել կրթութիւնս, բայց Ամերիկայէն լուրեր չունէի եւ յոյսերս օդ ցնդած էին. դիչերները կանոնաւոր քնանալիք տեղ մը չունէի. ո'չ ոք կը հետաքրքրուէր ինձմով, ես ալ կ'ամչնայի պայմաններս ունէ մէկուն յայտնել: Պր. Լեւոնին տուած այդ լուրը, բացի ազգային տեսակէտէ, անհատական եւ նիւթական խնդիր մը կը լուծէր ինձի համար:

Օրեր առաջ, երեկոյեան դացած էի դասախօսութեան մը, ուր պիտի խօսէր Տոքթ. Համոյ Օհանջանեան. նոր ազատ արձակուած էր բանտէն, հազար ու մէկ բաներ կը պատմէր Ռուսաստանի կացութեան եւ ժամանակաւոր կառավարութեան մասին եւ տխուր կը տեսնէր Ռուսաստանի ու Կովկասի ապագան: Համոյ Օհանջանեան այն բացառիկ, լուրջ եւ հայրենասէր դաշնակցականն էր, որ յետագային պիտի դառնար Հայաստանի նորաստեղծ հանրապետութեան վարչապետներէն մէկը: Յունիս 21ին կայարան ենք Պր. Լեւոնի եւ Զատիկի հետ եւ մեր թողուցիկ խումբը այդ օրուրնէ սկսեալ՝ նոր գործի կը սկսի: Մեծ դժուարութեամբ կը յաջողինք Զատիկին հետ ներս մըտնել ամէն տեսակ աղմուկի եւ բացազանչութեան մէջ. տրտմութեամբ չէ որ այս քաղաքէն կը մեկնինք. հոս ամէն մարդ իրեն համար սովորական կեանք մը կ'ապրի:

Կ Ա Ր Ի Ն

Երբ Աղեքսանդրապոլ կը հասնինք, ատեն մը կը սպասենք ոտքի վրայ, կը ճաշենք: Մեզ հետ եզոզ զինուորականները կը շաղակրատեն մեզի ընկերացող կիներուն հետ. ես դուրս եկած եմ, կը նայեմ դարիներուն, որոնք հասուննալու վրայ են: Ճամբան շարունակելով, կ'անցնինք Կարսը, Սարիղամիշը, տեսնելով հազարաւոր տաճիկ դերիներ՝ նամազի կեցած: Առաւօտ ժամը 10ին կը հասնինք Հասան Գալէ: Կ'ուղղուինք դէպի Կարնոյ լեռնաշղթան, եւ հեռուէն փորուած դիրքերը կը նշմարենք. միւս կողմէ կը սկսին երեւնալ Կարնոյ դաշտերը: Վերջապէս ժամը երեք ու կէսին արդէն քաղաքներու միութեան շէնքին մէջ ենք եւ տեսակ մը հարազատներու գիրիլը, որոնք կը հողան մեր տեղաւորման, ուտելիքի եւ գիշերուան հանգիստի մասին: Յունիս 27էն ի վեր Կարին եմ, խառնուած օրուան կեանքին. ուրախ եմ, որովհետեւ այստեղ կը դգամ թէ մարդ մ'եմ: Հազար ու մէկ պահանջներ կան, որոնց պէտք եմ հասնիլ. կը հանդիպիմ անծանօթ դէմքերու, ընկերներու, բարեկամներու. հոս կը տեսնեմ Խուլուցի Աննան ու Ճուհարը եւ իր մայրը, որուն պատկերը միշտ աչքերուս առջեւն է, Խարբերդի վերջին աքսորի ատեն՝ որբանոցին առջեւ կեցած, իր անութին տակ դանուած կազամբով մը կը սպասէր, մինչեւ որ եկան եւ բռնելով տարին զինքը: Աննան կը մնար Լեւոն Լանիսին մօտ. հրաւիրեցին զիս ճաշի, բայց պէտք էր երթալի դըպրոցները, որբանոցները: Վահան Զերաղին հետ խօսեցանք մեր կարելիութիւններուն մասին, որբերուն մէջ զարգացնելու հետաքրքրութիւնը դէպի մեր ժողովուրդը եւ անոր թողած մշակոյթի այն հսկայական ժառանգութիւնը, որ իրենց կը պատկանի եւ պէտք է արթուն ըլլան եւ տեղեակ թէ ինչեր կը կատարուին իրենց շուրջը: Վաղը իրենցն է եւ այդ վաղուան պիտի պատրաստուին այսօր:

Ես այստեղ գտայ իմ որդեգիրս եւ ամէն անգամ որ առիթը ունեցայ՝ տարի զինքը ինծի հետ. կը դգայի որ ինքն ալ օրէ օր կը կապուէր ինծի եւ տէր մ'ունենալու հպարտութիւնը կը դգար իր մէջ, կը մասնակցէր խաղերուն, երջանիկ էր դնգակը առնելով եւ աչքերը կ'ուղղուէին ինծի:

Օր մը հրապարակային վիճարանութիւն մը տեղի կ'ունենայ. Պր. Ղեւոնդեանն էր զեկուցանողը եւ նիւթը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընկերավարութիւնն էր: Մարդիկ եղան որ սկսան մեղադրել թէ Դաշնակցութիւնը տկարացուց ինքզինքը՝ յարելով ընկերավարութեան, ուրիշներ՝ որ չլուծուելով ընկերավարութեան մէջ եւ աւելի շատ ազգայնական քաղաքականութիւն վարելով, ինքզինքը բաժ-

նեց իր դրացիներէն եւ իր վարած քաղաքականութեամբ պատճառ դարձաւ ամէն կողմէ իր շուրջը թշնամութիւն ստեղծելու. պէտք է որ ասկից ետք անդրադառնայ իր սխալը եւ իր հայեացքը ուղղէ դէպի միջնադրական ընկերվարական քաղաքականութիւնը: Կային բաւական թիւով մտաւորականներ, զինուորներ եւ ժողովուրդ. ես յուզուած էի. խօսք առնելով ըսի՝ թէ «անշուշտ, քաղաքական կուսակցութեան մը դործերը միշտ ալ քննադատութեան ենթակայ են, ոեւէ անհատ իրաւունք ունի կարծիքներ յայտնելու. մենք կը գտնուինք քաղաքի մը մէջ, որ Հայութեան սիրտը կը նկատուէր: Այսոնք այսօր չկան. Տաճիկը Զարդեց մասոնները, բողոքականները, կաթողիկէները, որովհետեւ անոնք հայ էին, եւ խտիր չդրաւ Հնչակեանի, սահմանադրականի, Ընկերվարականի կամ Դաշնակցականի. պատմութիւնը իր վճիռը պիտի տայ ժամանակի ընթացքին, բայց հիմա մեր առջեւ դրուած է մեր ժողովուրդը, մեր ժառանգութիւնը, մեր սերունդները փրկելու դործը եւ ամէն ոք թեւ ու թիկունք պէտք է կանգնի հո՛ս Դաշնակցութեան, եւ Եւրոպայի մէջ՝ Կաթողիկոսի պատուիրակ Պօղոս Նուպար Փաշային, որպէսզի կարենանք փրկել մենք մեզ եւ Տաճիկը իր նպատակին չհասնի: Ինքզինքնիս նկատենք պատրաստակամ զինուորներ, ինչպէս Սերաստացի Մուրատը, որ կրակներու մէջէն անցնելէ ետք, կրակներու բերանն է այսօր ալ. թէեւ դաշնակցական է, բայց չի մտածեր զանազան ձեւի քաղաքականութեան մասին, բայց միայն իր ժողովուրդին կը ծառայէ այս ճակատագրական օրերուն»: Ձեմ գիտեր ինչու մտքերս հաճելի չէին ոմանց, բայց նպատակս շատ պարզ էր եւ այն կարծիքը ունէի որ այն ձեւով որ այդ ժողովը կ'ընթանար՝ աւելի բաժանում կը յառաջացնէր քան կը միացնէր. բայց Վահան Չերազ՝ որ կուսակցական չէր եւ նամակադրութեան մէջ էր Մինաս Չերազի հետ Ֆրանսայի մէջ, ոգեւորուած էր եւ կը պաշտպանէր իմ տեսակէտներս, ըսելով որ եթէ մարդկութիւն կայ, եթէ ընկերվարութիւնը մարդկութեան բարօրութեան համար է, կամ կեղծիք մը կար եւ կամ թէ մէկ մարդու նման պէտք էր կանգնէինք մեր իրաւունքներու եւ արդար դատի պաշտպանութեան դործին համար: Մինչ մենք կը մեռնէինք, անոնք մեր հողերը կը բաժնէին...:

Թիֆլիս եղած ժամանակս տեղի կ'ունենար արեւմտահայ համադումարը, որուն կը մասնակցէին շատ մը յայտնի մտաւորականներ զանազան շրջաններէ: Այնտեղ էին Անդրանիկ, Վահան Փափաղեան, Յովհաննէս Ամատունի. այս վերջինս ինքը տուաւ ինծի ազատ մուտքի տոմս մը, ու ես կ'երթայի մտիկ ընելու մեր այսպէս կոչուած մտաւորականներուն, որոնց դովքը երգած էի Տրապիզոնի մէջ բանաստեղծութեամբ մը: Ժողովին ներկայ կ'ըլլար Աւետիս Ահարոնեան իբրեւ Աղլային Խորհուրդի ներկայացուցիչ, ներկայ կ'ըլլար

Ռուսիէն Փաշան, գլխաւոր նիւթ ունենալով դրաւուած վայրերու պաշտպանութեան հարցը :

Այդ համադումարէն ետք, Յովհաննէս վերադարձաւ Մամա Խաթուն, Տիգրան Աղամալեան մնաց մասնաւոր ներկայացուցիչ բիւրոյի, բացի քաղաքներու միութեան իր վարիչի պաշտօնէն : Կարոյ մէջ շատ չանցած՝ Եկաւ Քրիստափոր Միքայէլեանի դաւակը՝ Տոքթ. Ռուբէն Միքայէլեան, բժշկական պատասխանատու պաշտօնով եւ ատեն մը ծառայեց Կարոյ մէջ. յետոյ անցաւ ռազմաճակատ, որուն ես հանդիպեցայ Մամա Խաթունի մէջ շատ տխուր պարագաներու տակ : Կարոյ մէջ վերակազմուած էր ուրեմն Հ. Յ. Դաշնակցութիւնը, որուն նախագահն էր Տիգրան Աղամալեան եւ քարտուղարի պարտականութիւնը տրուած էր ինծի :

Տոքթ. Ռ. Միքայէլեան շատ նման էր հօրը, շատ քիչ հայերէն լառեր դիտէր եւ կը պատկանէր ռուսական էսերներու կազմակերպութեան : Թէյի եւ ուտելիքներէն ետք խօսք տրուեցաւ ոմանց. իմ ընդհանուր բարի գալուստի խօսքէն ետք, հրակիրեցի Պր. Աղամալեանը, որ գովեց տոքթորը, զնահասեց հօրը յիշատակը եւ կատարած գործը մեր ժողովուրդի յեղափոխական շարժման մէջ եւ իր կեանքով յաւիտենական օրինակ դարձաւ գալիք սերունդներուն եւ մատնանչեց յաւիտենական պայքարի իր առաջնորդութիւնը եւ իր օրինակը : Տոքթորը հայերէնով լարեւեց եւ ըսաւ. «Այսօր երջանիկ եմ Հայաստանի հողին վրայ գտնուելուս համար եւ մասնակցութիւն բերած ըլլալուս այն մեծ դործին, որուն հայրս իր կեանքը տուաւ : Ես կը ցաւիմ որ Դաշնակցութեան մէջ չեմ, այլ կը պատկանիմ էսերներու կազմակերպութեան եւ սակայն ուրախ եմ որ մենք բոլորս նոյն թափով կը դարնենք բռնութեան շղթաները փշրելու եւ ազատութիւն բերելու բիւրաւոր ժողովուրդներու» :

Մեր կեանքը հեւ ի հեւ վազք մըն էր եւ ես կը սիրէի այդ կեանքը : Գիշեր թէ ցերեկ միշտ բան մը կար ընելիք. Երզնկայէն էրզրում եկած էր հայկական առաջին խումբը, կարծեմ մօտ 2500 հողի, որոնց մէջ կար նաեւ Մուրատը : Նոյն օրերուն ժամանակաւոր կառավարութեան գրաւուած վայրերու կամ Թրքահայաստանի ռուս ջոմիսարը եկած էր Կարին՝ խորհրդակցելու Աղամալեանի հետ եւ ծանօթանալու հայկական ներկայացուցիչներու առնելիք քայլերու մասին : Հայկական բանակը նստած էր բացօթեայ լեռներուն ներքեւ : Խօսեցան Լ. Լանխս եւ Սերաստացի Մուրատը : Լեւոն Լանխս պատմական ճառ մը խօսեցաւ հայրենասիրութեան մասին : Սերաստացի Մուրատ խօսքը ուղղեց ոչ միայն հայ սպայութեան, այլ եւ հայ զինուորին, թէ մեր եւ ռուս ժողովուրդի արիւննով ներկուեցան այս դաշտերը եւ մենք արիւնի եւ կռիւներու մէջ եղբայրացանք ռուս մեծ ժողովուրդին հետ :

դուք հիմա կ'երթաք հանդիստի, որ իրաւամբ վաստկած էք: Արթուն կերպով հսկելով եւ պահպանելով ռազմաճակատի ղիրքերը, մենք կը շարունակենք ձեր զորքը մինչեւ որ ռուս ժողովուրդին հետ ձեռք ձեռքի վերականգնենք պատերազմներու ձգած աւերը եւ այս լեռները, այս ամբողջիւնները վկայ, որ մենք պիտի կանգնեցնենք կոթողներ այս հողի ազատագրութեան համար աշխատող եւ զոհարեռուող զինուորներու ոսկի յիշատակը յաւերժացնող: Բարի ճանապարհ ձեզի բոլորիդ եւ բարի վերադարձ դէպի այս հայրենի աշխարհը:

Երեկոյեան քոմիսարին ի պատիւ ընդունելութիւն եւ ճաշ կաղմակերպած էր քաղաքներու միութիւնը. իր պատուոյ ներկայացուցիչներն էին Տիզրան Աղամալեան եւ քոմիսարը: Ռուսը վերին աստիճանի համակրած էր Մուրատի ջերմ վերաբերման, անկեղծ խօսքերուն եւ Ռասաստանի հանդէպ իր արտայայտած դադափարներուն. ինդրեց որ խմիչքներու ուղեւորութեան մէջ անդամ մը եւս լսէ Հայոց մեծ հերոսը: Ու Մուրատ կրակներէն անցած փորձանքներով եւ կեանքի դժուարութիւններով իմաստնացած, խօսեցաւ ամէնէն հոյակապ ճառերէն մէկը. քոմիսարը վեր կեցաւ, բաժակ առաջարկեց եւ խմեց Մուրատի եւ բոլոր Մուրատներու կենացը. «Մեր կեանքի գնով կը պահենք այս հողերը, ռուս եւ հայ նահատակներու ոսկրները չենք թողուր որ անդամ մըն ալ սրբապղծուին, բաւական է որ ռուս մեծ ժողովուրդը այս դալիք փոթորկոտ օրերուն մեզի հետ ըլլայ:

Յաջորդ օր Մուրատ վերադարձաւ Երզնկայ ու եւ կանչուեցայ Աղամալեանէն՝ կազմելու խումբ մը տաճկադէտ հայ տղաք, որոնք կարենան հետեւիլ տաճկական շարժումներուն եւ լրտեսներուն: Ես՝ որ մինչ այդ այցելու ուսուցիչ էի հայ աղջկանց որբանոց-արհեստանոցին մէջ, հսկիչ էի պահեստներու ապրանքներուն, հացի բաշխման եւ ալիւրի մատակարարման, հաղուստներու եւ այլ պիտոյքներու աղբային դիմումներուն, պէտք է դբադէի նաեւ այն նոր դործով, զոր կը նկատէի կարեւորագոյնը: Շարաթը օր մը կ'երթայի նաեւ Կարնոյ շրջակայքի դիւղերը, հասկնալու համար թէ ինչ մըթերքներ կային, որ մեր կազմակերպութիւնը կրնար աւելի դիւրամատչելի պայմաններով ապահովել եւ կատարելիք զնումները կատարել համաձայն Աղամալեանի հրահանգներուն:

Այդ օրերուն կը ստանամ հետեւեալ նամակը.

Մեծայարդ Պր. Յովհաննէս Տէր Յովհաննէսեան,
Սիրելի Յովհաննէս,

Անտանիլի դրութեան մը մատնուած եմ. չուրջս կատարուող անարդարութիւնը մազի չափ փոխելու կարողութիւնը չունիմ եւ այդ

կը մաշեցնէ զիս : Երէկուան կայտառ մանուկներս թռչնելու վրայ են եւ մահուան սպառնալիքի տակ , եւ ես փրկութեան միջոց մը չեմ կըրնար գտնել : Որբերուս վիճակը անհանդուրժելի է : Ամէն օր անօթի են , աչքերնին միշտ բաց : Երկու օր է հաց չկայ բնաւ , մինակ երկու հատ կարտօֆիլ կու տան : Որբերը ճարահատ , դաղտնի կը մտնեն դիւղացիներուն արտերը եւ կարտօֆիլ գողնալով հում հում կ'ուտեն . կը քայքայուին բարոյապէս ու ֆիզիքապէս : Երկու օր առաջ դետնախնձորի մը համար երկու տղաք իրարու գլուխ ծակած են :

Նոյնքան ճնշիչ է կաթի խնդիրը : Շատ որբեր վրանին վարտիկ չապիկ չունին եւ սոսկ բարակ վերնազդեաստով մը սլատսպարուած են : Աղջիկներէն շատեր չըջազդեստ չունին եւ միայն լաթերով մը կը պըլլուին , միշտ կծկուած , միշտ մսկոտ , բոլորովին դունստ . ո՛ւր են թռչկոտող աշակերտները : Մեր որբերը ամիս մըն է փոխուած չեն , ոչ ալ բազմիք ըրած . ո՞չիլը սոսկալի չափի հասած է : Երեկոները եթէ հիւանդանոց մտնես՝ պիտի տեսնես թէ որբերը ո՞չիլ կը հաւաքեն : Անկողին ալ չկայ . 47 մահճակալի վրայ 128 որբեր կը պառկին , իսկ ոմանք ալ ատելի մը պլլուելով՝ խոտի մէջ կը քնանան : Մաքրութիւն ընող չկայ , կարելի չէ ունենալ ամէն օր , վերմակներ արեւ չեն տեսներ . կ'աւելն , այս է ո՞չիլի դէմ դործադրուած մաքրութեան միջոցը : Դժո՛խք կ'ուղես տեսնել , հոս եկուր եւ կը տեսնես՝ որբանոց անունին տակ : Ինչո՞ւ այսպէս է . պատճառը պարզ է : Պաշտօնեաները բոլորն ալ անխիղճ են , առաջին յանցանքը կ'երթայ Պր . Ե . Հ . ի վրայ , որ սոսկ իր անձի հանդատութեան համար որբերը զրկեց էրզրումէն եւ թափառական ըրաւ , մինչդեռ էրզրումի մէջ մեր պահեստները լեցուն էին եւ հնարաւորութիւն կար պետական պահեստներէն նորեր ստանալու : Նոյն այդ Պր . Ե . Հ . ն կարծես որբերը մերկ զրկեց որ կոտորուին : Երկրորդ յանցանքը այստեղի պաշտօնեաներուն վրայ կը ծանրանայ . քէֆ կ'ընեն շարունակ եւ ոչ մէկ պատրաստութիւն տեսած են . հիմակ ալ հող չեն ըներ դոյութիւն ունեցող վիճակի մասին . դպրոցական դործն ալ քսոսային է . 10 ուսուցիչ-ուսուցչուհիներ ենք եւ տակաւին չկրցանք կանոնաւորուիլ . դիրք , զբառախտակ , նոյնիսկ շէնք չկայ : Զեղծում շատ կայ , դիտեմ , բայց կը լռեմ : Գրէ ինձի ձեր կեանքէն , դրէ Երիտասարդաց Միութեան կեանքէն եւ այսպէս ուրիշ բաներէ : Բարեւներ Լեւոնին , Տիրանին , Ա . Ստեփանին , Լիւլէճեանին եւ ուրիշ ծանօթներու :

Միշտ քուկդ

Նոյ . 28 , 1917

Յովհաննէս Խանչերեան

Հասցէս՝ Ճելալօղլի Մոսկուայի Հայկ . Կոմ . ուսուցիչ

Նոյնտեսակ նամակներ ստացայ նաեւ Սեդրաքէն: Այս նամակները զիս շատ կը մտահոգէին. ծանօթ պահեցի Վահան Զերազը, Տօքթ. Հ. Օհանջանեանը եւ Տիգրան Աղամալեանը եւ իր ներկայացուցիչ Լեւոն Առաքելեանը: Ես շարունակեցի հետամուտ ըլլալ իմ նոր գործիս, որ կը սկսէր իմաստ ստանալ քաղաքական նոր պայմաններու տակ: Այստեղ կային Գանձակեցի երկու եղբայրներ, Մկըրտիչ եւ Ռուբէն, որոնց հետ շատ ջերմ եւ հարազատ կերպով կապուած էի. կար Տիկ. Գրիգորեանը, Պաքուցի կառավարիչը, արհեստանոցի բաժնին նուիրուած հայուհի մը, բայց ամէնէն շատ մօտ եմ Վահան Զերազին եւ մեծ հաւատք ունիմ իր քաջութեան եւ հայրենասիրութեան վրայ: Առաջին կամաւորն էր Եւրոպայէն, որ հազար ու մէկ կամաւորական դէպքեր կը պատմէր եւ երբ պէտք էր մեր հաստատութիւններէն մէկը ընտրել էրզրումի կազմակերպութիւնները ներկայացնող, առաջարկեցի որ զինքը ընտրեն եւ այդ առիթով առաջին անգամ ըլլալով իրեն հետ բախում մը ունեցայ. «Դուն զիս կ'ուզես անպատուել, զիս կ'ուզես ժողովի մարդ դարձնել, երբ ես կ'ուզեմ օր առաջ դաշտ նետուիլ. հանդիստի պէտք չունիմ, ժողովներու համար չէ որ ինքզինքս այս միջավայրին մէջ նետեցի», ու բարկացած դուրս գնաց: Ստիպուած ընտրեցինք Գանձակեցի Մկըրտիչը, որուն սիրտը կապուած չէր Կարնոյ, բայց իր լըջութիւնը եւ ուսերէնի ծանօթութիւնը նպաստ մըն էր գալիք ժողովներուն մէջ: Ծատ ատեն չանցած, թերթերուն մէջ կը կարգացուէր ազգամիջեան դժուարութիւններու մասին՝ թաթարներու եւ Հայերու միջեւ: Մուրատ ամէն օր դիմումներ կը կատարէր Կովկաս, իրեն մարդիչ զինուորականներ եւ կանոնաւոր զօրքեր հասցնելու համար:

Ամատուներ եւ Աղամալեան, երկուքն ալ այն կարծիքէն էին՝ որ Կարնոյ տակաւին վտանգ չի սպառնար, վտանգը Երզնկայի շուրջն է, որ պէտք ունի ամրապանդման եւ ամէն տեսակ օժանդակութեան. հոն Գիւրտերը կրնան մեծ դեր մը կատարել. միւս կողմէն աւելցուց թէ Յովհաննէսի նման երիտասարդներ հաւաքուին թիֆլիսի զինուորական դպրոցը եւ ստանան սպայութեան վկայական ու ծառայեն բանակին: Ըսի որ թէեւ կը սիրեմ սպայութեան վկայական մը առնել, ինչպէս ընկերներէս ոմանք դիմում կատարեցին ու դացին, սակայն ես մերժեցի ա՛յն պատճառով՝ որ ժամանակը թանկագին է, մանաւանդ այս պայմաններուն մէջ, երբ մենք մարդոց պէտք ունինք. կը նախընտրեմ կրցածս ընել հիմա, քան թէ ապագային՝ սպայ ըլլալէս ետք: Իրարու երես նայեցանք. Աղամալեանը աւելցուց. «Վաղը պատրաստուէ՛ մեկնելու, հետդ առ քանի ընկեր որ կ'ուզես. կրնաս օգտուիլ քաղաքներու միութեան պահեստէն եւ ձիեր ստանալ քանի հաս որ կ'ուզես. երբ պատրաստ ըլլաս մեկնելու՝ ինձի հանդիպէ»:

Կարնոյ մէջ այդ ատենները կազմուեցաւ տեղական ժամտարմըրին, որուն պարտականութիւնն էր քաղաքին ապահովութիւնը. Կարնեցի Արմենակ Միրոյեան անոր պետն էր: Պր. Շարաֆեան Շ. եկած էր եւ կը զլխաւորէր խառն յանձնախումբ մը:

Նոյն ատեն սկսած էր ռուս զօրքերու քայքայումը եւ տեսակ մը պաշտպօղուք վիճակ կը տիրէր: Ես եւ Վահան Չերազը երեկոնները կը հակէինք աղջկանց որբանոցին, ի պաշտպանութիւն. ցերեկները ժողովներ կը սարքէինք եւ կ'աշխատէինք հայ զինուորները պահել Կարնոյ մէջ կամ նոր եկող հայ երիտասարդները արձանադրել զինուորական կազմակերպութեան մէջ: Ես ամէն երեկոյ կը խօսէի Չաչբաչայի մէջ հրաւիրելով ժողովուրդը զոհողութեան եւ կարգապահութեան, միշտ նշանարան ունենալով Գամառ Քաթիպայի խօսքը.

«Ճրնէկ թէ այս նոր տարին հայ աղբ ի մի դումարուէր,
ի զլուխ Կարնոյ հայ ամբին, Հայու դրօշակի տակ»:

Օր մը Ղարաբաղցի հայ դիւզացի մը ձայն ուղեց եւ պատասխանեց. «Միրելի աղբեր, ես Ղարաբաղցի դիւզերից եմ, չորս տարի է սահ կոռուի մէջ մտայ եւ իմ տնից ոչ մի լուր չունեմ. այսօր իմ բանակս գնում է Կովկաս, ես էլ նրան հետ կ'ուղեմ դնալ, մի հասկանամ թէ ի՞նչ է կատարուել մեր երկրում, ի՞նչ են եղել մեր երախեք եւ կանայք, մէյմը տեսնիմ, էլի կը վերադառնամ, կը կատարեմ իմ պարտականութիւնս»:

Գժբախտարար բանակի զինուորը չէր ուղեր բաժնուիլ իր զօրամասերէն, եւ քաղքենի երիտասարդութիւնը՝ իր շուայտ կեանքէն: Մաս մը երիտասարդներ սարսափի մէջ էին, երբ կը լսէին տաճիկ բանակի մասին. կար նաեւ ռուսական բանակին մէջ տեղի ունեցած համայնապար քարոզչութիւնը: Մեր կանչը, մեր աղաղակն ու խընդրանքը բաւական չէին. մեր խօսքը կը ցնդէր օդին մէջ եւ Կովկասէն դէպի Կարին եկող չկար: Ո՛չ արեւմտահայ խորհուրդը, ո՛չ զինուորական եւ աղբային խորհուրդները կը տեսնէին կացութիւնը այն պայծառութեամբ՝ որ պէտք էր, ու իրերը կ'ընթանային իրենց վիճակին ձգուած, յանձնուած ճակատադրին:

Առաւօտ մը մեզի լուր տրուեցաւ թէ արհեստանոցի որբանոցէն կը պակսի պարմանուհի մը, որ կը կարծուի թէ ռուս զօրքերը իրենց հետ առած տարած են. արհեստանոցէն շատ հեռու չէին ապրէր աղջկան մայրն ու մեծ մայրը, որոնք բերուեցան քաղաքներու միութեան Տիկ. Գրիգորեանի մօտ. մայրերը խոստովանեցան որ իրենց թոյլտուութեամբ յարաբերութիւն կար ռուս զինուորներու եւ այդ ընտանիքի անդամներուն միջեւ, եւ այսպէսով ռուս զօրքերը օգտուած են այդ պայմաններէն եւ փախցուցած աղջիկը իրենց հետ: Այս խոս-

տովանութիւնները կը գրգռեն պատուախնդիր հայ կիները, որոնք կը յարձակին մօր եւ մեծ մօր վրայ, մեռցնելու աստիճան կը ծեծեն. երբ հոն կը հասնին կիներու հայրենակիցները՝ վերջ կու տան այս միջադէպին:

Օր մը, առաւօտեան ժամը մէկին, Վահան Զերալ կու դայ զիս փոխարինելու արհեստանոց դպրոցէն: Երեկոյեան, կամաւոր պահապան իր սենեակը, կ'անցնիմ Սանասարեանի առջեւէն, կ'ուղղուիմ դէպի քաղաքներու միութեան շէնքը եւ գերեզմաննոցի մէջէն կը տեսնեմ հինգ փափախաւոր զինուորներ, որոնք կը մօտենան եւ կ'ուղեն բռնել զիս: Այդ օրերուն գիշերները ազատ ասպարէզ կար աւաղակներուն: Կարնոյ քաղաքին մէջ դուրս կու դային նման մարդիկ եւ կը կողոպտէին, կը սպաննէին որու որ կը հանդիպէին: Կը քաշուիմ պատին տակ, դնդակները կը տեղաւորեմ հրացանիս մէջ, եւ կէս հայերէն, կէս տաճկերէն, կէս ռուսերէն կը պոռամ. «Ո՛վ որ համարձակի մէկ քայլ շարժիլ դէպի ինծի, Կնդակը պատրաստ է»: Կը սկսին ռուսերէն խօսիլ, բայց ես լրիւ չեմ հասկնար, ու կը դառնան ետ. ճամբան կը բացուի եւ ես կը հասնիմ սենեակս: Ասիկա պատկեր մըն է որ ցոյց կու տայ թէ ի՞նչ վիճակ կը տիրէր Կարնոյ մէջ, մանաւանդ գիշերները, եւ մարդուն պաշտպանութեան միակ կերպը պիտի ըլլար տուններուն մէջ փակուիլ:

Այդ օրերու հայ զինուորները՝ որոնք տեղ մը կը դրաւէին, հետեւեալներն էին. զնդապետ Քէշիշեան, Մակեդոն Միրզահիւանեան, արհեստով փաստաբան, եւ յետոյ եկաւ զօրավար Թորգոմ, որուն պէտք էի իմացնել թէ ես պէտք է մեկնիմ Մամա Խաթուն, եթէ կ'ուզէք կանչեցէք Աղամալեանը եւ անիկա պիտի տայ ձեզի պէտք եղած բացատրութիւնը: Զօրավարը ջղայնացած կը խօսէր իրեն եկող հայ մարդու մը հետ, որ բանակէն ազատելու խնդրանքի արտօնութիւն կ'ուզէր: Երբ ես այս յայտարարութիւնը ըրի, զօրավար Թորգոմ սրտնեղած ըսաւ. «Ես ձեզ բոլորիդ պէտք ունիմ. այս ի՞նչ բան է, մէկը կ'ուզէ կուռի երթալ, միւսը զինուորութենէ խուսափիլ. ե՞րբ պիտի սորվիք կարգապահութիւն»: Սիրելի զօրավարին ըսի. «Ինծի տրուած պարտականութիւն մը կ'ուզեմ կատարել եւ ես ռազմաճակատ կ'երթամ, երբ վերադառնամ՝ նորէն կու դամ եւ ինքզինքս կը դնեմ ձեր տրամադրութեան տակ»: «Ձանա՛ ըսան օրէն վերադառնալ» ըսաւ. ես բարեւեցի եւ անցայ դուրս. չէի զիտեր ի՞նչ կար մտքին մէջ, երբ կ'ըսէր «ըսան օրէն վերադարձիր». գուցէ Թորգոմ իր մտքին մէջ ունէր Կարնոյ մէջ Հայաստանի անկախութիւնը յայտարարել եւ կ'ուզէր իր շուրջը ունենալ այս երկրասարգներն ու միութեան անդամները իրրեւ աւելի վստահելի մարդիկ:

ԴԵՊԻ ՄԱՄԱ ԽԱԹՈՒՆ

Ես առի երկու ձիեր ինձի եւ Առաքելին համար ու ճամբայ ինկանք դէպի Մամա Խաթուն: Անորոջ վիճակ մը կը տիրէ, ամէն կողմ աւերածութիւն: Ռուսերը մեկնած են եւ մեծամեծ պահեստներ ձգած անտէր. մարդ կը զարմանայ թէ ո՞վ պիտի կարողանայ այս բոլորին հասնիլ: Սարսափելի ցուրտ մը կայ, ամբողջ երկիրը ծածկուած է ձիւնով եւ սառեցնող փոթորիկ մը կայ դուրսը: Շատ չանցած, կը զգամ թէ նոր հագուստիս կարերը կը քակուին՝ ձիուն վրայ նստած տեղէս. ցուրտ հովը մինչեւ մեր ոսկորները կը թափանցէ. կը չարչարուինք՝ բայց կ'երթանք: Այս տարօրինակ աշխարհին մէջ երկու Դատեմցի «խենդեր», հաղիւ կրակներէն աղատուած, դարձեալ ինքզինքնին կը նետեն կրակի մէջ. կ'անդրադառնամ թէ ես ի՞նչ իրաւունք ունիմ Առաքելը հետս առնելու՝ երբ լրիւ ծանօթ չէ խրնդիրներուն եւ վտանդին:

Կը դիշերենք Իլիճէի պահականոցը, թէյ կ'առնենք, կը տաքնանք, կը խօսինք դալիք օրերուն մասին. կը նշմարենք որ հոն դըտնուողները քիչ մը կասկածանքով կը նային մեր վրայ. չեն դիտեր թէ արդեօք պաշտօնակա՞ն հանդամանք ունինք թէ անհատական արկածախնդրութիւն մը կը ձեռնարկենք: Առաւօտ կանուխ նորէն ճամբայ կ'ելլենք եւ շատ ուշ ատեն կը հասնինք Մամա Խաթուն, ուր պիտի հանդիպինք Կենճեցեանին: Զինք հոն չենք դտներ. տխուր լուրեր կը տրուին Երզնկայի մասին: Տաճիկները յարձակած են Երզնկայի վրայ, Հայերը պարպած են եւ Մուրատը պաշարուած է Սանսար Տէրէսիին մէջ: Ոմանք կ'ըսեն թէ վիրաւոր է, ուրիշներ՝ թէ սպաննուած է. ամէն տեսակ լուրեր կը շրջին: Մենք այլեւս չենք մտածեր առաքելութեան մասին, որքան կարելի է, կ'ուզենք շուտով Մուրատին հասնիլ, Չօիուր Դաւիթին ուժերուն հետ միանալու: Կը հարցնեմ Բենիամին Ժամկոչեանի մասին եւ կ'իմանամ որ վիրաւորուած է եւ զրկուած՝ Էրզրումի հիւանդանոցը. ասիկա մեծ կսկիծ կը պատճառէ ինձի, եւ Կարին ալ չեմ, որ մօտ ըլլամ այնքան լաւ ընկերոջ մը:

Կ'որոշեմ կայան մը հաստատել տեղ մը՝ Սանսար Տէրէսիի եւ Մամա Խաթունի միջեւ, որպէսզի հիւանդներ կամ դաղթականներ եթէ աղատուին, դոնէ տաք թէյ մը եւ դանազան ուտելիքներ կարենան ստանալ: Այս կարողաբութիւնները ընելով Մամա Խաթունի մէջ, երեկոյեան՝ Առաքելին հետ կ'երթամ դէպի Երզնկայ, հանդիպելու նահանջող ուժերուն կամ կռուի դացող ուժերուն, օգնելու Մուրատին՝ այս ծուղակէն ազատելու համար: Ճակատը յայտնի չէ. հոս ու հոն հրացանաձողութիւն կը լսուի. բան չի հասկցուիր տիրող ընդհանուր խառնակ կացութիւնէն: Գիշերուան մօտ կը նկատենք խումբ մը



Զօր. Բագրատունի եւ Զօր. Անդրանիկ (Ամերիկա, 1919)



ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ



ձիււորներ՝ որոնք կը յառաջանան դէպի մեզ՝ Չիլիէն դէպի Մամա
 Խաթուն տանող ճամբուն վրայ: Կը նետուինք ձիւներուն մէջ՝ ուս-
 կից կը ստուամ «կեցէ՛ք, ապա թէ ոչ կը կրակեմ»: Ծանօթ ձայն մը
 կը պատասխանէ հայերէն. «Ես Տոքթ. Արշակ Պօղոսեանն եմ. դուն
 ո՞վ ես»: «Տոքթոր, ես Տէր Յովհաննէսեանն եմ. ի՞նչ լուր Մուրա-
 տէն»: «Հա, բալա ջան, հոս ի՞նչ կ'ընես», կը ձայնէ Մուրատ: Կը
 վազեմ, կը փաթթուիմ ոտքերուն, կը հարցնեմ թէ վիրաւոր ես,
 առո՞ղջ ես: «Ես շատ լաւ եմ, բալաս, կը պատասխանէ, դուն մի-
 նա՞կ ես հոս»: «Այո՛, քեզի դալու համար ճամբայ ելանք». ճամբուն
 վրայ տաք թէյ մը կամ բան մը պէտք է պատրաստէին. «Մենք կը
 մնանք հոս, դուք դացէք քիչ մը հանդստացէք» կ'ըսենք Մուրատին
 եւ կը խնդրենք թէ ի՞նչ կ'ընանք ընել. «Եթէ մեզի հետ չէք դար,
 կ'ըսէ, այն ատեն քսան զինուորներ դրած եմ ձեր առջեւ դտնուող
 յաջորդ կամուրջին վրայ, որպէսզի քիւրտերը նախորդին նման չվա-
 ունն դայն. չեմ դիտեր դժբախտարար թէ որքան հաւատարիմ են:
 Հսկէ վրանին եւ աշխատէ որ պաշտպանեն այդ կամուրջը. հազարա-
 ւոր զաղթականներու կեանքը կապուած է այդ կամուրջին»: «Անհոգ
 եղիլ, մենք մեր կարելին կ'ընենք» ըսելով կ'ուղղուինք դէպի մատ-
 նանշուած կամուրջը եւ իր կողքին շինուած փոքրիկ տնակը, ուր կը
 դտնենք աւելի քան քսան զինուորներ, իրարու կոթնած կը կռուին
 դուրսի ցուրտին, փոթորիկին հետ՝ տաքնալու համար: Բարեւեցիւնք.
 սկսան իրարու նայիլ. ըսի որ Մուրատ մեծ վստահութեամբ խօսե-
 ցաւ ձեր մասին, թէ այս կամուրջի պաշտպանութիւնը ձեզի յանձ-
 նած է: Լաւ չէ՞ որ մտածենք թէ ի՞նչ պիտի ընենք եթէ տաճիկները
 պաշարեն մեզ, այս տանը մէջ»: «Թող պաշարեն, ըսին անտարբեր,
 այս փոթորիկին ու ցուրտին ո՞վ կ'ընայ դուրս մնալ եւ սառիլ»: Երբ
 փորձեցի բացատրել թէ հրաման տրուած է ձեզի կամուրջը պաշտ-
 պանել, անոնցմէ մին հրացանը ուղղեց դէպի ինձ սպառնական եւ
 ըսաւ. «Եթէ քեզի կամուրջը պէտք է, դնա՛ որ պաշտպանէ»: Նկա-
 տեցի որ Առաքելը անհանգստացաւ, ինքն ալ աչք նետեց զէնքին. ես
 կռուին առջեւը առնելու համար, նշան ըրի Առաքելին ըսելով՝ թէ
 մենք սխալ մարդոց մէջ ենք ինկեր, ե՛լ երթանք, այս մարդիկը հան-
 դրատանալու պէտք ունին:

Գուրս եկանք տնակէն. քամին կ'ոռնար փոթորիկելով մեր շուրջը
 եւ մենք սկսանք իյնալով ու ելլալով ձիւներու մէջէն բարձրանալ:
 Զարմանալի կերպով շատ չանցած փոթորիկը դադարեցաւ. լուսըն-
 կան դուրս կ'լաւ եւ մենք 30 քայլի վրայ հեռաւորութիւն մը նշելով,
 սկսանք քալել որքան կարելի էր անաղմուկ, որպէսզի նշմարենք կամ
 լսենք մեզմէ դուրս դտնուող որեւէ շարժում կամ աղմուկ:

Առաւօտ կանուխ նշմարուեցան Երզնկայէն Մուրատի առաջնոր-

դած դաղթականները: Այստեղ ունէի իմ մօրեղբայրս՝ Պօղոսը, ծանօթներ եւ ընկերներ, իմ երբեմնի մեծաւորս՝ Լեւոն Առաքելեանը, Աղամալեանի ներկայացուցիչը եւ հաղարաւոր դաղթականներ, որոնց բոլորին հետ բարեկամ եւ հարազատ կը զղայի: Երբ այս դաղթականները կ'անցնէին, նկատեցի որ աչքերս ուրախութեան արցունքներ կը թափէին եւ դիտակից հպարտութիւն մը զւայցի՝ որ երկու Դատեմցի տղաք, թէեւ այդ գիշեր զէնք արձակելու առիթը չունեցան, սակայն պատրաստ էին այս դաղթականներուն համար իրենց կեանքը տալու... եւ ահա մեր պաշտպանութեան տակ եկան ու անցան... ո՛չ ոք դիտցաւ, ոչ իսկ Մուրատը, բայց ես եւ Առաքելը գիտէինք որ պատրաստ էինք այդ ժողովուրդին փրկութեանը համար մեռնիլ: Մենք հպարտ էինք եւ դո՛հ, ու այսօր ալ դուրդուրանքով կը յիշեմ այդ օրը եւ կը նկատեմ կեանքիս ամէնէն երջանիկ օրերէն մէկը:

Գաղթականութիւնը եկաւ ու անցաւ. մենք նշմարեցինք որ կառքերը, որոնք կը փոխադրէին ժողովուրդը, տաճիկներ եւ քիւրտեր կը վարէին՝ յանկարծ անոնք ծրեցին ճամբաները եւ սկսան տարբեր ուղղութեամբ երթալ. ասիկա մեզի տարօրինակ թուեցաւ: Քշեցինք մեր ձիերը եւ կեցուցինք կառքերը՝ առարկելով թէ ի՞նչպէս ձգած են ժողովուրդը, հիւանդներն ու վերաւորները եւ կ'երթան: Պատասխանեցին որ իրենք կը վերադառնան տուն, իրենց պարտականութիւնը մինչեւ Մամա խաթուն բերել էր, եւ միայն տասը օրուայ համար, եւ ահա օրերը անցած են եւ աւելի չեն ուզեր հեռանալ. սէտք է որ իրենք ազատ ըլլան իրենց ուղած տեղը մեկնելու: Ըսինք իրենց որ Մուրատ փաշան Մամա խաթուն է, իրենք կ'երթան հոն իրենց վըճարումները կը ստանան, թուղթեր կը ստանան ազատ ճամբորդութեան եւ այն ատեն միայն ազատ կ'ըլլան: Մենք իրաւունք չունինք զիրենք ազատ ձգելու եւ սէտք է որ մինչեւ Մամա խաթուն դան: Սկսան աւելի եւ պակաս սպառնալիքներ ընել: Նկատեցի որ մէկը մը՝ տած է Առաքելին ներքեւ եւ բռնած անոր զէնքը եւ ձիէն վար կը քաշէ զայն: Քշեցի ձիս, զարկի հրացանի կոթով վզին, ինկաւ գետին. բարձրացաւ եւ սկսաւ փախչիլ զէպի ձիւնոտ լեռները. ասոր հետեւեցան տասի չափ ուրիշներ, որոնք կոտորուեցան. մնացածները վարեցին իրենց կառքերը եւ հասցուցին մինչեւ Մամա խաթուն. կառքերը դըրուեցան Մուրատի տրամադրութեան տակ ու տրուեցան դաղթականներուն՝ զէպի Կարին փոխադրուելու համար:

Մամա խաթուն լքուած վայրի մը կը նմանէր. պահեստները կողոպտուած էին դաղթականութեան կողմէն եւ միայն Մուրատն էր ճակատի աէրը: Կարծես կը քնանային Կովկասի մէջ եւ կը սպասէին որ քայքայումէ ետք մատները շարժեն: Բարեբախտաբար հոս էր սուրբազան Բժ. Ռուբէն Միքայէլեանը, որ կը պատմէր թէ ի՞նչպէս

կարելի եղաւ առաջըն առնել Թորոնթի՝ Կարնոյ մէջ անկախութիւն յայտարարելու դործին, որուն համար ետ կանչուեցաւ եւ տակաւին ճակատ վերադարձած չէ :

Այդ օրերուն Մամա Խաթուն երեւցաւ Տիգրանակերտցի տաճկա-
լիս տղթորը, որ ինքզինքը կը ներկայացնէր իրբեւ հայ . այս մարդը
չե՛մ դիտեր ինչպէս ընդունուած էր, հակառակ շատերու կասկածին,
կ'երեւի իշխանութիւններու կողմէ հաստատուած էր հայ ըլլալը եւ
ազատութիւն կը վայելէր մեր մէջ մտնելու եւ ծանօթանալու մեր
ամէն մէկ շարժումին: Երեկոյ մը եկաւ սենեակս եւ ըսաւ որ երթանք
քիչ մը դուրս . ես համաձայնեցայ եւ երբ կը պտտէինք շէնքին առ-
ջեւ, նշմարեց քիւրտ տղայ մը՝ որ կը ծառայէր չե՛մ դիտեր որու մօտ .
ղէնքը ուղղեց դէպի տղան, ես անակնկալի եկած՝ վաղեցի դէպի տը-
ղան եւ մինչ կը նայէի անոր՝ զարկաւ եւ սպաննեց զայն: Վէճճի մէջ
էին ԲԺ . Միքայէլեանի օղնական վիրաբոյժին հետ . վիրաբոյժը կ'աշ-
խատէր զէնքը առնել ձեռքէն, եւ երբ ես հասայ, զէնքը յանձնեց ա-
նոր եւ ինձի դառնալով ըսաւ . «Ես քեզի կրակել չէի ուզեր, կար-
ծեցի որ այդ քիւրտն էր որ ոտքի ելաւ եւ ես ուզեցի անոր կրակել,
այդ «փիճ»ը սատկեցնել, մինչդեռ քեզ զարկած պիտի ըլլայի»: Այս
վրան բաց, շինծու պատմութիւն մըն էր, բայց ինչո՞ւ այդքան թըշ-
նամացած պիտի ըլլայ մարդ՝ որ կորսնցնէ ինքզինքը . ես որեւէ կապ
չէի ունեցած, չէի ճանչնար: Վեր ելանք տղթորին մօտ, զինքը գը-
տանք բարկացած . «Բժիշկ մը մարդասպա՛ն . . . ասիկա չե՛մ կրնար
հասկնալ, չե՛մ կրնար . մանաւանդ Յովհաննէսը մեռցնելու երկրորդ
փորձդ . ի՞նչ էր քու մտածումդ, ի՞նչպէս եկած ես հոս ծառայելու
հիւանդներուն, վիրաւորներուն՝ երբ զէնք վերցուցած ես սպաննե-
լու»: Հիացմունքով կը դիտէի Քրիստափորի տղան, իր մարդասի-
րական զգացումները, իր պայծառ ու անկեղծ հոգին ու իր նուիրու-
մը՝ իր տառապող ժողովուրդին: Խնդիրը յանձնեց Մուրատի կարգա-
դրութեան եւ յաջորդ օր Մուրատէն հրահանգ ստացայ որ այս տղ-
թորը յանձնեմ Կարին, պատժական իշխանութեան: Յաջորդ օր Կա-
րին հասնելով՝ յանձնեցի զայն բանտային իշխանութեան . սակայն
երկու շարաթ ետք, երբ Անդրանիկի կարգադրութեամբ ես կը մեկ-
նէի պատերազմի ճակատ, նշմարեցի այս մարդը մեզ դիտող ամբո-
խին մէջ . կը նշանակէր որ կա՛մ բանտային իշխանութիւնը, կա՛մ
հոս նստող մէկը երաշխաւորած եւ ազատած էր զայն :

ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

ԺԱ.

ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԻՆ ԿԸ ՀԱՍՆԻ

Վերադառնալով Կարին՝ ես կազմակերպեցի խումբը, որուն կողմը Դատեմցի տղաք էին, Խաչատուր Հերոյեան, Թադէոս Սահակեան, Մամբրէ Թովմասեան, Սարգիս Մարտիրոսեան, Առաքել Հեպոյեան, Առաքել Ղարիպեան, Գրիգոր Շուշանեան՝ Խոյսցի, Հայկ Սլաճեան՝ Մորենիկցի, Հայկ Երեւանցի, Մարտիրոս Քիւրքեան՝ Արարիկերցի, Ստեփան Ստեփանեան՝ Երեւանցի: Այս տղոց վրայ դըրուած էր ծանր պատասխանատուութիւն մը. հսկել քաղաքի ընդհանուր կացութեան վրայ, կապ պահել գործող դանազան ուժերու միջև, գիշերները մասնաւոր հսկողութեան տակ առնել տաճկական թաղերու շարժումները, կապ ըլլալ Աղամարեանի, Մակեդոն Միրզեխանեանի եւ գնդապետ Քէչիչեանի ու Զօր. Թորգոմի միջև, եւ նայել քաղաքէն հեռացող եւ եկող ուժերուն վրայ: Մեր Պօղոս Գալուստեանը շատ կ'ուզէր որ անսպասան դար եւ միանար խումբին. ես համոզեցի զինք՝ որ ինքը պէտք է պահէ իր պաշտօնը քաղաքներու միութեան մէջ եւ պատրաստ ըլլայ այս տղոց ունէ մէկուն օժանդակելու, ըլլալիք դժբախտութեան մը պարագային: «Դուն այս խումբին անդամն ես, բայց պաշտօնով կը բացակայիս. մօրեղբայրս ալ դրած եմ այդ դործին մէջ. ձեր երկուքին պարտականութիւնն է խումբին մատակարարման հոգը. քու գործը նոյնքան կարեւոր է՝ որքան մնացած տղոցը, եթէ ոչ աւելի»: Պօղոս համակերպեցաւ, բայց չեմ կարծեր որ ուրախ էր:

Ես կապերս վերսկսայ այս կէս տաճիկ կէս քիւրտ ընտանիքի անդամներուն հետ, որոնք կապ ունէին Խարբերղի մէջ նստած իրենց գինուորական ամուսնոյն հետ, որմէ լուր ստացած էին՝ թէ ինչ որ

ըլլայ շուտով կը տեսնուինք: Քիւրտը զիս կը զգուշացնէր շրջապատի տաճիկ երիտասարդներէն եւ զրկուած ուտեստեղէնները թշնամացուցած էին զիրենք, փոխան բարեկամութեան. տանը աղջիկները կ'արտայայտուէին աւելի մտերմօրէն, որոնցմէ կը զգուշանայինք, քանի որ կ'ինը կը խաբէին լուրեր ստանալու՝ թէ ի՞նչ խօսակցութիւններ տեղի կ'ընային ունենալ մեր ներկայութեամբ: Իմ եւ Առաքելի ներկայութեամբ աւելի ապահով կը զգային, դանդատներ կ'ընէին նաեւ կարծեցեալ հայ բժիշկին մասին՝ որ զիրենք կողոպտելու ճիղը բրած էր: Ամէն օր սպանութիւններ կային Կարնոյ մէջ ու փրսփրսուքներ՝ թէ Անդրանիկը ե՞րբ պիտի դայ: Շատ յոյսեր կ'ապուած էին Անդրանիկի դալուսն հետ. իմ պարտականութիւններէս մէկն էր՝ հսկողութիւն կատարել որ իրեն վնաս մը չհասնի. միւս կողմէն դադարականութիւնը լեցուելով քաղաքին մէջ՝ անկարգութիւնը զգալապէս շատցեր էր: Ռուսահայեր տուն վերադառնալու մասին կը մտածէին, տաճկահայ երիտասարդութիւնը քիչ բացառութեամբ քաշուել կ'ուզէր, եւ շատ շատեր կը մտածէին միայն իրենց ընտանիքներուն մասին, զուրկ ըլլալով զինուորական պատրաստութենէ՝ կը զրկուէին նաեւ ինքնապաշտպանութեան կարելիութենէն:

Աղամալեան կը մեղադրուէր որ պահեստներէն բաւականաչափ չի բաժնէր. իր պատճառարանութիւնը այն էր՝ որ այլեւս ապրանք չսպասեն Կովկասէն եւ խնայողաբար դործածեն մթերքը. պէտք է ընդունիլ որ տիրական դէմք մը չկար՝ որ այս բոլորին առաջին առնէր եւ կազմակերպէր զինուորական ոյժ մը, եւ հաշուի առնէր թէ՛ մեր ժողովուրդը եւ թէ՛ թշնամին: Անդրանիկ չեմ հասկնար ինչո՞ւ կ'ուշացնէր իր Կարին հասնիլը, եւ երբ եկաւ ինչո՞ւ միս միւսակ Տօքթ. Պոնափարդին հետ, երբ այդ ատեն պէտքը կար մի քանի իրական դործիչներու եւ զինուորական անուն ունեցող ուժերու, որոնք կըրնային յարգանք պարտադրել եւ առաջնորդել:

Մուրատն ու Սեպուհ սքանչելի հայրենասէր մարդիկ էին, որ ամբողջ կեանքերնին տուած էին հայ ժողովուրդին, եւ հիմակ ալ առաջին գծերուն վրայ էին եւ կը շարունակէին հաւատարմօրէն ծառայել: Բայց ինծի այնպէս կը թուի, թէ այսօր ալ երբ կ'անդրադառնամ այդ շրջանին վրայ, թոյլ, անիշխանական եւ դադարականական հոգեբանութիւն մը կը տիրէր. ո՛չ մէկուն տրուած էր իրական իշխանութիւն, Թորոպմն ալ չկրցաւ իր շուրջը հաւաքել իրական ուժեր. ըստ երեւոյթին, ան աւելի քաղաքական մտահոգութիւններ ունէր, քան թէ զինուորական: Աղամալեանը հայրենասէր մարդ մըն էր, բայց մէյ մը Գէշիշոյիին, մէյ մը Մուրատին, մէյ մը Թորոպմին եւ շատ անգամ ալ Թիֆլիսէն տրուած հրահանգներուն տակ՝ կ'իյնար անորոշութեան եւ տարտամութեան մէջ կը տառապէր. մէկ խօսքով՝

չեղաւ այն՝ որ պէտք էր. կը հաւատամ որ հայրենասէր մըն էր, քան թէ ոեւէ մէկը այդ օրերուն պատասխանատու մարդոցմէն:

Այսպէս թէ այնպէս օրէ օր վտանգը կը շատնար եւ սակայն այդ լուրերին առաջըը առնող չկար ու մենք ամէն օր կը սպասէինք Անդրանիկի դալու հրաշքին՝ որ կ'ուշանար: Կը կատարէինք մեզի տըր-ուած պարտականութիւնները, եւ այսօր ալ, տարիներ ետք, հպարտութիւն մը կը զգամ այն ալի մը տղոց համար, որոնք հաւաքուած այս ու այն ճիւղին մէջ կ'աշխատէին հաւատարմօրէն:

Օր մը բաղմութիւնը կը յարձակի Աղամալեանի շտեմարանին վըրայ, աւելի շքար, աւելի մթերք, աւելի հաղնելիք ուղելով: Ան ճարտար լեզու չունէր ամբոխավարներուն պատասխանելու. իր կըմ-կըմուկները չէին օւններ իրեն. քանի մը տղոց հետ կը միջամտենք եւ կը յայտարարենք թէ ինչ որ Աղամալեանը ունի ձեռքի տակ՝ կը պատկանի ամբողջ ժողովուրդին՝ որ պէտք ունի, լաւ է որ դուք դիմում կատարէք ձեր համապատասխան մարմիններուն. ով որ կարիք ունի եւ մերժուած է՝ անոնք միայն բողոքելու իրաւունք ունին, ոչ թէ անոնք՝ որ կը ստանան ամէն բան եւ աւելին կ'ուղեն. ո՞վ պիտի հողայ անոնց՝ որոնք բոլորովին չքաւոր են: Հանդարտեցան, նոր դիմումները արձանագրուեցան եւ հրահանգուեցաւ պահեստապահներուն՝ ընդառաջել կարիքաւորներուն եւ ընդդիմանալ խռովարարներուն՝ որոնք կը փորձեն խուճապ առաջացնել:

Ամէն վայրկեան խօսքը կը դառնար Անդրանիկի դալու մասին. ոմանք կը խօսին թէ հազարաւոր բանակով մը կու դայ, ուրիշներ՝ թէ ոչ մէկ զօրք ունի եւ դժգոհութեամբ կու դայ, եւ ուրիշներ՝ թէ կ'ուղէ դալ բայց Ռուսահայերը արգելք կ'ըլլան: Միւս կողմէն շարունակ ժողովներ ժողովներու վրայ կը կատարուին առանց հիմնական նպատ մը բերելու ռազմաճակատի կացութեան վրայ: Ամբողջ ղեկներնը կը շրջինք քաղաքին մէջ եւ յողնած ենք. բայց ահա լուր առինք որ Անդրանիկը կրնայ այդ օրը հասնիլ Կարին, խումբիս պարտականութիւնն է հսկել որ որեւէ դէպք չպատահի եւ իր կեանքը չվտանգուի, որովհետեւ Անդրանիկի կեանքի ապահովութիւնը կարեւորագոյնն էր Կարնոյ պաշտպանութեան մէջ. խօսք կը շրջէր թէ տաճիկները կրնան շարժում մը կազմակերպել եւ տէրոք ընել: Ամէն հաւանականութիւն պէտք է նկատի ունենալ եւ ամէն զգուշութիւն ձեռք առնել: Ենթակայ էի գնդապետ Քէչիչեանի: Մակեդոն Միրզախանեան երկրորդն էր հրամանատարութեան մէջ, որ կը դիտաւորէր Կարնոյ առաջին անմահ ղունդը. մեր խումբին պարտականութիւնն էր այդ գունդին օժանդակել, երբ պատերազմի մէջ է:

Վերջապէս հրաշքը կը պատահի եւ Ղարսի դռներն ներս կը մտնէ Անդրանիկը, հետը ունենալով Գարիթեան Պոնարարդեանը: Միւս մի-

նակ, անընկեր, անշշուկ եւ անաղմուկ. մեր 12 հոգիները կը պաշարեն զինքը. կը սկսինք աղաղակել, երկու կողմէն ձիերը մտրակել եւ լուր զրկել Մուրատին՝ որ շատ չանցած իր խումբերով եւ հուրաններով կը հասնի Հայոց փրկիչը դիմաւորելու. փողոցները կը լեցուին, ժողովուրդը կը պոռայ, կը կանչէ, կը ցատկէ. կարծես հրաշքի մը առջեւն ըլլային: Ժողովուրդի այս խանդավառութենէն կ'աղղուիմ եւ մտքովս կարծես թէ կը կշտամբեմ Հայոց այս անզուգական հերոսին, թէ չի՞ հասկնար որ ինքն է այն փրկարար հոգին՝ որ այս ժողովուրդը պիտի տանի դէպի յաղթանակ եւ ի՞նչ իրաւունք ունի այդքան անփոյթ եւ այդքան անտարբեր զանուելու իր կեանքին վերաբերմամբ: Մտքիս մէջ տարակոյսներ կ'արթննան իր շրջապատի մարդոց կարողութիւններուն վրայ: Կարին իսկապէս իր արժանաւոր հեղինակութիւնը ունեցաւ եւ այս նոր տարին պիտի կարողանայ «այս հայ ամբին հայկական դրօշակ ծածանիլ»: Յնժութիւնը, ուրախութիւնը, խանդավառութիւնը եւ ողբերգութիւնը անսահման էր: Մուրատին հետ եկող զօրքերը եւ մեր տասնեակը բաւական չեն կարգ պահելու, եւ վերջապէս ալիք առ ալիք բազմութիւններու մէջէն առաջնորդուեցաւ Չաչկաչայի գլխացի շէնքին մէջ. քանի մը վայրկեան հոգ տեսնուեցաւ պատշգամին վրայ եւ բարեւեց բազմութիւնը. ժողովուրդը ցնծութեամբ պատասխանեց քաջին. եւ քանի մը քաջալերական խօսքերէն ետք՝ կանչեց Պոնաբարդեանը, որուն միջոցով յայտարարեց թէ ամէնքը երթան իրենց պարտականութեան զլուխը, վաղը առաւօտ ժամը 10ին լսելու զօրավարին պատգամը:

Այդ օրը ես առաջին անգամ հաւատքով լեցուն էի՝ թէ մենք անպայման պիտի կարողանանք պահել Կարինը. հիմա հանդիստ էինք եւ ապահով, հոն էին Հայոց ամէնէն արի զաւակները, Անդրանիկը, Մուրատը, Սեպուհը եւ Թորգոմը, իրենց թիկունք ունենալով հաւատաւոր ժողովուրդ մը՝ որ կրակներէն անցած էր եւ փորձով տեսած որ մեր թշնամին միայն բիրտ ոյժը կը յարգէ: Յաղթեցի՞ր՝ կը հպատակի եւ ստրուկի կը դառնայ, կորսնցուցի՞ր՝ ալ յոյս մի՛ ունենար ո՛չ կեանքիդ, ո՛չ պատուիդ եւ ոչ ալ ինչքիդ, վկայ մեր նահատակները: Իսկ այս ահաւասիկ հոս են Հայոց հերոսները եւ ժողովուրդը չի կրնար լքել իր ամէնէն արի զաւակները:

Յաջորդ առաւօտ ձիերը տեղաւորելով զօրանոց, տղոց հետ կ'իջնենք քաղաք՝ լսելու մեր հրամանատար Անդրանիկի կարգադրութիւնները. «Այս վայրկեանիս զէնք կրելու ընդունակ ամէն հայ պէտք է ինքզինքը զգայ իմ հրամանիս տակ, իր զինուորական կազմովը. իսկ անոնք որ չեն պատկանիր որեւէ զօրամասի, անմիջապէս կ'արձանագրուին եւ կը մտնեն համապատասխան ուժերուն մէջ եւ կ'ենթարկուին մեծաւորի կարգադրութիւններուն. իսկ այն ուժերը՝ որոնք

կազմ ու պատրաստ են, վաղը կը մեկնին ճակատ: Քաղաքին մէջ ամէն ոք կ'ենթարկուի քաղաքապահ ուժերուն եւ կը հնազանդի անոնց հրահանգներուն. այսուհետեւ Կարինը զինուորական քաղաք է եւ ամէն ոք պէտք է որ լծուած ըլլայ հայրենիքի պաշտպանութեան մեծ դերին. անաստողներ, վախկոտներ, փախչողներ, խախնարարներ՝ ինչ աղղէ որ ըլլան, խիստ կերպով կը պատժուին»:

Բազմութիւնը առնուած էր տեսակ մը պաշարման տակ եւ ով որ համապատասխան թուղթ չունէր՝ կը բռնուէր եւ կը դրուէր զինուորական միաւորի մը մէջ: Տաճիկներ աղուհացով ներկայացան իրեն եւ խոստացան ընդառաջել մեծ փաշային ամէն ակնկալութիւններուն: Ես թիֆլիսի մէջ ծանօթացած էի Համբարձում Մելիքեանի հետ, որ շատ մօր էր Դաշնակցութեան եւ արտօնապետն էր դաշնակցական «Հորիզոն» թերթին, ինչպէս նաեւ իր տղուն Սուրէն Մելիքեանին՝ վառվռուն, փայլուն երիտասարդ մը, որ իմ վրայ թողուց ամէն բան ունեցող շփացած տղու մը տպաւորութիւնը, բայց դարմանքս շատ մեծ եղաւ երբ զինքը տեսայ Կարնոյ մէջ, պատրաստ որեւէ պարտականութիւն վերցնելու: Ես քանի մը անգամ առիթը ունեցայ հիւրասիրելու եւ դնահատելու՝ որ ան զեղեցիկ օրինակը եղած է թիֆլիսի երիտասարդութեան մէջ՝ հայրենիք գալու եւ ծառայութիւն ստանձնելու հայկական բանակին մէջ: Ձեմ մոռնար իմ հանդիպումս Գաբրիթան Ամիրեանի հետ, որ եկած էր միանալու Սեպուհի գունդին. անուն հանած, հայրենասէր եւ կտրիճ գնդապետ մըն էր, որ մինչեւ վերջը հաւատարիմ կերպով ծառայեց հայ բանակին: Եկան աւելի քան յիսուն ուսանողներ՝ ծառայելու հեռախօսային ճիւղերու մէջ: Առաւօտ մը Սեպուհ կեցուցած էր այս նորեկ տղաքը կառավարական շէնքին առջեւ, կարծես աշակերտական դասարան մ'ըլլար, որուն առջեւ կեցած էր հսկայ հերոսը իր փափախով, ու կ'ըսէր. «Ա՛յ, բալաներ, հայ ձագուկներ», ու կ'ողետորէր այս պեխերնին չմրտած տըղաքը, որոնք լուռ ու մունջ մտիկ կ'ընէին այս սիրելի «Աժտահա» Սեպուհին:

ԻՄ ՆՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԻԼԻՃԷ – ԹՈՐԹՈՒՄ ՃԱՄԲՈՒ ՎՐԱՅ

Յաջորդ առաւօտ ժամը տասին մեր գունդը զնդապետ Քէչիչովի զլխաւորութեամբ շարժման մէջ դրուեցաւ: Մենք կանգ առինք Կան զիւղին մէջ. առաւօտ կանուխ նկատեցինք որ խմբապետ Մուշեղի ձիաւորներն եկան, մեզ ետեւ ձգեցին 200 ձիաւորներով եւ անցան զէպի լեռնաշղթան, վախցնելով այդ շրջանի թուրք զիւղացիները,

որոնք ձգեցին ու փախան եւ անցան թշնամիին կողմը եւ սկսան նեղել Իլիճէի ճակատը դռնուող մեր սակաւաթիւ ուժերը: Ես բան չեմ հասկընար այս դորժէն որ ծառայեց թշնամին ուժեղացնելու, արթընցնելով անոնց մէջ իրենց տուները վերադառնալու տենչը:

Ինձի յանձնուեցաւ Իլիճէի աջ թեւերէն մինչեւ Թորթումի ճամբան, հսկել եւ տեղեկագրել Մակեդոն Միրզէխանեանի միջոցով առաջին անմահ դուռըին: Երբ նստած էի Միրզէխանեանի մօտ, սկսաւ խօսիլ Իլիճէի մասին. այն տեղէն եկած լուրերը տխուր էին. ռուսահայ զօրքերը կը մերժէին հնազանդիլ Անդրանիկի հրամաններուն: Մենք միայն մեր հրամանատարներէն հրահանգ կը ստանանք, կ'ըսէին եւ զէնք կը պարպէին օդին մէջ, իրր նշան ըմբոստացումի: Սեպուհ կը փորձէ միջամտել, որուն նոյնպէս կը հակառակին. Մուրատ մէջտեղ կու դայ, կը խաղաղեցնէ, սակայն զօրքը կը մնայ իր յամառ դիրքին վրայ եւ կը մերժէ ենթարկուիլ ազգային հերոսի հրահանգներուն, մոռնալով որ ինքն է ընդհանուր հրամանատարը. Մակեդոն լսելով այս տխուր կացութիւնը, հայհոյանքով կ'անդադառնայ այս ցաւալի վիճակի մասին:

Թրքահայի եւ ռուսահայի այս հողերանութեան դէմ, որ դժբախտաբար դոյուլթիւն ունէր, զլուխ դրած, աչքիս առջեւ կը պատկերանայ Արշակ Զամալեանը, որ դեռ քանի մը ամիս առաջ կը հաւատար իր ստորագրած զինադադարին եւ կ'ուզէր նաեւ մեղ ալ հաւատացնել. տաճկահայ մտաւորականութեան եւ ղեկավարութեան վարանոտ վերաբերմունքը կար հոս՝ ուրիշէն յուսալու, ուրիշին կըռթնելու հողերանութիւնը իր ձեռքէ կը փախցնէր պատեհութիւններ, որ բախտն ու ժամանակն իրեն տուած էին:

Մակեդոն, դառնալով ինձի, ըսաւ. «Այս դէպքի մասին ռեւէ մէկուն հետ մի՛ խօսիր. բայց աւելի մեծ պարտականութիւն մը պիտի դնեմ ռուսերու վրայ. քու հսկողութեանդ տակ են այժմ այս տեղէն մինչեւ Կարմիր վանքի սարալանջերը, դիտելու, կանխելու եւ լուր տալու թրքական բանակի որեւէ շարժում որ կընայ անցնիլ բանակին ետեւ եւ կտրել Կարինը Կովկասէն. դորժածէ՛ ուր հեռախօսի կապ կայ, այլապէս սուրհանդակով զրկէ որեւէ տեղեկութիւն որ կարեւոր կը նկատես»:

Ես դուրս եկայ, հանդիպեցայ Խողանցի Միսաք չաւուչին եւ Մալթիացի Մանուկ չաւուչին. ուղեցին որ ինձի հետ դան, թէեւ կը փափաքէի, բայց Մակեդոնի յանձնուելիք խնդիր մ'էր: Ես յայտնեցի իրեն, բայց մերժեց. ես իմ խումբով ճամբայ ելայ դէպի Կարմիր վանք, կ'անցնէինք անմարդարնակ դիւղերէ եւ ուշ ատեն կը հասնինք Արծթի. այս տեղ կային տասէն տասնըհինգ զինուորներ, Երեւանցի հարիւրապետի մը ձեռքին տակ, մեծ մասով Զմչկածաղի Յաղ-

Թուկ դիւզէն . կային նաեւ հաղարէ աւելի ոչխարներ եւ այլ պետական զոյքեր , որ ըստ երեւոյթին թուրքերուն ախորժակը դրդուեր էին . իսկ տղաքը աշխարհէն հեռու , ինկած էին անորոշ վիճակի մը մէջ : Մենք անցանք դէպի Կարմիր վանք , չնկատեցինք որեւէ շարժում , լացի տեղական թուրքերուն փոխարարներու թեան ցրտացումէն , որ կարծեմ արդիւնքն էր Մուշեղի խումբին ստեղծած կասկածելի վիճակին :

Վերադարձին պաշարեցինք դիւզը , հրաւիրեցինք դիւզին մեծերը եւ հրամայեցինք որ 150էն աւելի մարդիկ կ'ուզենք դիւզի ճամբաները մաքրելու , որպէսզի թնդանօթները դան աննին եւ յետոյ ոուս զօրավարին պիտի հարցնենք թէ այս մարդոց պէտք պիտի ունենա՞յ , եւ իրենց պիտի տրուի օրական հինգ ոուրի :

Երկու ձիաւորներ զրկեցի Մակեդոն Միրզէխանեանին դրաւոր զեկուցումով մը , Արծթի շուրջ ունեցած կասկածներս յայտնելու եւ թէ որեւէ նշան չեմ տեսներ թուրքերուն Կարնոյ կռնակը անցնելու մասին :

Երբ վերջացաւ օրուան դործը , բաւական անուներու ցանկ մը առնելով տուն զրկեցինք դիւզին մեծամեծները . ժամ մը ետք երբ վերադարձան մնացած ձիւներն ալ մաքրելու , դէպի ջերմուկները տանող ճամբան ալ պէտք է մաքրուի , ըսինք : Երբ կրկին հաւաքուեցան , ըսինք թէ Կարնոյ կուսակալ Աղամալեան , շնորհակալութիւն յայտնած է եւ խնդրած որ երթան յաջորդ դիւզը ներկայանան ոուս զօրավարին եւ կատարեն երկու օրուան աշխատանք ու վերադառնան :

Այս դործաւորներու խումբին մէջ կար Իսմէթ շաւուշ անունով թուրք մը՝ որ ունէր երկու տղաք՝ Ալի եւ Շիւքրի անունով . ինք Իսմէթ հետեւած էր Կարնոյ ջարդին եւ դացած էր Մամա Խաթուն . դըտած էր հայ քահանայի մը ընտանիքը , խոստացած էր փրկել . բերած էր Արծթի եւ տուած էր իր տղոց ցանկութիւններուն յազեցման . ոչ միայն այս քահանային ընտանիքը , այլ շատ մը տուներու փճացումին պատճառ եղած էր , դիզելով եւ կողոպտելով ասոնց հարստութիւնները : Այս Իսմէթը մօտեցած էր Առաքելին դրամական խոստումներով , թէ իր տղաքը շատ երիտասարդ են նման դործի համար , ինքը կրնայ ուրիշ երկու հողի ալ բերել եթէ իր զաւակներն ազատ արձակուին այս աշխատանքէն : Առաքելին ըսի՝ որ մարդուն ըսէ թէ միջնորդի պէտք չունինք , կրնայ ինքն ուղղակի ինծի ըսել թէ ի՞նչ է իր փափաքը : Առաքել , ես դիտեմ դրամին վտանգը , մէյ մը որ դրամին ետեւէն իյնանք , պիտի ուզենք աւելի դիզել . մենք կրակներէ ազատած ենք եւ չեմ ալ դիտեր թէ որքան պիտի ապրինք . կրնաս ըսել ինծի , դրամն ա՛ռ եւ նորէն պարտականութիւնդ ըրէ : Դժբախտաբար այդպէս չ'ըլլար , դրամը մեզ կը վառէ , կը մոռնաս քու պարտակա-

նութիւններդ, կամ քեզի ենթակայ մարդիկ կը սկսին նոյնն ընել, փորձութեան չեն դիմանար եւ կը թերանան իրենց պարտքի մէջ, կը տուժէ դործը եւ կը վտանգուի հայրենիքը»:

Ժամ մը ետք Իսմէլի ներկայացաւ ինծի եւ ժպտ մը երեսին. «Ես Առաքել աղային աղաչեցի որ քեզմէ շնորհք մը խնդրէ. կը հասկնամ թէ քեզ վերաւորած եմ, շնորհք ըրէ որ կարողանամ այդ սխալս ուղղել. կ'ինս հիւանդ է, ուղեցի անոր խնայել իր երկու զաւակներուն բացակայութիւնը. վստահ եմ թէ դուն կը հասկնաս մօր մը վիշտը եւ մեզի շնորհք կ'ընես ու զիս կը թողուս յաւիտենապէս պարտահան»:

Ես այս մարդուն կարծես չէի լսեր, կը մտածէի Թերճանցի քահանային ընտանիքի զաւակներուն եւ աղջիկներուն մասին եւ հաղիւ կը ջանայի պաղարիւնութիւնս պահել, այս ոճրադործ եւ այսքան լիրբ ստախօս մարդու մը դիմաց: Ըսի, լաւ դուն ալ ինձ հետ եկուր եւ այս խնդրանքը ռուս զօրավարին յայտնէ. ես իրաւունք չունիմ այդպիսի կարգադրութիւն մ'ընելու:

Այս մարդը վայրկեան մը կորսնցուց ինքզինքը եւ պատասխանեց. «Ճանճմ, սէնտէ...», չթողուցի որ խօսքը շարունակէ, միաններուս ամբողջ թափովը մէկ մտրակ մը իջեցուցի այդ թուրքի երեսին որ ոլորուելով ինկաւ դետին:

Գետինը սառած էր, տխուր ձմեռ էր. դարմանալի երեւակայութիւն... սառին տակէն կարծես ջուր դուրս ցատկեց եւ այդ ջուրին մէջ ինծի թուեցաւ տեսնել մօրեղբորս նկարը ժպտուն. ես երջանիկ էի, կարծես կը սպասէր որ հատուցանէի իր կրած չարչարանքներուն փոխարէնը:

Գանի մը թուրք կանչելով, յայտարարեցի. «Գացէ՛ք, ըսէք ձեր ընկերներուն՝ թէ չիորձուին դրամ առաջարկել. Իսմէլը ուղեց զիս կաշառել եւ իր տղաքն աղատել աշխատանքէ, դրամի փոխարէն. բայց ես այդ Իսմէլի տղաքն ալ պիտի տանիմ եւ պիտի յանձնեմ ռուս զօրավարին»:

Գիշերով 150ի չափ մարդիկ ճամբայ ինկանք դէպի Իլիճէ, տասներկու ձիաւոր զինուորներու հսկողութեան տակ: Մենք չկապեցինք զիրենք թեւ թեւի, ինչպէս իրենք ըրին մեզի, իմ գործս էր զիրենք յանձնել ռուս զօրավարին. որքան զիտեմ, այս ճամբորդութիւնը անսպասելի յաջողութեամբ պսակուեցաւ. բոլորն ալ ներկայ էին, երբ յաջորդ պիւզն հասանք. տեղաւորեցինք զիրենք մարազին մէջ: Տեղւոյն հրամանատարին յանձնեցինք չորս հոգի՝ դուրս հանելով մարազէն: Այս յանձնումն ուշացումի պատճառ դարձաւ. զինուորներէս մին՝ Սարգիս անունով, եկաւ հաղորդելու թէ մնացածները կ'ըմբոստանան, պահանջելով միասին երթալ եւ արձանագրուել, ո՛չ թէ

չորսական: Գացի ստուգեցի որ 60ի չափ դեռ կը մնան, փամփուռչտոներս հրացանին մէջ դրի եւ սպառնադին խօսքս ուղղելով թուրքերուն՝ ըսի. «Հոս դործը մեր ուղած ձեւով պիտի կատարուի, ոյ՛ որ հակառակ է թող առաջ դայ»: Մէկ քանին սկսան իրարու մէջ խօսիլ, յետոյ լռեցին շողոքորթելով, վստահութիւն յայտնեցին՝ սպասելով մեր կարգադրութեան: Անոնք ոչ մէկ իրաւունք ունէին մեզմէ չընորհքի մը, երբ իրենք չէին տուած մեր անհամար զոհերուն:

Իսմէթը յանձնեցինք առանձին զինուորական դատարան, ուր փաստերով ապացուցուեցան իր կատարած ոճիրները աքսորի օրերուն, քահանային եւ իր ընտանիքին դէմ: Երբ Իսմէթ մերժեց իրեն վերադրուած յանցանքները, պահակ զինուորներէն մին չհանգուրժեց, քաչեց իր մէջքէն դանակը եւ զարկաւ անոր գլխուն. դանակի երախտակալը բաժնուեցաւ շեղբէն եւ թռաւ հեռուն. Իսմէթ խոյս տըլաւ մարազի ներսերը, ուր տղաքը վերջացուցին զինք:

Մեր պարտականութիւնը կատարելով, ուղղուեցանք դէպի Իլիճէ. այնտեղ կացութիւնը կարծես թէ ամբանալու նշաններ կու տար: Պէտք եղած հրահանգներն ստանալով՝ նորէն տեսնուեցանք չառուչոներուն հետ, որոնց դիմումը մերժուած էր մեր խումբին մասնակցիլ: Խումբը ուղևորուած էր իր կատարած զործին համար եւ անցնելով Կարնոյ գիւղերու փէշերէն, կ'երդէր ազգային երգեր եւ երբեմն ալ թուրքերէն եղանակ մը.

Պիղտէ տետիկ էրմենիլեր դալմատի,
Ֆետայիլար Փիքլըմըղէ տիւշմատի.
Տըլէ եաման, եաման,
էրմենի դաման,
Հալըմըղ եաման:

Այսօր սիրտս կը հրճուի մտարերելով խումբին պատկերը, ընկերներուս ամէն մէկուն դիմադիծը, յիշելով իրենց նուիրումը դէպի իրենց ստանձնած դործը: Կ'անցնինք Կարինի կռնակը տեղաւորուած թուրք գիւղ մը, կը հասկնանք թէ ինչ կարիքներ ունի եկող զարնան ցանքերուն համար, ինչ սերմի, ինչ արօրի եւ ինչ դբամի պէտք կրնան ունենալ: Կը հաւաքուին շուրջերնիս ծերերը. երիտասարդները կը կորսուին, մէնք կը հրաւիրենք զիրենք որ զան Կարին կապ հաստատեն կառավարութեան հետ փոխանակ հոս ու հոն փախչելու եւ վտանգելու իրենց զաւակները:

Կը վերադառնանք Արծթի, կը տեղաւորուինք զոմերու սենեակներուն մէջ եւ պահակ կը դնենք գիւղը մտնող ճամբաներուն վրայ. կը կանչենք հարիւրասպետ Ստեփանեանը, կը հրահանգենք որ պէտք

է արթուն պահէ իրեն ենթակայ տղաքը, որովհետեւ վախ կայ որ ընդհանուր յարձակում տեղի ունենայ շրջակայ թուրք դիւզայցիներուն կողմէ: Ճամբուն վրայ դատած էինք թուրք երեխայ մը՝ նետուած ձիւնին մէջ, դիւերանց թշնամիի կողմն անցնող թուրք դիւզացիներու կողմէ: Տղոց թաղել կու տամ եւ կը խորհրդածեմ պատերազմի մէջ ինկած բիւրաւոր երեխաներու, մասնաւորապէս հայ մանուկներու կորուստի մասին, ամբողջ թուրքիոյ տարածքին վրայ:

Արծթիի մէջ մեզի ճաշ կը պատրաստուի, ձիերուն խոտ ու դարի կու տան եւ մենք կը քնանանք: Առտուն կանուխ կը նշմարեմ հեռաւոր Կարինը հրդեհի մէջ. կը դարմանամ բայց երկու հողի կը զըրկեմ, նամակով մը Մուրատին, Աղամալեանին եւ Մակեդոն Միրզէխանեանի անունին: «Միրելիք, պատասխան մը կ'ուզեմ Կարնոյ կացութեան մասին եւ հրահանգ մը իմ ընելիքներուս համար»: Նոյն ատեն դիւզին տաններկու մեծերը կը հաւաքեմ քովս, կը զգուշացնեմ մեր տղաքը թէ կրնայ վտանգաւոր կացութիւն մը ստեղծուիլ մեզի համար: Գիւղը կը պաշարենք եւ ներսի մարդիկը կը հրաւիրենք դիւզին հրապարակը եւ կը հրահանգենք որ մաքրուին դիւզին փողոցները, եւ կը սպառնանք որ իրենց մեծերը բռնուած են եւ կրնան պատժուիլ, եթէ իրենք չկատարեն այդ յանձնուած պարտականութիւնները:

Կը նշմարեմ որ Զիթող դիւզին մէջ մարդիկ կը մտնեն ու կ'ելլեն, զինուորականներու չեն նմանիր, կառքերով են, իսկ Կարինէն ծուխն ու մուխը կը բարձրանայ, կը խտանայ. կը սկսիմ մտահոգուիլ մեր ընելիքներու մասին. շրջակայ թուրք դիւզերէն երկու հողի կու դան, կը բռնենք ու կը հարցաքննենք, կը հաստատեն թէ Կարինը նորէն թուրքերու ձեռքն անցեր է:

Մեր երկու ձիաւորներն ալ կը հաստատեն որ հանդիպած են վիւրաւոր հայումը, որ խորհուրդ տուած է իրենց՝ փախչիլ եւ աղատիլ թուրքերու ձեռքէն: Հաւատալս չէր դար, իմ դորամասէս լուր չունէի. Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ եւ այնքան ոյժ հաւաքած են եւ չեն կրցած, գոնէ կազմակերպուած նահանջ մը ընելու: Զարմանք եւ դայրոյթ կը յառաջացնեն մէջս, թէ այդպէս ամէն տեղ լքեցին առանց իսկ լուր տալու. այս տեսակ ալ կազմակերպուելուն կ'ըլլա՞յ: Չէի ուզեր հաւատալ, կը վախնայի թէ այս մէկը ինքնարդարացումի մէջ գտնուի եւ սխալ տեղեկութիւն կու տայ: Կասկածելով, ես ուրիշ երկու զինուորներ կը զրկեմ Գրիգոր Շուշանեանի եւ Առաքել Դարիսեանի՝ ստոյգ լուր բերելու համար, առանց դիւզին վրայ հսկողութիւնը պահպանելու:


Գիւղին նալպանտը կանչեցի եւ ձիերը պայտել տուի եւ դիւզին աշխատաւորներն հաւաքելով՝ բանտարկեցի առանց թոյլ տալու որ



Յ. Տէր Յովհաննէսեանի խումբին մէկ մասը
 Զայտէն՝ Սարգիս Մարտիրոսեան, Յովի. Ասատուրեան, Պօղոս Գալուստեան,
 Առաքել Հեպոյեան, Պօղոս Ուլուհոնեան: Նստած՝ Խաչատուր Հերոյեան,
 Յ. Տէր Յովհաննէսեան



Զօր. Դրօ, Վահան Փափագեան և Գնդ.



ՆԱՀԱՆՁԸ

Մենք Իսմայիլը հարցաքննեցինք. ան ըսաւ թէ երկու օր առաջ Տրապիզոնէն եկած էր. դէնքը ձեռքէն առինք, քաշուեցանք ներս. հաւաքեցինք ձիերը, կանչեցինք հոն ապրող մի քանի հայերը որ պատրաստուին մեզի հետ մեկնելու: Չմշկածապի Յաղթուկ գիւղէն ծերունի մը ինծի մօտեցաւ եւ ըսաւ թէ ինքը կը մնայ իր տեղը, ձմրան այս ցուրտին չէր կրնար դիմանալ, եւ կը փափաքէր հոն ապրիլ:

— Գիտե՞ս քեզի ինչ կը պատահի. թուրք զօրքերն եկած են, վաղը կը լեցուին հոս, քեզ կտոր կտոր կ'ընեն. ի՞նչ յիմար բաներ կը մտածես. սապ աւելցուցի՝ կեանքը քուկդ է, դուն միայն կրնաս որոշել թէ ի՞նչ պիտի ընես:

Քանի մը լաւ Յաղթուկցի տղոց ուշադրութեան յանձնեցի, առնոք ալ չկրցան համոզել. այս ալ պիտի տեսնէինք ըսելով, կարգադրեցի որ կառքով, անաղմուկ անցնինք Ձիթող գիւղը եւ այնտեղէն Կարինի թիկունքը, դէպի Հասանդալէ:

Դժուար պիտի ըլլայ նկարագրել այդ տաժանելի դիշերը, ձիւնապատ ամառութեանց մէջ, ձիերուն պոչերը բռնած՝ որպէսզի գլորար չկորսնցնենք. փորուած խրամատներու եւ ձիւնի կոյտերու մէջ մարդ կորսնցուցինք: Ձիւնեք ճանկելով կ'լլկենք ու կ'իջնենք եւ ապաւինելով կողմնացոյցին՝ կը ճամբորդենք. ընկրկելով, կանգնելով կը կարծէինք դէպի առաջ երթալ, մինչ իրականին մէջ նոյն բլրան շուրջն էր որ կը դառնայինք:

Երբ առաւօտը բացուեցաւ մենք հասանք Կարինի բերդերուն, Կարսի դուռ կոչուած տեղը. եւ նշմարեցինք զինուորներու նման շարքի կեցած ծառեր՝ որոնք կարծես թէ մեզի բարեւի կեցած էին, իրականութեան մէջ շարուած ցիցեր էին:

Երբ օրն աւելի բացուեցաւ, տեսանք որ անոնք երկաթուղիի երկայնքին զարնուած ցիցեր են. մենք անաղմուկ առաջ անցանք: Մեր աջ կողմը, բարձունքին վրայ, կը տեսնէինք թուրք պահակներ՝ անտարբեր մեզի հանդէպ: Մենք շտապով կ'անցնինք թեքուելով դէպի ձախ, երկաթուղիի լայնքին:

Առաքելը կը կանչեմ եւ կ'ըսեմ որ ինքը թուրք պէտք է ձեւանայ՝ Հասանդալէէն եկողները դիմաւորելու. ես ետեւը պիտի մնամ Կարինէն եկողները դիմաւորելու: Մեզի ընկերացող կիին մը եւ երկու ծերունիներ պիտի քալեն մէջտեղէն՝ չնշմարուելու համար:

Այսպէս բաւական կը քալենք եւ ահա դիմացէն կու դան խումբ մը թուրքեր, որոնք Կարին կ'երթան հրահանգներ ստանալու եւ ըսելու թէ դիմացի ձորին մէջ մնացած կետուորներ կան զորս պէտք է ոչնչացնել: Առաքել իր դերը կը կատարէ, կը բերէ քօլս խումբ

մը թուրքեր՝ որոնք կը յայտնեն թէ իրենք կեաւուրներէն նոր ազատուածներ են. Կարին կ'երթան նախ ղէնք առնելու եւ լուրեր հաղորդելու կեաւուրներու մասին :

Ասոնցմէ մէկ քանի հատը զինուած են եւ մեր տղաքը դիշերուան յողնութենէն եւ անքնութենէն ընկճուած՝ չեն մտածեր զինաթափելու : Կը հարցնեմ թուրքերուն թէ ո՞ր են մեր յառաջապահ զօրքերը . կը պատասխանեն՝ թէ արդէն 400 թուրք ձիաւորներ հասած են Հասանլէ, ուսկից կեաւուրները փախած են : Հրահանդ կու տամ որ անցնին եւ տեղեկացնեն հրամանատար Իսմէթին՝ ինչ որ գիտեն . մենք այդ կեաւուրներուն հող կը տանինք, իրենք մտահոգուելու պէտք չունին :

Անոնք կ'անցնին, մեզի կը մնար կա'մ անտարբեր ըլլալ ծուղակը ինկած տղոց մասին ու քէլ ձիերը եւ անցնիլ, եւ կամ ալ միանալ անոնց ու կռուիլ թուրքերուն դէմ :

Այս զինուած թուրքերը, հարիւր քայլ հեռու կը սպասեն, տեսնելու համար թէ ի՞նչ դիրք պիտի բռնենք ձորը մնացած կեաւուրներուն դէմ : Արադ կերպով դիրք բռնելով սկսանք կանչել ձորին մէջ մնացած տղաքը . որքան կարելի է շուտ մեզի միանալ, որպէսզի միասին կռուինք դաւիթ թրքական ուժերուն դէմ . կա'մ միասին կ'ազատուինք եւ կամ բոլորս կ'իյնանք այս կռուին մէջ : Երբ նկատեցին որ այս ձորն ինկած տղաքը ազատ կերպով կը քայլեն մեզի միանալու, զինուած թուրքերը մեր վրայ կրակ բացին : Ես մտածեցի որ թերեւս կրնանք Հասանլէի ձախ կողմէն կտրել անցնիլ եւ այդպէս կարողադուրթիւն ըրի . չեմ դիտեր ի՞նչպէս թուրքերը սկսան շատնալ եւ անդադար կրակ թափել մեր վրայ : Այստեղ վիրաւորուեցաւ իմ թանկագին ընկերս՝ Մարտիրոս Բիւրքճեանը իր աջ ձեռքի դաստակէն . զնդակն իր աջ ափին ոսկորները փշրած էր, արիւնը կը հոսէր . կանչեցի Հայկ Սըլաճեանը՝ որ կապեց անոր վէրքը . Մարտիրոս արցունքոտ աչքերով ինձի կը նայէր . ըսի իրեն .

— Սիրելի Մարտիրոս, եթէ ազատինք այս դժոխքէն, այս ըսպին սիրելի յիշատակ մը պիտի մնայ, իսկ եթէ բոլորս զոհ երթանք՝ մէկ վէրք աւելի կամ պակաս ի՞նչ նշանակութիւն ունի :

Առաւ ղէնքը, դրկեց եւ ուղղելով դէպի թշնամին՝ իւզոտ հայհոյանք մը քաշելով սկսաւ կրակել . յաղթած էր ցաւին եւ ես երջանիկ էի այս սքանչելի տղուն քաջութեան եւ կորովին համար :

Ձորը մնացած տղաքն եկան, անցան դիրքերուն մէջ եւ եղանք 57 հողի կռուողներ, որ քիչ թիւ մը չէր մեր պայմաններուն տակ : Այստեղ վիրաւորուեցան նաեւ Յաղթուկցի Յաւակ անունով երիտասարդ մը եւ ուրիշ մը՝ որուն անունը դժբախտաբար չեմ յիշեր :

Մենք նահանջելով կը կոռւէինք. դիրքէս մէջէն նշմարեցի որ Առաքել Ղարիպեան, Մամբրէ Թովմասեան եւ Մարտիրոս Քիւրքճեան երկաթուղիի դժէն դուրս ելած են եւ ինկած ձիւններուն մէջ՝ դէպի լեռը բարձրանալու համար. տեսնելով թէ ձիւնին մէջ չեն կըրնար առաջ երթալ եւ մենք կաքաւի պէս պիտի բռնուինք, կարգադրեցի որ ետ կանչեն դէպի երկաթուղիի դիժը, որ տեսակ մը դերքերու յարմարութիւն ունէր, աւելի լաւ էր որ հոն կոռւէինք, քան թէ անպաշտպան տեղեր: Զիրենք վերջին անգամ տեսայ հետուէն եւ այլեւս տեսնելու բախտը չունեցայ. անոնք մնացին ձախ կողմը, ձորին մէջ, թուրքերու դիւղին եւ մեր կրահներուն միջեւ. այս կըսկիծը մինչեւ այսօր կը զդամ:

Այդ պահուն նկատեցի որ Հայկ Սըլվաճեանը չկար, հարցուցի զինուորներուն, որոնք ըսին թէ նախորդ դիրքերուն առջեւ նստած էր եւ թերեւս քնացած կամ սպաննուած էր:

Կարգադրեցի բուռն կրակ բանալ այդ ուղղութեամբ, ինծի պատահութիւն տալու՝ երթալ այդ դիրքը, Հայկը գտնելու համար: Իսկապէս շատ չանցած՝ հասայ Հայկին, կանչեցի կրկնակի եւ արթընցաւ. ըսի որ սողոսկելով անցնի իմ առջեւէս, մինչ այդ ես կը կրակեմ. կրակելով եւ վազելով միացանք տղոց:

Ոչ մէկուն կրնայի նեղանալ թէ ինչո՞ւ կը քնանան, որովհետեւ դրեթէ 48 ժամ էր որ ո՛չ կերած էին եւ ո՛չ քնացած. ես կը դարձանայի անոնց դիմադրական ոյժին վրայ: Կը զդայի թէ մարդ կրնայ աւելի ընել՝ քան ինչ որ սովորաբար կ'ենթադրուի: Մարդ երբ լարուած է եւ գիլատից՝ վայրկեանին լրջութեան, շիտթութեան չի մատնուիր:

Գիշերը կը մօտենար, ահա օր մ'ալ կ'անցնէր: Կը պատուիրեմ երեք խումբի բաժնուիլ, բայց սերտ կապ պահել իրարու հետ, որովհետեւ վերջին յոյսն ունիմ թէ տղաքը թերեւս ողջ են եւ կ'ուզեմ դէպի Կարին երթալու ցոյց մ'ընել, մինչ կարդադրած եմ որ հակառակ ուղղութեամբ պիտի նահանջենք եւ հասնինք Հասանդալէ, ուր իբր թէ 400 թրքական ձիաւոր ուժեր կան: Գիշերուան մէջ կը ձայնենք, տղոց անունները կու տանք, տխուր կը դառնանք դէպի ետ. տղաքը ձգած դացած են: Կը քչենք ձիերը դէպի լեռները. անասունները հազիւ կրնան շարժիլ, մաղլցելով ձիւներու մէջէն, ձիերը շատ անգամ մեր ետեւէն քաշելով:

Առաւօտ կը հասնինք Հասանդալէի հանդիպակաց կողմը, ձորի մը մէջ կը գտնենք մեզ ձգած տղաքը, թիմուած ձիւներուն մէջ, դիւրին դոհի վիճակով: Բարկանալու ժամանակ չենք սեպեր: Կը հրահանգենք ինքնապաշտպանութեան վիճակ մը ստեղծել. կը հարցնենք ուտելիքի մասին, որ չունին. կը ձղենք մեր հետն ելող տղաքն

ալ հող եւ Առաքելն առած՝ կ'երթանք մօտակայ գիւղը հացի համար: Գիւղը տակաւին չէր արթնցած, աջ ու ձախ դիակներ կը տեսնենք նետուած փողոցներու վրայ, քանի մը դուռ կը դարձնենք չեն բացուիր, կը փորձենք ուրիշներ: Վերջապէս կը բացուին կարգ մը դռներ եւ կը հաւաքենք հաց, քիչ մը մածուն, եւ կը մեկնինք մեր տղոց մօտ: Հացը կը բաժնենք, ոտքի կ'ելլենք ճամբուն վրայ քալելով եւ ուտելով: Մեր աջ կողմէն թուրք դիւղէ մը կ'անցնինք. որեւէ շրժուարութիւն չենք ունենար. յիսուն հողի տանիքներու վրայէն մեկ կը դիտեն, անորոշ են թէ ով ենք որ այդպէս կ'անցնինք. իրենք աւելի քիւրտի կը նմանին քան թէ թուրքի:

Կը մօտենանք յաջորդ դիւղին, այս անգամ պիտի անցնինք ուղղակի դիւղին մէջէն, պիտի հասկնան առանց կասկածի մեր հայ ըլլալը եւ կրակի պիտի բռնուինք: Կը կարգադրեմ որ թուրքերէն դիտող տղաքն առաջ անցնին եւ զինուած մարդիկն անմիջապէս բռնեն եւ ժողովուրդը չլիտթութեան մատնուի: Ախտոս որ այս տեղի չունեցաւ. մերիներն այս արթնութիւնը չունեցան եւ կարծես թէ թուրքերու ուրախութենէն իրենք անորոշութեան մատնուեցան: Գիւղացիք հասկցան որ հայեր ենք, թուրք երիտասարդութիւնն անմիջապէս կորսուեցաւ, ծերունիները խօսքի բռնուեցան մեր տղոց հետ. մերիները, կարելի է ըսել, ինքզինքնին կորսնցուցին, կարծես թէ պապերուն տունը հանդատի եկած ըլլային: Ախտոս սենեակին մէջ սկսան քնանալ. ըսած էի որ հայերէն չխօսին, բայց հարիւրապետ Ստեփանեան առաջինն ըլլալով եկաւ իր դանդատները հայերէն ընելու բարձրաձայն: Իր ուսնոցները վար առի, պատուիրեցի որ դուրս դայ, բարձր ձայնով գերմաներէն ինծի բարկանայ եւ ես իրեն Փրանսերէն կը սրտասխանեմ. այսպէս լեզուի խառնակութիւն մը կը ստեղծենք եւ գիւղացիներուն մէջ ալ շփոթութիւն մը կը ծագի:

Թուրքերէն լաւ գիտցողները մեզի պէտք եղած ուտելիքները կ'ապահովեն եւ կը յայտնենք որ մեր սրտականութիւնն է հասնիլ, որքան կարելի է շուտ, Խորասան կամ Գարաեորկան, արդիւնու համար թշնամիին հակայարձակումը:

Եթէ կարելի ըլլար իմ եւ Ստեփանեանի խօսքերը շարժանկարի առնել՝ ո՛րքան դաւեշտ պիտի ըլլար: Հազիւ իրիկնամուտին կարելի կ'ըլլայ այս գիւղէն դուրս ելլել, նախապէս պահակներ դնելով ճամբուն վրայ՝ մեր գիւղէն դուրս ելլելը ապահովելու համար:

Մենք այդ լեռնայանջէն կը յառաջանանք դէպի Քէօփրիւդէօյ. գիշերը նորէն մեր ճամբան կը կորսնցնենք: Զիս տուած եմ ուրիշ տկար ընկերներու եւ ես կը քալեմ ծանրութեամբ եւ կարծես թէ պիտի իյնամ յաւիտենական քունի մէջ. եւ այդ քունն այնքան հաճելի կը թուէր՝ որ զլուսս ձիւնին մէջ այլեւս չէի ուզեր արթննալ:

Միւս կողմէն կը զգամ որ պատասխանատու եմ այս երիտասարդներու արեւին: Եթէ ես կը տկարանամ՝ ի՞նչ իրաւունքով ուրիշներէն աւելին պահանջեմ:

Ես վիրաւորուած էի դեռ Քէօփրիւզէօյ չհասած, ուր կռիւլը կը շարունակուէր, օդակը կը նեղնար, կողքիս կը վիրաւորուէր Յաղթուկցի տղոցմէ, որուն աջ ուսին զարկած եւ անցած էր զնդակը: Ես կը հրահանդեմ Սըվաճեանին՝ կապել այս մարդուն վէրքը: Առաջին անգամ ըլլալով կը մտածեմ որ կրնանք այստեղ բոլորս ալ մահանալ. ցաւ չունիմ. փառք կու տամ որ այդքան արհաւիրքէ ետք, հայրենի հողին վրայ մեր ժողովուրդի տմարդի թշնամին կատրելով պիտի մեռնինք. բայց կ'ափսոսամ որ ոչ ոք պիտի իմանայ փառքը Առաքելին, Մամբրէին, Մարտիրոսին եւ այս կռուող տղոց, որոնց ամէն մէկը մէյ մէկ առիւծ դարձան: Ահա՛ Առաքելը որ քօլս է, որ հազար ու մէկ շարչարանքներէ ազատեցաւ, թերեւս հոս իննայ: Այս խորհրդածուծիւնները հազիւ թէ քանի մը երկվայրկեան միտքս ըզբաղեցուցին, դարձայ Առաքելին՝ թէ երբ մը երդէ. այդ վայրկեանին թաղէոս Սահակեանն եկաւ ըսելու թէ ինքը այլեւս չի կրնար դիմանալ Կարինի կողմէն եկած հարուածներուն: Զգեցի տեղս, վաղեցի հոն, կրակը կ'իջնէր անդադար եւ շեշտակի. կարդալոցեցի որ կէս առ կէս կրակեն մինչեւ հասկնանք թէ Կարնոյ ո՞ր կողմէն մեզի վըտանդ կար:

Շարունակեցի կրակել Կարնոյ դիրքին վրայ. շատ չանցած, նըկատեցի որ աչքերս լաւ չեն տեսներ, կը դողուն, երբ ձեռքս տարի, իրբեւ թէ քրտինքս սրբեմ, տեսայ որ ձեռքս արիւնլուայ է եւ առատութեամբ արիւն կը հոսէր ճակտէս վար. կանչեցի Սըվաճեանը, մաքրեց, ճակատիս վէրքը կապեց, եւ զվացի որ պարզապէս վիրաւորուած էի եւ ոչ մէկ վտանդ կար: Շարունակեցի կռիւլը. երբ Սըվաճեան ըսաւ թէ լուր տարածուած է որ սպաննուած եմ, պարտք սեպեցի այցելել դիրքերը, հասկցնել որ ծանր վէրք մը չունիմ եւ մենք այս կռուին մէջ անպայման կը յաղթենք, քանի որ մինչեւ հիմա թուրքերը նոյ ուժեր չստացան մեղ ոչնչացնելու համար: Ասիկա ցոյց կու տար թէ չէին ուղեր իրենց թեւերն երկարել առանց Կարինին վերջնականապէս տիրելու: Տղաքը կ'ողեւորուին եւ առիւծի պէս կը շարունակեն կռուիլ: Հպարտ եմ իրենցմով:

Շարունակելով մեր նահանջը վերջապէս կը հասնինք դետի ափին, պէտք է անցնինք դետը. ես կը փորձեմ անցըր՝ միւսներուն ցոյց տալու համար դիւրին տեղը: Կը վերադառնամ երկու հոգի նըստեցնելով ձիուս վրայ. անոնցմէ մին ձիս առած ետ կը դառնայ. այսպէսով բոլորը կ'անցնին, վերջինը կը մնանք ես, Յաղթուկցի տղան՝ որ թերեւս կեանքին մէջ ձի չէր նստած. այս տղան ձիուն վը-

րայ կը տարուբերի, թամբը կը շրջի ձիուն փորին տակ՝ դեռ ձգելով դիս եւ զինքը: Մէկ ձեռքով կը յաջողիմ ձիուն պոչը բռնել, միւս ձեռքով տղուն ձեռքը կը բռնեմ. ձին մեղ կը քաշէ դէպի դետափը, կը պառկիմ, թրջած հաղուտներս կը փոխեմ, թաղիքէ կօշիկներ կը հաղուիմ եւ երբ դէնքս կը փորձեմ՝ կը տեսնեմ որ սառած է:

Անշուշտ կը յառաջանամ դէպի կամուրջը որ Գէօփրիւդէօյէն քիչ մը հեռու կը գտնուէր. կը բռնենք թուրք կը կամուրջին տակ. ան կը մերժէ որեւէ բացատրութիւն տալ թէ ով պատուիրած էր կամուրջին վրայ հսկել: Երբ բաւական անցանք կամուրջէն՝ փամփուշտ մը պարպեցի, հրացանս սկսաւ աշխատիլ. լեցուցի նոր գնդակներով. ձիերը քշեցինք իրարմէ տասը քայլ հեռաւորութեան վրայ: Այդ պահուն, Բասնի դաշտի կողմէն կը լսենք հսկայական պայթումներ. ենթադրեցինք թէ մեր ուժերը կրնան ըլլալ, որոնք կրակի կու տան նշանակութիւն ունեցող պահեստներ, որոնք կարելի չէր փոխադրել:

Վերջապէս առաւօտեան կը հասնինք Սորասան. տուները կրակի տրուած են, կը փորձենք ուտելիք գտնել, բայց ի դուր: Կը նկատեմ հեռախօսային կաղմուածք մը՝ որ լաւ վիճակի մէջ էր. կը վերցնեմ ընկալուչը, կը լսեմ որ երկու հայեր կը խօսին. չեմ կրնար որոշել թէ ո՞վ են խօսողները, ուսկի՞ց կը խօսին. կը միջամտեմ, կը հարցնեմ, կը յայտնեմ որ Սորասանէն կը խօսիմ. այս պարագային խօսակցութիւնը դադրեցուցին եւ ինչ որ ըրի չկրցայ ետ առնել: Կոտրեցի գործիքը, կտրեցի դիժը. մտահոգուեցայ որ կրնար թշնամիին օգտակար ըլլալ, ես անխոհեմ գտնուեցայ մեր տեղն ու դիրքը յայտնելով:

Իջանք չրջապատի փոսերուն մէջ, պահակներ դրինք եւ ձեռքները որ ամէն ոք հանդստանայ, որքան կարելի է: Ձիերը կերակրեցինք կարելի եղածին չափ. այդ ժամանակ պահակները մեղ մօտ բերին հայ ծերունի մը՝ որ կու դար իր ըսածին համեմատ Գարաեօրկանէն, եւ կ'երթար Կարին՝ Մուրատին քով. ան կ'ըսէր թէ Արաբկիրցի է: Մենք այս հայը ուղեցինք համոզել թէ սխալ ուղղութեամբ կ'երթայ, Կարինը թուրքերուն ձեռքն է եւ եթէ շարունակէ իր ճամբան, յաջորդ կամուրջին վրայ պիտի բռնուի ու յանձնուի թուրքերուն եւ պիտի սպաննուի:

«Պուք չէք հասկնար, ըսաւ, ես Մուրատին քով կ'ուղեմ երթալ, ես գիտեմ որ անիկա Կարին կը գտնուի», ու շարունակեց իր ճամբան: Մենք ալ ճամբայ ինկանք դէպի Գարաեօրկան, միշտ գիտնալով որ այսօր վճռական օր մը պիտի ըլլայ, կա՛մ միասին կ'աղատինք, կա՛մ կը հերոսանանք մեր մահով: Ճամբուն վրայ պառկած կը գտնենք ռուսահայ կարեցի երիտասարդի մը դիակը, որ յողնած ըլլալով դնացած ու սառած էր:

Միակ փրկութիւնը կը կայանար մէկ մարդու պէս կոռուլուն մէջ. մէկն ամէուն, ամէնքը մէկին համար. ով որ միայն ինքզինքը կ'ուղէ փրկել, նախ ինքզինքը կը կորսնցնէ, յետոյ ամբողջ խումբը:

Խորասանի շրջանին մէջ ամայութիւն կը տիրէր, կրնայինք դրօշակ պարզել, ինչպէս Թորդոմ ըրաւ Կարինի մէջ, բայց անկախութիւնը պաշտպանութեան պէտք ունի. մեր զժբախտութիւնն այն էր՝ որ չէինք կրնար մեր ուժերը համախմբել:

Դարձայ իմ ղինուորներուս եւ յայտարարեցի. «Նս կ'ուղեմ ձեզի ըսել որ առաջին վարանումը ցոյց տուողին ե՛ս պիտի դարնեմ. ես պիտի չվարանիմ պատժելու ձեզմէ ամէն մէկը, ամէնէն հարազատը, եթէ նշմարեմ որ ղիտակցաբար կամ անղիտակցաբար այս ընդհանուր դործին պիտի վնասէ: Հիմա պիտի անցնինք Գարաեօրկան, ուր կրնայ միայն հայկական ոյժ գտնուիլ, որով պիտի ղիւրանայ մեր դործը. կամ ալ կրնան թէ՛ հայ եւ թէ՛ թուրք ուժեր դէմ ղիմաց ըլլալ. մեզի կը տրուի լաւ պատեհութիւն մը՝ ջարդելու թուրքերը կամ գերի վերցնելու՝ զարնելով կոնակէն. կրակին տէր եղէք, պիտի չթողում որ կրակէք, պիտի զարնեմ այն՝ որ կը համարձակի կրակ բանալ առանց արտօնութեան. տասը քայլի վրայ պիտի քայլէք, ձիաւորները միշտ առջեւէն եւ մաս մ'ալ ձիաւոր ետեւէն: Աստուած հետերնիդ ըլլայ»:

Առաւօտեան մթնշաղին նշմարեցինք ղիմացէն ձիաւորներու շարժումներ, մենք առանց մեր պաղարիւնութիւնը կորսնցնելու շարունակեցինք քայլ առ քայլ յառաջանալ: Հրացանի ձայն լսելու ատեն դետին պիտի պառկէին ճամբու երկու եզերքներուն վրայ, ձիերը ապահով տեղ մը քաշելով:

Շատ չանցած, ճամբուն վրայ տեսանք տասնեակ մը ձիաւորներ, որոնք կը քշէին ձիերը դէպի Գարաեօրկան: Կարգադրեցի որ երկու ձիաւորներ հետեւին անոնց, իսկ միւսները հեռաւորութիւն պահելով շարունակեն հետեւիլ ձիաւորներուն:

Ճամբուն ձախ կողմէն երեւցան ուրիշ ձիաւորներ, որոնք նշան ըրին թէ անցէք. հայեր էին, եւ մենք ուրախացանք: Հաւաքուեցանք, ձիերը քաշեցինք, նստանք, կարծես թէ յաղթական մտանք Գարաեօրկան, ոռւս-թրքական նախկին սահմանադրուիւր:

ՌՌԻՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽԻ ՎՐԱՅ

Ռուսահայեր կը սպասէին թէ թուրքերը կանգ պիտի առնեն հոս եւ առաջ պիտի չերթան: Տեղաւորուեցանք կայաններէն մէկուն մէջ քիչ մը հանգստանալու, երբ ղիս կանչեցին թէ զօրավար Թորդոմը բռնած կը ծեծէ Յաղթուկցին, մեղադրելով իրբեւ վախկոտ եւ փա-

խըստական: Վաղեցի իրեն, բարեւեցի եւ խնդրեցի որ ձդէ մարդը, որովհետեւ նա վախկատ չէր, իր պարտականութիւնները կատարած էր. իր մեծաւորները լուր չեն տուած նահանջի մասին. բախտաւոր էր որ հանդիպած էինք իրենց եւ մեզի հետ ըլլալու ընթացքին կատարած էր իր վրան դրուած պարտականութիւնները:

«Դժբախտաբար սխալ մէկը կը ծեծէք» ըսելուս՝ մտրակը վար դրաւ, եկաւ ինծի, իբր թէ բան մը չէր պատահած, թէ ինչո՞ւ իրենց տեղեկութիւններ չեմ տուած:

— Զօրավար, եօթն օր, գիշեր ցերեկ կռիւներով ինքզինքնիս հոս ձգեցինք. պարտաւոր էի տեղեկութիւն տալ, բայց այնքան շիտի, անորոշութեան, յուշութեան, աղտոտութեան մէջ էինք, որ քեզի ներկայանալէ առաջ կ'ուզէինք քիչ մը մարդու կարգ մտնել:

— Շատ լաւ, ըսաւ, երեկոյեան ժամը հինգին կու դաս, միասին կը ճաշենք եւ խօսելու առիթ կո'նենանք:

Ուղե Յաղթուկցին դնաց, բայց զօրավարը խօսք մ'անդամ չըրաւ: Յաղթուկցին ինծի շնորհակալութիւն յայտնեց. կ'երեւի թէ բանտարկութիւն մը խնայած էի: Ես դացի քնանալու: Այն հաւատքը որ ունէի մեր ժողովուրդին եւ իր ղեկավարութեան մասին, դժբախտաբար այսօր կորսնցուցած էր: Զդած էին ինծի պէս զաւակներ հոս ու հոն, առանց կապ պահելու, առանց ուղղութիւն տալու եւ առանց լաւապէս օգտաւործելու: Իրենց տրուած պատահութիւնները ա'լ չեն կրկնուիր: Յետոյ Աղամպեան, Մուրատ, Սեպուհ, Թորգոմ, Պոնարարթեան եւ Անդրանիկ չկրցան լիապէս օգտագործել իրենց տըրուած ժամանակը, դէնքը, հարստութիւնը. դոնէ աւելի մեծ չափերով վնասելու Թուրքերուն, քան ինչ որ կրցան ընել, հակառակ իրենց քաջութիւններուն եւ զոհողութիւններուն:

Երեկոյեան կանոնաւոր մարդու վիճակի մէջ, պատիւն ունեցայ ընթրելու զօրավար Թորգոմի հետ: Իրեն պատմեցի Արծթի, Թորթումի եւ Իլիճէէն մինչեւ Գարաեօրկան մեր ողիսականը: Անշուշտ ասիկա աւելի լաւ էր քան թէ Դատեմի եւ Տերսիմէն Երզնկայ փախուստս, որովհետեւ հոս քաջարի եւ բարի տղոց հետ էի:

— Որոշ չափով հաշիւ տուինք եւ վնասեցինք թշնամիին թէ՛ նիւթական եւ թէ՛ Փիղիքական տեսակէտներով՝ պատերազմի դաշտին վրայ, առանց կնոջ մը կամ երեխայի մը մազին դպչելու, ինչպէս կ'ուզէր ասպետական օրէնքը: Բայց ճակատ ճակատի շատ աւելի առիւնք իրենցմէ քան թէ տուինք, սակայն իրենցմէ առած հազարը պիտի չվերադարձնեն մեր ընկերները՝ Մամրէն, Առաքելը եւ Մարտիրոսը:

— Մնացիր իմ ուժերուս, յուսախար պիտի չըլլաս, ըսաւ զօրավարը:

— Պէտք է լուր տամ Կարնոյ Անմահ առաջին դունդի հրամանատարութեան, որուն կը պատկանէի, եւ կամ Մակեդոն Միրզէ-խանեանին, որոնց արտօնութիւնն առնելով կրնամ որոշում տալ :

— Ես այս երեկոյ հաղորդակցութեան մէջ կը մտնեմ անոնց հետ, դուք ալ կեղբոնէն հեռախօսային ղեկոյց մը կու տաք եւ կ'ենթարկուիք եղած կարգադրութեան :

Առաւօտ կանուխ զօրավարը կանչեց զիս եւ հրահանգեց որ ազատ եմ մեկնելու, որեւէ ատեն, քանի որ զիս կ'ուզեն տեսնել ոչ միայն իմ զօրամասս, այլ նաեւ զնդապետ Մորէլ եւ բժիշկ Զաւրիւսը :

Իմ ռաբախութիւնս մեծ եղաւ երբ տեսայ Պր. Լեոն Առաքելեանը, քաղաքներու միութեան ղործատարը. կը հիանայի անոր հայրենասիրութեան վրայ՝ որ ամէն տեղ կը բաժնէր զինուորներուն չարչարանքները, կ'ուզէր օգտակար ըլլալ իր սղդին, թէեւ չէր հաւատար պատերազմի սպանութիւններուն : Եթէ մարդը մարդ պիտի սպաննէ, այն ատեն օրինաւոր է որ Հայը Թուրք սպաննէ ինքնապաշտպանութեան արդար իրաւունքին համար : Թուրքը մարախ կը համարէր, այս մարդասէր, կրթուած, ազնուական Թիֆլիսցի հայ քահանայի դաւակը, որ իր զիտցած ու հասկցած ձեւով եկած էր ծառայելու իր ժողովուրդին եւ պաշտպանելու անոր արդար իրաւունքները :

Չեմ գիտեր թէ Առաքելեանը այսօր կ'ապրի՞ թէ ոչ, բայց զինքը կը ճանչնայի ոչ թէ իբր բարեկամ մը, այլ կը յարգէի իբրեւ կատարեալ մարդ, անկախ այն բանէն որ ամէն առթիւ համաձայն չէի իր կարծիքներուն, առարկելով թէ այնքան ատեն որ աշխարհիս մէջ չարիքը կայ, պէտք է մարդը քաջութիւն ունենայ իժը խեղդելու, ոճրապարծն իր սաղմին մէջ մեռցնելու, ոչ թէ միայն բաղձանքով, այլ անմիջական գործով : Մարդս ինքը պէտք է կողմ որոշէ բարիին եւ չարին մէջ :

Սարիլամիչէն Գարսեօրկան եկած էր Խորէն Օհանեան, երբ լսած էր մեր ազատելուն լուրը, ինչպէս ուրիշ շատ մը բարեկամներ : Գիչեր ատեն ճամբայ ելանք Գարսեօրկանէն, ամէն կերպ ապահով եւ ազատ, բայց հազիւ տասը մըն հեռացած էինք, երբ նկատեցինք որ տասէն աւելի ձիւ կառքեր կու գային Սարիլամիչէն դէպի Թրքահան սահմանը. երբ ազդարարեցինք որ կանգ առնեն, սկսան մեր վերայ կրակել եւ արաւութեամբ քշել բեռնատար կառքերը բարձունքէն դէպի վար եւ ճամբայէն դուրս ելան. մենք հազիւ կրցանք բռնել կառք մը մէկ ձիով եւ մարդ մը որ յունարէն կը խօսէր : Այս մարդը խոստովանեցաւ որ ալիւր կը փախցնէր Թուրքերուն համար, որոնք շատ պէտք ունէին : Մերժեց մեր հարցումներուն պատասխանել. մենք միութեան մէջ կորսնցուցինք միւսները, բայց այս մէկը տարինք մեզի հետ, միտք ունենալով զինք յանձնել Սարիլամիչի հրամանա-

տարութեան. բայց մարդը վախճալով թէ իր թուրքը ըլլալը պիտի հասկցուի, փորձեց փախչիլ ու չյաջողեցաւ եւ ինկաւ ոչ շատ հեռու: Մենք այս կառքը, ձին եւ ալիւրը տուինք Կարինէն նահանջող զայրթախաններուն՝ որոնք քանի մը օրուան համար օգտուեցան:

Յաջորդ առաւօտ կանուխ խումբ մը մարդոց հանդիպեցանք. ղինուորական տարազով յոյն մը բռնեցինք եւ հարցաքննեցինք, թէ եւ մենք իրաւունք չունէինք այս մարդիկը հետապնդելու, քանի որ կ'ըսէին թէ կը ներկայացնէին յոյն ուժերը՝ որոնք կը դորածկեցէին Հայերուն: Շատ չանցած, հասանք այն պատմական անտառախիտ քաղաքը՝ Սարիլամիշ, ուր պատերազմի սկզբնական շրջանին էնվեր կորսնցուց իր բանակը եւ հայու մը միջոցով ազատեց իր կեանքը, այն որ յետագային Թալեաթի հետ կազմակերպեց ամբողջ Թրքահայութեան ջարդը: Հոս լսեցինք Սերաստացի Նշանին մահուան լուրը, Սարիլամիշի մէջ թուրքէ մը դարնուած. Նշան Մուրատին համհարդն էր եւ աջ բազուկը:

Այդ օրերուն Աւետիս Ահարոնեան եկած էր բանակին խօսելու. ինծի ցաւ պատճառեց որ ներկայ չէի: Երեկոյեան ներկայացայ դընդապետ Մորէլին, Աղամալեանին, Ջաւրիելին եւ Մակեդոն Միրզէ-խանեանին, ուր մնացի մինչեւ ժամը 12 բոլոր հարցումներուն պատասխանելով Կարինի վերջին ժամերու մասին, ինչպէս նաեւ ճանապարհին մեր ունեցած կռիւներուն մասին: Այս հարցումները Մորէլը կ'ընէր. կը պատասխանէի իրեն եւ երբեմն Մակեդոն կը շտկէր իմ տկար Փրանսերէնս եւ տուած անխոհեմ պատասխաններս, մինչ Ջաւրիել քթին տակէն կ'ըսէր.

— Տղայ, էս բաները մի' ասի:

Անակնկալօրէն Մորէլ ինծի հարցուց.

— Պատրա՞տ ես նորէն Կարին վերադառնալու:

— Ես ղինուոր կ'մ, մեծաւորներս ո'ւր որ կը հրամայեն՝ պատրաստ կ'եմ թալու, պատասխանեցի ես անվարան:

Այս մտայլ եւ համակրելի մարդուն շրթներուն վրայ ժպիտ մը խաղաց, եւ դառնալով Մակեդոնին, դուրեց անոր ղինուորներուն քաջասրտութիւնը, ինծի ակնարկելով: Մակեդոն դարձաւ ինծի եւ ըսաւ թէ չորս հողի անուաներ տամ, որոնք բացառիկ քաջութեամբ փրկեցին աւելի քան յիսուն ղինակիցներու կեանքը: Տուի երեք նահատակներուն անունները. ուղեց անոնց ընտանիքներուն անունները, ըսելով թէ բանակը պիտի հողայ այդ ընտանիքները. ասկէ դուրս ուղեց նաեւ չորս արժանաւոր ղինուորներու անուններ՝ պատերազմական խաչ տալու համար: Իսկ դուն ուրիշ կարգի վարձատրութիւն պիտի ստանաս: Մակեդոնին դառնալով ըսի՝ թէ ես կը հաւատամ

որ տղաքը պիտի չընդունին որքան ատեն որ կը նահանջենք: Գըն-
դապետ Մորէլ, դառնալով Զաւրիեւին, ռուսերէն քանի մը խօսքեր
փոխանակեց եւ երեքն ալ շնորհաւորեցին, իրենց ուրախութիւնը
յայտնցին մեր խումբին ազատման համար. Մակեդոն մանաւանդ ցոյց
տուաւ հարազատի վերաբերմունք եւ յայտնեց թէ մեր դունդը պիտի
մեկնի Սելիմֆէօյ, Մալահաններու զիւրը: Մեր տղաքն ազատ են ե-
րեք օր Սարիղամիշի մէջ մնալու, եթէ ազգականներ ունին՝ տեսնելու
եւ իրենց դործերը կարգադրելու: Ապա Աղամալեան աւելցուց թէ
Քաղաքներու Միութեան քով պիտի գտնեն երեք օրուան համար ա-
մէն հոգատարութիւն: Զաւրիեւը եւ զնա. Մորէլը վերջին անգամն
էր որ կը տեսնէինք. բարի զիշեր ըսելով հեռացան: Զաւրիեւ սուրբի
նման մարդու մը տպաւորութիւնը կը ձգէր: Յիշեցի որ այս մարդը
Տարօնի մէջ ժողովուրդին բժշկական եւ ուսումնական հոգերով ըզ-
բաղած էր, այժմ ալ եկած էր նոյն առաքելութիւնը կատարելու, ան
քրիստոսատիպ մէկն էր, նոյն օգնութիւնը պիտի ընէր ունէ ազգի
համար:

Այստեղ, Սարիղամիշի շրջապատին մէջ շատ մարդիկ հաւաք-
ուած էին, զորս կը ճանչնայի. անհուն ուրախութիւն կը յայտնէին
որ փրկուած ենք այդ դժոխքէն: Յերեկները կը հաւաքուէինք սըր-
ճարան մը՝ ուր ամէն տեսակ մարդ կը յաճախէր: Մեր հոն հասնե-
լուն երկրորդ օրը, նկատեցի որ մեզմէ ոչ շատ հեռու, Կարինի շըր-
ջանէն խումբ մը տղաք թերթ մը կարդալով ուրախ արտայայտու-
թիւններ կ'ընեն. ես զացի թերթը խնդրելու իրենցմէ, «Հորիզոն»
լրագիրն էր, ուր գրուած էր մեր նահանջին մասին, իմ եւ խումբ-
ին կատարած դործերու մասին: Ծնորհակալութիւն յայտնելով՝
թերթը վերադարձուցի իրենց: Այդ խումբի տղաքը, սակայն, հաս-
կըցան որ մենք կը պատկանէինք թերթին մէջ նկարագրուած խումբ-
ին: Սկսան մեզի մեծ պատիւներ ընել, թէյ հրամցնել, մեր կենացը
խմել, կարծես դարձանք օրուան հերոսներ: Իրենց վրէժն ալ լու-
ծողներու գովասանքներ սկսան շռայլել: Այնտեղ դասնք մօրեղբայրս՝
Պօղոս Ուլուհոճեանը, Պօղոս Գալուստեանը, որ սնդեց թէ ինքը այլ-
եւս անորոշ դաղթականութեան մէջ չի մնար, այլ մեզի կ'ընկերանայ:
Մեզի միացաւ նաեւ Յովհաննէս Ասատուրեանը, մեր լեռներու ընկեր
Մելքոն Ասատուրեանի եղբայրը:

Մեր խումբէն հեռացաւ Թաղէոս Սահակեանը (այժմ կ'ապրի
Մեքսիքոյի մէջ) եւ զնաց միացաւ դաղթական հայրենակիցներու:
Մօրեղբօրս թելադրեցի որ երթայ Քաղաքներու Միութեան հետ Ա-
զեքսանդրապոլ, մինչեւ որ ատեն մը յետոյ, երբ իրերու դրութիւնը
կը պարզուի, ես զիրենք կը գտնեմ: Պէտք է հոս աւելցնեմ որ երբ
Սարիղամիշ հասանք եւ ձիուն կռնակէն թամբը եւ ասրայը վար ա-

ուի, վեց փամփուռյուններ վար ինկան եւ նոր նկատեցի որ այդ խեղճ ձիս ալ ինծի նման վիրաւորուած էր, սակայն դիմացած էր իր վէրքին եւ անտրտունջ զիս բերած էր այդքան տարածութիւններուն վերայէն. այժմ պէտք էի զինք յանձնել բժշկական խնամքի. ես առի թաղէոսի ձին, որուն այլեւս պէտք չունէր:

Մենք ճամբայ ինկանք Մակեդոն Միրզէխանեանի հետ դէպի Սելիմդէօյ. շատ չանցած հոն հասանք, տեղաւորուեցանք ճամբուն եղերքի ձախ կողմի տուներէն մէկուն մէջ, որ արդէն պարպուած էր: Այս բոլս դաղթական Մալականները, որոնք տեղաւորուած էին լաւագոյն հողերուն վրայ, արհամարհանքով կը նայէին Հայութեան վրայ, բացասական վերաբերում ունէին դէպի հայկական ուժերը: Ասոնցմէ ոմանք արդէն ներսերը դաղթած էին, ուրիշներ ալ մեկնումի պատրաստութեան մէջ էին. ո՛չ երկիրն իրենց հարազատ կը զգային, ոչ ալ պարտականութիւն կը սեպէին տեղական կաղմակերպութեան օգնել. մեզի դրամով իսկ խոտ ու դարի չէին ուզեր ծախել, բայց ծախեցին ձի մը՝ որ տուինք Յովհաննէս Ասատուրեանին: Մեր փափկանկատ ըլլալու փորձը այս մարդոց հետ, արհամարհանքի կը բախէր. ստեղծուած էր դժուար դրացնութիւն մը: Կու դային դաղթականներ Բասենի կողմէն, որոնց ամէն դերուութիւն կը ջանայինք տալ: Ընտանիք մը եկաւ, մեծ հայրը, տղան, թոռը եւ ընտանիքի միւս անդամները, երկու եղան սայլերու վրայ բեռցուած դոյքեր. իր թոռը ունեցաւ մանչ դաւակ մը՝ որ կնքեցի քահանայի բացակայութեան պատճառով, անունը դրինք Մակեդոն. կնքահայր եղայ նուիրելով քանի մը ռուպլի անոր սպաղայ կրթութեան համար, սպա ճառ խօսեցայ, թէ ձեր յանցանքը չէ որ կը նահանջէք տան երեք անդամներով; բայց յոյս ունինք որ այս փոքրիկ Մակեդոնը, մեր զնգապետին պէս պիտի ծառայէ հայ ժողովուրդին՝ իր ազատ հայրենիքին մէջ. «Ձախորդ օրերը չեն մնար, ձմրան նման կու դան ու կ'երթան»:

Ծերուկը շնորհակալ եղաւ մեզի, օրհնեց եւ իր կարգին բաղձանքներ յայտնեց հայ բանակի յաղթանակին համար:

Ատեն մը կարծես կուրսները կանգ առած էին եւ չէի իսկ դիտեր թէ Մուրատը ուր կը գտնուի. անոր խումբին մէջ կային իմ ընկերներս՝ Քլէի Խուփս զիւղացիներ, Յովհաննէս Ոսկերիչեան, Կարապետ եւ Միհրան իրենց ընկերներով: Շատ չանցած, մեզ փոխադրեցին Պեկիւհսմետ. մենք հոս երբեմն պտոյտի կ'ելլէինք նախ շրջապատին ծանօթանալու եւ երբեմն ալ որսի: Դիմացը փոքրիկ մատուռ մը կար լեբան վրայ. պատերուն վրայ կը փորձեմ կարդալ ամէն տեսակ դրութիւններ, բայց թուական չկայ դիտնալու համար թէ ե՞րբ այս մատուռը դատարկուած է. չկրցայ գտնել որեւէ թուա-

կան, անցորդներ դրած են հայերէն, ռուսերէն կամ թուրքերէն տուններ :

Օր մը որսէն վերադարձիս, պատահական կերպով հանդիպեցայ Խարբերդի Քէսլիկ դիւղէն՝ Մշիկեան Պապին, Յովհաննէս Մշիկեանի մեծ եղբոր զաւակը : Այդ մեծ ընտանիքին այս մէկ տղան իր զօրանոցէն դուրս ելած եւ ճամբան կորսնցուցած էր : Հեռուն տեսայ ազանի մը, թռչելով կու դար, զարկի եւ վար առի ըսելով . «Այս երեկոյ մեր կերակուրը պատրաստ է» : Երկար խօսեցայ իրեն հետ, հօրը մասին, իր տանը մասին, այժմ մեր վրայ ինկած պարտականութեան մասին : Տեսայ որ աչքերը կը լայնանան, յուզմունքի նշաններ ցոյց կու տար . ըսի եթէ ուզես մեղի հետ կեցիր, ես կը հեռախօսեմ քու մեծաւորիդ, վստահ եմ թէ չի մերժեր : Ընկերացաւ մեր տղոց . երգեցին, ողեւորեցին զիրար, խոստացան յաճախ տեսնուիլ : Յաջորդօրը զինք տարին եւ յանձնեցին իր զօրամասին, եւ չեմ դիտեր թէ ինչ եղաւ այս անոյշ տղուն ճակատադիրը, որ մինակն ազատուած էր եւ ինկած այս վայրերը :

Օր մը զնդապետ Մակեդոն յանձնարարեց որ կէսօրէ ետք իրեն հանդիպիմ, խումբի մասին խօսելիք ունէր : Երբ ներկայացայ, հարցուց ինձի թէ ինչո՞ւ տակաւին խաչով շքանշան տոնողներուն ցանկը չեմ ստացած . ըսի թէ տղաքը ուրախ էին որ արժանացած են ձեր ուշադրութեան, բայց քանի մը պատճառներով կը մերժեն : Նախ՝ անոնք որ շքանշան չեն առած, 17 հոգի, հաւասարապէս կատարած են իրենց պարտականութիւնները, եւ մէկուն տալ ու միւսին չտալ՝ դժգոհութիւն առաջ կը բերէ . երկրորդ՝ կը ստանան այն ատեն երբ հայկական բանակը մեծ յաղթանակ մը չահի . երրորդ՝ մինչեւ հիմա կառավարութենէն ռոճիկ չեն ստացած եւ ոչ ալ կ'ուզեն, կը փափաքին այդ նուիրումին հաւատարիմ մնալ : Երբ Մակեդոն պընդեց թէ պէտք է ըսեմ, պատասխանեցի թէ երեք նահատակներէն զատ, առաջին Առաքել Հեպոյեան, Գրիգոր Շուշանեան, Խաչիկ Հերոյեան, Հայկ Սըվաճեան եւ Թադէոս Սահակեան : Շատ բարի, ըսաւ, ես կը կարգադրեմ : Իմ կարգիս ըսի իրեն թէ ես ալ կը փափաքիմ բան մը խնդրել . Ամերիկայէն քոյս մուրհակ (չէք) մը ունիմ եղբորմէս, կ'ուզեմ Կարս երթալ, ի հարկին թիֆլիս եւ այս մուրհակը յանձնել ամերիկեան դեսպանատան, որ փոխանցեն եղբորս : Մուրհակը ցոյց տուի, համաձայնեցաւ եւ ըսաւ թէ կ'ընամ մեկնիլ երբ որ փափաքիմ :

Երկու օր ետք ճամբայ ինկայ դէպի Կարս : Երբ Կարս հասայ ձիս տարի ու կապեցի ծերունիի մը տունը, յետոյ լսեցի թէ Ակնցի էր եւ երկար տարիներ Կարս ապրած էր : Զիս իրեն յանձնեցի ըսելով թէ երկու օրէն իմ բանակատեղիս պիտի վերադառնամ : Կարսի մէջ

վերջապէս դտայ ամերիկեան միսիոնի տունը՝ որ դոցած եւ դացած էր Թիֆլիս: Յողնած, վշտացած եւ ուժասպառ՝ Ակնցի ծերուկին քով վերադարձայ: Ծերունին դիւ դիմաւորեց եւ ըսաւ. «Շատ տը-
խուր լուր մը ունիմ. զինուորներն եկան եւ ձիդ տարին: Նազար-
բեկեանի ձիաւորներն էին. ես ընդդիմացայ, բայց սպառնացին թէ
արտօնուած են բոլոր քաղաքացիներու ձիերը դրաւել, իրաւունք չու-
նիս ընդդիմանալու: Բայց ես դադտնի հետեւեցայ իրենց ու գիտեմ
թէ ուր տարին»: Ես եւ ծերունին քալեցինք միասին մինչեւ որ կանդ
առինք զօրանոցի մը առջեւ: Ծերունին հետս ներս տարի եւ ուղեցի
ամէնէն բարձր պաշտօնեան տեսնել. զիս առաջնորդեցին հարիւրա-
պետի մը քով, որուն պատմեցի այս խայտառակութիւնը: Ձիս ետ
ուղեցի, աւելցնելով թէ այս գիշեր իսկ պիտի մեկնիմ իմ զինուոր-
ներուս հասնելու համար Պեկլիահամետ: Տուի անունները գնդապետ
Մորէլի, զնդ. Քէլչիզօլլուի, զօր. Թորդումի, ըսելով թէ մէկ կողմէն
խաչով կ'ուզեն պարզեւատրել, միւս կողմէն ձի կը դողնան, փոխա-
նակ ճակատ դալու եւ կռուելու: Ծերուկը նոյնպէս պատմեց հարիւ-
րապետին եղելութիւնը. ան մեզ տարաւ ախոռը, ուր հազարաւոր
ձիեր կային: Շատ չանցած նկատեցի ձի մը որ իմինիս կը նմանէր,
սակայն պոչը կտրած էին, բաշը խուզած. բայց այլ նշաններէ հաս-
կըցայ որ իրենց արարքը պարտկելու համար այդ միջոցին դիմած
էին: Թամբը տուին, երբ կ'ուղէի ձիուն վրայ դնել, նշմարեցի հե-
ռուն Սերաստացի Մուրատը եւ աւելի քան 200ի չափ ծանօթ տղաք:
Ծերուկէն խնդրեցի որ քաշէ ձին, ես վազեցի դէպի Մուրատը, բա-
րեւի կեցայ եւ ինքը դարձաւ. «Արի հստեղ, բալաս, ի՞նչ կ'անես հոս»:
Երկու խօսքով բացատրեցի: «Է՛հ, եկուր հոս կեցիր քանի մը վայր-
կեանով, կը հասնիս թէ ես ինչու հոս եմ»: Իսկապէս քանի մը
վայրկեան յետոյ, մի քանի զինուորականներ եկան, որոնց մէջ զօր.
Փիրումեան. խօսքեր փոխանակուեցան, զօր. Փիրումեան ըսաւ թէ
հպարտ է որ Մուրատի տղաքը պիտի միանան իր ուժերուն եւ Կարսի
պաշտպանութեան մաս պիտի կազմեն: Իմ պաշտելի հերոս Մուրատը,
կարծես թէ իմ ճանչցած աւելծը չէր եւ տխուր շեշտով մը աւելցուց.
«Ես ուրախ եմ որ իմ զինուորներս, եթէ մէկու մը պիտի յանձնէի,
ձեզի նման արժանաւոր զօրավարի մը կը յանձնեմ: Այլ իմ սիրելի
բալաներ, լաւ զինուորներ էք, այդպէս էլ մնացէք, որ ինչպէս ես
հպարտ եղայ ձեզմով, թող զօր. Փիրումեանն ալ հպարտ ըլլայ ձեզ-
մով»:

Մտիս մէջ խորունկ վիշտ մը կար որ Մուրատի պէս առիւծ մը,
այս վիճակին կը հասցնէին. միւս կողմէն Կարսի պատերուն յայտա-
բարութիւններ փակցուած էին թէ Անդրանիկը կը կազմակերպէ իր
առանձին հարուածող զօրամասը եւ կը հրահանդէ արեւմտահայ զին-

ոււորներուն՝ որ իրեն դիմեն այս դործն օր առաջ դլուխ հանելու համար, եւ այն զրոյցները՝ թէ Տաճիկները պահանջած են կողկասեան Սէյմէն թէ թրքահայ պատասխանատու ուժերը պէտք է յանձնել Թուրքերուն՝ իբրեւ ջարդարարներ, մտածել կու տար եւ շիտթու-թիւն առաջ կը բերէր ամէն հայու մտքին մէջ:

ՔԱՅՔԱՅՈՒՄ

Երզնկայէն մինչեւ Կարս, Մուրատ միշտ առաջին դիրքերուն վըրայ եղած էր եւ չէր խնայած իր կեանքին, եւ հիմա աչքիս առջեւ կը զրկուէր «Բեգասի աղնուսկան ասպետը» թշնամին հարուածելու իր պատիւէն:

Գլխահակ եւ մինակ կը վերադառնամ Պեկլիահամա. զիս տանջող ցաւի մասին չեմ խօսիր զինուորներուն, ոչ իսկ Մակեդոն Միր-ղէխանեանին, որուն վրայ մեծ վատահուժիւն ունիմ:

Կռիւները սկսած էին Պեկլիահամաի շուրջ, շաբաթներով անձրեւ կը տեղար եւ դիրքերը ցեխի մէջ էին, ո՛չ ձիերը, ո՛չ կառքերը կըրնային շարժիլ. միշտ օրական քիչ մը կը նահանջէինք: Չեմ ըսեր թէ կը սլարտուինք, այլ միշտ կը նահանջենք: Օր մը մեզի հրահանգեցին թէ հակայարձակում պիտի սկսի. մեր խումբին հրաման տըրուած է բանակին ետեւը մնալու եւ դնդակահարելու ռեւէ մէկը որ դասալիք կ'ըլլայ, կը վարանի կամ կը դանդաղի:

Մենք այս ցեխերուն մէջ հրացանը սլատրաստ բռնած կը հետեւինք բանակին, մղելու ամէնքը՝ որ իրենց պարտքը կատարեն: Հեռուն կը նշմարեմ որ մէկը ընդհանուր կարգէն ետ կը մնայ, ցեխին մէջ երկարած. բաւական մօտ կ'երթամ աղդարարելու թէ մեզի հրաման տրուած է հրացանազարկ ընել վախկոտներն ու մնացորդները. եթէ անմիջապէս իր զօրամասին չմիանայ՝ պիտի ստիպուինք հրացանի բռնել: Տղան աղաչեց որ կրակենք եւ ազատենք զինքն այդ դրութենէն: Երբ հարցուցի իր ո՛վ ըլլալը, իր անունը տուաւ եւ ըսաւ. «Ես Սեբաստացի եմ, առաջին կամաւորը Եւրոպայէն, եւ ամէն տեղ կատարած եմ իմ պարտքս» Կը ճանչնա՞ս Վահան Չերաղը. «Վահան Չերաղն իմ հարազատ ընկերս էր. անոր հետն էր որ ես Եւրոպայէն կամաւոր եկայ եւ անիկա կրնայ վկայել որ ես վախկոտ մը չեմ»:

Ժամանակ չունէինք, աչքերս լեցուեցան, շատ պատմութիւններ լսած էի Վահանէն այս տղուն մասին եւ հաւատացի իրեն. հրահանգեցի զինուորներուս որ առաջ անցնին եւ զինուորն ինձի թողուն: «Կը հաւատամ քեզի, ըսի, կը ճանչնամ քեզ Վահանին պատմածնե-

րէն, կը ցաւիմ որ քեզի չեմ կրնար օգնել. եթէ ետ իյնաս եւ հասնիս Պեկլիահմետ եւ անունս տաս, քեզի բժշկական օգնութիւն կ'ընեն եւ կամ հիւանդանոց կը փոխադրեն»։ Նա ձեռքը շարժեց իբր շնորհա-
կալուծեան նշան եւ ես ձիս ուղղեցի դէպի ճակատ :

Այդ օրը մեր բանակը քշեց թշնամին, հալածեց, թէեւ բաւական
ալ կորուստ ունեցաւ : Մենք ատեն մը եւս Պեկլիահմետ մնացինք :
Երկու օր ետքը դարձեալ խառնակութիւն մը կար, թշնամին մեզ կը
նեղէր . ես պատահաբար հանդիպեցայ ճամբուն վրայ ձիու կառքի մը
վրայ նստած Երուանդ Հայրապետեանին, Կարինի որբանոցներուն
ուսուցիչ եւ տնօրէն, որուն մասին իմ ընկերներս դանդաղ եւ մեղա-
դրանքներ կ'ընէին . ըսի մտքովս՝ այս ալ տեսանք . չեմ գիտեր թէ
ինչո՞ւ համար այս կողմերը եկած էր :

Այդ երեկոյ հրահանգ ստացայ որ մեր խումբէն երկու հողի
տրամադրեմ, կապ հաստատելու համար մեր բանակին անջատուած
մասերուն մէջ, այլապէս 250 հողի կա'մ գերի պիտի իյնային կա'մ
առանց օգնական ուժերու պիտի կոտորուէին : Իրենց յայտնեցի որ
սողոյմէն մին ես կ'ըլլամ, եւ իրենց կը ձուլեմ երկրորդին որոշումը,
այդ հրամանը կատարելու համար :

Գժուար էր ինծի գիտակցօրէն ստոյգ մահուան դրկել երկու ըն-
կերներ . այն երեք սողոց կսկիծը տակաւին սրտիս մէջն էր : Ես բա-
ցատրեցի կացութիւնը, վտանգը եւ իմ յանձնառութիւնս մեկնողնե-
րէն մէկն ըլլալու . ուրեմն կամաւոր կ'ուղեմ այս հրամանը դորձա-
դրելու համար : Քանի մը բոպէ յետոյ Պօղոս Գալուստեանն առա-
ջարկեց թէ ինքը մէկը կ'ըլլայ, իրեն հետեւեցաւ Յովհաննէս Ասա-
տուրեանը, թէ իրենք պատրաստ են այս պարտականութիւնն ըս-
տանձնելու : Այս երկուքն իմ խումբիս ամէնէն անփորձներն էին :
Իրենց բացատրեցի դործին վտանգաւոր հանդամանքը, սակայն սը-
ղաքը, ի պատիւ իրենց, անդրդուելի մնացին եւ շատ պատուաւոր
կերպով կատարեցին այս վտանգալից եւ կարեւոր առաքելութիւնը :
Պօղոս Գալուստեան կ'ապրի Ուոթըրթաուն եւ ունի երկու զաւակ-
ներ, եւ կը շարունակէ կատարել իր վրան դրուած ազգային պար-
տականութիւնները . իր զաւակը՝ Արամ դործօն մէկ անգամն է հայ
գատի յանձնախումբին եւ սիրուած բանախօս է : Իսկ Յովհաննէս
Ասատուրեան կ'ապրի Լոս Անճելոս :

Ուրախ ենք սղոց ողջ առողջ մերազարձին համար : Հոս քանի մը
խօսք ըսեմ Սարգիս Մարտիրոսեանի մասին . ամէնէն տարեցը մեր
մէջ, իր ամբողջ կեանքին մէջ շարունակ, մէկ տառապանքէն միւսը
անցած է . թրքական զինուորութիւն, աքսորի տառապանքներ, իր ըն-
տանիքին կորուստը . հակառակ իր տարիքին՝ ինդրած էր մեր խումբ-
բին մասնակցիլ, դոնէ հարազատներուս մօտ կ'ըլլամ, կ'ըսէր : Բա-

ցառութիւն մ'ընելով զինքը մեզի հետ առինք: Երբ կ'երթայի Միր-
զէխանեանին հանդիպելու, տեսայ Սարգիս ամուսն, ուսին վրայ ա-
ռած խուրճին մը հողով լեցուն՝ իրբեւ պատիփ, որովհետեւ չէր բա-
րեւած երիտասարդ սպայ մը: Սարգիս ամուսն դանդաղ չըրաւ, բայց
սաքերը լեցուած էին եւ տխուր էր:

— Ա՞յս էր վարձատրութիւնը հայրենիքիս ծառայութեան. ես
խաչ չփնտռեցի, բայց այս ալ չէի սպասեր:

Ներս մտայ ջղայնացած, սկսայ բարձրաձայն կանչել այն հարիւ-
րապետը՝ որ պատժած էր Սարգիս ամուսն: Մակեդոն Միրզէխանեան
դուրս եկաւ իր սենեակէն՝ հարցնելու համար թէ բանն ինչո՞ւմն է:
Բացատրեցի ու անմիջապէս կանչեց սպան. բարկացաւ եւ հասկը-
ցուց թէ մենք պէտք ունինք Սարգիս ամուսններուն. երբ իրական վը-
տանդ մը կը ներկայանայ, մենք անոնցմէ կանոնաւոր զինուորի պա-
հանջներ չունինք. դնա՛ եւ ազատ արձակէ զինք ու քովս զրկէ: Սար-
գիս ամուսն իրեն յատուկ ժպիտը երեսին՝ մօտեցաւ Մակեդոն Միր-
զէխանեանին, ուղեց ձեռքն համբուրել, բայց ան արդիւնեց, ներս տա-
րաւ, ըմպելի հրամցուց. երբ դուրս եկանք, Սարգիս ամուսն դարձաւ
ինծի ըսելով. «Այս մարդուն համար կ'արժէ մեռնիլ»: Յետոյ դառ-
նալով իր զինուոր ընկերներէն՝ Առաքելին, ըսաւ. «Ծօ՛, Առաքել,
երգ մը երգէ՛, իմ ճանիս համար, վա՛յ իմ ճանիս, ես կ'ողւգեմ խաղալ»: Նկատեցի որ շատ յուզուած էր եւ պիտի լար. «Ժի՛ր կեցիր, Սարգիս
ամուսն, դեռ տեսնելիք շատ ունինք», եւ միջադէպը փակուեցաւ:

Մեր աջ ու ձախ թեւերը նահանջած են. հրահանդ կը ստանամ 15
վայրկեանէն պատրաստ ըլլալ, լռնելու վերջապահ դիրքերը, մեր
զօրքն ալ պիտի նահանջէր:

Մակեդոն զիս կանչելով ըսաւ՝ թէ մնացած ուժերն ալ պիտի
նահանջեն: Կարսը թերեւս պաշարուի, մենք պէտք է Կարս երթանք
եւ բռնենք այն դիրքերը որ մեզի պիտի յանձնուին: Ռուսերէն հայ-
հոյանք մը կոխեց: Թերեւս թնդանօթներով աւելի կարողանան թուր-
քերը ետ մղել, քան թէ հրացաններով:

Մենք կամաց կամաց կը սկսինք դիրքերը լքել զօրքին հետեւելով
եւ անցնելու դէպի Կարս. այսպէս ալ կը մօտենանք Կարսին, կ'ան-
ցնինք քաղաքին կեդրոնը, խումբ խումբ մարդիկ կը բարձրանան
բերդէն վեր, երգելով «Իարձեալ փայլեց Կարսի դլխուն ազատու-
թեան դրօշակ». մեզի ոգևորութիւն եւ հաւատք ներշնչեց: Հոս կը
հանդիպինք բժիշկ Պաղտասարեանին, Երզնկայի կառավարիչ, քանի
մը խօսք կը փոխանակենք եւ կը բաժնուինք: Գրեթէ խուսափելով
քանի մը խումբերէ, որոնց հետ կռիւի պիտի բռնուէինք, որոնք ըսա
երեւոյթին կ'ողւգէին օգտուելի քաղաքի պաշարումի եւ անձնատու-
թեան տարտամ լուրէն. կը հասնինք Մասսարա, ուր կռիւն արդէն

սկսած էր. մենք կը պահանջենք մասնակցիլ, կը ստանանք անորոշ պատասխան մը՝ թէ պէտք է մեզի յանձնարարուած տեղը հասնինք, եւ Մակեդոնի առաջնորդութեամբ կը շարունակենք մեր ճամբան մինչեւ որ կը հասնինք Գըզըլջախը: Գետին եղերքը, ախոռի մը մէջ կը կապենք մեր ձիերը եւ կ'առանձնանանք մեզի յատկացուած սենեակները, երկու հողի պահակ դնելով ձիերուն մօտ: Ծաշը հաղիւ վերջացուցած եւ ինկած էինք քիչ մը մրափելու, ահա յանկարծ հրացանաձուլութիւն մը սկսաւ. մեր տղոց հետ վաղեցիներ եւ իջանք դէպի ախոռը, ուր մեր խուրճիները եւ փամփուշտները կային. դիրք դրաւեցինք եւ նկատեցինք որ փորձ մը կ'ընէին մեր ձիերը փախցնելու: Սկսանք կրակել այդ անպիտան տղոց վրայ, որոնք նոյնպէս նազարպեկովի ձիաւորներն էին, որ փոխանակ կարս երթալու եւ կռուելու, եկած էին իրենց զինակից հայերու ձիերը դողնալու: Մակեդոն կատուեցաւ երբ յայտնեցի այդ հրացանաձուլութեան շարժառիթը. այնպիսի դունսդեղ հայհոյանքներու շարք մը սկսաւ, որ զարմացայ թէ ուսկից կը դտնէր այդ տարօրինակ բացատրութիւնները, կեանքիս մէջ չէի լսած նման խօսքեր: Այդ մտաւորական փաստարան մարդը ուսկից սորված էր այդ դուհիկ արտայայտութիւնները: Միտքս ինկաւ պատմութիւն մը՝ որ մանկութենէս լսած էի, ուղեց որ պատմեմ իրեն:

Ըսի, մեծ հայրս՝ Յովսէփ, օր մը տունէն դուրս կու դայ, պարտեղ կ'իջնէ, կը լսէ որ դրացի տիկին մը կեցած հայհոյանքներ կը տեղացնէ պապիս հասցէին. ինք չի պատասխաներ, վրայ կը հասնի իր ընկերներէն մին եւ կը հարցնէ.

— Յովսէփ, ի՞նչ կ'ընես:

— Սա կնիկին աւելորդ խօսքերը մտիկ կ'ընեմ. իր թէ թոռս մեր ձին տարած է իր պարտեղին մէջ արածելու: Բայց ես հայհոյանք չեմ զիտեր, կը պատասխանէ պապս:

— Ես կ'ըսեմ՝ դուն կը կրկնես:

Այսպէս կը սկսի նորաստեղծ հայհոյանքներ, որմէ կ'ինը ամօթահար՝ կ'երթայ: Ասոր վրայ իր ընկերը կ'ըսէ.

— Ես մինչեւ նոր հունձքը 20 կոտ ցորենի պէտք պիտի ունենամ եւ կը վճարեմ երբ հունձքը քաղենք:

Երբ ժամանակն եկաւ ցորենը վերադարձնելու, նա ըսաւ.

— Քեզի հայհոյանք սորվեցուցի, չի՞ բաւեր...:

«Սիրելի դնդապեա, եթէ ես դրի առնէի այդ չլսուած հայհոյանքներդ ձիաւորներու հասցէին՝ դուն ինքդ պիտի չհաւատայիր»: Մակեդոն կուշտ մը ծիծաղեցաւ. մենք մոռցանք այդ վայրկեանը, ինք ելաւ ժողովուրդը հանդարտեցնելու, մտքերը խաղաղելու եւ փարստելու այն շփոթութիւնը որ սարսափի մատնած էր խեղճերը:

Յաջորդ օրը մենք Ալեքսանդրապոլ հասանք. տեղաւորուած զօրանոցներու մէջ, սահայն ազատ էինք երթալու եւ հանդիպելու դադթականներու, բարեկամներու, որոնք հոն հաւաքուած էին զանազան շրջաններէ: Քանի մը օր յետոյ Մակեդոն մեզի յայտնեց թէ մեր յաջորդ կայանը պիտի ըլլայ Անի աւանը եւ պէտք է պատրաստ ըլլանք մեկնելու հինգ վեց օրէն: Ես ըսի որ քանի ժամանակ ունինք, հրաման տայ ինծի որ երթամ Թիֆլիս եւ վերադառնամ. համաձայնեցաւ: Տղոց յայտնեցի թէ Անի աւանը պիտի փոխադրուինք եւ ես Թիֆլիս պիտի մեկնիմ մի քանի օրուայ համար: Ըսի նաեւ թէ կասկածներ ունիմ որ թրքահայ այն զինուորները որոնք կրնան մեզադրուիլ իբր ջարդարարներ, ինչպէս կը խօսուի Մուրատի եւ Սեպուհի մասին, կրնան նաեւ նկատի ունենալ մեզ:

Այդ օր կանուխ դացեր էի Ալեքսանդրապոլի քաղաքապետարանը. ժամը երկուքի ատենները Անդրանիկի առանձին հարուածող զուռնը պիտի կատարէր տողանցքը Նաղարբեկեանի ներկայութեան եւ պիտի մեկնէր անորոշ ուղղութեամբ. հազար խօսքեր կը շրջէին այս զօրամասին եւ Անդրանիկի մասին՝ թէ ինքնիրեն կազմեց այս զուռնը, թէ մաս պիտի չկազմէ հայ բանակին եւայլն:

Անդրանիկի հետն էին լաւագոյն սպաները որ կը ճանչնայի, այրուծի, թնդանօթ եւ ուրբաձիւներ, բեռցուած ձիեր եւ ջորիներ, կարդապահ, լաւ հագուած, ընտրուած բանակ մը: Ես կը խորհէի թէ ասոնք կարսի պաշտպանութեան գործին մէջ մեծ օգուտներ կը բերեն: Մինչդեռ հեռուն կ'երթար, ո՞ր կ'երթար Հայոց առիւծասիրտ հերոսը. կեցած էր Հայոց սպարապետն իր զօրականներով եւ հայ ժողովուրդին հերոսը բարեւոյ կ'անցնէր իր սպարապետին առջեւէն: Ես որեւէ ատեն այդքան մօտ չէի եղած Նաղարբեկեանին, որ իր պատկառելի դէմքով, հասակով, դէմքով, վայելչութեամբ կոչուած էր առաջնորդելու հայկական ուժերը այս օրհասական օրերուն. եւ մտովի կը գուրգուրայի այս մարդուն անձին վրայ, մեծ հաւատք ունենալով, հակառակ իր շուրջը հաւաքուած շատ մը զինուորներու, որոնց մասին հաւատքս կը բռնեցայ թէ: Նշմարեցի որ երիտասարդ տղայ մը կը վազէր Անդրանիկի գունդին ետեւէն. կ'երեւի մերժուած էր ընդունուիլ, սահայն երիտասարդը կ'երթար Անդրանիկին ետեւէն, անոր կողքին կուռելու. յիշեցի խոնարհած Մուրատը, որուն ձեռքէն կ'առնուէին իր վերջին ուժերը եւ ահա Անդրանիկը կ'առնէր այդքան ոյժ հայրենիքէն, տանելու ո՞ր սարերը եւ ալ չէի գիտեր. թէպէտ Անդրանիկի հանդէպ մեծ յարգանք ունէի: Աչքիս առջեւէն մէկիկ մէկիկ հեռացան տողանցքի կեցած զինուորները. ամէն ոք կորսուեցաւ մշուշի մէջ եւ վերջապէս Նաղարբեկեանն ալ քաշուեցաւ իր բնակարանը: Հոգիիս մէջ խռովք մը կար որ ներ-

կայ կ'ըլլամ պատմական այս վայրկեանին, որ դարեր երբեք չի կըրկնուիր: Այսօր այս տղերը գրած վայրկեանիս կ'ապրիմ այդ պահերը, խորախորհուրդ զգացումներով կը խոնարհիմ ամէն մէկ զինուորի յիշատակին առջեւ, ծունկի կու դամ եւ հպարտութեամբ կ'ուզեմ ազազակել. «Կեցցէ՛ Անդրանիկ, կեցցէ՛ Նազարբեկեան, անդուգական դաւակներ Հայ ազգին»:

Աղեքսանդրապոլ քառս էր. դասալիք զինուորներ, անուղղայ գաղթականներ, զանդատներ իրաւացի եւ անարդար, ռուսահայի եւ սահկահայի տարակարծութիւններ, տխուր կանչեր՝ երբ կ'ըսէին. «Ինչո՞ւ տղաս մեռաւ, գուրպը գաղթական չկա՞ր»: Եւ իրապէս տանջուած, անտէր, անպատասպար մարդիկ, եւ կարծես թէ անդեկ եւ անկազմակերպ, պատերազմի վտանգը բոլորին համար էր, բայց պատերազմը միայն զինուորներուն էր, ոչ թէ ժողովուրդին: Ժողովուրդը տէր չունէր, ամէն ոք պէտք էր իր մասին մտածէր: Անորոշութեան մէջ լարուած դրուժիւն մը կար եւ գայլի պէս հետքերուն հետեւող թուրքի մասին չէին խորհեր, կարծելով թէ թուրքը կու գայ եւ տեղ մը կանդ կ'առնէ:

Այս տխուր պայմաններու մէջ ձյեցի Աղեքսանդրապոլը՝ Թիֆլիս հանդիպելու եւ վերադառնալու համար Անի աւանը, մեր նոր բանակատեղին, ուր երկու երեք օր մնացի: Այդ քանի մը օրերուն մեր մեծաւորներն ալ ոչ մէկ հետաքրքրութիւն ցոյց տուին մեզի հանդէպ. վեց ամիս ծառայած էինք մեր ձիերով, մեր ծախսով, մեր միջոցներով: Եւ ահա հասած էինք տեղ մը որ մեզմով հետաքրքրուելու պէտք կար, սակայն լքուած էին այդ սքանչելի տղաքը. սիրտս ծանր, միտքս անորոշ, ես ալ չէի զիտեր թէ ինչո՞ւ կ'ուզէի Թիֆլիս երթալ. թերեւս պատճառներէն մին այն էր՝ որ լսած էի թէ Սեպուհ եւ Մուրատ հոն էին, եւ երբ հոն երթամ՝ ուղղութիւն մը կը ստանամ անոնցմէ եւ ըստ այնմ կը վարեմ մեր տղոց ընելիքը:

Երեք օր Թիֆլիս կը մնամ. երբ կը խորհիմ վերադառնալ, կայարանին մէջ կը յայտարարեն թէ գիծը կտրուած էր թաթարներու կողմէն. առ այժմ կարելի չէր վերադառնալ: Գացի նախ Մուրատին, ապա Ամատունիին, Թոթովենցին եւ Յ. Թումանեանին, եւ վերջապէս Դահնակցութեան Պիւրոյի դրասենեակը եւ նկատեցի որ ասոնցմէ ոչ մէկը կրնար վճռական պատասխան մը տալ: Հոն գտայ ընկերս՝ Բենիամին Ժամկոչեանը, կազդուրուած, նոյն հայրենասէրը, շրջապատէն դժգոհ, վրացախօս հայ ընտանիքի մը քով ապաստանած, զիս տարաւ Հայոց եկեղեցին, ուր գտայ բաւական թիւով մարդիկ եւ ծանօթներ՝ որ փորձեր կ'ընէին անցնելու հիւսիսային Կովկաս, անկից գաղթելու համար Ամերիկա:



ԱՆԾԱՆՈԹ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԺԲ.

Ա.ՆԾԱՆՈՒ ԶԱՄԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԹԻՖԼԻՍ – ՊԱՔՈՒ

Թիֆլիսի մէջ դտայ Լեւոն Առաքելեանը, որ զիս տարաւ Աղամալեանին. զինքը դտայ վրդոված՝ իր անունին շուրջ ստեղծուած անախորժ խօսքերուն պատճառով, իբր թէ Թուրքերէն դրամ առած է եւայլն: Գրեցի հերքում մը թէ Աղամալեանը զինուորական չէր, այլ կ'ենթարկուէր վերէն եկած հրահանգներուն, եթէ դատողութեան պակաս ունեցաւ, կ'ակնկալէր որ Կարինը երկար պիտի դիմադրէր, հետեւաբար պահեստներու վերաբերմամբ խնայողութիւն պէտք է ընէր:

Քաղաքը լի էր հայ երիտասարդներով, կարծես թէ Թուրքը իրենց դրան առջեւ չէր: Կարսը առնուած էր, Համբարձում Առաքելեան սպաննուած, սպաննուած էր նաեւ Կարճիկեանը: Հայերու կեանքը փոթորիկի մէջ էր եւ զաղթականութիւնը շատ աւելի ծանր կացութեան մէջ:

Բենիամին ժամկոչեան խօսակցութեան մէջ էր, չեմ գիտեր որու հետ, որ կը կազմակերպէր հազար հոգիներու խումբ մը, երթալու համար Գանձակի օդնութեան, զայն թաթարներու ձեռքէն փրկելու համար: Ասիկա սրտիս մօտ էր. եթէ Հայաստան չենք կրնար երթալ՝ դոնէ Թուրքերուն կը զարնէինք: Չեմ գիտեր ինչո՞ւ այս ծրագիրն ալ չիրականացաւ: Ալիք մը սկսաւ եւ ժողովուրդը սկսաւ զաղթել դէպի հիւսիսային Կովկաս: Թուրք զօրքեր մտած էին Թիֆլիս. ես դացի կայարան՝ այս պարազան ստուգելու. տարօրինակ, բայց իրական էր: Թուրքերը, Վրացիներու համաձայնութեամբ, եկած էին Պաքու մեկնելու, օդնելու իրենց թաթար ցեղակիցներուն, կռուելու համար Հա-

յերու եւ Ռուսերու դէմ, եւ Գերմանացիներու մասնակցութեամբ՝ արերու Պաքուի նաւթահորերուն:

Թուրքերն սկսած էին աւելի յոխորտանալով վարուել Գերմանացիներուն հետ, իրենց թուրանական երազները իրագործելու համար. ոչ միայն Եւրոպացիներ, այլ մինչեւ անգամ հայ մարդիկ կը գրտնուէին հաւատալու այն կեղծիքին՝ թէ Թուրքերը Պաքուն գրաւելով, միայն նաւթը պիտի օգտագործեն եւ ոչ մէկ վնաս կրնար գալ Հայերուն: Ի՞նչ դարմանք, կայարանին մէջ գնացքէն վար իջնող տերվիչ մը նկատեցի, որ տեսած էի Փիլլենքի Ազդունիք գիւղը. այն ատեն իմ բոլոր կասկածներուս հակառակ՝ Քիւրտերն ալ կը նկատէին զինքը խեղճ տերվիչ մը. մինչդեռ հիմա ինծի համար պարզ էր որ այս «խեղճ տերվիչը» թուրք բանակին մէջ բացառիկ կարողութիւն ունեցող լրտես մըն էր, եւ երբ զիս տեսաւ՝ վազեց ու մտաւ շոգեկառքին մէջ: Ես ետեւէն վազեցի, փորձեցի դուրս կանչել, պոռալով թէ ըսելիք ունիմ. իմ բոլոր ճիղերս ապարդիւն անցան: Աճապարեցի գէպի Դաշնակցութեան «Պիւրոյի» գրասենեակը. խնդրեցի միջոցներ ձեռք առնել՝ այս լրտեսը գնացքէն դուրս քաշելու, քանի որ Վրացիներու հետ հասկացողութեան պիտի գային առանց քաղաքը մտնելու: Ինծի համար պարզ եղաւ որ այս մարդը բազմաթիւ լեզուներ գիտցող մէկն էր, որ կ'օգտագործէր քիւրտերու, տերվիչներու հանդէպ ունեցած կրօնական զգացումները. եկած էր լրտեսելու քիւրտերը, եւ սակայն կը մնար հայերու շրջապատին մէջ, անոնց խօսակցութիւնները լսելու համար. թերեւս ինքն էր պատճառը տաճիկներու նախաշարժակումին՝ քիւրտերու դէմ 1916ին: Նոյնիսկ Տերսիմի դէմ թրքական յարձակումներուն պատճառը մի գուցէ ինքն էր: Թէեւ ես իմացուցի Պիւրոյին, բայց ոչ մէկ բաւական լուր ստացայ. իբր թէ իրենք ալ տեղեակ չէին թէ թուրք զօրքեր կ'անցնէին Թիֆլիսէն: Այս պայմաններուն տակ պարզ էր որ ես չէի կրնար Թիֆլիս մնալ. բայց Հայերէն շատեր՝ որոնք փախած էին հիւսիսային Կովկաս՝ բռնուած էին Քաղպէքի առջեւ: Այդ լեռնականները Վրացիներու զիտակցութեամբ արգելք կ'ըլլային անոնց անցքին, կ'ուզէին կողոպտել, կաշառք առնել, գժուարացնել եւ յուսալքել. հետեւաբար Թիֆլիսէն զրկուած էին Վահան Փափաղեան եւ Յովհաննէս Ամատունին, կ'երևի ուղեւորով այն տպաւորութիւնը ձգել՝ թէ փախողները թրքահայեր են ոչ թէ ռուսահայեր:

Կը մտածենք Բենիամինի հետ մեր բռնելիք դիրքի մասին. սակայն Բենիամին այս պայմաններու տակ տեղէն շարժելու նպատակ չունէր. գիտէր գերմաներէն, կ'ապրէր Թիֆլիսիցի վրացախօս հայ ընտանիքի մը մօտ, ինքզինքն աւելի ապահով կը գլար: Ես որոշեցի մեկնել հիւսիսային Կովկաս, Վրաստանի լեռներով, առանց ժողո-

վուրդին կամ ամբոխին խառնուելու: Նախ քան այս որոշումս տալը, դացի Առաքելեանին մօտ, անդամ մ'ալ խորհուրդ առնելու համար. այս սիրելի Լեւոն Առաքելեանը ինծի թուղթ մը ստորագրել տուաւ, իրբեւ Քաղաքներու Միութեան պաշտօնեայ, հաւանական ծախսերու համար ինծի 500 տուաւ: Յետոյ դացի Մուրատի բնակարանը, աշխատելով ընկերակցիլ իրեն, եթէ մասնաւոր արգելք մը չկայ. հոն իմացայ որ Մուրատն ու Սեպուհ արդէն անցեր են հիւսիսային Կովկաս:

Ես վերադարձիս յայտնեցի Բենիամինին թէ ստիպուած եմ մեկնիլ, թէ Վրացիներուն չեմ վստահիր, կրնան մեզ բռնել եւ յանձնել թուրք բանակին: Այն ատեն Ահարոն Եսայեանն ալ կ'ուզէ երթալ, ըսաւ ինծի, ինչո՞ւ չես ընկերանար իրեն: Ես միայն ուրախ էի այդ ընկերակցութենէն, հոգ չէ թէ ան նոյն հնչակեանն էր որ Տրապիզոն խօսած ճառիս համար դանդաւաններ դրած էր: Երկուքս ալ զինուած էինք ատրճանակներով. ես ունէի կարճ մօսին մը, ճիւղորներու յատուկ, որ Աղեքսանդրապոլէն բերած էի, յանձնեցի դայն Թիֆլիսի Հ. Յ. Դ. ի դրասենեակը, արձանադրելով, որովհետեւ այդ օրերուն իմացած էի թէ եղած են հայեր՝ որոնք իրենց զէնքերը թաթարներուն ծախած են:

Մենք այսպէս քալելով լեռնաշղթաներու վրայէն, բազմութիւններէ հեռու, վերջապէս հասանք Վլատիկաւկաս. հոն իմացայ թէ Մուրատը Արմաւիր կը գտնուի: Ես անցայ Արմաւիր, չեմ դիտեր ի'նչպէս մեր տղոցմէ ոմանք ալ անցած էին Արմաւիր, ուր կային խոշոր թիւով հայրենակիցներ. հոս էին Ձուլալեան ընտանիքը, Օհանեան, Տերսիմի բանաստեղծ Արտաշ Յակոբեան, որ մաս կը կազմէր Արմաւիր հրատարակուող հայ թերթին, որուն անունն էր «Բանուորի ձայն»: Ես որոշած էի, եթէ Մուրատ որեւէ կարողութիւն չէ ըրած տեղ մը անցնելու, երթալ դէպի Ամերիկա որեւէ ճամբով: Գացի Մուրատին քով, ծանօթացայ իր տրամադրութիւններուն, յայտնեցի թէ 10–20 մարդ կը գտնեմ որ ուրախութեամբ կը միանան ինծի որեւէ ձեռնարկի սկսելու համար: Ըսաւ թէ դիմում կատարած է Պաքու անցնելու համար, սակայն պայմանները այնքան լաւ չեն տեսնուիր. եթէ հնարաւորութիւն տան շատ մարդերով մեկնելու՝ լաւ, այդ պարագային լաւ պիտի ըլլայ որ պատրաստես տղոց ցանկը, մենք բոլորս միասին կ'երթանք, այլապէս մենք Սեպուհին հետ պիտի ջանանք անցնիլ Պաքու:

Գուրգուրանքով դուստր գիրենք, նոյն ջերմ եւ հարազատ հերոսները:

— էհ, բալաս, ողջ ըլլաս, լաւ պահէ ինքզինքդ, չկորսուիս այս

խառնափնթոր աշխարհին մէջ, դեռ կը տեսնուինք, ըսելով աւելցուց .
քանի մը պէտք ունի՞ս :

— Այո՛, ըսի, թուղթի մը պէտք ունիմ որ կարողանամ քեզի
հետեւիլ :

— Ոչինչ, պատասխանեց եւ կանչեց մօտը երիտասարդ մը, ա-
նունս, մականունս տարիքս առաւ . պատրաստէ այդ թուղթն իրեն
համար, կրնայ պէտք ունենալ :

Երբ տուն վերադարձայ, մօրեղբայրս տխրութեամբ եւ քիչ մ'ալ
նեղացած ըսաւ .

— Հոս չէիր . ոռւս Մալախաններ եկան քանի մը զինուորներով,
տարին ոչ միայն կողթ ատրճանակդ, այլ նաեւ ասրապդ (պլանքէթ)
որ ծածկուած էր . ըսին թէ զինուորական ասրանք է, իրաւունք չու-
նի : Այս այն Մալախաններու վարձատրութիւնն էր, որոնց հետ եղ-
բայրաբար վարուած էինք :

Երբ յաջորդ օրը Մուրատին քով գացի, ըսին թէ գիշերով կան-
չեցին եւ Սեպուհին հետ պիտի աշխատին Պաքու անցնիլ : Վերջին
անգամ զինքը տեսնելու առիթ չունեցայ, Հայոց ազգին այս մեծ հե-
րօսը, դոնէ բարի ճանապարհ մաղթէի :

Մեր մեծ հերոսներուն մէջ ամէնէն շատ զինքը ճանչցայ, զինքը
յարգեցի եւ այսօր ալ հիացած եմ այդ դրեթէ անդրապէտ մարդուն
տաղանդին եւ քաղցրութեան վրայ : Կեանքի զժուարութիւններն իր
ուսին տանելու, զինքը դարձուցած էին այն անդուգական հերօսը՝
որ ամէնէն քիչ զնահատուեցաւ պաշտօնական մարմիններէն, մինչեւ
որ օր մը Պաքուի մէջ, Սեբաստացի Մուրատը իր ժողովուրդի պաշտ-
պանութեան ճամբուն վրայ ինկաւ : Ամբողջ Պաքուն եւ հոն հաւաք-
ուած Հայութիւնը լացով եւ ողբով յանձնեց զինքը հողին, Սադո-
յին հետ :

Այս քաղաքները այդ օրերուն անկայուն, անորոշ վիճակ մ'ու-
նէին . քանի մը զինուած յանդուգն մարդիկ կրնային քաղաք մ'իրենց
ձեռքն առնել եւ պահել . պարզապէս ենիչէրինք, յայտարարելով
ինքզինքնին մեծամասնական կամ ընդհակառակն, նայած թէ ով կը
տիրէր մօտակայ քաղաքին :

Յաջորդ օր մենք մեր տղոց հետ մեկնեցանք Յարիցին, որ երկու
օր առաջ համայնավարներուն կողմէն դրաւուած էր : Այստեղ մեզի
հանդիպած մարդիկ զըուշացուցին դէպի Մոսկուա երթալ, նախ կը-
ռիւններու, ապա հոն տիրող անօթութեան պատճառով : Ստիպուած
տեղաւորուեցանք նաւակի մը մէջ եւ ճամբայ ինկանք դէպի Սարա-
տով : Զրոյց կար թէ Չեխոսլովաքիայի դերի ինկած զօրքը ազատ
մուտք ունեցած է եւ կ'անցնի ամբողջ Ռուսաստանը, յետագային
կերտելու իրենց ազգային կառավարութիւնը : Յարիցին, որ այդ օ-

րերուն սկսան Ստալինի րատ կոչել, իրր թէ Ստալինի ուժերով դրաւ-
ուած էր, իր երեսին կը կրէր քաղաքային կռիւի բովէն անցնողի տը-
պաւորութիւնը. պատերը քանդուած կամ կիսաքանդ, տուներու պա-
տերուն վրայ դնդակներու հարուածի հետքեր եւ նշաններ: Քսանէ
աւելի հայեր կային, որոնցմէ մեծ մասը անորոշութեան մէջ կը թա-
փառէր, բայց տեղ մը հասնելու միջոց մը կը փնտռէր, շատ անգամ
լսելով իր ընկերոջմէ կամ բարեկամէն տեղ մը հասնելու անուններ:

Հրաշալի օդ մը կար եւ նաւը մեզ կը տանէր դէպի անծանօթ հո-
րիդոններ, ուսական անծանօթ քաղաքներ. ոչ ոք դիտէր թէ ինչո՛ւ
եւ ի՛նչպէս եղաւ որ քշուեցանք այսպէս. բայց միայն մենք չէինք,
ամբողջ Ռուսաստանը կարծես շարժման մէջ էր, տեղ մը երթալու
իր պարած քաղաքէն եւ ծանօթներէն հեռու, իր շրջապատէն հեռու,
չկապուելու համար ոչ մէկուն հետ, ոչ մէկ դադափարի հետ, որ-
պէսզի չմատնուի իր ծանօթ շրջանակի անձերէն:

Մեզի հետ կան աղքատներ, ազնուականներ, երիտասարդներ,
ծերեր, աղջիկ ու տղայ, որոնք կորսնցուցած են իրենց հարազատ-
ները, հարստութիւնը եւ նետուած են կեանքի դիժէն դուրս. դժուար
էր որոշել թէ ուր կ'ուղէին երթալ: Մենք դոնէ դիտէինք թէ Սարա-
տով պիտի երթանք: Ինծի հետ էին մեր մարտական խումբէն՝ Պօզոս
Գալուստեան, Առաքել Հեպոյեան, Սարգիս Մարտիրոսեան, Խաչա-
տուր Հերոյեան եւ կարգ մը հայ դաշմանակներ: Երբ Սարատով
հասանք, հանդիպեցանք ուրիշ հայ դաշմանակներու, ինչպէս Եղիշէ
Մելիքեան (այժմ կը դոնուի Ամերիկա), Լեւոն Լիւլէճեան (Ամերի-
կայի «Մշակ» թերթին երբեմնի խմբագիրը), այնտեղ հանդիպեցայ
նաև Էսմէրեան Մկրտիչին, որուն կիներ կորսնցուցած էր իր երկու
ձեռքերը ցուրտին պատճառով, եւ Մկրտիչ ինք կը խնամէր ու կը
կերցնէր, տալով ամուսնական սիրոյ անկորնչելի օրինակ: Կար նաև
հայ ազգային կաղանկերպութիւն մը, բաւական Պաքուցիներ, որոնք
մեզի Պաքուի անկման դժբախտ լուրը տուին: Այստեղ առաջին ան-
գամ կը հանդիպիմ խմբապետ Վարդանին, Խանասորի արշաւանքի
հրամանատարին. կարծես թէ անխօս դարձած է, չեմ գիտեր թէ անձ-
նակա՞ն հողերու կամ ազգային աղէտներուն պատճառով: Իր մէջ
չեմ տեսներ որեւէ հետաքրքրութիւն իր շրջապատին, իր ժողովուր-
դին մասին: Չկար այն հերոսական դէմքը՝ որ պատմութիւնն իրեն
տուած էր. Վարդան մարդ մ'էր, ո՛չ երբեք Մուրատ մը, որովհետև
Վարդան ինքզինքն անշատած էր ժողովուրդէն եւ երբեք չէր հետա-
քրքրուեր այս մարդոց ողբալի դրութեամբ:

Քաղաքին մէջ խառնակութիւն եւ կամայական կացութիւնն այն-
քան տիրած էին՝ որ քիչ մնաց կռիւի ալ պիտի բռնուէինք, երբ սա-
փրիչի մը մտանք, օրերով մեր սեւացած երեսները մաքրելու. մարդը

երեսուն ռուսլի պահանջեց, դումար մը որ մեզի պիտի բաւէր շաբաթ մը ապրելու համար. այս քաղաքին մէջ ռուսլին ինկած էր:

Երբ սպիրիտէն դուրս եկանք, անակնկալ կերպով հանդիպեցայ Երզնկացի Կարապետ Սարաֆեանին, որ կ'աշխատէր կօշիկի մասնագէտ ընկերոջ մը քով: Այդ շատ համակրելի տղան հարցուց թէ ի'նչ կ'ընեմ եւ ըսաւ. «Վաղը եկուր իմ մօտս, ընկերոջս կ'ըսեմ եւ կու դաս իր քով կ'աշխատիս»: Յաջորդ օրը Կարապետ տարաւ զիս իր մօտ, ցոյց տուաւ թէ ինչ գործ պիտի ընէի. հոն կ'աշխատէին նաեւ Մոսկուայէն փախած բարձր դասի աղջիկներ, որոնք խոյս տուած էին համայնաւարներու բռնութիւններէն: Ես շարաթէ մը աւելի մընացի քովը եւ օր մը ըսի. «Կարապետ, ես շատ անշնորհք եմ եւ կը վախնամ քեզ դժուարին կացութեան մէջ դնել. այն դրամը որ ինծի կու տաս, այս աղջիկներուն տո'ւր, որոնք աւելի լաւ եւ աւելի աժան կ'աշխատին, ես կ'ամէնամ ընկերոջմէ դրամ առնել զրեթէ ճրիարար»: Կարապետ մերժեց առարկութիւնս. «Շարունակէ, ըսաւ, մինչև որ ինք որեւէ դժգոհութիւն ցոյց տայ. այս ռուս աղջիկները կրնան իրենց երկրին մէջ այս կամ այն կերպով հայթայթել իրենց ապրուստը, դուն ինչո՞ւ պիտի զրկուիս»: Ես շնորհակալ եղայ այս հայրենասէր տղուն: Չեմ դիտեր թէ ճակատագիրը զինքը ուր քշեց:

Սարատովի մէջ գաղթական մը կար, ուր կը հաւաքուէին ամէն ազգի գաղթականներ եւ ելոյթներ կ'ունենային երաժշտութեան, արտասանութեան եւ ամէն տեսակ արուեստի: Երեկոները, ժամը 8էն 10, կ'երթայի մտիկ կ'ընէի ու տիրամած՝ տեղս կը վերադառնայի. կարօտցած հայրենի աշխարհիս եւ հարազատներուս, որոնցմէ բոլորովին կտրուած էի եւ երբ պատեհութիւն մը ներկայացաւ Սարատովէն Գաղան մեկնելու, ընկերներուս յայտնեցի թէ ո'վ որ կ'ուզէ՝ կրնայ դալ:

Գ Ա Զ Ա Ն

Նաւարկելով, չեմ յիշեր որքան ժամանակ, վերջապէս հասանք Գաղան, որ նշանաւոր էր իր համալսարանով, քաղաքամիջի բերդով եւ թաթար բնակչութեամբ: Այստեղ դոյութիւն ունէր հայկական կոմիտէ մը, երկու նշանաւոր հայ բժիշկներ, մէկը համալսարանի ուսուցչապետ եւ մասնագէտ աչքի, իսկ միւսը քաղաքային հիւանդանոցներու պետ եւ աղբային կոմիտէի նախագահ. հոս կ'ապրէր նաեւ հայ դօրաւար մը, ինչպէս նաեւ քանի մը միլիտանտներ, որոնք չէին ուզեր աչքի զարնուիլ:

Ես եւ ինծի միացող դադթականներ մէկ ամիս Գազան մնացինք. ունէինք դրասենեակ մը, կոկիկ դրադարան մը, նկարներ՝ ռուսահայ դրադէտ դէմքերու: Ծնորհալի հայ օրիորդ մը կար, որ միեւնոյն ժամանակ ռուսնողուհի էր ըստ շիական համալսարանի մէջ եւ կոմիտէի քարտուղար. անունն էր Թրամրիա. ասոր քոյրը ունէր Ռուբէն անունով մանչ մը, քիչ մը կասկածելի համայնավար, որ քաղաքական դործերով կը պրադէր: Հոս հանդիպեցայ Պր. Թորոս Մելիքեանին՝ իր ընտանիքով, որ ժամանակին Թիֆլիսի «Հորիզոն» թերթին արտօնատէրն էր: Ծատ չանցած, հոս հաւաքուեցան 100էն աւելի հայ դադթականներ, տեղական կոմիտէն կարգադրեց փոխադրել դանոնք աչարոյժ փորձեւէօրին վիլլան, քաղաքէն դուրս. վիլլային հսկողութիւնն ու մատակարարի դործն ինծի յանձնուեցաւ: Այս ամսուան ընթացքին պատահեցան ներքին եւ արտաքին խնդիրներ, որոնք դադթականներու կեանքին վրայ անդրադարձումներ ունեցան:

Որքան որ հայ կոմիտէն կ'օժանդակէր եւ քարտուղարուհին նըւերուած էր դադթականներու վիճակի բարեօքման, բայց միշտ ալ նեղութիւններ կ'ունենայինք. նախ կըթութեան եւ դաստիարակութեան մտկարդակի տարբեր մարդիկ էին, Խարբերդի, Չարսանճապի, Բերկրիի եւ այլ կողմերէն հաւաքուած ըլլալով. յետոյ համայնավարական շրջապատի քարոզչութիւններով վարակուած էին ումանք. Հայրենիքի եւ Հայութեան սէրն ընդհանրապէս մոռցած, անձնական, անասնական վերապրումներու դադափարով տարուած մարդիկ: Գանի մը օրինակներ.

Օր մը կոմիտէն ժողովի կանչեց դադթականները, ուր պարզուեցաւ որ դադթականային քանի մը երիտասարդներ, սպառնալիք ըրած են քաղաքին մէջ սպրոդ մի քանի հարուստ ընտանիքներու՝ դրամ կորզելու, ինքզինքնին համայնավար ձեւացնելով: Ստուգուեցաւ որ այս խնդիրէն մեծամասնութիւնը լուր չունէր, բոլորն արտայայտուեցան աննպաստ կերպով այս դրամաշորթներուն հանդէպ. երբ կարգը ինծի եկաւ, ըսի. «Նախ շնորհակալ եւ երախտապարտ ենք տեղական կոմիտէին՝ որ ինքնաբերաբար, հնարաւորութեան չափով հայթայթեց բնակարան, երախտներուն կաթ, ռուստեղէն: Գադթականութեան մեծամասնութիւնը այս պահուածութիւնը դնահատանքով կ'ընդունի, յետոյ հայ կոմիտէի քարտուղարութիւնը իր ամբողջական դործն ըրած է, ծառայելով եւ անոնց կարիքներն հոգալով: Կ'ուզեմ նաեւ որ կոմիտէն գիտնայ թէ մեզմէ ոմանք կու գան հայ ընտիր ընտանիքներէ. անցնող երեք տարիները դանուած ենք ամէնէն վտանգաւոր պարագաներու մէջ, առանց խնայելու մեր ինչքը, պատիւն ու կեանքը. յանցանքը մերը չէր եթէ թշնամի դնդակ մը մեզ ալ Մուրատին պէս գետին չտապալեց. ձեր եզրայրական օգնու-


Թեան մէջ թշնամական թոյն մի՛ խառնէք. մենք վաղուընէ սկսեալ կը մերժենք ձեր որեւէ օգնութիւնը եւ կ'ուզենք անուններն անոնց՝ որոնք ձեզի նեղութիւն պատճառած են»:

Իրենց մէջ դաղտնի քուէարկեցին թէ այդ անունները Յովհաննէսին կը յայտնենք, թող ինքը տնօրինէ: Կանչեցի այս երիտասարդները խրատելով թէ որեւէ շարժումէ առաջ ինձ պէտք է յայտնեն: Թէ նման բան մը անգամ մըն ալ չպատահի: Խնդրեցի Կոմիտէէն՝ որ մեզի ազատ անցքի արտօնութիւն ճարեն դէպի Խարպին եւ Վլադիվոսթոք ճամբորդելու համար: Ինձ յայտնեցին թէ Պրոֆորոս Մելիքեան անձնապէս պատրաստ է իմ ծախսերս հոգալու, եթէ կը փափաքիմ Մոսկուա երթալ՝ լծուելու հասարակական աշխատանքի եւ թերեւս օգտակար ըլլամ թէ՛ ինծի եւ թէ՛ հայ ժողովուրդին: Յայտնեցի թէ ես որոշապէս վճռած եմ անցնիլ Սմերիկա եւ կամ Վենետիկ՝ Իտալիա, օգտուելով Հ. Չրաքեանէ եւ Հ. Ուլուհոճեանէն ըստացուած նամակներէն, շարունակելու ուսումս՝ որ Թուրքը կլիսատ թողուլ տուաւ, եւ այնուհետեւ միայն վերադառնալ հայրենիք՝ նուիրուելու համար մեր ժողովուրդի կարիքներուն:

Այս ժողովը լաւ արդիւնք տուաւ ինծի եւ դաղթականներուն. նախագահ բժիշկը նուիրուեցաւ մեր ճամբորդութեան կարգադրութիւններն ընել, իսկ Օր. Թրամբիան կապուեցաւ դաղթականներու գործին, զիս պտտցուց համալսարանը, ուր ատեն մը հայ փրօֆեսօրներ առաջնակարգ դիրք դրաւած էին եւ մինչեւ օրս ալ կը շարունակեն մնալ իրենց համբաւով:

Միջադէպ մը Գաղանի վիլլային մէջ: Գիշեր մը, մինչ ես կը պատրաստուէի անկողին երթալ, լսեցի աղաղակ մը. «Օգնութիւն, օգնութիւն, այստեղ Խարբերդցի չկա՞յ. Չարսանճադցիներ հոս մարդ կը սպաննեն»: Ես հազիւ հազ հազուատներս կարգի դրի, վազեցի վար տեսնելու թէ ինչ կը պատահէր. վարը, մօտ յիսուն մարդիկ խենթեցած իրար կը ծեծեն. Չարսանճադցի Նշան անունով տղայ մը աղուոր ապտակ մը հասցուց երեսիս. նկատեցի որ վայրկենապէս պաշարուեցաւ, բռնեցին իր թիւերը, ես ալ բարկացած՝ ձեռքս բարձրացուցի հակահարուած մը տալու, սակայն զսպեցի ինքզինքս եւ հրամայեցի զինքը շրջապատող տղոց՝ ազատ արձակել եւ մօտենալով անոր առաջարկեցի. «Նշան անգամ մ'ալ դարիկ»: Նշան վախէն թէ ամօթէն, չեմ գիտեր, թեւերը կախ եկաւ ներողութիւն խնդրեց որ զոնէ մէկ ապտակ դարնեմ իրեն, իր ապուշութեան եւ յանդուրձութեան համար:

Ես նպատակիս հասած էի. կռիւը դադրեցաւ եւ պարզուեցաւ որ Հոյեցի Մալխասը կ'երթայ մօտակայ ուսս ազարակը, կը մտնէ



Սեբաստացի Մուրադ





Դիանա Աղաբեգ Արգարեանց
(Հայաստանի առաջին դեսպան շափոնի մեջ, 1919)

դետնախնձորի դաշտը, կը հաւաքէ դետնախնձորները եւ ճամբայ կ'ելլէ տուն բերելու․ Բերկրիցի տղաք վրան կը յարձակին դետնախնձորները դրաւելու եւ լաւ ծեծ մը տալու Մալխասին, որ ինքզինքը մինակ զդալով՝ Խարբերդցիներն օդնութեան կը կանչէ, ու կը սկսի կռիւր: Կարճ ատենի մը համար Մալխասը կը զրկենք որոշ առաւելութիւններէ․ կ'իմացնենք պարագան հայկական Կոմիտէին՝ առաջն առնելու համար դանդատի մը՝ որ կրնայ դալ ուսներու կողմէն, ու այնուհետեւ այս Նշանը դրեթէ ամէն առաւօտ ինծի կը մօտենար եւ կը խնդէր․ «Պարոն Յովհաննէս, ինծի մէկ աստակ մը դարկ որ հոգիս հովանայ»: Ես պատասխանեցի թէ իր այդ զգացումը ինծի արդէն բաւարարութիւն կու տայ:

Սյդ ամսուան ընթացքին այդ քաղաքը երկու անգամ ձեռքէ ձեռք անցաւ: Մեր տղաքը, դոնէ 15 հոգի, կ'աշխատին փոքրիկ վարձատրութեամբ երկու կողմերուն համար ալ: Երբ քանի մը օր կարմիրներն ուշացան, մեր Սարգիս ամուսն կը կատակէր ըսելով՝ թէ կարմիրներն ուշացան, մեր գործն ալ կը վերջանայ․ բայց կարմիրներն եկան այս անգամ արիւնի մէջ խեղդեցին քաղաքը: Մենք քաղաքէն կտրուեցանք․ չարաթ մը յետոյ տեղեակ եղանք, որ դուբսը փողոցին մէջ լոնուած ուսէ մարդ կը գնդակահարուէր, նոյնպէս բանտին մէջ եթէ ուսէ մէկը ակնարկուած ըլլար թէ ան աղտոտ պուրժուս մ'է: Երբ քաղաք զաղթականական մարմնին գրասենեակը դացի, օրիորդը տարաւ զիս սրտոցնելու բերդին պարխապին շուրջ, ուսկից մարդկային արիւնը տակաւին կը վաղէր այդ բերդին անձրեւի համար բացուածքներէն: Սարսափ կ'ազդէր մարդկային խիղճ ու սիրտ ունեցող ուսէ էակի վրայ: Մեր ջիւղերը թմրած էին արիւն եւ դիակ տեսնելէն մեր աշխարհին մէջ․ կը մեղքնայինք որ աշխարհս դիժացած է, եւ ո՛րքան անմեղ արիւն կը հոսի, մարդուն ստորին կիրքերուն եւ ատելութեան համար, մինչեւ անգամ այս համալսարանական քաղաքին մէջ: Նկատեցի որ Օր․ Թրամբիայի աչքերը լեցուած էին, կը հեկեկար մեր ժողովուրդին կրած չարիքին եւ մարդկութեան անունին բերուած այս արատին համար: Սքանչելի օրիորդը, իբրեւ բժշկական ուսանող, մեծ հաւատք ունէր համամարդկային դաղափարներով լեցուն մարդկութեան համար:

Քանի մը օր յետոյ հայկական Կոմիտէին նախագահ բժիշկը հեռախօսեց թէ իրեն հանդիպիմ, խօսելիք ունէր: Երբ ներկայացայ, այս պնդուական հայը յայտնեց թէ լուր մը ունիմ քեզի վերաբերեալ, որուն համար թէ՛ ուրախ եմ եւ թէ՛ տխուր․ քաղաքային կառավարութենէն արտօնութիւն ստացանք որ Սիպրիոյ երկաթուղային ընկերութիւնը յանձն կ'առնէ բոլորիդ տեղ տալու, աղատ, ճրի մինչեւ Վլատիվոստոք: Հայկական Կոմիտէն կ'երաշխաւորէ քաղաքային

իշխանութեան մօտ որեւէ թիւրիմացութեան համար: Մեր կողմէն, մենք քեզ ճանչցանք եւ սիրեցինք ու չենք ուզեր քեզ կորսնցնել, եթէ կ'ուզես՝ կը մնաս հոս, երբ համալսարանը բացուի՝ մենք կը հուանք համալսարանական ծախսերդ: Կը ստանաս բարձր կրթութիւն եւ կը շարունակես քու կեանքդ: Գնահատեցի կրթութիւն շարունակելու այս առաջարկը: Թուրքերուն չէին ներած մեր արիւնին, մեր հողին եւ մեր կրթական հաստատութիւններուն դէմ դործած ոճիրները: Ինծի առաջարկուած պատեհութիւնը համալսարան երթալու՝ սրտիս շատ մօտիկ էր. եթէ Ամերիկայի հարապատներուս կարօտը եւ դիւզը մընացած բեկորներուն օգտակար ըլլալու պարտականութիւնն ուժեղ չըլլար մէջ, հաճոյքով պիտի ընդունէի այդ առաջարկը: Տոբթորին սրտազին շնորհակալութիւն յայտնեցի, ըսելով թէ դաղթականները ինծի կապուած են եւ մինչեւ Վլատիլոսթոք կը հասցնեմ. նոյն ատեն մտածելով այդ առաջարկի մասին, սակայն չեմ կարծեր թէ միքս փոխեմ: Ամերիկայի շահ կապուած ես, հարցոց: Պատասխանեցի թէ հարապատներուս կապուած եմ, բայց ո՛չ երկրին, քանի որ տա-կաւին չեմ ճանչնար դայն:

Երեկոյեան վիլլային մէջ ժողովի հրաւիրեցի իմ դաղթական ընկերներս. բացատրեցի կատարուած աշխատանքը, ձեռք բերուած յաջողութիւնը եւ հաւաքական մեր ճամբորդութիւնը դէպի Վլատիլոսթոք: Բաղդրութեամբ կը յիշեմ մեր ճաշը. հրաւիրուած էինք Օր. Թրամբիայի քրոջ տունը, մեր մեկնումէն երկու առաջ. հարցումներ կ'ըլլային եւ հետաքրքրութիւն թէ ինչո՞ւ կը փափաքիմ հեռանալ այս ընդարձակ Ռուսաստանէն, Կոլկասէն. ինչո՞ւ չեմ մնար հոս ու շարունակելու ուսումներս: Այս յեղափոխական շրջանը կ'անցնի, Ռուսաստանը կը դառնայ ամէնէն սպառ երկիրը եւ մարդկութիւնը կը մտնէ նոր դարաշրջանի մը մէջ. դուք երիտասարդներդ կը դիմաւորէք փայլուն սպառայ մը: Ո՛վ դիտէ ինչ մեծ սպառայ մը կը սպասէ ձեզի Հայաստանի մէջ:

Կը դայի թէ այդ խօսքերը հարադատ էին եւ ձեւականութիւն չկար: Քանի մը բառերով պատմեցի կեանքիս դրուալներէն. այս դնդակը որ ճակտիս մէջ ծածկուած է, կրնար աւելի խորն երթալ եւ մահացու ըլլալ: Ես քաջութեանս չեմ կրնար վերադրել, ըսի. ես այն համոզումն ունիմ՝ որ ձեռք մը դիս առաջնորդած է շարունակ, երբեմն իմ կամքիս հակառակ ու դիս պաշտպանած է. չեմ խուսափած վտանգներէն, շատ անգամ փնտռած եմ, նետուած եմ այդ կարծեցեալ վտանգին մէջ, եւ վտանգը ինծմէ խոյս տուած է:

Ճակատադրական չեմ, չեմ ալ արհամարհեր որ վտանգներէն վախնալով կամ խոյս տալով կարելի է կեանքն ազատել. մինչեւ ան-

ՎԼԱՏԻՎՈՍԹՈՒՓ

Մուժ ու երկար էր այս ճամբան երբ անցանք կայարանէ կայարան, ականատես ըլլալով զինուորներու, տեղափոխուած ժողովուրդներու խեղճութիւններուն եւ մարդկային անասճաման դիմադրականութեան հազար ու մէկ դժուարութիւններու: Յուրտը մինակը չէր մեղ չարչարողը, կային աւազակներ, մարդասպաններ, կողոպտիչներ, խեղճ ու աղքատ մուժիկներու կողքին, բանտերէն արձակուած առաքելատիպ մարդոց կը հանդիպէինք այս ճամբուն բոլոր կայաններուն վրայ, ուր կրնային թէյ մը առնել եւ մեր կեանքը քարչ տալ ձգտելով օր առաջ հասնիլ Վլատիվոսթոք:

Այս նաւահանդիստը մեզի համար սլիտի նշանակէր վերջնական յաղթանակ բնութեան եւ տարերքին մեզի դէմ ստեղծած բոլոր չարիքներուն դէմ: Կտրելով հսկայ տարածութիւններ, վերջապէս հասանք Իրքուցը. հոս դտանք բաւական բարեկամներ եւ ծանօթներ, ինչպէս Մայաթիացի Յակոբ Արսլանեան եւ իր տիկինը նորածին մանուկով, որուն հետ Երզնկայի մէջ սլաշտօնաւարած էի. Յովհաննէս Համբարեան Խարբերդցի, որ կ'ըսէին թէ մեծ դումարներ դիպած էր մոմ շինելով. մտքովս կը հիանայի հայկական նախաձեռնակ հուբիին, որ քարէն ալ հաց կը հանէ. տեսայ Յովնանը, յայտնի իր հերոսութիւններուն համար եւ մասնաւորապէս ծանօթ մինչեւ Կարին ըրած իր սխրագործութիւններով:

Սիպերիոյ երկաթուղիին վրայ կը յիշեմ մասնաւորապէս Հիւսէնիկցի Աղապապ աղան, իր երկու զաւակներով, Մկրտիչ եւ Լեւոն, մեզի ծանօթ Աւետիս աղային մեծ եղբայրը:

Աղապապ աղան հայկական կեանքի ղեկավարութիւնը կը ներկայացնէր երկրին մէջ. իր հետ հաճելի խօսակցութիւնը կը շարունակէինք՝ մոռնալով ցրտաչունչ օդը: Երեկոյ մը ուշ ատեն հասանք Խարպին, Մանչուրիոյ կեդրոնական քաղաքը. հոս կար հայ եկեղեցին, հայ համայնք եւ Քրանսական զինուորական կցորդ մը, որ իրաւասութիւն ունէր հայ ղաղթականներուն Քրանսական ինքնութեան թուղթ տալ: Այսպէսով մենք դադրեցանք ղաղթական ըլլալէ ու մըտանք Քրանսական կառավարութեան հողատարութեան տակ, եւ մեզի վերարբերեալ ինդիւրներուն համար պէտք էինք դիմումներ կատարել միմիայն Քրանսական իշխանութեան հիւպատոսարանի միջոցով: Այս քաղաքը մնացինք երկու օր, բայց կ'երթայինք քաղաքի հայկական տունը, ուր շատ սիրով հանդիպեցանք Խոտրջուրցի հացադործ հարուստ հայերու, որոնք ոչ միայն իրրեւ հայ, այլ մեր Կարինէն եկած ըլլալուն պատճառով, մեզի առաջարկեցին դրամ, պատուեցին իրենց բնակութեան արուարձանը հրաւիրելով. իմանալով հայրենիքի

մէջ մեր կատարած դերի մասին, տարազիր ընկերներուս բոլորին շնայլեցին իրենց եղբայրական զգացումները:

Տիրութեամբ բաժնուեցանք այս հայրենակարօտ Խոտրջուրցիներէն: Մէկ րան մասնաւորապէս աչքիս դարկաւ. երկաթուղիի ռուս պաշտօնականներուն վերաբերմունքը դէպի Չինացիները. շատ վատ վերաբերում ունէին դէպի այս չին բանուորները, մասնաւորապէս մանտարին ծախողները, որոնք շողեկաւք կը բարձրանային քանի մը կոպեկ վաստիկելու համար. սարսափելի բերտ կերպով կը ծեծէին ու վար կը նետէին:

Խարպինէն Վլատիլոսթոք հաւասարապէս կը տեսնուէին Փրանսական, ամերիկեան, ճափոնական ներկայացուցիչներ, Բրիտանացիք զգալի չէին ըներ իրենց ներկայութիւնը: Ես միշտ այն կարծիքն ունէի որ ճափոնցիք միշտ հաստ եւ կարճ մարդիկ կ'ըլլային, մինչ հոս կը տեսնէի վեց ոտք բարձրութեամբ, կրթուած, քաղաքավար, դիւրահաղորդ մարդիկ եւ տպաւորութիւնս կը փոխուէր իրենց ցոյց տուած վերաբերումին համար: Այո՛, չէի հասկնար Ռուսերու այնքան անիրաւ, այնքան բիրտ եւ խիստ վարմունքի պատճառներն այդ օրերուն, հակառակ անոր որ իրր թէ Ռուսերը քարոզիչներն ըլլային համամարդկային եղբայրութեան, եւ զործի լծած էին մինչեւ անդամ հրեայ աղջիկներ, երթալու ճափոն եւ լծելու դանոնք համայնավարութեան մեծ դործին:

Ծովը սառած էր, սահնակներ, ձիով կառքեր կը թաւալին սառիւն վրայ ու մեր երկաթուղին սառիւն վրայէն կը քայէ դանդաղ շարժումով: Գիշերուայ ժամը 11ի ատենները կը մտնենք այս քաղաքը, ուր տեղաւորուած են հազարաւոր դնացիներ մօտաւորապէս իրարու քով. տարբեր ազգեր, տարբեր ժողովուրդներ, որոնք թէեւ զանազան լեզուներով բաժնուած իրարմէ, սակայն բախտակից էին պատեքալմաներու բերած արհաւիրքներով:

Վլատիլոսթոքի մէջ կը դտնեմ հարազատներ եւ սիրելիներ, որոնց հետքերը շատոնց կորսնցուցած էի. շատեր զիս նահատակուած կարծեւով՝ մեծ ուրախութեամբ դիմաւորեցին. պէտք է խոստովանիմ թէ ինծի հողեկան մեծ բաւարարութիւն եւ երջանկութիւն տուաւ:

Այստեղ կաղմեցիք Հայաստան մը, շնորհիւ ամերիկեան Կարմիր Խաչին. ես ստանձնեցի ուսուցչութիւնը 50-55 հայ աշակերտութեան. կատարեցի այս պարտականութիւնը հաճոյքով եւ ուրախութեամբ: Ընդարձակ զօրանոցներէն մէկ հատը մեզի տրամադրուած էր դպրոցի համար. այս զօրանոցային կեանքին ղեկավարն եղաւ Միլտիչեան անունով Պիթիլիցի դաշնակցական մը, Քարահատեաններու փեսան: Հոս աչքի ինկած էին Գեղամ Քարահատեան, Պապիկեան եղբայրները, Գեղեցի Միհրան Թուրիկեան իր կարգ մը ընկերներով՝ որ միշտ

Մուրատին հետ եղած էր, Ձընկչտղի Մուրատեաններ, Սաթենիկ Թու-
մաճանեան, Աւետիս, Արամ, Տիգրան եւ Նուարդ Մուրատեաններ,
Աւետիս աղա Քիւրքճեան, Գէորգ Քոյարեան, Հաճիգրիգորեան իր
ընտանիքով, Մելիքճահ (Երբեմնի խմբադիր «Ասպարէզ») եւ ու-
րիշներ: Այս մեր ընկեր դադթականները ցրուեցան աշխարհիս չորս
կողմը. մնացինք վերջին դադթականները՝ ես եւ ուրիշներ:

Քաղաքին մէջ կ'ապրէին հինգէն տասը հայ ընտանիքներ, որոնք
մեր կեանքով քիչ կը հետաքրքրուէին, բացի Կոմիտէի նախագահ՝
Թովմասեանէն, որ հապուստի խանութ մ'ունէր քաղաքին լաւ հրա-
պարակին վրայ եւ առեւտուր կ'ընէր Ճափոնի հետ ու լայն ծանո-
թութիւններ ունէր այդ բազմամբոխ հրապարակին վրայ:

Ես անգլերէնի դաս կ'առնէի ընկեր Մկրտիչեանէն, որպէսզի Ա-
մերիկա հասնելուս՝ պատրաստ ըլլամ դպրոց մտնելու: Տեղացի հա-
յեր ինքզինքնին հեռու կը սրահէին դադթական հայերէն, վախնալով
հիւանդութիւններէ եւ վարակումներէ. դժբախտ իրականութիւն մ'էր
որ առանց ամերիկեան Կարմիր խաչի ընձեռած օգնութեան, այստեղ
հաւաքուած դադթական հայերու կեանքը անտանելի պիտի ըլլար:
Գադթականութիւնն ազատ կերպով արտասահմանի, նամանաւանդ
Ամերիկայի հետ յարաբերութեան մէջ էր եւ աղչային տեղեկութիւն-
ներ կը ստանար այդ խողովակով: Շատեր սկսան դրամ ստանալ եւ
պատրաստութիւն տեսնել Ամերիկա մեկնելու: Ես 1919ի Փետրուար
15ին ստացայ անցադիրա Փրանսական հիւպատոսարանէն. մինչ այդ
դրեթէ անտեղեակ էինք Հայաստանի կառավարութեան անցքերու մա-
սին. երբ յարաբերութեան մտանք Ճափոնի հետ, հասկցանք որ հոն
կը բնակի տիկին Ապարեկ Արզար, որ Հայաստանի կառավարութեան
դեսպան նշանակուած էր: Նամակ մը դրեցի այս անձանօթ տիկնոջ,
որ անմիջապէս հետաքրքրուեցաւ Վլատիվոսթոքի հայ դադթական-
ներու վիճակով: Հայկական տեղական Կոմիտէի հետ կապ պահեց,
ցուցմունքներ ըրաւ եւ դէպի Եոթոհամա, դէպի Ամերիկա եւ Կիլի-
կիա, Հնդկաստանի վրայօք, մեկնող աղբակիցներուն թէ՛ նիւթական
եւ թէ՛ բարոյական օժանդակութիւն ըրաւ:

Հոս մէջըրբում մը կ'ընեմ այս ժամանակ կըրօրս դրած մէկ նա-
մակիս, ուր կը նկարագրուի Վլատիվոսթոքի մեր դադթական կեանքը.

Վլատիվոսթոք, 6 Մարտ, 1919

Միրելի եղբայրս Կարապետ

Ամիսներ առաջ Վլատիվոսթոք հասանք, մեզմէ առաջ եկածներ
կային. մեր այդ փախստական խումբը 200ի կը հասնէր. շատեր կա-
նուխ այս քաղաքէն կ'անձկային կտոր մը թղթիկով խապրիկ զրկե-

լու իրենց հեռաւոր մէկ սիրելիին, որ տարիներու կարօտով բաժնուած է. հայեր ենք բոլորս ալ, զիրար ճանչցող, բախտաւոր հայեր: Կան երեխայ, կին, աղջիկ, որոնք բոլորն ալ անխտիր տանջանքի քստմնելի բովէն են անցած: Անոնց դէմքը մոռայլ է, արհաւիրքի ու ցասումի, չարչարանքի ու զրկանքի խոր դրոշմ մը կայ իրենց բոլոր արտայայտութիւններուն մէջ: Ամէն բան աղարտուած է անոնց վրայ, բացի հոգիներէն, որ դեռ եւս տոկուն, հաստատակամ եւ խոստմանալից են:

Մինչեւ այստեղ ամէնուրեք ղոյուծիւն ունեցող հայկական Կոմիտէները իրենց միջնորդած են պէթ ձրի ճամբորդելու: Այստեղ կը վերջանայ օժանդակութիւնը: Քաղաքին մէջ վաղուց բնակութիւն հաստատող մի քանի հայ ընտանիքներ, անզօր կը զգան կարիքին առջեւ բան մը ընելու. նորէն Կոմիտէն կը միջնորդէ, կը խնդրէ ամերիկեան Կարմիր Խաչէն, որ ստանձնէ անոնց հոգատարութիւնը: Մեր քաղաք հասնելուն օրը, իրենց վակոններէն կը փոխադրուինք ինը վերստ (մզոն) հեռու՝ երկրորդ կէտ կոչուած վայրը, ուր ռուսական հսկայ կազմամասեր (գորանոց) կան գինուորներէն ամայացուած. անոնցմէ մէկը մեզի կը յատկացնեն: Զօրանոցը մասերու կը բաժնուի եւ իւրաքանչիւրն իր տեղը կը բռնէ, պատերուն վրայ գծադրուած են դրօշակներ, օղանաւեր, ծովային եւ բերդային նշանախօսքեր. այս բոլորը մեզի կը պատմեն կազերմայի երբեմնի փառքը: Բոլորին օրը սպասում մըն է, անհատնում ջղաձիգ սպասում մը՝ որ շատ անգամ անհամբերութեան կը տանի: Երկու հարիւր հոգի ենք Սիպերիոյ մէջ, պատասպարուած կազերմայի ճնշող մթնոլորտին տակ. երիտասարդներ կան, վառ երազներով, ասպաղայի յոյսերով, ողելառ երիտասարդներ...:

Իտալիան պատերազմի դաշտին մէջ իր զինուորին համար դրադարան ունէր, իսկ մենք դաղթաւայրի մէջ օտարութեան եւ աղքատութեան մէջ կը հիմնենք լսարան, երեկոյեան դպրոց, վարժարան, 37 աշակերտ-աշակերտուհիներով: Կեանքը կը սկսի. լսարանը միջոց մը կ'ըլլայ այդ ցաւոտ հոգիներու ներքին այրող հրայրքը դուրս թափելու: Հանդէսներ, երեկոյթներ կը սկսին, կը կազմակերպենք աշակերտական միութիւններ եւս, որը ինքնիր մէջ մտքի սնունդը կը փնտռէ. ունէ Հայաստանցի անցորդ թէ ներս մտնէ՝ պիտի չնչէ հայրենի քաղցրութիւնն ու մթնոլորտը: Բոլորը մէկ տեղէ ճաշ կը ստանան եւ իւրաքանչիւր սենեակ իր ներկայացուցիչն ունի կառավարիչին մօտ, բոլորին առողջութեան մասին մտածելու եւ առողջապահիկ պայմաններ ստեղծելու: Մեծ ընտանիք մ'ենք բոլորս, տարբեր ուզողութեան եւ հասկացողութեան մարդիկ, բայց հայեր: Շատ անգամ այս կամ այն սենեակէն երբ մը կը սկսի, կ'երկնայ, կ'այլեծփի

եւ կ'ընդհանրանայ: Բոլորին սիրտը օրուան լուրի մը կարօտ, բոլորին հոգին Հայաստանի անկախութեան է սպասող:

Պօղոս Նուպար փառայի անկախ Հայաստան յայտարարելու լուրը մոլեկոնոտ ուրախութեան մը տարաւ, ամէնքը ժպտեցան, յուսացին ու հառաչեցին: Փոքրիկներն աւելի խանդավառ, աւելի յուսալից եւ աւելի խանդոտ են. անոնց ծաւի աչքերուն մէջ թէեւ թախծոտ մըրուայլ մը կայ, բայց Հայաստանի անունին առջեւ կը դօտեսպնդուին եւ կը կանչեն շատ յաճախ. Մենք զինուորներ ենք Հայաստանի – Ուխտածներու պէս հաստատակամ, հայրենիքէն դուրս ոչինչ ունինք:

Հայեր ենք տարբեր հասկացողութեամբ, տարբեր կրթութեամբ եւ իմացականութեամբ: Մեր մէջ կան եւ կուսակցականներ, բայց երբեք չահախնդիրներ. հայ թերթի մը երեսը տեսնելը՝ աշխարհ մը տեսնել է եւ բոլորս հաւաքաբար կը լափիլիզենք որեւէ հայ թերթ. «Պահակ», «Կոչնակ», «Հայրենիք», «Ազդ» եւայլն: Ամէնը նոյն արժէքն ունին մեր դերագոյն շահին նկատմամբ. մեր մէջ կուսակցական գիւնեմոլներ չկան: Բոլորս մէկ շահ ունինք, մեր տառապանքն ու չարչարանքը, մեր զրկանքն ու զուլումը մէկ բան միայն կ'ուզեն՝ ազատագրումը մեր տարաբախտ Հայաստանին եւ տարագիրներուն: Մենք մէկ բան դիտենք՝ որ հարէմները լեցուած են հայ դեղեցիկուհիներով, հայ սրբութիւններն անարդուած են ամէնուրեք, հայ փոքրիկները վաղուան ենիչէրիները պիտի ըլլան մոլլաներու ամբարիշտ ձեռքին մէջ: Չարիքն ամէն տեղ է եւ անխտիր, այս բոլորին վերացումը օրուան եւ մարդկութեան հրամայականը պէտք է ըլլայ. արդարութիւնը միայն կը ծնի համերաշխութիւն, ուր արդարութիւն չկայ՝ այնտեղ ի դուր է փնտռել խաղաղութիւն:

Հայեր ենք 200 հոգի, Տրապիզոնցի, Գարահիսարցի, Սըւազցի, Պիթլիսցի, Վանեցի, Խարբերդցի, Տիգրանակերտցի եւ Չիչլիածաղցի. ասոնց բոլորը կորսնցուցած են մարդիկ, աղջիկ, տղայ, հայր, մայր, եղբայր, քոյր, հարստութիւն, որոնց մասին չեն մտածեր անդամ: Արդարութիւնը զիջում չի ճանչնար, այլ լման համերաշխ եւ հաւասար: Մեզի համար սահմանուած արդարութիւնն ալ լման պէտք է ըլլայ: Քանզոյն չինել պէտք է տալ, այրողին՝ վերականգնել:

Ահա այստեղի մտայնութիւնը, ահա բոլորիս կուսակցական, քաղաքական ըմբռնումը: Կուսակցական հայեացքներ, համոզումներ, սկզբունքներ, կեանքի բոլոր օրերուն պիտի տարբերին. մարդն իր մէջ լման չի կարող պարփակել բոլոր ըմբռնումները միանգամ: Ունէ կուսակցական, գլխաւոր կէտերուն համեմատած, կ'ընդունի այս կամ այն ծրագիրը, իսկ լման կուսակցական չի կարող դոյուլութիւն ունեցած ըլլալ: Անհատը կը դոհուի ընդհանուրին համար եւ այս սկզբունքով կը կազմաւորուի, կը ձեւանայ կուսակցութիւնը: Տարբե-

րուժիւնը ընկերվարութեան, ժողովրդավարութեան, ռամկավարութեան՝ այլ է: Ոստքը կը թռչի, դէրը կը մնայ, ըսելը չ'արժեք. դործեւն է փաստը: Ամերիկայի մասնակցութիւնը պատերազմին՝ ոչինչ պիտի բերէր, եթէ նա իր զօրքերը Ֆրանսա եւ այլուր չ'ըրկէր: Կեանքն այսպէս է, ո՛վ որ կը դործէ՝ կը յաջողի, ո՛վ որ կը չ'արջարուի՝ ան ուշ կամ կանուխ կը վարձատրուի, եթէ իր չ'արջարանքը ազնիւ, մաքուր եւ դադափարական ձգտում եղած է:

Հայեր ենք այստեղ, մէկ տան մէջ ապրող, մէկ կաթսայէ կերակրող, մէկ բաղձանքով եւ նոյնանման ցաւով: Այսօր մենք մինակ կը ձգտինք այս կամ այն կողմը երթալու, կ'ուզենք որ մեր հայրենիքն ունենանք, կ'ուզենք ազատ ըլլալ, կ'ուզենք որ փոխարինուի մեզ, ինչ որ մերն էր՝ մեզի տրուի. եթէ այս բոլորը եղաւ, ուրեմն կը կառավարենք եւ կը ձեւաւորենք ինչպէս հասարակական շահերը եւ ազգային շահերը կը պահանջեն: Ամօթ է չորս պատուիրակ ընտրելու համար, այսքան անհամեստութիւն, այսքան ամբոխավարութիւն...:

Օրերը կ'անցնին, ու այս դաղթականութիւնը մաս մը կ'երթայ երկիր կամ կու դայ Ամերիկա, բայց կան եւ մարդիկ, կիներ որ կը մնան. մարդիկ որ թրքական լուծէն ազատելու համար ձգեցին փախան, անցան Ռուսաստանն ու Սիպիւրը, ու կը մնան տակաւին. ի՞նչ պիտի ըլլան, ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը, մե՞ղք դործեց որ ազատելու համար ջանք ըրաւ, մե՞ղք դործեց որ իրեն մէկ հեռաւոր բարեկամէն յուսաց. մե՞ղք դործեց վերջապէս որ կեանքի կուռին մէջ անդէն մնաց: Շատեր կան այսպէս ամէն տեղ, ամէնուրեք կան այսպէս հայեր, մե՞ղք դործեցին որ հայ ծնան եւ հայ պիտի մնան:

Վլատիլոսթոք նաւահանդիստն է Սիպերիոյ, օտար նաւահանդիստ, լուրերը շատ սուղ են հայրենիքէն, ոչ մի օդ կը փչէ, ոչ մի նմանութիւն մեր գեղեցիկ Հայաստանին եւ լեզուին, բարք ու սովորութիւն եւ կեանք այլազան են: Ողորդականի սառոյցներուն հետ զբօսնող Վլատիլոսթոքի քաղաքացիին ի՞նչ փոյթ որ մէկ անկիւնն ալ հայ դաղթականներ կան. Հայե՛ր... շատ քիչ լսած են այս անունը, նոյնիսկ շատեր մեզ կը չ'փոթեն թուրքերուն հետ... տաճկահայատակները տաճիկ կարծելով:

Սիպերիա Հայեր կան, ռուսական տիրող կառավարութիւնը կ'ուզէ զիրենք զօրահաւաքի ենթարկել. անոնք ամէն զնով, եթէ պէտք է ծառայել հայրենիքին՝ կը ծառայենք, կ'ըսեն, բայց այդ բոլորը ո՛չ ոք կը լսէ: Ինչո՞ւ չեն ձգտիր անմիջական խարխիւր ստեղծելու հայ երկրին, հայ ժողովուրդով:

Վերջին նամակդ որ առաջինն էր՝ ստացայ. ինձ համար բաւական զարմանալի էր որ այնքան կարճ էր դրածդ, դոնէ բացատրու-

թիւն մը որ ի՞նչ դործ կ'ընես, ինչպիսի՞օ պայմաններու մէջ կ'սպրիս, որո՞ւն հետ ես, առանձին սենեակ ունիս, ուլքե՞ր են ընկերներդ. ես երեւակայել շատ դիտեմ, բայց իրական աշխարհը երեւակայականէն շատ հեռու է: Գրէ մանրամասնօրէն թէ այդտեղ ի՞նչ միջոցներ կան կարդալու, ո՞րքան ծախք կայ դպրոց մը շարունակելու. գրէ՛ բոլոր նիւթական, բարոյական, Ֆիզիքական դժուարութիւնները:

Ի՞նչ կ'ըսես, այժմեանից հայրենիքի հետ յարաբերութեան մէջ մտնե՞մ. ինձ սնունդ պէտք է, եղբայր, դիտութեան սնունդ: Ճիշտ է որ շատ մը պարազաներ զիս յեղաշրջեցին, բայց տակաւին այդ փափաքը անհուն է, անսահման. առանց ուսման ինձ աշխարհ չկայ: Այդ ուղղութեամբ կը գրեմ. գրած եմ Վենետիկ: Քեռիս կարդադերեցի որ երկիր երթայ, ան աւելի պէտք պիտի դայ երկիրը քան թէ Ամերիկա դայ եւ բանուորութիւն ընէ: Լաւ է դադափարդ որ երկիր երթաս, իմ տածմունքը մէկ բանի վրայ կը կայանայ, առաջին՝ իմ ուսումս, երկրորդ՝ ջուլ ամուսնութեանդ խնդիրը. տարիները կ'անցնին, անցնող երիտասարդութիւնը չի վերածնիր եւ քանի որ մինչեւ ցարդ համուսնացար, մի՛ ամուսնանար մինչեւ երկիր երթալդ. այնտեղ յոյս ունիմ, լաւագոյն աղջիկ մը պիտի գտնես:

Ինչ որ ալ ըլլայ, ես հակառակ եմ որ ջուլ ամուսնութիւնդ ուշանայ. իմ փափաքս է երկիր ըլլալ, բայց կը նախընտրեմ դեռ եւս կարօտ մնալ ամէն բանի եւ մի քիչ կատարելագործուած մտնել այդ երկիրը, ուր ամէնէն կարեւորը, դիտակից մարդոց պէտք ունի: Իսկ դուն պէտք է այնտեղ ըլլաս, պէտք է որ, ինչպէս միշտ՝ նոյնպէս այժմ, վրադ առնես մեր տան վերաշինութեան դործը, գտնես մայրիկը, համբուրես, զովացնես, մխիթարես այդ տառապած հրեշտակը, այդ անզուգական մայրիկը: Եղբայր, մենք չէինք ճանչնար մայրիկին վերջին դէպքերուն ցոյց տուած անձնագոհութիւնը, իր եղբայրներուն, ամէնէն փոքրիկ Աննային, Յարութիւնին, բոլորին, բոլորին: Աննկարագրելի են, բացարձակապէս:

Նոյնպէս Սարոն, այդ դիւցադնուհին, ճարպիկ ու անլախ Սարոն: Ես կ'ուզեմ որ ամէն կերպով տանը սիւնն ըլլաս, ես հանդիստ ըլլամ այդ մասին ու նուիրուիմ աշխատանքի, ջուլ, իմ եւ մերոնց յոյսերը իրականացնելու: Անձը մոռնալը նուիրական է, երբ հասարակութեան օգտին համար է...:

Յունիս 15ին (1919) դոցեցինք դպրոցը, նախ իմ մեկնումիս պատճառով եւ յետոյ աշակերտութեան մեծ մասին. բայց այս վեց ամսուայ դպրոցի ընթացքին ոչ միայն ծանօթացայ խումբ մը աղջիկներու եւ տղոց, այլ անոնց հետ միացայ սրտով ու մտածումով. դանոնք տարի լեռներ, տղոց տուրի մարմնամարդական, մտային ու վին-

ուորական նախնական կրթութիւն, տուի յեղափոխական եւ քաղաքական եւ քաղաքացիական կռիւներու մասին զաղափարներ. տուի մեր նորագոյն պատմական անցքերու մասին տեղեկութիւն. սխալներ, պակասութիւններ, անկազմակերպ եւ թոյլ ժողովուրդներու յատուկ ընկրկումներ ու մեծ ու նուիրուած առաջնորդներու ղեկավարութեան եւ արժէքներու մասին: Սօսեցայ իրենց Մուրատի, Սեպուհի, Նազարբեկեանի, Անդրանիկի, Վարդան Շահապօղի, Վահան Զեքոյի, կամուորական շարժումներու, Պօղոս Նուպարի, հայ կազմակերպութիւններու եւ անոնց առաջնորդներու մասին:

Գաղափարական պատկերներն անոնց, որոնք կը ճանչնայի, որոնց անունը լսած էի կամ կարդացած էի, Ռոստոմի, Քրիստափոր Միքայէլեանի. այս դպրոցին մէջ ես մտածումով, նուիրումով հարգատ կը զգայի, երբ անոնք կը զրէին, կը կարգային, կ'երգէին, ներկայացումներ կու տային. մէկ խօսքով հայ կ'ապրէին եւ հօգիս կը հրճուէր անոնց այդ արտայայտութիւններէն: Ինքզինքս ուսուցիչ կը զգայի, կը կարծէի թէ մեր ժողովուրդին կը դարձնեմ զանոնք, որ ենթակայ էին կորսուելու: Յետագային Ամերիկայի մէջ անոնցմէ շատեր հասարակական աշխատանքի լծուեցան եւ բերին իրենց մասնակցութիւնը իրենց գտնուած քաղաքներու եւ կազմակերպութիւններու մէջ:

Այս մանուկներու տուի՝ ինչ որ սրտագին ունէի, իղձերս, մտածումներս, անոնց մէջ տեսայ վաղուան Հայը՝ որ սլիտի դայ. եւ մինչեւ այսօր ալ լսելով անոնցմէ ոմանց յաջողութեան մասին՝ հողիս կը հրճուի, կարծելով թէ բան մը ինծմէ կայ անոնց առկայծող հողիին մէջ. այսպէս Յովհաննէս Քիւրքճեան, Սարգիս Թընկըբեան, Վերժին Ամիրխանեան, Յովհաննէս Յովսէփեան, Գարեգին Քըրքեան, Գարահատեաններ, Ս. Թուճեան եւ շատեր՝ որոնք կ'աշխատին հեռաւոր եզրիպտոսէն մինչեւ Քալիֆօրնիոյ ծայրերը:

ԴԵՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Մեր բաժանումի օրերը կը մօտենան, Պօղոս մօրեղբայրս, Ռաչատուր Հերոյեան, Պօղոս Հերոյեան, Սարգիս Մարտիրոսեան կը մեկնին Շոքոհամա, անկից ալ կտրելու Հնդկաստանը, Փորթ-Սայիտ եւ Կիրիլիա. իսկ Առաքել Հեպոյեան եւ Յովհաննէս Ասատուրեան կը մեկնին Ամերիկա եւ քիչ վերջը ես ու Պօղոս Գալուստեան կը մտնենք նուազանդիստ՝ Շոքոհամա երթալու համար: Շոքոհամայի մէջ կը ներկայանանք մեր ղեկավարուհի տիկին Աղաբեկ Արզարին: Հայաստանի հանրապետութիւնը, ինչպէս ժողովուրդը, կ'ըսէ, եթէ լապտերով փնտռէր՝ աւելի լաւ մէկը չէր կրնար գտնել, եւ եթէ իր բոլոր

դեպուտաները ամէն տեղ նման էին, այդ իսկ ասպետոյց մ'էր թէ մեր ժողովուրդն ունէր իր ընտիր ներկայացուցիչները, նախ իբրև անձնաւորութիւն՝ պատկառելի էր, կարծես արքայազուն տունէ մը կը սերէր: Իր կերպարանքը, իր սպիտակ մազերը, իր անհատականութիւնը, իր տիրական դիրքը պարզապէս պատկառելի էին: Հեղինակ էր զիրքերու, ամէնը Հայաստանի, հայ ժողովուրդին, ուրիշ նուիրուած իր անձին պէս: Ինծի նուիրեց իր նկարը որ մասունքի պէս կը պահեմ: Մեզի հետ ճամբորդող զաղթականներու համար տեղ յատկացուց Յոքոհամայի մէջ: Իմ ժամանակներս գրեթէ կամ իր տունը կամ գրասենեակը կ'անցընէի. միակ դժուարութիւնը որ ունեցայ իրեն հետ, երբ գրասենեակ կ'երթար՝ ռիշքալ (հասարակաց փոխադրութեան միջոց, մարդոցմէ քաշուած) կը նստէր. ես չէի կրնար յարմարիլ որ մարդը գրաստի տեղ դործածուէր. ինչ որ է, երկրի գրութիւնն այսպէս է, աշխատանքը սուրբ է, մարդիկ կ'աշխատին զիրենք եւ իրենց ընտանիքները հողալու, այսօրուան Ռիշքոյի մարդը խոշոր առեւտրական մը կրնար ըլլալ եւ իր գործէն չի ամչնար: Ես կը ժպտէի այս աշուտագարմ Հայոց պատմութեան խորքէն եկող տիկնոջ: Կը խօսէր, կարելի է ըսել, դրաբար աստուածաշնչային շեշտով. այսօր ալ կը մտածեմ թէ աշխարհի մեծ ժողովուրդներու որեւէ ժողովի մէջ այս տիկնոջ ներկայութիւնն իսկ պիտի բաւէր յարգանք պարտադրելու:

Իմ իր մօտ եղած ժամանակս շուրջ 8000 տուրք զաղթականներու օժանդակութիւն մը ըրած էր. երբ վերջնական համոզուեցաւ որ ճափոն մնալու միտք չունիմ, ուրեմն հասցէներ եւ անուններ տուաւ որ եթէ հնարաւոր է, այդ գումարները գտնեմ եւ վերագարձնեմ իրեն որպէսզի շարունակէ նոր կարիքաւորներու հասնելու: Ես այդ պարտականութիւնը սիրով եւ ուրախութեամբ կատարեցի. ոմանք սիրով ընդառաջեցին, ուրիշներ ալ պարտական մնացին անոր բարի եւ ազնուական յիշատակին:

Ինծի կ'ըսէր՝ հոս կեցիր, ամէն միջոց կը տրուի քեզի որ լեզուն սորվիս եւ դործի մը լծուիս: Մեծ կարելիութիւններ կան այս ծայրագոյն արեւելքին մէջ, խելացի, հաւատարիմ եւ աշխատունակ երիտասարդի համար: Հարազատներուս տարիներու կարօտը զիս կը մաշեցնէր եւ ես չեմ գիտեր ինչպէս կարողացայ դիմանալ. կեանքը տեսնող եւ իմացական խորհուրդներուն եւ չլսեցի իրեն, թերեւս ճակատադիր էր. բայց մտքիս մէջ կը կարծէի թէ պիտի կորսուիմ այդ ծայրագոյն արեւելքի ծովին մէջ:

Երեկոյ մը Ն. Ազգունի իր տիկնոջ հետ եկած էր տեսնելու տիկին Աղարեկ Արզարին, կամ աւելի շուտ թելադրուած էր ամբերիկեան դեպուտատունէն, թուղթերու կարգադրութեան համար գալ եւ տես-

նուիլ Հայաստանի հանրապետութեան ղեսպանուհիին հետ՝ որ մեծ վարկ կը վայելէր Ճափոնի կառավարութեան մօտ :

Կեանքիս մէջ պիտի չմոռնամ այն բարկութիւնը, այն զզուանքը եւ այն մեղադրանքը, որ այս իսկական քրիստոնեայ, առաքելատիպ տիկինը կ'արտայայտէր հանդէպ Ն. Ազգունիին :

— Դուն հայ թերթի խմբագիր ես, բայց դուն հայ չես, չամչցար որ ամերիկացին պէտք էր քեզի ցոյց տար քու հայ ըլլալու ճամբադ. քեզ կրնամ մերժել եւ չթողուլ որ Ամերիկա ոտք դնես, բայց ես այդ չեմ անի, մարդիկ իրաւունք ունին իրենց կեանքը դասաւորել ինչպէս կ'ուզենան, բայց քեզի պէս խմբագիրներ իրաւունք չունին անտեսելու իր ազգին ներկայացուիչը. դուն ոչ մի երկրի քաղաքացի ըլլալու արժանի չես, երբ կ'անտեսես քու ազգին քաղաքացիութիւնը. պէտք է պատժել քեզիպէսները՝ օրինակ տալու ուրիշներու : Դուն, դուն, ես չեմ գիտեր թէ ինչո՞ւ կ'ընդունիմ քեզ իմ տանս մէջ, անչուչտ հայ ըլլալուդ համար : Ես պարտական կը զգամ իրբեւ հայու, իրբեւ Հայաստանի ղեսպանի, քեզի դաս մը տալու՝ որ դուն արժանի չես Հայաստանի քաղաքացի ըլլալու : Այսքան դարերու ստրկութիւնը մտեր է սրտիդ եւ ուղեղիդ մէջ :

Տրտմութեամբ եւ ցաւով կ'ապրէի իր հողիի դառնութիւնը, հըպարտ էի Հայաստանի հանրապետութեան ղեսպանուհիին պայծառափայլ ու շքեղ պատկերին առջեւ, ո՛չ Ազգունիին տուած խորտներուն, այլ այն խորիմաց պաշտամունքին՝ որ կու դար հայու հողի եւ իմացականութեան հայաչունչ պարտականութենէն :

Ինծի նամակ մը տուաւ յանձնելու Օր. Արմէնուհի Թաշճեանին, որուն հետ թղթակցութեան մէջն էր, Սիեթըլ, Վաշինկթընի մէջ, որուն գրած եմ քու մասիդ, սքանչելի հայուհի մ'է եւ ձեզի օգտակար կը լինի երբ Սիեթըլ հասնիք :

Քանի մը օր ես եւ Պօղոս Գալուստեան պտտեցանք Թոքոյ, կայսերական պալատը, զրօսանքի վայրեր. հոս ալ հանդիպեցանք նոյն հրեայ ազգիկներուն, որ կ'երեւի թէ Թրոյքին կը յըկէր ճափոնական յեղափոխութիւնն առաջացնելու համար, որոնք հետաքրքրուեցան մեր գործի եւ ճամբորդութեան մասին : Մտածեցի թէ մենք որքան սահմանափակ ծանօթութիւն ունէինք ծայրագոյն արեւելքի մասին, Ճափոնի ժողովուրդին, իր ճարտարարուեստին եւ իր կեկտրականութեան, իր երկաթուղիին եւ իր օրինապահութեան մասին : Կայսերապաշտ էին. պարտէզները, նկարչութիւնը, պուտտայական պաշտամունքի տուները մեզ կը զարմացնէին. ո՞րքան անհաղորդ էինք այսքան բարձր մշակոյթ ունեցող ժողովուրդի մը հետ :

Վերջին երեկոն վացի Աղաբեկ Արդարի մօտ եւ կարծես թէ տունէս կը բամբուէի. ուշ ատեն մնացինք տիկնոջ մօտ, ճաշեցինք, խօ-

սեցանք, իր մէկ աղջկան եւ տղուն հանդիպեցանք, իր ձեռքն համբուրելով շնորհակալութիւն յայտնեցինք, մեկնեցանք Պօղոս Գալուստեանի հետ՝ առնելու համար Եռքոհամայի Ֆուլիմի Մարոյ նաւը: 17 օր ճամբորդութեամբ հասանք Սիեթըլ Վաշինկթըն, ուր մեզ դիմաւորեցին Արմէնուհի Թաշեան եւ տեղական դաղութէն մէկ երկու ընտանիքներ, մասնաւորապէս խոյլուցի (Թլկատին) ընտանիք մը, որուն քով մնացինք քանի մը օր:

Օրիորդ Թաշեան այդ օրերուն նշանուած էր Տոքթ. Լեմսըն անունով մէկու մը հետ: Մեր գալուն առաջին օրէն նուիրուեցաւ մեզ ներկայացնելու իրբեւ հայկական բանակի զինուորներ եւ յաջողեցաւ ապահովել մեր տոմսերը կէս գինով ճամբորդելու, հաւասար ամբիկեան զինուորներուն, իբր դաշնակից պետութիւն: Գրած էր պատմութիւն մը հայ զինուորի, Անդրանիկի եւ հայ ժողովուրդի մասին. չատ հետաքրքրական դործ մը: Պէտք է ըսեմ թէ կը նախանձէի այդ օտար տոքթորին՝ որ այսպիսի սքանչելի հայ աղջիկ մը կ'առնէր: Ինծի վախ ու սարսուռ կը պատճառէր այն դաղափարը՝ թէ այսպիսի աղջիկ մը չէր կրցած իրեն արժանաւոր փեսայ մը դռնել. կը կորսուէր իր աղքին արժանաւոր դաւաճներ տալու, որոնց այնքան պէտք ունէր: Կրնաք երեւակայել թէ հոգիս ինչպէս կը ցաւէր ի տես այս պատկերին. ահա այստեղ, ազատ Ամերիկայի մէջ, մեր սիրասուն աղջիկները օտարին կ'երթային, կը կորսուէին, ինչպէս Թուրքիոյ մէջ ըռնութեամբ կը կատարուէր: Ասիկա զիս կը սարսափեցնէր իր ատենին. պէտք էր տարիներ ասլրիլ հասկնալու համար ցեղային այս ողբերգութիւնը, որ փոքր ժողովուրդներ, մանաւանդ մեծ եւ բարդաւած երկիրներուն մէջ կը կլանուէին, կը լուծուէին եւ օր մ'ալ կ'անհետանային, առանց ենթահողի, առանց լեզուի եւ առանց, եթէ կ'ողէք, եկեղեցիի:


Ուրեմն Ամերիկա ենք, 23 Յուլիս, 1919. եթէ մէկն ըսէր թէ այսպիսի հրաշք կ'ընար պատահիլ...: Իրողութիւն է, Պօղոս Գալուստեանի հետ Ամերիկա ենք, կը նայինք իրարու, կը դրկենք զիրար, հեռադիր կու տանք եղբորս Տիթրոյիտ, որ մեզի ճամբու ծախս հասցնէ կարենալ շարունակելու մեր ճամբան դէպի մեր հարազատները:

Սիեթըլի հայերուն շնորհակալութիւն յայտնեցինք, մասնաւորապէս Օր. Թաշեանին, իր նուիրած աշխատանքին համար, ոչ միայն մեզի, այլ բոլոր անոնց՝ որ այդ ճամբով Ամերիկա անցան: Ծնորհակալութեան նամակ գրեցինք նաեւ տիկին Աղարեկ Աբգարին: Ապա մենք ձեռքեցինք Ամերիկան մէկ ծայրէն միւսը, զարմացումով եւ հիացումով: Այդ պահէն մենք մեզ զգացինք ազատ, անկախ եւ ամբիկեան օրէնքներու պաշտպանութեան տակ հաւասար:


ՅՕ.ԻԵԼՈՒՍ.Ծ

-

ՈԳԵԿՈԶՈՒՄՆԵՐ



Յ. Տէր Յովհաննէսեան՝ վկայեալ Լեսինկի Համալսարանի
երկրագործական ճիւղի մէջ





Յ. Տէր Յովհաննէսեան իր ընտանիքով
Տիկինը՝ Մարիամ (ծն. Իսրայէլեան), գաւակնորդ՝ Անահիտ, Հէլէն, Յովհաննէս

ՀԱՅՐԵՆԻ ԳԻԻՂ

Հայրենի՛ գիւղ, յիշատա՛կ ես՝
Մօրըս կողմէ ինձ պատմըւած .
Մե՛րթ ժըպիտ ես, մե՛րթ ծաղիկ ես,
Ու մերթ երազ՝ թեւեր առած :

Հայրենի՛ գիւղ, դուն կարօ՛տ ես՝
Հօրըս աչքին պէս միշտ արթուն .
Ծովի նըման կը խըռովես
Սիրտը մարդուն, հոգի՛ն Հայուն :

Գի՛ւղ իմ անմեռ, դուն երա՛ղ ես
Ծաղիկի պէս բացուած՝ ժըպտուն .
Ինձի՛ կու դաս տեսիլքի պէս,
Ակունքներէն հին դարերուն :

Երբ որ ծաղի արեւն առտուն
Եւ շողերով քեզի հասնի,
Շունչ ու հողիս չե՞ս զդար դուն,
Յանկալի՛դ իմ, Գիւղ հայրենի :

ՅՈՎՀ. ԳԱՏՈՒՆԻ

Մ Օ Ր Ս

Մայր, այս երեկոյ ինձ արցունքիդ մի՛ կապեր,
Մի՛ ինձ կանչեր հողւոյս կարօտն առնելու
Ոչ ալ գլխիդ սիւզի շղարչը նետէ... :
Մայր, սիրտս սիրտիդ սուրբ կարօտին մի՛ կապեր... :
Կը յիշե՞ս, Մայր, լերան վրայ մեր վանքին,
Սեւ գիշեր մը թեւերդ երկինք կարկառած,
«Տէ՛ր, հեկեկացիր, տղաս լոյսին տար դէպի...
Տէ՛ր, աղատէ դոյն ջարդերէն...» ու յանձնեցիր խաւարին... :
Մի՛ լար, Մայր իմ, մի՛ հեծեծեր, մի՛ պատմեր,
Թէ այդ գիշեր սեւ մազերըդ ձիւն դարձան,
Թէ այնուհետ արիւն լացիր, մաշեցար,
Ու կարօտիկէ՞ղ՝ վերադարձիս յուսացիր... :
Խնայէ՛, Մայր, անձեռք թեւերդ վեր մ'առնեք
Փսիսալու թէ ճանկռելով չկրցար
Փոս մը բանալ ու ափ մը հող վրան տալ
Նշխարներուն քոյրերուս, որոնք անթաղ կ'երկննան... կը մնան :
Պաշտելի Մայր, այս երեկոյ վեր, վեր առ
Ջարդուած թեւերդ, օրհնէ՛ դաւիթը նոր ճամբան...
Վառէ՛ հողիս վրէժի սուրբ կրակով...
Ու ալ վերադարձիս մի՛ յուսար...

1918

ՂԱՐԻ ՊԻՆ

Ղարիս կս ընկեր, անտուն անօճախ,
Գլուխդ ափիդ մէջ աչքերդ սեւեռած՝
Դուն ի՞նչ կ'երազես, ի՞նչ կ'որոնես դուն... :
— Դաշտերն հայրենի, երկիրը Հայուն...

Արտասուքը քեզ սիրտիանք չի տար, .
Սին երազներով մ'ընկճուիր, մի՛ լար... :
Կեանքը դաժան է, մարդիկը վատթար,
Հողւոյդ մէջ մեծցուր վրէժը արդար :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՅՐԵՆԻՔԻ Ս

Գարուն է այստեղ, ծաղիկներն դուննդ, թուփերը կանանչ, երգերը ցնծուն, հողիներն ուրախ, փթթում է այստեղ... :

Արև է այստեղ, ծիծաղ բերկրանք. երազ անըջանք, խնճոյք աւետիք, տօն ու ցնծութիւն, երգեր ու պարեր կը թնդան անվերջ... :

Մանուկն այստեղ, փնջիկ մը ծաղիկի իր ձեռքին ունի, եւ ժպտո մ'անուշիկ իր շրթին կը հանդէի. ծնողքն անդին աշխարհ բերկրանքի... :

Աղջիկն այստեղ նազանքն է հագեր, կուրծքը դարդարեր ու միշտ սնդսրուած՝ տենչանքն է ապրեր վայելքով մեծցած :

Պատշգամն այստեղ, լեցուած ծաղիկով երփներանգ բուրոտ, սիրտդ կը դիւթեն ու կարծես ըլլալ դաշտերն իշխանեան, ուր կոյս մ'հոլանի փթթումով ժպտի... :

Գազաքն այստեղ լեցուն է եռուն, շուայտն ու կծծին իրար կը մրցին խաբկանքն աճուրդի հանած սողալէն... :

Տօնը հաշտութեան կը տօնուի այստեղ, թունդ ելած հողւով հրթիռներ թռչտող, զոյնզոյն թիւով վեր կը սուրան կապոյտին մէջէն. պէսպէս դրօշներ աստղեր հմայիչ, մսլեղնոտ յոյզով կը ծափահարուին : Ու կեանքն է ուրախ, զոյքեր թեւ թեւի հեւքոտ տարփալի իրար կ'ողջունեն... :

Սպասող սրտեր կարօտ դինուորին վերադարձն կ'անձկան... :

Կ'անցնին տօնական, կ'անցնին պերճանքով մարդիկը. բոլոր տօներու տօնը փառքով տօնելու... :

Ես ինչո՞ւ կ'երթամ, ի՞նչ յիշատակներ ապրելու համար... Երբ սիրտս տխուր դամբան մ'է լռիկ սեւ ապրումներու կարմիր օրերէն... :

Երբ այստեղ սով է, մարդիկն արցունքոտ, որբերը բսկոտ Հայաստան սուրբ իր յաղթութեան մէջ յոյսի է կարօտ :

Ի՞նչ յիշատակներ ապրելու կ'երթամ... :

ԵՐՆԷ՛Կ

Երնէ՛կ քեզի, արեւ բարի,
Արար աշխարհ կ'ընես շրջան,
Ամէն այգի կ'երթաս այցի,
Փլատակուած հայրենի տան:

Դուն կը շոյես, կը զգուես դուն,
Յօղ ու եղեամ, ծաղիկ շուշան,
Ու կը ծծես կեանք ու աւիւն,
Աղբիւրներէն անմահական...:

Արեւ հօր... Արեւ բարի,
Իցիւ ըլլամ շող մը միայն
Քու շողերէք բաղմապիսի
Երթամ ըլլալ մատաղ անուան,
Գիւղին Դատմայ, Հայրենի տան...:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՏՈՒՆԻ

ԱՆՈՐ՝ ՈՐ ԱՆՆ ԶԿԱՅ

Դուն զարդն էիր ու բաղձանքը անապակ,
Մտած՝ ունեքին երազական ու բեհեզ...
Ժպիտդ՝ վարդ, աչքերդ սիրոյ նմանակ
Ծաղիկ մ'էիր բուրումնալի գունադեղ...:

Կ'ըսուէր ինծի. «Մի՛ արտասուեր, մի՛ սգար...
Գարուն կու վայ, նոր ծաղիկներ կը բացուին,
Ոչինչ կայ հոս յաւիտեան ու անվթար.
Հի՛նն ու նորը անհունին մէջ կը լուծուին...»:

Երազ մ'եղաւ ու շիջեցաւ, զերդ ասուպ,
Կեանքի կապոյտ հորիզոնէն հապշտապ...
Եթերին մէջ սահայն ծիր մը թողուց նէ,
Զոր կ'արիւնէ սիրտս հուրով կը վառէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Ը

Դուռն զիս չե՞ս ճանչնար, զիւղ իմ... պանդուխտ դաւակիւ եմ.
արար աշխարհ թափառեցայ, կարօտդ հողիւս մէջ. ի՛նչ ծովեր,
ի՛նչ անապատներ, հէքեաթային ի՛նչ արիւններու տակ օրերս
համբեցի... ու ահա, յոգնարեկ ու տառապած՝ քեզի եկայ նորէն... :
Դուռն զիս իմ կարօտովս չե՞ս ճանչնար... :

Գիտեմ, մաղերս ճերմըկած են, ոտքերս քարուտքներէն
տատասկնեքէն վիրաւոր ու արիւնոտ, աչքերս կուրցած, հասակս
տարիներու բեռան եւ տառապանքի տակ կըքած... բայց զիւղ իմ,
զիւղ իմ, դուռն զիս իմ հողւովս չե՞ս ճանչնար... :

Նստայ Մանկալի, Սէրայի ժայռերուն վրայ, ալիսառն մաղերս
յանձնեցի քու զովարար զեփիւռին ու ծուատուած թեղանիքներովս
սրբեցի ճակտիս կուտակուած տանջանքի քրտինքը ու հառաչեցի... :
Գիւղ իմ, զիւղ իմ, դուռն զիս իմ հառաչանքովս չե՞ս ճանչնար... :

Նորէն վեր կեցայ շունչս բռնած ու ցուպիս կռթնած, հեւանքով
Սուրբ Յովհաննէսիդ ակունքը հասայ. լուացի աչքերս պղտալի,
ձեռքերս պարտասուն, ոտքերս քարխոցուած... ըսէ՛, զիւղ իմ,
դուռն զիս իմ պապակովս չե՞ս ճանչնար... :

Սիրտս ափիս մէջ առած՝ դէպի բերդը բարձրացայ... տեսնելու
կանանչ ոսկի դաշտերդ, ծոցորուած այգիներդ պտղի, ցորենի
դաշտերդ ոսկի... : Ի՛նչ համատարած ամայութիւն... ծառերդ
զլիսատուած, դաշտերդ խոտան, այգիներդ աւեր, հերկերդ անցան,
կարմիր են հագեր... ու մեր բամպակի արտերուն վրայ ճերմկցած
դանկեր անթաղ կը մնան... : Ա՛հ... աւեր, աւեր զիւղն իմ,
քու դարիս դաւկիդ աչքերէն տմոյն արիւն կը հոսի...
Գիւղն իմ սիրական, արիւն արցունքովս դուռն զիս չե՞ս ճանչնար... :

29 նոյ. 1927

ՅՈՎՀ. ԴԱՏՈՒՆԻ

Գ Ի Ի Ղ Ի Ս

Գարուն եկաւ, եկաւ ծիծեռն հետուէն,
Ծիւ ու ծաղիկ, կանանչ խոտեր խատուտիկ
Բոյրով թոյրով կը լեցընեն աւասիկ
Լայն հորիզոնն: Ու չգիտեմ թէ ի՞նչ է
— Երբք քաջերդ. բոյրը խունկ է մի դուցէ...:
Էն գարուններ որ ապրեցայ գիւղիս մէջ,
Սէր ու ժրպիտ, կեանք ու խայտանք կը ծաղկէր
Ծաղկեփունջեր ճահել ջիւան աղջիկներ...
Այս աշխարհը ես չգիտեմ թէ անչէջ
Հուր ու զուրում տանջանք մ'է մեզ միշտ անչէջ:

Բնութիւնը գողտրիկ գունեղ վառվռուն.
Ինքնիր մէջ կը պճնուի, կը շքուի.
Թռչնիկները կ'ալախօսեն սիրալի.
Ո՛հ, սիրտս տխուր չի բերկրիւր ու թաքուն,
Կեղերջ մ'ունի վերն ասաւոր Աստուծուն:

Վերան աւեր, մոխիր կրակէ բարէ.
Տունս հայրենի, գիւղս անուշիկ անկենդան
Արեան ծով մ'է. խեղճ տառապած Հայաստան.
Որ գութ երբեք երբեք չեկաւ մի բոպէ.
Աշխարհն դահիճ մ'եղաւ ըսենք մի դուցէ:

Սուրբ Յովհաննէս պղտոր պղտոր կը հոսի.
Աչքէն արիւն, սրտէն հառաչ թափելէն.
Բերդն հինաւուրց սուգ է հազեր երկնքէն,
Կոյս օրերուն ցաւը կու լայ սրտալի,
Եւ կը պատմէ անցած փառքը Դատեմի:

Հեռու, հեռու վայելք, ժպիտ ու բերկրանք,
Հեռու երազ, հեռու ցնծերդ տուրք դարնան.
Ո՛հ, օտար էք դուք, իմս չէք յաւիտեան,
Դուք չէք կրնար ու պիտի չըտաք ինձի կեանք.
Ինձի տուէք իմ գիւղն անոյշ, սիրալանք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Մ Ո Ւ Ր Ա Տ

Կեցիր անցորդ, նայիր այնտեղ
Քաջը սրառկած կը հանդէի.
Ինկաւ հսկան կռիւին ահեղ
Դիմադրած հազարի:

Սերաստացի կըտրիճ Մուրատ
Հայոց հերոս անմոռաց.
Գազափարին իւր հարազատ,
Կտրիճ մարտիկն է քնած:

Երզնկայէն ու Սըլաղէն,
Հայաստանէն ու Հայերէն
Յիշատակին վեհ մարտիկին
Վիշտ ու մորմոք պասք բերին:

Հրեղէն ձի Բեդասն անդին
Կը վրնջէ, կ'արտասուէ.
Միասին կուրցան, դիտակն աչքին,
Սղաւոր եւ լալադին:

Ոտքի՛ ել, ո՛վ քաջ Մուրատ,
Դիտէ շուրջդ բուրաստան.
Սուրբ արիւնովդ ծլած հատ հատ
Ծաղկաստան մ'է Հայաստան:

Մուրատ, Մուրատ, մեր սիրտ, մեր ճան,
Հայոց հերոսն անմոռաց,
Փառք ու սլարծանք Հայ ազգին,
Բու աննկուն իտէալին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՀՕՐՍ ԵՐԿԻՐԸ

Հօրըս զլխուն ծաղող արեւն ամէն զիշեր,
Կարմիր, բոսոր արիւններու մէջ կը թաղուէր.
Արիւններ որ պարարէին երկիրը իր,
Ու հոսէին յանուն լոյսի, իրաւունքի:

Տըղաքները որ կ'ապրէին մեր երկրին մէջ,
Տարեց էին հասակներէն իրենց ամէն.
Երգերն անոնց թաթաւ էին յոյսերով մեծ,
Յոյսեր, որոնք կը շողային թաց աչերէն:

Յոյսն որ շողար հօրս երգերէն,
Կը փալիլայ երգերուս մէջ, այստեղ, հիմա.
Շատ բան տեսանք, ալ չենք վախնար, —
Տառապանքը ոյժ կը բերէ հըրաշափառ:

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Թրգմ. անգլերէնէ)

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻՆ

Հարաւային Ֆրանսայի օդը մեղմ է աշունին, բայց թեթեւ հով մը կայ Մարտէյլի մէջ, քաղաքական փոթորիկ Փրանսական հանրային կեանքին մէջ: Իմ սիրտս ալ փոթորկած է: Տարիներ առաջ հայրենի զիւզս թողուցած սիրելիներ եւ կամ անոնց զաւակները կը տեսնեմ: Ու ի՛նչ պատմութիւն, ի՛նչ արհաւիրք, ի՛նչ կարօտ կը յուզեն հոգիս: Նոր կեանք եւ նոր յիշողութիւն, նոր կարօտ եւ նոր յուզում՝ վրէժի ցասումով, հեղեղատի նման կը լեցուին սրտիս, մտածումիս եւ հոգիիս մէջ: Եթէ կ'ուզէք խռով եմ աշխարհին հետ: Երազի պէս եւ այս բաները. իրաւ Յովսէօփն է ասիկա, Պօղոսը, Աբրահամը, Թուրիկ պաճիօն եւ Եղսօ պաճիօն... Թոռներով, որ պիտի խաղային մեր զիւղի փողոցներուն մէջ...

— Վարդգէ՛ս, այսօր զիս Հայրիկիդ կը տանի՞ս:

— Ի հարկէ, երբ որ կ'ուզես:

— Ո՛հ, եթէ միայն կարենայի զինքը տեսնել՝ ինչպէս տեսած էի Կովկասի մէջ, զէնքի ու պայքարի օրերուն. եթէ միայն կարենայի տեսնել զինքը՝ ինչպէս տեսած էի, երբ կը խօսէր Հայոց դօրքին Աւարայրի ուխտով, Սարտարապատի կրակով, իր հմայիչ լեզուով, իր պերճաշուք եւ առինքնող լեզուով: Վարդգէ՛ս, սիրելի Վարդգէ՛ս, եթէ միայն կարենայի տեսնել զինքը իր սուգի գեղեցկութեամբ, իր զրչի փառքով, իր լեզուի գեղօնով եւ երազներու հմայիչ կախարդական հրապոյրով, — պիտի ըսէի՝ վաղենք հիմա, տեսնելու մեր օրերու աստուածատուր տրիրունը:

* * *

Տիկին Ահարոնեան կ'ընդունի մեզ: Կը հրաւիրէ մէկ քանի ըսպէ նստիլ ու ինք ներս կ'անցնի մեծ Հիւանդին քով:

Ներսն ենք, իր մահիճին քով:

— Ասիկա իմ ընկերս է, Հայրիկ:

Կը ծռիմ, կը համբուրեմ ձեռքը: Իր մէկ թեւով կը գրկէ վիզս, կը համբուրէ ճակատս, երեսս՝ կարօտով ու ջերմութեամբ, կարծես իմ միջոցով համբուրելու իմ բոլոր ընկերներս, որ կ'ուզէին զինք

տեսնել, սակայն չեն կրնար: Ես կը համբուրեմ, անոնց բոլորին տեղ, կը պահեմ ձեռքը ձեռքերուս մէջ...:

Վարդգէսը տեղաւորուած է իր մահիճին մօտ: Կը բանայ իր զըրքերէն մէկը եւ կը կարդայ կամաց-կամաց, հատ հատ ու ինքը, Հայոց վշտի, փառքի ու ռազմի Նրդիչը համակ ուշադրութիւն դարձած, արթուն կը հետեւի իր զաւկի ընթերցումին:

Ահա՛ ժընկեւ է ինքը, Քրիստափորի մօտ, «Ռոշակ»ի խմբագրատան մէջ. առաջին պատմուածքը կ'երևի «Ռոշակ»ի մէջ: Ու ինքը՝ ձախ ձեռքը երկարած գէպի բացուած դիրքը, աչք ու ուշադրութիւն դարձած, կ'ուզէ խօսիլ, կ'ուզէ կանչել. եւ ահա բառը կու դայ. ձ-ի-չ-տ է է է...: Ու կը նայի ինծի, կը նայի Վարդգէսին ու կը կրկնէ ձ-ի-չ-տ է է:

Վարդգէսը՝ մեղմիւ եւ հանդարտ, իր յուզումը աչքերուն եւ կրծքին տակ բանտած, կը շարունակէ նորէն Քրիստափորը եւ այս անգամ քիչ մը աւելի ուժով ու քիչ մը աւելի անհանդիստ կը կանչէ. Այո՛, այո՛, այո՛...:

Այս պատկերները մտքին մէջ ու աչքերուն մէջ կարօտ՝ կը նայի մեզի, կը նայի իր զաւկին եւ նոյն ձախ ձեռքը քիչ վեր բարձրացուցած, հառաչանքի եւ կրակի շեշտով մը կը կանչէ. Վա՛յ... վա՛յ... վա՛յ...:

Աչքերս կը լեցուին: Սիրտս կը զարնէ: Խ՛նչպէս պիտի ուզէի որ սիրտս իրեն տայի, լեղուս եւ մատներս իրեն տայի, որպէսզի հօ-զիին փոթորիկը կրակէ խօսքերով դուրս թափէր եւ աստուածընտիր բառերով դրէր Հայոց վաղուան փառքի մարդարէութիւնը:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ...: Կարծես Արարատը կը հալի իր կուրծքին տակ ու լաւայի պէս դուրս կը թափի, որպէս սրտի կարօտ, որպէս անհատանելի տենչանք:

Կեցած եմ իր քովը, բայց կարծես հող չեմ, այլ հայրենի աշխարհը, ուր ինք կեցած է պատշգամի վրայ ու իր բարի, իր հաւատաւոր, իր աղուոր աչքերով կը նայի Հայոց բանակին, որ կ'անցնի ողետոր ո՛չ միայն յաղթանակի, այլ անմահութեան երազով... Ունկընդեր իր կանչին, իր երգին, իր խօսքին ու խռովքին:

Կ'ըսեն թէ ալ չես նստած սուրբի պէս անկողնիդ մէջ... Կ'ըսեն թէ օտար երկրի մէջ, սիրելիներու աչքին առջեւ բաժնուեցար այս կեանքէն... Կ'ըսեն թէ քու մեծ հայու սիրտդ չի բարախիր այլեւս...:

Սիրտս ափիս մէջ, հազարաւոր քեզ սիրողներուն հետ, կը կըրկնեմ քու վերջին խօսքդ.

«... Վա՛յ... վա՛յ... վա՛յ...»:

«Հայրեճիք», 1948 Մայիս 16

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍԻՐԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

11

Համաստեղը ճանջցայ Մեղիբէի Կեդրոնական Վարժարանին մէջ, ուր դասընկեր էր ինծի հայրենակից եւ ընկեր Արտաշէս Վարժապետեանի: Յաջորդ տարին շրջանաւարտ եղաւ եւ դնաց ուսուցչութեան եւ ա՛լ չտեսայ ես այս Փերչէնճցի անդուզական տղան, մինչեւ որ ջարդերէն, կռիւններէն ազատուած՝ տարիներ վերջ 1920ին հանդիպեցանք Պոսթըն քաղաքին մէջ: Չէի ճանչնար զինք իր նոր անունով, բայց երբ «Հայրենիք» ամսագիրը սկսաւ հրատարակել իր դործերը, յափշտակութեամբ կարդացի զինքը... Աչքերուն մէջ արիւն կար, սրտին մէջ արցունք... Ու հողին կարօտն ունէր Ծոփաց աշխարհի քարերուն, լեռներուն, ձորերուն, դաշտերուն, ախոռին, մարադին, աշխատանքի գիւղացիութեան, տաղանդաւոր ու խոստմնալից երիտասարդութեան, որ աչքերուս առջեւ փշրուեցան, քամիին տրուեցան... ասա ասոնք բոլորը մէկիկ մէկիկ, կենդանի ու իրական կեանք ու սրտիկեր կ'առնէին, Համաստեղի սքանչելի դրիչով: Համաստեղի ըստեղծագործ հանճարի միջոցով կը վերապրիմ անմիջական անցեալը, որ մերն էր եւ ալ պիտի չըլլայ, կար ու այլեւս ընդմիշտ կորսուած է. իր միջոցով յաւիտենութեան կը յանձնուէր, անջնջելի մնալու եւ դալու սերունդներուն փոխանցուելու իրաւունքով: Յետոյ, Պոսթընի շրջանին մէջ, ուր ծաղկեցաւ, ուճացաւ «Հայրենիք»ի ընտանիքին եւ շրջապատին մէջ, մեծցաւ ու ընկերներու դուրդուրանքին առարկան դարձաւ այս սքանչելի եւ աննման դրաղէտ բանաստեղծը:

Մենք ալ շատ անգամ առիթը ունեցանք վայելելու զինքը: Հըպարտացանք իրմով: Համաստեղը եղաւ սիրելի բարեկամ մը, թանկագին ընկեր մը, ճշմարիտ հայ մը, հայ երիտասարդութեան իրաւիան բարեկամ մը, Հ. Յ. Դանաւիցութեան արժէքաւոր դադափարախօս մը որ իր ուրախութիւնները, քեօք բաժնեց իր ընկերներուն հետ, բայց իր լացերը, իր ցաւերն ու վիշտերը՝ պահեց իրեն: Արցունքի մէջ ալ՝ միշտ իրեն յատուկ ժպիտով մը կ'անուշնար եւ ուրախութեան կամ տրտմութեան ընթացքին երդով մը, կատակով մը եւ սրտրաց խօսքով մը կը քաղցրացնէր իր շրջապատը:

Ուժով էր եւ հաստատ իր համոզումներուն եւ դադափարին մէջ: — «Ես սրբատաշ քարերով քու ձիերուդ ախոռ չեմ չիներ» կը գոռայ

ուստան, իր Սպլիտակ ձիաւորին մէջ, — այսպէս իր կեանքի ընթացքին սիրեց մարդիկը, եւ անոնց մէջ միայն լաւութիւնը, բարութիւնը տեսաւ. ատելութիւնը չճանչցաւ ու մեծ հայու մը պէս կառչեցաւ՝ իր «սրբատաշ քարերու» ամբողջեան, նուիրումով ու սրտապին՝ սըրտէն արիւն եւ աչքերէն լոյս կաթեցուց, հայ դրակահնութեան միջոցով դեղեցկացնելու Հայոց մշակոյթը, որուն անխարդախ եւ անկաշառ Քուրմը մնաց մինչեւ իր վերջին շունչը «փառքը» եւ «պատիւը» վերադարձնելով զինքը մեծարող եւ ստեղծող հայ ժողովուրդին:

Համաստեղ՝ հայ գիւղացի փերչէնցի մնաց իր հողիով, իր բարի ժպիտով, իր դրացնութեամբ ու ընկերակցութեամբ. բայց գիւղագիր չէ անիկա, այլ աստուածային շնորհքով օժտուած իսկական հայ դրաղէս մը, որուն շունչին եւ դրչին ծայրէն կը բուրէ ամբողջական Հայաստանը իր արեւով, իր քրտինքով, ակօսներով, ցանքի, աղօթքի սրբազան կրքով: Անոր հայրենաշունչ խօսքին մէջ Մաստառի բարձունքներու: մաքրամաքուր ձիւնը կը շողայ կամ գիւղին տանիքին վրայ հասող շանը սպառնախոն ձայնը կ'անցնի: Մտերին առջեւ կապուած ցուլին շողիքը կը պատկերուի եւ կամ հայ մարդու «առաջին սիրոյն» մորմոքը կը փշաքաղուի, տանը այծին կորուստի կսկիծը եւ կամ հողիներ խռովող անսպաստին գանկին խոհական հեղնանքը ու մեծ վիշտը կը պատկերաւորուի եւ կամ լեռներու վրայ կապոյտ յուլունքով «Սպլիտակ ձիաւորի» վսեմագոյն թռիչքը կը տեսնէք ի խնդր բաղձանքներու իրականացման, եւ որուն ձգտումները եւ երազները այնքան դողտրիկ եւ վարպետի վրձինով զմայլելի գեղեցկութեամբ տուած է Համաստեղը:

Համաստեղ գիւղացի այն առաքելատիպ վարպետն է, որ նոր հորիզոններ կը կոխկուտէ եւ յաւիտեմութիւնը իր ետեւէն կը վազէ:

Համաստեղին սիրտը կրակ է ու բորբոք եւ սակայն իր դրիչն ու լեզուն Սեւանայ լճին պէս խաղաղ, երսողական ու համեստ է, ինչպէս բոլոր բարի ու ազնուական մարդոցը:

Համաստեղ կուսակցական է, եւ խորապէս Հայ, իր սիրտը համապարփակ է, իր օճախը, իր դուռը, իր սեղանը բաց է ու ամէն ճշմարիտ հայ մարդ իր դրացին է, իր բարեկամը. որովհետեւ ինքը ամբողջական Հայն է: Ու իր տունը — «հայի օճախ է»:

Համաստեղ Ամերիկայի մէջ մեծցաւ մտաւորապէս, զարգացաւ ու գեղեցկացաւ, Ամերիկայի մէջ՝ սրտին մէջ հայրենիքի կարօտը. բայց սիրեց Ամերիկան իր աչքին լոյսին պէս. օտար չլուաց հոս: Այս երկրին կեանքին, ընկերային պայքարին եւ աշխատաւոր բողոքութիւններու յաջողութիւններով ուղեւորուեցաւ, ամբողջ կեանքին մէջ աշխատեցաւ եւ դնահատեց այն առաւելութիւնները, որ վայելեց այդ սրբազան աշխատանքին մէջ:

Սիրեց Հայաստանը իր կեանքին չափ ու կարօտցած՝ վախով սպասեց այն գեղեցիկ օրուան, որ պիտի ողջագործուի հայրենիքի մէջ նոյն կրակով ու սիրով տոգորուած իր դրչի եղբայրներուն հետ, որոնց այնքան սիրով ու գուրգուրանքով կապուած կը զգար ինքզինք: Այդ կարօտը ափսոս, չիրականացաւ եւ մնաց «աննուաճ երազ»:

Իր հողին կը սաւառնի ամէն տան վրայ, ուր հայ մը կ'ապրի, եւ իր յիշատակը միշտ վառ պիտի մնայ սերունդէ սերունդ, անմահութեան փառապսակով եւ ինքը պիտի ժպտի մեղի ամէն անգամ որ քար մը կ'աւելցուի Հայոց մշակոյթի սրբազան տաճարին:

Սիւսանթոն պիտի ըսէր.— Ու այս գիշեր հսկումի մէջ եմ որ անպայման աշխարհ մը լոյս ծագի մեր երկրին վրայ...:

Սիրելի Համաստե՛ղ, կարմիր վարդ մը ձեզի գաղաղիք վրայ՝ հայ աշխարհի բոլոր նահատակներուն օրհնութիւնը վրան:

«Հայրենիք», 1963 Յունուար 13

ԸՆԿ. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՍԻՐԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ընկեր Ռուբեն Դարբինեանին առաջին անգամ ծանօթացայ 1923ին Պոսթընի մէջ: 45 երկար տարիներ ուրեմն, դործակցած եւ աշխատած եմ իր հետ ու մօտէն ճանչցած մարդը, դործիչը, հայը եւ մտաւորական առաջնորդը իր մէջ: Դարբինեան կը պատկանի մարդոց այն փառանգին, որ կը հաւատայ, թէ աշխատաւոր ժողովուրդին իրաւունքները միշտ աւելի առաջ եկած են քան մասնաւորներունը: Մշակոյթի մարդին մէջ կը պատկանէր հայ մտաւորականութեան բացառիկ ու անկաշառ այն դէմքերուն, որ իր ժողովուրդին ծառայութիւնը կը նկատէր մարդկային մեծ առաքինութիւն: Այս օրերս, դեմբարտար չես տեսներ մարդիկ Դարբինեանի պէս, որոնց ամբողջական կեանքը եղաւ նուիրում իր ժողովուրդին եւ համայն մարդկութեան:

Մասնադէտ էր ռուսական դործերուն եւ շատ մը ծանօթ ու անծանօթ մարդիկ եւ օտար քաղաքական անձեր կը դիմէին իր կարծիքին զանազան խնդիրներու առիթով եւ կ'օգտուէին անոր խոր հմտութենէն: Իրբեւ աղատատեն՝ կը սիրէր Ամերիկան:

Մեծ կապեր ունէր ամերիկեան եւ ռուսական քաղաքական դործիչներու հետ, որոնք կը յարգէին իր կարծիքները ու ինքն ալ կարելի չափով կ'օգտագործէր այդ կապերը հայանպատ քարոզութեան համար:

Գարտաշեանի ջերմ պաշտպաններէն մէկն էր, մանաւանդ Լոզանի դաշնագրին դէմ մղուած պայքարին մէջ, եւ միշտ ալ մնաց առաջաւոր խորհրդատուն ու դործակցողը, իտէալ ղեկավարը «Հայաստանի Անկախութեան Կոմիտէին»:

Մեր ներքին կեանքին մէջ, յամառ ու զօրեղ հակառակորդն էր համայնավարութեան, մանաւանդ սթալինեան շրջանի ղեկավարութեան եւ շարունակ արթուն պահեց Հայութիւնը, անորոչ, տարտամ սայթաքումներու դէմ:

Կռուեցաւ հակառակորդներու դէմ, երբ անոնք Դաշնակցութիւնը կը մեղադրէին թէ «սուլէակեան» է. կռուեցաւ անոնց դէմ, երբ Դաշնակցութիւնը մեղադրեցին «նացիականութեամբ»:

Կռուեցաւ՝ երբ բաժնեցին Եկեղեցին, երբ հալածեցին դրօշակը, երբ արհամարհեցին ազգային կոթողական պայքարներ՝ ինչպիսին են Սարտարապատը, Պաշ Արարանը, Ղարաքիլիսէն: Պայքարեցաւ բո-

լոր այն ուժերուն դէմ, որոնք կը մերժէին տկարացնել Հ. Յ. Դաշնակցութիւնը: Որովհետեւ ամբողջ հողիով, մտածումով, կարողականութեամբ կը հաւատար Ազգային շահերու պաշտպանութեան կոչուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան:

Ընկ. Ռ. Դարբինեան, բացի մտաւորական, հասարակական դործէն, հռչակաւոր խմբադրասպետ էր, եւ եթէ վերապրեցաւ համայնավարական հալածանքներէն, այդ կը պարտի իր յանդուժութեան եւ քաջութեան:

Լաւ ընկեր մըն էր, վստահելի եւ գուրգուրացող: Ամերիկայի իր ընկերները նոյնիսկ ցաւցնելու դնով, կ'ուզէր օգտակար ըլլալ արտասահմանի մէջ նետուած տարագիր մտաւորականութեան, Խատխեսանէն մինչեւ Խոնդկարեան, վաղըէն Շուշանեանէն մինչեւ Համաստեղ, Ռուբէնէն մինչեւ Զամալեան, վայելցին իր անխառն բարեկամութիւնը եւ անոնք ալ լեցուցին մեր նորագոյն դրականութեան էջերը Հայոց պատմութեան, ողբական ու հոգեկան զեղեցիկ թուիչքներով:

Իր դործին մէջ անձնական տեսակէտ չունէր. կ'առաջնորդուէր ընդհանուր - համահայկական խնդիրներով եւ անոնց վերարբմամբ իր անողք - անաչառ գատողութիւնները կը բխէին ամէնէն առաջ ժողովուրդի ընդհանուր շահերէն եւ կուսակցական տեսակէտներէն:

Տարիներու ընթացքին, տեսած եմ իր աշխատանքները եւ միշտ ալ յարգած եմ զինքը: Ամերիկայի շրջանի աղագային կեանքը յուզող խնդիրները իր առօրեայ մտածումին առարկայ էին, որովհետեւ կը հաւատար որ Ամերիկահայութեան վերապահուած է սփիւռքի հայութեան վերականգնումի հնարաւորութիւնը եւ մեծ կը նկատէր մեր մամուլին դերը, այն կենսական հարցին շուրջ: Կը պայքարէր դադարաշխարհը մէկ գծի եւ աղագայնական գծի վրայ բերելու նպատակով:

Պայքարեցաւ՝ մեր եկեղեցիներու միասնականութիւնը քանդելու սովետական ճիւղին դէմ, բայց երբ Գարեգին Արք. Յովսէփեան եկաւ Առաջնորդ Ամերիկայի, շատ զիջումներ ըրաւ եկեղեցիներու միասնականութեան նպատակով:

Հիմա, որ այս աշխարհէն մեկնած է ան Փիլիքապէս, եւ իր բարի ընկերական ժպիտը կը պակսի մեզի, կը դաժ խոր կսկիծ մը այն պարապութեան համար, զոր կը թողու իր ետեւ: Ան «վառեցաւ» լոյս տալու համար, եւ ահա ճրագը մարած է եւ իր յիշատակն ու մտքերը նոր արժէք, նոր կերպարանք կը ստանան:

Փառք չի նոտեց ան, բայց փառքը իր ետեւէն վազեց: Ինք յարդանք չպարտադրեց, բայց յարգանքը միշտ ներկայ էր անոր շուրջ: Օրհնեալ ըլլայ անմեռ յիշատակդ, սիրելի Դարբինեան:

ԿԱՐՕՏ Է ՀՈԳԻՍ

1918ի Ապրիլի կեսերուն էր: Նահանջելով հասած էինք Ալեքսանդրապօլ եւ քանի մը օրէն պիտի մեկնէինք Անի աւան, մեր նոր դիրքերը դրաւելու: Քաղաքին մէջ զօրանցք կը կատարուէր. Անդրանիկի հարուածող դունդը կ'անցնէր հրապարակէն ու պարթեւահասակ ծերունազարդ սպարապետը՝ Նազարբէկեանը՝ իր զօրականներով բարեւ կ'առնէր Անդրանիկէն ու օչնական ձիաւորներէն, որոնք կ'երթային անորոշ ուղղութեամբ:

Առաջին անգամն էր որ կը տեսնէի Հայոց Սպարապետը ու երկտասարդ հոգիս կը խայտար՝ որ պարտութեան մէջ իսկ այսքան սքանչելի զօրալար մըն էր մեր գլուխը կեցած. մէկը՝ որուն հրամանին տակ մեռնելու կամքը կը դիւրանար: Անդրանիկ իր ձիուն վրայ կորացած՝ կարծես քիչ մը աւելի ծերացած կ'երեւար ու իր ճակտին կուտակուած ամպերը մթին ու խստաշունչ, կը թռէին աւելի թանձրացած, իր զօրամասը հայրենաշունչ եւ մրրկարոց՝ միաձուլուած կ'եռար իր հերոսական հրամանին տակ:

Իր զինուորներէն իւրաքանչիւրը ընտրուած էր իր կատարած դործերուն պատճառով ու ամէն հայ կը զլար թէ ահա՛ կ'անցնի զօրամաս մը, որ գիտէր արհամարհել մահը եւ կռուի կ'երթար, սովորական մարդանքի մը երթալու նման: Կեցած՝ կը նայիմ վիթխարի Արարատին պէս վեհասպանծ Նազարբէկեանին, ապա՝ առասպելական Անդրանիկին ու կը զգամ թէ Հայոց ճակատագիրը եւ պատմութիւնը պիտի գեղեցկանան ու պիտի լուսաւորուին այս երկու հոգիներուն կատարած ու կատարելիք արի դործերով: Քառասուն տարիներ անցած են այն օրէն: Հոգիս այսօր ալ կարօտ է անոնց անոյշ եւ սքանչելի կերպարանքին ու այն խորհուրդին, որ այս երկու հսկաները կը ներկայացնէին: Քանի՞ ազգեր ազատագրուեցան եւ իրենց հայրենիքը կերտելու դործին լծուեցան: Մե՛նք միայն մնացինք մեր ծանրը ճակատագրին հետ, Սթալինն ու Բերլինն փառաբանող հայրենակիցներու հետ... Երկու տօներ կան Հայոց նորագոյն պատմութեան մէջ, որոնք կը բնորոշեն հայ մարդուն արտաքին ու ներքին դիմադրիծը:

Ք. Գ. Զամբյան

Ապրիլ 24ը եւ Մայիս 28ը: Լացի եւ վառքի օրեր: Երկու օրերն ալ մեղմէ խլած են անհամար դոհեր ու հերոսական նահատակներ, — արժանի մեր լացին, մեր աղօթքին, մեր փառաբանութեան ու խընկարկութեան:

Եթէ հայ ես, ո՞ւր ես այլ օրերուն:

Ապրիլ 24ին կանդնեցուցի՞ր սուգի յուշարձանը, ծունկի եկար եւ աղօթեցի՞ր, հողիդ ու մտածումդ դարձա՞ն դէպի մեր անհամար, անթաղ ու անշիրիմ նահատակները. կատարեցի՞ր ու վերանորոգեցի՞ր ուխտդ — ուրեմն՝ հայ ես:

Այսօր Մայիս 28ն է: Զարդարեցի՞ր կուրծքդ Եռագոյնով եւ անոր գոյներուն մէջ տեսա՞ր Արամի, Անդրանիկի, Նազարբէկեանի եւ Հայոց Աշխարհի արի արանց դմայելի պատկերը եւ կատարեցի՞ր երդումդ — հաւատարիմ մնալ Հայոց Անկախութեան ու Ազատութեան, ամբողջական հայրենիքով — այն ատեն հայ ես ու Հայոց պատմութիւնը իր ընդերքէն սլիտի օրհնէ յաւիտենական հայու ողին՝

Մայիս 28ի ողին:

«Հայրենիք», 1958 Մայիս 29

ՄՕՐՍ ԵՒ ԲՈՂՈՐ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ո՛վ նրուսադէմ, եքէ ես քեզ մտնամ,
քոզ լեզուս քիմքիս փակի... .

Քսանըչորս տարուան բաժանումէ մը ետք, մօրս հանդիպեցայ Պոսթընի Գաղթային դրասենեակին մէջ... Ծունկի եկաւ, իր կտրը-
ռած թեւով դրկեց զիս ու իր առողջ ձեռքը վեր բարձրացուց եւ ա-
զօթեց .

— Փա՛ռք քեզ, Տէր, որ արժանի ըրիր զիս՝ տղաս դունէ մէկ
թեւովդրկելու: Տէր, մի՛ մոռնար բիւրաւոր միւս հայ մայրերը, ու
արժանի ըրէ այս երջանկութեան:

Ամիսներ անցան. չուղեցինք խօսիլ մեր տեսած արիւնի ու տա-
ռապանքի մասին մինչեւ որ օր մը մեր բարի դրացին հարցուց մօրս .

— ԶարիՖ պաճի, ի՞նչպէս կորսնցուցիր թեւը... .

— Հաւաքած էին վերջին մնացորդացը, պատասխանեց մայրս:
Կային 200 հոգիի չափ, քանի մը մարդիկ՝ որ մինչ այդ սղջ պահուած
էին, 15–20 պատանիներ, մնացածը կիներ, հարսեր ու ազջիկներ:
Մերերն ու հիւանդները լեցուցած էին մեր եկեղեցիին բակը:

Կապած էին թովմասենց Մուսելը եւ սարսափելի ծեծած: Կա-
պած էին նաև վարժապետ Կարապետին զոյգ տղաքը ու խոշտան-
պած: Լացի, կսկիծի, սարսափի մէջ էինք ըստրոս ու զիս երկու ժան-
տարմայ եւ երեք ուրիշ թուրքեր եկեղեցիի բակին մէջ մէջերնին ա-
ռած՝ հարուածներ կու տային աչքիս, զլուխիս, ձեռքերուս, ոտքե-
րուս, հայհոյելով ինծի, աղղիս, հաւատքիս եւ զոռաւով. «Կեալու՛ր,
կեալու՛ր տղա՛դ, տղա՛դ կ'ուղենք... Եթէ չյանձնես, մաղերէդ պիտի
կախենք, պիտի մորթուանք, մահը պիտի կանչես, եւ պիտի չթո-
ղունք որ մեռնիս»:

Իր վերջելումին մէջ յուզուած, շարունակեց ան .

— Մուսելը, որուն ակոսները փշրած էին, հազուստները բլրը-
տած, մարմինը խորտակած, իրր թէ ինքնիրեն կը խօսէր, բայց ինծի
կը կանչէր. «ԶարիՖ քոյրի՛կ, ԶարիՖ քոյրի՛կ, զիմացի՛ր, զիմացի՛ր
եւ այս շուներուն մի՛ յանձներ տղադ»: Լացիս ու ցաւիս մէջէն կը

տեսնէի կապուած ու ծեծուած սիրելի Յարութիւնին դէմքը ու կը սարսափէի՝ որ եթէ տղաս հոս ըլլար, անոր ալ մարմինը այսպէս պիտի բոցտէին, աչքերովս պիտի տեսնէի դաւակիս չարչարանքը:

Հողիս մէջ կ'ըսէի. «Թո՛ղ երթայ, թող լեռներուն վրայ մեռնի անծանօթ վայրերու մէջ, մինակ թէ չտեսնեմ ի՛ր մահը, մինակ թէ սիրտս կապուի այն յոյսին, թէ ո՛վ գիտէ, հրաշք կայ ու տղաս թե՛րեւս փրկուի»․ ու այս խորհուրդին եւ մտածումին մէջ, ա՛լ չէի ըզզար, թէ կը դարնեն, կը փշրեն ոսկորներս ու թեւերս կը ջարդեն:

Գիտէի որ կը շնչեմ, բայց շուարած էի թէ ի՞նչ աշխարհի մէջ եմ: Գիտէի որ ահանջիս կը հասնէր նահատակ ու սքանչելի Մուսէի Թովմասեանի ձայնը, որ կ'ըսէր. «Ձարի՛Ք քոյրիկ, մի՛ յանձներ այս շուններուն տղադ, մի՛ յանձներ...»:

Մութը կոխեց: Զղեցին մեզ եկեղեցիի բակին մէջ ու մթուփեան մէջ ես փախայ այդ դժոխքէն ու մեր ազուտը, անուշիկ ձաղուկները տարուեցան Սարուծին եւ քարերով ու սուրերով նահատակութեան: Ես մնայի մէկ թեւով կոտորուած թռչուն, բնակեր, ու հիմա՝ որ կ'առնեմ դաւակիս կարօտը, հիմա՝ որ ազատ երկրի մէջ եմ, հողիս կարօտն ունի մեր հողին, մեր գիւղին, մեր գերեզմանին, մեր եկեղեցիին: Ի՞նչ մեղքս պահեմ, կ'ուզէի որ իմ հօրը գերեզմանին քով ե՛ս ալ ափ մը հայրենի հողով ծածկուէի:

Մայրս որ միշտ բարի ու հանդարտ էր, ինչպէս ինքը կ'ըսէր, կը տառապէր: Արցունքները ցամքած էին: Յուզուած ու խռոված էր գիւղին ու գիւղացիներուն վերջիչումով:

Ի՞նչ կ'ընենք մենք, այսօր, արդեօք կը յարդե՞նք մեր նահատակները․ արդեօք դաս կ'առնենք պատմութենէն, արդեօք կ'անդրադառնանք մեր թշնամիին եւ իր գիււային ծրագիրներուն, թէ մոռցած Հայուն հիւսիսի եւ հարաւի թշնամիները՝ իրարու դէմ կը կռուինք, զիրար կ'ատենք, ուրախացնելով մեր թշնամիները:

Այսօր գոնէ, ազդովին խոնարհինք մեր սիրելի նահատակներու յիշատակին առջեւ, եւ ուխտենք հաւատարմութիւն:

«Հայրենիք», 1958 Ապրիլ 25

ՆԱՄԱԿ ՄԸ ԹՈՌՆԻԿԻՍ՝ ՄԱՐՈՅԻՆ

Թանկագին Թոռնի'կս Մարօ ,

Այսօր , բոլոր Հայերը ո'ւր որ ալ գտնուին , ի'նչ պայմաններու տակ ալ ըլլան , իրենց հողիներուն մէջ թէ հրասպարակով՝ կ'ապրին 50 տարի առաջ Թուրքերու կողմէն կազմակերպուած մեր արդար եւ բարի ժողովուրդին դէմ ցեղասպանութեան տարեգարձի յիշատակը :

Ես յանցաւոր կը դըստ , սիրելի ձագուկ , որ այսքան տարիներ անհետ կորած սիրելի դէմքերու եւ ապրումներու մասին լուռ մնացած եմ եւ ձեզ ու շատ սիրելիներ անհազորդ պահած եմ այդ արհաւիրքի օրերուն կատարուած դործերու ու դէպքերու մասին : Այսօր քեզի կ'ուզեմ պատմել Վեր դիւզի՝ Դատեմի Տէր Գուրդէն քահանայի մասին :

Աչքս բացի որ դիւզի կրտսեր կամ օգնական քահանան էր , իրեն ծուխը ունէր եւ բացի տօնական օրերէն , միւս բոլոր դիւզացիներուն պէս , հողի աշխատանքով կը վաստկէր իր ապրուստը : Առտուն կ'երթար եկեղեցի , կը կենար դասին մէջ եւ մեր ուսուցիչներուն հետ կը մասնակցէր ժամերգութեան , երբ ինքը պատարադիչը չէր : Հոյսակապ ձայն մը ունէր . եւ երբ դարաւոր ու սրբանոյշ շարականները կ'երդէր , կը դըստիւր թէ Հայոց Եկեղեցիի բոլոր հայրապետները , Աստուծոյ առջեւ ծնկաչոք ուխտանա՛յ , ուխտանա՛յ կը փսփսան ու կ'արձագանդեն : Քիչ անգամ պատարադ ընելու պատեհութիւն կը տըրուէր իրեն , իր ծուխին թաղումը , մկրտութիւնը , պսակը կը կատարէր , բայց մէկ օր իր քարոզը լսած չունէինք :

Կ'ըսէին թէ երբ կ'երթայ Հարամիկ , հին պատմական շրջան մը , իր պատերէն մնացած հողերուն վրայ աշխատելու , քահանայի դըլխարկը հանած մէկ կողմ կը դնէ , եւ այնքան շքեղօրէն կ'երդէ դեղձկական ու հայրենական երգեր , որ լեռները լեզու կ'առնեն եւ իր ձայնին արձագանդը կը տանին մինչեւ հեռաւոր դաշտերը աշխատող իր բարի հայրենակիցներուն :

Շատ մարդոց մէջ չէր մտներ , հակառակ իր դիրքին , աւելի մտիկ կ'ընէր քան կը խօսէր . բարի էր եւ ինչպէս մեր ժողովուրդը կ'ըսէ՝ «հաւին քիշա՛» չէր ըսեր . Թուրքն ու Հայը կը նկատէր այդ հողին

զաւակները եւ կ'ըսէր, որ մարդիկ եղբայրաբար ապրին այդ հողերուն վրայ: Զաւակներուն հետ, հակառակ ընդունուած սովորութեան, կը վարուէր եղբայրաբար ու հարազատ էր բոլոր գիւղացիներուն:

Սիրելի Մարօս,

Օր մը կանուխ արթնցանք որ մեր գիւղը պաշարուած է թրքական ոստիկաններով: Ասիկա անհասկնալի էր, մեր երիտասարդները դացած էին պատերազմի դաշտ կռուելու Թուրքիոյ համար: Մեր գիւղը իր եզը, իր հունձքը, իր բաժին աշխատանքը թրքական բանակի յաղթանակին համար հաւատարմօրէն կը կատարէր: Այս ի՞նչ պաշարուած էր կառավարութեան կողմէ...: Բայց ըսի որ պիտի խօսինք մենք մեր սիրելի քահանայի մասին:

— Պաշարուած գիւղացիներու ղեկավարները լեցուցին բանտ եւ ամէն երեկոյ ժամը 11էն վերջ կը ծեծէին... Ես այդ օրերուն սովորաբար աչքի պէտք էր երեւէի, բայց «դպրոցական» ըլլալու՝ զիս ալ տարին բանտ եւ դրին առանձին խուցի մը մէջ ու ամէն երեկոյ սովորական կարգով կու դային կը ծեծէին եւ իմ աղաչանքները՝ «Դուրս տարէ՛ք կախեցէք զիս», լսող չկար, ու ես այնպէս կը մտածէի որ ամբողջ գիւղը արդէն ջարդած վերջացուցած են:

Առաւօտ մը, զիս խուցէս հանելով տարին հարիւրապետին մօտ որ սկսաւ ամէնօրեայի պէս հարցաքննել, եւ երբ նկատեցին որ նոյնն են պատասխաններս եւ տակաւին դասս սերտած չեմ, խելքի չեմ եկած, իրենց ըսածները չեմ հաստատեր, դոռաց մօտակայ ոստիկանին վրայ, ըսելով. «Տա՛ր այս շունը ետ»: Ոստիկանը անտեղեակ, որ ես առանձնացուած բանտարկեալ եմ, տարաւ զիս մարազ մը, ուր գտայ 30ի չափ Դատեմցիներ որոնք սպանուած կը կարծէի...

Անոնց մէջ էր բարձրահասակ, ուժեղ թիկունքով, մօրուքը խրոբիւ, փետուած, վիրաւոր, հազուատները պատառոտած, ոտքերը բոպիկ, արեան շիթեր մատներուն եւ մօրուքին վրայ, բայց անխրոտով եւ տեսակ մը բարութեան ու քաղցր հայրական ցաւոտ ժպիտով, Տէր Դուրդէն քահանան...

Բոլորը թափեցան վրաս, շրջապատեցին, զիս սպաննուած կը կարծէին. անակնկալ երեւումս իրենց անսահման ուրախութիւն պատճառեց: Բոլորն ալ տարիքաւոր, տուն ընտանիք, զաւակներ ունեցող մարդիկ, իրենց մէջ ամէնէն պզտիկն եմ եւ իրենց ցաւը մոռցած՝ կը ցաւին ու կը դուրսդուրան իմ վրաս:

Մէկը միւսին ետեւէն կը ձայնէ. — Վա՛յ քոռնամ, քոռնանք, այս օրե՞րն ալ պիտի տեսնէինք որ քեզ այսպէս «փսոքեն», մենք հոս ըլլանք՞ ու քեզի չկրնանք հասնիլ: Այս բոլո՞ւ մը տղան ի՞նչ ըրաւ որ այս-

պէս կառավարութիւն մը խեղճ տղային ետեւ ինկած է, ի՛նչ է այս տղուն եւ կամ մեր յանցանքը: Մեր տուրքե՞րը չտուելնք, մեր տղաքը պատերազմի դաշտը չեն մեռնիր, մեր ցորենները, դարիները, հարստութիւնները մեր եղներով ու սայլերով չտարբընք, մեղմէ ի՞նչ կ'ուզեն այս «մարդիկը», այս կառավարութիւնը:

Ահա այդ ատեն առջ եկաւ Տէր Գուրդէնը, բարութեամբ, թեւերը տարածեց ուսերուս վրայ, աչքերը դէպի առաստաղ, աւելի միւս բանտարիկալներուն քան թէ ինծի ուղղելով խօսքը.

— Աստուած մեզ փորձութեան է ենթարկեր, հիմա, իր սուրբ Սեղանին առջեւ վկայութեան ենք կանչուելու մեր հաւատարմութիւնը հաստատելու, մեր լեզուին, մեր կրօնին, մեր պապերուն յիշատակին, եւ մեր Յիսուս Քրիստոսին: Աստուծոյ առջեւ իր դաւկին պէս կ'ազօթենք որ այս «բաժակը մեզի խնայէ բայց եթէ Հօրը կամքն է, մենք մեր պապերուն քաջութեանը եւ հաւատարմութեանը արժանի յաջորդները ըլլանք եւ ոչ մէկ ոյժ կամ վախ չկարողանայ մեր հաւատքէն ու համոզումէն խախտել մեզ:

Նկատեցի որ աչքերը լեցուած էին, թերեւս սիրտը կու լար բայց կ'ամչնար արտասուելէ, թերեւս սիրտը քարացեր էր եւ աչքերը արցունք չունէին եւ կամ թերեւս կը զգար թէ ինք հողեւոր հայրն էր այս մարդոց եւ իր օրինակովը պիտի ամբարայդէր դանոնք իրենց հաւատքին մէջ:

Ինծի դառնալով. — Զաւակս, ես քեզ Սարգիսին, Ղուկասին, Ահարոնին պէս կը սիրեմ: Աստուած այս փորձանքը թող մեզմէ հեռու պահէ եւ սակայն երբ նոր նահատակներ կ'ուզէ եւ ապացոյց մեր հաւատարմութեան, թող մեր մարդկային մարմինները տկարութիւն չունենան եւ թող մեր հաւատքով՝ Աստուծոյ Ս. Սեղանին եւ աջակողմեան դասուն արժանի ըլլաք:

Մենք, բանտարկեալ գիւղացիներս, շժմած էինք, այս քահանան երբեք իր կեանքին մէջ քարոզ տուած չէր իր ծուխին եւ ահա բանտին մէջ, մոռցած իր բղբառած կուրծքը, փշրուած ոտքերը, ուռած աչքերը, կտորած ոսկորները, կ'ուզէր ներշնչել մեզի հաւատքի ուժով եւ կ'ուզէր որ մեզմէ ամէն մէկը յաղթեր վախին... Ես դիտեմ որ ինքը յաղթած էր վախին եւ ախոյեան մըն էր Քրիստոսի հաւատքին, Հայու հաւատքին:

Մոռցած էի ինքզինքս, երբ ներս մտաւ ոստիկանը եւ խօսքը ինծի ուղղելով, պոռաց. «Դո՛ւրս եկուր, առջեւս ինկիր, քու խոցդ երթալու համար...»:

Այդ ատեն ես չէի դիտեր, որ այս սիրելի, աղուոր, բարի հայրենակիցներս այլեւս պիտի չտեսնեմ... Ասիկա վերջին բաժանումս

սլիտի ըլլայ իրենցմէ. որովհետեւ շատ ատեն չանցած, բոլորը մէկիկ մէկիկ քշուեցան, հոս ու հոն, ու նահատակուեցան...:

Այսօր, 50 տարի վերջ ուսերուս վրայ կը զզամ իր ազնուական ձեռքին հպումը, աչքերուն մէջ թախծոտ կարօտի վիշտը եւ ականջներուս մէջ կը թրթռայ իր խօսքին ու ձայնին կշռոյթը:

Ա'խ, սիրելի' թոռնիկս, է՞նչ չէի տար անդամ մըն ալ լսելու համար հողեյոյղ խօսքերը Տէր Գուրգէնին, եւ կամ իր հզօր ձայնին արձագանգը բարձրանար աւերակ բայց սիրելի եկեղեցիին կամարներուն տակ, ուր ՚Թռիչք առին մեր սլարմանի հողինները:

«Հայրենիք», 1965 Ապրիլ 22

...

ԷՁ ՄԸ ԲԱՆՏԻ ՕՐԵՐԷՍ

Հաֆիզին՝ մեր զիւղի դահիճին մարադը կ'առաջնորդուիմ, ուր 40է աւելի զիւղի յայտնի մեծաւորներ նստած են իրար մօտ զլուխնին կախ, տխուր ու անխօս: Կ'երթամ կը տեղաւորուիմ Արբահայր Ուլուհոնեանի եղբօր, Կարապետի կողքին: Փսիսուքով մը կը հարցնեմ իրեն, թէ ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըսեն կամ կ'ընեն, ինչո՞ւ կանչած են մեզ հոս:

— Կը տեսնե՞ս դիմացի դուռը, հոն կանչուողը կիսամեռ դուրս կու դայ եւ չեն ձգեր որ իրեն հետ ունէ մէկը խօսի, կը ծեծեն, կը չարչարեն, — դեռ Կարապետը խօսքը չվերջացուցած՝ դուռը կը բացուի... բոլորս կը դառնանք տեսնելու:

Ահա, երեւցաւ. բարձրահասակ, կաղնիի սէս հաստատուն, անվահեր, ճակատը բարձր. բղքտուած հազուստներով, արիւնի շիթեր իր ճակատին, կուրծքին ու հազուստներուն վրայ, թիկնեղ սակայն տառապանքին մէջ վսեմացած, Ամերիկայէն եկող դաշնակցական Պետրոս Անժուրեանը:

Աչքերս հանդիպեցան աչքերուն եւ հողիւս մէջ զլացի թէ կ'ըսէր.

— Ես կրցի քննութիւն տալ եւ յաղթեցի ցաւին — եւ իրապէս աչքիս երեւցած մարդը, կարծես աւելի զեղեցկացած, արիացած, հըւարտ քալուածքով կ'ուզէր ըսել — ինձի՛ հետեւեցէք եւ արցունքով մի՛ տկարանաք...: (Իր միակ զաւակը Արամը, հիմա կը գտնուի Լոս Անճելըս. երանի իմանար և զվար թէ ինչպիսի մարդու մը զաւակն է):

Հազիւ Անժուրեանը անցած էր մարադէն եւ տարուած իր խուցը, ոստիկանը կանչեց Յովհ. Զարիֆինը...

Գիւղին մէջ, մեծ մասամբ զիս կը ճանչնային իմ թանկազին մօրս անունով, մանաւանդ զիւղին թուրքերը: Ես աւելի հանդստացայ երբ զիս այդպէս կանչեցին, մտածելով որ ուրեմն որեւէ մեղադրանք Մեղրէէն կամ Կեղրոնէն չէ, այլ տեղական թուրքերու մատնութիւնով կրած բան մը:

Այդ օրերուն սիրելի Հայկազ Հերոյեանը, որուն համար կ'արժէ էջեր գրել, ինձի տուած էր կարդալու «Առիւծի Ժանիքէն»ը, որ կը բացատրէր թէ ի՞նչ կը սպասէ թրքական բանտին մէջ, յեղափոխական բանտարկեալին: Կարապետ սեղմեց ուսս, ու զլուխը դարձուց

մէկ կողմ: Նկատեցի որ բոլորին աչքերը վրաս էին, թէ այս հուժ տղան, այս «Ջազան» ի՞նչպէս պիտի դիմանայ այս սարսափին:

Ես ալ կը զզայի որ քննութեան օր է ինձի համար. թեթեւ սըր-տով հետեւեցայ ոստիկանին եւ տարուեցայ ներս:

Ոտքի կեցայ սեղանի մը առջեւ, որուն ետեւ նստած էր կեդրո-նը, չեչոտ դէմքով, դազանային կերպարանքով, բարձրահասակ, կո-կիկ հազուած, սուրը մէջքին, անժպիտ ու դաժան նայուածքով հա-րիւրապետ Մուհամմէտ, մէկ կողմը ոստիկանապետ ինչիլ ու միւս կողմը տեղացի թուրք էշրաֆը:

Սովորական հարցումներէ յետոյ, այսինքն՝ անուն, մականուն, տարիք եւայլն, քիչ մը կը խորհրդակցին եւ կը կանչեն ոստիկան մը որ զիս դուրս տանելով կը ձգէ միջանցքի պէս տեղ մը որ և սուրճ պա-տրաստելու համար կը ծառայէր: Մութ՝ բայց մաքուր ու սալայա-տակուած տեղ մըն էր, ուր պէտք էր սպասէի մինչեւ նոր կարգա-դրութիւն:

Գիշերը կը յառաջանար. երբեմն երբեմն կը լսէի ծանօթ անուն-ներու կանչուիլը եւ յետոյ ահաւոր աղաղակներ, զարհուրելի, սար-սառցուցիչ կանչ մը փրկութեան ու յետոյ աղօթքի պէս հառաչանք մը՝ որ Յիսուս, Յիսուս-ով կը վերջանար:

Գիտէի որ կը չարչարէին, բայց մինչ այդ չէի կարծեր որ կը սպաննեն, բայց հիմա զրեթէ համոզուած էի, որ չարչարանքներէն վերջ անպայման կը սպաննեն. այլապէս այդքան տարօրինակ աղա-ղակներէն եւ կանչէն վերջ ի՞նչպէս կը լռէին, ու այլեւս ձայն ու ձուռ չէր հասներ ինձի...

Գիւղս կը մեռնէր հոս. ու ես այս մութ խուցին մէջ ականջալուր եմ անոր մահուան, անկարող սրեւէ բան ընելու այս անարդ աշխար-հէն ու մարդկութենէն ազատելու համար: Բռնուած, բանտուած, կտրուած տունէն, հարազատներու մահուան ականջալուր կը մղկտամ ու անյոյս կը սպասեմ...

Թերեւս ժամը 12ը անց էր, երբ այս մարդանման զազան հարիւ-րապետը ճրագով մը, ոստիկանի մը առաջնորդութեամբ եկաւ խցիկս.

— Իհ, ինչ լաւ է որ կը քնանաս, ուրիշներ կը մեռնին:

— Ձեր կարգադրութեան կը սպասեմ, եթէ պէտք է որ մեռնիմ:

— Լաւ, լաւ. դիտե՞ս թէ քեզ ինչու միւսներէն բաժնեցի:

— Ձեմ դիտեր, բայց կ'ուզէի որ անոնց հետ ըլլամ:

— Լաւ չէ անոնց վիճակը. բայց դուն ալ տղայ մը կ'երեւնաս, մեղք ես. ուզեցի որ քեզ ազատեմ այս վիճակէդ:

— Շնորհակալ եմ որ հասկցած էք որ անմեղ եմ եւ կ'ուզէք օդ-տակար ըլլալ:

— Բայց ձերինները — հայերը եւ թուրքերը — կ'ըսեն որ հոս քո-
միտէի մը քարտուղարը եղած էք եւ այդ քոմիտէի անունները, թուր-
թերը քու եւ Հայկազ Հերոյեանի քովն են, որ 80 մեծ հրացաններ այդ
քոմիտէի անունով կան. ուր պահուած են միայն դուք պիտէք... Ա-
ւելցնեմ, Արարիկիցի եւ Ակնցի մարդիկ հայթայթած են այս դէն-
քերը ձեզի. անոնց անունները կու տաք ինձի, ես ալ այս պիշեր իսկ
ժանտարմայի մը հետ ճամբու կը դնեմ ձեզ՝ կ'երթաք Մեզիբէ եւ
կ'ազատիք այս նեղութիւններէն եւ չարչարանքներէն. Մահմէտը վը-
կայ, ես այս բարիքը պիտի ընեմ Ձեզի...

Կը դարմանայի... այս մարդը զիս երեսայ կը կարծէր, մինչդեռ
12 ժամուան մէջ 12 տարուան հասունութիւն ստացած էի... Դէմքին
կը նայէի եւ սարսափի պէս բան մը կը զգայի, որովհետեւ աւելի
զազանի կը նմանէր քան մարդու, մազերը, աչքերը, քիթը՝ կատուած
չան մը տղաւորութիւնը կը թողէին վրաս. բայց լեզուն մեզմ եւ
բարեկամական կ'ուզէր ցուցնել. ինչո՞ւ:

Անգին, կը դարնէր, կը կոտորէր, կը շարձարէր ու կը սպաննէր.
ոյժը իր ձեռքին մէջ էր: Այս չեչոտ հարիւրապետը մեր կեանքին,
մեր պատիւին, մեր ինչքին, մահուան եւ կեանքին իրաւունք ունէր
իր ձեռքին եւ խօսքին մէջ:

— Քեզմէ ուղածս օղլում.

1) 80 դէնքերը,

2) Գոմիտէի տետրակները,

3) Ակնցի եւ Արարիկիցի անուններ՝ որ դէնքերը հայթայթեցին:

— Էֆէնտի, դիտեմ որ այս բոլորը իմ բարիքիս համար կ'ըսես.
բայց կ'ուզեմ ըսել որ

1) Ես 13 տարեկանիս Մեզիբէ պացեր եմ եւ գիւղին բաներէն լուր
չունիմ:

2) Գիւղացիներուն հետ չիման մէջ չեմ եղած որ անոնց վստա-
հութիւնը վայելած ըլլամ, եթէ նման բաներ ունին ինձի յանձնեն:

3) Ես քարտուղար կամ գրագիր չեմ որ քովս պահեմ անուններ
ու թուղթեր:

4) Մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ Արարիկիցի եւ Ակնցի մարդ
կը ճանչնամ:

5) Գիւղացիները այդպէս բաներէ լուր չունին որքան ես դիտեմ,
բայց եթէ ունին՝ բոլորին հաւաքած էք հոս, անոնց հարցուցէք եւ
ձեզի պիտի ըսեն:

Որսին վրայ յարձակելու պատրաստուող զազանի պէս սկսաւ ան-
հանդստանալ, քիթն տակէն սկսաւ մուտալ, պիտերը վեր վար շար-
ժել աշխատելով զսպել իր վայրի բնազդը եւ ըսաւ.

— Ժամ մը ժամանակ կու տամ որ որոշես քու բախտդ. ես իմ կրցածը ըրի որ օգտակար ըլլամ, եթէ կ'ուզես ուրիշներու ճամբով երթալ՝ մեղքը վիղդ:

— Սպառնալիքը որոշ էր. պիտի չարչարէին եւ պիտի սպաննէին. չեմ գիտեր ուրկէ ուր մտածեցի Կարմիր Վարդաւնի մէկ խօսքի մասին. «Մեր արիութեան վատութիւն չխառնենք...». իմ պապերս ինչ ճամբով՝ նոյն ճամբով նաեւ ես. որոշումը տրուած էր, սիրտս թեթեւցած էր. մարմնով ու հոգիով ուժեղացած էի, ու սխտրաստ ամէն սպառնալիքի: Երբ ժամ մը վերջ եկաւ եւ հարցուց թէ ի՞նչ եղաւ պատասխանը.

— Նո՛յնը, ըսի վճռական:

— Վա՛յ դուն կեալուր, շան լակոտ, ու ձեռքին մէջ ունեցած կաշիէ մտրակով, իր ամբողջ ուժով հարուածեց երեսիս, աչքիս: Աչքերս բռնած ինկայ գետին:

Աքացիով զարկաւ կողերուս եւ «կը տեսնուինք» ըսելով դուրս գնաց:

Գրեթէ քաշկտելով տարին ուրիշ խուց մը: Աչքերս չէի կրնար բանալ, չէի գիտեր թէ ի՞նչ եղաւ. կողերս կը կոտորուէին եւ երեսիս վրայ մատի չափ սկսած էր ուռիլ: Այսպէս, Ա. մկրտութիւնը ստացած էի, թրքական բանտին մէջ, իմ գիւղիս թուրք դրացիին տան մէջ:

52 տարիներ անցած են այդ օրէն, կեանքն ու բախտը շատ երջանկութեան պահեր տուաւ ինծի եւ առիթ տուաւ որ հաշուի նստիմ թուրք ջարդարարներու հետ, կամ տեսնեմ Հայաստանի մեր անկախութիւնը եւ անոր նուիրագործեմ արիւնս. բայց ի՛նչպէս կրնամ մոռնալ այդ մտրակի հարուածները. — աչքերուս լոյսը կը փաղուի եւ կողերս կը մղկտան. կը տեսնեմ մայրս սնարիս քով՝ աղօթքով որ կը փսփսայ. «Վա՛խ, քոռնամ, քոռնամ»:

«Հայրենիք», 1967

ԱՖԲԱՀԱՅՐ ՈՒԼՈՒՀՈՅԵԱՆ

Այսօր այլևս յաւիտենականութեան կը պատկանի Արբահայր Ուլուհոճեան, եւ ինչ որ ալ ըսենք ու գրենք իր մասին, թերեւս ոչ մէկ նշանակալից բան պիտի կարենանք աւելցնել իր սրբակեաց կեանքին վրայ եւ պիտի չկարենանք բաւարար կերպով փառաւորել իր յիշատակը ու գործունէութիւնը մեր հայ կեանքի դարաւոր եւ պատկառելի Հաստատութեան մէջ, Մխիթարեան Միաբանութեան, Արբահայր տիպոսով, զոր յաջորդական ընտրութիւններով ստացաւ իր Հաստատութենէն, դասուելով ինքն ալ Ալիշանցերու եւ Հիւրմիւզներու կարգին:

Խարբերոյցի-Գատեմցի էր իր ամբողջական ոգիով եւ իր հետը տարած էր իր պապենական տան մաքուր հաւատարմութեան դիժը, եւ բարի դրացնութեան սքանչելի ոգին: Երբ կը մտածեմ իր մասին չեմ կրնար չյիշել իր նահատակ հօրը մասին՝ որ դեռ 1895ի Ջարդերուն վճռապէս մերժած էր թրքանալ եւ իր դաւաղներուն ձեռքերը բռնելով ուղած էր նահատակուիլ յանուն Յիսուսի Քրիստոսի, քան թէ կրօնափոխ ըլլալ: Ինչպէս 1915ին, երբ կը տանէին զիրենք քաղաքը ու անկէջ ալ նահատակութեան, վայրկեան մը առաջարկ ներկայացուցին թուրք ոստիկանները թէ՛ «ընդունեցէք իսլամութիւնը եւ մենք կը խնայենք ձեր կեանքին»։ Եւ ծեռունին ծունկի կու գայ պետական շէնքին առջեւ եւ բազկատարած, բարձր ձայնով, կ'աղօթէ. «Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի», եւ դառնալով թուրքերուն կ'աւելցնէ. «դուք ուժով էք, դուք սուր ունիք, դուք կրնաք Ջարդել մեզ, բայց մենք աւելի մեծ ենք՝ որովհետեւ մեր մեծ հաւատքով կառչած ենք մեր Արարիչին:

* * *

Կրակներու մէջէն աղատուած, երբ 1916ին Երզնկայ հասաւ, նամակ մը գրեցի Մխիթարեաններուն, փափաք յայանելով Վենետիկ երթալու եւ ուսումն շարունակելու: Ամիսներ վերջ, անակնկալօրէն նամակ մը ստացայ Հայր Քերովրէ Չրաքեանէ. արցունքոտ աչքերով

ու կարօտով կարգացի պարունակութիւնը որու մէջ կ'ըսէր. «Տակա-
ռակ տարիքիդ մեծութեան, մենք սիրով պիտի ուզենք ընդունիլ քեզ,
եթէ այս պատերազմի ընթացքին, յաղթահարելով դժուարութիւն-
ները, կարողանաս հոս Վենետիկ իյնալ...»:

Արբաճայր Ուլուհոճեան երբ երկրորդ անգամ Ամերիկա եկաւ,
Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէէն խնդրեց որ արօժեն ինծի իրեն ընկերանա-
լու, դէպի Գալիֆորնիա իր ճամբորդութեան ընթացքին: Առաջին
անգամ դալուն, ընկ. Կոպերնիկ Թանտրճեան իրեն ընկերացած էր:
Կ. Կոմիտէն սիրով ընդառաջ եկաւ իր խնդրանքին ու ես միացայ
իրեն: Տիթրոյիթէն անցանք Գալիֆորնիա. Լոս Անճելլես, Փրէզնոյ,
Սէն Փրէնսիսքոյ, եւ վերադարձին անցնելով Սէնթ Լուիզէն: Հա-
կառակ մեր սպալականական կապին, այնքան ծանօթ չէի մեր Արբա-
ճօր, ու միայն մանկութեան յիշատակներ մը մնացեր էին մէջս: Այս
ճամբորդութիւնը առիթ մը եղաւ որ մօտէն ճանչնամ զինքը ըլլայ
իրրեւ մարդ, իրրեւ հոգեւորական, իրրեւ հայրենասէր Հայ, ըլլայ
իրրեւ Արբաճայր Միտիթարեան Միարանութեան:

Բարի, հեղահամբոյր, ազնուական, ուղղամիտ, առինքնող դէմք
մըն էր, Արբաճայր Ուլուհոճեան: Մեր ճամբորդութեան ընթացքին
այնպիսի դէպքեր պատահեցան որ անոր նկարագիրը, քրիստոնեայի
համոզուած հոգին երեւան հանեցին, եւ այսօր, արցունքոտ աչքե-
րով, այս հեռաւոր անկիւնէն, կը խոնարհիմ իր քաղցր յիշատակին և
դամբանին առջեւ:

Իանախօսութեան մը առիթով, անգամ մը զինքը «Շինարար»
կոչեցի. երբ առանձին մնացինք ըսաւ ինծի. «Մենք կը մտածենք,
կը փնտռենք ճամբաներ՝ ուղիղ դործելու համար, բայց ընտրութիւնը
Աստուծոյ կը մնայ... Թէ որքան կը յաջողինք...: Ես չեմ շինողը,
այլ Միտիթարեան Միարանութիւնը իր ամէնէն տկար եւ ամէնէն ու-
ժեղ անդամներով եւ հայ ժողովուրդի օգնութեամբը:

Օր մը Ուաշինկիթընի Ուաշինկիթըն պանդոկի սրահին մէջ կը սպա-
սէինք ժամադրութեան մը համար: Ներս մտաւ կոկիկ հագուած մարդ
մը, որ ուղղուելով դէպի մեզի, ծունկի եկաւ իրեն առջեւ եւ խնդրեց
իւ Զեռքը համբուրել. Արբաճայրը ձեռքը երկարեց ու իր զլխուն
դրաւ օրհնելով զինքը: Օտար մըն էր ու ես հարցուցի մարդուն թէ
ինչո՞ւ եւ ի՞նչ բան զինքը մղեց դալու ու այս օտար կրօնաւորին ձեռ-
քը համբուրելու. մարդը պատասխանեց. «Մէկու մը կը սպասէի և.
աչքիս զարկաւ իր դիմագիծը իր դեղեցիկ ժպիտը, իր մօրուքը, իր
աչքերուն քաղցրութիւնը եւ իր ձայնին հայրական շեշտը, հակառակ
իւ լեզուն չհասկնալուս. մտածեցի թէ դարեւն իջած սուրբ մըն է
ու չկրցայ դիմանալ...»: Այսպիսի դէպքեր կրկնուեցան Փրէզնոյի
ու Սէնթ Լուիզի մէջ:

Տիթրոյիթ էր երբ կորսնցուցինք ընկեր Դրօն, Հայ Ժողովուրդի եւ Հ. Յ. Գաղնակցութեան ամենասիրելի զաւակներէն մին. եկաւ ինքն ալ ներկայ ըլլալու իր թաղումին, իրրեւ Աղլային Հերոս, եւ սակայն մարդիկ եղան որ քննադատեցին ու բամբասեցին զինքը. իր քաղցր ժպտով կը պատասխանէր. «Մխիթարեանները թէեւ Վենետիկ կը դաճուէին, սակայն աղբին կը պատկանին եւ աղբովը կ'ապրին, եւ երբ մեր Ժողովուրդին կեանքին մէջ լուսաւոր բան մը պատահի, Մխիթարեանները կ'ուրախանան, ու կը տխրին՝ երբ ցաւալի դէպք մը դայ մեր աղբին մէջ. ես արժանի Մխիթարեան մը չեմ համարիր ինքզինքս, եթէ իմ ներկայութեամբս չներկայացնէի Մխիթարեան Միամանութիւնը աղլային հերոսի մը, Դրոյի թաղումին առիթով:

Դժուար է թերթի մը կարճ սխեմակներուն մէջ ամբողջական դիմադրիժը տալ մեծ Մխիթարեանին՝ որ արժանաւոր պետը եղաւ այս դարաւոր Հաստատութեան եւ մահուան հարկադրանքով հանդերձ, ձգելով այս աշխարհը, թողուց իր յիշատակին բոլոր՝ որ հարստացուց այս երկրի մէջ իր շրջապատը: Մեծցուց իր վանքը, կարելիութիւններ ստեղծեց մշակութային եւ դպրոցական վերելքին, ասպազային, սիրեց իր ուխտակիցները: Կարօտցաւ իր եղբոր եւ եղբորորդիներուն, հարազատներուն եւ հայրենակիցներուն:

Այրեցաւ անբասիր կրօնաւորի մը սրբակեաց կեանքը եւ թողուց բարոյական հարուստ ժառանգութիւն մը իր բոլոր հարազատներուն: Որքան որ մանուկ հասակին, տասներկու տարեկանին, ձգեց Դատեմը, բայց մտովին միշտ ալ կ'ասուէր մնաց հայրենի տան յիշատակներուն, գիւղին դէմքերուն եւ հէքեաթներուն: Երբ Ամերիկա եկաւ, վայելեց իր եղբոր՝ Մկրտիչ Ուլուհոճեանի եւ իր սիրելի հարսին հիւրընկալութիւնը, Վարդուհիին, Յովհաննէսին եւ Գարրիէլին յարգանքն ու սէրը, ինչպէս նաեւ իր միւս հարազատներուն անսահման նուիրումը իրենց հարազատներով ու մանաւանդ իրեն հայրենակիցներուն սէրն ու գոբրուրանքը: Վայրկեան մը ինքզինքը երջանիկ զգաց ու հարազատ եւ սակայն Վենետիկն էր միշտ իր տունն ու տաճարը: Այս գիւղի տղան՝ որ համաձայն իրեն կը սերէր Պահլաւունիներու տոհմէն, ըլլայ թաղաւորներու, իշխաններու, հեղինակութիւններու, ըլլայ պարզ ու սովորական մարդու հետ, խտրութիւն չէր դնէր ու անոնց հետ կը վարուէր հաւասար մտերմութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆառաջարան	5
Կենսագրական գիծեր Սրապիոն Արփայկ . Ուլուհոռնեանի	7

Ա.՝ ՀԱՅՐԵՆԻ ՕՃԱՆԸ

Դատեմ գիւղը	17
Մեր տունը	19
Հայրս՝ Տօնապետը	20
Մայրս	21

Բ.՝ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան փորձանքներ	27
Մեծ հայրս	31
Մահեր	32
Ուխտի օրեր	34
Տօնական հանդէսներ	35

Գ.՝ ԳԻՒՂԱԿԱՆ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարփերը	41
Աշխատանքները	42
Կոիւնք	44
Դպրոցը	47

Դ. — ԱԶԲՍ ԴՈՒՐՍՆ Է

	Էջ
Սահմանադրութիւնը (1908)	51
Ատանայի ջարդը (1909)	53
Աչքս դուրսն է	56
Կեդրոնական վարժարանին մէջ (1911)	57
Ֆրանսական վարժարանին մէջ (1912)	58
Պատանեկան հովեր (1913)	60

Ե. — ԱՌԱՋԻՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Սէֆէրպէլիիք — Ջօրակոչ (1914)	65
Քաղաքը՝ այդ օրերուն	68
Պէտէլը	70
Առաջին սարսուռները	71
Խուզարկումներ	76
Մարդու պէս մեռնիլ	79

Զ. — ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ

Կառավարական նոր հնարքներ	87
Դէպի ախար	89
Վերջին այց մը Ս. Յովհաննէս եկեղեցիին	92
Դէպի Մեզրէի ճամբան	94

Է. — ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Երկու ատրճանակներ	101
Դիւղը կը դատարկուի	104
Արագահաս Սուրբ Սարգիս	105
Դիակներ, դիակներ	107
Ջէնճով աւելի ապահով եմք	109

Ը. — ԶՈՒԼՈՒՄԸ

Սայլերը	115
Թափստոցէ քափստոց	122
Քրիստիկնէ՛ խաչատուրեանի պաշտպանութիւնը	126

Թ .- ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

	Էջ
Դէպի Տերսիմ	143
Դիւրտ ցեղապետին քով ուսուցիչ	146
Առաքելութիւնս դէպի Երզնկա	148

Ժ .- ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՓԵՐՈՒՆ

Երզնկայի մէջ	163
Դէպի Տրապիզոն	176
Թիֆլիսի մէջ	181
Կարին	184
Դէպի Մամա հաքուն	192

ԺԱ .- ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

Անդրանիկ Կարին կը հասնի	199
Իմ նոր պարտականութիւնը Իլինէ-Թորքում նամբու վրայ	203
Նահանջը	210
Թուսական սահմանագլուխի վրայ	216
Բայֆայում	224

ԺԲ .- ԱՆԾԱՆՕԹ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Թիֆլիս - Պաֆու	233
Գազան	238
Վլատիվոսթոֆ	244
Դէպի Ամերիկա	251

ՅԱՒԵՂՈՒԱԾ

ՈԳԵԿՈԶՈՒՄՆԵՐ

Հայրենի գիւղ	257
Մօրս - Ղարիպին	258
Հայրենիքիս	259

	Էջ
Երեւել – Անոր՝ որ ալ չկայ	260
Վերադարձը	261
Գիւղիս	262
Մուրատ	263
Հօրս երկիրը	264
Ա. Ահարոնեանին	265
Համաստեղի սիրելի յիշատակին	267
Ընկ. Ռուբէն Դարբինեանի սիրելի յիշատակին	270
Կարօտ է հոգիս	272
Մօրս եւ բոլոր հայ մայրերու յիշատակին	274
Նամակ մը քոռնիկիս՝ Մարոյին	276
Էջ մը բանտի օրերէս	280
Աբբահայր Ուլուհոնեան	284

[7 n]

Տպագրութիւնը աւարտեցաւ
1 Մարտ 1974ին
Ս. Ղազարի տպարանին մէջ
վ Ե Ե Ե Ե Կ



ԳԱԼԷ ՅԻՄՆԱԿԱՐ ԳԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0695581

~~1477~~

Jus
1477